II 2/34

2008

Ստեփաննոս Պօղոսեան
ՍԻՐԵԻՐՆԿԵԱՆՑ
Ռաբախան

Ստեփաննոս Պօղոսեան
ՍԵՐԵԲՐԸԿԵԱՆՑ

# ՍՐԲԱԶԱՆ
# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

2898

ՍՐԲԱԶԱՆ

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՅՕՐԻՆՈՒԱԾ

ՏՆ. Հ. ՄԻՆԱՍԵԱՅ Վ. ԲԺՇԿԵԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴԻ Ի ՏԱՒՐԻԱ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

## ՀԱՏՈՐ Ա.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՕՐԻՆԱՑ
ԵՒ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՔՐԻՍՏՈՍԻ



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1838

28(09)

ՅԻՇԱՏԱԿ

ԶԱՐՄԻՆ ԲԺՇԿԵԱՆՑ

ԱԴԱ ՄԱՆՈՒԿԻ, ՅՈՎՍԷՓԱՅ,

ԵՒ ՅՈՎԱԿԻՄԱՅ – ՀԻՒՄՐԻՒԶ

Ալեքսանդրոս Պօղոսեան

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Նախնորդք ժողովրդեան յայլ և այլ խմբէ որ բաղդատուածնելոյ ազգի մարդկան անընչացան 'ի սկզբանէ և այսր, ետուն աւանդել 'ի մատենա աւ յիշատակէ զոր ինչ խմաստութեան նոցա էին արդարեւք, հաստատութիւն կրօնից և ըստ նմանէ յաջողութիւնք բախտից և խաղաղութեան թագաւորել, և կամ զոր ընդդէմս ապականութիւն վարուց և որ անաւի յուղմունք և խառնակ մարմնոց 'ի քանդուած ազգաց: Եւ այսքիկ ապագայիցն 'ի քաղաքաս կամ 'ի խրատ ըղգաստութեան:

Յայտնիկ արտաքնոցն վիպագիրք քանզի հեթանոսական անտութեամբ չմարթէին յանմնայնի զհիմունս ճշմարտութեանց յերեւանածել. ըղպատճառս խրայն արկին ընդ քօղով պէսպէս առաախապատուաստ բանիւք. և բաղում այն է զի և առ 'ի ցոյց համեմատ անձանց յաջս ընթերցանելեացն առնիցեն: Իսկ աներկբայ հաւատոյք անապակուս կրօնից և օրէնք անաչութեան գանձեալ պահին 'ի վէպսն արանց աստուածազանից որ 'ի Հոգւոյն սրբոյ կրեալք խօսեցան, և ճշմարտութեանն հաւատարիմ աւանդապահք առաջ_

նորա կայցեն անմոլար որոց ցանկանն սրբութեան կրօնից պատկառ կալ:

Արդ 'ի հարկէ պաշտամանս և մեր այցելու և դաստիարակ լինելոյ հօտին Քրիստոսի յամենայն կարևորսն, մանաւանդ մանկուոյն և հասարակացն դպրութեան, զնոսանն զաստուածեղէն պատ_գամն և որ ըստ նոցանէ զամենայն սրբազանն քրիստոնէական կրօնիցս և առաջնորդաց նորին զկէպս ամփոփեալ փոքու քանակաւ 'ի Սրբազան պատմութեանս, տամք աշանոցս 'ի հրահանգս բարեպաշտութեան. որք յանախական հասակին անբաւականք անօր բանից առ 'ի խելամտու_թիւն՝ օրինակօք անկեղծ պատմութեանցն դիւ_րաւ ընդելասցին 'ի նոյն, տեսեալ զամենակալ աջոյն խնամն և զհայրագութ սիրոյն գգուանս առաւել քան յայլան 'ի մարդումս յոլովեալ. զողորմութիւն նորա անբաւ յերկայնամտել յա_պաշխարհութիւնս նորա, և զդատաստանն անա_չառ և լի դթութեամբ. և զմեծն քան զամենայն զյարուցանել նորա զերամս առաքինեաց ընդ ժամանակս ժամանակս յօրինակ ամենեցուն ըստ հաստատուն հաւատոց, ըստ համբերութեան, ըստ հեզութեան և ըստ անարատ քաղաքավա_րութեան:

Դարձեալ 'ի հրաշալեաց անտի որ 'ի հին և 'ի նոր օրէնս երևեցան, տեսցէ ակն յայտնի զի հինն և ոգի կրօնիցն երկոցունց մի և նոյն է. անդ օրէնք մի և մի եկեղեցի ընտրեալ յԱստուծոյ, նոյն հա_ւատք և 'ի նորումս: Զի ուր առ Ադամաւ և առ Նոյիւ հիմնեցան կրօնք, և յետ այնորիկ տա_րածեալ կալաւ զընդհանուրս մնաւոց պաշտե_

լութեան, 'ի խուանէն հեթանոսաց որոշեաց առ իւր զհայրն հաւատոց և զ'ի նմանէ սերունդս իւր ժողովուրդ. յորոց եցոյց մարգարէս և քահանայապետս իւրոց պատգամացն քարոզս. յաճախեաց սքանչելիս ահեղ և զարմանալի. որք և ամենայն որոտմամբ և սպառնալեօք և անկարծելի արհաւրօք յերկնէ և յերկրէ' կարապետք էին և ստուերագիր քաղցր օրինացն և շնորհացս որ Քրիստոսիւ լինելոց էին։ Եկին շնորհքն, և ստուերքն փախանցեցան 'ի ճշմարտութիւն, և օրէնք 'ի շնորհս արդարութեան։ Ընդ 'ի հնումն քահանայապետն միջնորդ ընդ Աստուած և ընդ մարդիկ և հրեշտակ առաւն ամենակալի. աստ նորոյ օրինացս քահանայապետ զոր ինչ Հոգւովն Աստուծոյ գործիցէ յերկրի, ձայնակից են նմա երկինք, և ամենայն աթոռակալ ժառանգաւորք հրամանաց նորա պատկառ կան։ Որոց 'ի ծագաց աշխարհիս առմեանս տաւաղեալ 'ի քննութիւն աղձատանաց շարժելոց ամանց. չմարթեն մեծաւ իշխանութեամբ կնքել զգատակնիք հոգւոր մահուն մոլելոցն այնոցիկ, մինչև ջնջէ 'ի միջի և ձեռն և հրամանն քահանայապետին մեծի քրիստոսական եկեղեցւոյս. անմոռաց կալեալ զբանն' զի մարթի նոցա զայթակղիլ, և նմա զառանալ և հաստատել զնոսա. որ հանդերձ մարդկօրէն վրիպակօքն անսայթաքելի կայ և կացցէ միշտ 'ի առաջնութեան անպարտ կրօնից. զի մասն Աստուծոյ է նմա առաջնորդ և հզօրիչ լինքն Քրիստոս, անդրդուելի կալ 'ի ճշմարտութեան, սանդարամետին դռնութեանցն անսասան։

Յայտնիկ խելամուտ լեալ համբակն նորոյ օրի-

նայց. առ սեամն անդ պարզելոյ միայն 'ի քնին
աստուածային անօրէնութեան և խորհրդոյն ե-
թէ որպիսի ինչ իցեն կրօնք սուրբ հաւատոյ, ո
նորա հեղինակ, և զիարդ կարգ ըստ կարգէ տե-
ւեալ անանջրպետ յաջորդութեամբ, և ուր նո-
րա կեդրոն միութեան, 'ի տղայ տիոց անհրա-
ժեշտ ճշմարտութեամբքն մնեալ աճեսցէ զա-
ճումն Աստուծոյ 'ի Քրիստոս:

Եւ եթէ 'ի հմտացելոցն ոք ուրեք օգտեսցի
փոքր մի երկասիրութեամբս մերով, մխիթարիմք՝
գոյզն աշխատութեամբս այսու հաճոյական ինչ
արարեալ նմա. և թէ թերացայք ուրեք, ներո-
ղամիտ կարեկցութեան հանդիպել է մեզ ցանկա-
լի: Այս մեր տրիտուր առ 'ի նոցանէ. այլ Աս-
տուած որ յաջողեացն յանկ հանել զսա, նոյն
ինքն և այցելու լիցի որոց ընթեռնուցունն մա-
գիր լինել և ընդունակ առ 'ի նմանէ ճշմարտու-
թեանցն:

## ՆԿԱՐԱԳԻՐ ՄԱՏԵՆԻՍ

Ի չորս գիրս բաժանեալ զՍրբազան պատմու-
թիւնս զայս՝ յառաջնումն ամփոփեցաք զհին
օրէնս յԱդամայ մինչև ցգալուստ Մեսիային:
Յերկրորդումն զնոր օրէնսն, սկիզբն կալեալ 'ի
ծննդենէ կուսին Մարիամու մինչև ցկատարումն
առաքելոց: Յերրորդումն զկարևոր հանգամանս
եկեղեցւոյ Քրիստոսի 'ի մի ժողովեալ, յարե-
ցաք և զվրդովել նորա և զհերձուածս, և զմո
վարդապետացն և զժողովս: Իսկ 'ի չորրորդումն
խմբագիր արարաք զվարս քահանայապետացն

Հռովմայ յառաքելապետէն Պետրոսէ և այսր 'ի գաւազանագրաց եկեղեցւոյն Հռովմայ եւ և յայլոց մատենից երևելի արանց, եդեալ զանուանս իւրաքանչիւր նոցա յեղերս իւրեանց: Եւ 'ի կատարած մատենիս յաւելաք զկարգս երևելի իշխանութեանց, աթոռակալ հայրապետաց և թագաւորաց, յորոց բազումք յիշատակին 'ի մատենիս: Յուշ առնեմք աստանօր, զի ընդ բովանդակ մատեանս այս առ իւրաքանչիւր գայր խառնեալ կամաւ 'ի կարգէ Արքայական պատմութեանն պատշաճեցաք և զերևելի դէպս յարտաքին մատենից. ոչ թէ միաբանութիւն ինչ ընդ սրբազանիցն ունիցին, այլ զի մանկտին փոքուն այնուիւք յիշատակութեամբ և 'ի ժամանակագիրսն հմտանայցէ:

Ստեփաննոս Պօղոսեան

# ՍՐԲԱԶԱՆ

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ՕՐԻՆԱՑ

## ԱՌԱՋԻՆ ԴԱՐ

### ԳԼՈՒԽ Ա

### Արարչութիւն աշխարհի։

ԱՐԱՐԻՉՆ ամենաբարի 'ի յաւիտենից սահմանեալ էր արարչագործել զաշխարհս յոչընչէ բանիւ իւրով, ունել և զարարածս յայլևայլ կարգի՝ հաղորդելով նոցա զիւրն բարութիւն։ Երբև եհաս նոյն սահմանեալ ժամանակ՝ հրամայեաց ասելով « Եղիցի լոյս »․ և հաստատեցան երկինք և երկիր։ Եւ ահա նոյնժամայն խաւարն բարձաւ և եղև լուսաւորութիւն յաշխարհս և յոչնչէ եղև ինչ․ 'ի վեր անդր հրեղէն երկինք, կամ ըստ ասացելոյն երրորդ երկին․ 'ի ստոր հողագունդս մեր պատեալ ջրով և խառնեալ տարերեղէն օդով և հրով, հանդերձ ամենայն սերմամբք բուսականաց․ բայց անկազմ և անպատրաստ։ Եւ հոգի

Աստուծոյ, կամ նախախնամութիւնն աստուածային շրջէր 'ի վերայ ջրոց և խնամէր զերկիրս կենսականջերմութեամբ որպէս հաւ զձագս՝ ըստ խորհրդաբանութեան սրբոյն Բարսղի [1]. յորմէ ունէր արտադրել զամենայն ազգս կենդանեաց։ Եւ այսպէս յառաջնում աւուր, որ էր կիւրակէ, արար Աստուած զերկինս հանդերձ բիւրաւոր հրեշտակօք, և զհողագունտս հաստատեալ կեդրոնաբեր զօրութեամբ 'ի վերայ հաստատութեան իւրոյ՝ ըստ Դաւթի. շուրջ զհողով ջուր պատելով, և շուրջ զջրով օդ. իսկ 'ի վերայ օդոյ հուր կամ լոյս: Այս լոյս 'ի մի կողմն ամփոփելով լուսաւորեցաւ այն կողմն երկրի, և միւս կողմն եղև խաւար. ապա շրջելով սկզբնական շարժմամբ՝ իբրև եմուտ ընդ հորիզոնաւ, եղև երեկոյ, և միւս կողմն լուսաւորեցաւ. որով մեկնեաց Աստուած 'ի մէջ լուսոյն և 'ի մէջ խաւարին: Իսկ ապա անցեալ ընդ երկրաւ իբրև եհաս յարևելեան ծիր հորիզոնին, եղև վաղորդայն՝ օր մի:

2. Յերկրորդում աւուր 'ի սկսանել լուսոյն այնորիկ պարաբերիլ 'ի վերայ հորիզոնին՝ բաժանեաց Աստուած զհամատարած ջուրն՝ մասն ինչ 'ի վեր ամբարձեալ. և անջրպետեաց զերկիրս յերկնէ, եդեալ 'ի միջի զօդն 'ի հաստատութիւն. որով և բաժանեաց զջուրս 'ի ջուրց, կամ զգոլորշիս 'ի ստորեղէն ջուրց՝ առ 'ի կազմել զամպս և տալ զանձրևս երկրի, այսպէս հրամայելով. «Եղիցի հաստատութիւն 'ի մէջ ջրոցդ, և եղիցի մեկնել 'ի մէջ ջուրցդ և ջուրցդ»:

3. Յերրորդում աւուր ժողովեաց Աստուած 'ի ժողով մի զամենայն ջուրս շրջապատեալս զերկրաւ. քանզի աստուածային հրամանաւ բացան

1 Բարսղ. Վեցօր. ճառ Բ:

'ի գետնին աչացին խոտոյք, և այնու ըստ ամանց 'ի վեր ելին մեծամեծ լերինք։ Ընդ 'ի վերս հաւաքեալ ջուրց՝ գործեցին ծովս. ապա երևեցաւ ցամաքն. որ և 'ի հրամանէն Աստուծոյ անդէն և անդ զարդարեցաւ ազգի ազգի ծառովք. տնկովք և բնութենական բուսականօք հանդերձ սերմամբք իւրեանց, և եղև գեղազուարճ՝ գարուն ծաղկալի. «Եւ ասաց Աստուած. բղխեսցէ երկիր բանջար խոտոյ՝ սերմանել սերմն ըստ ազգի և ըստ նմանութեան. և ծառ պտղաբեր առնել պտուղ, որոյ սերմն իւր 'ի նմին»։

4. Ի չորրորդում աւուր կարգաւորեաց Աստուած զայն զառաջին լոյսն անկանոն, որոշելով զարեգակն, և զամենայն լուսաւորս երկնից. տպաւորեալ 'ի նոսա շարժմունս օրականս՝ ոչ միայն 'ի լուսաւորել զաշխարհս, այլ և յորոշել զժամս և զժամանակս, զամիսս և զամս. «Եւ ասաց Աստուած. եղիցին լուսաւորք 'ի հաստատութեան երկնից 'ի վերայ երկրի, և մեկնել 'ի մէջ տուընջեան և 'ի մէջ գիշերոյ. և եղիցին 'ի նշանս, և 'ի ժամանակս, և յաւուրս և 'ի տարիս»։

5. Ի հինգերորդում աւուր հրաման ետ Աստուած ջուրց հանել զբազմազգի ձկունս, զմեծամեծ կէտս, զանազան զեռունս ջրային, նաև բազմատեսակ թռչունս թևաւորս. տալով նոցա ծննդական զօրութիւն. որով ջուրն լի եղև կենդանեօք, և օդն գունագոյն քաղցրախօս թռչնովք. «Եւ ասաց Աստուած. հանցեն ջուրք զեռունս շնչոց կենդանեաց... և զամենայն թռչունս թևաւորս ըստ ազգի ... և ասէ. աճեցէք և բազմացարուք, և լցէք զջուրս որ 'ի ծովս, և թռչունք բազմասցին 'ի վերայ երկրի»։

6. Ի վեցերորդում աւուր հրաման ետ Աստուած երկրի հանել զամենայն տեսակս կենդա-

նեայ՝ ընտանի չորքոտանեաց, զգազանս, զձս և զամենայն սողունս ցամաքայինս: Եւ ապա պերճացաւ երկիր վայելչութեամբ բուսականաց, և ազգի ազգի կենդանեաց:

Յայնժամ կամեցաւ ամենատէրն հաստել և կարգել թագաւոր զոմն ՚ի վերայ արարածոց: Վասն որոյ զկնի ամենեցուն արար զմարդն ըստ պատկերի իւրում և նմանութեան անմահ և աննիւթ հոգւով, յայս արարեալ զգերազանցութիւն մարդոյ ՚ի վեր քան զամենայն երևելի արարածս, որք հաստեցան ՚ի ծառայութիւն մարդկան:

Քանզի էառ Աստուած հող յերկրէ, և ձևացոյց մարմին, և ապա փչեաց ետ նմա բանական հոգի՝ կարգեալ զնա ՚ի գերբնական վիճակ անմահ. որով նոյն հողեղէն մարմինն եղև բանական կենդանի, և սկսաւ շարժիլ, զգալ, տեսանել, լսել և խորհել, զուարճանալով ՚ի վերայ հրաշակերտից արարչին: Այս աստուածաստեղծ առաջին մարդ կոչեցաւ Ադամ. և էր ճոխացեալ իմացական կարողութեամբ, ազատ կամեցողութեամբ, և անդրադարձ յիշողութեամբ. ընդունակ իմաստութեան, առաքինութեան, շնորհաց և փառաց: Այս ամենայն ձիրք գեր ՚ի վերոյ բարձրացուցին զԱդամ, ունելով յարարչէն գերբնական սէր և շնորհս. լեալ բացարձակ իշխան ՚ի վերայ ամենայն կրից զգայական մասին: Եւ թէպէտ մարմինն էր բաղադրեալ ՚ի չորից հակառակ տարերաց, բայց և այնպէս կարգեաց զնա Աստուած ՚ի վիճակ անմահական. զոր ունէին արդեօք ժառանգել և որդիք իւր դարուց ՚ի դարս, եթէ չէր նա զրկեալ մեղօք յանզուգական պարգևացս:

Դ. Յառաջ քան զմարդն արար Աստուած յառաջնում աւուր անդ զհրեշտակս՝ հոգիան-

նութ և պարզ իմացութիւն 'ի վիճակ շնորհաց՝ ու 'ի փառաւորանել զարարիչն և նպաստել փրկութեան մարդկան, կարողութեամբ արդիւնաւորելոյ զփառս։ Սոքա գոլով իմացականք՝ լի էին գերազանց իմաստութեամբ. մինչ զի Սադայէլ գլխաւոր դասու նոցա իմացեալ զգերազանց իմաստութիւն իւր մեծամտեցաւ հպարտութեամբ. և յանդգնեցաւ առնել ամբարտաւան մտաց ըստ Եսայեայ. «Ելից 'ի վեր քան զամպս, եղէց նմանող բարձրելոյն» 1: Որով ընդդէմ դարձեալ արարչին, կամ ըստ ոմանց՝ ոչ խոնարհեալ 'ի պաշտօնութիւն մարդկան, անկաւ կործանեցաւ 'ի գերագոյն բարձրութենէն 'ի յատակս դժոխոց հանդերձ արբանեկօք իւրովք: Իսկ բարի հրեշտակք ընդդէմ կացեալ հրապուրանացն Սադայէլի՝ մնացին 'ի կարգի շնորհաց և 'ի փառաւորութեան Աստուծոյ. և են ինն դասք ըստ Դիոնեսիոսի, Սերովբէք, Քերովբէք. Աթոռք, Տէրութիւնք, Զօրութիւնք, Իշխանութիւնք, Պետութիւնք, Հրեշտակապետք, և Հրեշտակք:

## ԳԼՈՒԽ Բ

### Անկումն Ադամայ:

Ամ աշխ. 1

8. Ադամ ճոխացեալ աստուածապարգև զանազան ձիրիւքն իբրև թագաւոր՝ ածաւ 'ի դրախտն փափկութեան յիւր արքայարան պանծալի: Որ էր պարտէզ գեղեցիկ զարդարեալ ամենազգի ծաղկօք, բանջարովք և պտղալից ծա_

1 Ես. ԺԴ. 14:

ռովք. զոր յերրորդ աւուր տնկեաց Աստուած ընդ արեւելս 'ի մեծն Հայաստան՝ ըստ կարծեաց երեւելի մատենագրաց, 'ի յարդարումն բնակութեան մարդկան։ Ուրանօր բաց յայլոց գեղեցիկ ծառոց էին 'ի մէջն հիանալի ծառք երկու. մին ծառ կենաց, եւ միւսն ծառ գիտութեան ձայնեալ, որոյ պտուղն եւեթ էր արգելեալ։ Զայս գեղազուարճ վայր ետ տէր Ադամայ 'ի ժառանգութիւն, ցորչափ մնայցէ յանմեղութեան իւրում։

Գ. Այս ամենայն գործք էին բարի եւ կատարեալ. սակայն Ադամայ դեռ ոչ գոյր օգնական յաճախումն եւ 'ի սերունդ մարդկան։ Յայնժամ ած Աստուած զամենայն չորքոտանիս եւ զթռչունս առաջի Ադամայ՝ զննել զբոյս բարուց նոցա, եւ տալ նոցին զանուն յայտարար յատկութեան իւրաքանչիւրոց. «Եւ կոչեաց Ադամ անուանս ամենայն անասնոց, եւ ամենայն թռչնոց երկնից. բայց Ադամայ ոչ գտաւ օգնական նման նմա»[1]։

Անդանօր արկ Աստուած թմրութիւն 'ի վերայ Ադամայ՝ եւ ննջեաց, կամ ըստ ոմանց յափշտակեցաւ մտօք. եւ առեալ զմի 'ի կողից նորա ելից ընդ այնր մարմին, եւ արար զկողն զայն մարմին կնոջ՝ տալով նմա բանական հոգի կենդանի։ Իբրեւ սթափեցաւ Ադամ, եւ ետես առ իւր զկինն գեղեցիկ համանման իւրեան. ծանեաւ զոր ինչ արար Աստուած, եւ գիտաց զխմաստ խորհրդոյ ամուսնութեան ազդեալ 'ի տեառնէ, եւ ասէ. «Այս այժմիկ ոսկր յոսկերաց իմոց եւ մարմին 'ի մարմնոյ իմոյ. սա կոչեսցի կին, զի յառնէ իւրմէ առաւ. վասն այնորիկ թողցէ այր զհայր իւր եւ զմայր իւր, եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ, եւ ե-

1 Ծն. Բ. 20։

զկցին երկուքն 'ի մարմին մի: Եւ կոչեաց Ադամ զանուն նորա Եւա, կամ որնոյն է Կենան: Այս խորհուրդ ըստ Առաքելոյն եղև գեղեցիկ պատկեր միաւորութեան փրկչին ընդ եկեղեցւոյ. զոր Հայրն երկնաւոր կազմեաց 'ի կողից նորա՝ յորժամ ննջեաց 'ի վերայ խաչին քաղցր 'ի քուն մահու, զոր և գգուեաց որպէս հայրն սիրելի:

10. Եւ կատարեցան ամենայն գործք արարչութեան 'ի վեցերորդ աւուր ուրբաթու, և յաւուրն եօթներորդի հանգեաւ Աստուած, և դադարեաց 'ի ստեղծանելոյ զայլ ինչ 'ի կարգի տիեզերիս: Օրհնեաց զօրն եօթներորդ, և սրբեալ կարգեաց զայն 'ի պաշտօն իւր, զի դադարեալ մարդկան 'ի գործոց՝ պարապեսցին յաստուածային խոկմունս, օրհնելով և փառաբանելով զամենաբարի արարիչն:

Սուրբ գիրն ոչ յիշէ թէ Ադամ տեսեալ զփառս իւր՝ մատուցեալ իցէ արարչին պատուապատշաճ շնորհակալութիւնս խորին խոնարհութեամբ. խնդրելով անպակաս առնել յիւրմէ զայն մեծ օղորմութիւն. որով ըստ կարծեաց ոմանց չեղև արժանի առանձին շնորհաց չանկանելոյ 'ի փորձութիւն սատանայի: Սակայն ըստ Լուսաւորչին մերոյ՝ Ադամ յառաջ քան զայլն անուանս կենդանեաց « Զարարիչն անուն... ծանուցեալ... նախ զարարիչն անուանէր... զի յորոյ երևաց զկենդանութիւնն ընկալեալ, նախ քան զամենայն զնա ետես » ասէ [1]:

11. Արդ կամեցեալ արարչին ցուցանել զինքնիշխան ազատութիւն իւր՝ հրաման ետ Ադամայ և Եւայի ուտել յամենայն ծառոց դրախտին բայց 'ի ծառոյն գիտութեան բարւոյ և չարի. որոց և տպաւորեաց պատիժ մահապարտութեան, և-

1 Յաճախապատ. 205:

թէ անլուայ գոյցին հրամանին: Իսկ բանսարկուն սատանայ շարժեալ 'ի նախանձու՝ ջանացաւ և զմարդն ապստամբեցուցանել յարարչէն նման ինքեան:

Ամին իբր յորժամ ետես թէ Եւա ձեռն առեալ շրջի 'ի գեղազուարճ դրախտին անդ, հուպ 'ի ծառն արգելեալ անդէն և անդ մտեալ բանսարկուն 'ի մարմին օձի մատեաւ առ Եւա փորձել զնա: Եհարց զնա մարդկեղէն բարբառով. թէ ընդէ՞ր պատուիրեաց Աստուած չուտել յամենայն ծառոց դրախտին: Պատասխանի ետ Եւա, թէ ոչ յամենայն ծառոց պատուիրեաց չուտել. այլ միայն 'ի պտղոյ ծառոյն, որ է 'ի մէջ դրախտին՝ ասաց տէր, մի՛ ուտիցէք և մի՛ հուպ լինիցիք, զի մի՛ մեռանիցիք:

Տեսեալ չարին թէ Եւա երկուանօք ինն խօսի զգուշանօքոյ մահուան, որ Աստուած սահմանաւոր սպառնացեալ էր, հեշտին եղև համոզել զնա, ասելով. ոչ եթէ մահու մեռանիցիք. այլ զի ճաշակմամբ պտղոյն բանայցին աչք մտաց ձերոց 'ի ճանաչել զամենայն ինչ, որով և լինիք աստուածանման ամենագէտ. զայս գիտելով Աստուծոյ՝ արգել ձեզ չուտել անտի:

12. Եւ ահա այսպէս թուլացաւ Եւա և համոզեցաւ 'ի բանից բանսարկուին, և հիացեալ ընդ գեղ պտղոյն շարժեցաւ ախորժակն. վասն որոյ էառ 'ի պտղոյն և եկեր նախ ինքն, ապա ետ և Ադամայ. և նա առ 'ի չտրտմեցուցանելոյ զկինն՝ էառ 'ի պտղոյ անտի և եկեր. և գործեաց մեծագոյն եղեռն ընդդէմ արարչին, և զնոյն յանցանս հաղորդեաց ամենայն ծննդոց իւրոց՝ ըստ որում սկզբնահայր հասարակաց: Յայնժամ բացան աչք նոցա, և տեսին զի անկան յաստուածային շնորհաց, կորուսին զանմեղութիւն իւրեանց և զփառս: Նմին իրի և ծանեան զամօ-

թալի մերկութիւն մարմնոյ, և զիմանալի մերկութիւն հոգւոյ 'ի պատմուճանէն սկզբնական արդարութեան. և առեալ տերևս թզենւոյ և կարեալ ընդ միմեանս՝ ծածկեցին զմերկութիւն իւրեանց: Սուրբն Օգոստինոս 'ի գիմոց Ադամայ այսօրինակ խորհրդաբանէ. Եթէ բարի էր պտուղն, էր վասն արգել Աստուած յուտելոյ. իսկ եթէ չար՝ ընդէ՞ր տնկեցաւ 'ի մէջ դրախտին: Պտուղն էր առէ՝ բարի, բայց արգել՝ առ 'ի ցուցանել զտէրութիւն իւր. պտուղն էր բարի, բայց հնազանդութիւնն լաւ ևս էր. արգել զմին 'ի ծառոց, այլ փոխան այնորիկ բիւր բարիս պատրաստեալ էր տալ. քանզի այն հրաման ուխտ էր արդեանց 'ի ձեռն հնազանդութեան:

13. Սակայն զկնի պատուիրանազանցութեան գթացեալ մարդասիրին յարարածս իւր՝ երևեցաւ նոցա 'ի կերպարանս հրեշտակի, և կոչեաց զնոսին յապաշխարութիւն ասելով. « Ադամ ո՞ւր ես »: իսկ նոքա փոխանակ ապաշխարելոյ յաւելին մեղանչել: Ադամ զկինն պատճառելով, և կինն զօձն, և երկոքին իսկ զԱստուած: փոխանակ զի կինն պարտէր արդարացուցանել զայրն՝ ինքն գոլով պատճառ, և այրն պարտէր աղաչել զԱստուած վասն կնոջն:

Նորին աղագաւ դատակնիք դատապարտութեան կնքեցաւ 'ի վերայ նոցա. Ադամ էառ զանէծս՝ քրտամբ երեսաց իւրոց ուտելոյ զհաց, և զրկելոյ յօրհնութենէ ինքնաբեր արգասաւորութեան երկրի, որպէս էր 'ի դրախտին: Եւա ընկալաւ զանէծս՝ ցաւօք և վշտօք ծնանելոյ զորդիս, և լինելոյ ընդ իշխանութեամբ առն. նաև երկոքին պատուհասեցան մահու մեռանել և 'ի հող դառնալ, ուստի առարան: իսկ օձն էառ զանէծս գետնաքարշ սողալոյ 'ի վերայ լանջաց իւրոց, զբնականն 'ի պատիժ դարձուցեալ, և ըն-

նելոյ զզուելի և վնասակար ամենայն կենդանեաց և մարդկան։ Այս պատիժ ձգի և յօձն առաջին 'ի սատանայ, որ հարկանելով զգարշապար կնոջն հրապուրեաց 'ի մեղս. իսկ կինն առաջխաղութեամբ կոխելոց էր զգլուխ նորա։

Յետ այսորիկ արար Աստուած 'ի ձեռն հրեշտակի մաշկեղէն հանդերձս և զգեցոյց նոցա. և նոյն ժամայն արտաքսեաց զնոսա 'ի դրախտանոյ անտի՝ ուր ստեղծեալ էր Ադամ. զի մի կերիցեն 'ի ծառոյն կենաց և կեցցեն յաւիտեան 'ի թշուառութեան իւրեանց։ Ապա հրամայեաց քերովբէից պահել զմուտս դրախտին սրաձև փայլմամբ բոցոյ. մինչև անհետ եղև 'ի ժամանակի մեծի ջրհեղեղին այն դրախտ աստուածատունկ։

## ԳԼՈՒԽ Գ

### Սերունդք Ադամայ։

Ա. Ա. 2

14. Ադամ յետ արտաքսելոյն 'ի դրախտէն՝ զկնի միոյ ամի ծնաւ զԿայէն, ապա զՀաբէլ. և ըստ կարծեաց ոմանց՝ ամ ըստ ամէ ծնանէին Ադամայ կրկին զաւակք երկուորեակք. որով և փութով եղև հայր անհամար զաւակաց։ Հաբէլ գոլով երկիւղած և բարեպաշտ, եղև հովիւ խաշանց. իսկ Կայէն որ անդրանիկ էր և ընդակապ մարմնով եղև երկրագործ։ Երկոքին եւ ուսեալք յԱդամայ զկարգ աստուածպաշտութեան մատուցին առաջին պատարագ. Կայէն զաղաղուն բերս երկրի, և այն՝ ոչ ուղիղ սրտիւ. իսկ Հաբէլ զընտիրս և զանդրանիկս խա-

ճանց ։ Հաճեալ արարչին ընդ պատարագն Հաբելի՝ ընկալաւ նա և արտաքին նշանաւ հրոյ . իսկ 'ի պատարագն Կայէնի ոչ հայեցաւ . Նմին իրի լցաւ նախանձու չարագործն, և անկան խոժոռեցան երեսք նորա ։ Երևեցաւ նմա տէր և խրատեաց քաղցրութեամբ չհետևել գժոխային կրից իւրոց . բայց նա այնու ոչինչ շահեցաւ , այլ ևս առաւել կատաղեալ եած զեղբայր իւր զՀաբէլ արտաքոյ բնակութեան իւրեանց 'ի դաշտ անդր, և յարեաւ 'ի վերայ նորա և սպան զնա ։

15. Յայնժամ բողոքեաց յերկինս արիւն անմեղին. կոչեաց Աստուած զեղբայրասպանն առջհամար . կամ՝ ըստ Ոսկեբերանին ասելոյ , կոչեաց զնա յապաշխարութիւն՝ հարցանելով թէ «Ո՞ւր է եղբայրդ քո»։ Իսկ նա լրբենի պատասխանատուութեամբ շարժեաց զաստուածային բարկութիւնն 'ի վերայ իւր, և ընկալաւ զարժանահաս անէծս յարարչէն. և եղև դժնդակ հինաւռիլ աշխարհի. երերեալ և տատանեալ շրջելով 'ի վերայ երկրի. զոր թաթաւեաց յանմեղ արիւն եղբօրն իւրոյ ։

Ապա այնուհետև անկեալ 'ի վերջին յուսահատութիւն՝ եկաց տատանեալ մօտ յառանձնութեան ընդ կնոջ իւրոյ , և ապա ծնաւ զԵնոք, յորոյ անուն զկնի շինեաց քաղաք ։ Ենոք ծնաւ զԳայերիդադ , յորմէ ծնաւ Մայիէլ. և 'ի սմանէ Մաթուսաղա . և սմա ծնաւ Ղամէք ։ Սա եղև առաջին, որ էառ զերկուս կանայս. անուն միոյն Ադդա, և միւսոյն Սելլա ։ Առաջինն ծնաւ զՅովբէլ և զՅովբաղ, որ հնարեաց զերաժշտութիւն և զնուագարանս՝ ուսեալ 'ի թռչնոց ։ Երկրորդն զԹովբէլ, որ հնարեաց զդարբնութիւն . իսկ Նոյեմա քոյր նորին եգիտ զոստայնանկութիւն ուսեալ 'ի սարդից ։ Կայէն յերկար ապրեցաւ , և եսես զթոռունս իւր . ապա

ըստ արտաքին աւանդութեան սպանաւ յանգէտս յանտառի 'ի Ղամէքայ, որ հինգերորդ էր 'ի սերնդոց իւրոց։

16. Ադամայ ետ Աստուած զայլ որդի Սէթ անուն յամի կենաց նորա 130, և ապա եղեն նմա ուստերք և դստերք բազում։ Սէթ ծնաւ զԵնովս, որ յուսացաւ կոչել զանուն տեառն սրբութեամբ և արտաքին հանդիսիւ աստուածպաշտութեան. որում ապա հետեւեցաւ աւելի իմն կրօնասիրութեամբ Ենովք որդի Թոռին իւրոյ Յարեդայ։ Սա յետ ծնանելոյ զՄաթուսաղա գոլով ամաց 365, փոխեցաւ կենդանւոյն յանդիտելի վայր աստուածային հրամանաւ. զի պահեսցի մինչև ցժամանակս Նեռին։ Այս եղև 57 ամօք զկնի մահուան Ադամայ, յամի աշխարհի 987։ Յայնժամ հին եկեղեցին համարէր տուն Ադամայ և տուն Սէթայ յաստուածապաշտ նահապետսն։

17. Համանման սոցին բարեպաշտութեան գտաւ և տասներորդն յԱդամայ՝ Նոյ որդի Ղամէքայ 'ի սերնդոցն Սէթայ. որ գոլով 500 ամաց՝ ծնաւ երիս որդիս, զՍէմ, զՔամ, և զՅաբէթ։ Ի սմին ժամանակի յաճախեալ էին մեղք մարդկան 'ի վերայ երկրի. զի որդիք Սէթայ՝ որդիք Աստուծոյ կոչեցեալք, թէպէտ 'ի սկզբան անդ հետեւեցան աստուածպաշտութեան նախնեաց իւրեանց, բայց ապա պատրեալ 'ի գեղոյ դստերաց անիծեալ ցեղին Կայէնի, որք կոչին դստերք մարդկան, խառնակեցան ընդ նոսա, յորոց և ծնան հսկայք մեծամեծք եղեռնագործք։ Սոքա ապականեալ մտօք այնչափ զականեցան 'ի չարիս, յանառակութիւնս և 'ի զրկանս, մինչև բռնադատեցին զերկայնմտութիւնն տեառն պատուհասել զնոսա համայնաջինջ ջրհեղեղաւ, և ընդ նոսին ջնջել եղծանել զաշխարհ ա-

մնայն հանդերձ կենդանեօք ։

Յանհամար մարդկան միջի միայն Նոյ գտաւ յայնժամ արդար և երկիւղած յԱստուծոյ. որ գիտաց սրբութեամբ պահպանել զարարիչն հանդերձ ամօք իւրովք. և նորին աղագաւ կամեցաւ տէր զնա միայն պահել հայր նորոյ աշխարհի. հանդերձ ընտանեօք իւրովք։ Սակայն և այնպէս արարիչն ամենագութ երկայնամտեալ շնորհեաց մարդկան այլ ևս ժամանակ ապաշխարելոյ. այլ և մինչև էր ածեալ զպատուհասն 'ի վերայ երկրի 120 ամօք յառաջ յայտնեաց Նոյի զվճիռ իւր. բայց իբրև նոքա այնու ևս ոչ ուղղեցան և ոչ դարձան յանհնարին անօրէնութեանց իւրեանց. ասաց. «Մի՛ մնասցէ ոգի իմ 'ի մարդկանդ յայդմիկ յաւիտեան վասն լինելոյ դոցա մարմին. և եղիցին աւուրք դոցա ամք հարիւր և քսան»[1]։

## ԴԻՊՔ ԱՌԱՋՆՈՅ ԴԱՐՈՒՆ

Ամ Աշ
ըստ Ժամ.

130. Սէթ ծնաւ յԱդամայ յամի կենաց նորա 130։

235. Ենովս ծնաւ 'ի Սէթայ յամի կենաց նորա 105։

325. Կայնան ծնաւ յԵնովսայ յամի կենաց նորա 90։

395. Մաղաղայէլ ծնաւ 'ի Կայնանայ յամի կենաց նորա 70։

460. Յարեդ ծնաւ 'ի Մաղաղայէլէ յամի կենաց նորա 65։

1 Ծն. Զ. 3։

622. Ենովք ծնաւ 'ի Յարեդայ յամի կենաց նորա 162։

687. Մաթուսաղա ծնաւ յԵնովքայ յամի կենաց նորա 65։

874. Ղամէք ծնաւ 'ի Մաթուսաղայէ յամի կենաց նորա 187։

930. Ադամ նախահայր վախճանի 930 ամաց։

987. Ենովք փոխադրի յանմահութիւն 365 ամաց։

1042. Սէթ վախճանի 912 ամաց։

1056. Նոյ ծնաւ 'ի Ղամէքայ յամի կենաց նորա 182։

1140. Ենովս վախճանի 905 ամաց։

1235. Կայնան վախճանի 910 ամաց։

1290. Մաղաղիէլ վախճանի 895 ամաց։

1422. Յարեդ վախճանի 962 ամաց։

1536. Սկիզբն շինութեան տապանին։

1556. Յաբեթ ծնաւ 'ի Նոյէ յամի կենաց նորա 500. ապա Սէմ և ապա Քամ։

1651. Մահ Ղամէքայ 777 ամաց։

1656. Մահ Մաթուսաղայի 969 ամաց։ Ի նմին ամի ջրհեղեղ, և 'ի հետևեալ ամի ելք Նոյի 'ի տապանէ յաւուր առաջնոյ գարուն։

Ի սկիզբն այս դարու հնութեան նախ ծնանի յԱդամայ Կայէն և ապա Հաբէլ, որ սպանանի յեղբօրէն։ Կայէն լեալ երկրուն՝ ծնանի զԵնոք. յորմէ Գայերիդադ. 'ի սմանէ Մայիէլ. յորմէ Մաթուսաղա, և 'ի սմանէ Ղամէք. յորմէ Յովբէլ հայր բնակչաց 'ի վրանս խաշնարածաց, և Յովբաղ գտիչ երգոց և քնարաց. նա և Թովբէլ ճարտարապետ դարբին և Նոյեմա դուստր ճարտարող ստայնանկութեան։ Հուսկ յետոյ Կայէն սպանանի ըստ դիպաց 'ի Ղամէքայ։

# ԵՐԿՐՈՐԴ ԴԱՐ

## ԳԼՈՒԽ Ա

### Ջրհեղեղ։
Ա. Ա. 1756

18. Յորժամ յայտնեաց Աստուած Նոյի զվերջին վճիռ կորստեան մարդկան՝ էր նա 480 ամաց, և որդիք նորա Սեմ, Քամ, և Յաբեթ ծնանէին 'ի հետևեալ 20 ամաց միջոցիւ·զորս կամեցաւ տէր բնական եղանակաւ ապրեցուցանել 'ի հանրական պատուհասէ անտի։ Հրամայեաց Նոյի շինել տապան մի նաւաձև մեծ յոյժ՝ գործել 'ի փայտից, և ծեփել նաւթիւ ներքոյ և արտաքոյ, երկայն 300 կանգուն, լայն 50, և բարձր 30։ Ի ներքուստ բաժանեաց Նոյ զտապանն յերիս յարկս,'ի վերին 'ի միջին և 'ի ստորին. իւրաքանչիւր յարկ սքանչելի կարգաւ 'ի բազմապատիկ խորշս բաժանեալ 'ի բնակութիւն Նոցա և կենդանեաց. և 'ի շտեմարանս համբարոց կերակրոց՝ իւրեանց և անասնոց բաւական միոյ ամի։

Այս մեծատարած տապան 'ի վերուստ ամփոփ ծածուկ յարկեալ գոլով՝ ունէր մի միայն պատուհան, և մի միայն ընդարձակ դուռն առ 'ի մտանել անասնոց ընդ այն։

Ի շինութիւն տապանին ծախեցան 120 ամք, յոր աշխատէին անհամար մարդիկ, և տեսանէին զպատրաստութիւն Նոյի. այլ ապաշաւանս գալ առ չհաւանէին դառնալ 'ի չարեաց իւրեանց, մինչև բնաջինջ եղեն։

19. Արդ Նոյ էր 600 ամաց յորժամ պատրաստեցաւ կազմեցաւ տապանն. և մտին ամենայն տեսակք կատարեալ կենդանեաց ցամաքայնոց. մի մի զոյգ յանսուրբ չորքոտանեաց և 'ի թռչնոց. իսկ 'ի սուրբ կենդանեաց եօթն եօթն զոյգ արու և էգ. զի 'ի զոհելն զնոսա մի պակասեսցի տեսակ նոցա:

Եօթն աւուրբք յառաջ քան զՋրհեղեղն սկսան անասունք մտանել 'ի տապանն երկնային իմն ազդեցութեամբ, ապա և Նոյ և որդիք իւր ընդ կանանց իւրեանց, ընդ ամենայն ոգիք ութ: Իբրև փակեցաւ և ծեփեցաւ դուռն տապանին, յամի աշխարհի 1656, յեղակարծումն ժամու եղև սաստիկ մրրիկ և սասանութիւն երկրի, որով պատառեցան անդունդք ջրապարփակ շտեմարանաց, խորտակեցան կապանք գետոց, լճից և ծովուց, և առհասարակ ջուրքն 'ի վեր յորդեցին: Նոյնօրինակ և շոգելից ամպք 'ի վերուստ պատառեալ սկսան յորդահոսան տարափել: Այս ամենայն ջուրք միացեալ ողողեցին զերկիր զքառասուն տիւ և զքառասուն գիշեր աճելով, մինչև ծածկել զամենայն երեսս երկրի: Մեռաւ ամենայն շունչ կենդանի 'ի վերայ երկրի մարդ և չորքոտանի, թռչուն և սողուն. և մնաց միայն Նոյ և որք ընդ նմա 'ի տապանի անդ էին: Իսկ ջուրն բարձրացեալ 'ի վերոյ քան զբարձրաբերձ լերինս հնգետասան կանգնաւ, մնաց այնպէս աւուրս հարիւր և յիսուն. մինչև բարձաւ ապականութիւն ողողեալ մարմնոց. ապա եկ հողմն ցամաքեցուցիչ, և սկսաւ զեջանել ջուրն և գնալ 'ի ծոցս գետոց և 'ի խորս երկրի:

20. Ապա 'ի 27 աւուր եօթներորդի ամսոյն նստաւ տապանն 'ի Հայաստան 'ի վերայ լերինն Արարատայ, որ ասի Մասիս. իսկ 'ի

տասներորդ ամսեան երեկցան գլուխք լերանց։ Ապա զկնի քառասուն աւուրց եբաց Նոյ զպատուհանն և արձակեաց զագռաւն լտեսել զերկիր․ այլ նորա դարձեալ զկերակուր 'ի մեռցորդս գտեալ՝ ոչ ևս դարձաւ 'ի տապան անդր։ Յետ այնորիկ արձակեաց զաղաւնին․ որոյ չգտեալ հանգիստ ոտից իւրոց՝ դարձաւ առ Նոյ։ Զկնի եօթն աւուրց դարձեալ արձակեաց զաղաւնին, որ դարձաւ անդրէն՝ ունելով 'ի բերանի շիւղ ձիթենւոյ։ Ապա յետ այլ ևս եօթանց աւուրց վերստին արձակեաց զաղաւնին․ և նորա գտեալ զերկիրն ցամաքեալ՝ ոչ ևս յաւել դառնալ։

21․ Յայնժամ եբաց Նոյ զձեղուն տապանին, և աստուածային հրամանաւ ել նախ ինքն և որդիք իւր հանդերձ կանամբք․ ապա ամենայն անասունք զոյգ զոյգ անշփոթ՝ յետ կալոյ նոցա անդ ամբափակեալ զամ մի ողջոյն և աւուրս տասն։

Իսկ բարեպաշտին Նոյ անդէն և անդ կանգնեալ սեղան տեառն՝ արար ողջակէզս յամենայն անասնոց սրբոց 'ի գոհութիւն մեծի բարերարութեան արարչապետին։ Հաճեցաւ Աստուած ընդ պատարագ նորա, և օրհնեաց զնոսա աճել և բազմանալ 'ի վերայ երկրի։ Նա և հրաման ետ ուտել 'ի մսոյ անասնոց, այլ ոչ ընաւ զարիւն նոցա, և ոչ զմիս ընդ արեան․ զի մի այնու ավարժեսցին մարդիկ փափաքել արեան մարդոյ։ Խոստացաւ ապա տէր ոչ ևս նմանօրինակ պատուհասել զաշխարհս ջրհեղեղաւ, 'ի կարգի պահեալ զեղանակս տարւոյն․ և 'ի նշան հաստատութեան խոստմանն կարգեաց զծիածանն 'ի քաջալերութիւն մարդկան, թէպէտ յառաջ ևս երևէր։

22․ Այս այսպէս յամի արարչութեան աշ-

խարհի 1657, գլխովին անապատացաւ երկիր 'ի բնակչաց. և այնուհետև նորոգ սկսաւ աճելութիւն մարդկան 'ի չորից արանց և 'ի չորից կանանց անտի, և անդրէն լցաւ երկիր բնակչօք աստուածպետական օրհնութեամբ:

Նոյ անդ 'ի Հայաստան յԱյրարատեան նահանգի հաստատեաց զբնակութիւն իւր. որով և գաւառն այն կոչեցաւ Նախիջեւան. և ինքն գոլով այր հողագործ՝ սկսաւ գործել զերկիր և անկել զայգիս: Ցաւուր միում էարբ 'ի գինւոյ անտի և արբեցաւ իբր անփորձ զօրութեան նորին. և մինչդեռ անկեալ ննջէր 'ի տան անծածկոյթ՝ եանես զմերկութիւն նորա Քամ որդին անպատկառ և չոքաւ պատմեաց եղբարց իւրոց Սեմայ և Յաբէթի՝ ծաղր ինն առնելով զհայրն: Իսկ նոքա պատկառանօք առին 'ի վերայ թիկանց իւրեանց զհանդերձս, և յետս յետս գնալով ծածկեցին զգուշութեամբ զմերկութիւն հօր իւրեանց:

Այլ իբրև սթափեցաւ Նոյ և իմացաւ զերան, օրհնեաց զՍեմ և զՅաբէթ. սակայն չկամեցաւ անիծանել զարժանին անիծից զՔամ. այլ շրջեաց զանէծսն 'ի Քանան որդի Քամայ, որ եղեալ էր սկզբնապատճառ չարեացս: Քանզի ըստ ոմանց այս տնահակ մանուկ նախ տեսեալ զմերկութիւն հաւուն՝ ծանոյց հօր իւրում. որպէս ասէ և յոյն թարգմանութիւնն. «Եանես Քամ 'ի ձեռն Քանանու զմերկութիւն հօրն» [1]:

Եւ վախճանեցաւ Նոյ յամի աշխարհի 1706, զկնի ջրհեղեղին 350 ամօք. և ըստ այսմ եանես զտասներորդ ծնունդ իւր զԱբրահամ:

1 Ծն. Թ. 22:

## ԳԼՈՒԽ Բ

### Աշխարհաժողովրդութիւն։
Ա. Ա. 1770

23. Զկնի աշխարհական ջրհեղեղին սկսան մարդիկ այնչափ բազմանալ, մինչև չբաւել երկրին տանել զայնչափ բազմութիւն 'ի միում վայրի։ Վասն որոյ յաւուրս ծննդեան Փաղեկայ, որ նշանակէ բաժանումն, յամի աշխարհի 1770, բաժանեցաւ այն միապետ ժողովուրդ Հայաստան աշխարհի. եկին բազմութիւնք մարդկան համդերձ ընտանեօք և անասնովք, և գիտեցին գեղեցիկ ընդ արեւմտեան հարաւ, և հասեալ 'ի լայնածաւալ դաշտս Սենաարայ՝ զանեղի տեղին անդ և բնակեցան։ Բայց զխորհուրդ թէ յետ բազմանալոյ՝ անտի ևս ունէին մեկնել և բաժանիլ, խորհեցան միակամ և հաստատեցին թողուլ յաշխարհի զյիշատակ մեծի կարողութեան միաբանութեան իւրեանց. «Եւ ասեն. եկայք շինեսցուք մեզ քաղաք և աշտարակ, որոյ գլուխն մինչև յերկինս, և արասցուք մեզ անուն յառաջ քան զցրուել մեր 'ի վերայ երեսաց երկրի»։

Ընդէն և անդ ձեռն 'ի գործ արարեալ պատրաստեցին զաղիւս և զկուպր փոխանակ կրոյ։ Իբրև եդին զհիմն աշտարակին և բարձրացուցին 'ի վերայ քան զգետնին, որպէս ցորդ երեւի, յանկարծակի իմն շփոթեաց Աստուած զմիտս և զլեզու նոցա. մինչև չկարել իմանալ զխօսս և զբարբառ միմեանց. ուր

յառաջ ամենեցուն լեզու և բարբառ մի էր. յորմէ և տեղին կոչեցաւ Բաբելոն, այսինքն խառնակումն. և այն բաւական եղև ցրուել զընդունայն խորհուրդ նոցա՝ խափանելով ըզգործն անավարտ:

24. Այս այլայլութիւն լեզուաց եղև յաւէտ ըստ հաճմից նոցա՝ իւրաքանչիւր ազգաց խօսելով 'ի լեզու ինչ նոր՝ բղխեալ յառաջնոյ լեզուէ անտի Ադամայ, որպէս յայտ է 'ի բառից այժմեան մայր լեզուաց:

Հաւանականագոյն թուի ասել, թէ Նոյ և որդիք իւր գոլով յայնժամ կենդանի՝ ոչ մեկնեցան 'ի Հայաստանէ, և ոչ գտան յաշտարակաշինութեան անդ. որով և լեզու իւրեանց մնաց անփոփոխ: Են որք ասեն թէ 'ի Բաբելոն 72 լեզուք բաժանեցան ըստ 72 նահապետութեան ազգաց: «Այս են ազգք որդւոց Նոյի ըստ ծնունդս իւրեանց ըստ տոհմս իւրեանց, և 'ի սոցանէ սփռեցան կղզիք ազգաց 'ի վերայ երկրի յետ ջրհեղեղին» 1:

25. Յաբեթ էր անդրանիկ որդի Նոյի. այլ 'ի շնորհս ազգաբանութեան փրկչին Սեմ յառաջ դասի 'ի կարգի անդ. զի 'ի ցեղէ նորա եկն մարդացաւ Մեսիա: Արդ Յաբեթի եղեն ութ որդիք.

Գամեր, յորմէ սերեցան Գամիրք և Հայք.
Մագոգ, յորմէ Գոթացիք և Սկիւթացիք.
Մադայի, յորմէ Մարք և Լիւրիկեցիք.
Յաւան, յորմէ Յոյնք և Կիւլիկեցիք.
Թոբալ, յորմէ Թետալք, և Վիրք.
Մոսոք, յորմէ կարծին Մոսկովք.
Թիրաս, յորմէ Թրակացիք.
Եղիսա, յորմէ Պեղոպոնեսեանք:

1 Ծն. Ժ. 32:

Սեմայ միջին որդւոյ Նոյի եղեն հինգ որդիք.

Եղամ, և 'ի նմանէ Եղեմացիք և Պարսիկք.

Ասուր, և 'ի նմանէ Ասորեստանեայք.

Արփաքսադ, և 'ի նմանէ Քաղդէացիք և Եբրայեցիք.

Լուդ, և 'ի նմանէ Լիւդացիք և այլք.

Արամ, յորմէ Արամացիք կամ Ասորիք և այլք:

Իսկ Քամայ կրսեր որդւոյ Նոյի եղեն չորք որդիք.

Քանան, և 'ի նմանէ Քանանացիք և Սիդոնացիք.

Մեստրեմ, և 'ի նմանէ Եգիպտացիք և Փղշտացիք.

Փուդ, և 'ի նմանէ Արաբացիք.

Քուշ, և 'ի նմանէ Եթէովպացիք և Սաբացիք:

26. Յետ աշխարհակործանութեան յամենե-
սին 'ի սոսա զօրաւորագոյն գտաւ Նեբրովթ
որդի Քուշայ թոռն Քամայ, որ և եղև գլուխ
և առաջնորդ ամբարտաւան առաջարկութեան
աշխարհակործանութեանն, և էր այր խորոխտ և
քաջ բռնաւոր: Յառաջ քան զսա ոչ գոյր
բռնամարտիկ ոք՝ ինքն բռնացեալ և որսացեալ
նենգութեամբ զբազումս՝ տիրապետեաց 'ի վե-
րայ նոցա, և զաթոռ միապետութեան իւրոյ
հաստատեաց 'ի Բաբելոն, զոր շինեալ էր 'ի
վերայ Եփրատ գետոյ. ուրանօր շինեաց և զե-
րիս քաղաքս, զԱրեք, զԱքադ, և զՔաղանէ:
Զսա այլք կոչեն Բէլ կամ Բահաղ՝ նախահայր
Նինոսի Ասորեստանեայց ինքնակալի, և սկզբ-
նապատճառ կռապաշտութեան. որպէս և ըզ-
Նինոս զատող ասեն մոգութեան և հմայիչ-
կաց. զի սա ասեն նախ հաստեաց զարձան
որդւոյն իւրոյ վաղամեռիկ եղելոյ. այնուհետև
սկսան շինել կուռս և պաշտել. յորմէ նախ

և առաջ առ Քանանացիս եմուտ կռապաշտութիւն:

27. Սա ինքն Նեբրովթ կամելով ընդ իւրն նուաճել զՀայկ զորդի Թորգոմայ զհինգերորդն 'ի Նոյէ, որ և մի էր 'ի նահապետաց աշտարակաշինութեան, ել 'ի վերայ նորա զօրօք բազմօք: Իսկ Հայկ որ գաղթեալ 'ի Բաբելոնէ բնակէր յԱրարատեան աշխարհի հանդերձ ընտանեօք իւրովք և ժողովրդովք, իբրև լուաւ զգալուստ Բելայ՝ պատրաստեցաւ 'ի պատերազմ. և 'ի մերձենալ թշնամւոյն յարձակեցաւ 'ի վերայ նորա անխնայաբար, և ձգեալ 'ի նա ուժգնակի զնետն երեքթեւեան՝ անդէն սատակեաց զնա յամի աշխարհի 1896: Որդիք Բելայ լուեալ զմահ նորա՝ արձան կանգնեցին և պաշտեցին զնա. որում յաջորդեաց Բաբ որդին իւր ըստ մերում Խորենացւոյն:

Իսկ քաջին Հայկայ զօրացեալ յաշխարհին իւրում եղև նախահայր բնակչաց երկրին, մինչև ազգին կոչիլ նորին անուամբ Հայք:

Ըստ մերոյն Վարդանայ Հայկ էր աստուածապաշտ, և վասն այսորիկ նշկահեաց զԲել՝ «Ոչ պաշտեաց, ասէ, ընդ եօթանասուն և մի նահապետս երկրի զպատկերն Բելայ. այլ խրախուսեալ յԱստուած՝ սատակեաց զնոյն ինքն զկենդանին առաջնորդ կռապաշտութեան »:

Ուստի հին եկեղեցին յաջորդէր յայնժամ 'ի բարեպաշտ անձինս սերնդոցն Նոյի և 'ի տանն Սեմայ մինչև ցԱբրահամ նահապետ [1]:

1 Խորեն. Ա. Թ. 10: Յովհ. Կաթ: Մագիստ: Վարդան Գ[illegible] Լ[illegible]: Պատմագրութիւն Հայ. գիրք Ա. գլ. Գ: Նախերգութիւն 'ի ժամանակագրութեան:

## ԴԷՊՔ ԵՐԿՐՈՐԴԻ ԴԱՐՈՒՆ

Ամ աշխ.
ըստ Ժամ.

1658. Գամեր ծնանի ՚ի Յաբէթայ, Արփաքսադ ՚ի Սեմայ, և Նոյ առնէ բնակութիւն յԱրարատ:
1660. Քուշ ծնանի ՚ի Քամայ. յորմէ յետ երից ամաց ծնանի Նեբրովթ:
1695. Թորգոմ ծնանի ՚ի Գամերայ:
1727. Հայկ ծնանի ՚ի Թորգոմայ, և չու մարդկան ՚ի Սենաար:
1771. Բէլ առնէ ամս 126. սկիզբն աշտարակաշինութեան և տէրութեան Ասորեստանեայց:
1812. Կործանումն աշտարակին և սփռել ազգաց:
1819. Սկիզբն տէրութեան Եգիպտացւոց ՚ի Մեստրեմայ:
1878. Թարա հայր Աբրահամու ծնանի ՚ի Նաքովրայ:
1893. Հայկ ելնէ, և սկիզբն շինուածոց նորա ՚ի Հարք:
1896. Պատերազմ Հայկայ ընդ Բէլայ:
1973. Մահ Հայկայ:
1974. Արմենակ զօրանայ:
1980. Մանազկերտ շինի ՚ի Մանաւազայ յեղբօրէ Արմենակայ:
1996. Փաղէկ մեռանի. և յետ միոյ ամի Նաքովր:
2006. Նոյ մեռանի 950 ամաց:

Զայնու ժամանակաւ զկնի Հայկայ՝ տիրեալ Հայոց ամս 46 որդի նորա Արմենակ՝ շինէ զշինուածս յԱրագածոտն, և տնկէ անտառ մի սօսեաց, զոր յետոյ ձօնեցին դից։ Յետ նորա յաջորդեաց Արամայիս որդի նորա ամս 40, և շինեաց զԱրմաւիր։

# ԵՐՐՈՐԴ ԴԱՐ

## ԳԼՈՒԽ Ա

### Աբրահամ և Դաւիթ :

Ա. Ա. 2000

28. ԱԲՐԱՄ որդի Թարայի 'ի սերնդոցն Սեմայ՝ ըստ ոմանց ծնեալ համարի 'ի վերջին աւուրս Նոյի, և ըստ այլոց յամի 2008. որ և զօրացեալ կենդանի հաւատով միայն յաստուածպաշտութեան 'ի մէջ կռապաշտ ազգին Քաղդէացւոց: Մինչև եղև նմա հրաման 'ի տեառնէ ելանել յերկրէն Քաղդէացւոց. նմին իրի Թարա հայր նորա առ զԱբրամ և զՆաքովր զորդիս իւր, և զՂովտ զորդի Առանայ որդւոյ իւրոյ մեռելոյ, և զՍարա նու իւր զկին Աբրամու, և եհան զնոսա յաշխարհէն Քաղդէացւոց, և եկին մինչև 'ի Խառան, և բնակեցան անդ յերկար ժամանակ:

Այս եղև երկրորդ պատուէր առ Աբրամ 'ի տեառնէ, անտի նա հեռանալ: Եւ ասէ Աստուած ցԱբրամ. «Ել դու յերկրէ քումմէ և յազգէ քումմէ և 'ի տանէ հօր քոյ, և եկ յերկիր զոր ցուցից քեզ»: Հնազանդեցաւ աստուածային ձայնին, և պանդխտեցաւ Աբրամ յերկրին Քանանացւոց. անտի յԵգիպտոս, անտի վերստին յաշխարհն Քանանացւոց, գոլով յայնժամ 75 ամաց:

Հաճեցաւ տէր ընդ այս միամիտ հնազանդութիւն նորա, որ արդարեւ ոչ գիտէր յո՛ երթիցէ և ո՛ւր զտեղի առնուցու. վասն որոյ երևեցաւ նմա Աստուած յերկրին Քանանացւոց և

խոստացաւ տալ նմա զերկիրն զայն ՚ի ժառանգութիւն զաւակի նորա ։ Անդ շինեաց Աբրամ սեղան և մատոյց պատարագ արարչին ։ Եւ ահա այս է կոչումն Աբրահամու ՚ի տեառնէ ։

29 . Ապա ՚ի պատճառս մեծի սովուն չոգաւ Աբրամ դարձեալ յԵգիպտոս հանդերձ բազմաթիւ ընտանեօք և ստացուածովք իւրովք . ուրանոր ազատեաց Աստուած զՍարա ՚ի ձեռաց փարաւոնի, որ կամէր առնուլ զնա ՚ի կնութիւն ։

Դարձ արարեալ անտի Աբրամ եկն անդրէն յերկիրն Քանանացւոց, և բնակեցաւ յանապատն ՚ի մէջ երկուց քաղաքաց Բեթելայ և Անգեայ առ երի սեղանոյն, զոր իւր իսկ կանգնեալ էր։ Ի գործի անդ խռովեալ մեկնեցաւ ՚ի նմանէ Ղովտ եղբօրորդի իւր սակս բազում անասնոց երկաքանչիւրոցն, և ընտրեաց բնակել ՚ի կողմանս Սոդոմայ առ Յորդանանու ՚ի ջրարբի և յուռթի դաշտս ընդարձակս յոյժ, և ընտրեաց իւրեան տեղի բնակութեան զքաղաքն Սոդոմ ։

Յետ մեկնելոյն Ղովտայ վերստին նորոգեաց տէր զխոստումն իւր առ Աբրամ, տալ նմա և զաւակի նորա զամենայն երկիրն ընդ երկայն և ընդ լայն, և հրամայեաց նմա ելանել շրջել յերկրին . և նա եկեալ բնակեցաւ առ կաղնեաւն Մամբրէի ։

30 . Ղովտ գոհ էր ընդ վիճակ իւր և կայր ՚ի Սոդոմ ՚ի հանդստեան . սակայն Քոդողոգոմոր արքայ Եղամայ միացեալ ընդ այլոց երից թագաւորաց՝ ել ՚ի վերայ արքային Սոդոմայեցւոց, որոյ կողմն տկարացեալ ՚ի մարտին՝ փախեաւ ընդ արքային Գոմորայ . իսկ թշնամիք մտին ՚ի Սոդոմ, և յաւարի առին զքաղաքն, և զբնակիչս նորա գերի վարեցին . ընդ նոսին և զՂովտ

հանդերձ ամենայն ստացուածովքն:

Զայն իբրեւ լուաւ Աբրամ՝ նոյն հետայն գումարեալ զծառայս իւր 318 անձինս և սպառազինեալ ընդդեմ փութանակի զհետ գերեվարաց, և հասեալ գիշերայն յեղակարծումն 'ի վերայ բանակի նոցա մինչդեռ յանհոգս կային, և օգնականութեամբ տեառն խորտակեալ զզօրութիւնս չորից թագաւորացն՝ 'ի փախուստ դարձոյց զամենեսին, և էառ զամենայն գերիս և զՂովտ և զհամօրէն աւարն, և դարձաւ յաղթանակաւ 'ի Սոդոմ:

Յայնժամ ելին ընդ առաջ նորա թագաւորն Սոդոմայ, և Մելքիսեդեկ արքայ Սաղեմայ՝ քահանայ Աստուծոյ բարձրելոյ: Թագաւորն Սոդոմայ մատոյց Աբրամու զամենայն աւարն. այլ նա ոչինչ էառ յայնցանէ: Սակայն կամեցաւ զի տացէ արժանաւոր վարձս երից քաջ մարտակցաց իւրոց, Օնանայ, Եսքողայ և Մամբրեի: Իսկ Մելքիսեդեկ մատոյց նմա հաց և գինի, զմանն ինչ նախ նուիրեալ Աստուծոյ 'ի գոհութիւն վասն մեծի յաղթութեանն, և զմնացեալն ետ Աբրամու: Ընկալաւ զայն Աբրամ հաւատով իբրեւ զպարգեւ Աստուծոյ. ըստ որում Մելքիսեդեկ նախատիպ օրինակ Քրիստոսի՝ մատոյց զայն նուէր 'ի նշանակ սրբոյ պատարագին. որում ետ Աբրամ տասանորդս յաւարէ անտի:

31. Աբրամ յորժամ դարձաւ 'ի ձորն իւր առ կաղնեաւն Մամբրէի՝ երեւեցաւ նմա Աստուած և նորոգեաց զխոստումն իւր, տալ զերկիրն զայն 'ի ժառանգութիւն զաւակի նորա. և զի սերունդք զաւակի նորա եղիցին անթիւք 'ի բազմութենէ իբրեւ զաստեղս երկնից: Հաւատաց Աբրամ յԱստուած և մատոյց նմա զոհս. ընդ որ հաճեցաւ տէր, և ընդ երեկս արկ զնա-

վասն Թմրութիւն և յափշտակութիւն մտաց՝ յայտնելով զոր ինչ ընդ դարս բազումս հանդերձեալ էին հասանել 'ի վերայ Թոռանց իւրոց և սերնդոց: Ըստ օմանց յայնժամ ետ Աստուած Թոյլտուութիւն բազմակնութեան մինչև 'ի գալուստ փրկչին. որոյ եկեալ դարձոյց զամուսնութիւն յառաջին կարգ միակնութեան. որովհետև յետ ջրհեղեղին կարճեալ էր երկարաձգութիւն կենաց մարդկան:

Այս այնուհետև Սարա ետ 'ի կնութիւն Աբրամու զԱգար աղախին իւր եգիպտացի. որ յղացաւ 'ի նմանէ, և անդէն բարձրացեալ սրտիւ սկսաւ արհամարհել զտիկին իւր՝ ակն ունելով Թէ որդի իւր ժառանգեսցէ զԱբրամ: Իսկ տիկինն Սարա դժկամակեալ ընդ այն՝ սկսաւ խստութեամբ վարել ընդ նմա. այլ նա առաւել ևս յանդգնեալ եԹող զտիկինն և փախեաւ յանապատն 'ի կողմն Եգիպտոսի: Եւ մինչդեռ կայր առ եզերբ ջուրց՝ երևեցաւ նմա հրեշտակ տեառն և խրատեաց դառնալ և հնազանդել ընդ ձեռամբ Սարայի և մխիԹարեաց զնա, Թէ ազգ մեծ և զօրաւոր ելցէ 'ի քէն: Աբրամ էր ամաց 86, յորժամ ծնաւ Իսմայէլ յամի աշխարհի 2085:

32. Աբրամ էր ամաց իննսուն և իննից և Իսմայէլ երեքտասանից՝ յորժամ վերստին երևեցաւ նմա Աստուած, և հաստատեաց զուխտն բազմացուցանելոյ զնա յոյժ յոյժ. և կոչեաց զանուն նորա յաւելմամբ միոյ տառի Աբրահամ. նոյնպէս և զանուն Սարայի Սառա, 'ի նշան բազմացուցանելոյ զծնունդս նոցա: Եւ 'ի նմին ժամանակի հրամայեաց նմա տէր Թլփատել զմարմին անԹլփատուԹեան իւրոյ և Իսմայէլի և ամենայն արանց՝ որ 'ի տան նորա էին. 'ի նշան ուխտին Աստուծոյ ընդ նմա և ընդ սերըն-

գոյ նորա յետ նորա 'ի բազում դարս ։

33. Զայնու ժամանակաւ Ղովտ բնակեալ 'ի Սոդոմ խառնաղանջ ընդ բեղմնաւորութիւն երկրին՝ պահելով զանձն սուրբ յանաւակութեանց Սոդոմայեցւոց, որոց լցեալ չափ անօրէնութեան՝ փութացուցին զկորուստ անձանց ։ Քանզի մինչդեռ նստէր Աբրահամ առ դուրս խորանին իւրոյ 'ի միջօրէի, եկին առ նա երեք հրեշտակք 'ի կերպարանս մարդոյ, որ երթային կործանել զքաղաքս Սոդոմայեցւոց ։ Ընդ առաջ եւ նոցա Աբրահամ և հիւրընկալեաց զնոսա 'ի խորանի իւրում, եդեալ առաջի նոցա սեղան ։ Իբրև կերին, երկու 'ի նոցանէ գնացին 'ի դէմ եդեալ տեղին, իսկ երրորդն մնաց անդէն, և ետ նմա զաւետիս ծննդեան Իսահակայ. յայտնելով նմա և զկործանումն Սոդոմայ ։ Խառնեալ Աբրահամու ընդ կորուստ արդարոց քաղաքին ընդ ամբարշտացն, միջնորդ եկաց յաղաւթիւն նոցին ։ Այլ զի չգտան անդ տասն արդարք, վասն այնորիկ արդարութիւնն Աստուծոյ վճռեաց զկործանումն ապականելոցն՝ հրով դատեալ զնոսա ։

34. Երկու հրեշտակքն երիտասարդակերպ հասեալ 'ի Սոդոմ մտին 'ի տունն Ղովտայ ըստ խնդրելոյ նորա ։ Զայն տեսեալ անօրէն արք քաղաքին պատեցին զտունն յերեկոյին և բռնադատէին զՂովտ տալ նոցա զհիւրսն յապականել ։ Նմին իրի հրեշտակք հարին զնոսա կուրութեամբ, և փութացուցեալ հանին անտի զՂովտ, զկինն և զերկուս դստերս նորա ։ Ի ծագել արեգական Ղովտ եմուտ ընտանեօքն 'ի Սեգովր. յայնժամ տեղաց յերկնից հուր և ծծումբ, և այրեաց զՍոդոմ, զԳոմոր, զԱդմա, զՍեբոյիմ, ապա և զՍեգովր՝ յետ ելանելոյ անտի Ղովտայ. և այսպէս ամենայն քաղաքք

ընդ շրջակայ սահմանայն հանդերձ ամենայն բնակչօք 'ի մոխիր լուծան։ Ղովտ միայն ապրեցաւ ընդ երկուց դստերաց· զի կինն ընդդէմ պատուիրանաց հրեշտակին յետս հայեցեալ 'ի փախչելն, պատուհասեցաւ և եղև արձան աղի։ Իսկ Ղովտ նստաւ 'ի լերին անդ ընդ դստերաց իւրոց· յորոց սերեցան Մովաբացիք և Ամմոնացիք։ Յայնժամ յղի էր Սառրա Իսահակաւ։

35. Ընդ այն ժամանակս Թագաւորէր Նինոս 'ի Նինուէ քաղաք, զոր ինքն շինեալ էր։ Իսկ յԵլլադայ երկրորդ Թագաւոր եղև Եւրոփս, և առ Եգիպտացիս վեշտասաներորդ իշխանութիւն էր Թեբայեցւոց· զոր Հարստութիւն կոչէին։ Ի նմին ժամանակի Զրադաշտ մոգ կարգեցաւ արքայ Բակտրիացւոց· ընդ որում ետ պատերազմ Նինոս։ Որոյ կին Շամիրամ հզօր Թագուհի Թագաւորեալ յետ նորա կալաւ զԱսիա և արար ոչ սակաւ մեծագործութիւնս։ Իսկ 'ի յիններորդ վեցերորդ ամի կենաց Աբրահամու Թագաւորեաց Կրէս· յորմէ աշխարհն անուանեցաւ Կրետէ· ուր ապա շինեցաւ տաճարն Կիւբելեայ մօր Դիոսի ըստ Եւսեբեայ։ Ի նմին ժամանակի 'ի տէրութեան Հայկազանց յամի աշխարհի 2060 տիրէ Ամասիա որդի Արամանեկայ ամս 32. զոր յաջորդէ Գեղամ որդի իւր յետ նորա, որ շինեաց զԳեղարքունիս առ ծովակաւ Սեւանու· որում յաջորդեաց Հարմա որդի իւր· իսկ սորա որդի Արամ զօրացեալ յոյժ տիրէ բազում աշխարհաց· բայց որդին իւր Արայ գեղեցիկ մեռանի 'ի պատերազմին որ ընդ Շամիրամայ սակս անհաւան լինելոյ հրապուրանաց կաթոտ Թագուհւոյն այնորիկ [1]։

1 Խորէն. ա. 12. 15։ Ժամանակագր. առ Աբրահ. ե=ծբ։ Պատմագր. Հայ. Գլ. ե=է։

## ԳԼՈՒԽ Բ

### Իսահակ և որդիք իւր ։
Ա. Ա. 2100 կամ 2108

36. Աբրահամ էր ամաց հարիւրոց և Սառրա իննսնից յորժամ ծնաւ ըստ աստուածային խոստմանն որդին իւր Իսահակ. զոր թլփատեաց յաւուր ութերորդի. և արար խրախութիւն մեծ յորժամ հատուցաւ մանուկն 'ի ստենէ։ Իսկ իբրև եղև Իսահակ երից ամաց և Իսմայէլ վեշտասան, տեսեալ Սառրայի թէ նեղի և հալածի որդին իւր յեղբօրէ իւրմէ յԻսմայէլէ՝ բռնադատեաց զայրն իւր զԱբրահամ հեռացուցանել 'ի տանէ իւրմէ զԻսմայէլ ընդ մօր իւրում Ագարայ։ Ծանր թուեցաւ Աբրահամու բանս այս. այլ իբրև լուաւ 'ի տեառնէ թէ այն իսկ են կամք նորա, հնազանդեցաւ, և արձակեաց զնոսա։ Որոց հրաժարեալ 'ի տանէ նորա գնացին 'ի կողմն Եգիպտոսի. այլ վրիպեալ մոլորեցան յանապատին Բերսաբեայ, մինչև սպառեալ ջրոյն 'ի տկէ իւրեանց՝ սկըսան տանջիլ 'ի ծարաւոյ։ Այնչափ սաստկացաւ ծարաւ Իսմայէլի, մինչև յոգիս սպառանեալ անկաւ ընդ ծառով։ Իսկ մօրն խռովեալ 'ի գթոյ աղէտիցն մեկնեցաւ անտի չտեսանել զմահ որդւոյն։ Եւ կացեալ յանդիման աղաղակէր առ Աստուած։ Լուաւ տէր և առաքեաց զհրեշտակ իւր մխիթարել զնա, և ցուցեալ նմա ջրհոր ջրոյ կենդանւոյ մօտ անդր՝ վերստին խոստացաւ մեծացուցանել զԻսմայէլ յազգ մեծ։ Եւ զովացեալ նոցա 'ի ջրոյ անտի՝ չոքան բնակեցան 'ի գաւառին Փառանու առ սահ-

մանօք Եգիպտոսի . ուրանօր զօրացեալ Իսմայէ-լի եղև իշխան և հայր ազգաց բազմաց։

37. Ի քսաներորդ հինգերորդ ամի կենաց Ի-սահակայ, կամեցաւ Աստուած փորձել զծա-ռայն իւր զԱբրահամ. յանկարծակի ձայն եղ-եւ նմա յերկնից և ասէ . «Առ դու զորդիդ քո սիրելի զԻսահակ, և գնա յերկիր բարձր, և հանցես զդա անդ յողջակէզ 'ի վերայ միոյ լե-րանց, յորոց ասացից քեզ» 1։ Ծանր էր ա-պաքէն հրամանս այս նահապետին . այլ նորա ոչինչ երկմտեալ՝ անդէն պատրաստեցաւ երթա-նել 'ի ճանապարհ՝ գիշերային ընդ մեծին Ա-ղերաւի . զի մի արգել ինչ ուսանէք լինիցի նմա։ Գնաց Աբրահամ երից աւուրց ճանապարհ՝ առեալ ընդ իւր զԻսահակ և զերկուս 'ի ծա-ռայից, և զփայտ 'ի պէտս ողջակիզին։ Եւ յա-ւուր երրորդի եցոյց նմա տէր զգլուխ լերին, որ ըստ ոմանց էր լեառն Գողգոթայ։ Ընդ ստո-րոտ լերինն եթող Աբրահամ զծառայսն . և ա-ռեալ զհուր և զսուր, և զփայտն եդեալ յու-Իսահակայ, ելանէին 'ի լեառն։ Եւ 'ի ճանա-պարհին եհարց Իսահակ՝ թէ ուր իցէ ոչխարն յողջակէզ։ Այս բան Իսահակայ աղէկտուր ա-րար զսուրբ ծերունին . այլ նա յԱստուած յանձն արարեալ՝ ասաց. «Աստուած տեսցէ զիւր ոչխար յողջակէզ»։

38. Իբրև հասին 'ի տեղին, անդ շինեաց Աբ-րահամ սեղան՝ եդեալ 'ի վերայ զփայտն . ապա կապեալ զորդին իւր եդ 'ի վերայ փայտին 'ի զե-նումն և յայրումն։ Եւ իբրև վերացոյց զսուրն զենուլ զորդին՝ արգել զնա ձայն հրեշտակին խօսելով 'ի դիմաց Աստուծոյ . Հաս է Աբրա-համ, ցայդ վայր. ընդունելի եղև պատարագ քո

1 Ծն . ԻԲ . 2։

կեցցէ Իսահակ, և 'ի նմանէ բազմասցին զաւակք Իբրև զաստեղս երկնից: Այո՛ օրհնելով օրհնեցից զքեզ և զԻսահակ որդի քո հնազանդ. և 'ի զաւակէ նորա ծնցի փրկիչ աշխարհի, որով օրհնեսցին ամենայն ազգք: Անդանօր ետես Աբրահամ խոյ մի կախեալ զեղջերաց՝ առ մատոյց զայն յողջակէզ փոխանակ Իսահակայ. և կոչեաց ապա զանուն տեղւոյն այնորիկ Տէր ետես: Եւ զկնի դարուց տեղին քրովբէից անդ 'ի գլուխ լերին պատարագեցաւ 'ի վերայ սեղանոյ խաչին վասն փրկութեան մարդկան:

39. Մեռաւ Սառրա յերեսներորդ եօթներորդ ամի կենաց Իսահակայ որդւոյ իւրոյ լի առաքինութեամբ. որ ըստ Պօղոսի եղև օրինակ եկեղեցւոյն Քրիստոսի: Իսկ Աբրահամ 'ի ծերութեան իւրում կամեցեալ ամուսնացուցանել զԻսահակ, առաքեաց զԵղիազար հաւատարիմ ծառայ իւր 'ի Միջագետս Ասորւոց 'ի տուն Նաքովրայ եղբօր իւրոյ՝ առնուլ անտի կին որդւոյ իւրում: Իբրև եհաս Եղիազար 'ի քաղաքն անդր հանդերձ ամենայն պատրաստութեամբ, և կայր առ ջրհորով ընդ երեկս, եկն անդ Ռեբեկա դուստր Բաթուէլի թոռն Նաքովրայ. զոր ընդ տեսանելն հաճեցաւ Եղիազար ընդ խոնարհ հեզմտութիւն նորա յարբուցանելն զինքն և ուղտուց նորա ջուր: Ապա չոքան 'ի տուն առ Լաբան եղբայրն Ռեբեկայ. և անդ հաստատեցին զբան հարսնախօսութեան: Եւ 'ի վաղիւ անդր փութացաւ Եղիազար և ել 'ի ճանապարհ, առեալ ընդ իւր զՌեբեկա և զնաժիշտս նորա, որք տուան նմա յօժիտս: Յորժամ հասին 'ի տուն՝ Իսահակ էառ զՌեբեկա զամուսին իւր, և եմոյծ 'ի սենեակ Սառրայի, որ երեք ամօք յառաջ մեռեալ էր. և եղև Ռեբեկա սիրելի ամենեցուն որպէս կին ժրագլուխ և առաքինի:

40. Քառասուն ամաց էր Իսահակ երբև ամուսնացաւ ընդ Ռեբեկայ, այլ ամս իննեւտասն ոչ ծնաւ նոցա որդի։ Իսկ Աբրահամ գոլով հարիւր քառասուն ամաց՝ էառ կին Քետուրա անուն, յորմէ եղեն նմա որդիք վեց։ Եւ եկեաց Աբրահամ այլ ևս ամս երեսուն և հինգ, և ննջեաց ՚ի խոր ծերութեան 175 ամաց, յամի աշխարհի 2175։

Այլ Իսահակայ և Ռեբեկայ լսելի եղեն պաղատանք առ Տէր վասն զաւակի. և յղացեալ Ռեբեկա ՚ի վաթսներորդ ամի կենաց Իսահակայ և ծնաւ երկուս որդիս երկուորեակս, զԵսաւ անդրանիկ և զՅակոբ կրսեր. և ՚ի ծնանելն կրսերն ունէր զգարշապարէ անդրանկանն։ Շառագոյն էր Եսաւ և Թաւ, և եղև զօրեղ և վայրենաբարոյ. որով և անձնատուր ՚ի գործ որսորդութեան վայրի երէոց։ Իսկ Յակոբ գոլով ընդաստուն և հեզաբարոյ, միտ դնէր հովուութեան և տանանին գործոց, հլու ծնողացն և սիրելի նոցա։

Յաւուր միում եկեալ Եսաւայ ՚ի դաշտէ վաստակեալ և նքթեալ, և տեսեալ ՚ի ձեռին Յակոբայ ոսպնաթան՝ խնդրեաց ՚ի նմանէ. և նա փոխան այնր խնդրեաց յԵսաւայ զանդրանկութիւնն. զոր նա ինքն Եսաւ արար և դիւրագնի վաճառեաց հանդերձ երդմամբ, և վրիպեցաւ յիրաւանց անդրանկութեանն։

Յետ այսորիկ շինեաց սեղան Իսահակ առ Ջրհորոյն երդման, և կարդաց զանուն տեառն։ Երևեցաւ նմա Աստուած կրկին անգամ և հաստատեաց զուխտն, զոր եդ ընդ Աբրահամու հօր իւրում։

41. Ի սմին ժամանակի երբև սկիզբն առեալ հնոյն եկեղեցւոյ պայծառանայր ոգւով աստուածպաշտութեան նահապետացն որոց, և

բանտարկումն գուն գործէր հաստատել զկռա-պաշտութիւն : Երևեցաւ յայնժամ Դիոս ոմն ընդ եղբարց իւրոց Նեպտոնի կամ Պոսիդոնի և Պղուտոնի, և ընդ այլոց ինքնատեղծ աստուածոց հեթանոսաց . զորս 'ի դարս հեթանոսութեան 'ի պաշտօն առեալ յարգեցին :

Ի Հայաստան պայազատէր Կորդոս որդի Արայի փոխանակ հօր իւրոյ, և ծնանի զԱնուշաւան, զոր նուիրեաց 'ի սօսին Արմենակայ մօտ յԱրմաւիր, համարելով թէ անդ բնակէն դիք, որոց և ձօնէին բազում ինչ [1] :

## ԳԼՈՒԽ Գ

### Յակոբ երթայ 'ի Միջագետս.

Ա. Ա. 2245

42. Իբրև ծերացաւ Իսահակ, ակարացաւ յուժոյ և յաչաց իւրոց` գոլով ամաց հարիւր երեսուն և եօթանց : Նա համարեալ թէ մերձ է 'ի փոխճանել, կամեցաւ տալ զվերջին օրհնութիւն անդրանկութեան երէց որդւոյ իւրում Եսաւայ : Նմին իրի պատուիրեաց նմա երթալ յորս, և առնել նմա խորտիկս, զի կերիցէ և օրհնեսցէ զնա : Բայց քանզի Եսաւ երդմամբ վաճառեալ էր զանդրանկութիւն իւր Յակոբայ, նմին իրի և Աստուած կամեցաւ, զի Յակոբ լիցի անդրանիկ : Զայս գիտելով և Ռեբեկայ, ուսուցեալ էր 'ի տեառնէ, թէ երէցն կրսերոյն ծառայեսցէ, հնարիւք իմն փոխաբերեաց զայն 'ի կրսերն : Քանզի ետ Յակոբայ բերել 'ի դաշտէ երկու ուլս փափուկս, և արար խոր-

1 Խորէն. Ա. 14: Պատմ. Հայ. Գւ. Է:

տիկս ըստ ախորժանաց Իսահակայ. և ագուցեալ զուլենիս 'ի բազուկս և 'ի պարանոց նորա՝ արար զնա թաւամորթ նման Եսաւայ: Եւ այսպէս յառաջ քան զդարձն Եսաւայ՝ մատոյց Յակոբ զխորտիկն հօր իւրում. որ առ վատութեան աչացն ոչ իմացեալ՝ օրհնեաց զՅակոբ հայրական օրհնութեամբ և ետ նմա զիրաւունս անդրանկութեան: Իբրև դարձաւ Եսաւ՝ իմացեալ զիրան լի եղև բարկութեամբ, մինչև սպառնացաւ սպանանել զնա:

43. Զայն իմացեալ Ռեբեկայ մօր իւրոյ՝ կամեցաւ առ ժամանակ մի հեռացուցանել զնա 'ի տանէ. վասն որոյ հրամանն առեալ յԻսահակայ արձակեաց զՅակոբ 'ի Միջագետս 'ի տուն Բաթուէլի հօր իւրոյ. առնուլ կին 'ի դստերաց եղբօր իւրոյ Լաբանու:

Առեալ Յակոբայ զօրհնութիւն հօրն՝ ել 'ի Ճանապարհ, և էր յայնժամ ամաց եօթանասնից: Եւ հասեալ 'ի տեղի մի 'ի մուտս արևու՝ ննջեաց. և ետես յայնմ գիշերի տեսիլ սքանչելի: Սանդուղք հաստատեալ յերկրի, և գլուխն հասանէր մինչև յերկինս. ընդ որ հրեշտակք ելանէին և իջանէին. և տէր Աստուած կայր 'ի գագաթն սանդղոց: Այս խորհրդաւոր տեսիլ գուշակէր նմա, թէ խնամք Աստուծոյ հսկէր 'ի վերայ նորա. զի որ ցպով միով գնայր 'ի Միջագետս, դառնալոց էր անտի բազում Ճոխութեամբ, որդւովք և ծառայիւք: Իբրև զարթեաւ Յակոբ, համարելով թէ տեղի այն է նուիրական Աստուծոյ՝ կոչեաց Բեթէլ այսինքն տուն Աստուծոյ. և զվէմն յորոյ վերայ ննջեալ էր, կանգնեաց արձան՝ արկեալ իւղ 'ի գլուխ նորա. ուր յետոյ շինեցաւ և քաղաքն Բեթէլ:

44. Անտի չոգաւ Յակոբ 'ի խառան. ուրա-

նոր առ. Հրճուալ համբուրեալ Ռաքէլայ զաւեր Լաբանու մօրեղբօր իւրոյ. յայտնեաց զինքն՝ թէ ով իցէ. և նորա ընթացեալ պատմեաց հօր իւրում Լաբանու: Որ իբրև լուաւ՝ գնաց վաղվաղակի ընդ առաջ Յակոբայ, և համբուրեալ զնա ընկալաւ մարդասիրութեամբ 'ի տուն իւր: Յետ կալոյ անդ Յակոբայ ամսօրեայ մի ժամանակ՝ խոստացաւ Լաբան տալ նմա զՌաքէլ դուստր իւր 'ի վարձ եօթնամեայ ծառայութեան:

Այլ 'ի ժամանելն Յակոբայ 'ի ծառայութիւն անդ. օրհնեաց Աստուած զտուն Լաբանու 'ի մեծ ճոխութիւն, որ անկեալ և նուազեալ էր յոյժ: Ապա 'ի լնանել եօթն ամաց՝ Լաբան առեալ դուստրն եմոյծ գիշերայն առ նա փոխանակ Ռաքէլայ զերէց դուստրն իւր զԼիա զարատաւորն ակամբք: Իբրև յայտնեցաւ խաբէութիւնն, պատճառեաց նմա Լաբան զսովորութիւն երկրին, թէ չէ օրէն ամուսնացուցանել զկրսերն յառաջ քան զերէցն: Ապա յետ եօթն աւուրց, որպէս կարծի առ ոմանս 'ի մեկնչաց սուրբ գրոց, ետ նմա և զՌաքէլ այսու պայմանաւ, զի ծառայեսցէ նմա եօթն ամ ևս:

Ահա այսպէս ամուսնացուցեալ Լաբան զերկուս դստերս իւր երկու նաժշտօք հետ, զորս Յակոբ 'ի խնդրոյ տիկնաց իւրոց էառ ապա 'ի կնութիւն. որք ծնան նմա որդիս չորս: Լիա ծնաւ որդիս վեց և դուստր մի Դինա անուն. իսկ Ռաքէլ քանզի ամուլ էր՝ որդեգրեաց զերկուս որդիս ծնեալս 'ի նաժշտէ իւրմէ՝ զԴան և զՆեփթաղիմ. որպէս և որդիք նաժշտին Լիայ որդեգրեցան տիկնոջն. որով և հասարակ մօրն 'ի ժառանգութիւն ընչից և անուան Յակոբայ:

45. Ի կատարել չորեքտասան ամաց ծառայութեանն Յակոբայ լուաւ Աստուած պաղատանաց Ռաքէլի. որ յղացաւ և ծնաւ յետ ամենե-

ցուն զՅովսէփ ։ Այնուհետեւ խորհէր Յակոբ դառնալ առ հայր իւր։ Սակայն անսեալ Լաբանու թէ օրհնեաց Աստուած զտուն իւր 'ի պատճառս Յակոբայ, չկամէր թողուլ զՅակոբ. և առ 'ի հաճեցուցանել զնա՝ արար բաժանորդ ամենայն անասնոց իւրոց ։ Այս պայման ընկերութեան ձգեցաւ ամս վեց. և այնչափ ճոխացաւ Յակոբ անասնովք և ծառայիւք զոր գնէր, մինչև առ նախանձու թշնամութիւն կոչել Լաբան և որդւոց իւր ընդդէմ Յակոբայ։ Զայն անսեալ նորա խորհէր խոյս տալ անտի անվտանգ. որպէս և տէր հրամայեաց նմա չուել՝ խոստանալով ընդ նմա լինել ։

Եւ մինչդեռ երթեալ էր Լաբան 'ի կտուրս խաշանց իւրոց, զոր կատարէին բազմօրեայ խրախութեամբ, եւ Յակոբ գաղտաբար 'ի ճանապարհ հանդերձ ամենայն ստացուածովք իւրովք ։ Բայց Ռաքէլ գողացաւ զկուռս հօր իւրոյ. յորոյ վերայ այսպէս խորհրդաբանէ մեծն Վարդան 'ի մեկնութեան արարածոց. «Գողացաւ Ռաքէլ զկուռս հօր իւրոյ զոսկեղէնս և և զարծաթեղէնս. ոչ զի պատուեսցէ, այլ զի 'ի դէպ ժամու աղտեղանեսցէ. խորհուրդ եկեղեցւոյ է Ռաքէլ, որ կոչի դառն հովուին մեծի, որ բառնայ զկուռս 'ի տանէ հօր իւրոյ յաշխարհէ » ։

46. Իսկ Լաբան լուեալ յետ երից աւուրց՝ պնդեցաւ զհետ նորա բազմութեամբ արանց. և խորհէր չարիս հասուցանել Յակոբայ, եթէ չէր արգելեալ զնա տէր 'ի տեսլեան ։ Այս յետ եօթն աւուրց եհաս առ նա 'ի լերինն Գաղաադու ։ Որ յետ բազում բանակռուութեան հաշտեցան ընդ միմեանս. և 'ի վաղիւ անդր դարձաւ Լաբան 'ի տեղի իւր՝ համբուրիւ սիրոյ մեկնեալք 'ի միմեանց ։ Եւ Յակոբ յերթալն զճա-

նապարհս իւր, ետես տեսիլ հրեշտակաց. որով և զօրացաւ իսկ. զի 'ի մեծի երկիւղի էր վասն եղբօր իւրոյ Եսաւայ։ Եւ որ առաքեաց զծառայս իւր տալ տեղեկութիւն վասն իւր, և հարցանել զողջունէ նորա։ Որ և ընդ լսելն յարուցեալ գայր ընդ առաջ Յակոբայ չորեքհարիւր արամբք։ Զայն լուեալ Յակոբայ զահի մեծի հարաւ, և անդէն առաքեաց ընծայս ընդ առաջ եղբօր իւրոյ, և ինքն մեկուսացաւ հայցել զօգնութեն 'ի տեառնէ։ Անդ մատեաւ առ նա հրեշտակ մի 'ի կերպարանս մարդոյ գօտեմարտել ընդ նմա։ Ծանեաւ Յակոբ, և կալաւ զնա ձեռամբ' խնդրելով մնալ ընդ նմա և պաշտպանել զինքն յառաջիկայ վտանգին։ Այս բանագատութիւն երկարեցաւ մինչև ցառաւօտ 'ի ցոյց հաստատութեան Յակոբայ։ Ապա օրհնեաց զնա հրեշտակն, և փոխեաց զանուն նորա կոչելով Իսրայէլ, այն է աստուածատես։ Եւ կոչեաց Յակոբ զանուն տեղւոյն այնորիկ Տեսիլ Աստուծոյ։

47. Այն ինչ սկսաւ Յակոբ ուղևորել, ետես և ահա գայր եղբայր իւր Եսաւ։ Եւ ինքն թողեալ զկարաւան իւր անց յառաջ, և երկիր եպագ եօթն անգամ և ապա մերձեցաւ առ նա։ Յայնժամ ընթացաւ Եսաւ ընդ առաջ նորա, և գիրկս արկեալ համբուրեաց զնա, և անկեալ զպարանոցաւ միմեանց լացին երկոքեան։ Հասին ապա կանայք և որդիք Յակոբայ և մի ըստ միոջէ երկիր պագին նմա։ Ուրախացաւ Եսաւ ուրախութիւն մեծ, և կամէր ուղեկից լինել եղբօրն, այլ նա չէառ յանձն. ապա մեկնեցաւ հանդերձ արամբք իւրովք գնալ 'ի տեղի իւր։ Որ և հաստատեալ զբնակութիւն իւր 'ի Սեիր' մեծացաւ յոյժ, և ընդարձակեաց զսահմանս իւր միապետական իշխանութեամբ, մինչև լինել նախահայր փոքրիկ թագաւորաց և իշխանաց։

48. Իսկ Յակոբ եկն առ հայր իւր 'ի Մամբրէ. բնակեցաւ յերկրին Քանանացւոց, և արար անդ տունս՝ կալով միշտ խաղաղական սիրով ընդ եղբօր իւրում Եսաւայ. և 'ի միասին Թաղեցին զհայրն իւրեանց զԻսահակ, որ մեռաւ 'ի Քեբրոն ամաց հարիւր ութսնից, յամի աշխարհի 2280. որ ըստ ոմանց համարի գիտելոյ յետ վաճառման Յովսեփայ:

Յետ այսորիկ գնեաց Յակոբ ընդարձակ դաշտ մերձ առ Սիկիմ և անդ բնակեցաւ: Յայնժամ Դինա դուստր իւր հետաքրքրութեամբ իմն ել 'ի զնին աղջկանց քաղաքին. զոր տեսեալ Սիւքեմայ որդւոյ Եմովրայ իշխանի քաղաքին՝ յարեցաւ 'ի նա, և բռնադատեալ տառապեցոյց զնա: Իբրև 'ի վեր ել բանն՝ յանձն էառ Սիւքեմ և հայր իւր տալ զոր ինչ կամին, և առնուլ զաղջիկն 'ի կնութիւն: Որդիք Յակոբայ առ երեսս յանձն առին զայն այսու պայմանաւ, զի նախ ամենայն արու որ 'ի տան նոցա իցեն, և ամենայն արք քաղաքին թլփատեսցին: Յանձն առին, և թլփատեցան 'ի միում աւուր:

49. Այլ յաւուր երրորդի յորժամ առաւելապէս տառապեալ էր ցաւն թլփատութեան, Շմաւոն և Ղեւի համամայր եղբարք Դինայի ընդ ծառայիւքն Յակոբայ վառեալ զինու մտին 'ի քաղաք անդր, կոտորեցին զամենեսեան անխնայ և զՍիւքեմ և զհայր նորա. և առին զքոյր իւրեանց զԴինա 'ի տանէ նոցա և գնացին: Եկին և այլ եղբարքն և յաւարի առին զքաղաքն ողջոյն. զկանայս և զմանկունս գերեցին, և զամենայն ինչս յափշտակեցին: Յոյժ վշտացեալ Յակոբայ ընդ այս գործ անիրաւութեան՝ յերկիւղի կայր. այլ քանզի ահ տեառն էր 'ի վերայ շրջակայ բնակչաց, չեղև նմա վնաս ինչ ուստեք:

Յետ այսր ամենայնի հրաման եղև 'ի տեառնէ

առ Յակոբ ելանել անտի և անցանել 'ի Բեթէլ ։ Յայնժամ Յակոբ ետ բերել առաջի իւր զամենայն կուռս յափշտակեալս 'ի քաղաքէ անտի Սիկիմայ և զկուռսն Լաբանու , և թաղեալ անհետ արար զնոսա , զի մի լիցին 'ի գայթակղութիւն տան իւրոյ ։ Շինեաց ապա սեղան և մատոյց պատարագ Աստուծոյ։ Անդ վերստին երևեալ նմա տէր , և օրհնեաց զնա լինել հայր ազգաց և թագաւորաց բազմաց ։

50 . Յետ այսորիկ 'ի չուել Յակոբայ 'ի Բեթէլայ գնալ յԵփրաթա՝ երկնեաց Ռաքէլ զճանապարհայն և ծնաւ որդի , զոր կոչեաց՝ որդի վշտաց իմոց . իսկ հայրն կոչեաց զնա Բենիամին ։ Անդ մեռաւ Ռաքէլ և թաղեցաւ 'ի Բեթղեհէմ . ուր յետ շրջանաց դարուց ծնաւ փրկիչն աշխարհի ։ Եւ կանգնեաց Յակոբ արձան 'ի վերայ գերեզմանին Ռաքէլի , որ և անուանեցաւ Մայրմանկանցն Բեթղեհէմի (470)։

51 . Զայնու ժամանակաւ ծաղկեցաւ 'ի Յունաստան Ապողոն , զոր պաշտեցին իբրև զաստուած . որպէս և քոյր նորա Արտեմիս , զոր 'ի պաշտօն առ ամենայն Ասիա և Հայք ։ Նոյնպէս ծաղկեցան Հերմէս և Արէս որդիք Դիոսի ։ Իսկ ըստ Եւսեբեայ առ Տրիտոնեան ճահիւ երևեցաւ կոյս մի , զոր Հելլէնք Աթենաս անուանեցին . և Հայք Նանէ . որ և պաշտեցաւ իբրև մեծահանճար աստուածուհի իմաստութեան։ Ի նմին ժամանակի Սերապիս չոքաւ յԵգիպտոս և ապա պաշտեցաւ անդ . ուր եղև յայնժամ ջրհեղեղ ։

Ի Հայաստան պայազատէր Անուշաւան , որ գոլով չորեքտասան ամաց անկաւ 'ի ձեռս Նինուասայ որդւոյ Շամիրամայ , և եկաց յարքունիս իբրև գերի ։ Այլ միջնորդութեամբ բարեկամաց զերծեալ զօրացաւ յոյժ իւրով

հանճարոյն . և առաջնորդեաց աշխարհին ամս վաթսուն և երիս [1] ։

## ԳԼՈՒԽ Դ.

### Յովսէփ և եղբարք իւր ։

Ա. Ա. 2276

52 . Յակոբ նահապետ առաւել սիրէր զՅովսէփ քան զայլ որդիս իւր յաղագս բազում բարեբաստութեանց որ փայլէին 'ի նմա անդստին 'ի մանկութենէ իւրմէ . և էր նա հօրն որդի ծերութեան ։ Իսկ հայրն 'ի ցոյց մեծի գթոյն արար նմա պատմուճան ծաղկեայ գեղեցկազարդ ։ Որով 'ի նախանձ և յատելութիւն գրգռեցան եղբարքն ընդդէմ պատանւոյն . մանաւանդ յորժամ պատմեաց պարզմտութեամբ առաջի նոցա զերազս իւր , որք էին ճշմարիտ յայտնութիւնք հանդերձեալ մեծութեան նորա . « Լուարուք , ասէ ցեղբարս իւր , զերազն զոր տեսի . թուէր թէ ամենեքեան որայ կապէաք 'ի դաշտի միում , և կանգնեցաւ որայն իմ՝ եկաց ուղղորդ . և դարձան որայքն ձեր և պագին երկիր իմում որայոյն » ։ Դարձեալ պատմեաց միւս ևս երազ . « Տեսի , ասէ , զի արեգակն և լուսին և մետասան աստեղք երկիր պագանէին ինձ » [2] ։ Ի բանից աստի լի եղեն նախանձու եղբարքն , և հաստատեցին 'ի միտ սպանանել զնա ։

53 . Յաւուրսն յայնոսիկ առաքեաց Յովսէփ 'ի հօրէն 'ի դաշտ անդր առ եղբարս իւր ըն-

1 Խոր . ա . 20 ։
2 Ծն . լէ . 7 . 2 ։

բել զլուր ողջունի նոցա։ Նոքա իբրեւ տեսին՝ խորհուրդ չար խորհեցան անդէն սպանանել զնա։ Իսկ Ռուբէն երիցագոյնն յեղբարս իւր ոչ հաւանեցաւ ընդ խորհուրդն. այլ խրատ ետ նոցա չխնել զձեռս յարիւն եղբօր իւրեանց, այլ ընկենուլ զնա 'ի գուբն ցամաք՝ որ կայր անդ. խորհելով 'ի մտի ապրեցուցանել զնա առ ժամն և տալ հասուցանել առ հայր իւր։ Հաւանեցան ընդ այս խորհուրդ, և կողոպտեալ զպատանեակն մերկացին զպատմուճանն ծաղկեայ և ընկեցին զնա 'ի գուբ անդր։

Յայնմ ժամանակի անցանէին անտի իսմայելացի վաճառականք իջանել յԵգիպտոս։ Գութ անկաւ 'ի սիրտ Յուդայի 'ի վերայ Յովսեփայ. խորհուրդ ետ եղբարց իւրոց, հանել զՅովսէփ 'ի գբոյ անտի և վաճառել իսմայելացւոց. զոր և արարին իսկ. և վաճառեցին քսան դահեկանի։ Նոքա տարան զնա յԵգիպտոս և վաճառեցին Պետափրեայ դահճապետի։ Եւ էր Յովսէփ եօթնևտասան ամաց. որ բարեզգեաց խոհեմութեամբ իւրով եգիտ շնորհս առաջի տեառն իւրոյ, և կարգեցաւ 'ի նմանէ տնտես 'ի վերայ ամենայն տան իւրոյ։ Այս բարեբաղդութիւն ոչ շատ երկարեցաւ. զի տիկին նորա յիմարեալ ընդ գեղեցկութիւն պատանւոյն՝ հրապուրէր զնա 'ի մեղս. այլ նորա մերժեալ զնա առաքինի արութեամբ՝ ամբաստանեցաւ 'ի նմանէ, և անկաւ 'ի բանտ արքունի կալանաւորաց։ Այլ քանզի տէր ընդ նմա էր, անդ ևս եգիտ Յովսէփ շնորհս առաջի բանտապետին, կարգեալ 'ի նմանէ տեսուչ ամենայն գործոց բանտին։

54. Ի նոյն աւուրս արկ փարաւոն 'ի բանտ զտակառապետն և զմատակարարն իւր։ Որոց երազ տեսեալ 'ի գիշերի, պատմեցին Յովսէ-

փայ : Եւ Յովսէփ յայտնեալ նոցա զմեկնու-
թիւնն՝ ասաց մատակարարին կախել զփայտէ,
և տակառապետին դառնալ 'ի պաշտօն իւր ա-
ռաջին. զոր և աղաչեաց յիշել զինքն առաջի
փարաւոնի, զի տարապարտուց մնացեալ կայր
'ի բանտի:

Յետ երկուց ամաց ետես փարաւոն յերազի,
որպէս թէ կայր յեզր Նեղոս գետոյն. ուստի
ելանէին եօթն երինջք պարարտք, և ապա ե-
լանէին եօթն այլ երինջք վտիտք և կլանէին
զպարարտ երինջսն: Դարձեալ ետես, զի ելա-
նէին եօթն հասկք 'ի մի ծղօտ ընտիրք. ապա ե-
լանէին այլ ևս եօթն հասկք աղաղուտք, որք կլա-
նէին զեօթն հասկսն ընտիրս: Զարհուրեալ փա-
րաւոնի ընդ տեսիլ երազոյն, և չգտեալ զմեկ-
նութիւնն՝ կայր խռովեալ: Յայնժամ յիշեաց
նմա տակառապետն զՅովսէփ. որ և նոյնժա-
մայն հանաւ 'ի բանտէ, և ածաւ առաջի փա-
րաւոնի վայելուչ զգեստուք. և էր յայնժամ
ամաց երեսնից:

55. Յայտնեաց նմա տէր զխորհուրդ երա-
զոյն, զոր տեսեալ էր փարաւոն վասն փառա-
ւորութեան Յովսէփայ. որ և գեղեցիկ մեկնա-
բանեաց զխորհուրդն առաջի փարաւոնի. զի
գուշակէր լինել զեօթն ամս առատութեան
յոյժ յերկրին Եգիպտացւոց, և զեօթն ևս
այլ ամս սաստիկ սովու: Հաւատաց փարա-
ւոն մեկնութեան նորա, և կացոյց զնա վե-
րակացու և փոխանորդ՝ զգեցուցեալ նմա
պատմուճան բեհեզեայ, և արկեալ մանեակ
ոսկի 'ի պարանոց նորա, և զարքունական մատա-
նի 'ի ձեռս նորա: Ապա հանեալ զնա յերկ-
րորդ կառս իւր՝ փառաւորեաց առաջի աւա-
գանւոյն և ամենայն ժողովրդեան իւր երկրորդ
թագաւորութեան իւրոյ, կոչելով զանուն նո-

րա Փսոմփթոմփանէք, որ Թարգմանի յայտնիչ գաղտնեաց. կամ փրկիչ աշխարհի։ Եւ ետ նմա ՚ի կնութիւն զԱսանէթ դուստր Պետափրեայ քրմին. յորմէ ծնան նմա երկու որդիք, Եփրեմ և Մանասէ։

Յովսէփ մեծաւ իմաստութեամբ անօրինակ զարդարեալ էր՝ որ հաւատացաւ նմա ՚ի Թագաւորէն, առատացուցեալ զամենայն համբարս ՚ի միջոցի եօթն ամաց առատութեան։ Եւ իբրև սկսաւ սովն տիրել ամենայն երկրի, դիմէին յամենայն կողմանց առ Յովսէփ ՚ի խնդիր պարենի։

56. Յերկրորդում ամի սովոյն առաքեաց Յակոբայ թէ պէտս ունի պարենի, և լուեալ թէ յԵգիպտոս վաճառի ցորեան, առաքեաց զտասանեսին որդիս իւր հանդերձ գրաստուք և դրամովք բերել ցորեան, պահեալ առ իւր զԲենիամին միայն։ Հասեալ նոցա յԵգիպտոս՝ երկիր պագին առաջի փոխարքային Յովսէփայ, որ անդէն ծանեաւ զնոսա. և կամեցեալ իմանալ զհանգամանս հօրն և տան իւրեանց, եհարց զնոսա խստութեամբ իմն ՚ի լեզու Եգիպտացւոց թարգմանաւ, ասելով թէ լրտեսք էք դուք։ Նոքա այլ յայլմէ երդեալ պատմեցին նմա ստուգութեամբ զամենայն ուղղութիւն իւրեանց՝ հաստատելով. թէ մեք երկոտասան եղբարք եմք որդիք առն միոյ. կրտսերն է ՚ի տան առ հօր մերում ՚ի մխիթարութիւն նորա, և միւսն չէ ՚ի միջի։ Յայնժամ ասէ Յովսէփ. ոչ ելանիցէք աստի մինչև եկեսցէ եղբայրն ձեր կրտսեր. մին ՚ի ձէնջ գնասցէ բերել զնա, և դուք կացջիք ՚ի կալանս։ Ապա հրամայեաց արկանել զնոսա ՚ի բանտ։

Յերրորդում աւուր կոչեալ զնոսա զառաջեաւ, հրամայէ զի մին մնասցէ ՚ի բանտի, և

այլք գնացեն բերել զմանուկն ։ Յիշեցին նոքա յայնժամ զմեղս իւրեանց, և սկսան հրէարէն մեղադրել զինքեանս սակս անիրաւութեանն , զոր անիրաւեցան 'ի Յովսէփ ։ Որոյ լուեալ զաղէտալի բանս նոցին՝ չկարաց արգելուլ զարտասուս , և մեկուսացեալ յայլ սենեակ ելաց և սթափեցաւ ։ Ապա եկեալ առ նոսա նովին խստութեամբ ետ կապել զՇմաւոն առաջի նոցա ․ և հրաման ետ հազարապետին լնուլ ցորենով զքուրձս նոցա , եդեալ 'ի նոսա և զարծաթն զոր բերեալ էին ։

57 ․ Հասեալ նոցա առ հայրն իւրեանց Իսրայէլ , պատմեցին նմա զամենայն անցս , որք անցին ընդ նոսա յեգիպտոս ․ իսկ նորա լուեալ թէ Շմաւոն կայ 'ի բանտի , և ոչ արձակեսցի մինչև ոչ տեսցէ փոքրագոյն զԲենիամին , 'ի խոր խոցեցաւ ծերունին ։ Այլ քանզի սովն եւս քան զեւս սաստկանայր , և հայրն ստիպէր զնոսա գնալ վերստին և բերել կերակուր , յայնժամ Յուդա երաշխաւոր լեալ առ հայրն վասն Բենիամինի ողջանդամ անդրէն դարձուցանելոյ զնա առ նա , առ զպատանին , որ էր ամաց քսան և չորից ․ և ելին 'ի ճանապարհ ։ Իբրև հասին յեգիպտոս 'ի սկիզբն երրորդ ամի սովոյն , ընկալաւ զնոսա Յովսէփ 'ի տուն իւր ․ և զուարթ դիմօք ողջունեալ եհան առ նոսա զՇմաւոն ։ Իսկ նոքա երկիր պագին նմա ․ որոյ տեսեալ յայնժամ զԲենիամին զհամամայր եղբայր իւր , փղձկեցաւ սիրան , և խոյս տուեալ 'ի սենեակ իւր ելաց ․ ապա հրամայեաց արկանել հաց ․ 'ի միում սեղանի նստաւ Յովսէփ , և 'ի միւսումն եղբարք իւր ։

58 ․ Յետ կերակրոյն լցան ամանք նոցա ցորենով ․ ընդ նմին և արծաթն եդաւ գաղտաբար 'ի բերան իւրաքանչիւր ամանոյ ․ իսկ 'ի քրձի

Բենիամինի եղաւ բաժակն Յովսեփայ։ Մինչ-դեռ ուրախութեամբ երթային զճանապարհ իւրեանց ոչ կարի հեռի 'ի քաղաքէն, և ահա հասանէ 'ի թիկանց նոցին հազարապետն Յովսեփայ և կշտամբէ զնոսա, որպէս եթէ գողացեալ իցեն զբաժակ փոխարքային։ Իսկ նոցա անհնարին խռովեալ վՃիռ հատին համարձակ, թէ առ որում գտցի գողօնն՝ մեռցի, և ինքեանք 'ի ծառայութիւն երթիցեն։ Հաւանեալ ընդ այս հազարապետին, յուզեաց ըղքուրձս նոցին, և ահա գտաւ բաժակն յամանի անդ Բենիամինի։ Զոր տեսեալ առ հասարակ ափիբերան շուարեցան. և նոյնհետայն դարձան 'ի քաղաքն, և մտեալ առ Յովսէփ անկան 'ի գետնի առաջի նորա անբարբառ։

59. Իբրև յանդիմանեաց զնոսա Յովսէփ, յառեաւ Յուդա 'ի մէջ եղբարց իւրոց խօսել ընդ Յովսեփայ։ Յանդիմանեաց, ասէր. Աստուած զմեղս մեր զառաջինն. այլ անդէն եմք ամենեքին վասն բաժակին գողացելոյ։ Իսկ վասն Բենիամինի, որ իբրև կցորդ պարտական գտանեցուկալ 'ի ծառայութեան, խօսեցաւ նա ինքն Յուդա զամենայն անցս որ անցեալ էին ընդ պատանին, և զանձին իւրոյ երաշխաւորութիւն, և զծերունի հօրն զգորով սիրոյն առ պատանին իբրև առ միակ մխիթար անձին։ Տեսեալ Յովսեփայ զանհնարին տագնապ սրտի նոցա, և խռովեալ 'ի սաստիկ գթոյ և խանդից սրտին՝ ոչ ևս այլ կարաց ժուժել. հրամայեաց հանել արտաքս զԵգիպտացիսն՝ որք շուրջ զնովաւ կային. և սկսաւ լալ և յայտնել զինքն եղբարց իւրոց. «Ես եմ, ասէ, Յովսէփ եղբայր ձեր. արդարև տակաւին կենդանի՞ է հայր իմ»։ Աստուած առաքեաց

զիս այսր 'ի պաշտպանութիւն կենաց ձերոց[1]։ Ապա փութացուցեալ առաքեաց զնոսա առ հայր իւր հանդերձ բազում ընծայիւք, և հրաւիրեաց գալ առ նա յԵգիպտոս։ Եհաս լուրն յականջս փարաւոնի, և ուրախ եղև նա ընդ ամենայն Եգիպտացւոց։

60. Հասեալ նոցա այնուհետև առ հայր իւրեանց Յակոբ՝ պատմեցին զանակնկալ աւետիսն ողջութեան Յովսեփայ. զոր լուեալ ծերունին արծարծեցաւ յոգի իւր. Երթայց տեսից, ասէ, զորդեակն իմ զՅովսէփ մինչ չև մեռեալ իցեմ։ Ապա ելեալ անտի ամենայն տամբ իւրով, և հասեալ 'ի սահմանս Եգիպտոսի՝ ազդ արար Յովսեփայ. որ առժամայն գնաց ընդ առաջ հօրն 'ի Գեսեմ, և փարեալ զպարանոցաւ նորա ելաց։ Իսկ հայրն զորովալից, որ ընդ ամս քսան և չորս դառնացեալ էր սգով նորա, ընդ տեսանելն զնա՝ այլ յայլմէ լինէր 'ի խնդութենէն։ Ապա գնաց Յովսէփ առ փարաւոն և պատմեաց նմա զգալուստ հօր իւրոյ. զոր և բնակեցոյց յերկրին Գեսեմ։

Իսրայէլ էր յայնժամ հարիւր և երեսուն ամաց, և յետ այնորիկ եկեաց այլ ևս ամս եօթնեասան։ Իբրև ետես թէ մերձ է վախճան կենաց իւրոց, նախ երդմնեցոյց զՅովսէփ թաղել զինքն յերկրին Քանանացւոց 'ի շիրմի հարց իւրոց։ Օրհնեաց ապա զՄանասէ և զԵփրեմ զորդիս Յովսեփայ, զԵփրեմ զկրտսերն նախադասելով քան զանդրանիկն Մանասէ. զերկոսին ևս որդեգրելով ինքն 'ի կարգս որդւոց իւրոց։

61. Յետ այնորիկ կոչեալ Յակոբայ զամենայն որդիս իւր ետ նոցա զվերջին օրհնութիւն,

1 Ծն. ԽԷ. Գ.

և մարգարէական հոգւով յայտնեաց նոցին՝ որ ինչ զկնի ժամանակաց հանդերձեալ էր լինել։ Անուանք որդւոցն Յակոբայ, որք եղեն նախահարք երկոտասան ցեղից Իսրայելի, են Ռուբէն, Շմաւոն, Ղեւի, Յուդա, Իսաքար, Զաբուղոն, Դան, Նեփթաղիմ, Գադ, Ասեր, Յովսէփ և Բենիամին։

Յետ վախճանելոյ Յակոբայ զմարգարէական բանս իւր առ երկոտասան որդիս, մեռաւ 'ի հասակի հարիւր քառասուն և եօթն ամաց յամի աշխարհի 2315։ Իսկ Յովսէփ մեծահանդէս յուղարկաւորութեամբ թաղեաց զհայր իւր յերկիրն Քանանացւոց առ հարս իւր. և ինքն 'ի մահուանէ անտի հօրն մինչև ցվախճան կենաց իւրոց ամս քառասուն և եօթն եկեաց յԵգիպտոս՝ մեծաւ փառօք պատուեալ յամենեցունց։ Իսկ 'ի մերձենալ վախճանի իւրոյ երդմնեցոյց զեղբարս և զորդիս իւր՝ յելանելն իւրեանց յերկրէն Եգիպտացւոց հանել և զիւր ոսկերս, և տանել թաղել 'ի շիրիմս հարց իւրեանց։

62. Մեռաւ Յովսէփ հարիւր և տասն ամաց, յամի 2362. և ըստ կարծեաց ոմանց՝ յետ մահուանն իւրոյ 'ի պաշտօն առին զնա Եգիպտացիքն յաղագս մեծի և գերազանց պատուոյն, զատեալ զնա 'ի կարգս դից՝ անուամբ Սերապիսի. զոր և նկարէին պատանի հասակաւ՝ ունելով 'ի գլուխն գրիւ և կողով։

Զայսու ժամանակաւ տիրէր 'ի Հայս Պարետ իշխան 'ի ցեղէն Հայկայ, որ և զօրացաւ յոյժ և տիրեաց ամենայն աշխարհին։ Քանզի յետ Անուշաւանայ ոչ ոք գտաւ 'ի զարմից նորա որ տիրէր յաջորդութեամբ. զի ցայն վայր տիրէին յորդւոց յորդիս.

Ի սմին ժամանակի հիմնեցաւ Սպարտա 'ի

Սպարտակէ. և ծաղկեցան Պրոմեթէոս և Ատլաս աստղաբաշխութեամբ ։

## ԳԼՈՒԽ Ե

### ՅՈԲ ։

Ա. Ա. 2320

63. Համբերողացն նախատիպ երանելին Յոբ ժամանակակից Յովսեփայ. որպէս կարծի, եղև այր փառաւոր և սքանչելի առաքինութեամբ ։ Եւ էր սա որդի Զարեհի և թոռն Եսաւայ՝ յաշխարհէն Եդովմայեցւոց, և մի յիշխանաց Աւսացւոց. իբր թագաւոր բազմահարուստ քան զամենայն արևելեայս ։ Արդար և անարատ էր վարուք, ճշմարիտ աստուածապաշտ և հաւատարիմ առ Աստուած եթէ 'ի փառս իշխանութեան, և եթէ 'ի դժնդակ վիշտս փորձութեան ։ Ունէր զաւակս բազումս, որք միաբանեալ առնէին խրախութիւնս 'ի տունս իւրեանց. բայց յետ խրախութեանցն այնոցիկ կոչէր զնոսա Յոբ առ ինքն, և մատուցեալ վասն նոցա պատարագ՝ սրբէր զնոսա, կասկածեալ թէ գուցէ յանցուցեալ իցեն 'ի խրախութեան անդ ։

64. Եւ եղև յաւուր միում՝ զի եկն սատանայ և երևեցաւ 'ի մէջ պաշտպան հրեշտակաց տանն Յոբայ, յորժամ գովէր զնա նախագահ հրեշտակն 'ի դիմաց Աստուծոյ. ընդ որ նախանձեալ սատանայի, ասէ. Միթէ ձրի՞ պաշտիցէ Յոբ զտէր. ո՞չ դու լիացուցեր զնա ամենայն բարեօք. այլ բարձ միանգամ 'ի նմանէ զամենայն ինչս նորա, և տեսցես զիարդ անիծանիցէ զքեզ ։ Առ 'ի խայտառակել զչարն և պսակել զարդարն

եա ՚նմա հրեշտակն հրաման ՚ի կողմանէ Աստուծոյ՝ փորձել զնա. և ահա վաղվաղակի սկսան հետըզհետէ գալ ՚ի վերայ նորա փորձութիւնքն։ Նախ կորոյս զամենայն եզինս և զէշս. երկրորդ զամենայն հօտս խաշանց ընդ հովուաց. երրորդ զամենայն ուղտս ընդ ուղտապանաց. չորրորդ զամենայն ուստերս և զդստերս ՚ի միում ժամու։

Յայս ամենայն անցս ոչինչ մեղաւ Յոբ առաջի Աստուծոյ. այլ յարուցեալ յաթոռոյն պատառեաց զհանդերձս իւր, և անկեալ երկիր եպագ աստուածային անեղութեան, ասելով. Տէր ետ և տէր էառ, եղիցի անուն տեառն օրհնեալ։ Սատանայ զամօթի հարեալ՝ զառողջութիւն մարմնոյ արդարոյն ած ՚ի մէջ. եթէ զի յորչափ անձինս կայցէ մարմինն, այլ վնասքն ոչինչ իցեն։ Նմին իսկ դարձեալ էառ հրաման ՚ի հրեշտակէն տանջել զմարմին նորա առանց բառնալոյ զկեանսն։

65. Եւ նոյնհետայն լցաւ մարմին երանելւոյն չարաչար կեղով. և ախտեալ նորա յանհընարին ևս խոյ մարմնոյն՝ել ՚ի բնակութենէ մարդկան և նստաւ յաղբիս արտաքոյ քաղաքին. և առեալ խեցի՝ քերէր զկեղն ՚ի հոսմանէ որդնալից թարախոյն։ Իսկ կին նորա անկեալ յերջանկութենէ յայն յետին թշուառութիւն՝ մոռացաւ զբարեպաշտութիւն իւր, յարեաւ ՚ի վերայ նահատակին և սկսաւ դառնացուցանել զնա, յորդորելով զնա խօսել բանս արտնջմանց ընդդէմ Աստուծոյ, որպէս զի հարցէ զնա տէր և մեռցի։ Յայնժամ զայրացեալ աչօք հայեցեալ ՚ի նա Յոբայ, գեղեցիկ աստուածպաշտութեամբ պապանձեցոյց զնա, և լցաւ սատանայ ամօթով։

Եհաս լուր դժնդակ հարուածոցս Յոբայ ՚ի շրջակայ սահմանս. զոր լուեալ բարեկամք նո-

րս Եղիփազ արքայ Թեմնացւոց. Բաղդատ բռ-նաւոր Սաւքեցւոց. և Սովփար արքայ Մինեցւոց. յորս յաւելու յետոյ և Եղիուս Բուզացի, և եկին մխիթարել զնա. բայց տեսեալ զնա յայն աղէտ դառնութեան լային մեծաձայն, և պատառեալ զհանդերձս նստան 'ի գետնի լուռ զաւուրս եօթն:

66. Յետ այնորիկ սկսաւ խօսել Յոբ անիծանելով զօր ծննդեան իւրոյ: Յայնժամ սկսան և բարեկամքն նորա խօսել, այլ բանք նոցա դարձան 'ի թշնամութիւն. քանզի ջանային ածել զանմեղն յապաշխարութիւն, կարծելով թէ վասն մեղաց իւրոց հասին չարիքն այնոքիկ 'ի վերայ նորա: Իսկ Յոբ վիճէր ընդ նոսա ճշմարտութեամբ, թէ ոչ միայն վասն մեղաց պատուհասէ Աստուած զմեղաւորս, այլ և զարդարս առ 'ի հատուցանել մեծամեծ վարձս փոխանակ համբերութեան՝ ցուցանելով զամենակալ իշխանութիւն իւր 'ի վերայ ամենայն մարդկան:

Յերկարել անդ վիճաբանութեանցն յայտ արար Աստուած 'ի քաջալերութիւն Յոբայ՝ թէ այս ամենայն անցք անցին ընդ նա 'ի հանդէս արդարութեան նորա առաջի ամենայն տիեզերաց: Յայնժամ խոնարհեցաւ Յոբ, և ապաշաւեալ 'ի վերայ բանից իւրոց ասէ. Յառաջագոյն գիտէի զքեզ հաւատով. բայց այժմ 'ի տառապանս իմ աչօք հոգւոյս տեսի զանքնուլի մեծութիւն քո. վասն որոյ համարիմ զանձն իմ հող և մոխիր առաջի քո:

67. Յայնժամ ապա անկան կեղք մարմնոյն Յոբայ, և գտաւ առողջ և գեղեցիկ առաւել քան զոր յառաջն էր: Եկին ամենայն ծանօթք նորա 'ի խնդակցութիւն՝ տալով նմա իւրաքանչիւր զպարգեւս. իսկ Տէր պարգեւեաց նմա զամենայն կալուածս երկրին, և կրկին հատոյց նմա

քան զոր կորոյսն։ Ծնաւ և կին նորա ուստերս եօթն և դստերս երիս. որոց համեմատ ոչ գտանէին աղնուականութեամբ։ Զանձնանս Յոբայ ոմանք յերկարաձգեն ընդ ամս եօթն, այլք ընդ սակաւ ամիս։

Յետ հարուածոյն եկաց Յոբ ամենայն յաջողութեամբ ամս հարիւր և եօթանասուն. և ամենայն ամք նորա եղեն երկերիւր քառասուն և ութ. որ և ետես զորդիս որդւոց իւրոց ազգ չորրորդ։ « Օրինակ առէք, ասէ Յակոբոս առաքեալ, չարչարանաց և երկայնմտութեան զմարգարէսն, որք խօսեցան յանուն տեառն. ահաւասիկ երանեմք համբերողաց. զհամբերութիւնն Յոբայ լուարուք, և զկատարումն տեառն տեսէք » [1]։

68. Զայսու ժամանակաւ թագաւորութիւնն Եգիպտոսի էր 'ի ձեռս ցեղին Դիոսպոլսացւոց, որ կոչէր Ութեւտասներորդ հարստութիւն։ Իսկ թագաւորն փարաւոն առ Մովսեսիւ՝ ոչ էր 'ի զարմէ փարաւոնի մեծի, որ բարձրացոյց զՅովսէփ. որ անծանօթ գոլով երախտեաց նորին՝ սկսաւ կասկած իմն ապստամբութեան դնել 'ի մտի զազգէն Իսրայէլի, որք օր ըստ օրէ աճէին և բազմանային յոյժ յոյժ։ Նմին իրի առ խափանելոյ զաճումն նոցա պատուիրեաց մանկաբարձաց՝ զի 'ի ծնանելն կանանց Եբրայեցւոց՝ գաղտաբար հեղձուցեն զամենայն արուս նոցա, զէգս և եթ ապրեցուցանելով։ Բայց նոքա երկուցեալ 'ի տեառնէ՝ ոչ իշխեցին կատարել զանօրէն հրաման թագաւորին։

69. Տեսեալ փարաւոնի, թէ այսու ոչ յաջողեսցի խորհուրդ նորա, հրաման եհան՝ զի ամենայն արու ծնեալ յԵբրայեցւոց՝ 'ի գետ ըն-

1 Թուղթ Կաթող. Յակ. Ե. 10։

կեայի. որով խորտակեալ զօրութեան նոցա՝ մի թնաւ իշխեսցեն ելանել 'ի ծառայութենէ նորա։ Եւ ծառայեցուցանէր զնոսա ձրի 'ի ձեռն ժանտաբարոյ գործավարաց իւրոց 'ի խիստ և 'ի դառն ծառայութիւնս։ Իսկ գործք նոցին ըստ մեկնչաց՝ էր պատրաստել կաւ, աղիւս անել և թրծել, վէմս հատանել, և զամրոցս կամ քաղաքս շինել, և թումբս կանգնել ընդդէմ ջրոցն Նեղոսի, և յայլ այսպիսի բազմաստանջ գործս մաշիլ։ Յայս անողորմ տանջանս մնացին նոքա զամս ութսուն և վեց. ըստ ոմանց ինսուն և չորս, կամ հարիւր քառասուն և չորս։ Յայնժամ շինեցին զփաթումս քաղաք մերձ 'ի ծովն Կարմիր ըստ Երոդոտոսի, և զՌամեսէ և զՈն քաղաք։ Ի նմին ժամանակի շինեցին զմեծագործ բրգունս Եգիպտոսի ըստ Գրաւիոսի։

## ԳԼՈՒԽ Զ

### Մովսէս։

Ա. Ա. 2433

70. Յորժամ սաստկանայր անօրէն հրամանն փարաւոնի գետընկէց առնելոյ զարու մանկունս Եբրայեցւոց, ծնաւ Մովսէս երեք ամօք զկնի ծննդեան Ահարոնի։ Անուն հօր նորա էր Ամրամ 'ի ցեղէն Ղեւեայ, և մօրն Յովքաբեթ, որ և թագոյց զմանուկն զամիսս երիս։ Այլ կասկածեալ թէ 'ի վեր ելցէ բանն և մանուկն մեռցի և ինքեանք վտանգաւորք եղիցին, հնարս խորհեցաւ ապրեցուցանելոյ զմանուկն։ Շինեաց զարկղ մի պրտուեայ նաւակաձև, և եդեալ 'ի նմա զմանուկն՝ ծեփեաց կպրաձիւթով, ապա դնել զժամանակն գնալոյ դստեր փարաւոնի 'ի գետն

Նեղոս առ 'ի լուանալ, եդ զարկղն յեղեգնաշամբոյս առ ափն Նեղոսի. և ինքն մեկնեցաւ անտի՝ թողեալ անդ զաստուածեայ դուստրն իւր Մարիամ:

71. Եկեալ 'ի խաղ անդր դուստր փարաւոնի, և նշմարեալ զարկղն՝ հրամայեաց աղախնեաց իւրոց բերել առաջի իւր և բացեալ իբրև ետես զմանուկն մատաղ և կայտառ 'ի լաց՝ խանդաղատեցաւ զնովաւ, և ասէ. Սա 'ի մանկանց Եբրայեցւոց է: Յայնժամ սրահու հասանէ անդ քոյր մանկանն և ասէ. կամիս զի կոչեցից կին մի եբրայեցի սնուցանել զմանուկդ: Ասէ ցնա. երթ և կոչեա:

Եւ երթեալ աղջկանն կոչեաց զմայրն իւր. որ ընկալաւ զմանուկն, և սնոյց մայրենի խնամով: Իբրև հասակացաւ մանուկն, էած զնա մայր իւր առ դուստրն փարաւոնի. և նա կալաւ զնա յարքունիս, և որդեգրեաց ինքեան, դնելով զանուն նորա Մոշէ. որ 'ի բարբառ նոցա նշանակէ՝ 'ի ջրոյ հանեալ:

72. Սնաւ Մովսէս յարքունիս անդ փարաւոնի, և ըստ բնաւոր հանճարոյն վարժեցաւ ամենայն իմաստութեամբ Եգիպտացւոց. և էր զօրաւոր բանիւք և գործովք ըստ սրբոյն Ստեփանոսի[1]: Եւ եկաց այնպէս փառաւորեալ մինչև ցքառասնամեայ ամ հասակի իւրոյ, անմոռաց 'ի տառապանաց համազգեաց իւրոց Եբրայեցւոց: Ապա յաւուր միում շարժեալ 'ի գթոյ եւ յայցելութիւն նոցա. և տեսեալ զի այր մի Եգիպտացի յարձակեալ 'ի վերայ Եբրայեցւոյ միոյ՝ մահուչափ հարկանէր զնա, վառեցաւ 'ի նախանձ արդար վրէժխնդրութեան, և սպանեալ զանիրաւ հարկանողն թաղեաց ընդ աւազով: Այսու

1 Գործ. Է. 22:

կամեցաւ նա իմացուցանել ժողովրդեան Իս-րայէլի զնեղքին յայտնութիւնն լինելոյ իւրոյ նոցա առաջնորդ ըստ ժամանակին , այլ նոքա ոչ իմացան ըստ սրբոյն Ստեփաննոսի ։ Քանզի եբրայեցին այն հրատարակեալ էր 'ի մէջ իրեանց զոր ինչ արար Մովսէս. նմին իրի իբրև կամեցաւ Մովսէս յերկրորդում աւուր խաղաղութիւն արկանել 'ի մէջ երկուց Եբրայեցւոց կռուելոց ընդ միմեանս, ասէ ցնա որ զընկերն հարստահարէր. Ո՞ կացոյց զքեզ իշխան և դատաւոր 'ի վերայ մեր. եթէ սպանանե՞լ զիս կամիցիս, որպէս սպաներ երէկ զեգիպտացին ։

73. Զահի հարաւ Մովսէս ընդ անակնկալ հռչակումն գործոյն, մինչև հասեալ յականջս փարաւոնի՝ խնդրէր սպանանել զնա. որոյ փախուցեալ բնակեցաւ յերկրին Մադիամու ։ Անդ իմացեալ զանուն նորա Հռագուել իշխան և քուրմ Մադիամ քաղաքին՝ կոչեաց զՄովսէս 'ի տուն իւր. և հաճեալ ընդ խոհեմ և ազնուական բարս նորա՝ կամեցաւ փեսայացուցանել զնա, տուեալ նմա կին զՍեպփովրա դուստր իւր ։ Եկաց Մովսէս ընդ աներոյ իւրում ամս քառասուն. ուր և ծնան նմա երկու որդիք, Գերսամ և Եղիազար ։

Ի վախճան ամացն այնոցիկ մեռաւ փարաւոն հալածիչ Եբրայեցւոց. սակայն յաջորդ նորա ևս քան զնա սաստկացոյց զտառապանս նոցին. մինչև աղաղակ հեծութեան եղկելեացն և հաս յականջս տեառն զօրութեանց ։ Յայս միջոց ժամանակի ըստ ամաց Մովսէս ազդեալ 'ի տեառնէ գրեաց զգիրս Աբրահամու, և թարգմանեաց զգիրս Յոբայ 'ի բարբառ Եբրայեցւոց 'ի մխիթարութիւն տառապեալ որդւոցն Իսրայէլի ։

74. Արդ մինչդեռ արածէր Մովսէս զխաշինս աներոյ իւրոյ 'ի ներքին կողմն անապա-

տին՝ նշմարեաց անախտ խմել նորահրաշ ՚ի մեր-ձակայ լեռան Քորեբ. և մերձեցեալ ետես ՚ի գլուխ լերինն մորենի մի բոցավառ, որ անծախ մնայր ՚ի բոցոյ անտի։ Իբրև սկսաւ մօտ և մատ-չել գոչեաց առ նա Աստուած ՚ի ձեռն հրեշտա-կի ՚ի միջոյ մորենւոյն՝ հանել զկօշիկս և մերկ ոտիւք պատկառանօք իմն յառաջ մատչել. զի տեղիդ, ասէ, յորում կաս՝ սուրբ է։

Անդ յայտնեաց նմա տէր, եթէ կարգեալ է զնա առաջնորդ որդւոցն Իսրայէլի՝ հանել զնոսա ՚ի գաւառն ծառայութեանն Եգիպտացւոց. միան-գամայն յայտնելով նմա զանճառելի անուն իւր Եհովահ, այսինքն Որ էն։ Իբրև հրաժարէր Մովսէս ՚ի գործոյ առաջնորդութեան՝ տարակուսեալ վասն հաւանեցուցանելոյ զժողովուրդն, հրա-մայեաց նմա Աստուած ընկենուլ ՚ի ձեռանէ զգաւազանն. և ահա փոխեցաւ այն յօձ զար-հուրելի. և իբրև կալաւ զատամնէն՝ եղև գաւա-զան։ Հրամայեաց դարձեալ արկանել զձեռն ՚ի ծոց իւր և հանել. և ահա լի եղև բորոտութեամբ. և իբրև անդրէն արկ ՚ի ծոց իւր՝ սրբեցաւ ձեռն ՚ի բորոտութենէն։ Յաւել և զերրորդ նշան. Առ-ցես դու, ասէ, ՚ի ջրոյ գետոյն և հեղցես ՚ի ցա-մաքի. և եղիցի ջուրն արիւն ՚ի ցամաքին [1]։

75. Գնաց անտի Մովսէս առ աներ իւր, և հրաժարեալ անտի եւ ՚ի ճանապարհ գնալ յԵ-գիպտոս։ Իսկ Ահարոն եղբայր իւր ազդեալ ՚ի տեառնէ, ել ընդ առաջ եղբօրն ՚ի լերինն Քո-րեբայ. որում պատմեաց Մովսէս զամենայն պատգամսն տեառն։ Եւ երկոքին ՚ի միասին գնացեալ յԵգիպտոս ժողովեցին զծերակոյտ որդւոցն Իսրայէլի և յայտնեցին նոցա զաստուա-ծային պատգամս։ Անդ Մովսէս արար առաջի

1 Ել. Դ. 3=9։

ժողովրդեան զերիս նախագրեալ նշանս. որով հաւատացին ամենեքեան, և խոնարհեալ երկիր պագին ամենախնամ ձեռին Աստուծոյ, որ ողորմի նոցա 'ի գաւառն նեղութեան իւրեանց:

76. Ապա յարուցեալ անտի Մովսէս և Ահարոն մտին առ նոր արքայն փարաւոն և ծանուցին զհրաման տեառն՝ արձակել զորդիս Իսրայէլի, զի երթեալ յանապատն մատուսցեն զոհս Աստուծոյ: Այլ նորա կուրացեալ 'ի չահասիրութենէ՝ արհամարհեաց զպատգամս տեառն, և զատաստանս Եբրայեցւոց և ևս ծանրացոյց: Իսկ Մովսէս աղէկիզեալ ընդ չարչարանս նոցա աղաղակեաց առ Աստուած, և եմուտ դարձեալ ընդ Ահարոնի առ փարաւոն. և ընկէց 'ի գետին զգաւազանն հրաշագործ, որ փոխեցաւ յօձ առաջի փարաւոնի: Զնոյն արարին և կախարդք նորա, երևեցուցեալ զգաւազանս իւրեանց յօձ փոխեալ. այլ անդէն եկուլ զնոսա գաւազանն Մովսիսեան:

77. Ի վաղիւ անդր մինչդեռ փարաւոն ձեմէր յեզր Նեղոսի, եհար Մովսէս հրամանաւ Աստուծոյ զգաւազանն 'ի վերայ գետոյն, և նոյն ժամայն ոչ միայն ջուր գետոյն, այլ և ամենայն լիճք և ջրամբարք եղեն արիւն. յորմէ և սատակեցան ամենայն ձկունք. և հարուածս այս տևեաց աւուրս եօթն: Սակայն 'ի պարզել ջրոցն իբրև ոչ կատարեաց փարաւոն զհրաման տեառն՝ ձգեաց Ահարոն զգաւազանն, և ահա ընդ ամենայն տեղիս եռացին գորտք և ծածկեցին զերկիրն, մինչև 'ի տունս և 'ի սենեակս թագաւորին: Յորմէ փոքր ինչ խոնարհեալ փարաւոնի՝ խնդրեաց 'ի նոցանէ բառնալ զայն պատուհաս: Բայց 'ի սատակիլ գորտոցն իբրև ոչ զղջացաւ փարաւոն՝ եհար Ահարոն զգաւազանն 'ի գետին, և ահա լցաւ յԵգիպտոս չարատանջ կենդանին

մահն․ յորոց հարուածս կսկծեցուցիչս ընդունէին մարդիկ և կենդանիք․ և զարհուրեալ կախարդաց՝ ասացին թէ մատն Աստուծոյ է ։

78․ Իբրև ոչ կակղացաւ այնու սիրտ փարաւոնի, առաքեաց նոցա տէր շանաճանճ․ և ապա մահ յանասունս Եգիպտացւոց։ Յետ այսորիկ 'ի խառնման և ևս փարաւոնի, առեալ Մովսէսի բուռն չափ մոխիր՝ յանդիման եղև նմա, և ցանեաց զայն առաջի նորա յօդս․ և յապականել օդոյն՝ ելին եռացին կեղք և խաղաւարտք 'ի մարդիկ և յանասունս ։ Իբրև այսու ևս ոչ զղջացաւ փարաւոն, տեղայ յերկնից կարկուտ զարհուրելի, և սպան զմարդ և զամենայն որ ինչ 'ի դաշտին ։

Իսկ փարաւոն զարհուրեալ յաւէտ յահեղաձայն որոտմանց և 'ի շանթից, կոչեաց առ ինքն զՄովսէս․ և խնդրեցաւ առաջի տեառն։ Այլ իբրև դադարեցին ամպրոպք աղօթիւքՄովսէսի՝ անդրէն խստացաւ սիրտ փարաւոնի։ Նմին իրի 'ի վաղիւ անդր ծածկեցաւ համօրէն Եգիպտոս 'ի մարախոյ, որք եղծեալ ապականեցին զերկիրն։ Յետ որոյ իբրև ոչ զղջացաւ փարաւոն, եղև խաւար շօշափելի զերիս աւուրս․ մինչև չիշխել ումեք շարժիլ 'ի տեղւոջէ իւրմէ, և կամ լուցանել զճրագ առ սաստիկ թանձրութեան և խոնաւութեան օդոյն։

79․ Յայնմ ահեղ պատուհասէ զարհուրեալ փարաւոնի՝ փոքր մի մեղմացաւ, այլ փութով դարձաւ յառաջին խստասրտութիւն իւր։ Նմին իրի և Աստուած կնքեալ զհանդէս արդար դատաւորութեան իւրոյ, ած 'ի վերայ նոցա զվերջինն 'ի հարուածոց, ահեղ քան զառաջինսն ։ Քանզի Եբրայեցիք յետ կողոպտելոյ զԵգիպտացիս ըստ հրամանի տեառն՝ առնլով 'ի նոցանէ անօթս արծաթեղէնս և ոսկեղէնս և հան-

գերձս աղխուս 'ի պէտս հանգիստ տօնին, ապա զենէին ոչխարս և յարենէ նորա օրհնեցին զբա-րաւորաւ գլուխ տանց իւրեանց և զերկոքումբք սեմոքք, զի մի հասցէ ինքեանց հարուածն Եգիպտացւոց. որ և մնաց յիշատակ յաւիտենական ազատութեան իւրեանց 'ի ծառայութենէ Եգիպտացւոց՝ անուանեալ Պասքա կամ Զատիկ:

80. Եւ ահա 'ի հասարակ գիշերի եկ հրեշտակն սատակիչ, և հարեալ սպան զամենայն անդրանիկս Եգիպտացւոց՝ սկսեալ յանդրանկանէ փարաւոնի մինչև ցանդրանիկս ամենայն անասնոյ. որով ձայն ողբոց և կանչից լցաւ յամենայն տեղիս: Կոչեաց փարաւոն զՄովսէս և զԱհարոն և աղաչեաց զնոսա փութալ ելանել յԵգիպտոսէ. և բանագնացէին զԵբրայեցիսն անյապաղ ելանել հեռանալ անտի: փութային ելին Եբրայեցիքն անպատրաստ 'ի ճանապարհ. զի և ոչ խակ սպասեցին խմորելոյ հացին, այլ չու արարին ելին անբաւ բազմութեամբ. յորս էին վեցհարիւր հազար այր զօրաւորք և կարողք 'ի զէն. թող զծերս, զկանայս և զմանկունս, նաև զգերիս և զբազմութիւն յԵգիպտացւոց անտի. որոց տեսեալ զայնչափ սքանչելիս դարձեալ էին 'ի հաւատս Աստուծոյ Ճշմարտի: Թիւ ամենայն ելելոցն էր ըստ ոմանց երկու միլիոն:

81. Զայսու ժամանակաւ պայազատէր 'ի Հայաստան յետ Պարետայ Արբակ. և յետ նորա Զաւան՝ այր զօրաւոր ըստ Մագիստրոսի. ապա Փառնակ, որ պատերազմեալ ընդ Սեսոստրայ արքային Եգիպտացւոց՝ վանեցաւ 'ի նմանէ:

Ի սմին ժամանակի սկիզբն եղև միապետութեանն Աթենացւոց. քանզի Կեկրոպս եգիպտացի ածեալ զբնակիչս Սիգոնի յԱտտիկէ և միաբանեալ ընդ Յոյնս միապետեաց, և պետութիւնն

այն տևեաց ամս 485։ Մինչև ցայն վայր 'ի մէջ Յունաց ոչ օրէնք գոյին, ոչ գիր, ոչ քաղաքականութիւն, և ոչ արուեստ ըստ վկայելոյ Թուկիդիդեայ . այլ եկեալ 'ի Թեբէ Կադմոս փիւնիկեցի աւանդեաց զգիրս Յունաց թուով վեշտասան, և զաշխարհն անուանեաց յանուն քեռ իւրոյ Եւրոպայ։

82. Ըստ Եւսեբեայ՝ առ Կեկրոպաւ զատաքինն բուսաւ յԱտտիկէ 'ի բարձրաւանդակի ձիթենի . և յԱթենայ Աթէնք անուանեցան ։ Նախ Կեկրոպս զոհեաց զեզն 'ի պաշտօն դից, և անուանեաց Դիոս կամ Զեւս։ Իսկ Դևկալիոն սկիզբն առար թագաւորելոյ կողմանցն Պառնասացւոց. առ որով եղև ջրհեղեղ 'ի Թեսաղիա. և առ Փայեթոնիւ եղև հրայրեացք յԵթովպիա, և բազում ապականութիւնք գործեցան ըստ Պղատոնի։ Եւ ըստ բանաստեղծից Դիոս փոխեաց զՅով յորջառ . ուստի և Նեղուցն Կոստանդինուպօլսոյ Վոսփորոս կոչեցաւ . որ է արջառանց [1]։

## ԴԷՊՔ ԵՐՐՈՐԴԻ ԴԱՐՈՒՆ

Ամ աշխ.

2083. Կոչումն Աբրահամու ։

2092. Մելքիսեդեկ օրհնէ զԱբրահամ ։

2107. Աբրամ կոչի Աբրահամ. և Սոդոմ կործանի ։

2108. Իսահակ ծնանի ։

2158. Սէմ մեռանի վեց հարիւր ամաց ։

2168. Յակոբ և Եսաւ ծնանին ։

2173. Արամ տիրէ ամս 58 ։

1 Խորէն. Ա. 19։ Եւսեբ. ժամն. առ Աբրահ. նէ։

2175. Աբրահամ մեռանի 175 ամաց։
2233. Շամիրամ թագուհի։
2276. Յովսէփ վաճառի։
2288. Իսահակ վախճանի։
2315. Յակոբ մեռանի։
2369. Յովսէփ մեռանի 110 ամաց։
2400. Յոբ ծաղկի։
2430. Ահարոն ծնանի։
2433. Մովսէս ծնանի։
2454. Կեկրոպս առաջին իշխան յԱթէնս։
2469. Փառնակ տիրէ 'ի Հայս։
2479. Լելեգս առաջին թագաւոր Սպարտայ։
2496. Դարդանոս առաջին թագաւոր Տրովացւոց։

# ՉՈՐՐՈՐԴ ԴԱՐ

## ԳԼՈՒԽ Ա

Ազատութիւն Իսրայէլացւոց :
Ա. Ա. 2513

83. Ի լրանալ չորս հարիւր ամաց պանդխտութեան Իսրայէլացւոց ըստ աստուածային յայտնութեան՝ որ առ Աբրահամ, յամսեանն առաջնում սրբազան տարւոյ նոցա, որ է Նիսան, 'ի հնգետասաներորդ աւուր նորին ամսոյ ամենայն ժողովուրդք Իսրայէլի հաւաքեցան յայլ և այլ տեղեաց 'ի Ռամեսէ յառաջին իջևան իւրեանց. և չուեալ անտի հանդերձ ամենայն ստացուածովք իւրեանց չոքան հարին զխորանս իւրեանց 'ի դաշտին Սոկքովթայ: Անդ եփեցին զզանգուածս ալեր չև ևս խմորեալս և արարին բաղարջ: Ելեալ ապա անտի և խոտորեալ յուղիղ ճանապարհէ ըստ հրամանին Աստուծոյ՝ պատեցան ընդ անապատն 'ի հարաւ և ապա հասին 'ի բերան Եղիովթայ առ ափն Կարմիր ծովուն:

84. Իսկ յետ արձակելոյ զնոսա Փարաւոնի, տեսեալ նորա թէ չունին այլ ևս դառնալ անդրէն, դարձաւ յառաջին խստասրտութիւն իւր: Վասն որոյ փութանակի հանդերձեաց վեցհարիւր կառս հանդերձ ամենայն կարևոր զինուք զօրականօք և երիվարօք Եգիպտոսի՝ և պնդեցաւ զկնի Եբրայեցւոց. որք իբրև տեսին 'ի հեռուստ զահեղ պատրաստութիւն բանակի նոցա, յուսահատ լեալ զահի մեծի հարան և բողոքեցին ընդդէմ Մովսէսի: Իսկ Մովսէս

զօրացեալ 'ի տեառնէ քաջալերեաց զնոսա
չերկնչել բնաւ. այլ ըստ հրամանին Աստուծոյ
եհար գաւազանաւ զծովն, և առ ժամայն ել
սաստիկ հողմն, և բաժանեալ զծովն եբաց նո-
ցա ճանապարհ ցամաք, և ջուրքն կացին պարըս
պաձև ամբարձեալ երկուստեք :

85. Իբրև մտին որդիքն Իսրայելի 'ի ծով
անդր, և սկսան խումբ խումբ յառաջ խաղալ,
հրեշտակն՝ որ էր առաջնորդ նոցին, հովանի լինե-
լով նոցա սեաւմբ ամպոյ 'ի տուէ, և 'ի գիշերի
լուսաւորելով զնոսա. դարձաւ յայնժամ՝ յետս
կոյս և եկաց ընդդէմ բանակին Եգիպտացւոց,
լինելով նոցա գիշեր խաւարամած: Իբրև այսու
առաջնորդութեամբ անցին Իսրայելացիք ընդ
ծովն Կարմիր, բարձաւ խաւարն Եգիպտացւոց.
ետես փարաւոն զվերջապահ խումբ նոցա, և
սկսաւ խուճապմամբ զհետ պնդել և մխել 'ի
նորահրաշ ճանապարհ ծովուն հանդերձ զօրօք
իւրովք: Այն ինչ մերձենային Եգիպտացիքն 'ի
վերջապահ խումբ նոցին, խառնեաց զնոսա
հրեշտակն, և սկսան աղաղակել. փախիցուք յե-
րեսաց Իսրայելի. զի տէր պատերազմի վասն
նոցա :

86. Իբրև վախճանեաց վերջապահ խումբ
Իսրայելացւոց անցանել յայն կոյս. և ամենայն
Եգիպտացիք մտին 'ի ճանապարհ 'ի մէջ ծո-
վուն, ձգեաց Մովսէս զգաւազանն իւր 'ի վե-
րայ ծովուն ըստ հրամանի տեառն, և ահա լեռ-
նացեալ ջուրքն իջեալ ծածկեցին զԵգիպտա-
ցիսն առ հասարակ. որոց դիակունք ելեալք
յերեսս ծովուն՝ վարեցան 'ի հողմոց յայն կոյս,
և Իսրայելցիքն առին զամենայն աւար և զէնս
թշնամեաց իւրեանց: Յայնժամ երգեաց Մով-
սէս ընդ ամենայն ժողովրդեան զերգս յաղթա-
կան օրհնութեան տեառն վասն հրաշագործ

փրկութեանն. որպէս և Մարիամ քոյր Մովսէսի պարագլուխ կանանց դասուն՝ երգէր զգոհութիւնս տեառն թմբկօք և պարուք :

87. Յետ այսորիկ գնացին Իսրայէլացիք երեքօրեայ ճանապարհ ընդ անջրդի անապատն Սուր, և եկին 'ի Մեռա: Ջուր անդուոյն քանզի դառն էր՝ ոչ կարէին ըմպել. Նմին իրի սկսան տրտնջել ընդդէմ Մովսէսի : Իսկ նորա առեալ զծերպ փայտի արկ 'ի ջուր անդր ըստ հրամանին Աստուծոյ, և ահա քաղցրացաւ ջուրն : Անտի եկին յԵղիմ, ուր էին երկոտասան աղբիւք ջուրց, և եօթանասուն արմաւենիք. և անտի յանապատն Սին : Անդանօր պակասեաց նոցա հաց յետ երեսուն կամ քառասուն և հինգ աւուրց անցանելոյ նոցա զԾովն Կարմիր : Եւ անտի պատճառս առեալ ապերախտ ժողովրդեանն՝ գործեալ տրտնջեաց զՄովսիսէ և զԱհարոնէ : Եւ ահա ընդ երեկս ել հողմն հարաւոյ և ած զլորամարգն 'ի բանակ նոցին :

88. Իսկ ընդ առաւօտն էջ նոցա յերկնից մանանայ ընդ դաշտն համատարած, ցօղ իբրև զեղեամն 'ի սպիտակ մանրիկ հատս գնդակացեալ, որպէս զսերմն գնձոյ՝ համեղ իբրև զխորիսխ մեղու. և ունէր զհամ ամենայն համադամ կերակրոց, որոց ոք ցանկայր, որպէս ասէ Սողոմոն. «Զպատրաստական հացն յերկնից ետուր նոցա առանց ջանալոյ, առ ամենայն ցանկութիւն բաւական և առ ամենայն համադամս ճաշակոյ» [1] : Ընդ անուանելն Իսրայէլացւոց զայս երկնաւոր հաց՝ ձայնեցին Մա՛ն հո՛ւ, այսինքն զինչ է այս. և անտի կոչեցաւ Մանանայ. որ և անպակաս կերակրեաց զնոսա ամս քառասուն մինչև հասին 'ի մուտս երկրին աւետեաց

1 Իմաստ. ԺԶ. 20 :

(129)։ Ժողովէին զմանանայն ընդ այգն վաղն միոյ աւուր. և եթէ մինչ յերկրորդ օրն՝ նեխէր. խակ 'ի ծագել արևու լուծեալ՝ լինէր ըմպելի՝ ըստ ոմանց։ Սակայն յաւուր ուրբաթու ևեթ կրկին չափով ժողովէին վասն շաբաթու, յորում պարտէին դատարկանալ յամենայն ծառայական գործոց ըստ պատուիրանին։ Վասն որոյ 'ի շաբաթու ոչ իջանէր մանանայ։ Բայց որ ոք աւելի քան զպէտս ժողովէր՝ ոչ առաւելոյր անտի, և որ սակաւ՝ ոչինչ պակասէր. զոր լուեալ եփէին իբրև զհաց։ Շինեաց Ահարոն ըստ հրամանի տեառն սափոր ոսկի, և եդ 'ի նմա մանանայ լի չափով. և պահեաց 'ի խորանին վկայութեան մինչև շինեցաւ տապանակն. յորում պահեցաւ ընդ գորս յոլովս 'ի յիշատակ սքանչելեացն եղելոց։

89. Չուեաց Իսրայէլ 'ի Սին անապատէ և բանակեցաւ 'ի Ռափիդին. ուր ժողովուրդն տրտնջեաց ընդդէմ Մովսէսի առ 'ի չգոյէ ջրոյ։ Իսկ Մովսէս բողոքեաց առ Աստուած. և ըստ հրամանի նորա չոգաւ առ ոտս Քորեբ լերին, և եհար զժայռ մի հրաշագործ գաւազանաւն, և ահա բղխեաց ջուր յորդառատ. որ ընդ բազում ժամանակս երթայր զհետ նոցա, ուր և գնային ամս քառասուն։

Անդ յարձակեցան 'ի վերայ նոցա Ամաղեկացիք. որոց ընդդէմ եհան Մովսէս զօրս առաջնորդութեամբ Յեսուայ. և ինքն ելեալ 'ի լեառն եկաց յաղօթս, առեալ ընդ իւր զԱհարոն և զՈւր. որոց ամբարձեալ զբազուկս նորա զօրացուցանէին յաղօթս. որով խորտակեալ նկուն եղեն Ամաղեկացիք։ Եւ տէր հրաման ետ Մովսէսի գրել զայն 'ի գիր յիշատակի, մինչ անմոռաց յաղգս ազգաց։

90. Ընդ այն ժամանակս լուեալ Հռագուէլ

կոչեցեալն Յոթոր՝ աներ Մովսէսի զսքանչելեան որ եղեն Իսրայէլեանց՝ էառ զՍեփորա կին Մովսէսի և զերկու որդիս նորա զԳերսամ և զԵղիազար, և եկն յանապատ անդր յայցելութիւն փեսայի իւրում (73): Եւ ընդ առաջ նոցա Մովսէս, և ողջունեալ տարաւ զնոսա 'ի խորան իւր, և պատմեաց նոցա զամենայն սքանչելիս, զոր արար տէր մինչև ցայն վայր: Իսկ Յոթոր հաւատացեալ 'ի ճշմարիտն Աստուած մատոյց զոհս և ողջակէզս: Եկին ապա Ահարոն և ծերք Իսրայէլի յողջոյն Յոթորայ, և նստան ամենեքեան ուտել հաց:

Եկաց անդ Յոթոր զաւուրս ինչ. և տեսեալ զանհնարին աշխատանս Մովսէսի յորոշել ըզվէճս և զհակառակութիւնս ժողովրդեան, եա նմա խորհուրդ քաջ և կարևոր. Չէ 'ի դէպ, ասէ, մաշել զկեանս քո ծանր աշխատանօք. այլ արա զոր ասեմս. եղիցիս դու ժողովրդեանդ առ Աստուած դեսպան՝ առնուլ 'ի նմանէ հրաման և ծանուցանել նոցա, ցուցանելով նոցա ճանապարհս՝ յոր գնայցեն: Ընտրեսցես քեզ 'ի ժողովրդենէդ պաշտօնեայս արս զօրաւորս, արդարակորովս և անկաշառս. զի մի սակս ընչաքաղցութեան վաճառեսցեն զարդարութիւն: Եւ ապա 'ի ներքոյ նոցա կացուսցես յիւրաքանչիւր ցեղէ հազարապետս, հարիւրապետս, յիսնապետս, և տասնապետս: Սոքա դատեսցեն զամենայն դատաստան փոքր, և մեծագոյնք տարցին յատեան առաջ պաշտօնէից. և յորժամ մեծ ինչ և կարևոր բան լինիցի, հասուցանիցեն առ քեզ. որով և հանգիցես դու և ժողովուրդ քո ընդ քեզ [1]:

Կատարեաց Մովսէս զամենայն ըստ խորհըր-

1 Ելք. ԺԸ. 13:

գոյ աներոյն իւրոյ. և Յոթոր դարձաւ 'ի տուն իւր :

91. Զայսու ժամանակաւ պայազատէր 'ի Հայս Սուր յետ Փառնակայ. որ ըստ Մագիստրոսի եղև սուսեր հատու ընդդէմ թշնամեաց իւրոց քաջութեամբ : Առ որով ծաղկաւորէր Տրովս 'ի Տրովադա. որոյ հաւն Դարդանոս շինեալ էր զԴարդանոն քաղաք 'ի նեղուցն Միջերկրական ծովուն : Դարձեալ շինեցաւ յայնժամ Կորնթոս, որ երբեմն Եփիրա կոչէր : Ընդ այն ժամանակս կանգնեցին 'ի Դեղփիս զմեհեանն Ապողոնի [1] :

## ԳԼՈՒԽ Բ

### Աստուածային օրէնք և պատուիրանք:

Ա. Ա. 2514

92. Յամսեանն երրորդի յետ ելիցն յԵգիպտոսէ չուեալ Իսրայելացւոց 'ի Յափիդիմայ բանակեցան յանապատին հանդէպ լերին Սինայ, և կացին անդ ամ մի ողջոյն : Մովսէս կոչեալ յԱստուծոյ ել 'ի լեառն և լուաւ զկամս արարչին, որ հրամայեաց նմա յիշեցուցանել ժողովրդեան զսքանչելիսն՝ զոր արար վասն փրկութեան նոցա, և թէ կամի դնել ուխտ հաստատութեան ընդ նոսա և ունել զնոսա իւր ժողովուրդ ընտրեալ 'ի քահանայութիւն և 'ի թագաւորութիւն, ընդ պայմանաւ պահելոյ զօրէնս և զպատուիրանս նորա : Ապա իջեալ անտի Մովսէսի ժողովեաց զծերս ժողովրդեան, և յայտնեաց նոցա զաստուա-

1 Եւսեբ. ամ Աբր. Հ:

ծայրին կամս ։ Ամենեքեան միաձայն խոստացան
ընդունել և պահել զայն սրտի մտօք ։ Յայն֊
ժամ Մովսէս դարձ տարեալ ՚ի լեառն ՚ի
նմին աւուր տարաւ զպատասխանի նոցա առ
Աստուած ։

93 · Ապա առ ՚ի տպաւորել Աստուծոյ ՚ի
սիրտս նոցա զերկիւղ աստուածպաշտութեան
իւրոյ, հրամայեաց Մովսէսի գնալ սրբել զժո֊
ղովուրդն, և պատրաստել զնոսա վասն աւուրն
երրորդի՝ պատուիրելով չմերձենալ ընաւ ՚ի
լեառն ։ Եւ ահա յաւուրն երրորդի ընդ առա֊
ւօտն ամպ մթագարա ծածկեաց զլեառն, և ՚ի
գագաթան նորա երևէր ծուխ մրրկեալ, և ՚ի
նմա փայլատակունք և որոտմունք զարհուրե֊
լիք · ապա հնչիւն փողոց ՚ի նշանակ հրապարա֊
կելոյ աստուածային պատգամացն ։ Յայնժամ
կացոյց Մովսէս զժողովուրդն զառորոտով լե֊
րին և ինքն ել ՚ի լեառն. և իջեալ անդէն ըստ հրա֊
մանին Աստուծոյ էառ զԱհարոն ընդ իւր և ել
անդր ՚ի գագաթն ։ Անդ հրեշտակն ՚ի դիմաց
տեառն խօսեցաւ մարդկեղէն բարբառով զտաս֊
նաբանեայ պատուիրանն ՚ի լուր ժողովրդեան՝
զ՚ի բնէ գրեալն ՚ի սիրտս նոցա ։

94 · Յետ լսելոյ Մովսէսի և Ահարոնի զա֊
մենայն օրէնս՝ իջին ՚ի լեռնէ անտի և յայտնե֊
ցին ժողովրդեան. և նոքա խոստացան հնա֊
զանդել և կատարել զամենայն սրտի մտօք ։ Ի
նմին ժամանակի գրեաց Մովսէս զայն ամենայն.
և ապա կանգնեաց սեղան ՚ի ստորոտ լերինն
յերկոտասան քարանց. և հրամայեաց անդ
բանկաց ամենայն ցեղից ածել և զենուլ որթս
՚ի զոհ. և առեալ յարենէ անտի ցանեաց զժո֊
ղովրդեամբ ասելով. Այս արիւն է ուխտին,
զոր ուխտեաց Աստուած ընդ ձեզ ըստ ամե֊
նայն բանիցս այսոցիկ ։

Դարձեալ եւ Մովսէս 'ի լեառն ընդ Յեսուայ պաշտօնէի իւրոյ մինչև ցլուսաւոր աւուրն, և կացին անդ զաւուրս վեց։ Եւ յաւուրն եօթներորդի կոչեաց Աստուած զՄովսէս 'ի գլուխ լերին 'ի մէջ ամպոյն, և եկաց նա անդ զաւուրս քառասուն։ Անդ աւանդեաց նմա տէր զօրինակ տապանակին և խորանին վկայութեան և զձև զգեստուց քահանայից և զծէս զոհից, տալով նմա միանգամայն և զերկու քարեղէն տախտակս տասնաբանեայ պատուիրանաց։

95. Իսկ թանձրամիտ ժողովուրդն ձանձրացեալ ընդ երկարաձիգ յապաղումն 'ի նմին տեղւոջ, և տեսեալ թէ ոչ եկն Մովսէս, յարձակեցան կատաղաբար 'ի վերայ Ահարոնի, զի առնացէ աստուածս՝ առաջնորդել նոցա. և չոքան հաւաքեցին զոսկեղէն զարդս կանանց իւրեանց, և ձուլեալ որթ ըստ սովորութեան Եգիպտացւոց՝ սկսան խաղալ և պարել առաջի որթոյն գոչելով. Այս են աստուածք քո, Իսրայէլ, որ հանին զքեզ յերկրէն Եգիպտացւոց։

Յայնժամ առաքեաց Աստուած զՄովսէս երթալ ուղղել զապերախտ ժողովուրդն։ Եւ նա էջ 'ի տեղւոջն՝ ուր էր Յեսու, և նովաւ հանդերձ իջեալ 'ի լեռնէ անտի մերձեցաւ 'ի բանակն։ Իբրև ետես զորթն և զպարաւորսն, վառեցաւ բորբոքեցաւ սիրտ նորա 'ի բարկութիւն, և անդէն ընկէց 'ի գետնի և խորտակեաց զաստուածագիծ տախտակս պատուիրանացն, անարժան վարկանելով զապստամբ ժողովուրդն այնպիսի մեծամեծ բարեաց։ Ապա առեալ զորթն մանրեաց 'ի փոշի, և խառնեալ 'ի ջուր ետ ըմպել ժողովրդեանն 'ի նշան անարգութեան։ Եւ 'ի վրէժխնդրութիւն որթապաշտից թոյլ ետ Ղևտացւոց կոտորել 'ի նոցանէ արս երեք հազար։ Եւ պատուիրեաց Մովսէս

ժողովրդեան զղջալ և ապաշխարել 'ի վերայ անօրէնութեան իւրեանց. և ինքն ելեալ 'ի լեառն խնդրեաց ջերմ աղօթիւք զթողութիւն յանցիչաչար մարդասիրէն. որով և ցածոյց զբարկութիւնն Աստուծոյ 'ի նոցանէ :

96. Յետ այնորիկ Մովսէս առ 'ի հեռանալ յամբոխէ անտի՝ եհար զխորան իւր արտաքոյ բանակին. և կոչեցաւ այն խորան վկայութեան. քանզի անդ խօսէր Մովսէս ընդ Աստուծոյ և հարցանէր վասն ամենայն իրաց զոր առնելոցն էին: Իբրև երթայր Մովսէս 'ի խորան անդր, ամենայն ժողովուրդն յարուցեալ յառն կայր իւրաքանչիւր առաջի դրան խորանին իւրոյ. և 'ի մտանելն նորա 'ի խորանն, անդէն իջանէր ամպ սիւնաձև և կայր 'ի պաշտպանութիւն դրանն: Մովսէս խօսէր ընդ տեառն և տէր ընդ նմա 'ի ձեռն հրեշտակի. իսկ ժողովուրդն ահիւ մեծաւ երկիր պագանէր 'ի հեռաստ : Յեսու ևեթ կարող էր մտանել 'ի խորան անդր. զի յորժամ ելանէր Մովսէս, ինքն մնայր անդ 'ի պահպանութիւն տեղւոյն սրբոյ :

Անդ հրամայեաց Աստուած Մովսէսի կոփել զերկուս տախտակս քարեղէնս ըստ առաջնոյն, և տանել 'ի լեառն Սինայ : Ել Մովսէս 'ի գլուխ լերին, և եկաց ընդ ամպով զաւուրս քառասուն. և գրեաց տէր 'ի վերայ տախտակացն զտասնաբանեայ պատուիրանս, և ընդ ծերպ վիմի միոյ եցոյց Մովսէսի զլոյս իմն գերահրաշ անճառելի փառաց աստուածութեան իւրոյ. յորմէ լուսաւորեցան երեսք Մովսէսի :

97. Առեալ Մովսէսի զտախտակս և զպատուիրանս էջ առ ժողովուրդն: Իբրև տեսին զդէմս նորա փառաւորեալ, զահի մեծի

հարան ամենեքեան, և չիշխէր ոք մերձենալ առ նա, մինչև քաղցրեաց զնոսա Մովսէս, և ապա համարձակեցան մատչել. և նա ետ առաջի նոցա զամենայն պատգամս և զտախտակս պատուիրանաց: Այնուհետև իբրև պատգամախօս լինէր առ ժողովուրդն յաստուածակոյս կողմանէ, քող արկանէր զերեսօքն, զի համարձակեսցի ժողովուրդն մերձենալ առ նա և լսել զպատգամս տեառն:

Յետ այսորիկ ձեռն էարկ Մովսէս շինել զխորանն վկայութեան և զտապանակն ուխտի 'ի ձեռն Բեսելիէլի Ճարտարապետին և Եղիաբայ քանդակագործին. և ժողովուրդն բերին 'ի պէտս շինութեանն ոսկի, արծաթ, պղինձ, ծիրանի և ականս պատուականս: Եւ այսպէս կատարեցին նոքա յանապատի անդ զտապանակն, զսեղանն հացին առաջաւորութեան, զաշտանակն եօթնաջահեան, զսեղանն խնկոց, զսեղանն ողջակիզաց, զխորանն վկայութեան, զզգեստս քահանայից, և զամենայն կահ և կարասի:

98. Տապանակ ուխտին՝ որ կոչէր Սրբութիւն սրբութեանց, էր արկղ յանփուտ փայտից. երկայնութիւն նորա երկու կանգուն և կէս, և լայնութիւն նորա և բարձրութիւն կանգուն և կէս, պատեալ ներքոյ և արտաքոյ մաքուր ոսկի թիթղամբք. հանդերձ չորս ոսկեձոյլ օղամանեկօք, և 'ի վերայ կափարիչ ոսկի. յաջմէ և յահեկէ նորա կային երկու քառաթևեան քերովբէք կռածոյք յոսկւոյ, երեսք նոցա դէմյանդիման միմեանց և աչք 'ի խոնարհ հայէին: Անդ իբրև յաթոռոյ խօսէր Աստուած. որ և կոչեցաւ Քաւութիւն: Իսկ 'ի մէջ տապանակին կային երկու տախտակք պատգամաց, օրինական և դատաստանական գրուածք

և տախտըն ոսկի լի մանանայիւ (88)․ և ապա ծաղկեալ գաւազանն Ահարոնի (119)։

99․ Սեղանն հացի առաջաւորութեան էր նոյնպէս յանփուտ փայտից հաստատեալ 'ի վերայ չորից ոտից, և պատեալ մաքուր ոսկւով․ որ ունէր չորս օղամանեակս ոսկիս․ և կահք նորա էին խնկամանք կամ ափսէք, և սափք արմնակալք, և տաշտք ոսկիք․ յորս դնէին զնուիրեալ հեղանիւթս։ Իսկ 'ի վերայ սեղանոյ դնէին երկոտասան հացս նուիրեալս յանուն երկոտասան ցեղից Իսրայէլի․ և էին անխմոր և մեծադանդուածք պատեալք ոսկի թերթիւք և եդեալք 'ի վերայ միմեանց վեց աստի և վեց անտի։ Յամենայն շաբաթու քահանայք զհինսն ուտէին և նորս դնէին ջերմս․ ընդ նմին նուիրէին աղ և խունկ, և գինի ըստ ոմանց։

100․ Աշտանակն էր համակ ոսկի վեց շառաւիղօք և ծրագարանօք․ յորս վառէին յամենայն գիշերի եօթն լապտերք։ Բարձրութիւն աշտանակին համարի աւելի քան զչորս կանգուն, և կշիռն հազար հինգհարիւր ունկի։

101․ Սեղանն խնկոց էր յանփուտ փայտից, այլ քառակուսի 'ի մի կանգուն, պատեալ ոսկի թիթղամբ․ որ եդեալ էր 'ի խորանին վկայութեան հանդէպ սեղանոյ հացին առաջաւորութեան։ Ուր Ահարոն կամ այլ ոք 'ի քահանայից յառաւօտու և յերեկոյի ծխէին խունկս բաղադրեալս պէսպէս ծխանելեօք։ Բայց չէր օրէն այլոց քահանայից մատուցանել 'ի վերայ սեղանոյն հաց կամ գինի և կամ արիւն զոհի․ այլ միայն քահանայապետին, որ միանգամ 'ի տարւոջն մատուցանէր վասն մեղաց ժողովրդեան։

102․ Սեղանն ողջակիզաց էր 'ի ձև մեծի արկեղ յանփուտ փայտից պղնձապատ քառա-

կուսի 'ի հինգ կանգնոյ ։ Ի միջին տեղւոջ կայր հասկարայ շարժական , յորոյ վերայ այրէին զողջակէզսն. ունէր ծածկոյ , տաշտ , մասհան և կրակարանս պղնձիս ։

103. Խորանն վկայութեան էր վրան մեծաշէն չորեքկուսեան առաստաղիւք պատսպարեալ. առաջինն որ ծածկէր զորութիւն սրբութեանց՝ էր բեհեղեայ, ներկեալ 'ի գոյն կապուտակ ծիրանի և կարմիր՝ նկարէն գեղեցկածաղիկ ։ Երկայնութիւն իւրաքանչիւր փեղկի էր 'ի քսանևութ կանգնոյ. իսկ լայնութիւնն 'ի չորից. յորոյ վերայ դոյր այլ ծածկոյ մազեղէն մեծ. և 'ի վերայ այլ ծածկոյ մեծ քանզառաջինն՝ գործեալ 'ի շիկակարմիր մորթոյ. և 'ի վերայ սորա այլ ծածկոյ 'ի կապուտակ մորթոյ գործեալ ։

Իսկ խորանն էր շրջապատեալ 'ի սեանց յանփուտ փայտէ , որոց բարձրութիւն էր տասն կանգուն , պատեալք ներքուստ և արտաքուստ ոսկի թիթղամբ ։ Երկայնութիւն խորանին էր երեսուն կանգուն՝ յերկուս մասունս բաժանեալ. առաջինն կոչէր Սրբութիւն սրբութեանց , ուր էր տապանակն. իսկ արտաքին կողմն կոչէր Սրբութիւն , ուր էր սեղանն հացին առաջաւորութեան. և ունէր շուրջ զերև գաւիթ անյարկ հարիւր կանգնաչափ ընդ երկայն , և յիսուն ընդ լայն , հաստատեալ 'ի վերայ բազում սեանց ։ Կշիռ ոսկւոյն ծախելոյ 'ի պէտս խորանին համարի իբր երեսուն տաղանդ. իսկ կշիռ արծաթոյն հարիւր տաղանդ ։ Մի տաղանդ ոսկւոյ արժէր իբր յիսուն և հինգ հազար դահեկան ղուռուշ. և մի տաղանդ արծաթոյ քառասուն և վեց հազար դահեկան ։

104. Խորհրդաւոր էին և զգեստք քահա-

նայապետին, զի էին պատմուճան բեհեզեայ պճղնաւոր, ապա պարեգօտ կապուտակ միատանի՝ ունելով 'ի ծայրս փունջս նռնաձեւս, և 'ի վերայ նորա գօտի ոսկեթել։ Իսկ 'ի վերայ պարեգօտին վակաս, բառ Եբրայեցւոց եփուտ՝ 'ի ձև բաճկոնի գոյնզգոյն. 'ի լանջս քահանայապետին էր տախտակն դատաստանաց. և 'ի վերայ ուսոց վակասին կային ընդելուզեալ ոսկւով զմրուխտ ակունք. յորս քանդակեալ էին անուանք երկոտասան ցեղից Իսրայէլի։ Իսկ 'ի վերայ տախտակին դատաստանաց ագուցեալ էին յակկի երկոտասան ակունք 'ի չորս կարգս. ուր և գրեալ կային այս բառք. Ուրիմ Թումիմ. այսինքն Լուսաւորութիւն, Ճշմարտութիւն։ Իսկ խոյր քահանայապետին էր 'ի բեհեզոյ. յորոյ վերայ գոյր թիթեղն 'ի մաքուր ոսկւոյ, գրեալ 'ի վերայ Սրբութիւն տեառն։ Այսպէս հին եկեղեցին աստուածպաշտութեան կարգադրեալ նկարագրեցաւ յանապատի անդ յօրինակ նորոյս [1]։

## ԳԼՈՒԽ Գ

### Քահանայութիւն Ահարոնի, և փոխք։

Ա. Ա. 2515

105. Յամին երկրորդի յամսեանն առաջնում ըստ հրամանի տեառն կանգնեաց Մովսէս զխորանն վկայութեան և տարաւ 'ի ներքս զտապանակն, անջրպետեալ վարագուրաւ։ Եւ եդ արտաքոյ վարագուրին զսեղանն հացի առաջաւորութեան, և հանդէպ նորա զաշտանակն

1 Տեսութիւն սուրբ Գրոց. Գիրք 2. Գլ. Ի. Ժ։

նակի եօթնալոյս, զսեղանն խնկոց, և զաւազանն. իսկ զսեղանն ողջակիզաց եդ առ դրան արտաքոյ խորանին: Եւ ապա առեալ զԱհարոն և զորդիս նորա լուաց զնոսա 'ի դուռըն խորանին, և զգեցուցեալ նոցա զպեստս քահանայութեան օծ զգլուխ նոցա և զձեռս: Մատոյց ապա զոհս, և առեալ յարենէ նոցին օծ զըլթակս աջոյ ականջաց Ահարոնի և որդւոց նորա, և զծայրս մատանց աջոյ ձեռաց և ոտից նոցա, և ապա սրսկեաց 'ի վերայ նոցա յարենէ անտի. որք և զաւուրս եօթն հսկեցին առաջի տեառն 'ի խորանի անդ:

106. Ապա էջ յերկնից ամպ լուսաւոր և ծածկեաց զխորանն, և զգիշերն ողջոյն լուսաւորեաց զամենայն բանակն, իսկ յառաւօտուն փոխեցաւ յամպ ըլթագոյն: Եւ ամպն այն հրաշատեսիլ երեւէր հանապազ 'ի վերայ խորանին, 'ի տուէ հովանի առնելով, և 'ի գիշերի լուսատու և ուղեցոյց լինելով նոցին: Նմին իրի ըստ շարժելոյ ամպոյն և նոքա շարժէին. յորժամ վերանայր նա և յառաջ խաղայր, չուէին և նոքա. և մինչ դադարէր ուրեք, անդ և նոքա բանակէին, ակն կալեալ առ նշան աստուածային կամաց:

107. Իբրև կատարեցան եօթնօրեայ հանդէսք քահանայական օծութեան, կոչեաց Մովսէս զԱհարոն և զորդիս նորա և զծերս ժողովրդեան առաջի խորանին, և հրամայեաց առնել զոհ վասն մեղաց քահանայից և ժողովըդեան: Եւ յետ խնկարկելոյ Ահարոնի 'ի վերայ սեղանոյ խնկոց, ել արտաքս և ամբարձեալ ըզձեռս 'ի վերայ ժողովրդեան օրհնեաց զնոսա: Յայնժամ երևեցաւ բոց հրոյ ելեալ 'ի խորանէն, և յական թօթափել կիզեալ սպառեաց զամենայն ինչ՝ որ կայր 'ի վերայ սեղանոյ ող-

Ջակիզայ. և ժողովուրդն տեսեալ զսքանչելիսն զարհուրեցան, և անկեալ երկիր պագին տեառն:

108. Այս երկնաւոր հուր 'ի ձեռն հանապազօրեայ խնամոց քահանայիցն անշէջ պահեցաւ ըստ պատուիրելոյ տեառն մինչև 'ի ժամանակս Սողոմոնի: Եւ որով իբրև կատարեցաւ տաճարն, նոր հուր առաքեաց Աստուած յերկնից, որ ծախեաց զողջակէզս և զոհս [1]. որ և պահեցաւ անշէջ մինչև ցաւուրն Երուսաղէմի, զի թագուցեալ կայր 'ի քահանայից 'ի գուբի անդ տաճարին (333): Ապա 'ի դառնալ անդ Երբայեցւոց 'ի գերութենէ գտին զայն փոխեալ 'ի ջուր թանձր և պղտոր, որ անդէն վառեալ բորբոքեցաւ [2]. և մնաց, ասեն, մինչև 'ի ժամանակս հալածանաց Անտիոքոսի (425):

109. Արդ 'ի նոյն հրաշափառ աւուր քահանայագործութեան Ահարոնի դէպք ինչ աղէտալի պատահեաց անդէն: Քանզի յերեկայեան ժամուն խնկարկութեան Նադաբ և Աբիուդ երիցագոյնք յորդիս Ահարոնի փութացեալ անզգուշութեամբ եդին 'ի բուրվառս իւրեանց հուր օտար, և ոչ յերկնաւոր սրբազան հրոյ անտի, որպէս պատուիրեալ էր Աստուած. և մատուցեալ 'ի սեղան խնկոց արկանել խունկ առաջի տեառն, ահա ել հուր 'ի սեղանոյ անտի և անդէն առ սեղանովն եհար սպան զնոսա, այլ ոչ այրեաց զմարմինս և զպատմուճանս նոցա: Իսկ Մովսէս մեծաւ ցաւակցութեամբ յետ մխիթարելոյ զԱհարոն և զորդիս իւր՝ կոչեաց զՄիսիդայէլ և զԵղիսափան

1 Բ. Մնաց. Է:
2 Բ. Մակ. Ա. 20. 22:

զօրգլխս հօրեղբօր Ահարոնի, և հրամայեաց նոցա բառնալ պատուով զմարմին մեռելոյն հանդերձ քահանայական պատմուճանօք իւրեանց և տանել թաղել արտաքոյ բանակին ։

110. Յետ այսորիկ հրաման ետ տէր Մովսէսի, զի արասցէ ժողովուրդն զառաջին զատիկն յանապատի անդ Սինայ. զոր և կատարեցին 'ի չորեքտասաներորդ աւուր ամսոյն առաջնոյ յամին երկրորդի ելանելոյ նոցա յԵգիպտոսէ. զոր ամի ամի կատարէին ըստ սահմանեալ ժամանակին ոչ միայն Եբրայեցիք, այլ եւ օտարք թլփատեալք և միացեալք ընդ նոսա ։

111. Զկնի յիսուն աւուրց զատկին կատարէին զտօն Պենտեկոստէի 'ի յիշատակ օրինաց, որք տուան նոցա 'ի Սինէական լերին յետ յիսուն աւուրց ելանելոյ նոցա յԵգիպտոսէ ։ Ապա յամսեանն եօթներորդի, որ կոչէր Թշրին, կատարէին զտօն տաղաւարահարաց՝ մատուցանելով գոհութիւն տեառն վասն պաղաբերութեան երկրի, և 'ի յաւէրժական յիշատակ քառասնամեայ ճանապարհորդութեան ընդ անապատն և բնակելոյ 'ի տաղաւարս. և տօնն այն սկսանէր 'ի հնգետասաներորդ աւուր յետ ժողովելոյ զամենայն արդիւնս յանդաստանաց ։ Ապա 'ի տասներորդ աւուր Թշրին ամսոյ կատարէին զտօն քաւութեան Քիփուր ձայնեալ՝ որ սահմանեցաւ 'ի պատիւ խորանին վկայութեան, և վասն մեղաց քահանային, որ յայնմ աւուր ևեթ մտանէր 'ի սրբութիւն սրբութեանց արեամբ զուարակին. նա և 'ի քաւութիւն ամենայն ժողովրդեան ։ Վասն որոյ զօրն զայն ողջոյն ծոմապահութեամբ և ապաշխարութեամբ անցուցանէին ։

112. Յետ կատարելոյ ամենայն օրինադրու-

թեանց ծխոց և տանից 'ի միջոցի միոյ ամի յա-
նապատին Սինայ յառաջնում աւուր ամսեանն
երկրորդի յամին երկրորդի ելանելոյ նոցա յեր-
կրէն Եգիպտացւոց՝ խօսեցաւ Աստուած ընդ
Մովսէսի 'ի խորանէն վկայութեան, և հրա-
մայեաց հանդէս առնել և թուել զամենայն
ժողովուրդն 'ի քսանամենից 'ի վեր. որք ընդ
ամենայն եղեն 603550. զի 'ի ցեղէն Ռուբենի
գտան 46500. Շմաւոնի 59300. Յուդայ 74600.
Իսաքարայ 54400. Զաբուղոնի 57400. Եփրե-
մի 40500. Մանասէի 32300. Բենիամինի
35400. Դանայ 62700. Նեփթաղիմայ 53400.
Գադայ 45650. Ասերայ 41400: Թող զկա-
նայս, զմանկունս և զծերս:

Յայս հանդէս համարոյ ոչ մուծաւ ցեղն
Ղեւեայ, որք կարգեալ էին 'ի սպասաւորու-
թիւն խորանին: Որ Մովսէս գլուխ և առաջ-
նորդ էր համօրէն ժողովրդեան. իսկ Ահարոն
քահանայապետ՝ էր գլուխ ղեւտացւոց. որք
էին 22 հազար. և բնակէին շուրջ զխորանաւն
վկայութեան իբր պահապան նորին: Եւ 'ի սո-
ցանէ 8580 անձինք բառնային զկահ և զկարա-
սի խորանին, նա և զտապանակն՝ յորժամ չու-
էին. բայց նախ Ահարոն ընդ որդւոց իւրոց
ծածկէին զգուշութեամբ զտապանակն և զսե-
ղանս այլովքն հանդերձ:

113. Ապա յամին երկրորդի 'ի քսաներորդի
աւուր ամսեանն երկրորդի վերացաւ սիւն ամ-
պոյն 'ի խորանէն վկայութեան, և եկաց 'ի վե-
րայ խորանին Յուդայ՝ որ նախապատիւ էր.
յայնժամ Ահարոն և որդիք նորա պատրաստե-
ցին զսպաս խորանին: Իբրև սկսան քահանայք
հարկանել զփողս ազդեցութեան, մատուցեալ
Մովսէս առ տապանակն՝ զոր որդիք Կահա-
թու ղեւտացւոց բարձեալ ունէին յուս իւ-

բեանց, ասէ. «Արի տէր և ցրուեսցին թշնամիք քո, փախիցեն ամենայն ատելիք քո»[1]։ Եւ ապա տապանակն 'ի Ճանապարհ առաջնորդելով ամպոյն. Մովսէս և Ահարոն և երկու որդիք նորա կային 'ի գլուխ բանակին. ապա ցեղն Յուդայ և այլք զկնի վայելուչ դասակարգութեամբ ելանէին 'ի չու. և էր բանակն մեծ յոյժ, զի էին իբրև ոգիք երկու միլիոն։

114. Յետ երից աւուրց վերջապահ մասն բանակին ձանձրացեալ տրտնջեցին զԱստուծոյ. և անկաւ հուր յերկնից և կիզեալ սպառեաց զայն մասն. յորժամ այլք զահի հարեալ դիմեցին առ Մովսէս, և նա աղօթիւք ցածոյց զբարկութիւն տեառն. և կոչեցաւ տեղին Հրայրեաց։

Դարձեալ տրտնջեաց ժողովուրդն վասն մանու, և ետ նոցա Աստուած լորամարգի բազում յոյժ բաւական ամսօրեայ ժամանակի. այլ վասն տրտնջմանց նոցա և որովայնամոլութեան սատակեցան 'ի նոցանէ բազումք: Իսկ Մովսէս հրամանաւ տեառն ընտրեաց եօթանասուն ծերս և կացոյց առ խորանին. էջ 'ի վերայ նոցա հոգի մարգարէական և եղեն քաջ օգնական նմին։ Իբրև հասին յԱսերովթ, Մարիամ և Ահարոն եղբայր նորա տրտնջեցին զՄովսիսէ սակս մեծամտութեան Սեփորայ կնոջ նորա. յայնժամ կշտամբեաց զնոսա Աստուած, և պատժեաց զՄարիամ բորոտութեամբ, որ մինչ արտաքոյ բանակին զաւուրս եօթն. ապա յաւուրն ութերորդի բժշկեաց զնա տէր աղօթիւք Մովսէսի։

1 Թուոց Ժ. 35։

## ԳԼՈՒԽ Դ

### Առաքումն լրտեսաց, և մահ Մովսէսի։
Ա. Ա. 2515

115. Ելին Իսրայէլացիք յԱսերովթայ և ե-կեալ բանակեցան յանապատին Փառանու և 'ի Կա-դէսբառնեայ, որ էր սահման քանանացւոց։ Անդ յայտնեաց նոցա Մովսէս. թէ կամի տէր անտի անցուցանել զնոսա ընդ լերինս Ամովրհացւոց և մուծանել յերկիրն աւետեաց։ Բայց նոքա գաղ-նի զխմագործութեամբ կամեցան յապաղել ըզ-յառաջադիմութիւնն։ Նմին իրի խորհուրդ ե-տուն Մովսէսի յառաջ քան զմտանելն՝ առա-քել լրտեսս, և դիտել զերկիրն և զճանապարհն. զի մի յանդէտս յարձակելով վնասեսցին։ Նշան թերահաւատութեան էր խորհուրդս այս. իբր չէ զսքանչելիս մեծամեծս տեսեալ զօր ամենայն, և տակաւին կասկածէին յառաջնորդութենէն Աս-տուծոյ։ Սակայն ըստ թոյլատուութեան տեառն զիջեալ Մովսէս 'ի կամս նոցա ընտրեաց յամե-նայն ցեղէ մի մի զօրապետ, յորս գտաւ և Յեսու 'ի ցեղէն Եփրեմի, և Քաղէբ 'ի ցեղէն Յու-դայ։ Միայն ցեղն Ղեւեայ ոչ առաքեաց զոք. զի 'ի սպասաւորութիւն խորանին հեթ կար-գեալ էին, ազատ յայնպիսի ծառայութեանց։

116. Յետ հրահանգելոյ լրտեսացն 'ի Մով-սիսէ՝ ուղեւորեցան ընդ անապատն Սին. և շըր-ջեալ ընդ բովանդակ երկայնութիւն երկրին Քա-նանացւոց՝ եկին 'ի Քեբրոն. և անտի անցեալ ընդ Ձորն ողկուզոյ՝ հատին ուռ որթոյ և ողկոյզ մի 'ի նմա այնչափ մեծ, զի պէտք եղեն երկուց արանց բառնալ զնոյն լծակաւ։ Աւուրն անտի և

նուռն և թուղ ։ Ապա յետ քառասուն աւուրց դարձան անդրէն 'ի բանակն 'ի Փառան ։ Եւ զոր միանգամ տեսին պատմեցին ստուգութեամբ 'ի լուր ժողովրդեան ։ Որոց խռովեալ 'ի բանից անտի աղմուկ մեծ յարուցին 'ի բանակի անդ. զոր եւս քան զեւս բորբոքեցին տասանքին լրտեսքն վատախօսք, աշխարհին իմն նկարագրելով զհանգամանս քաղաքաց և ազգաց և պաշարկութիւն ժողովրդեան երկրին այնորիկ ։ Յորմէ շփոթեալ ապստամբ ամբոխին՝ յարեան մոլեգնաբար 'ի վերայ Մովսէսի չարաչար տանջելով եթէ 'ի կորուստ տանի զմեզ ։

Յայնժամ յառաջ մատեան կրկին զօրավարքն Քաղեբ և Յեսու և սկսան խրախոյս տալ նոցա հաստատելով զանշուշտ յաղթանակն հզօր ձեռինն ամենակալի ։ Այլ ժողովուրդն խստապարանոց անսաստեալ նոցա խորհեցան ապստամբել, և կացուցանել իւրեանց նոր զօրավար, և դառնալ յԵգիպտոս ։ Տեսեալ Աստուծոյ զյետին ապստամբութիւն նոցա՝ երևեցոյց զփառս իւր 'ի սիւն ամպոյն, որ յանկարծ փոխեցաւ 'ի բոց կայծակնացայտ հրոյ. յորմէ ահիւ պակուցեալ լռեցին ապստամբքն ։

117. Յայնմ պահու խօսեցաւ Աստուած 'ի հրոյ անտի ընդ Մովսէսի՝ սպառնալով անդէն և անդ սատակել զնոսա, և զնա ինքն առաջնորդ կարգել այլում մեծի ժողովրդեան ։ Իսկ Մովսէսի յերեսս անկեալ պաղատէր՝ թողութեան առնել զմեղս ժողովրդեան իւրոյ ։ Զիջաւ տէր յաղաչանս Մովսէսի, այլ անդէն կնքեաց զաղէտալի դատակնիք իւր 'ի վերայ նոցա, թէ յայնչափ բազմութենէ որք ելին յԵգիպտոսէ 'ի քսանամենից 'ի վեր, ոչ ոք տեսցէ զերկիրն աւետեաց. բայց միայն Յեսու և Քաղեբ, որք հաւատարիմ գտան առ Աստուած ։ Քանզի փո-

խանակ սակաւ աւուրց՝ յորս մնանելոց էին յերկիրն այն, Թափառեցին, ասէ, մոլորական ամս երեսուն և ութ ցլրումն քառասուն ամաց. մինչև անկցին ոսկերք ամենեցուն յանապատի անդ: Ընդանօր առաջի խորանին առ ժամայն անկան մեռան տասանեքին լրտեսքն. և 'ի վաղիւ անդր բանակն դարձաւ անդրէն հրամանաւ տեառն ընդ Ճանապարհ Կարմիր ծովուն: Ուր շրջեցան 'ի վեր և 'ի վայր առ սահմանօք Եդովմայեցւոց, մինչև հասին յԵղաթ նաւահանգիստ Կարմիր ծովուն: Եւ անտի դարձ արարեալ հաղիւ ուրեմն հասին 'ի ձորն Զարեդ 'ի միջոցի երեսուն և ութ ամաց. մինչև մեռան ամենայն տրտնջողք: Ի սմին ժամանակի փայտ քաղէր ոմն 'ի ժողովրդենէն յաւուր շաբաթու, զոր կալեալ քարկոծեցին իբրև օրինազանց:

118. Զայսու ժամանակաւ Կորխ Թոռն Կահաթու որդւոյ Ղեւեայ չհանդուրժեալ ընդ պատիւ քահանայապետութեան ցեղին Ահարոնի՝ յարոյց ապստամբութիւն հակառակ Մովսէսի և Ահարոնի. զի որսացեալ նորա համախոհս երկերիւր և յիսուն 'ի գլխաւորաց ժողովրդեան ցեղին Ղեւեայ, ընդ որս էր Դաթան և Աբիրոն և Աւնան՝ իշխանք ցեղին Ռուբէնի, դիմեաց համախոհիւքն իւրովք 'ի վերայ Մովսէսի և Ահարոնի ամբաստանաւն ընդդէմ նոցա խօսելով: Ի վաղիւ անդր կացին Մովսէս և Ահարոն 'ի դուռն խորանին վկայութեան՝ ունելով Ահարոնի զբուրվառ իւր 'ի ձեռին, և հուր և խունկ 'ի նմա: Եհաս անդր և Կորխ հանդերձ ապստամբ խմբովն, և իւրաքանչիւր նոցա բուրվառ 'ի ձեռին, և ընդ նոսա ամբոխ բազում յոյժ, և կացին 'ի դուռն խորանին: Իսկ Դաթան և Աբիրոն 'ի հեռաստանէ միայն անսանել զկատարածն: Յայնժամ էջ սիւն ամպոյն 'ի վերայ խո-

բանին։ Եւ հրամայեաց Աստուած Մովսէսի և Ահարոնի մեկնել անտի. որոց անդէն անկեալ 'ի վերայ երեսաց իւրեանց աղաչէին զտէր մի վասն միոյ մարդոյ կորուսանել զայնչափ բազմութիւն։ Լուաւ տէր աղաչանաց նոցա, և ասաց հեռացուցանել զժողովուրդն 'ի համախոհիցն Կորխայ։ Գնաց Մովսէս առ Դաթան և առ Աբիրոն, և պատմեաց նոցա զվճիռն Աստուծոյ 'ի վերայ նոցա։ Եւ ահա նոյն ժամայն բացաւ երկիր և եկուլ զամենեսին զնոսա և զանասունս և զվրանս նոցա, և զԴաթան և զԱբիրոն և զմարդիկն, որ էին ընդ Կորխայ։ Ի նմին ժամու ել հուր 'ի խորանէն վկայութեան և կիզեալ յանձին դարձոյց զերկերիւր և զյիսուն այրն, որք յանդգնեցան խունկ մատուցանել։ Իսկ 'ի վաղիւ անդր դարձեալ յարուցին խռովութիւնս կուսակիցք մեռելոցն, և էջ յերկնից հուր և սատակեաց 'ի նոցանէ առ չորեքտասան հազար և եօթն հարիւր։

119. Ապա հրամայեաց Աստուած Մովսէսի, զի իշխանք ամենայն ցեղից գրեսցեն զանուանս իւրեանց 'ի վերայ միոյ միոյ գաւազանի. իսկ 'ի ցեղէն Ղեւեայ դիցի գաւազանն Ահարոնի գրեալ 'ի վերայ զանուն նորա. և ապա դիցեն զամենայն գաւազանսն 'ի խորանին վկայութեան. և որ գաւազանն ծաղկեսցի՝ այն է քահանայապետ ընտրեալ յԱստուծոյ։ Եւ արարին այնպէս։ Ապա 'ի վաղիւ անդր մտեալ Մովսէսի և Ահարոնի 'ի խորան անդր, և ահա ծաղկեալ էր գաւազանն Ահարոնի և երևեցուցեալ ընկոյզ։ Զայն տեսեալ ամենեցուն լռեցին, և ոչ ոք այնուհետև իշխեաց բան մի նախանձու խօսել ընդդէմ Ահարոնի։ Իսկ զծաղկեալ գաւազանն եդ Մովսէս 'ի տապանակին ըստ հրամանի տեառն։

Ապա 'ի քառասներորդի և վերջնոյ ամի ճա-

նապարհորդութեան Իսրայէլացւոց յամենայնի առաջնումն եկին բանակեցան յանապատին Սինայ 'ի Կադէս։ Անդ վախճանեցաւ Մարիամ քոյր Մովսէսի իբր հարիւր և երեսուն ամաց. ըստ ոմանց պահեալ զկուսութիւն յօրինակ ամենօրհնեալ կուսին Մարիամու։ Որ և լցեալ գոլով մարգարէական հոգւով համարի լինել օրէնսդիր կանանց Եբրայեցւոց, որպէս Մովսէս արանց։

120. Անդ 'ի Կադէս ոչ գոյր ջուր ըմպելոյ. իսկ ժողովուրդն կռուեցաւ 'ի վերայ Մովսէսի և Ահարոնի. որք փախուցեալ յերեսաց ապըստամբաց անկան 'ի խորանն, և աղաչէին զտէր տալ նոցա ջուր։ Եւ տէր հրամայեաց Մովսէսի և Ահարոնի առնուլ զգաւազանն և առաջի ժողովրդեան բարբառել 'ի վերայ քարաժայռ վիմին եղելոյ անդ, զի եղցէ ջուր անտի։ Աստ Մովսէս առ սաստիկ խռովութեան ընդ յանդգնութիւն ժողովրդեան՝ երկուանօք իմն ասաց «Միթէ 'ի վիմէս յայսմանէ հանիցեմք ձեզ ջուր»[1]։ Եւ եհար զվէմն գաւազանաւ մի անգամ և ոչ ել ջուր. ապա հար երկրորդ անգամ, և բըղխեաց ջուր յորդառատ։ Վասն այսր երկուանաց՝ նոքա ոչ մուծին զժողովուրդն յերկիրն աւետեաց 'ի տիպ հնոյ օրինաց. որ ոչ արդարացոյց զմարդիկ (126)։

121. Կադէս գոլով առ սահմանօք Եդովմայեցւոց, առաքեաց Մովսէս հրեշտակս առ արքայն Եդովմայ տալ նոցա անցս։ Բայց նա ոչինչ իւիք զիջաւ 'ի խնդիր նոցա. այլ ծանր ամբոխիւ ել և կալաւ զեզերս երկրի իւրոյ։ Անտի ապա չուեցան և բանակեցան առ Հոր լե-

1 Թիւք. Ի. 10։

բամբ։ Ընդ եհան Մովսէս զԱհարոն և զԵղիա-զար որդի իւր յանդիման ամենայն ժողովրդեան 'ի լեառնն. և մերկացուցեալ յԱհարոնէ զքա-հանայապետական զգեստ՝ զգեցոյց Եղիազա-րու։ Ընդ ննջեաց Ահարոն 'ի մէջ բազկացն Մով-սէսի հարիւր քսան և երից ամաց 'ի քառա-ներորդ ամի ելանելոյ նոցա յԵգիպտոսէ, յա-ռաջնում աւուր ամսեանն հինգերորդի։

122. Իսկ Մովսէս էջ 'ի բանակ անդր ընդ նոր քահանայապետին. և յետ կատարելոյ ա-ւուրս երեսուն զսուգ Ահարոնի՝ չուեցին ան-տի և հասին 'ի սահմանս երկրին Քանանացւոց։ Լու եղև արքային Արադայ, և ել պատերազ-մաւ ընդ առաջ նոցա և փախեաց զնոսա. այլ նո-ցա դիմեալ առ Աստուած և օգնեալ 'ի նմանէ յարձակեցան 'ի վերայ Թագաւորին, և 'ի սուր և 'ի հուր մաշեցին զամենայն երկիր նորա։

Ապա ելեալ անտի և տարուբերեալ աստ և անդ տրտնջեցին դարձեալ զԱստուծոյ. մանա-ւանդ ծերք և պառաւունք։ Եւ առաքեաց Տէր օձս չարաթոյնս՝ որք սատակէին զնոսա, և մաք-րեաց զմնացուածս ապստամբաց 'ի բանակէ անտի։ Իսկ ապրեալքն առ ահին աղաղակեցին աղաչելով զՄովսէս կալ յաղօթս առ Տէր վասն նոցա։ Եւ նա ըստ պատուիրելոյ Տեառն արար օձ պղնձի և հաստատեալ 'ի վերայ ձողոյ կանգ-նեաց 'ի բարձրադիտակ վայրի. ուր ամենայն որ հարկանէր յօձից անտի՝ հայեցեալ յօձն պղն-ձի բժշկէր. որ էր նախատիպ օրինակ փրկչին բարձրացելոյ 'ի վերայ խաչին։

123. Յորժամ հասին Իսրայէլացիք 'ի ձորն Առնովնայ խնդրեցին անցս յարքայէն Սեհոնայ. այլ նորա ապառում գտեալ խաղաց ընդ առաջ նոցա. իսկ նոքա ըստ հրամանի Տեառն յարձա-կեալ 'ի վերայ նորա կոտորեցին զամենեսին. և

առեալ զամենայն կապուտ տիրեցին երկրին մինչև ցՅադեր, որ էր սահման Ամոնացւոց։ Զնոյն արարին և ընդ Ովգ արքայ Բասանու, ընդ այն սկայաձև, և տիրեցին վաթսուն քաղաքաց նորա և աւանացն։ Այսու երկու պատերազմաւ բարձին զերկու թագաւորութիւնս և կալան զերկիր նոցա, զոր յետոյ բաժանեցին 'ի մէջ իւրեանց։

Յետ այսորիկ բանակեցան առ Յորդանանու յանդիման Երիքովի. ուր Բաղակ արքայ Մովաբացւոց սաստնեալ յահէ նոցա կոչեաց զԲաղաամ Բէովրեան զհռչակաւոր մոգ, որ բնակէր 'ի Միջագետս. և բազում կաշառօք հաւանեցոյց զնա երթալ անիծանել զԻսրայէլացիս։ Այլ նա իբրև գնայր անյագ ցանկութեամբ, ահա հրեշտակ տեառն սուսեր 'ի ձեռին եկաց 'ի մէջ ճանապարհին առաջի նորա. զոր տեսեալ իշոյն յորոյ վերայ հեծեալն էր Բաղաամ՝ խուսեաց. և 'ի հարկանել նորա սաստիկ զէշն, երաց տէր զբերան անասնոյն, և սկսաւ յանդիմանել զանօրէնութիւն նորա. ապա ինքն ևս Բաղաամ ետես զհրեշտակն սուսեր 'ի ձեռին, և անկեալ յերկիր խոստովանեցաւ զմեղս իւր։ Յետոյ չոքաւ առ արքայն Բաղակ, և ել 'ի գլուխ լերին. այլ փոխանակ անիծանելոյ օրհնեաց զԻսրայէլ յայլևայլ տեղեաց։ Մարգարէացաւ վասն գալստեան փրկչին 'ի զաւակէ Յակոբայ, և վասն մեծամեծ գործոց նորա, որ հանդերձեալ էր առնուլ յաւար զորդիսն Սէթայ զհաւատացեալս իւր։

124. Այլ Բաղաամ առ 'ի չկորուսանելոյ զվարձանիրաւութեան խրատ ետ Բաղակայ կործանել զԻսրայէլ 'ի ձեռն լկտի դստերաց Մադիանացւոց արձակելով զնոսա 'ի վրանս նոցուն, և հրաւիրելով զնոսա գնալ 'ի տօնս և 'ի խրախու_

թիւնս նոցա ։ Որ և յաջողեցաւ իսկ և ել 'ի գլուխ անօրէն խորհուրդն ։ Իսրայէլացիք, որք կային տակաւին 'ի Սատտիմ, համարձակ պոռնկեցան ընդ դստերս 'ի վրանս իւրեանց. չոքան ապա 'ի զոհս նոցա, և երկիր պագին և նուիրեցան Բէեղփեգովրայ կռոց նոցին ։ Ընդ որ բարկացեալ տեառն պատուիրեաց Մովսէսի կախել զփայտէ զիշխանսն պոռնկելոյ. ապա հրաման ետ գլխաւորաց ցեղից, և կոտորեցին 'ի հպատակաց իւրեանց քսան և չորս հազար այր ։ Անդ Փենեէս որդի Եղիազարու տեսեալ զիշխանն Ամբրի 'ի վրանս ընդ պոռնկաց՝ 'ի նախանձ վառեալ եմուտ և սատակեաց զնա ընդ կնոջն. և առժամայն դադարեցաւ հարուածն ։ Եւ խոստացաւ Աստուած Փենեէսի թողուլ 'ի զաւակս նորա զպաշտօն քահանայապետութեան. որ տևեաց մինչև 'ի Քրիստոս ։

125. Ի քառասներորդ ամի Ճանապարհորդութեան նոցա յետ մեռանելոյ ամենեցուն հրաման ետ տէր Մովսէսի առնուլ զհամար ժողովրդեան 'ի քսանամենից և 'ի վեր. որոց թիւ եղև 601730. յորս բաժանել տալոց Աստուած զժառանգութիւն երկրին Քանանացւոց. որոյ լայնութիւն 'ի Յորդանանէ մինչև 'ի ծովն Միջերկրական էր հարիւր յիսուն մղոն. և երկայնութիւնն 'ի հեղեղատէն Եգիպտոսի մինչև ցԼիբանան երկերիւր և տասն ։

Յետ անօրինելոյ Մովսէսի զամենայն կարևորս՝ հրամանաւ տեառն կացոյց 'ի տեղի իւր իշխան ժողովրդեան զՅեսու որդի Նաւեայ. յորոյ վերայ դնելով զձեռս լցաւ Հոգւով սրբով ։ Անդ ապա Մովսէս ըստ հրամանին Աստուծոյ կամեցեալ վրէժ առնուլ 'ի Մադիանացւոց, եհան յերկոտասան ցեղից երկոտասան հազար պատերազմօղս. որոց զօրավար կացոյց զՓենեէս ։

Որոց վառեալ 'ի նախանձ աստուածային վրէժ-խնդրութեան 'ի սուր սուսերի մաշեցին զամե-նայն արու, և զհնգեսին թագաւորս կամ զիշ-խանս նոցին. անդ սատակեցաւ և Բաղաամ: Եւ առաւ յաւարի աւելին զամենայն ստացուածս և զքաղաքս նոցա: Առեալ Մովսէս զհամար ա-ւարին ետ պահել միայն 3200 կոյս աղջկունս. որք բաշխեցան 'ի տունս Եբրայեցւոց յաղախնու-թիւն և զամենայն անասունս նոյնպէս բաշխեաց նոցին. իսկ զմանկունս և զկանայս սատակեաց: Ապա ետ Մովսէս զերկու թագաւորութիւնս Ամովրհացւոց և Բասանու 'ի ժառանգութիւն ցեղին Ռուբենի և ցեղին Գադայ ընդ պայմանաւ գնալոյ ընդ նոսա 'ի պատերազմ ընդդէմ Քա-նանացւոց: Իսկ կիսոյ ցեղին Մանասէի ետ ըզ-գաւառն Գաղաադու:

126. Յամին քառասներորդի յառաջնում աւուր յամսեանն մետասաներորդի 'ի դաշտին Մովաբու յիշեցոյց ժողովրդեանն Մովսէս զա-մենայն անցս որք անցին ընդ նոսա, և զամենայն սքանչելիսն զոր ետեսին, զգուշացուցանելով զնոսա բազում խրատական բանիւք, և օրհնե-լով զօրինապահս, և անիծանելով զանօրէնս: Ապա միւսանգամ ժողովեալ զորդիսն Իսրայէլի ետ նոցա զվերջին հրաժարական ողջոյն հանդերձ օրհնութեամբ իւրաքանչիւր ցեղից: Եւ իբրև դադարեաց 'ի խօսելոյ, ել ըստ հրամանին Աս-տուծոյ 'ի լեառն Նաբաւ յերկրին Մովաբու ու-ղեկցութեամբ Միքայէլի հրեշտակապետին, որ միշտ երևեալ խօսէր ընդ նմա 'ի դիմաց առաւն: Ամենայն ժողովուրդն հայէր զկնի նորա յոր-դահոս արտասուօք: Անտի ետես Մովսէս զա-մենայն երկիրն աւետեաց, և վախճանեցաւ 'ի լերին անդ առանց կրելոյ զախտակրութիւն ինչ ամաց հարիւր և քսանից. որ միշտ քաջառողջ և

կորովի էր. ոչ անդամքն տկարացան և ոչ ծնօտքն խորշոմեցան ։

Զկնի մահուան գերահռչակ նախամարգարէին եղև հակառակութիւն մեծ 'ի մէջ Միքայէլի հրեշտակապետին և սատանայի, որ ունդէր փոխադրել զմարմին Մովսէսի յերկիրն աւետեաց. զի անդ ձգեսցէ զԷբրայեցիս 'ի կռապաշտութիւն ։ Իսկ Միքայէլ ընդդէմ կալով նմա սաստեաց զնա անուամբ Տեառն. և զսուրբ մարմինն թաղեաց 'ի ձորն Մովաբայ, անհետ արարեալ զգերեզման նորին ։ Իսկ որդիքն Իսրայէլի լացին և սուգ առին զաւուրս երեսուն[1] ։ Եւ թուական ամի աշխարհի էր յայնժամ 2553 ։

## ԳԼՈՒԽ Ե

Դատաւորութիւն Իսրայէլացւոց. Յեսու ։
Ա. Ա. 2553

127. Յետ մահուան Մովսէսի Յեսու որդի Նաւեայ 'ի ցեղէն Եփրեմի կարգեցաւ 'ի տեառնէ առաջնորդ ժողովրդեան Իսրայէլի։ Եւ ասէ ցնա Տէր նովին հայրախնամ ընտրութեամբ. Զօրացիր և քաջ լեր. մի զանգիտեսցես, զի ընդ քեզ եմ յամենայն տեղիս, ուր և երթիցես ։ Յեսու ոչ միայն էր զօրապետ մեծի բանակին, այլ և իշխան և դատաւոր. և համարի առաջին 'ի Դատաւորսն ։ Եւ քանզի տեղեակ էր լրտեսութեամբ ամենայն հանգամանաց երկրին Քանանացւոց, կամեցաւ զառաջինն առնուլ զԵրիքով և զԳայի

1 Տեսանելին Թուոց ԻԷ. Ժ. Թուղթ Յուդ. Ա. 9։ Նոյնը. Ծանօթ. առ Աբրահամու չէն ։

բերդաքաղաքս. նմին իրի առաքեաց նախ երկուս երիտասարդս լրտեսել զԵրիքով։ Որոց հասեալ անդր ընդ երեկս կալան օթևանս 'ի տան կնոջ միոյ Ռախաբ կոչեցելոյ։ Եւ 'ի վաղիւ անդր իբրև շրջեցան նոքա ընդ քաղաքն ողջոյն և դարձան ընդ երեկս 'ի տուն կնոջն այնորիկ, կասկած եղև զնոցանէ առ բնակիչս քաղաքին. մինչև լուեալ թագաւորին խնդրեաց զնոսա։ Հասին վաղվաղակի խնդրակքն առ դուրս տանն. և այն ինչ կամէին մտանել 'ի ներքս, կինն հնարագէտ ընդ լսելն զդղրդիւն ոտից նոցա՝ թաղոյց զլրտեսսն 'ի տանիս անդր. և յետ հեռացուցանելոյ անտի զխնդրակսն, տայր արձակեաց զնոսա խաղաղութեամբ ընդ այլ ճանապարհ։ Բայց նախ երդմնեցոյց զնոսա զի 'ի մտանել տեառն զքաղաքն և տալ 'ի ձեռս նոցին, ապրեցուսցեն զտուն իւր։ Երդուան նոքա. և զի ծանիցեն զօրք Իսրայէլացւոց զտունն, լար կարմիր ասացին նմա կախել զպատուհանէն՝ ընդ որ իջոյց զնոսա չուանաւ արտաքոյ պարսպին. որք և յետ երից աւուրց յաջողութեամբ հասին առ Յեսու և պատմեցին նմա զամենայն։

128. Յեսու ընդ առաւօտն ըստ բանի նոցա եդ 'ի չու զամենայն բանակն։ Իբրև եկին 'ի Յորդանան, հրաման ետ քարոզ կարդալ, թէ յորժամ տեսանիցեն զքահանայս բարձեալ զտապանակն և մտանել 'ի գետ անդր, ամենեքեան երթիցեն զհետ նոցա երկու հազար կանգնաւ բացագոյն։ Եւ յետ 'ի կարգի դնելոյ զամենայն բանակն՝ հրաման ետ քահանայից և մտին 'ի Յորդանան հանդերձ տապանակաւ և կացին 'ի ջուր անդր։ Եւ ահա ընդ մէջ պատառեալ գետն, ջուրքն վերնակողման մնացին անշարժ, և այլքն դարիւ և դարիւ եկեալ լցին զգետեզերս. իսկ ստորին ջուրքն հասեալ 'ի Մեռեալ ծովն՝ բա-

վանդակ յատակ գետոյն ցամաքեցաւ. և անց բազմամբոխ ժողովուրդն հանդերձ ամենայն աղխիւք իւրեանց յայն կոյս ։ Անդ երկոտասան իշխանք յիւրաքանչիւր ցեղէ՝ առեալ երկոտասան քարինս ՚ի մէջոյ Յորդանանու, որձան կանգնեցին ՚ի յիշատակ սքանչելեացն ։ Զնոյն արարին և ՚ի մէջ Յորդանանու, կանգնեալ երկոտասան քարինս առ յիշատակէ ։ Իբրև անցին և քահանայքն հանդերձ տապանակաւն, ջուրն բնական բերմամբ սահեալ գնաց ՚ի տեղի իւր ։

129. Եւ այսպէս Իսրայէլացիք զկնի քառասուն ամաց ելանելոյ իւրեանց յԵգիպտոսէ մտին յերկիրն խոստացեալ հարց նոցա ։ Անդ Թլփատեաց Յեսու զամենայն արու ծնեալ յանապատին՝ սրովք ՚ի գայլախազ վիմէ ։ Այսպ արարին զզատիկն ՚ի չորեքտասանաւուր ամսոյն յերեկորեայ. իսկ ՚ի վաղիւ անդր կերին ՚ի ցորենոյ երկրին, և այնուհետև դադարեաց մանանայն (88) ։

Յետ այսորիկ երևեցաւ նմա հրեշտակ տեառն ՚ի կերպարանս զօրավարի, և ուսոյց նմա զամենայն կարգս առնելոյ քաղաքին Երիքովի ։ Անկաւ Յեսու ՚ի վերայ երեսաց իւրոց և երկիր եպագ ։ Եւ ապա կարգեաց զամենայն բանակն զայս օրինակ ։ Նախ շուրջ պատեալ պատերազմականքն զքաղաքաւ յառաջընթաց լինէին. զկնի նոցա քահանայք, որք տանէին զտապանակն. ընդ որս և եօթն քահանայք հանդերձ եղջերեայ եօթնափողով. և զհետ նոցա ամբոխն լռին ամենեքին ։ Այսպէս արարին զաւուրս վեց ։ Իսկ յաւուր եօթներորդի ընդ ծագել առաւօտուն պատեցին զքաղաքաւն եօթն անգամ. և ընդ հարկանել ուժգին զփողսն հանդերձ մեծաձայն աղաղակաւ՝ անկան ՚ի վայր պարիսպք քաղաքին և լցին զխրամս ։ Իսկ Իսրայէլացիք

սուր 'ի ձեռին յարձակեալ 'ի քաղաքն անդր՝ զամենայն շունչ կենդանի արկին 'ի բերան սրոյ. ապրեցուցեալ միայն զտունն Ռախաբու. որ և յարեցաւ ապա 'ի ժողովուրդ Եբրայեցւոց յաստուածպաշտութիւն: Եւ հրձիգ արարին զամենայն քաղաքն. և ոչ ոք էառ ինչ, այլ զամենայն ոսկի և արծաթ և պղինձ և երկաթ նուիրեցին 'ի գանձ խորանին: Եւ անէծ Յեսու՝ որ ոք յանդգնեսցի շինել անդրէն զԵրիքով:

130. Իսկ Աքար Քարմեան 'ի ցեղէն Յուդայ՝ ընդդէմ աստուածային հրամանաց գողացաւ յաւարէ անտի. և 'ի պատճառս գողութեան նորա թոյլ ետ Տէր զի կոտորեսցին 'ի նոցանէ երեք հազար այր՝ յորժամ առաքեցան 'ի Յեսուայ առնուլ զքաղաքն Գայի, որ հեռի էր յԵրիքովէ երկոտասան մղոնաւ, և ունէր բնակիչս երկոտասան հազար: Իբրև յանդիմանեցաւ գողութիւն Աքարայ, խոստովան եղև առաջի Յեսուայ ասելով. Տեսի յաւարին վերարկու ծիրանի ծաղկենկար և մեծագին, և երկերիւր սիկղ արծաթոյ, և լեզու մի ոսկեձոյլ, և ցանկացեալ առի և պահեցի 'ի վրանի իմում [1]: Եւ բերել անդր Յեսու զամենայն, և հրամայեաց քարկոծ առնել զԱքար և զամենայն տուն նորա և զամենայն անասունս նորա 'ի ձորն Նաքովրայ. ապա հրով այրեցին զդիակունս նոցին, և կուտեցին 'ի վերայ նոցա կարկառ մեծ քարանց: Դիմեալ ապա 'ի վերայ քաղաքին Գայեայ՝ առին զնա և կոտորեցին զամենայն մարդ: Ընդ բովանդակ ժամանակն այսր կոտորածի Յեսու միշտ զձեռն իւր նիզակաւն վերամբարձ կալաւ, մինչև սատակեցան ամենայն բնակիչք քաղաքին: Եւ յետ յաւարի առնլոյ զա-

1 Յեսու. է. 20:

մենայն ինչ, այրեցին զքաղաքն ողջոյն։ Ընդ չինեաց անդան Յեսու և եհան ողջակեզ տէառն. նորոգելով և զուխտն՝ որ եդաւ առ Սինէական լերին (92)։

131. Զլուր մեծահռչակ յաղթութեանցն առեալ թագաւորացն որ յայնկոյս Յորդանանու՝ միաբանեցան ամենեքեան տալ պատերազմ ընդդէմ Իսրայելացւոց։ Գաբաւոնացիք միայն ճարտարմտութեամբ իմն առաքեցին հրեշտակս առ Յեսու իմանալ [illegible] ցեն ՚ի հեռաւորնակ ազգաց, և եկեալ են դնել ուխտ խաղաղութեան ընդ նոսա. որովհետև ամենայն մերձակայ ազգք դատապարտեալ էին ՚ի տեառնէ կորնչել։ Հաստատեցաւ ուխտն խաղաղութեան. այլ իբրև ՚ի յայտ եկն խաբէութիւն նոցա՝ զի ոչ ՚ի հեռաւորաց, այլ ՚ի մերձակայ ազգաց էին, յանդիմանեաց զնոսա Յեսու. այլ զուխտն անլուծանելի պահեաց, և ոչ ջնջեաց զազգն զայն. այլ միայն կարգեաց զնոսա ՚ի ստորին ծառայութիւն Իսրայելացւոց։ Հինգ թագաւորքն Ամովրհացւոց ՚ի վերայ Գաբաւոնի առ ՚ի վրէժխնդրութիւն բնակչաց նորա. զի մի և այլք ՚ի քաղաքաց ապստամբեալ անձնատուր լիցին առ Իսրայելացիս. իսկ Յեսու հասեալ անդր եհար սատակեաց զամենայն թշնամիս և զհինգ թագաւորս, որք թագուցեալ էին յայրին ՚ի Մակեդա։ Ապա առին և զքաղաքն զայն, և յետ կոտորելոյ զամենայն բնակիչս նորա՝ սպանին և զթագաւորն զայնուիկ, կախեալ զփայտէ։

132. Ընդ ՚ի Գաբաւոն յերկարել պատերազմին հրամայեաց Յեսու արեգականն և լուսնի կալ ՚ի վերայ հորիզոնին, մինչև վճարեսցի գործ պատերազմին։ Ի սքանչելեաց աստի ևս քան զևս զօրացեալ Իսրայելացւոց՝ պնդեցան [illegible] զհետ շրջակայ ազգաց և թագաւորաց, որք էին

ինքնակալ իշխանք. և 'ի միջոցի եօթն ամաց հարին կոտորեցին զամենայն թագաւորս և տիրեցին քաղաքաց նոցա յաջողելով տեառն և արթնութեամբ Յեսուայ: Այսու քաջագործութեամբ երեսուն և մի թագաւորս սատակեաց Յեսու. և 'ի քաղաքացն որոց տիրեաց, զամբոկուածն եթող և զայլս իսպառ քանդեաց: Իսկ զբնակիչս սպառասպուռ սատակեաց, զի լցեալ էր չափ անօրէնութեան նոցա, և հասեալ ժամանակ վրէժխնդրութեան Աստուծոյ արդարութեանն յանօրէն կռապաշտից. զի մի թողցէ 'ի նոցանէ ազգ. որ գտիցէ խոտորեցուցանել զԻսրա ժողովրդեանն Աստուծոյ 'ի կռապաշտութիւն:

133. Յեսու յետ ընչելոյ զամենայն մերձակայ ազգս և դադարելոյ 'ի պատերազմաց, 'ի հարիւրերորդ և եօթներորդ ամի կենաց իւրոց սկսաւ բաժանել վիճակաւ զերկիրն՝ որոց տիրեաց. ինն ցեղից և կիսոյ ցեղին Մանասէի. քանզի միւս երկու ցեղք որդէն առեալ էին զժառանգութիւնս իւրեանց 'ի Մովսիսէ (125): Ի նմին ժամանակի խորանն վկայութեան և մեծ բանակն Իսրայէլի էր 'ի Գաղգաղա. ապա եկեալ անտի փոխադրեցան 'ի Սելով ամուր քաղաք: Յետ այսորիկ ետ Յեսու Ղեւտացւոց քառասուն և երկու քաղաքս բնակութեան սփիւռ ընդ ամենայն ժառանգութիւն Իսրայէլացւոց. և որոշեաց վեց քաղաքս ապաստանի առ 'ի փախչել անդր՝ որ ոք սպանանիցէ յանգէտս զընկեր իւր ակամայ: Զի այն իսկ էին կամք տեառն, զի պաշտօնեայք իւր Ղեւտացիք գտցին ամենայն ուրեք 'ի ժողովրդեան իւրում իբրև օրէնսուսոյցք և դատաւորք նոցա:

Իսկ ցեղին Կահաթու, յորոց լինէր քահանայապետ վիճակեցաւ բնակել 'ի կալուածս ժա-

ւանդութեան ցեղին Յուդայ . ուր յետոյ շինեցաւ տաճարն տեառն :

134. Հուսկ յետոյ հրամանաւ տեառն տուաւ և Յեսուայ Թամնաթսարայ քաղաք գեղեցկագեղ 'ի լերան Եփրեմի . զոր ամրացուցեալ Յեսու բնակեցաւ 'ի նմա մինչեւ ցվախճան իւր: Սակայն յառաջ քան զայն ժողովեալ զամենայն իշխանս և գլխս ժողովրդեան առաջի խորանին վկայութեան անդ 'ի Սելովն յուշ արար նոցա զամենայն մեծագործ բարերարութիւնս և զքաջանշէնս Աստուծոյ , պատուիրելով նոցա հաստատուն կալ 'ի պահպանութեան ամենայն օրինաց և պատուիրանաց նորա : Զգուշացոյց զնոսա խստիւ չառնել խնամութիւն և ընտանութիւն ընդ շրջակայ մնացորդս հեթանոսաց. զի մի մոլորեսցին 'ի պաշտօն կռոց նոցին . և խոստացաւ նոցա զօգնութիւն և զնախախնամութիւնն Աստուծոյ՝ եթէ մնասցեն հաստատուն 'ի պաշտաման նորա անխտիր արդարութեամբ . սպառնացեալ և պատիժս պատուհասի , եթէ ապստամբեսցին 'ի նմանէ :

135. Յայնժամ ամենայն ժողովուրդն միաբան խոստացան և ուխտեցին երկիցս և երիցս հաստատուն կալ 'ի պահել զամենայն օրէնս Աստուծոյ , և պաշտել զնա սրբութեամբ : Զայս խոստումն առեալ Յեսուայ 'ի բերանոյ նոցա՝ ընթերցաւ ապա 'ի լուր ամենեցուն զգլխաւոր մասունս օրինաց . և որ ինչ միանգամ կատարեցաւ 'ի ժողովն անդ, զամենայնն գրեաց Յեսու 'ի գիրս Մովսէսի 'ի կատարած գրոցն Երկրորդ օրինաց. որպէս ասեն ոմանք: Եւ առեալ վէմ մի մեծ՝ գրեաց 'ի վերայ յիշատակարան այսր հանդիսաւոր ուխտադրութեան՝ կանգնելով զայն 'ի ներքոյ բեւեկնոյն առաջի խորանին վկայութեան 'ի տես ամենեցուն

որք երթային և գային 'ի խորան անդր։

136. Իբրև արձակեցաւ անտի ամենայն ժողովուրդն, Յեսու առանձնացաւ 'ի քաղաք իւր Թամնաթսաքար. անդ մեռաւ ամաց հարիւր և տասանց. ուր և թաղեցին զնա, եդեալ ընդ նմին առ յիշատակ զքարեղէն սուրս, որովք թլփատեաց 'ի Գաղգաղա զորդիսն Իսրայէլի։ Մահ Յեսուայ եղև յամի աշխարհի 2561. իսկ առաջնորդութիւն նորա տևեաց ամս քսան և եօթն ըստ Եւսեբեայ [1]։ Ոչ յետ բազմաց մեռաւ և Եղիազար քահանայապետ, և յաջորդեաց զնա Փենեէս որդի իւր։

Յեսու ըստ հասարակ կարծեաց անկին կեանս վարէր յօրինակ կուսութեան, որով և ընդ նմին շիջաւ անուն ազգին. այլ 'ի պատուի էր անուն նորա առաջի ամենայն ժողովրդեան։ Առաջնորդ էր խոհական և զօրաւոր, զարդարեալ ամենայն կարգօք աստուածպաշտութեան, հնազանդ և հլու ձայնի տեառն, միանգամայն և հայր հասարակաց, անձնատուր յամենայն աշխատութիւնս վասն օգտի ժողովրդեան։ Յամենայն ժամանակս առաջնորդութեան իւրոյ սիրելի եղև Աստուծոյ և ժողովրդեան, և ահընկէց ազգաց օտարաց, վկայեալ հանդոյն Մովսէսի հաւատարիմ ծառայ Աստուծոյ։

137. Զայնու ժամանակաւ մինչ տիրապետէր Յեսու նահապետ 'ի Հայս, բազումք 'ի Քանանացւոց յահէ Յեսուայ փախեան յայլ և այլ կողմանս, մանաւանդ յԱփրիկէ, որպէս վկայէ մեր Խորենացի։ Ոմանք 'ի նոցանէ խոյս ետուն 'ի Հայաստան. որոց առաջնորդ էր Քանանիդաս անուն այր երևելի, յորմէ սերեցաւ 'ի Հայս նախարարութիւնն Քանանիդեանց, որեն

1 Ժամ. · ամ ԱՃԻ · ՃԿԵ ։

փքնթունիք ։ Այսպէս պայազատեաց 'ի Հայս Հաւանակ ամս երեսուն. և յետ նորա Վաշտակ ամս քսան և երկու ։

Առ սոյնու ժամանակօք Դանաւոս եղբայր արքային Եգիպտոսի յիսուն դստերօք իւրովք կոտորեաց զյիսուն որդիս եղբօր իւրոյ. Լինկոս միայն զերծեալ թագաւորեաց յետ նորա ։ Իսկ յԵւրոպայ ծնաւ Մինովս, որ հաստատեաց նախ զթագաւորութիւն 'ի Կրետէ [1] ։

## ԳԼՈՒԽ Ձ

Դատաւորք. Գոթոնիէլ, Աւովդ, Սամեգար. Դեբովրա և Բարակ։
Ա. Ա. 2561 = 2700

138. Զկնի մահուան մեծին Յեսուայ ոչ ոք գտաւ 'ի տեղի նորա առաջնորդ ժողովրդեան. այլ միայն իշխանք և ցեղապետք առաջնորդէին տոհմից իւրեանց գործակցութեամբ գլխաւորաց ։ Եւ եթէ հարկ ինչ լինէր, միաբանեալ իշխանացն՝ կացուցանէին զծերակոյտ, և միակամ խորհրդով վճարէին զգործն ընդ առաջնորդութեամբ քահանայապետին ։ Այսպէս վարեցան ամս եօթն ։

Առ կենդանութեամբ ծերոց ականատեսից աստուածային զքանչելեացն եկաց Իսրայէլ յաստուածպաշտութեան յանդորրու ։ Այլ իբրև սկսան առ սակաւ սակաւ խառնել յօտարայն ազգան, մնացորդք Քանանացւոց զօրացան 'ի

1 Խորէն Ա. 19։ Եւսեբ. Ժամ. չի․ա ։ Վարդան.

վերայ նոցին ։ Յայնժամ եւ ցեղն Յուդայ ընդ-
դէմ նոցուն առաջնորդութեամբ Քաղեբայ . և
յաղթահարեալ առին զքաղաքն Բեզեկ, և կա-
լան զԹագաւորն Ադոնիբեզեկ, այն ինքն է տէր
Բեզեկայ . որոյ յառաջագոյն յաղթեալ եօթա-
նասուն իշխանաց ձերբակալ արարեալ էր զնոսա,
և հատեալ զմատունս ձեռաց և ոտից նոցին՝
ունէր զնոսա իբրև զշունս 'ի ներքոյ սեղանոյ իւ-
րոյ ։ Այլ իբրև դարձաւ անիւ բաղդին, ինքն ևս
անկաւ 'ի ձեռս Քաղեբայ և խոստովան եղև ա-
ռաջի նորա զամենայն դատն անդթութիւնս
իւր , և զարդար դատաստանն Աստուծոյ 'ի վե-
րայ անձին ։ Եւ մեռաւ Ադոնիբեզեկ 'ի մէջ Իս-
րայէլացւոց , և մեռաւ յառնուլ նոցա զԵրուսա-
ղէմ. որոյ վերին մասն կոչէր յայնժամ Յեբուս,և
ստորինն Սաղէմ ։

139. Յետ տիրելոյ Երուսաղէմի առին զՔեբ-
րոն . անտի յարձակեցան 'ի վերայ բերդաքա-
ղաքին Դաբիր ։ Յայնժամ Քաղեբ խոստացաւ՝
թէ որ ոք 'ի զօրապետաց անտի խրամատեսցէ
զպարիսպ նորա և առցէ զքաղաքն՝ տացէ նմա
զԱքսա դուստր իւր կնութեան ։ Զայն լուեալ
Գոթոնիէլ եղբօրորդի Քաղեբայ՝ յարձակեցաւ
վառեալ քաջութեամբ, եբաց ճանապարհ և ե-
մուտ 'ի քաղաք անդր . զոր և յաւարի առին ։
Եւ առ նա զԱքսա 'ի կնութիւն , և օր ըստ օրէ
զօրացաւ արութեամբ ։

Իբրև մեռան ծերք ժողովրդեան, քանզի չկայր
ոք վերագոյն հրամանատար , այր իւրաքանչիւր
առնէր զհաճոյս իւր . շատք ևս յարելով 'ի շըր-
ջակայ ազգս կռապաշտից՝ կործանեցան 'ի սնո-
տի պաշտամունս նոցա ։

140. Կին մի 'ի ցեղէն Եփրեմի ետ ձուլել
կուռս արծաթիս և պարգևեաց զայն որդւոյ իւ-
րում Միքայ . և նա շինեաց կռատուն մի փոք-

ըրկէ եդ 'ի նմին զդրօշեալն զայն. յաւել առնել և զդեստ քահանայական, և զգեցուցեալ որդւոյ իւրում, արար զնա քուրմ: Ապա դառեալ պատանի մի ղեւտացի՝ արար զնա քահանայ դրօշելոյն: Իսկ որդիքն Դանայ իբրև գնային առնուլ զԼայիսա, անցեալ ընդ այն՝ տեղեկացան 'ի ղեւտացւոյ անտի զամենայն հանգամանս տան Միքայ: Եւ յարձակեալ մտին 'ի տուն անդր և յափշտակեցին զկուռս և զամենայն ինչ որ 'ի տանն էր, և առեալ զղեւտացին չոքան 'ի Լայիսա. այրեցին զնա և շինեցին զնոր քաղաք, և անուանեցին Դան: Անդ կանգնեցին զդրօշեալն Միքայ 'ի պաշտօն, և զղեւտացին քուրմ նմին, և պաշտեցին զդրօշեալն յորդւոց որդի ամս երեք հարիւր և քառասուն:

141. Ընդ այն ժամանակս դէպք ինչ աղետալի պատահեաց. զի որդիքն Բենիամինի անօրինեալ բռնաբարեցին զկին ուրումն ղեւտացւոյ. և մեռաւ կինն 'ի պատճառս անօրէն գործոց նոցա. իսկ ղեւտացին յօշեալ զմարմին կնոջ իւրոյ յերկոտասան մասունս՝ առաքեաց առ երկոտասան ցեղս Իսրայէլի, վառեալ զնոսա 'ի վրէժխնդրութիւն: Եւ միաբանեալ նոքա ելին 'ի վերայ եղեռնագործ որդւոցն Բենիամինի. հարին սատակեցին 'ի նոցանէ արս քսան և հինգ հազար և հարիւր, և զքաղաք նոցա Գաբաա հրձիգ արարին, և այլ սփռեալ ընդ ողջոյն երկիր նոցա՝ զամենայն քաղաքս և զգեօղս հրկէզ արարին, և զամենայն բնակիչս կոտորեցին. վեց հարիւր արք միայն ապրեցան 'ի նոցանէ և փախստեայ անկան 'ի վէմն Ռեմմոնայ. յորոց ապա սերեցաւ ցեղն Բենիամինի:

142. Ի նոյն անիշխանութեան ժամանակի իբրև ամս ինչ անդորրացան Իսրայէլացիք 'ի պատերազմաց, յարեցան յայլազգիս և պաշտեցին

զկուռս նոցա զԲահաղ և զանտառսն : Նմին իրի բարկացաւ Տէր և մատնեաց զնոսա 'ի ձեռս Քուսարսաթեմայ արքային Ասորւոց, որ կացոյց զնոսա 'ի հարկի ծառայութեան, և չարաչար կեղեքէր զնոսա ընդ ամս ութ: Յայնժամ ծանեան Իսրայէլացիք զամբարշտութիւնս իւրեանց և դարձան սրտի մտօք առ Տէր, և Տէր լուաւ աղաղակի նոցա, և յարոյց զԳոդոնիէլ զեղբօրորդի Քաղեբայ տալով նմա ոգի իմաստութեան և զօրութեան՝ դատել զժողովուրդն արդարութեամբ և փրկել զնոսա 'ի թշնամեաց: Եւ ել Գոդոնիէլ 'ի պատերազմ ընդդէմ Ասորւոց և յաղթեաց. և ամենայն թշնամիք յահէ նորա սասանեալ՝ ընդ ամս քառասուն ոչ ոք 'ի նոցանէ իշխեաց գլուխ ամբառնալ ընդդէմ նոցա մինչև ցվախճան Գոդոնիէլի :

143. Յետ մահուան Գոդոնիէլի դարձեալ կռապաշտեցան որդիքն Իսրայէլի. վասն որոյ և Տէր յարոյց 'ի վերայ նոցա զԵգղոմ արքայ Մովաբու. որ տիրապետեալ 'ի վերայ Իսրայէլի՝ հարստահարէր զերկիր նոցա ամս ութևտասն : Յայնժամ զգաստացեալ աղաղակեաց ժողովուրդն առ Տէր. և լուաւ Տէր և ետ նոցա առաջնորդ և դատաւոր զԱւոդ 'ի ցեղէն Բենիամինի, որ էր այր քաջ և յերկոցունց ձեռաց աջողակ : Սա արար սուր երկսայրի՝ թզաւ յերկայնութիւն, և կապեալ յաջոյ ազդեր 'ի ներքոյ հանդերձից՝ չոգաւ ընդ այլոց տանել հարկս առ թագաւորն Եգղոմ, և խնդրեաց խօսել առանձինն ընդ նմա. և իբրև եմուտ 'ի վերնատունն և մատեաւ առ նա, հանեալ ձախոյ ձեռամբ զսուրն մխեաց 'ի կուշտ թագաւորին, և ել ընդ վերնատունն և փախեաւ յերկիրն Իսրայէլի : Ընդ փող պատերազմի հարեալ գումարեաց զզօրս, և անկաւ 'ի վերայ թշնա-

մեաց զարհուրելոց 'ի մահուանէ արքային իւրեանց : Եւ եհար կոտորեաց զամենեսեան , և փրկեաց զԻսրայէլ՝ խաղաղացուցեալ զնա 'ի Թշնամեաց ամս ութսուն՝ մինչև մեռաւ :

144. Յետ նորա յարեաւ Սամեգար այր հողագործ և ուժեղ. որ մանգաղ արօրոյ եհար և սատակեաց 'ի Փղշտացւոց արս վեց հարիւր , որք աւարէին զսահմանս Իսրայէլացւոց • զորս դատեաց և ազատեաց 'ի հարստահարութեանց արտաքին Թշնամեաց. որոց մատնեալ էր զնոսա տէր վասն դառնալոյ նոցա անդրէն 'ի պաշտօն Բահաղիմայց :

145. Ի նմին ժամանակի Յաբին արքայ Քանանացւոց զօրացեալ՝ արար ինն հարիւր կառս երկաթեղէնս և զօրս բազումս , և տուեալ 'ի ձեռս Սիսարայ պատերազմող զօրապետի՝ արձակեաց յերկիրն Իսրայէլի • և տառապեցաւ ժողովուրդն ամս քսան յանդադար հրոսակութենէ զօրացն Յաբինայ : Յայնժամ յարեաւ Դեբովրա կին բազմահանճար , և հոգի մարգարէութեան 'ի նմա • և եղև նա դատաւոր համօրէն Իսրայէլացւոց յետ Սամեգարայ : Եդեալ զաթոռ իւր ընդ արմաւենեաւ և դատէր զժողովուրդն արդարութեամբ • Նմին իսկ և արդեամբք կոչեցաւ նա Մայր Իսրայէլի, դարձուցանելով զնոսա յապաշխարութիւն և 'ի պահպանութիւն աստուածային օրինաց :

146. Եւ յայտնեաց տէր զկամս իւր Դեբովրայ փրկելոյ զժողովուրդն 'ի դառն ծառայութենէ անտի Յաբինայ : Եւ Դեբովրա կոչեալ առ ինքն զԲարակ 'ի ցեղէն Նեփթաղիմայ՝ պատուիրեաց նմա ժողովել զօրս տասն հազար, և իջանել 'ի հեղեղատն Կիսոնի 'ի վերայ Սիսարայ • ել և ինքն և գնաց ընդ նմա , և ամրացան ամենեքեան նոքա 'ի լերան Թաբովր :

Զայն լուեալ Յաբինայ՝ հրամայեաց Սիսարայի իւրում զօրապետի հասանել 'ի վերայ նոցա : Իբրև եւ Սիսարա և պաշարեաց զնոսա, էջ և Բարակ հանդերձ զօրօք իւրովք 'ի լեռնէ անտի : Զօրքն Սիսարայ իբրև տեսին զԻսրայելացիսն չխոթեցան տագնապեցան յիրեարս . զի Աստուած ելից արհաւրօք զամենայն բանակն : փութացան Իսրայելացիքն և անկան 'ի վերայ նոցա և սկսան անխնայ կոտորել զնոսա . մինչև ստիպեցաւ Սիսարա իջանել 'ի կառաց իւրոց և դիմել 'ի վրանս Յայելի կնոջ Քաբերայ, և ծածկեցաւ ընդ փեղկիւք խորանին . ուրում արբոյց Յայել զկաթն և ննջեցոյց խոր 'ի քուն . և առեալ զբրածայր ցից խորանին՝ եհար զայն ընդ ծամելիս նորա, և վարեաց զգլուխն ընդ գետին, և սատակեաց զնա : Ընդ եհաս և Բարակ խնդրել զնա . և իբրև ետես, ուրախ եղև գոհանալով զտեառնէ : Իսկ զօրք նորա հարին կոտորեցին զամենայն Քանանացիս, մինչ ոչ ևս մնաց 'ի նոցանէ ապրեալ : Ի վճարել յաղթութեան երգեաց Դեբովրա զերգս օրհնութեան 'ի գոհութիւն Աստուծոյ : Եւ խաղաղացաւ երկիրն Իսրայելի ամս քառասուն մինչև մեռան Դեբովրա և Բարակ :

147. Զկնի այնորիկ իբրև դարձան անդրէն Իսրայելացիք ըստ սովորութեան իւրեանց 'ի կռապաշտութիւն, դարձեալ թողան 'ի խնամոցն Աստուծոյ և մատնեցան 'ի ձեռս Մադիանացւոց, որք ամ ըստ ամէ գունդ կազմեալ արշաւէին յերկիրն Իսրայելի հանդերձ անասնովք իւրեանց . և անդ անցուցեալ զդարուն և զամառն սպառէին զամենայն կերակուր նոցին և ապականէին զերկիրն : Այնչափ հարստահարեցին զնոսա ամս եօթն, մինչև բազմաց թողուլ զերկիր իւրեանց և աստանդական թափա-

ռել զառն տառապանօք ։ Իբրև յանձնարս մահեալ չգտին զոք ուստեք ապաւէն, բաղձեցին առ տէր · և տէր լուաւ ձայնի աղաղակի նոցա, և առաքեաց առ նոսա մարգարէ յանդիմանել զամբարշտութիւն նոցին և յուշ առնել զանչափ բարերարութիւնս և զհնամս իւր, յորմէ առաւել ևս զգաստացեալ նոցա՝ սպասէին այցելութեան նորա ։

148 · Յայսմ ժամանակի տիրէր 'ի Հայս Հայկակ յետ Վաշտակայ ։ Սա քանզի այր խոհեմ էր և պատերազմող, նուաճեաց քաջութեամբ զԱմինաէս արքայ Ասորեստանի · ապա անկաւ 'ի մարտի։ Նա յաջորդեաց 'ի տեղի նորա Ամբակ ամս չորեքտասան · ապա Առնակ ամս եօթնուտասն · և ապա Շաւարշ ամս վեց, որ շինեաց զքաղաքն Շաւարշան ։ Յետ նորա նստաւ Նորայր ամս քսան և չորս · յետոյ Վստամ ամս երեքտասան · և յետ նորա Կոր ամս չորս · ապա Գաւակ ամս ութուտասն, և ապա Հրանտ ամս քսան և հինգ ։

Յաւուրս սորա թագաւորէր 'ի Նեղուցն Կոստանդնուպօլսոյ Բուզաս որդի Նեպտունի, որոյ շինեալ անդ քաղաք, կոչեաց զանուն նորա Բիւզանդիոն · զոր յետոյ լաւ ևս շքեղացոյց Պաւսանիաս արքայ Սպարտացւոց ։

Իսկ յԻտալիա թագաւորէր յայնժամ Սատուրնոս, և Թեսէոս յԱթէնս · ուր Յոնն կացեալ առաջնորդ՝ յիւր անուն զԱթենացիս Յոնս անուանէր։ Իսկ Հռադամանթոս և Սարպեդոն տիրէին Ղեւկիացւոց · և Թեբայեցւոց Կադմոս, որոյ դուստրն ծնաւ զԴիոնիսոս, որ ապա 'ի Հնդիկս զօրաժողով եղև, և զՆիսա քաղաք շինեաց առ Ինդոս գետով [1]։

[1] Եւսեբ. ժամ. չէ։ Պատմ. Հայ. Գիրք Ա. Գլ. Է։

## ԳԼՈՒԽ Է

### ԳԵԴԵՈՆ, ԱԲԻՄԵԼԷՔ, ԹՈՎՂԱ, ՅԱՅԻՐ, ՅԵՓԹԱՅԷ, ԵՍԵԲՈՆ, ԵՂՈՆ, և ԱԲԴՈՆ:
### Ա. Ա. 2750=2800

*149. Զայցելութիւնն Աստուծոյ երագելին տառապանք Իսրայելացւոց և զղջումն սրտի նոցին. զի առաքեաց առ նոսա զհրեշտակ իւր, որ եկն եկաց ընդ կաղնեաւն, ուրանօր ծեծէր ցորեան Գեդէոն որդի Յովասու իշխանին: Եւ ողջոյն տուեալ նմա ասաց. Տէր ընդ քեզ հզօր զօրութեամբ: Ասէ Գեդէոն. Զիարդ իցէ ընդ մեզ տէր. որովհետև յանձնորին վշտա տառապիմք ազգովին. և ուր են սքանչելիք նորա, զոր պատմեցին հարքն մեր. ոչ եւս է ընդ մեզ տէր, այլ թողեալ եմք 'ի խնամոց նորա:*

*Ընդ այս բարեպաշտ պատասխանի հաճեցաւ հրեշտակն, և յայտնեաց նմա՝ թէ նա ինքն փրկելոց է աստուածային զօրութեամբ զժողովուրդն 'ի ձեռաց Մադիանացւոց: Ո՞չ ապաքէն ես եմ, ասէ, որ առաքեմ զքեզ: Գեդէոն զի ոչ ծանեաւ զնա թէ ով իցէ՝ որ խօսի ընդ իւր, խնդրեաց 'ի նմանէ տալ ինքեան նշան, և յայտնել զանձն իւր. և աղաչեաց զնա չմեկնել անտի՝ մինչև պատրաստիցէ նմա ընծան: Խոստացաւ հրեշտակն մնալ անդ, և նա փութացեալ հասոյց ուլ մի փափուկ, և բաղարջ հանդերձ արգանակաւ և եդ առաջի նորա: Իսկ հրեշտակն ասաց նմա դնել զայնոսիկ 'ի վերայ վիմին. և իբրև մերձեցոյց զծայր գաւազանին իւրոյ 'ի միս անդր, ահա ել հուր 'ի վիմէ անտի և ծախեաց զամենայն. և հրեշտակն եղև աներևոյթ:*

150. Զահի հարեալ Գեդէոն աղաղակեաց. Վայ ինձ Տէր Տէր, զի տեսի զհրեշտակ Աստուծոյ դէմ յանդիման, և ահա մեռանիցիմ: Հրեշտակն յաներևոյթս ձայնեաց առ նա. Մի երկնչիր, ոչ մեռանիցիս: Այսու սքանչելեօք կարգեցաւ Գեդէոն իշխան առ յԱստուծոյ, փրկել զժողովուրդն. որ և 'ի նմին գիշերի հրամանաւ Տեառն կործանեաց զսեղանն Բահաղու հանդերձ անտառաւն՝ զոր շինեալ էր հայր իւր Յովաս: Եւ 'ի վերայ վիմին այնորիկ յորում եդեալ էր զմիսն և զբաղարջն առաջի հրեշտակին, շինեաց սեղան Տեառն, և հանեալ զերկու եզինս արար ողջակէզ: Յայնժամ հոգի Տեառն զօրացոյց զԳեդէոն առաջնորդական հանճարով՝ ժողովել զօրս և ելանել 'ի մարտ պատերազմի ընդդէմ Մադիանացւոց, որոց միացեալ ընդ Ամաղեկացիս՝ էին բանակեալ 'ի հովիտն Յեզրայելի:

Իբրև ժողովեցան պատերազմականքն, խնդրեաց Գեդէոն 'ի Տեառնէ նոր իմն նշանս հաստատել զխոստումն իւր, վասն որոյ յերեկոյին եդ գզաթ ասուի 'ի կալն և յառաւօտուն եգիտ զայն ջրալից. և զգետինն ցամաք, որպէս խնդրեալ էր յԱստուծոյ: Դարձեալ եդ զգզաթն զայն 'ի բացի՝ և եգիտ յառաւօտուն ցամաք, և զգետինն անձրևալից, ըստ որում խնդրեալ էր 'ի Տեառնէ 'ի նշան յաջողութեան:

151. Յայնժամ հանդէս արար Գեդէոն զօրաց իւրոց, և գտան երեսուն և երկու հազար. 'ի սոցանէ զքսան և երկու հազարսն վատասիրտս յետս դարձոյց, և 'ի մնացելոց անտի դարձեալ որոշեաց զնոսա՝ որ ափովն զջուրն արբին. և զերեք հարիւր արսն եւեթ՝ որ զջուրն իբրև շուն լափեցին, առ ընդ իւր: Որոց առեալ

ռուր և փող եղջերաց, և ջահ փակեալ 'ի սափոր խեցեղէն՝ պատրաստեցան 'ի պատերազմ: Եմուտ Գեդէոն գիշերայն հարիւր արամբք 'ի մի կողմն բանակի Թշնամեաց, որք նոր 'ի քուն ննջէին: Եւ գեդէոնեանքն սկսան հարկանել զփողսն, և բախել ընդ միմեանս զսափորսն և խորտակել, և յերևան ածել զջահս՝ բարձրաձայն աղաղակէին. Սուր տեառն և Գեդէոնի: Ի շառաչելոյ խորտակմանն անօթոց, և 'ի շարժմանէ լուսոյ ջահից, և յաղաղակէ բազմութեանն լերինք առ հասարակ լի երևէին բանակօք:

Զարթեան Մադիանացիք և տագնապեցան արհաւրօք, զի համարէին մատնեալ 'ի ձեռս ահարկու թշնամեաց. և չփութեալ այր զընկեր իւր կոտորէր՝ հեղեղս արեան գործելով 'ի բանակի անդ մինչև ցառաւօտ: Իսկ յառաւօտուն պահու իբրև սկսան փախչել, Գեդէոն հրեշտակս արձակեաց յամենայն սահմանս Եփրեմի զի ելցեն ընդ առաջ փախստէից. և ինքն պընդեցաւ զհետ նոցա. զորս 'ի մէջ առեալ յամենայն կողմանց կոտորեցին և սպառեցին 'ի բերան սրոյ. և ընդ ամենայն էին հարիւր յիսուն և հինգ հազար արանց սուսերամերկաց:

152. Գեդէոն յետ կատարելոյ զգործ պատերազմին՝ բաշխեաց զօրականին զամենայն աւարն, և ինքն էառ միայն զոսկի մանեակս պարանոցաց ուղտուց երկուց իշխանաց նոցին: Այս առատաբարութիւն նորա այնպէս ձգեաց առ ինքն զսէր Ժողովրդեան, մինչև կամեցան կացուցանել զնա թագաւոր 'ի վերայ ամենայն Իսրայէլի. Իշխեա մեզ, ասեն, դու և որդի քո և որդի որդւոյ քո: Այլ Գեդէոնի հրաժարեալ՝ ասէ. Ոչ իշխեցից ես ձեզ, և ոչ իշխեսցէ ձեզ որդի իմ. այլ տէր իշխեսցէ ձեզ:

Այսու առաւել եւ պայծառացոյց զվեհանձնութիւն եւ զգաստաւորական իշխանութիւն իւր․ զոր եւ վարեաց ամենայն ուղղութեամբ ամս քառասուն մինչեւ մեռաւ ։ Յաւուրս սորա կային Իսրայէլացիք յերջանիկ խաղաղութեան եւ յաստուածպաշտութեան․ այլ զկնի նորա դարձան անդրէն 'ի պաշտօն Բահաղիմայց․ որով եւ կորուսին զխաղաղութիւն իւրեանց [1]։

153․ Քանզի Գեդէոն ունէր եօթանասուն որդիս յայլ եւ այլ կանանց, եւ որդի մի այլ ծնեալ 'ի սիկիմացի հարճէ իւրմէ՝ Աբիմելէք անուն․ որ ըստ իւրում ամբարտաւանութեան իբրեւ մեռաւ հայր իւր, գնաց յինքն յանկոյց զՍիկիմացիս․ զի առեալ զգանձ տանն Բահաղու՝ վարձեաց նոքօք արս սրիկայս եւ չարագործս, եւ յեղակարծումն եմուտ յԵփրա քաղաք, եւ կալեալ զեղբարս իւր մի առ մի խողխողեաց 'ի վերայ վիմին այնորիկ, յորոյ վերայ եդեալ էր Գեդէոն զմիսն եւ զբաղարջն (149)․ միայն Յովաթամ կրսեր եղբայր իւր զերծաւ թագստեամբ 'ի գաղտնական անգթութենէ նորա ։

Իսկ 'ի դառնալ Աբիմելէքայ 'ի Սիկիմ՝ թագաւորեցուցին զնա արք քաղաքին ասելով․ Կեցցէ Աբիմելէք ։ Սակայն փութով զզջացան ընդ անմտութիւն իւրեանց․ զի անդէն սկսաւ հարստահարել զնոսա․ մինչեւ յայտնի ապստամբեցան 'ի նմանէ, եւ լցան խռովութեամբ ։ Այլ նա փութով եհաս 'ի վերայ նոցա, եհար եւ սատակեաց զամենայն Սիկիմացիս, եւ զքաղաքն հրձիգ արար ։ Ապա պաշարեաց զաշտարակն Թեբէս քաղաքին, ուր ժողովեալ պատերազմէին քաջութեամբ արք եւ կանայք ։ Աբիմելէք գնաց անձամբ եւ մերձեցաւ 'ի դուրս աշտարա-

1 Դատ․ Է ։

կին առ 'ի խորտակել զդուռս իւր. և ահա կին մի 'ի վերուստ անտի ընկէց բեկոր երկանի կըշռակի 'ի վերայ գլխոյն Աբիմելէքայ, և անդէն խորտակեաց զգագաթն նորա: Յայնժամ աղաղակեաց Աբիմելէք առ կապարճակիր իւր սպանանել զնա սրով. զի մի՛ ասիցեն՝ թէ կին սպան զԱբիմելէք 'ի նախատինս իւր: Եւ այսպէս բարձաւ 'ի միջոյ ամբարիշտ բռնաւորն յետ տիրելոյ ամս երիս. և ամենայն ազգ Իսրայէլի գնացին 'ի տեղիս իւրեանց:

154. Յետ բառնալոյ Աբիմելէքայ բարձաւ ընդ նմին անուն թագաւորի յԻսրայէլէ. և միաբան հաւանութեամբ ժողովրդեան ընտրեցաւ դատաւոր Թովլա որդի Փուայ եղբօր Գեդէոնի 'ի մօրէ. զի սա էր 'ի ցեղէն Մանասէի. իսկ Թովլա 'ի ցեղէն Իսաքարայ: Եւ դատեաց Թովլա զԻսրայէլ ամս քսան և երիս, և մեռաւ խաղաղութեամբ: Յետ նորա ընտրեցաւ դատաւոր Իսրայէլի Յայիր գաղաադացի, և ունէր որդիս երեսուն և երկու, որք էին իշխանք երեսուն և երկու քաղաքաց յերկրին Գաղաադու. և իւրաքանչիւր նոցա հեծեալ յաւանակս իւրեանց պանծային իշխանական փառօք. սակայն զուրկ էին յարիական գործոց. Քանզի իբրև ամբարշտեցաւ ժողովուրդն անօրէն կռապաշտութեամբ, և մատնեցան 'ի ձեռս Ամոնացւոց, ոչ Յայիր և ոչ անարի որդիք իւր համարձակեցան ելանել ընդդէմ նոցա. Նմին իրի աւերէին թշնամիք զերկիրն Իսրայէլի անդադար ամս ութևտասն մինչև մեռաւ Յայիր, որ դատեաց զժողովուրդն ամս քսան և երկու:

155. Իբրև եհաս Իսրայէլ 'ի յետին թշուառութիւն, դարձան 'ի մեղաց, և աղաղակեցին առ տէր, և միաբանեալ բանակեցան ընդդէմ

թշնամեաց։ Այլ ոչ ոք իշխէր ելանել 'ի գլուխ զօրուն, և սկիզբն առնել մարտի, թէպէտ և խոստանայր ժողովուրդն կարգել իշխան ազգին՝ որ ոք յանձն առնուցու զգործն զայն։

Հռչակեալ էր յայնժամ անուն Յեփթայեայ քաջ պատերազմողի. որ էր անհարազատ որդի մերժեալ 'ի տանէ հօրն՝ զհետ լինէր բախտի իմիք հանդիպել։ Եւ ժողովեալ արս անգործս աւար խումբ մի, և չոգաւ 'ի սահմանագլուխս Ամմոնացւոց և ասպատակէր. որով մեծանուն հանդիսացաւ յամենայն տեղիս։ Զայն լուեալ իշխանաց Գաղաադու, որք 'ի խնդիր էին զօրագլխի ումեմն՝ տալ պատերազմ ընդդէմ թշնամեաց, չոգան առ նա աղաչել՝ զի լիցի նոցա զօրագլուխ։ Իբրև չկամէր իմն Յեփթայէ յանձն առնուլ, խոստացան հանդերձ երդմամբ հաստատել զնա դատաւոր։ Ապա գնաց Յեփթայէ 'ի Մասեփա 'ի ժողով նոցա, և հաւանութեամբ ամենեցուն կացուցաւ իշխան և առաջնորդ Իսրայէլի։ Եւ ապա զօրաժողով լեալ և հար զմեծ բանակ իւր յանդիման Ամմոնացւոց, և յարձակեցաւ բուռն զօրութեամբ 'ի վերայ թշնամեաց, հար և խորտակեաց անդէն զբանակ նոցա, և զհետ պնդեալ փախստէից՝ կոտորեաց զնոսա չարաչար հարուածովք, և էառ քսան քաղաքս։

156. Յետ մեծի յաղթութեանս այն ինչ դառնայր Յեփթայէ յաղթական փառօք, ահա ելանէր ընդ առաջ նորա միամօր դուստրն իւր սիրելի բազմութեամբ օրիորդաց թմբկօք և պարուք։ Իբրև ետես զնա հայրն նորա, բեկաւ խորտակեցաւ զօրութիւն նորա. քանզի ուխտեալ էր Աստուծոյ, զի եթէ տացէ նմա դառնալ յաղթանակաւ, մատուսցէ տեառն ողջակէզ զայն՝ որ նախ ընդ առաջ ելանիցէ ինքեան 'ի

տանէ իւրմէ ։ Եւ նորին աղագաւ պատառեալ զհանդերձն՝ գոչէաց ցաւագին. Վայ ինձ, դուստր իմ, նկուն արարեր զիս։ Իսկ դուստրն որ անխռով մտօք մատոյց զանձն պատարագ Աստուծոյ. բայց նախ ամիսս երկուս շրջեալ ընդ լերինս ելաց զկուսութիւն իւր. ապա դարձաւ առ հայր իւր, որ արար նովաւ զուխտն՝ բառնալով զքաղաքական կեանս դստերն, պարտաւորեալ զնա մշտնջենական կուսութեամբ ծառայել Աստուծոյ առ երի խորանին վկայութեան՝ ըստ կարծեաց ոմանց ։ Այնուհետեւ ամ ըստ ամէ ժողովեալ լային օրիորդք զաւուրս չորս զդստերն Յեփթայեայ ։ Եւ դատեաց Յեփթայէ զԻսրայէլ ամենայն արդարութեամբ ամս վեց եւ վախճանեաց զկեանս իւր ։

157. Յետ նորա դատեաց զԻսրայէլ Եսեբոն 'ի ցեղէն Յուդայ ամս եօթն, եւ ունէր երեսուն ուստերս եւ երեսուն դստերս ։ Զկնի նորա յաջորդէ Եղոն 'ի ցեղէն Զաբուղոնի, եւ դատեաց ամս տասն ։ Ապա Աբդոն 'ի ցեղէն Եփրեմի ամս ութ. որ ունէր քառասուն որդիս, եւ թոռունս երեսուն. որք հեծեալ յաւանակս իւրեանց երեւէին իբրեւ գունդ զօրաց ։

158. Զայնու ժամանակաւ տիրէր 'ի Հայս յետ Հրանտայ Ընձակ ամս հնգետասան. ապա Գղակ ամս երեսուն. ապա Հօրոյ ամս երկու. ապա Զարմայր ամս երկոտասան ։ Յաւուրս սորա եղեւ մեծահռչակ պատերազմն Տրովադայ եւ կործանեցաւ 'ի Յունաց. անդ անկաւ եւ ինքն Զարմայր, որ գնացեալ էր յօգնութիւն. որում յաջորդեաց Շաւարշ ։ Ընդ այն ժամանակս Լատինոս թագաւորեաց յԻտալիա. որոյ յաջորդ եղեւ Ենէաս ։ Ծաղկէր յայնժամ 'ի Յոյնս Որփէոս բանաստեղծ. եւ Արգոնաւորդք ուղե-

ւորեցան 'ի կողքիս առաջնորդութեամբ Հեր-
քիւլեայ [1] :

## ԳԻՐՔ Ը

### Հեղի . Սամփսոն և Սամուէլ :
### Ա. Ա. 2848

159 . Զկնի Աբդոնի յաջորդեաց Հեղի քահանայապետ 'ի տոհմէ Իթամարայ որդւոյ Ահարոնի, և դատեաց զժողովուրդն ամս քառասուն : Սա քանզի այր անզօր էր և անբաւական 'ի կառավարել, անդէն յետսամուտ ժողովուրդն անկաւ 'ի կռապաշտութիւն . և 'ի պատիժ մեղաց նոցա թոյլ ետ Աստուած Փղշտացւոց՝ որք էին հինգ նախարարք դաշնադիրք ընդ միմեանս, նուաճել զնոսա ամս քառասուն :

Յերկրորդում ամի դատաւորութեան Հեղեայ , որպէս կարծի , ծնաւ Սամփսոն որդի Մանովեայ 'ի ցեղէն Դանայ : Մայր նորա քանզի ամուլ էր, երևեցաւ նմա հրեշտակն և աւետաւորեաց զծնունդ Սամփսոնի՝ հրաժարեցուցեալ զնա և զմանուկն 'ի գինւոյ և յամենայն արբեցուցիչ ըմպելեաց և յանօրէն կերակրոց . զի եղիցի , ասէ , մանուկն ուխտաւոր Աստուծոյ , և մի փոքրեսցէ զհերս գլխոյ իւրոյ . և նա սկսանիցի փրկել զԻսրայել 'ի ձեռաց Փղշտացւոց :

160 . Իբրև լուաւ զայս Մանովէ աղաչեաց զտէր՝ միւսանգամ առաքել զհրեշտակն , զի ուսուսցէ նմա զկամս իւր : Լուաւ Աստուած աղաչանաց նորա . և երևեալ հրեշտակն՝ կրկ-

1 Խորէն . Ա . 18 . 31 : Պատմ . Հայ . Է :

նեաց զառաջին պատուէրն ։ Ընդ հասոյց Մանուէ ուլ մի և հաց, և եդ 'ի վերայ վիմին՝ որ անդ, և ապա եւ բոց անտի, և ընդ բոցոյն ամբարձաւ հրեշտակն ։ Ապա ըստ ժամանակին ծնաւ մանուկն, և կոչեցաւ Սամփսոն, այս ինքն է արեգակն. որ և սնաւ 'ի տան հօր իւրոյ, և էր զօրաւոր և հանճարեղ։ Վասն որոյ օրհնեաց զնա Աստուած վառեալ զնա հոգւով զօրութեան, տալով նմա ոյժ գեր քան զկար մարդոյ ։ Իբրև եղև Սամփսոն եօթնևտասն ամաց, էառ կին 'ի դստերաց այլազգեաց ըստ թոյլտուութեան Աստուծոյ. և 'ի ճանապարհին ել 'ի վերայ նորա առիւծ մի ամեհի. այլ նա զօրութեամբ հոգւոյն ձեղքեալ պատառեաց զնա ։ Զկնի աւուրց ինչ եգիտ 'ի բերան գլխոյ առիւծուն մեղր գործեալ 'ի մեղուաց. զոր արկեալ յառեղծուածս եդ առաջի այլազգեաց լուծանել ասելով. «Ի կերչէ ել կերակուր, և 'ի հզօրէ ել քաղցր »։ զոր և ուսեալ նոցա 'ի կնոջէ նորա պատասխանեցին. «Զի՞նչ քաղցրագոյն քան զմեղր, կամ զի՞նչ հզօրագոյն քան զառիւծ»։

161. Յետ այսորիկ 'ի վրէժխնդրութիւն այլազգեաց ապականեաց Սամփսոն և այրեաց զհունձս նոցա 'ի ձեռն աղուեսուց, կապելով զնոսա ձետ ընդ ձետ և 'ի մէջն լապտեր, և արձակելով յանդս նոցին ։ Եւ անդադար էր նա յառնել 'ի վերայ այլազգեաց և կոտորել անխնայ, ուր և գտանէր. և արար 'ի նոսա հարուածս մեծամեծս ։ Նմին իրի միաբանեալ այլազգեաց խնդրեցին 'ի ցեղէն Յուդայ մատնել զնա 'ի ձեռս իւրեանց ։ Խնդրեալ Սամփսոնի թոյլ ետ կապել զինքն և տալ 'ի ձեռս թշնամեաց. այլ ընդ մերձենալն առ նոսա խզեաց ինքնին զկապանս, և առեալ 'ի ձեռսին զծնօտ իշոյ՝ սպան 'ի նոյանէ հազար այր, և զայլս հալածական

արար ահիւ մեծաւ։ Նա 'ի պապակել խորամ ծարաւու, աղաղակեաց առ Տէր, և Տէր լուաւ նմա և բղխեցոյց սքանչելեօք զջուր 'ի ծնօտէ անտի, և արբ Սամփսոն և զօրացաւ։

Մինչ էր Սամփսոն 'ի Գազա, այլազգիքն փակեցին զդրունս քաղաքին ունել զնա. այլ նորա յարուցեալ 'ի գիշերի թափեաց զերկու մեծամեծ փեղկս դրանն հանդերձ սեմովք, և բարձեալ 'ի վերայ ուսոց իւրոց եհան 'ի գլուխ անդր լերին. և ահ և երկիւղ նորա պաշարեաց զայլազգիս։

162. Այնուհետև սկսան մտայոյզ լինել՝ թէ ուստի իցէ այնչափ զօրութիւն նորա. որպէս զի կարասցեն հնարիւք իմն տկարացուցանել զնա։ Իբրև գիտացին թէ նա յաճախէ 'ի տուն կնոջ միոյ Դալիլայ, եկին հնգեքին նախարարք առ կինն, և աղաչեցին զնա պատրել զայրն՝ որսալով 'ի բերանոյ նորա թէ յո՞ իցէ զօրութիւն նորա. և տկարացուցեալ մատնել զնա 'ի ձեռս նոցա, խոստանալով նմա զմեծ գումար արծաթոյ։ Իսկ կինն սկսաւ ողոքանօք և շողոմութեամբ աղաչել զնա, և ապա անընդհատ թախանձանօք բռնադատել զնա ասել ինքեան, թէ յորում իցէ զօրութիւն նորա, և թէ իւ մարթ իցէ կապել զնա։ Նախ ասաց Սամփսոն, զի եթէ կապիցի եօթն չըօք դալարովք՝ տկարանայ. երկրորդ անգամ ասաց, եթէ կապիցի եօթն նոր առասանօք՝ տկարանայ. երրորդ անգամ ասաց, եթէ եօթնեքին գիսակք գլխոյ նորա հիւսեսցին ընդ ազբին և ցցովք վարեսցին՝ տկարանայ։ Դալիլա ննջեցուցեալ զՍամփսոն կապէր, և ապա աղաղակէր. Այլազգիք հասեալ են 'ի վերայ քո, Սամփսոն։ Այլ նորա անդէն յարուցեալ խզէր զկապանսն։

163. Սակայն այս միամիտ հաւատ և սէր 'ի կինն՝ այնչափ մեղկացոյց զսիրտ Սամփսոնի, մինչև յաղթեցաւ անյաղթելին 'ի թախանձանաց կնոջն, և պատմեաց նմա ստուգութեամբ՝ թէ զօրութիւն իւր յԱստուծոյ է տուեալ՝ պայմանաւ պահելոյ զօրէնս Նազովրացւոց ուխտաւորաց Աստուծոյ, 'ի բաց կալով յամենայն արբեցուցիչ ըմպելեաց, և յանօրէն կերակրոց, մանաւանդ չգերծուլ երբէք զգէսս գլխոյ իւրոյ: Կինն անզգամ նոյն հետայն ազդ արար այլազգի նախարարաց. որոց անդէն բերեալ զարծաթն խոստացեալ. թաքեան 'ի տան նորա: Կոչեաց Դալիլա սափրիչ, և ննջեցուցեալ զՍամփսոն՝ ետ գերծուլ զգիսակս գլխոյ նորա. ապա կապեաց զնա որպէս յառաջն, և աղաղակեաց. Այլազգիք հասեալ են 'ի վերայ քո, Սամփսոն: Իսկ նորա զարթուցեալ ջանահնար լինէր խզել զկապանս. այլ վայրապար, զի մեկնեալ էր 'ի նմանէ զօրութիւնն:

164. Զայն տեսեալ այլազգեաց եկին 'ի դարանէ, կալան զնա և բրեցին զաչս նորա, և կապեալ երկաթի կապանօք տարան 'ի Գազա մայրաքաղաք իւրեանց, և արկին 'ի բանտ. տալով նմա աղալ անդ. և ինքեանք տօն ցնծութեան կատարէին համախումբ ամենայն իշխանօք իւրեանց 'ի մեծի տաճարին Դագոն դից: Անդ 'ի բանտին ընդ աճել հերացն Սամփսոնի աճէր և զօրութիւն նորա:

Ապա յաւուր միում կամեցեալ նոցա խրախանալ հանդերձ ամենայն ժողովրդեամբ, հրամայեցին ածել զՍամփսոն 'ի տաճար անդր, և սկսան խաղալ զնովաւ: Տաճարն այն հաստատեալ կայր 'ի վերայ երկուց սեանց հուպ միմեանց, և առաջի տաճարին էր ընդարձակ պատշգամբ, ուր կային անհամար բազմութիւն

օտարաց եւ կանանց 'ի վեր եւ 'ի վայր ։ Ընդ յեցեալ Սամփսոն 'ի սիւնսն յայնոսիկ խնդրեաց յԱստուծոյ զօրութիւն եւ յայն նուագ. առաձգեաց զաջ իւր 'ի մի սիւնն, եւ զձախն 'ի միւսն աղաղակեաց եւ շարժեաց ուժգին զօրութեամբ զսիւնսն, մինչեւ խորտակել զնոսա ընդ մէջ, եւ կործանել զբովանդակ շինուածն զայն ։ Ընդ ամենայն նախարարքն եւ ժողովուրդք մեռան ընդ փլատակօք ոգիք իբրեւ երեք հազարք ։ Ապա եկին եղբարք Սամփսոնի, եւ հանեալ 'ի փլատակաց զմարմին նորա տարան եւ թաղեցին 'ի գերեզմանի հօր իւրոյ Մանովեայ ։

165. Այսպէս վախճանեցաւ Սամփսոն ընկեալ իւր 'ի ծաղկեալ հասակի՝ ամաց երեսուն եւ ութից, եւ դատեաց զԻսրայէլ ամս քսան 'ի միասին ընդ Հեղեայ. որոյ ծերացեալ նստէր 'ի Սելով առ խորանաւն վկայութեան, եւ վարէր զպաշտօն քահանայութեան ։ Մահ Սամփսոնի ահաբեկ արար զայլազգիս. զի ընդ տաճարի կռոց իւրեանց կորուսին եւ զհինգ նախարարսն եւ զայնչափ բազմութիւն մարդկան. մինչ ոչ եւս իշխել նեղել զԻսրայէլացիս որպէս յառաջն ։ Եթէ լինէր Հեղի այր զօրութեան, կարէր յայնժամ թօթափել զլուծ նոցա. այլ նա զուրկ էր յամենայն քաջամանութեանց, որպէս եւ որդիք նորա Ոփնի եւ Փենեէս. որոց գործ էր անառակութիւն, կամ ըստ սրբոյն Եփրեմի շուայտութիւն [1]. որով եւ անարգ գտան ։

166. Իսկ Աստուած պատրաստեաց յաջորդ Հեղեայ զՍամուէլ զորդի Եղկանայ ղեւտացւոյ, որ էր այր բարեպաշտ, եւ ունէր երկուս կանայս, Աննա եւ Փենանա. սա ծնանէր զաւակս, իսկ Աննա ամուլ էր. որոյ վասն հանապազ

[1] Հտ. Ա. եր. 360 ։

տխրագին դիմօք պաղատէր առ Աստուած: Եւ Եղկանա 'ի միում 'ի տօնից 'ի Սելով հանդերձ ընտանեօքն, և մատոյց զզոհս իւր: Յետ ուտելոյ 'ի զոհէ անտի գնաց Աննա ի յուսով առ դուռն խորանին, ուր նստէր Հեղի դատել ըզժողովուրդն. անդ եկաց Աննա յաղօթս առաջի տեառն եռանդեամբ սրտի, և խոստանայր նուիրել նմա, եթէ պարգևեսցէ նմա արու զաւակ: Եւ Հեղի քահանայ միտ եդեալ՝ համարեցաւ զնա արբեալ, և ասէ ցնա որդին իւր ըղբուցթեամբ. Մինչև ցե՞րբ կայցես յարբեցութեան. գնա յերեսաց տեառն: Պատասխանի ետ Աննա. Ոչ այդպէս. այլ կին վշտագնեալ եմ ես, և հեղում զանձն իմ առաջի Աստուծոյ: Յայնժամ օրհնեաց զնա Հեղի, և ասէ. Աստուած Իսրայելի տացէ քեզ զամենայն խնդրուածս քո: Եւ գնաց անտի Աննա ուրախութեամբ սրտի:

167. Իսկ ընդ առաւօտն կանխեալ երկիր պագին տեառն և դարձան յԱրեմաթեմ 'ի տուն իւրեանց: Եւ յղացաւ Աննա, և ըստ ժամանակին ծնաւ որդի, և կոչեաց զանուն նորա Սամուէլ, այս ինքն կոչեցեալ յԱստուծոյ. և ընդ ամս երիս սնուցեալ զմանուկն՝ պատրաստեաց զնա պատարագ կենդանի մատուցանել տեառն: Եւ առեալ զմանուկն եռամեայ՝ ել 'ի Սելով հանդերձ պատարագօք. անդ մատուցին զնա առաջի տեառն: Ասէ Աննա ցՀեղի. Լուիցէ տէրդ իմ զբան աղախնոյ իւրոյ. ես այն կին եմ, զոր տեսեր աստ, և ետ տէր զխնդրուածս իմ. սա է որդի աղօթից և պաղատանաց, զոր մինչ չև ծնեալ՝ ուխտեցի նուիրել 'ի պաշտօնատարութիւն խորանի տեառն զամենայն աւուրս իւր. և արդ յանձն առնեմ զդա խնամոց մեծի քահանայապետիդ՝ ուսուցանել և

գաստիարակել, մինչև աճեսցի առաջի աչաց քոց ընդ հովանեաւ խորանի տեառն. և եղիցի մանուկն իմ սիրեցեալ փոխ Աստուծոյ: Յայնժամ ազդեալ Աննա 'ի տեառնէ երգեաց գոհաբանական երգ օրհնութեան առ Աստուած յաղագս մեծի պարգևին: Ընկալաւ Հեղի ըզՍամուէլ ուրախութեամբ, և օրհնելով զծնողս նորա ասէ ցԵղկանա. Հատուսցէ քեզ տէր զաւակ 'ի կնոջէդ յայդմանէ փոխանակ փոխոյն՝ զոր ետուր արարչին: Եւ նոքա թողեալ զմանուկն անդ՝ երկիր պագին տեառն, և դարձան 'ի տուն իւրեանց: Այլ յղացաւ Աննա, և ծնաւ երիս ուստերս և երիս դստերս: Իսկ մանուկն Սամուէլ զարգանայր հասակաւ և շնորհօք Աստուծոյ յառաջինի վարս. և Հեղի զգեցուցեալ նմա եփուտ կտաւի, կարգեաց 'ի սպասաւորութիւն խորանին:

168. Որդիք Հեղեայ արհամարհեալ զօրէնս, ոչ միայն անօրինէին անառակութեամբ, այլ և յափշտակէին զզոհս չև ևս եփեալս և ճենճերեալս՝ ընդդէմ օրինաց. որով մեծի դայթակղութեան պատճառ լինէին. վասն որոյ առաքեաց Աստուած զհրեշտակ իւր առ Հեղի, և սպառնացաւ նմա բառնալ զքահանայութիւն 'ի տանէ նորա, և զերկու որդիսն միանգամայն կորուսանել, և յարուցանել զայլ քահանայ հաւատարիմ:

Հեղի գոլով իննսուն ամաց՝ բնակէր 'ի դութի խորանին մերձ 'ի տապանակն: Ընդ 'ի գիշերի միում մինչ ննջէր Հեղի՝ զմէջ գիշերաւ եղև ձայն 'ի տեառնէ առ Սամուէլ. իսկ նա համարեալ թէ Հեղի կոչէ զինքն, ընթացաւ առ նա, և ասէ. Ահաւասիկ եմ տէր. զի՞ կոչեցեր զիս: Ասէ ցնա Հեղի. Ոչ կոչեցի զքեզ. դարձիր և ննջեա: Դարձեալ երկրորդ և երրորդ

անգամ եղև ձայն տեառն առ նա . և նա նոյնօրինակ արար գնալով առ Հեղի ։ Բայց յերրորդումն ծանեաւ Հեղի , եթէ տէր կոչէ զնա , ասէ ցնա . Գնացիր , որդեակ , և ննջեա . և եթէ զկնի եթէ կոչեսցէ զքեզ միւսանգամ , ասասցես . Խօսեաց տէր , զի լուիցէ ծառայ քո ։ Եւ նա արար այնպէս ։ Յայնժամ յայտնեաց Աստուած նոր մարգարէին զխորհուրդ իւր 'ի վերայ տանն Հեղեայ՝ խնդրել զվրէժ վասն անօրէնութեան որդւոց իւրոց ։ Զոր իբրև լուաւ Հեղի՝ երկիր եպագ արդար դատաստանին Աստուծոյ , ասելով . Որ ինչ բարի է առաջի աչաց տեառն , ինքն արասցէ 'ի վերայ իմ և 'ի վերայ տան իմոյ ։ Յետ այսր յայտնութեան մեծացաւ Սամուէլ և հռչակեցաւ անուն նորա ընդ ամենայն Հրէաստան . յորմէ և Սելով եղև մեծանուն տեղի գուշակութեան . անդ դիմէր ամենայն Իսրայէլ հարցանել վասն հանդերձեալ իւրոց ։

169 . Ընդ այն ժամանակս պայազատէր 'ի Հայաստան յետ Շաւարշայ Պերճ հզօր նահապետ , և տիրէր բովանդակ աշխարհին՝ նուաճելով զազգս բազումս . որ և գումարեալ զօր բազում եգ 'ի նոսա նոր կարգ զինուորական յարձակութիւն շրջակայ ազգաց ։

Ի նմին ժամանակի վերջացան թագաւորք Սիկիոնի յԵլլադա , որ տևեաց ամս 967 . և սկըսան տիրել քուրմքն Կառնեայ . իսկ Ասորեստանեայց տիրէր Տեւտէոս ։ Ամազոնք տիրելով բազում տեղեաց այրեցին զԵփեսացւոց մեհեանն [1] ։

1 Պատմ. Հայ. Գիրք Ա. Գլ. Ի. Եւսեբ. Ժամ. ամ Աբր. ՊԿԷ.

## ԳԼՈՒԽ Թ

### Դատաւորութիւն Սամփսոնի :
Ա. Ա. 2868

170. Յետ կործանման տաճարին Դագոնայ և նախարարաց այլազգեաց մահուամբ Սամփսոնի, Իսրայելացիք վայելէին 'ի խաղաղութեան։ Այլ յետ ամաց ինչ սկսան այլազգիք անդրէն զօրանալ. և գումարեալ զօրս՝ ելին 'ի վերայ Իսրայելացւոց։ Ելին և սոքա ընդդէմ նոցա 'ի պատերազմ. այլ յառաջին բախման անդ պարտեալ Իսրայելացւոց 'ի փախուստ դարձան, և կորուսին արս չորս հազար։ Յապուշ կրթեցան պատուաւորքն, և խորհէին ընդ միմեանս՝ եթէ զորպիսի չարիս գործեալ իցեն, զի եհար զնոսա տէր հարուածովն այնու 'ի ձեռն այլազգեաց։

171. Ապա համախմբեալ զօրս իւրեանց 'ի տապանակ ուխտին՝ առաքեցին առնուլ զնա 'ի Սելովայ, և ածել 'ի բանակ անդր. զի յիշեցին զսքանչելիս նորա առ Մովսէսիւ և առ Յեսուաւ։ Իբրև եհաս տապանակն 'ի բանակ անդր, ընդ որում էին Ոփնի և Փենեէս որդիք Հեղեայ, մեծաձայն ցնծութեամբ աղաղակեցին Իսրայելացիք, հաւատալով թէ անշուշտ ունէին յաղթանակել 'ի վերայ թշնամեաց իւրեանց։ Զայն լուեալ և տեղեկացեալ այլազգեաց՝ զահի մեծի հարան, և ողբալով վայ մեզ ասէին, զի կորեաք։ Այլ քաջալերեալ զմիմեանս յարձակեցան 'ի վերայ Իսրայելացւոց, և անդէն կոտորեցին 'ի նոցանէ երեսուն հազար 'ի հետևակաց, և պարտեալքն փախեան։ Ընդ մեռեալս առ

տապանակին Ոփնի և Փենեէս, և առին այլազգիք զտապանակն ։ Որդիք Հեղեայ արութիւն մեծ ցուցին 'ի տեղւոջն. քանզի 'ի սկզբան անդ կարէին փախչել, այլ կացին մնացին ընդ տապանակին մինչև ցյետին շունչ կենաց իւրեանց պաշտպան լինելով նմա ։

172. Իբրև եհաս գուժկան ձախողակ մարտին 'ի Սելով, խռովեցաւ քաղաքն ամենայն. և եղև աղաղակ մեծ ։ Ի նմին ժամու Հեղի նստէր առ դրան խորանին վկայութեան՝ գոլով իննսուն և ութ ամաց, և տագնապէր յոյժ վասն տապանակին ։ Եւ լուեալ զբարբառ աղաղակի քաղաքացւոցն, և հարցանէր զպատճառս իրացն, ահա եմուտ առ նա այրն գուժաբեր եկեալ 'ի բանակէ անտի. և պատմեաց նմա զհարուածս ժողովրդեան, զմահ երկուց որդւոց նորին, և զառումն տապանակին ։ Վերջին բանքս այնպէս դառնացուցին զծերունին, մինչև յանհնարին աղէտից նուաղեալ անկաւ յաթոռոյն յետս կոյս, և բեկաւ ողն նորա, և անդէն մեռաւ ։ Ի նմին աւուր և նու նորա կին Փենեէսի քանզի յղի էր և մերձ 'ի ծնունդս, առ սաստիկ կսկծանացն պատեցան զնովաւ երկունք, և ծնաւ որդի ապաժամ, և ինքն անդէն մեռաւ ։ Եւ այնպէս բազմախուռ եղև օրն այն վասն Իսրայէլի, զի թուէր իմն թէ կորուսեալք տապանակին հասեալ են 'ի վերջին կործանումն. Նմին իրի կոչեցին զմանուկն զայն Վայ քաբովթ. այս ինքն վայ փառք, որ էր տապանակն ։ Սակայն եղև այն սկիզբն փրկութեան և ազատութեան նոցին ։

173. Քանզի յորժամ մեռաւ Հեղի, Սամուէլ թէպէտ և էր տակաւին պատանի ամաց քսան և հնգից, այլ առ կատարելութեան ներքին և արտաքին ձիրից իւրոց՝ հաւանութեամբ

ամենեցուն անդէն ընտրեցաւ իշխան և դատաւոր 'ի վերայ ամենայն Իսրայէլի, և առ մեծի արժանապատուութեան ամբարձ զնա Աստուած 'ի պատիւ քահանայութեան. և էր նա յազգէ ղեւտացի, այլ ոչ 'ի ցեղէ քահանայից: Ի սկզբան անդ դատաւորութեան իւրոյ գուն գործեաց Սամուէլ ուղղել զվարս և զգնացս ժողովրդեան. յորդորէր և պատուիրէր բառնալ անհետ առնել զամենայն մնացորդս անօրէն պաշտամանց, և պատրաստել զսիրտս իւրեանց առ տէր Աստուած՝ ճշմարիտ ապաշխարութեամբ. որպէս զի անչափ ողորմութեամբ իւրով դարձուսցէ առ նոսա զտապանակն: Լուան որդիքն Իսրայէլի զձայն Սամուէլի, և կատարեալ աստուածպաշտութեամբ դարձան առ տէր, որով և վայելեցին 'ի խաղաղութեան իմաստուն առաջնորդութեամբ նորա:

174. Իսկ երկիրն այլազգեաց կայր 'ի խռովութեան և յանհնարին տանջանս: Քանզի յորժամ առեալ տարան նոքա զտապանակն յԱզովտոս մայրաքաղաք իւրեանց, և եդին 'ի տաճարն Դագոնայ առընթեր դրօշելոյ նորա, 'ի վաղիւ անդր մտուցեալ քրմաց 'ի տաճարն՝ տեսին զկուռս Դագոնայ կործանեալ, և անկեալ 'ի գետին 'ի ձև երկրպագութեան առաջի տապանակին տեառն. և նոյնհետայն վերառեալ կանգնեցին 'ի տեղւոջ իւրում: Իսկ յերկրորդում աւուր իբրև բացին զդուռն տաճարին՝ գտին զգլուխն և զերկոսին դաստաձեռացն Դագոնայ անկեալ առ սեմովք, և երկոքին թաթք ոտից նորա խորտակեալ և ջարդեալ աստ և անդ. միայն ողնայարն ամբողջ անկեալ կայր առաջի տապանակին: Յերկոց հրաշից աստի պարտէին կամել Ազովտացիքն 'ի միտ առնուլ զունայնութիւն աստուածոյն

խուրեանց, և զահեղ զօրութիւն Աստուծոյն Իսրայէլի. այլ տակաւին կանխակալ սովորութեամբ կուրացեալ՝ օրէնս դնէին ոչ ևս կոխել զսեամս տաճարի աստուածոյն, այլ ընդոստ անցանել 'ի յիշատակ ձախող արկածիցն։

175. Նմին իրի առաքեաց 'ի Նոսա տէր Նոր և այլանդակ ախտ տարափոխիկ յերաստանս Նոցա. որ և տարածեցաւ ընդ շրջակայ սահմանս Ազովտայ։ Մինչդեռ հարուածս այս կոտորէր զՆոսա, անհամար մկունք եռացեալ յանդաստանս Նոցա ապականէին զերկրն։ Ծանեան այնուհետև զի պատուհաս է այն եկեալ յԱստուծոյ Իսրայէլի յաղագս տապանակի Նորա. վասն որոյ ժողովուրդք Ազովտայ բողոք բարձին հանել զտապանակն անտի. զի ծանրացաւ, ասէին, ձեռն Նորա 'ի վերայ մեր, յորմէ կործիմք և ապականիմք։ Ժողովեցին իշխանք Նոցա յԱզովտոս զամենայն Նախարարս այլազգեաց՝ խորհել վասն տապանակին։ Ընդ դատն և իշխանք Գեթացւոց, որք առաջարկեցին փորձ փորձել և փոխադրել զնա 'ի զանազան քաղաքս Նախարարութեան Նոցա, և գիտել թէ այն հարուածք լինիցին յամենայն վայրս. փոխեսցի, ասեն, տապանակն Աստուծոյ առ մեզ. և փոխեցաւ 'ի Գեթ։ Սակայն յամենայն տեղիս, ընդ որ անցանէր, հարուածքն այն զուգընթաց լինէին, և տանջէին զբնակիչս։

176. Այն ինչ եմուտ տապանակն 'ի Գեթ, ընդ Նմին և ախտն չարաչար ճարակեցաւ յամենեսին. յորմէ աղմուկ և տագնապ մահու եղև 'ի քաղաքին։ Փութացան և հանին անտի ըզտապանակն, և առաքեցին յԱկկարոն. բայց իշխանք տեղւոյն խորհեալ ընդ այլ Նախարարաց, միաբան հաստատեցին դարձուցանել զնա անդրէն առ որդիսն Իսրայէլի յետ եօթն ամսոյ։

Յայնժամ խորհուրդ ետուն քուրմքն նոցա մի ունայն առաքել, այլ ըստ թուոյ նախարարաց արարցեն հինգ ոսկի պատկերս երաստանաց, և հինգ նմանութիւնս մկանց յոսկւոյ. յորս յաւելան յայլոց քաղաքաց և այլ այսպիսի նուէրք 'ի ցոյց մեծութեան ճշմարտին Աստուծոյ: Ապա շինեցին սայլ մի նոր և եդին 'ի նմա զտապանակն և զոսկի նուէրս անօթով. և լծեալ 'ի սայլին երկու երինջս նորս և անդրանկածինս արձակեցին երթալ ինքնին առանց եզողի: Եւ ուղղեցան երինջքն ընդ ճանապարհ Բեթսամիւսայ, և ընդ մի շաւիղ ընթանալով հանդարտաքայլ գնացին ածին զտապանակն Աստուծոյ 'ի սահմանս Իսրայէլացւոց, և մինչ յանդաստանն Ովսեայ, և անդ կանգն առին:

177. Բեթսամիւսացիքն ելեալ էին 'ի հունձս հնձոցն մերձ 'ի քաղաքն Բեթսամիւս, որ էր քաղաք քահանայից 'ի բաժնին Յուդայ, ուր էին քահանայք և Ղեւտացիք. որք իբրև լուան 'ի Բեթսամիւսացւոց զդարձ տապանակին, ընթացան 'ի տեղին, և առեալ 'ի սայլէ զտապանակն եդին պատուով 'ի վերայ վիմի մեծի. և զոսկի նուէրսն եդին առ նովաւ: Ապա կոտորեցին զփայտ սայլին, և զենեալ զերինջսն մատուցին յողջակէզս տեառն: Արդարեւ մեծ եղև ցնծութիւն Իսրայէլացւոց իբրև ընկալան զտապանակն տեառն, զի այն էր ազգի իւրեանց միակ փառք անզուգական:

Սակայն 'ի շրջակայ վայրաց ընդվայրաքննին մարդիկ դիմեցին խուռներնթաց յանդաստան անդր Ովսեայ, և համարձակ հայեցան և զննեցին զտապանակ տեառն մերկ և անծածկոյթ, որ ընդ պատժով մահու արգելեալ էր, եւս և նոցին իսկ քահանայից. չառեալ զնա անծածկոյթ, թող թէ ձեռամբ շօշափել և բանալ

զայն. նմին իրի 'ի պատիժ այսպիսի անպատուութեան հարան 'ի մահ 'ի ժողովրդենէ անտի արք յիսուն հազար, և եօթանասուն իշխանք։ Զահի հարան Բեթսամիւսացիք և դողային, զի մի և այլ ինչ իրք պատուհասեսցին. առաքեցին առ բնակիչս Կարիաթարիմայ ազդ առնել, զի եկեալ տարցեն զտապանակն։ Որոց երթեալ անդր՝ բազում փառօք և երկիւղածութեամբ առեալ տարան զնա 'ի քաղաքն, և հանգուցին 'ի տուն Ամինադաբայ ղեւտացւոյ ազնուականի, և զԵղիազար որդի նորա սրբեալ կարգեցին 'ի պահպանութիւն և 'ի սպասաւորութիւն նմին։ Եկաց անդ տապանակն ամս քսան. յորս Իսրայէլ պաշտեաց զԱստուած յամենայն սրտէ, և ամենքեան կային 'ի խաղաղութեան ընդ իմաստուն կառավարութեամբ Սամուէլի։

178. Յայնժամ կոչեաց Սամուէլ զամենայն Իսրայէլ 'ի Մասեփաթ 'ի ժողով մեծ. և յետ հատանելոյ զնոսա 'ի զեղջ սրտի և յաստուածպաշտութիւն, հրաման ետ հանել ջուր, և ինքնին եհեղ զայն յերկիր առաջի տեառն 'ի նշան երդման 'ի դիմաց ժողովրդեան, և զայն օր պահեցին անսուաղ։ Իբրև լուան այլազգիք զժողովել նոցա, գումարտակ արարեալ զօրու իւրեանց ելին յանկարծակի 'ի վերայ քաղաքին։ Լուեալ Իսրայէլացւոց զանակնկալ արշաւանս նոցին՝ դիմեցին առ Սամուէլ օգնել նոցա աղօթիւք։ Իսկ նորա սրտապնդեալ զնոսա՝ էառ գառն մի գիեցիկ և եհան ողջակէզ տեառն։ Ընմինչդեռ մատուցանէր զողջակէզն հանդերձ ժողովրդեամբ, ահա մերձեցան այլազգիք 'ի պարիսպ քաղաքին, և սկսան մարտնչել։ Կարդաց Սամուէլ առ Աստուած, և որդիքն Իսրայէլի ալխացեալ ելին 'ի դուրս և սկսան կոտորել

զայլազգիս ։ Պատեցան անդէն երկինք մթագին ամպովք · ցոլմունք և որոտմունք ահեղաձայնք լցին արհաւրօք զթշնամիս, որք շփոթեալ դարձան ՚ի փախուստ · և Իսրայէլացիք պնդեալ զհետ նոցա՝ անխնայ կոտորեցին զնոսա, և զամենայն քաղաքս զոր առեալ էին յառաջագոյն այլազգիք՝ յետս դարձուցին ։ Ի կոտորածէ աւուրն այնորիկ այնչափ նկուն եղեն թշնամիք, զի զամենայն աւուրս դատաւորութեան Սամուէլի ոչ ևս իշխեցին ելանել ՚ի վերայ Իսրայէլի ։

179 · Իսկ Սամուէլ ամենայն բարեկարգութեամբ դատեաց զԻսրայէլ ամս 36 · և ինքն էր յայնժամ իբր ամաց վաթսնից, և բնակէր յՌամաթեմ ։ Անդ շինեաց սեղան տեառն ևս առանձնական աստուածպաշտութեան իւրոյ, և ՚ի յորդոր ժողովրդեան ՚ի պաշտօն Աստուծոյ որք յածախէին առ նա իբրև առ մարգարէ Աստուծոյ, և առ դատաւոր իւրեանց ։ Բազմադիմի հոգք ժողովրդեան և ծերութիւն հասակին ստիպեցին զնա ունել օգնական զերկուս դատաւորս · նմին իրի կացոյց դատաւոր զերկու որդիս իւր զՅովէլ և զԱբիա, որպէս զի նոքօք ուղղեսցէ համարձակ զամենայն գործառնութիւնս · և առաքեաց զնոսա յերկոսին ծագս Հրէաստանի, զմին ՚ի Դան ՚ի հիւսիս, և զմիւսն ՚ի Բերսաբէէ ընդ հարաւ ։ Այլ նոցա ընկալեալ զիշխանութիւնն զայն, թողին զճանապարհս հօր իւրեանց և թիւրեցան զհետ զօշաքաղութեան, և թիւրեցին զիրաւունս վասն կաշառաց · որով և ընդհանրական ատելութիւն հօրն մթագնեցին խաղաղական գնացիւք իւրեանց ։ Եւ նորին ազգաւ դառնացեալ ժողովրդեան՝ եկեալ յառաջատ խորհուրդս բերին, թէ ընդէր իցէ զի ամենայն շրջակայ ազգք պերճացեալ են թագաւորօք, և

ինքեանք միայն իցեն անգլուխ, հալածեալ և արհամարհեալ: Զի դատաւորք նոցա իբրև արք ռամկականք չունէին արտաքին շուք և ահեղութիւն. որով և բազում անգամ մատնեցան 'ի ծառայութիւն այլազգեաց:

180. Այսպիսի խորհուրդք և զրոյցք 'ի անզգամն անդ լինէին 'ի մէջ ռամկաւուց, յետոյ 'ի մանաւանդ ժողովս իւրաքանչիւր ցեղից. մինչև ապա սփռեցաւ 'ի մէջ ամենայն ժողովրդեան: Իբրև ծանեան իշխանք, թէ և ժողովուրդն 'ի նոյն խորհուրդ միաբան է, գումարեցան 'ի հանրական ժողով յԱրիմաթեմ, ուր նստէր Սամուէլ: Եւ համարձակեցան խնդրել 'ի նմանէ կացուցանել 'ի վերայ ինքեանց թագաւոր՝ դատել զնոսա, որպէս այլ ազգք: Ընդ այս անակնունելի խնդիր նոցա 'ի խոր խոցեցաւ Սամուէլ, զի արհամարհութիւն էր առաջնորդութեանն Աստուծոյ. քանզի Աստուած էր մի միայն թագաւոր նոցա, որ զքանչելի մարգարէութեամբ խնամեալ առաջնորդէր նոցա 'ի ձեռն դատաւորաց և քահանայապետաց. որ և իշխանութիւնն այն կոչեցաւ ԹԷՕԿՐԷՏԻԿՈՆ, այս ինքն աստուածապետ:

181. Սամուէլ ծածկեալ զցաւ իւր ներքին՝ ասաց նոցա քաղցրութեամբ՝ ներել նմա, մինչև նախ հարցանիցէ զԱստուած, և այնպէս արձակեաց զնոսա. և ինքն առանձնացեալ խնդրեաց 'ի տեառնէ յայտնել նմա զկամս իւր: Հրաման ետ Տէր Սամուէլի զիջանել կամաց ժողովրդեան՝ կացուցանելով 'ի վերայ նոցա թագաւոր. բայց նախ յայտնեսցէ նոցա զիրաւունս թագաւորին 'ի վերայ նոցա: Ջանաջան եղև Սամուէլ փոխել զմիտս յետամիտ ժողովրդեանն՝ ցուցանելով զանհնարին վիշտս և զծանրաբեռնութիւնս, զոր կրելոց էին: Այլ նոքա

յամառեալ 'ի կարծիս, յանձն առնու զամենայն։ Եւ Սամուէլ ըստ յայտնելոյ նմա 'ի տեառնէ ընտրեաց նոցա թագաւոր 'ի ցեղէ Բենիամինի զՍաւուղ որդի Կիսեայ։ Եւ թէ զիարդ, տեսցուք զկնի։ Այսպէս ահա վերջացաւ իշխանութիւն դատաւորացն խորայելի յետ տևելոյ ամս երեք հարիւր և ութսուն։

182. Զայնու ժամանակաւ պայազատեաց 'ի Հայս յետ Պերճայ Արբունն քաջ ամս քսան և եօթն։ Եւ առ Աթենացիս կարգեցաւ Մեդոն առաջին արխոնտ։ Իսկ Ասորեստանեայց տիրէր Թինէոս ամս երեսուն և ութ։ Ամազոնք զօրացեալք յԱսիա ասպատակեն Գիմերացւովք հանդերձ[1]։

## ԳԼՈՒԽ Ժ.

### Թագաւորութիւն Իսրայելացւոց. Սաւուղ։
### Ա. Ա. 2909

183. Սաւուղ Կիսեան այր փառաւոր բարձրահասակ և բարեհամբոյր ելեալ 'ի խնդիր իշոց հօր իւրոյ կորուսելոց, յետ շրջելոյ 'ի դաշտս և 'ի լերինս զաւուրս երիս եհաս առ 'ի Սիփ մերձ 'ի քաղաքն Արիմաթեմ։ Եւ իբրև խորհէր դառնալ անդրէն 'ի տուն իւր, խորհուրդ ետ նմա ծառայն գնալ առ այրն Աստուծոյ Սամուէլ, և հարցանել զնա վասն իշոցն։ Հաւանեցաւ Սաւուղ և չոգաւ առ Սամուէլ, որ երթայր 'ի բլուրն 'ի տեղի զոհին։ Միով աւուրբ յառաջ յայտնեալ էր Սամուէլի Աստուած վասն Սաւուղայ. և պատուիրեալ էր օծանել զնա թագաւոր 'ի վերայ

1 Մագիստրոս։ Սամուէլ։ Եւսեբ. ժամ. Հ=ՀԸ։

ամենայն Իսրայէլի ։ Իբրև ետես զնա Սամուէլ, պատմեաց նմա վասն իշոցն կորուսելոց, թէ գըտեալ է զնոսա հայր քո․ յաւել ասել․ Ո՞յր իցեն վայելչութիւնք Իսրայէլի, եթէ ոչ քո և ամենայն տան հօր քոյ ։ Եւ պատուիրեաց նմա յառաջել քան զինքն ՚ի բլուրն․ եհաս անդ և ինքն Սամուէլ․ որ իբրև կատարեաց զմատուցումն զոհից, առ զՍաւուղ և զծառայն նորա, և տարաւ ՚ի վանս իւր ճաշել ՚ի միասին ։ Յետ ճաշուն տարաւ զնոսա ՚ի քաղաքն ՚ի տուն իւր, և խօսեցաւ առանձինն ընդ Սաւուղայ՝ ուսուցանելով նմա որ ինչ կարևոր էր գիտել յաղագս հանդերձեալ թագաւորութեանն ։

184․ Եւ ՚ի վաղիւ անդր յուղարկեաց զնա Սամուէլ մինչև ցեզր քաղաքին․ ուր ասաց ցՍաւուղ արձակել զծառայն անցանել յառաջ․ և մնա, ասէ, դու առ ՚ի լսել զպատգամ տեառն ։ Յայնժամ եհան Սամուէլ զսրուակ իւղոյ և եհեղ ի գլուխ Սաւուղայ, և համբուրեաց զնա ասելով․ Ահա օծ զքեզ տէր իշխան ՚ի վերայ ժողովրդեան իւրոյ Իսրայէլի առ ՚ի փրկել զժողովուրդն ՚ի ձեռաց թշնամեաց։ Եւ քաջալերեաց զնա Սամուէլ, խոստացեալ նմա զօգնականութիւնն տեառն, եթէ ՚ի գլուխ տարցի անթերի զպաշտօնն՝ որ հաւատացաւ նըմա ։ Եւ ետ նմա զերիս նշանս ՚ի հաստատութիւն ճշմարտութեան, որք և յայնժամ անդր կատարեցան․ և խաղաց ՚ի վերայ նորա Հոգի տեառն, և մարգարէացաւ ՚ի պարս մարգարէից [1] ։ Իբրև մեկնեցաւ անտի Սաւուղ, անդէն և անդ փոխեաց Աստուած զսիրտ նորա, և նա սկսաւ խորհել զօգուտ ժողովրդեանն, զդարձ պատերազմի և զամենայն կարևորս առաջնոր-

1 Թագ․ Գլ․ Ժ․ Ժ։

դութեան. Թէպէտ և կայր նա տակաւին 'ի տան հօր իւրոյ խոնարհութեամբ և ընդ հնազանդութեամբ հօրն՝ պարապեալ 'ի սովական գործս իւր:

185. Արդ իբրև կամեցաւ Սամուէլ ընտրել Թագաւոր հանդիսիւ յանդիման ամենայն Իսրայէլի, գումարեաց զամենայն ժողովուրդն 'ի Մասեփաթ, և նախ յուշ արար նոցա զմեծամեծ բարութիւնսն՝ զոր արար նոցա Թագաւորն երկնից մինչև ցայն վայր, և զնոցայն հեռատութիւն 'ի տեառնէ. և ապա որոշեալ զնոսա ըստ ցեղից. ըստ տոհմից և ըստ տանց՝ արկ երիցս զվիճակ, և ել վիճակն Սաւուղայ Կիսեան: Խնդրեցաւ Սաւուղ. այլ զի չէր նա 'ի մէջ ամբոխին, յայտնեցաւ Սամուէլի տեղին՝ ուր թագուցեալն էր. չոգաւ առ նա, և ածեալ կացոյց զնա 'ի մէջ ժողովրդեան և ասէ. Ահա այրն, զոր ընտրեաց տէր ձեզ Թագաւոր, և ոչ գոյ նման դմա յամենեսին 'ի ձեզ: Եւ այս բան միաբան աղաղակեցին. Կեցցէ արքայ: Յայնժամ Սամուէլ յայտնեաց ժողովրդեան զպարտականութիւն Թագաւորին առ ժողովուրդն, և ժողովրդեանն առ Թագաւորն, և ապա արձակեաց զնոսա, և գնաց Սաւուղ 'ի տուն իւր:

186. Յետ աւուրեայ ժամանակի Նաաս Թագաւոր Ամոնացւոց ել զօրու ծանու 'ի վերայ Գաղաադու և պաշարեաց զՅաբիս քաղաք ամրակուռ: Բնակիչք քաղաքին թէպէտ և զօրաւոր էին, այլ թշնամիք գոլով զօրաւորագոյն՝ ոչ իշխեցին 'ի մարտ ձեռնարկել ընդդէմ նոցա. այլ առաքեցին հրեշտակս առ Նաաս, և խնդրեցին խաղաղութիւն՝ խոստանալով լինել դաշնակիցս ծառայել նմա: Ընդ որ ցասուցեալ Նաաս, ասէ ամբարտաւանութեամբ. Առաջին պայման այս լիցի, զի հանիցէք զաջոյ ակն

ձեր, և եդից զձեզ 'ի նախատինս 'ի մէջ ամենայն Իսրայէլի: Զայս անագորոյն պատասխանի լուեալ ծերոց քաղաքին, խնդրեցին 'ի Նաասայ դուլ աւուրս եօթն. և նա զիջաւ նոցա: Իսկ նոքա նոյնժամայն արձակեցին հրեշտակս առ Սաւուղ 'ի Գաբաա՝ ազդ առնել նմա զվիճակ քաղաքին իւրեանց: Զայն լուեալ Սաւուղայ՝ վառեցաւ Հոգւով տեառն յարդար վրէժխնդրութեան. յօշեաց զերկու եզինս իւր և բաժանեալ 'ի բազում մասունս՝ առաքեաց 'ի ձեռն սուրհանդակաց յամենայն ցեղս Իսրայէլի ասելով. Որ ոք ոչ ելանիցէ 'ի մարտ ընդ մեզ, ըստ այդմ օրինակի արասցեն զեզինս նորա:

187. Ապա կոչեալ առ ինքն զՍամուէլ՝ եւ գնաց 'ի Բեզեկ: Իբրև լուան Իսրայէլացիք ըզպատուէր Սաւուղայ՝ հնազանդեալ դիմեցին յամենայն կողմանց 'ի լեառն Բեզեկայ մերձ 'ի բանակն Ամմոնացւոց: Անդ հանդէս արար Սաւուղ զօրացն և գտան արք վեց հարիւր հազար, և եօթանասուն հազար 'ի ցեղէն Յուդայ: Ի նմին աւուր, որ էր վեցերորդ օր ժամադրութեան, դարձոյց Սաւուղ զհրեշտակս Յաբիսայ ազդ առնել բնակչաց, թէ վաղիւ 'ի բարձրանալ արեգական եղիցի նոցա փրկութիւն 'ի թըշնամեաց: Նոքա ուրախացան յոյժ յոյժ. այլ առ 'ի չտալ կարծիս թշնամեաց՝ իբր յուսահատ լեալ զեկուցին նոցա, թէ 'ի վաղիւ անդր ունին բանալ զդրունս քաղաքին:

Իսկ Սաւուղ սկսաւ գիշերայն յառաջ խաղալ անձայն, և յառաւօտուն հորդան տուեալ զօրաց իւրոց՝ յանկարծ անկաւ 'ի վերայ թշնամեաց, և ինքն մխեցաւ 'ի մէջ բանակի նոցին: Անդ մինչև ցօր հասարակ զամենայն բանակ նոցա 'ի սայր սուսերի մաշեալ սպառեաց զքաղաքն: Ի քաջագործութենէ աստի յարեցաւ

սիրտ ամենայն ժողովրդեան առ Սաւուղ։ Յայն-ժամ կոչեաց Սամուէլ զամենայն զօրս և զժողո-վուրդն 'ի Գաղգաղա, և օծ հանդիսիւ զՍաւուղ միւսանգամ 'ի թագաւոր առաջի տեառն. և զոհեցին զոհս խաղաղականս և ուրախ եղեն ա-մենեքին հանդերձ նորապսակ թագաւորաւ:

188. Զկնի այսր հանդիսի ընտրեաց Սաւուղ առս երեք հազար իւր թիկնապահս, զի լիցին միշտ առ նմա. յորոց հազարմի ետ որդւոյ իւրում Յովնաթանու և առաքեաց 'ի քաղաք իւր 'ի Գա-բաա. և ինքն արձակեալ զժողովուրդն չոգաւ եր-կու հազարօք 'ի լեառն Բեթէլայ: Եկեալ Յովնա-թան զօրօքն իւրովք 'ի Գաբաայ խորհեցաւ թա-փել զամրոցն՝ որ մերձ էր 'ի թագաւորականքա-ղաքն՝ 'ի ձեռաց փղշտացւոց. և զի հանդերձ բազ-մահանճար ձիւքն էր և ճշմարիտ աստուածա-պաշտ, ապաւինեալ յօգնականութիւն տեառն յեղակարծումն մխեցաւ 'ի ներքս յամրոց անդր հազարօք իւրովք, և կոտորեալ զամենայն զօրսն տիրեաց ամրոցին: Զայս լուր հաչակեալ Սաւու-ղայ 'ի մէջ ամենայն ժողովրդեան. պատուի-րեաց նոցա գումարել 'ի Գաղգաղա. անդ կո-չեաց և զՍամուէլ գալ մատուցանել զողջակէզ տեառն: Իբրև յապաղեաց Սամուէլ զգալն, և այլազգիք գունդ կազմեալ յարձակեցան 'ի վերայ Իսրայելացւոց, Սաւուղ առ նեղսրտու-թեան ոչ կամելով սպասել Սամուէլի՝ արար զոհս, անցեալ զպատուիրանաւ տեառն: Զկնի մի ժամու եհաս և Սամուէլ անդ, և յանդի-մանեաց զանհնազանդութիւն նորա. որ ամպա-տուիրեալ էր 'ի սկզբան անդ չմատուցանել ինք-նին զողջակէզս և զոհս: Եւ ասէ ցՍաւուղ. Մի կացցէ թագաւորութիւն քո: Եւ անտի Սա-մուէլ և գնաց 'ի Գաբաա. անդր փութացա-հասանել և Սաւուղ վեց հարիւր արամբք 'ի

պաշտպանութիւն քաղաքին, զի յորուցեալ էին այլազգիք 'ի վերայ նորա. անդ էր և Աքիմելէք քահանայ թոռն Փենեէսի որդւոյ Հեղեայ, և տապանակն Աստուծոյ՝ զոր եա բերել Սաւուղ 'ի բանակ անդր:

189. Իբրև պատրաստէին այլազգիք ելանել 'ի մարտ, Յովնաթան որդի Սաւուղայ զօրացեալ 'ի տեառնէ ել ընդ կապարճակրին 'ի լեառն՝ ուր էին այլազգիք, և սկսաւ հարկանել զնստանեալսն և բռնաքարամբք, և սպան արս քսան: Իսկ այլք ահիւ մեծաւ ըմբռնեալք 'ի փախուստ դիմեցին, և խռովեցաւ ամենայն բանակն, զի ահ տեառն անկաւ 'ի վերայ նոցա. յորմէ չփոթեալ այսր անդր խուճապէին և ըզմիմեանս կոտորէին:

Լուեալ Իսրայէլացւոց զաղմուկ չփոթի այլազգեաց, եկին միաբան ընդ Սաւուղայ և ընդ Յովնաթանու, և ոլորեցին բովանդակ այնմ մասին բանակին՝ որ առ Գաբաաւ, և սպառազինեալ զինուք նոցա յարձակեցան 'ի մեծ բանակն այլազգեաց: Որոց ոչ կարացեալ զդէմ ունել Իսրայէլացւոց 'ի փախուստ դարձան. և նոցա զհետ մտեալ փախստէից՝ կոտորեցին զնոսա անխնայ մինչև ցԱյելոն քաղաք: Անդ զաւեղի առին Իսրայէլացիք. զի վաստակեալ և նքղեալ էին:

190. Իսկ Սաւուղ առ 'ի գլուխ տանել զյաղթութիւնն՝ հրաման եհան ընդ նզովիւք՝ չուտել ինչ բնաւ ումեք մինչև ցերեկոյ: Նա եղև յանցանել նոցա ընդ անտառ մի, տեսին՝ զի փարք մեղուաց գործեալ էին 'ի փորոքս ծառոց խորխոխ մեղու, որ յառատութենէն հոսէր 'ի վայր. բայց ոչ ոք իշխեաց ուտել անտի՝ երկուցեալ յերդմանէն: Իսկ Յովնաթան ոչ գիտելով զայն՝ վառեալ 'ի բորբոք մարտի՝ ձգեաց ըզգաւազան իւր 'ի խորխոխ անդր և առեալ ստ-

կաւ ինչ անտի եդ 'ի բերան ։ Որով թէպէտ և փոքր մի ոգի առեալ զօրացաւ, բայց մաշու պարտական դատեցաւ սակս անզգոյշ երդման հօրն. սակայն ազատեաց զնա զօրն 'ի ձեռաց Սաւուղայ ։ Յետ այսորիկ դարձոյց Սաւուղ զզէնս ընդդէմ շրջակայ թշնամեաց, և անդադար պատերազմէր ընդ նոսա երբեմն անձամբ, և երբեմն 'ի ձեռն զօրապետաց. որոց գլուխ էր Յովնաթան ։

191. Յառաջնում ամի թագաւորութեան Սաւուղայ յայտ արար նմա Սամուէլ զդատակնիք տեառն՝ վասն սպառասպուռ ջնջելոյ զթագաւորութիւնն Ամաղեկացւոց, մինչև չմնալ յիշատակի նոցա 'ի ներքոյ երկնից. զի լցեալ էր չափ անօրէնութեան նոցա անդստին 'ի ժամանակէն Մովսէսի (89) ։ Առեալ Սաւուղայ զայս պատուէր տեառն՝ վաղվաղակի գումարեաց զզօրս 'ի Գաղգաղա չորեքհարիւր հազար, և երեսուն հազար 'ի ցեղէն Յուդայ ։ Արդ չու արարեալ եհաս մերձ յարքայանիստ քաղաքն Ամաղէկ, և գիշերային դարանամուտ եղեալ՝ յեղակարծումն յարձակեցաւ, եհար և քանդեաց զամենայն երկիր նոցա, և կալեալ զԱգագ թագաւոր նոցին ապրեցոյց. զոր ըստ հրամանին Աստուծոյ պարտէր առ տեղ սատակել ։ Նոյն օրինակ և զօրք իւր պահեցին զընտիր ընտիր արջառոց և խաշանց, հանդերձից և զարդուց ։ Դարձաւ Սաւուղ 'ի լեառն Կարմելոս, և զմեծագործութիւն յաղթութեանն այնորիկ անձին սեփականեալ՝ կանգնեաց կամար յաղթական առ 'ի յիշատակ ։

192. Յայնժամ յայտնեաց Աստուած Սամուէլի զդատակնիք իւր բառնալոյ զթագաւորութիւնն Սաւուղայ սակս անհնազանդութեան նորա ։ Ընդ որ 'ի խոր խոցեցաւ Սամուէլ և ա-

ղաչեաց զԱստուած վասն Թագաւորին. և կան_
խեալ ընդ առաւօտն գնաց առ Սաւուղ և յան_
դիմանեաց զնա վասն զանցանելոյն զպա_
տուիրանաւ տեառն, զի կենդանի պահեաց
զԱգագ և ագահեաց յաւարն Ամաղեկացւոց.
յուշ արար նմա գործեալ զանչափ բարերարու_
թիւնս արարչին, որ զնա 'ի նուաստ տոհմէ յայն
բարձրութիւն վերաբերեաց, և նա անշնորհազանդ
և ապերախտ գտաւ առ արարիչն: փոխանակ
զի արհամարհեցեր, ասէ, զբան տեառն, ար_
համարհեաց է զքեզ տէր չլինել թագաւոր: Խնդ_
րեաց Սաւուղ 'ի Սամուէլէ, զի աղաչեսցէ զտէր
վասն նորա, և գնասցէ ընդ նմա 'ի բանակն:
Իբրև ոչ կամեցաւ Սամուէլ երթալ ընդ նմա,
բուռն եհար Սաւուղ զամանոյ վերարկուի նորա՝
կամեցեալ արգելուլ զնա, և պատառեաց զայն:
Ասէ ցնա Սամուէլ. Այսպէս պատառեսցէ տէր
զթագաւորութիւնդ 'ի ձեռաց քոց, և տացէ ըն_
կերի քում: Իբրև կարի աղաչեաց զնա Սաւուղ,
զիջաւ Սամուէլ, և գնացեալ ընդ նմա երկիր ե_
պագ Աստուծոյ. ապա հրամայեաց ածել զա_
ռաջեաւ զԱգագ թագաւորն Ամաղեկայ. եհար
սպան զնա առաջի տեառն, և ինքն գնաց 'ի տուն
իւր յԱրիմաթեմ տխրագին. նոյնպէս և Սա_
ւուղ 'ի քաղաք իւր 'ի Գաբաա:

## ԳԼՈՒԽ ԺԱ

### Օծումն Դաւթի, և մահ Սաւուղայ :
Ա. Ա. 2941

193 . Սամուէլ մինչդեռ սգայր անմխիթար 'ի վերայ Սաւուղայ, մխիթարեաց զնա տէր . և հրամայեաց երթալ 'ի Բեթղեհէմ առ Յեսսէ յազգէն Յուդայ' և օծանել զմի յորդւոց նորա 'ի թագաւոր Իսրայէլի: Եւ նա գնացեալ 'ի Բեթղեհէմ' հրամայեաց բանիւ տեառն զի ընդ ժողովրդեան սրբեսցի և Յեսսէ և որդիք նորա, որք և կոչեցան 'ի զոհն: Յետ զոհագործութեան գնաց Սամուէլ 'ի տուն Յեսսեայ ճաշել անդ, և յայտնեաց Յեսսեայ զպատճառ գալստեան իւրոյ: Յեսսէ ըստ հրամանի նորա մատոյց զեօթանեսին որդիս իւր առ նա . և ոչ ընդ մին 'ի նոցանէ հաճեցաւ Սամուէլ: Ապա ետ բերել 'ի դաշտէ զկրսեր որդին զԴաւիթ պատանի կայտառ և կորովի, կարմրագեղ և վայելչագեղ: Յայնժամ Սամուէլ ազդեալ 'ի տեառնէ' եառ զեղջիւրն իւղոյ և օծ զնա 'ի մէջ եղբարց իւրոց: Ապա գնաց Սամուէլ 'ի տուն իւր, թողեալ զԴաւիթ յիւրում ռամկական վիճակի . որ էր յայնժամ իբր քսան և երկուց ամաց :

194. Եւ յորէ անտի խաղաց Հոգի տեառն 'ի վերայ Դաւթի' ճոխացուցեալ զնա բազմապատիկ ձիրիւք հանճարոյ և զօրութեան զոր ունէր 'ի բնէ, մինչև սատակել զարջ և զառիւծ : Ընկալաւ և զպարգև մարգարէութեան, և զշնորհս երգելոյ քաղցրանուագ զօրհնութիւնս սաղմոսաց: Իսկ 'ի Սաւուղայ վերացաւ Հոգի տեառն, և լքեալ 'ի խնամոցն Աստուծոյ այսահարեցաւ:

կարեկցեալ պաշտօնէից ընդ այս աղէտալի վիճակ ազգային իւրեանց՝ յորդոր մատուցին նմա ածել զԴաւիթ քաջարուեստ երաժիշտ . 'ի սփոփել զնա: Եկն Դաւիթ և եմուտ յարքունիս, և սիրեցաւ յոյժ յարքայէ, և եղև նորա կապարճակիր: Յորժամ ախտ մելամաղձին 'ի վերայ հասանէր Սաւուղայ՝ ամբոխելով զներքին հիւթս ներգործութեամբ դիւին, առնոյր Դաւիթ զքընար իւր, և քաղցրանուագ սաղմոսելով ցրուէր զդառնամաղձ հիւթն և խաղաղէր զնա: Յետ ամաց ինչ, որպէս երևի, դարձաւ Դաւիթ 'ի տուն հօր իւրոյ. և հայր նորա առաքեաց զերիցագոյն որդիս իւր փոխանակ նորա:

195. Զայնու ժամանակաւ փղշտացիք ահեղ պատրաստութեամբ ելին պաշարեցին զՍոկքով քաղաք 'ի վիճակին Յուդայ: Ընդ եհաս Սաւուղ հանդերձ զօրօք, և ճակատեցան կային ընդդէմ միմեանց, այլ ոչ իշխէին ելանել 'ի մարտ: Գեթացի ոմն Գողիաթ անուն այր զօրաւոր և հուժկու վիթխարի հասակաւ, բարձր քան չափու երկուց մարդոց՝ յառաջ մատուցեալ 'ի ճակատէ այլազգեաց, վստահացեալ յահեղ սպառազինութիւն իւր և 'ի զօրութիւն բազկացն՝ մերձեցաւ 'ի ճակատ Իսրայէլի, և խնդրէր զայր մի ելանել և մենամարտել ընդ նմա: Ընտրեցէք, ասէ, զայր մի . եթէ կարասցէ հարկանել զիս, եղիցուք մեք ձեզ 'ի ծառայս . ապա թէ ես հարից զնա . դուք ծառայեսջիք մեզ: Զայս հրաւէր երկիցս յաւուրն առնէր զաւուրս քառասուն: Սաւուղ և զօրականք իւր տեսանել զայրն ահաւոր՝ զահի հարկանէին, և ոչ ոք իշխէր ելանել առաջեան նմին:

196. Ընդ այն աւուրս առաքեաց Յեսսէ զԴաւիթ 'ի բանակ անդր՝ բերել նմա զողջոյն վասն որդւոց իւրոց, որք էին 'ի բանակի ընդ Սա-

ւուղայ ։ Եհաս Դաւիթ 'ի բանակն, և 'ի հար-
ցանելն վասն եղբարց իւրոց՝ ահա ել Գողիաթ,
խօսէր և մեծաբանէր նախատելով զԻսրայէլ։
Պատմեցին արքն՝ որք խօսէին ընդ նմա, թէ խոս-
տացաւ արքայ տալ զդուստրն իւր կնութեան,
որ ոք սպանանիցէ զայլազգին ։ Դաւիթ վառա-
հացեալ 'ի զօրութիւնն Աստուծոյ, ասէ. Զի՞նչ է
այլազգին այն անթլփատ, զի նախատեաց զճա-
կատս Աստուծոյ կենդանւոյ։ Պատմեցան Սաւու-
ղայ բանք Դաւթի, և ածին զնա առաջի նորա։
Եւ ասէ Դաւիթ ցՍաւուղ. Մի՛ անկցի սիրտ
տեառն իմոյ 'ի վերայ իւր. ծառայ քո երթի-
ցէ և մարտիցէ ընդ այլազգւոյն ընդ այնմիկ.
զի թէպէտ մանուկ եմ ես. բայց ցայսօր առանց
զինուց պատառեցի զարջս և զառիւծս. եղիցի
և այլազգին այն իբրև զմի յայնցանէ. տէր Ա-
տուած ապրեցուցանէ զիս 'ի ձեռաց նորա։ Զար-
մացեալ Սաւուղայ ընդ արիութիւն պատանւոյն՝
ասէ. Երթ, տէր եղիցի ընդ քեզ։

197. Յայնժամ էառ Դաւիթ զցուպ իւր
'ի ձեռն, և ընտրեաց հինգ քարինս ողորկս 'ի
հեղեղատէ անտի, և զպարսն 'ի ձեռին ունե-
լով էջ յասպարէզ մարտին, մինչ Գողիաթ մե-
ծաբանէր։ Իբրև ետես Գողիաթ զԴաւիթ պա-
տանի գեղադիտակ՝ արհամարհեաց զնա ասելով.
Միթէ շո՞ւն իցեմ ես, զի ցպով և քարամբք գաս
'ի վերայ իմ. Ասէ Դաւիթ. Վատթար ևս ես քան
զշուն ։ Կատաղեալ այլազգւոյն յարձակեցաւ
'ի վերայ Դաւթի. յայնժամ անձապարեալ նո-
րա՝ շարժեաց ձեռամբ զպարսատիկ իւր, և ե-
հար կշտակի զճակատ այլազգւոյն և կործա-
նեաց զահաւոր հսկայն. ապա ընթացեալ առ
զսուսեր նորա և եհատ զգլուխ նորին։ Զայն տե-
սեալ այլազգեաց՝ 'ի փախուստ դիմեցին. իսկ
զօրք Իսրայէլի զհետ պնդեալ նոցա հարին կո-

տորեցին զնոսա։ Երբ Դաւիթ զգլուխ Գողիաթու առ Սաւուղ, և փառաւորեցաւ յոյժ։ Անդ կապեցաւ ոգի Յովնաթանու որդւոյ Սաւուղայ ընդ ոգւոյն Դաւթի՝ սիրել զնա յաւերժական սիրով, և զամենայն արքունական զարդս և զէնս մերկացեալ յանձնէ զգեցոյց Դաւթի։

198. Վասն այսր քաջութեան Դաւթի իբրև երգէին պարաւոր կանայքն՝ եթէ «Եհար Սաւուղ զհազարս, և Դաւիթ զբիւրս», պատճառս կալաւ գժոխային նախանձն Սաւուղայ ընդդէմ Դաւթի. զոր առեալ դարձեալ յարքունիս պատրուակաւ պատուոյ, այն ինչ առ նախանձու 'ի գիւապլուկ ախտէն տանջէր՝ ձգեաց երկիցս զնիզակ իւր 'ի Դաւիթ, և Դաւիթ որ գիտէր նմա քնարաւն՝ խոյս տուեալ ազատեցաւ։ Ապա կացոյց զնա զօրապետ տալով նմա արս հազար, և արձակեաց ընդդէմ այլազգեաց, զի թերևս մեռցի 'ի նոցանէ. Իսկ Դաւիթ մեծաւ քաջութեամբ և իմաստութեամբ յաղթեալ թշնամեաց՝ դարձաւ փառօք և եղև սիրելի ամենեցուն. յայնժամ ստիպեցաւ և Սաւուղ տալ զդուստրն իւր նմա 'ի կնութիւն։ Այլ առ նախանձու ատելութեան իւրոյ երրորդ անգամ կամեցաւ սպանանել զնա գեղարդեամբն և վրիպեցաւ, քանզի վաղեաց Դաւ. իթ արտաքս և փախեաւ 'ի տուն իւր, առաքեաց Սաւուղ զօրս 'ի տուն նորա ըմբռնել զնա՝ զի սպանցէ. Իսկ կինն Դաւթի յառաջագոյն զգացեալ յուղարկեաց զնա գիշերայն։ Եւ գնացեալ Դաւիթ առ Սամուէլ պատմեաց նմա զամենայն. և նովաւ հանդերձ չոգաւ 'ի Նաւաթ Հռամայ յուսումնարանն որբազան բանաստեղծութեան և գիտութեանց։ Այսպիսի ուսումնարանք կոչէին տուն մարգարէից. որպէս և ուսանողք՝ որդիք մարգարէից, որոց առաջնորդ էր Սամուէլ։

199. Անտի չոքաւ Դաւիթ առ Յովնաթան
սիրելին իւր. որ և խոստացաւ պաշտպանել
նմա. այլ իբրև ետես եթէ լի է հայրն չար նա-
խանձու և մահու չափ թշնամութեամբ, հե-
ռացոյց անտի զԴաւիթ. և նա չոքաւ նախ 'ի
Նոմբաա Աքիմելէք քահանայապետ. և զի էր 'ի
վերջին կարօտութեան՝ առեալ 'ի նմանէ զհացն
առաջաւորութեան վասն ճանապարհին, և զսու-
սերն Գողիաթու, էանց յերկիրն այլազգեաց առ
Անքուս թագաւոր Գեթայ, և պատուասիրեցաւ
'ի նմանէ: Այլ իբրև շշունջ եղև 'ի մէջ իշխա-
նացն Անքուսայ վասն Դաւթի, նա կասկածեալ
եթէ չարի ինչ հանդիպեսցի 'ի նոցանէ, ձևա-
ցոյց զանձն յիմար և այսահարեալ առաջի ար-
քային. և մերժեալ անտի՝ եկն յերկիրն Իսրայէ-
լի և ապաւինեցաւ յայրն Ոդողոմայ յերկրին Յու-
դայ: Անդ ժողովեցան ազգականք և ծանօթք նորա
որք էին չորեքհարիւր. և ամենեքեան զինեալք
պնդակազմ կային ընդդէմ հնարից Սաւուղայ:
200. Իսկ Սաւուղ դառնացեալ 'ի խորհուրդս
իւր՝ իբրև լուաւ եթէ Աքիմելէք քահանայա-
պետ ետ Դաւթի հաց և զսուսերն Գողիաթու,
սրամտեալ կոչեաց զքահանայապետն առաջի
իւր և սպան զնա հանդերձ այլ ևս երեք հարիւր
և չորս քահանայիւք. և առաքեաց զօրս և 'ի սուր
սուսերի մաշեաց զամենայն բնակիչս Նոմբայ քա-
ղաքի, և զամենայն շունչ կենդանի: Աբիաթար
քահանայ որդի Աքիմելէքայ ևեթ պահեցաւ
'ի կոտորածէ անտի, և փախեաւ զհետ Դաւթի:
Սաւուղ խոլապա կատաղեալ ատելութեամբն՝
ոչ յագեցաւ այնքան արեան ճապաղեօք անմե-
ղացն. և մոռացեալ ամենևին զպատիւ անձին,
ել խմբովին թափառել ընդ լերինս և ընդ
ձորս 'ի խնդիր Դաւթի առն միոյ առականի:
Այլ Աստուած զի լուսափայլ պահեսցէ զա-

ռաքինի հոգին՝ յամօթ և 'ի նախատինս սարա-
պարտ վրէժխնդրութեան, մանաւանդ կրկին ան-
գամ զՍաւուղ 'ի ձեռս նորա։ Ընդ չքնաղ հան-
գիստացաւ աստուածպաշտութիւն Դաւթի. զի
ուր առընթեր կայր նմա ժամ բարեպատեհ սպա-
նանել զՍաւուղ, գթայր 'ի նա. Օծեալ տեառն
է՝ ասաց, և եթող. չառ համարեալ զայն, զի փոքր
մի մեկուսացեալ 'ի նմանէ՝ յանդիմանեաց զնա
քաղցր բանիւք. մինչև ամօթել զնա 'ի խոստովա-
նութիւն անօրէնութեանց իւրոց և անոխակա-
լութեանն Դաւթի։

201. Յաւուրսն յայնոսիկ մեռաւ այրն Աս-
տուծոյ մեծն Սամուէլ մարգարէ եօթանասուն
և եօթն ամաց. և ամենայն Իսրայէլ լացին և
կոծեցին զնա, և թաղեցին մեծահանդէս փա-
ռօք յԱրիմաթեմ։ Իսկ Դաւիթ ամուսնացեալ
ընդ Աբիգեայ կնոջ Նաբաղայ պատուհասելոյ
յԱստուածոյ վասն անարգելոյ նորա զԴաւ-
ւիթ՝ և ինքն չոգաւ գործեալ 'ի Գէթ առ Անքու-
սայ վեցհարիւր արամբք. որ և ընկալաւ զնոսա
բազում մարդասիրութեամբ և բնակեցոյց 'ի Սի-
կելակ քաղաք փոքրիկ՝ ըստ խնդրոյ Դաւթի։

Յետ այսորիկ ամենայն Փղշտացիք պատրաս-
տեցան 'ի պատերազմ ընդդէմ Իսրայէլացւոց։
Անքուս կոչեաց զԴաւիթ առ ինքն և կամէր
տանել զնա 'ի պատերազմ։ Տագնապեցաւ սիրտ
Դաւթի, զի առաջի կայր նմա համագունդ ընդ
թշնամիս մարտնչել ընդդէմ ազգին իւրոյ։ Եւ 'ի
լինել հակառակութեան 'ի մէջ նախարարաց
վասն այսր բանի՝ ազատ կացուցաւ նա յԱնքուսայ
'ի ծառայութենէ անտի, և չոգաւ 'ի քաղաքն իւր
'ի Սիկելակ. և տեսեալ զքաղաքն այրեցեալ յԱ-
մաղեկացւոց, յափշտակեալ և գերի վարեալ
զբնակիչսն ընդ երկու կանանց իւրոց. լացին ա-
մենեքեան։ Այլ Դաւիթ հրաման առեալ 'ի

տեառնէ, պնդեցաւ զհետ դերչացն, և կոտորեալ զնոսա էառ զամենայն աւարն և դարձաւ:

202. Իսկ այլազգիք յետ մեծի պատերազմութեան եկին 'ի վերայ Իսրայէլի: Սաւուղ խաղացոյց 'ի լերինս Գեղբուայ զբանակ իւր մեծազօր 'ի սկզբան, այլ օր ըստ օրէ վատթարանջեալ անափ զօրացն՝ տկարացաւ զօրութիւն նորա: Եւ զի չունէր առընթեր ոչ եփուտ՝ ոչ քահանայ և ոչ մարգարէ, ինքնին եհարց խորհուրդ 'ի տեառնէ. այլ ոչ ընկալաւ պատասխանի: Նմին իրի յուսահատեալ չոգաւ գիշերայն առ կին մի վհուկ՝ զի դիւթեալ և հանցէ նմա զոր ասասցէ: Իբրև կարդեաց կինն զգործս դիւթութեան, արար Աստուած սքանչելիս 'ի 'ի դարձ մեղացն Սաւուղայ, երևեցուցեալ անդ ծերունի մի փառաւոր արկեալ զիւրև կրկնոց: Գիտաց Սաւուղ եթէ Սամուէլ էր, և անկեալ երկիր եպագ նմա: Ասէ ցնա ոգին Սամուէլի. Զի՞ եկիր անհանգիստ առնել զիս: Ասէ Սաւուղ. Աստուած հեռացաւ յինէն. և ես մնացի անօգնական և դիմեցի առ քեզ՝ զի ցուցցես ինձ թէ զինչ գործեցից: Ասէ ցնա Սամուէլ. Բարձեալ է 'ի քէն թագաւորութիւն քո և տուեալ Դաւթի. փոխանակ զի ոչ լուար ձայնի տեառն. վաղիւ դու և որդիք քո ընդ քեզ անկցին. և զբանակս Իսրայէլի մատնեսցէ տէր 'ի ձեռս այլազգեաց: Զայս ասացեալ եղև աներևոյթ: Եւ Սաւուղ յերկիւղ մահու ըմբռնեալ անկաւ 'ի գետին. և յարուցին զնա ծառայք նորա և ածին 'ի բանակն:

203. Ի լուսանալ առաւօտուն յարձակեցան այլազգիքն 'ի վերայ Իսրայէլացւոց և 'ի փախուստ դարձուցին. և զհետ պնդեալ նոցա հարին կոտորեցին զնոսա մինչև հասին 'ի գունդն Սաւուղայ: Անդ հարին զՅովնաթան, զԱմինադաբ և զՄելք-

քիսաւէ զօրագլխն Սաւուղայ : Վիրաւորեցաւ և Սաւուղ, որ մինչև ցյետին շունչն պատերազմէր քաջութեամբ. այլ տեսեալ զմահաբեր վէրս իւր՝ խնդրեաց զի սպանցէ զնա պատանեակն իւր կապարճակիր, որպէս զի մի՛ անկցի 'ի ձեռս այլազգեաց: Իբրև հրաժարեցաւ պատանին, եդ ինքն սուր ընդ պորտովն, անկաւ 'ի վերայ և մեռաւ. անդէն վճարեցաւ և պատերազմն:

204. Զայնու ժամանակաւ պայազատեաց 'ի Հայս յետ Արբունեայ Պերճ երկրորդ՝ զամս քառասուն. և յԱսորեստան տիրէր Դերկիւղաս. իսկ Աղետոս եղև առաջին Թագաւոր Կորնթացւոց [1]:

## ԳԼՈՒԽ ԺԲ

### Թագաւորութիւն Դաւթի:
Ա. Ա. 2956

205. Յետ մահուան Սաւուղայ իբրև անցին աւուրք երկու, եհաս գուժկան առ Դաւիթ 'ի Սիկելակ, որ ասէր զանձնէ թէ ես սպանի զՍաւուղ ըստ խնդրոյ նորա, և ահա բերի զթագն և զապարանջանս նորին առ քեզ: Զայս ասէր ակն ունելով վարձուց հատուցման: Իսկ խոր խոցեցաւ Դաւիթ վասն մահուան Սաւուղայ և Յովնաթանու. և առ սաստիկ կսկծանաց սրտին հրամայեաց սպանանել զայրն՝ վասն ձգելոյն զձեռն յօծեալ տեառն ըստ վկայելոյ նորա: Ապա պատառեաց զհանդերձս իւր Դաւիթ և պահեաց մինչև ցերեկոյ հանդերձ ամենայն արամբք իւրովք: Արար 'ի վերայ նոցա ողբ գամբանական

1 Եւսեբ. ժամ. ամ Ասր. Ճծէ.

ցուցանէին բանաստեղծութեամբ և անուանեալ զայն Աղեղնաւորութիւն։ Յետ այսր ամենայնի կամեցեալ գիտել վասն անձին իւրոյ՝ թէ զինչ առնելոց էր, եհարց 'ի տեառնէ 'ի ձեռն Աբիաթարայ քահանայապետին. եթէ ելանիցէ յերկիրն Յուդայ։ Եւ պատասխանի ետ, ելանել 'ի Քեբրոն առ Երուսաղեմաւ 'ի վիճակին Յուդայ։

206. Յայնժամ եւ Դաւիթ 'ի Սիկելակայ վեցհարիւր արամբք և գնաց 'ի Քեբրոն։ Եւ էր ինքն յայնժամ ամաց երեսնից։ Ընդ ինքնայորդոր ժողովեցան ամենայն իշխանք ցեղին Յուդայ, և հանդիսապէս օծին զնա թագաւոր 'ի վերայ Յուդայ։ Պատմեցաւ Դաւթի եթէ արք Յաբիսայ Գաղաադացւոց իբրև լուան՝ եթէ այլազգիք հատեալ զգլուխ Սաւուղայ, տարեալ 'ի քաղաքս իւրեանց և եդեալ են 'ի տան Դագոնայ, իսկ զմարմին նորա և զմարմինս որդւոց նորա կախեալ են զպարսպէն Բեթսանայ, առ բառնալոյ զնախատինսն՝ յարեան արք զօրաւորք և գնացին գիշերայն, առին զմարմինս նոցա և բերեալ 'ի Յաբիս թաղեցին պատուով։ Դաւիթ հաճեալ ընդ այս գործ ողորմութեան գովեաց զնոսա և յորդորեաց կալ մնալ հաւատարիմ ընդ նմա իբրև ընդ Սաւուղայ։ Եւ խոստացաւ պաշտպանել նոցա։

207. Էր յայնժամ որդի մի մնացեալ Սաւուղայ ամաց երեսուն և հնգից Յեբուսթէ անուն այր հանդարտ և անարի. զոր կամեցաւ թագաւորեցուցանել 'ի վերայ Իսրայէլի զօրապետն Սաւուղայ Աբեններ՝ այր զօրաւոր և մեծահանճար։ Նմին իրի ժողովեաց զզօրս իւր 'ի Մանայեմ քաղաք, և առեալ զՅեբուսթէ տարաւ 'ի բանակն։ Ամենեքեան միաբան ընկալան զնա 'ի թագաւոր. ապա առ սակաւ սակաւ ամենայն

ցեղք Իսրայէլի հնազանդեցան նմա, բաց 'ի ցեղէն Յուդայ, որոյ թագաւոր էր Դաւիթ :

Յետ հինգ ամաց գրգռեցաւ պատերազմ 'ի մէջ երկուց թագաւորացս . յորում 'ի փախուստ դարձան զօրք Աբեններայ յերեսաց Յովաբայ զօրապետին Դաւթի : Անդ Ասայէլ եղբայր Յովաբայ պատանի թեթեւընթաց պնդեցաւ զհետ Աբեններայ . իբրեւ մերձ էր հասանել նմա, խրատեաց զնա Աբեններ յետս դառնալ . այլ 'ի չանսալ նորա՛ եհար Աբեններ և սպան զնա : Յորմէ ատելութիւն մեծ ծագեցաւ 'ի մէջ երկուց զօրավարաց, և ձգեցաւ ընդ ամս երկուս մինչև ցմահ Աբեններայ : Զի թշնամացեալ Աբեններ ընդ Յեբուսթէ թագաւոր իւր վասն հարճին Սաւուղայ, յօժարեցաւ անցանել 'ի կողմն Դաւթի : Զայն լուեալ Յովաբայ՝ դաւով խմն մխեաց զսուրն 'ի անակուշտ նորա և սպան զնա : Ընդ որ բարկացաւ յոյժ Դաւիթ և անէծ զՅովաբ վասն մարդասպան դաւաճանութեանն : Այլ մեծահանդէս յուղարկաւորութեամբ թաղեցին զմարմին Աբեններայ . և եղաց արքայ 'ի վերայ գերեզմանի նորա, և սուգ զգեցաւ ամենայն ժողովուրդն :

208. Յետ այնորիկ իբրեւ տեսին երկու թիկնապահք Յեբուսթեայ, եթէ մեռաւ Աբեններ նեցուկն թագաւորութեան նորա, խորհուրդ չար խորհեցան 'ի վերայ արքային իւրեանց . զի մտեալ 'ի դահոյս, ուր ննջէր, հարին և սպանին զնա, և զգլուխն տարան առ Դաւիթ 'ի Քեբրոն, և պատմեցին նմա՝ թէ զիարդ սպանին զնա : Զայրացաւ Դաւիթ յոգի իւր իբրեւ ետես զգլուխ Յեբուսթեայ, և առ դառնակսկիծ ցաւոց սրտին անդէն հրամայեաց կոտորել զոտս և զձեռս անօրինացն և կախել զնոսա : Այլ հրաման ետ արքայ թաղել զգլուխ Յեբուսթեայ

'ի գերեզմանին Աբեններայ: Ամաց քառասուն և երկուց էր Յեբուսթէ, և թագաւորեաց ամս եօթն:

209. Յետ մահուան Յեբուսթեայ զօրավարք և զօրք յամենայն ցեղից ժողովեցան 'ի Քեբրոն առ Դաւիթ. որք ընդ ամենայն էին երեք հարիւր քառասուն հազար և չորեքհարիւր քսան և երկու: Այս եկին ծերք և իշխանք ցեղից, որք ուխտեցին յանուն տեառն հաւատարմութիւն և հնազանդութիւն Դաւթի: Նոյնպէս և Դաւիթ խոստացաւ նոցա առաջի Աստուծոյ՝ ամենայն արդարութեամբ առաջնորդել նոցա ըստ օրինաց տեառն, և աներկիւղ մարտնչել ընդդէմ թշնամեաց: Յայնժամ Աբիաթար քահանայապետ էօծ զԴաւիթ թագաւոր 'ի վերայ ամենայն Իսրայէլի: Զկնի երեքօրեայ խրախութեան էառ Դաւիթ զօրս և ել 'ի վերայ ամրակուռ ամրոցին, որ էր վերին մասն Երուսաղէմի. ուր որջացեալ էին 'ի սկզբանէ անտի Յեբուսացիք նախնի բնակիչք նորա: Ընդ խոստացաւ Դաւիթ, թէ որ ոք նախ ելանիցէ յամրոցն, եղիցի իշխան սպարապետ 'ի վերայ ամենայն զօրաց իւրոց: Յառաջ մատեաւ Յովաբ և սլացեալ ընդ պարիսպն եհար սատակեաց զթշնամիս. ապա այլք զկնի նորա հասեալ աւերեցին զամրոցն՝ կոտորեալ զբնակիչսն. որով և Յովաբ կացուցաւ սպարապետ համօրէն զօրաց Դաւթի:

210. Իսկ արքայ Դաւիթ հաճեալ ընդ դիրս տեղւոյն ընդարձակեաց զամրոցն, և շինեաց նոր պարիսպ շուրջանակի ամրացուցեալ զՍիոն լերամբ: Անդ շինեաց և նոր քաղաք, զոր յետոյ լրացոյց Սողոմոն. իսկ յամրոցին կառոյց մեծաշուք արքունի ապարանս, և շուրջ զնովաւ շինուածս մեծամեծս պաշտօնէից և զօրավա-

բաց խրոց։ Եւ յետ շքեղազարդելոյ զամենայն անդ հաստատեաց զաթոռ թագաւորութեան իւրոյ, կոչելով զայն՝ Քաղաք Դաւթի։ Կառոյց և շինեաց մի վասն տապանակի տեառն, և ցանկայր հանել զնա 'ի տանէն Ամինադաբայ և զետեղել անդ 'ի Սիոն։ Նորին աղագաւ արար ժողով մեծ ամենայն իշխանաց և զօրապետաց՝ լսել և զհաճութիւն նոցա փոխադրելոյ զայն 'ի պատրաստեալ տեղին յապահովութիւն և 'ի մեծ յարգութիւն։ Հաւանեցաւ ամենայն ժողովն, և ամենեքեան գովեցին զարքայ վասն բանին այնորիկ։

211. Այսպ անհամար բազմութեամբ գնացեալ հանին զտապանակն տեառն 'ի տանէ Ամինադաբայ և եդին 'ի վերայ սայլի նորոյ։ Որդիք Ամինադաբայ և եղբարք Ոզայ վարէին զսայլն․ իսկ յառաջոյ և զկնի երթային երգիչք և քնարահարք, և պարագլուխ նոցա Դաւիթ արքայ մեծաւ ցնծութեամբ առաջի տապանակին։ Իբրև հասին 'ի կալն Քեղոնայ հանդերձ եօթանասուն հազար զօրօք և բազմութեամբ քահանայից և ժողովրդեան, թիւրեցին զսայլն։ Յայնժամ Ոզա, որ գնայր առընթեր, ձգեաց զձեռն իւր և կալաւ զտապանակն, զի մի անկանիցի․ և անդէն պատուհասեալ անկաւ առ ոտս սայլին և մեռաւ։ Որով կամեցաւ Աստուած ուսուցանել 'ի սիրտ ժողովրդեան և պաշտօնէից իւրոց երկիւղ և յարգութիւն առ աստուածայինս։ Զահի հարաւ Դաւիթ, և ոչ իշխեաց տանել զնա 'ի տուն իւր, այլ տարաւ զնա 'ի տուն Աբեդդարայ գեթացւոյ․ որ և անդ եկաց ամիսս երիս։

212. Օրհնեաց տէր զտունն Աբեդդարայ՝ տալով նմա յաջողութիւն և առողջութիւն յամենայնի․ զոր տեսեալ Դաւթի քաջալերեցաւ յանձն իւր, և ժողովեալ զամենայն

խորայէ՛ եւ հան անտի զտապանակն մեծաւ երկիւղածութեամբ. զոր բարձեալ քահանայից յուս իւրեանց տանէին սաղմոսիւք եւ օրհնութեամբ. եւ առաջի նորա նուագարանք երգոց 'ի դասս դասս բաժանեալ: Իսկ արքայ զգեցեալ զպատմուճան երգէր ցնծութեամբ զօրհնութիւնս սաղմոսաց եւ պարէր եռանդեամբ: Ընդ ուր եւ անցանէին՝ յամենայն վեց քայլափոխս զենուին զուարակ մի եւ խոյ մի. եւ ընդ ամենայն եօթն զուարակ եւ եօթն խոյս մատուցին զոհ խաղաղական. մինչեւ հասին 'ի լեառն Սիոն: Անդ յարքունի ապարանին հանգուցին զտապանակն 'ի մէջ մեծաշուք խորանի՝ զոր պատրաստեալ էր Դաւիթ: Որ եւ մատոյց զոհս եւ ողջակէզս առաջի տապանակին եւ օրհնեաց զժողովուրդն յանուն տեառն, եւ նոքա կերին զհաց ընդ քաքարի, եւ ապա ցրուեցան:

215. Յետ այսորիկ սկսաւ Դաւիթ նորոգել զամենայն կարգս օրինաց եւ աստուածպաշտութեան, որ խանգարեալ էր 'ի ժամանակս Սաւուղայ: Որոշեաց զպաշտամունս քահանայից եւ Ղեւտացւոց. կարգեաց երգիչս օրհնել զԱստուած ձայնիւ եւ նուագարանաւ առաջի տապանակին. արար եւ զանազան սաղմոս օրհնութեան: Խորհէր շինել եւ մեծաշէն տաճար հրաշալի վասն տապանակին. այլ Նաթան մարգարէ յայտնեաց նմա բանիւ տեառն՝ թէ հաճելի է Աստուծոյ փափաք նորա, բայց շինութիւն տաճարին պահեալ է որդւոյ նորին՝ զոր խոստանայ Աստուած տալ նմա: Ընդ որ 'ի հոգի բերկրեալ Դաւթի եմուտ 'ի խորան տեառն եւ խորին խոնարհութեամբ մատոյց գոհութիւնս առաջի տապանակին: Այսպիսի բարեպաշտական գործովք այնչափ զօրացաւ Դաւիթ, մինչեւ յաղթել ամենայն շրջակայ այլազգեաց ընդար-

ձակեաց զաղքատութիւն իւր ։

214. Յետ այսորիկ խնդրեաց Դաւիթ զՄեմփիբոսթէ որդի Յովնաթանու, որ գոլով հաշմ ոտիւք կայր 'ի յետին աղքատութեան. դարձոյց նմա արքայ զերկիրս հօր նորա, և կարգեաց զնա ուտել հանապազ 'ի սեղանոյ արքային. և այս ամենայն վասն սիրոյ հօր նորին Յովնաթանու ։

Ապա յիշեալ Դաւթի զանիրաւութիւն Ամոնացւոց՝ առաքեաց զՅովաբ պաշարել զՌաբաթ մայրաքաղաք նոցա, և ինքն մնաց յԵրուսաղէմ։ Ընդ յաւուր միում մինչ շրջայր 'ի վերայ տանեաց, ետես զԲերսաբէ կին գեղեցիկ, որ լուանայր 'ի տանիս իւր. անդէն ցանկացաւ ընդ նմա և ած 'ի տուն իւր։ Իբրև ծանեաւ թէ յղացաւ կինն, կոչեաց զայր նորին 'ի բանակէ անտի զՈւրիա քետացի զերևելի զօրավարս իւր. և առաքեաց զնա 'ի տուն առ 'ի ծածկել զմեղս իւր. այլ նա չկամեցաւ ննջել 'ի տան իւրում. Վասն որոյ խորհուրդ վատ խորհեցաւ Դաւիթ՝ պատուիրել Յովաբու, զի կացուսցէ զՈւրիա 'ի վտանգաւոր տեղի պատերազմին ։ Կատարեցան խորհուրդք արքային, և Ուրիա մեռաւ նետահար. և իբրև լուաւ Դաւիթ՝ էառ զկին նորա իւր կնութեան ։

215. Յետ աւուրց ինչ եկն առ նա Նաթան մարգարէ, և յանդիմանեաց զանօրէնութիւն նորա այսու առակաւ. Արք երկու, ասէ, էին 'ի քաղաքի միում, մին մեծատուն և միւսն աղքատ. էր սորա որոջ մի փոքրիկ, զոր և կարի սիրէր. յաւուր միում եկն հիւր առ մեծատունն, որոյ խնայեալ 'ի հօտ իւր՝ յափշտակեաց զորոջ աղքատին և եզեն։ Իբրև լուաւ Դաւիթ՝ ասէ. Կենդանի է տէր. զի որդի մահու է այրն՝ որ արար զայն ։ Յայնժամ ասէ մարգարէն. Դու ես այրն որ զայն արարեր, զի սպաներ զՈւրիա քե-

տայր այր արդար, և Նորին անմեղ արեամբ գնե-ցեր զկին նորա. արդ մի հեռասցի սուր 'ի տանէ քումմէ. և մանուկն անհարազատ մահու մեռցի: Ծանեաւ Դաւիթ զմեծութիւն յանցանացն, և անդէն խորին խոնարհութեամբ և բեկեալ սըր-տիւ գոչեաց, Մեղայ տեառն. և բազում արտա-սուօք ապաշխարեաց զմեղս իւր: Իբրև հիւան-դացաւ մանուկն նորածին, անկաւ Դաւիթ 'ի գե-տին և սրտառուչ պաղատանօք խնդրեաց զա-ռողջութիւն մանկան: Այլ իբրև լուաւ թէ մե-ռաւ մանուկն՝ ել վաղվաղակի 'ի գետնոյն, և եր-կիր եպագ բարերար կամաց արարչին [1]:

216. Ապա ծնաւ նմա Բերսաբէ մանուկ կայ-տառ և գեղեցիկ. և Դաւիթ ուսեալ 'ի յայտնու-թենէ տեառն՝ կոչեաց զանուն նորա Սողոմոն, այսինքն խաղաղարար. որում եդ մականուն և Նաթան մարգարէ՝ Յեդեդի, այսինքն սիրելի տեառն:

Էին յայնժամ Դաւթի երիցագոյն որդիք Ամոն անդրանիկ, Դաղուիա, Աբեսողոմ, Ադո-նիա, Սափատիա, Յեթրամ, և դուստր մի Թամար՝ որ էր համամայր Աբեսողոմայ: Այս պարկեշտ օրիորդ բռնաբարեցաւ յԱմոնէ. զոր լուեալ եղբայր իւր Աբեսողոմ ետ սպանանել զԱ-մոն զեղբայր իւր 'ի խրախճանի անդ իւրում. և ինքն փախեաւ առ Թողմի արքայ Գեսուրայ հաւ իւր: Իբրև լուաւ Դաւիթ զայս դիպուած ողբ-ալի՝ 'ի սուգ և 'ի լաց պաշարեցաւ ինքն և ա-մենայն արքունիք իւր: Եկաց անդ Աբեսողոմ ամս երիս մինչև մեղմացաւ կսկիծ Դաւթի, և նո-րոգեցաւ հայրական սէր իւր առ նա: Միջնորդ եղև և Յովաբ, և հաշտեցոյց զնա ընդ Դաւթի և դարձոյց 'ի տուն իւր:

1 Բ Թագ. ԺԱ. ԺԲ:

## ԳԼՈՒԽ ԺԳ

### ԱԲԷՍՍՂՈՄ։
### Ա. Ա. 2980

217. Աբեսողոմ որդի Դաւթի էր յոյժ գեղեցիկ և փառաւոր. զի 'ի թաթից մինչև ցգլուխն ոչ գոյր 'ի նմա արատ ինչ, այլ ամենայն մասամբ համեմատ և վայելչագեղ։ Առաւել նշանաւոր էին վարսք գլխոյ նորա ոսկեփայլք և նրբաթելք, որ և կշռէր հարիւր ունկի. և ոչ գոյր նմին նման գեղեցկատեսիլ և փառաւոր 'ի մէջ Իսրայէլի։ Այլ որչափ ըստ արտաքին տեսլեան շնորհաշուք էր նա, այնչափ ըստ ներքին զօրութեան խորամանկ. ամբարտաւան և յանդուգն. մինչև յինքն յանկուցեալ զսիրտ Ժողովրդեան՝ յափշտակել կամեցաւ 'ի գլխոյ հօր իւրոյ զԹագ Թագաւորութեան այսու օրինակաւ։ Զի ծանիցէ զնա ամենայն Ժողովուրդն յաջորդ Թագաւորութեան՝ արար իւր կառս, կարգեաց Թիկնապահս և սուրհանդակս։ Յորժամ ելանէր արտաքս հանդիսիւ, արքայակերպ ձոխանայր 'ի տեսս Ժողովրդեան. իսկ յարքունիս մարդասիրութիւն ցուցեալ ամենեցուն՝ համբուրէր զնոսա որք երթային առաքեայ 'ի դատաստան, գթասիրեալ 'ի նոսա և յամենայն կարիս նոցա ձեռնտու զանձն ընծայեցուցեալ. մինչև տիրապետեաց 'ի վերայ սրտից Ժողովրդեան 'ի միջոցի չորից ամաց։

218. Զայս արարեալ՝ եգ այնուհետև 'ի մտի թագաւորել. նախ իւր խորամանկ հնարիւք հրաման էառ 'ի Դաւթէ գնալ 'ի Քեբրոն և զոհել տեառն. զի ուխտեալ էր, ասէր, 'ի-

պանդխտութեանն ։ Իբրև եւ Աբեսաղոմ 'ի Քեբրոն, ազդ արար ամենայն ցեղից Իսրայէլի․ կարգեաց 'ի վերայ լերանց զփողահարս, և պատուիրեաց նս հրեշտակացն, զի 'ի լսել զձայն փողոյ յոր քաղաք և գայցեն՝ աղաղակեսցեն՝ Թագաւորեաց Աբեսաղոմ 'ի Քեբրոն ։ Եւ կոչեաց առ ինքն զԱքիտոփէլ զմեծ և զբազմահանճար խորհրդականն Դաւթի և յինքն յանկոյց զնա, որ յայնժամ թշնամի էր Դաւթի ։ Այնինչ սկսան քահանայք մատուցանել զոհս, և փողահարք հնչեցուցանել փողս 'ի վերայ լերանց, անդէն 'ի սուղ ժամանակի հռչակեցաւ ընդ ամենայն Հրէաստան, և անդադար աղաղակէին 'ի մէջ ժողովրդեան՝ կեցցէ Աբեսաղոմ արքայ ։ Եւ ահա յամենայն կողմանց գնդագունդ ժողովեցան անդր անթիւ բազմութիւն ։

219․ Եհաս գուժկան առ Դաւիթ․ ընդ որ թէպէտ և կարեվէր խոցեցաւ, այլ ծանեաւ զի ձեռն տեառն է չարչարել զնա․ Նմին իրի խնայեալ 'ի ժողովուրդ իւր՝ զի մի՛ վասն նորա զմեանս կոտորեսցեն, փութացաւ ելանել յԵրուսաղէմէ հանդերձ կանամբք և որդւովք, և ամենեքեան հեախոս գնային տրտմագին ։ Իբրև եհաս Դաւիթ 'ի հեղեղատն Կեդրոնի, եհաս անդր Սադովկ քահանայ, և ամենայն Ղևտացիք ընդ նմա․ որք բարձեալ զտապանակն կացուցին 'ի պատշաճական տեղի, մինչև էանց ամենայն ժողովուրդն եկեալ ընդ տապանակին․ ընդ որս էր և Աբիաթար քահանայապետ ։ Ի տեսանելն Դաւթի զանչափ սէր ժողովրդեան և քահանայից՝ մխիթարեցաւ յոյժ․ սակայն ոչ պատշաճ դատեցաւ շրջեցուցանել ընդ իւր զտապանակն տեառն ։ Նմին իրի ասաց ցՍադովկ դարձուցանել զնա յԵրուսաղէմ, և դառնալ ընդ

նմա Աքիաբթարայ և որդւոյ նորա ։ Իսկ արքայ անցեալ ընդ հեղեղատն՝ եւ 'ի գլուխ լերին . և դարձեալ 'ի կողմն Երուսաղէմի՝ անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց , երկիր եպագ Աստուծոյ՝ կամակար յանձն առեալ զամենայն վշտս տերունի վասն իւր ։

220 . Յայնժամ եհաս անդր Քուսի արքայի հաւատարիմ խորհրդականն Դաւթի . որ ոչ գոլով յԵրուսաղէմ , երբև լուաւ զփախուստ արքային՝ աճապարեալ եհաս առ նա ։ Ասէ ցնա արքայ . դարձիր յԵրուսաղէմ , և հնարագիտութեամբ լիցիս մտերիմ Աբեսողոմայ , որպէս զի մի ինչ գործեսցէ զաղտ 'ի քէն . և դու ցրուեսցես զխորհուրդ Աքիտոփէլայ , զոր տայցէ յիմ վնաս . և զոր միանգամ լուիցես , ազդ արասցես ինձ 'ի ձեռն քահանայից ։ Քուսի մեկնեցաւ անտի . և երբև մտանէր յԵրուսաղէմ , ահա և Աբեսողոմ մեծաշուք փառօք եմուտ 'ի քաղաք անդր ։

221 . Իսկ Դաւիթ իջեալ 'ի լերանէ անտի իբրև երթայր յանապատն կոյս , ահա երևեցաւ անդ Սեմէի յազգականութենէն Սաւուղայ , և սկսաւ անիծանել զԴաւիթ ծանր ծանր լուտանօք , արձակելով 'ի նա և քարինս ։ Ընդ որ զայրացեալ Աբեսսայ՝ խնդրեաց հրաման յարքայէ երթալ սատակել զնա ։ Այլ Դաւիթ սքանչելի համբերութեամբ ոչ թոյլ ետ նմա . Ո՞ գիտէ , ասէ , թերևս տեսեալ տէր զտառապանս իմ , ողորմեսցի և հատուսցանիցէ ինձ բարիս ։ Անտի եկն Դաւիթ յափն Յորդանանու և ետ հանգիստ զօրաց իւրոց ։

222 . Աբեսողոմ յետ մտանելոյ յԵրուսաղէմ անհամար բազմութեամբ՝ խորհուրդ եհարց 'ի քաջ խորհրդականէն Աքիտոփելայ վասն հաստատելոյ զթագաւորութիւն իւր ։ Խոր-

հուրդ. եւ նմա Աքիտոփէլ չլինել ժամանա-ձուռ, այլ յայնմ գիշերի զհետ պնդել Դաւթի ցորչափ կայ վաստակեալ եւ լքեալ սրտաթափ։ Նա ինքնին, ասէ, ընտրեցից երկոտասան հա-զարս արանց, եւ հասեալ գիշերայն 'ի վերայ նո-րա՝ սպանից զարքայ միայն, եւ դարձուցից զա-մենայն զօրն առ քեզ։ Հաճեցաւ Աբեսողոմ ընդ այս քաջ խորհուրդ. բայց կամեցաւ հար-ցանել եւ զՔուսի արքայի, որ մտերմացեալ էր ընդ նմա ըստ պատուիրելոյ նմա Դաւթի։ Այլ Քուսի հակառակ խորհրդոցն Աքիտոփելայ խրատ ետ Աբեսողոմայ եւ ասէ. Հայր քո այր հզօր եւ պատերազմող է, եւ զօրականք նորա քաջք եւ ջեռեալք սրտմտութեամբ. եւ չեն բա-ւական երկոտասան հազարք ընդդէմ նոցա. այլ ժողովեսցի ամենայն այր Իսրայէլի, եւ բազ-մութեամբ պարտեսցուք զնոսա։ Հաւանեցաւ Աբեսողոմ եւ ամենայն ծերք նորա ընդ խոր-հուրդ Քուսեայ, քան ընդ խորհուրդն Աքի-տոփելայ. որոյ դառնացեալ յանձն իւր՝ յայտ-նի գուշակեաց զկործումն Աբեսողոմայ. վասն որոյ չոգաւ 'ի տուն իւր, խեղդ արկ անձին եւ մեռաւ։ Ի վճարել խորհրդոյն նոյն հետայն Քուսի ծանոյց Դաւթի, եւ փութացոյց անցա-նել ընդ Յորդանան, եւ ապահովանալ։

225. Աբեսողոմ ըստ խորհրդոյն Քուսեայ զհետ եղեւ հաւաքելոյ զօրս, եւ ել բազմութեամբ 'ի խնդիր հօր իւրոյ. անց ընդ Յորդանան, եւ եմուտ 'ի Գաղաադ։ Իբրեւ լուաւ Դաւիթ, պատրաստեցաւ 'ի պատերազմ. եւ յերիս գունդս բաժանեալ զզօրսն՝ կացոյց նոցա հազարապետս, եւ ինքն կամեցաւ ելանել 'ի գլուխ զօրուն առ 'ի մեղմել զորրոք վրէժխնդրութեան զօրաց իւրոց. այլ զօրքն ընդդէմ կացեալ՝ թոյլ ո-չտուան։ Նա նկաց Դաւիթ 'ի դրան քաղաքին՝

պատուէր տուեալ ամենեցուն խնայել 'ի կեանս Աբեսողոմայ :

Յովաբ քաջահմուտ սպարապետ ոչ պատշաճ գտանեցաւ պատերազմել 'ի դաշտի. այլ եմուտ յանտառ մի մեծ՝ կոչեցեալ Անտառ Եփրեմի : Իսկ Աբեսողոմ վստահացեալ 'ի բազմութիւն զօրացն՝ ջերմ խրոխտանօք մխեցաւ յանելանելի անտառ անդր, և սկսան մարտնչել կատաղաբար: Բազմութիւնք ապստամբաց յարձակելն 'ի զանազան տեղեաց՝ անձնողոպրելի պատառէին յանտառամօլ Թուփս և 'ի փոսս. իսկ զօրք Դաւթի հասեալ 'ի վերայ՝ կոտորէին զնոսա : Ընդ 'ի մեծի տագնապին այնինչ Աբեսողոմ շփոթեալ 'ի փախուստ ձիպէր ապրեցուցանել զանձն, 'ի սաստիկ արշաւանացն ամբարձեալ վարսից գլխոյ նորա պատառեցան զոստովք կաղնւոյ միոյ, ընդ որով անցանէր. և ջորւոյն անցեալ 'ի ներքոյ նորա՝ ինքն մնաց կախեալ ընդ օդ: Իբրև լուաւ Յովաբ, եհաս անդր, և եհար 'ի սիրտ նորա երիս նետս, և սպան զնա: Եւ նոյն ժամայն ետ հրաման փող հարկանել և դադարել 'ի մարտնչելոյ. իսկ զդի Աբեսողոմայ արկ 'ի գուբ մի մեծ, և ծածկեաց քարամբք:

224. Իբրև լուաւ Դաւիթ, մոռացեալ զյաղթութիւնն, լայր և ողբայր աղիողորմ ձայնիւ. Որդեակ իմ Աբեսողոմ, ասէր, ո՛ տայր զմահ իմ փոխանակ քո: Եմուտ առ նա Յովաբ, և սպառնալեօք խօսեցաւ ընդ նմա՝ ելանել արտաքս և երևել զօրուն : Լուաւ Դաւիթ բանից նորա, և ընկալաւ զամենայն զօրապետս զուարթ դիմօք:

Յետ այնորիկ ամենայն ցեղք առաքեցին պատգամաւորս առ Դաւիթ, և խնդրեցին զներումն սակս եղելոյ ապստամբութեանն, խոստանալով նմա հաւատարմութիւն և հնազանդութիւն : Իսկ ցեղն Յուդայ եկն յափն Յոր-

դանանու, և յաղթական փառօք անցուցին զաւուրս յայսկոյս: Անդ աճապարեալ Սեմէի անկաւ առ ոտս Դաւթի, և խնդրէր ներել ինքեան վասն անիծիցն. և անյիշաչար եղեալ Դաւիթ ներեաց նմա: Եւ իբրև եմուտ յԵրուսաղէմ, իշխանք քաղաքին ամենեքեան զարդարեալք ելին ընդ առաջ նորա. և ինքն հանգեաւ 'ի պալատան իւրում:

225. Յայնժամ երևեցան ապստամբք ոմանք 'ի մէջ Իսրայէլի. այլ աճապարեալ Դաւթի առաքեաց զօրս, և նուաճեաց զնոսա: Ոչ դադարէին և այլազգիք միաբանել ելանել 'ի վերայ Իսրայէլի. այլ յամենայն նուագս յաղթական հանդիսացաւ Դաւիթ 'ի վերայ նոցա, և հանդարտեցաւ յամենայն կողմանց: Եւ 'ի հանդարտութեան անդ արկ բանսարկուն ընդունայն խորհուրդ 'ի սիրտ նորա. և նա հրամայեաց Յովաբայ շրջել ընդ ամենայն Հրեաստան, թուել և գիտել զհամար ժողովրդեան 'ի քսանամենից և 'ի վեր, որք կարող իցեն զէն առնուլ: Թէպէտ ընդդէմ եկաց այսմ Յովաբ, այլ իբրև ստացաւ բան արքային, ել նա և այլք 'ի զօրավարաց՝ առեալ ընդ իւրեանս և զդպիրս, և առին զհամար ժողովրդեանն: «Եւ էր, ասէ, ամենայն Իսրայէլ հազարք հազարաց և հարիւր հազար արանց, և Յուդա չորեքհարիւր յիսուն հազար արանց սուսերամերկաց»: Եւ չար թուեցաւ առաջի Աստուծոյ գործ արարն Դաւիթ:

226. Յետ առնլոյ Դաւթի զհամար ժողովրդեանն՝ ծանեաւ զմեղս իւր, և խոստովան լինելով ասէ առ տէր. Մեղայ յոյժ, զոր արարի. և արդ անցո զանօրէնութիւն 'ի ծառայէ քումմէ, զի ընդունայնացայ: Այլ այսու խոստովանութեամբ ոչ ազատ կացուցաւ նա

'ի ժամանակեան պատժոց : Նմին իրի առաքեաց առ նա Աստուած զԳադ մարգարէ ընտրել զմի յերից աստի. կամ երիս ամս սովս, կամ զերիս ամիս հալածիլ 'ի թշնամեաց , և կամ զերիս աւուրս սուր մահուան և մահ յամենայն երկրի նորա : Դաւիթ ընտրեաց զմահ և ասէ . Անկայց 'ի ձեռս Աստուծոյ, զի բազում են գթութիւնք նորա յոյժ . և մի՛ անկայց 'ի ձեռս մարդոյ : Ի նմին առաւօտու սկսաւ կոտորածն , և ձգե_ ցաւ ցժամս վեց . և մեռան 'ի ժողովրդենէ ան_ ափ եօթանասուն հազար արանց :

227. Իբրև ետես Դաւիթ զհրեշտակն յօդս 'ի վերայ կալոյն Ոռնեայ , և զսուրն մերկ 'ի ձե_ ռին իւրում, անկաւ ինքն և ամենայն իշխանք իւր յերկիր՝ զգեցեալք քուրձս ապաշխարու_ թեան : Պաղատէր Դաւիթ առ տէր՝ յանձն իւր և 'ի տուն հօր իւրոյ առաքել զպատու_ հասն, և խնայել 'ի ժողովուրդն : Յայնժամ հրեշտակն պատուիրեաց Գադայ մարգարէին ասել ցԴաւիթ՝ ելանել և կանգնել սեղան տեառն 'ի կալի անդ : Արար Դաւիթ և եհան ողջակէզս . ընդ որ հաճեցաւ Աստուած առա_ քելով հուր յերկնից 'ի վերայ սեղանոյն , որ ծա_ խեաց զողջակէզն , և ապա դարձոյց հրեշտակն զսուր իւր : Յայնժամ լուսաւորեալ Դաւթի յԱստուծոյ՝ առհմանեաց զկալն զայն հանդերձ շրջակայ վայրօք , զի անդ ըստ ժամանակին կանգնեսցէ Սողոմոն զտաճար տեառն , և ինքն աղաղակեաց 'ի լսել ժողովրդեան . Այս է տուն Աստուծոյ . և այս է սեղան ողջակիզաց Իսրայէ_ լի : Վասն որոյ սկսաւ Դաւիթ պատրաստել զնիւթս շինութեան տաճարին՝ կազմեցուցանելով քարահատս և երկաթագործս . և բերէին ան_ թիւ մայր փայտս յԵրուսաղէմ: Ապա կոչեաց առ ինքն զՍողոմոն զորդի իւր , և ծանոյց նմա

զյայտնութիւն տեառն վասն յաջորդելոյ նորա յաթոռ թագաւորութեան, և շինելոյ զտաճարն. օրհնեաց զնա և քաջալերեաց լինել զգաստ և հաւատարիմ 'ի պահել զամենայն օրէնս Աստուծոյ։ Ապա յորդորեաց և զիշխանս լինել ձեռնտու Սողոմոնի 'ի շինութիւն տաճարին։

228. Սակայն Ադոնիա երեց որդի Դաւթի ըստ օրինակի Աբեսողոմայ արար իւր թիկնապահս, և սկսաւ արքայակերպ ձոխանալ. որում ձեռնտու էին Յովաբ, և Աբիաթար քահանայապետ։ Եւ չքեան շքով մեծաւ հանդերձ իշխանօք և արքունի պաշտօնէիւք 'ի պատճառս զոհելոյ առ վիմին Զօհելթայ. անդ կերին և արբին և աղաղակէին. Կեցցէ արքայ Ադոնիա։ Իբրև լուաւ Բերսաբէէ մայր Սողոմոնի, եմուտ առ արքայ, և յուշ արար նմա զերդումն՝ զոր երդուաւ նմա յանուն տեառն վասն թագաւորեցուցանելոյ զՍողոմոն։ Եկն առ նա 'ի նմին պահու և Նաթան մարգարէ, և խօսեցաւ վասն բանիցս այսոցիկ։ Առ ժամայն վճռեաց արքայ թագաւորեցուցանել զՍողոմոն մանկահասակ որդի իւր. և հրամայեաց հանդերձել զարքայական ջորի իւր, և նստուցեալ զՍողոմոն ածել 'ի Գեհոն, և անդ Սադովկ քահանայապետ և Նաթան մարգարէ օծցեն զնա թագաւոր։ Իբրև կատարեցաւ հանդէս օծութեանն՝ սկսան հարկանել զեղջերեայ փողսն, և աղաղակել. Կեցցէ արքայ Սողոմոն. զոր և ածին յԵրուսաղէմ, և նստաւ յաթոռ թագաւորութեան։ Դաւիթ երկիր եպագ նորա աթոռոյն յանկողնոյ իւրմէ. նոյնպէս և Ադոնիա զղջացեալ ընդ արարս իւր՝ եկն և խոնարհեցաւ երկիր եպագ Սողոմոնի։

229. Ապա կարգադրեաց և տնօրինեաց

Դաւիթ զամենայն իւր թագաւորութեան. ժողովեաց զհամօրէն իշխանս և զօրավարս, և պատուիրեաց ամենեցուն մեալ հաւատարիմ առ արքային և առ նորատակ թագաւորն։ Եւ յայտնեալ զկամս տեառն վասն շինութեան տաճարին, եցոյց Սողոմոնի առաջի ամենեցուն զձև մեծի շինուածոյն, և զձև սեղանոյ. և նուիրեաց տան տեառն բազում ոսկի և արծաթ։ Հուսկ յետոյ պատուիրեալ Սողոմոնի զամենայն կարևորս՝ օրհնեաց զնա, և կնքեաց զկեանս իւր եօթանասուն և մի ամաց, և թաղեցաւ 'ի քաղաքի իւրում՝ թագաւորեալ ամս քառասուն և ամիսս վեց։

Ընդ այն ժամանակս պայազատեաց 'ի Հայաստան յետ Պերճայ Բազուկ երկայնակեաց ամս յիսուն։ Յասորեստան տիրէ Եւբաղ. 'ի Կորնթոս Իքսիոն. յԱթէնս Ակաստոս. և յԵգիպտոս Դիոպողիս։ Յայնժամ շինեցաւ և Կարքեդոն քաղաք 'ի Դիդեայ տիրուհւոյ [1]։

## ԴԻՊՔ ՉՈՐՐՈՐԴԻ ԴԱՐՈՒՆ

Ամ. աշխ.

2549. Փիւնիկ և Կադմոս թագաւորեն։
2572. Մինոս Ա թագաւոր Կրետայ։
2591. Առաջին ծառայութիւն Իսրայէլացւոց։
2605. Մուսոս և Լինոս իմաստունք Յունաց։
2609. Առաջին յորելեան ամ թողութեան։
2642. Սատուրնոս թագաւորէ յԻտալիա։
2661. Երկրորդ ծառայութիւն Իսրայէլացւոց։

1 Խորէն. Ա. 18։ Եւսեբ. Ժամ։ Մաթէոս Սամուէլ։

2700. Երրորդ ծառայութիւն Նոյա։
2746. Թեսէոս թագաւորէ յԱթէնս։
2750. Բիւզանդիոն քաղաք շինի։
2752. Չորրորդ ծառայութն Իսրայելացւոց։
2790. Որփէոս բանաստեղծ։
2795. Արգոնաւորդք ուղևորին։
2799. Հինգերորդ ծառայութիւն Իսրայելացւոց։ Հերքիւլէս կարգէ խաղս յՈղիմպիա։
2803. Լատինոս թագաւորէ յԻտալիա։
2820. Առումն Տրովադայ։
2830. Ենէաս յաջորդէ Լատինոսի։
2850. Սամփսոն և Սամուէլ։
2887. Մահ Սամփսոնի։
2888. Գերութիւն տապանակին։
2909. Սաւուղ թագաւոր։
2919. Դաւիթ ծնանի։
2941. Դաւիթ օծանի թագաւոր։
2981. Աբեսողոմ ապստամբի։
2984. Դաւիթ թուէ զԻսրայէլ։

# ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐ

## ԳԼՈՒԽ Ա

Սողոմոն։
Ա. Ա. 2990

230. Սողոմոն թագաւորեաց ընդ հօր իւրում Դաւթի զամիսս քան և եօթն. և էր ինքն ամաց երկոտասանից. իսկ յետ մահուան հօր իւրոյ իբրև պայազատեաց զթագաւորութիւնն, համարի լինել վեշտասան ամաց։ Իբրև լուաւ զխորհուրդ ապստամբութեան Ադոնիայ եղբօր իւրոյ կամակցութեամբ Յովաբայ՝ սպան զնոսա. որպէս և զՍեմէի սակս անիծանելոյ նորա ըզԴաւիթ (221)։

Ապա գնաց Սողոմոն 'ի Գաբաւոն մեծաշուք փառօք, ուր էր խորան տեառն և սեղան ողջակիզաց, յորոյ վերայ եհան հազար ողջակէզս։ Անդ 'ի նմին գիշերի երեւեցաւ նմա Աստուած 'ի տեսլեան և ասաց. Խնդրեա դու քեզ խնդիր ինչ։ Եւ նա խնդրեաց 'ի տեառնէ զիմաստութիւն. Զի ես մանուկ փոքր եմ, ասէ, և ոչ գիտեմ զել և զմուտ իմ. արդ տացես ծառայի քում սիրտ լսելոյ և դատելոյ զժողովուրդ քո արդարութեամբ։ Հաճոյ թուեցաւ առաջի Աստուծոյ խնդիր Սողոմոնի. նմին իրի ետ նմա ոչ միայն իմաստութիւն և հանճար անզուգական, այլ և զմեծութիւն և զփառս։ Իբրև զարթեաւ Սողոմոն, ծանեաւ թէ այն տեսիլ էր աստուածային. վասն որոյ լի աստուածապարգև իմաս-

տուլթեամբ դարձաւ յԵրուսաղէմ, և մատոյց առաջի տապանակին ողջակէզս և զոհս 'ի գոհութիւն արարչին. և արար խրախութիւն մեծ ծառայից իւրոց:

231. Ի նմին աւուր երկու կանայք երևեցան առաջի Սողոմոնի խնդրել զիրաւունս: Ասէ մին 'ի կանանց. Ցիս տէր իմ. ես և կինս այս էաք 'ի միում տան, և ծնայ 'ի տանն. և յաւուր երրորդի ծնաւ և կինս այս, և ոչ գոյր ոք ընդ մեզ 'ի տանն. և մեռաւ որդի նորա 'ի գիշերի, քանզի ննջեաց 'ի վերայ նորա. և յարեաւ 'ի հասարակ գիշերի, և առ զմանուկն իմ 'ի գրկաց իմոց, և աղախին քո 'ի քուն էր, և ննջեցոյց զնա 'ի ծոց իւրում: Եւ յարեայ ընդ առաւօտն դիեցուցանել զորդի իմ. և նա էր մեռեալ. և հայեցայ ընդ այգուն, և ահա չէր որդի իմ՝ զոր ծնայ: Եւ ասէ միւս կինն. ոչ, այլ որդի քո է մեռեալն, և որդի իմ կենդանին:

Սողոմոն յետ թոյլ տալոյ նոցա վիճել ընդ միմեանս, այսպէս որոշեաց զվէճն: Բերէք, ասէ, առ իս սուր. կտրեցէք զմանուկդ կենդանի յերկուս, և տուք զկէսն միում, և զկէսն միւսում:

Ի լսել անդ զվճիռ արքային հարազատ մայր մանկանն՝ աղէկիզեալ տագնապեցաւ անկաւ առաջի աթոռոյն, և ասէ ցարքայ. Ո՛ տէր իմ, լուր ինձ. տուք նմա զմանուկդ կենդանի. ես հրաժարիմ յիմոց յիրաւանց. թող նորա լիցի մանուկն, միայն թէ մահու մի՛ սպանանէք զնա: Իսկ միւսն պնդէր ասելով. Կտրեցէք ընդ մէջ. մի՛ իմ լիցի և մի՛ դորա: Այսու հնարիւք 'ի յայտ բերեալ արքայի զհարազատ մայր մանկանն հրամայեաց տալ նմա զորդին իւր: Հնչեցաւ համբաւ նորատեսակ արքային ընդ ամենայն Հրէաստան, և ամենայն ժողովուրդն պատկա-

ռէր երկնուղեւ յերեսաց Սողոմոնի. զի գիտացին եթէ տէր ընդ նմա է [1]:

232. Սողոմոն երթալով երթայր և մեծանայր փառօք. զի յարքունիս նորա էին ոսկիք երեսուն և վեց հազար, որք կերակրէին յարքունուստ. կառք նորա հազար և չորեքհարիւր, և մատակ ձիք քառասուն հազար, և երիվարք բաղում յոյժ: Ամենայն շրջակայ ազգք հարկս հարկանէին նմա հպատակութեամբ, և էր նա իշխան ամենայն թագաւորաց մինչև 'ի սահմանս Եգիպտոսի:

Գրեաց Սողոմոն բազում գրեանս, երեք հազար առակս, և հինգ հազար օրհնութիւնս տեառն. նա և բնական տեղեկութիւնս զտնկոց և զծառոց սկսեալ յեղևնափայտէ մինչև ցզոպային: Գրեաց և զբնութեանց և զյատկութեանց կենդանեաց. այլ այս երկու գիրք նորա ոչ երևին:

233. Ապա արկ Սողոմոն զհիմն տաճարին յամին չորրորդի յերկրորդում ամսեան թագաւորութեան իւրոյ յետ չորեքհարիւր և քառասուն ամի ելանելոյ որդւոց Իսրայելի յԵգիպտոսէ: Երկայնութիւն նորա 'ի ներքին կողմն էր վաթսուն կանգուն, և լայնութիւնն քսան. նոյնչափ էր և ներքին բարձրութիւնն. յորոյ վերայ տասն կանգուն եւս բարձրանայր որմն: Ցերկայնութենէ անտի երրորդ մասն ձևացուցեալ էր իբր քառակուսի մասն. ուր եդաւ տապանակ ուխտին, որ կոչէր Սրբութիւն սրբութեանց: Իսկ այլ երկու քառակուսի մասունք ձևացուցանէին շինուած Սրբութիւն կոչեցեալ, ի ճա-

1 Գ Թագ. Գ. 16:

կան էր սեղան խնկոց, ուր մատուցանէին բուրմունս անուշից:

Այս ամենայն շինուած պատեալ էր կրկին պարապօք, և տախտակամած որմովք. իսկ 'ի մէջ երկուց պարապոց էին երեք յարկք. ընդ շրջանակաւոր սանդուղս լինէր ելանել 'ի միջին յարկն, և անտի յերրորդն: Երես տաճարին հայէր յարևելս, և առաջի նորա գաւիթ երկայն ըստ լայնութեան տաճարին. և անտի ձգեալ տարածանէին երկու ընդարձակ սրահք առ որմովք էին երկու նախագրեալ սանդուղք, որք հանէին 'ի վերին յարկն. որոյ բարձրութիւնն էր երեսուն կանգնոց. որով և բովանդակ բարձրութիւն տաճարին էր վաթսուն կանգուն: Սակայն կողմն գաւթին առաւել բարձրանալով լինէր անտի անցանել յերրորդ գաւիկոն. և ճակատն էր իբր աշտարակ բարձր հարիւր և քսան կանգուն:

234. Որմունք տանն պատեալ էին յեղևնափայտից. նոյնպէս և յատակ նորա պատեալ ձոյլ ոսկի թիթղամբք: Ամենայն արուեստակերտք, որպէս և սեղանն՝ յորոյ վերայ հանգուցեալ կայր տապանակն՝ պատեալ էին ձոյլ ոսկւով: Նա և երկու քերովբէք տասնկանգնեան բարձրութեամբ խորանաձև տարածեալք 'ի վերայ տապանակին՝ էին 'ի փայտից նոճի, արտաքուստ պատեալ ձոյլ ոսկւով. իսկ առատաղն էր յօրինեալ ընտիր ընտիր ակամբք պատուականօք: Յամենայն որմունս արտաքոյ սըրբութեան սրբութեանց շուրջանակի քանդակեալ կային քերովբէք, զանազան քանդակք և ոսկեզարդք. իսկ յատակ այսր տեղւոյ էր յազնիւ գունագոյն քարանց:

235. Առ դրան տաճարին կային երկու մեծամեծ սիւնք պղնձիք, բարձրութիւն նոյա

ութևտասն կանգուն. և հանդէպ նոցա դուր հրապարակ ընդարձակ, զոր ընդ մէջ հատանէին երկու կամարակապ սիւնաշարք շինուածք բաժանեալք յերկուս վայրագունիթս: Իսկ յանդիման դրան տաճարին էր մեծ սեղանն զոհից 'ի պղնձոյ քառակուսի՝ յամենայն կողմանց քսան կանգնոց, և բարձր տասանց: Եւ 'ի միւսում կողման էր աւազանն մեծ 'ի ձև բոլորշի. տրամագիծ նորա տասն կանգուն, և խորութիւնն հինգ. որ կոչէր ծով պղնձի, և տանէր երկու հազար մարս ջրոյ, զոր պահէին 'ի պէտս քահանայական պաշտամանց: Իսկ 'ի միւս կողմն էր ծածուկ սենեակ վանդակապատ շուրջանակի, և 'ի վերայ նորա խորան հոյակապ, ուր առանձնանայր արքայ 'ի լինել առաջիկայ զոհից: Երկրորդ վայրագունիթն էր սրահ ժողովրդեան. ուր կարէր ամենայն ոք մտանել, որ չունէր օրինական արգելս: Այս ամենայն շինուած կառուցեալ կայր 'ի մէջ ընդարձակ հոյակապ շինուածոյ, որ էր մասն տաճարին, և էր քառակուսի՝ յամենայն կողմանց հարիւր և քսան և հինգ ձող: Իսկ 'ի արքունեան անդ եդ Սողոմոն աշտանակս տասն 'ի զուտ ոսկւոյ, և տասն ոսկի սեղանս: Նմին էին անդ ոսկի և արծաթի անօթք, շուշանաձև բազմակալք, Ճրագարանք, բուրվառք, խնկամանք, ափսեայք, բովանդակն յոսկւոյ: Իսկ այլ ամենայն անօթք, նռնաձևք, աւազանք, քերովբէք, առիւծք, և երկոտասան եզինք, և երկու մեծ սիւնք սրահին էին 'ի պղնձոյ:

236. Այս հրաշակերտ շինութիւն տաճարի տևեան և անօթոց կատարեցաւ ընդ ամս եօթն և ամիս ութ: Յետ այսր ամենայնի եած Սողոմոն 'ի տաճար անդր զամենայն կահս, և զամենայն գանձս, զոր Դաւիթ նուիրեալ էր

Աստուծոյ ։ Ապա ժողովեալ յԵրուսաղէմ զամենայն իշխանս և զծերս ժողովրդեան, եհան մեծահանդէս փառօք զտապանակ ուխտին 'ի Սիոնէ, և տարաւ 'ի տաճար անդր ։ Ի տապանակի էին յայնժամ երկու քարեղէն տախտակք ուխտի. զի սափորն ոսկի և գաւազանն Ահարոնի եդեալ էին 'ի գանձս տաճարին ։ Եւրին ընդ տապանակին և զխորանն վկայութեան, և զամենայն սպաս սրբութեան. և զենին յայնժամ անթիւ արջառս և ոչխարս ։ Քահանայք բարձեալ տանէին զտապանակն առաջի և քնարք, սաղմոսերգութեամբ, և չքնաղ հանդիսիւք երգելով. «Խոստովան եղերուք տեառն, զի բարի է. զի յաւիտեան է ողորմութիւն նորա»[1] ։

237. Իբրև հանգեաւ տապանակն 'ի տեղի իւր, յանկարծ լցաւ տունն Աստուծոյ թանձր ամպով 'ի նշան աստուածային փառաց ։ Յայնժամ եւ Սողոմոն 'ի վերայ պղնձի խարսխին հանդէպ սեղանոյ տեառն, և սկսաւ պերճաբանելով բարձրացուցանել զողորմութիւն բարձրելոյն 'ի վերայ ժողովրդեան, և 'ի վերայ տանն Դաւթի, մեկնելով զխորհուրդ փառաց տեառն երևեալ յամպն ։ Անկեալ ապա 'ի ծունկս սկսաւ բարձր ձայնիւ աղօթել առ Աստուած վասն յաջողութեան և երջանկութեան ժողովրդեան, և վասն լսելոյ Աստուծոյ զմաղթանս աղօթողաց 'ի տաճարի անդ ։ Ապա յարուցեալ խրախուսեաց և յորդորեաց զժողովուրդն կալ մնալ հաստատուն առ տէր, և օրհնեաց զնոսա. և ահա էջ յերկնից հուր հրաշական, և ծախեաց զողջակէզս և զզոհս ։ Յետ կատարելոյ զնաւակատիս տաճարին, արձակեաց Սողոմոն զանհա-

1 Սաղ. ճԺԷ ։

մեր բազմութիւն ժողովրդեանն գնալ 'ի տեղիս իւրեանց :

238 . Այնուհետև կառոյց Սողոմոն և զիւր արքունիս 'ի հարաւակողմին քաղաքին . շինեաց և զպարիսպս և զաշտարակս յԵրուսաղէմ . արար ապա պարտէզս և անտառս զբօսարանաց . շինեաց զբարձրաւանդակն մեծագործ . ելից զվիհն և արար հարթ հաւասար 'ի ձորոյն Կեդրոնի մինչև ցլեառն Սիոն . շինեաց զանազան քաղաքս յայլևայլ տեղիս , և երկու ամրոցս :

Համբաւ իմաստութեան և մեծագործութեան Սողոմոնի ձգեաց զբազումս 'ի թագաւորաց 'ի սէր իւր . որք և ընծայէին նմա տաղանդս ոսկւոյ և արծաթոյ բազումս , և ականս պատուականս : Շատք խնդրէին տեսանել զնա , և լսել զիմաստութիւն նորա . որպէս և տիկինն Սաբայ , որ եկն բազում գանձուք և անգին ընծայիւք առ նա լսել զիմաստութիւն նորա . և առաջի արկ նմա զառակս խորինս զբնական իրաց , և զխորհրդոց աստուածպաշտութեան : Եւ Սողոմոն մեկնեաց զամենայն առակս նորա , մինչև ապշել տիկնոջն 'ի միտս իւր , և լուաւորեալ 'ի բանից նորա՝ օրհնել զԱստուած Իսրայէլի՝ որ ետ ժողովրդեան իւրում զայնպիսի իմաստուն թագաւոր :

239 . Այս ամենայն յաջողութիւնք և ճոխութիւնք , և մանաւանդ բազմութիւն կանանց՝ զորս էառ յօտար ազգաց , խոտորեցուցին զսիրտ Սողոմոնի , և մեղկեալ թակարթեցաւ 'ի հրապուրանս նոցա . զի առ 'ի հաճել զկամս կանանց և հարճից իւրոց՝ սեղանս կանգնեաց կռոց նոցա : Նորին աղագաւ բարկացաւ նմա տէր , և յանդիմանեաց զնա 'ի ձեռն Աքիայ սիլոնացւոյ , սպառնալով բաժանել ըզթագաւորութիւն նորա յետ նորա , և յարու-

ցանել զապստամբս ընդդէմ նորա, որք էին Ադեր, Ռազոն, և Յերոբովամ՝ որ յետոյ թագաւորեաց 'ի վերայ Իսրայէլի (241)։

Այլ յետ այնր ամենայն խառնակութեանց խոնարհեցաւ Սողոմոն առաջի տեառն, և ապաշխարեալ սրբեցաւ 'ի մեղաց ըստ կարծեաց ոմանց 'ի սրբոց հարց, որոց ձայնակից գտանին և մեր Նարեկացի [1]. և ննջեաց ընդ հարս իւր ամաց վաթսնից, թագաւորեալ յԵրուսաղէմ ամս քառասուն։ Առ նովաւ մարգարէանային յԵբրայեցիս Սադովկ, Աքիա և Սամէաս [2]։

## ԳԼՈՒԽ Բ

### Ռոբովամ, Յերոբովամ, Աբիա, Ասա։
Ա. Ա. 3029

240. Ռոբովամ որդի Սողոմոնի իբրև կատարեաց զհանդէս յուղարկաւորութեան հօր իւրոյ, չոգաւ 'ի Սիկիմ, ուր գումարեալ էր ամենայն Իսրայէլ թագաւորեցուցանել զնա 'ի վերայ իւրեանց։ Նա էր յայնժամ Ռոբովամ քառասուն և մի ամաց։ Ի նմին ժամանակի Յերոբովամ որ ապստամբեալ 'ի Սողոմոնէ փախուցեալ էր յԵգիպտոս, իբրև լուաւ 'ի ձեռն կուսակցաց իւրոց զմահ Սողոմոնի՝ եկն յանծանօթս 'ի Սիկիմ։

Յառաջ քան զթագաւորել Ռոբովամայ մատեան առ նա իշխանք ժողովրդեան, և խնդրեցին թեթևացուցանել 'ի նոցանէ զբեռն հարկապահանջութեան, զոր ծանրացուցեալ էր Սողոմոն սակս մեծագործ շինուածոց։ Ռոբո-

1 Նարէկ. Բան ԻԷ։ 2 Եւսէբ. Ժամ. ՉՂՂ։

վամ ժամանակի եղև նոցա աւուրս երիս, և որձակեաց զնոսա. և ինքն կոչեաց զծեր խորհրդականս Սողոմոնի, և խնդրեաց 'ի նոցանէ խորհուրդ: Նոքա ասացին նմա զիջանել կամաց ժողովրդեան, մինչև առ սակաւ սակաւ ընդելանցին ծառայել սրտի մտօք: Իսկ Ռոբովամ թողեալ զբանս ծերոցն՝ և հարց խորհուրդ յանփորձ երիտասարդաց. և նոքա ետուն նմա պատասխանի. Բարձրացո, ասեն, զբարբառ քո, և յաւելեալ 'ի բեռն յայն՝ և ևս ծանրացո, մինչև զանդիմանեալ մտադիւր ծառայեսցեն քեզ:

241. Յետ երից աւուրց իբրև եկն ժողովուրդըն առնուլ պատասխանի, խօսեցաւ Ռոբովամ ըստ խորհրդոյ մանկտւոյն այսպիսի օրինակաւ. Ծկոյթ իմ, ասէ, ստուար է քան զմէջ հօր իմոյ. հայր իմ եդ 'ի վերայ ձեր անուր ծանր, և ես յաւելից յայն: Ի խիստ պատասխանւոյ աստի զայրացեալ ժողովրդեան, Չիք մեր, ասեն, բաժին ընդ Դաւթի: Եւ անդէն տասն ցեղք խորոյելի ապստամբեալ գնացին 'ի բնակութիւնս իւրեանց: Միայն ցեղն Յուդայ մնաց հաւատարիմ ընդ Ռոբովամայ. որում յարեցաւ յետոյ և ցեղն Բենիամինի. և 'ի պատճառս տաճարին Աստուծոյ բազմութիւն քահանայից և Ղեւտացւոց բնակէր յԵրուսաղէմ:

Յետ այսորիկ իբրև առաքեաց Ռոբովամ զԱդոնիրամ հարկապետ պահանջել հարկս և խաղաղել զապստամբս, հարին զնա քարամբք և սպանին: Զայն լուեալ Ռոբովամ ել 'ի կառս և փախեաւ յԵրուսաղէմ. և ժողովեալ զօրս 'ի Յուդայէ՝ իբրև կամէր նուաճել զապստամբս, նոքա միաբանեալ կոչեցին զՅերոբովամ 'ի Սեկիմ, որ յինքն ձգեալ էր զսիրտ ժողովրդեան, և ընդ հաւանութեամբ ամենեցուն թագաւորեցուցին զնա 'ի վերայ տասն ցեղից Իսրայէլի.

և կոչեցաւ նա թագաւոր Իսրայէլի. իսկ Ռոբովամ թագաւոր Յուդայ ։ Այն ինչ եւ Ռոբովամ տալ պատերազմ ընդ Իսրայէլի, եւ ընդ առաջ նորա Սամէաս մարգարէ, և արգել զնա 'ի դիմաց Աստուծոյ չտալ պատերազմ ընդ եղբարս իւրեանց ընդ Իսրայէլացիս ։ Լուաւ Ռոբովամ ձայնի մարգարէին, և առ ժամայն ցրուեաց զբանակ իւր՝ հնազանդելով ձայնի Տեառն ։

242. Իսկ Յերոբովամ սկսաւ 'ի կարգէ դնել զնոր թագաւորութիւնն, և ամրացուցեալ զՍիկիմ՝ եդ անդ զաթոռ թագաւորութեան իւրոյ ։ Այլ անօրէն խորհրդով զմտաւ ածեալ, թէ յերթալ ժողովրդեան յԵրուսաղէմ զոհել զոհս 'ի տան Տեառն, գուցէ առ սակաւ սակաւ ընտելացեալ դարձցին առ տէր իւրեանց Ռոբովամ թագաւոր, նախատարագիր արար 'ի թագաւորութենէ իւրմէ զամենայն Ղեւտացիս և քահանայս, և ապա կանգնեաց երկուս երինջս ոսկիս, զմին 'ի Դան, և զմիւսն 'ի Բեթէլ, յերկուսին ծայրս տէրութեան. կացոյց և քուրմս անօրէնս. և պատուիրեաց ժողովրդեան՝ բնաւ ոչ ելանել յԵրուսաղէմ զոհել և երկիր պագանել Տեառն. Ահա, ասէ, աստուածք քո, Իսրայէլ, որ հանին զքեզ յերկրէն Եգիպտացւոց ։ Կանգնեաց յայլ և այլ տեղիս 'ի վերայ բլրոց բարձանց և սեղանս և մեհեանս զանազանս դիցն 'ի գայթակղութիւն ժողովրդեան ։

243. Սակայն այսու ամբարշտութեամբ Յերոբովամ ոչ միայն տկարացոյց զիւր թագաւորութիւն, այլ և հաստատեաց և պատկառելի արար զթագաւորութիւն Ռոբովամայ. քանզի ամենայն քահանայք և Ղեւտացիք, ընդ որս և աստուածապաշտ անձինք յամենայն ցեղից անցին ընդ դրօշիւ արքային Յուդայ, մինչև չմնալ

առընթեր Յերոբովամայ ոչ մարգարէ, ոչ քահանայ, և ոչ իմաստուն խորհրդական: Այլ անօրէնն ոչ ինչ հոգացեալ զայցանէ՝ կարգեաց հեթանոսական տօնս՝ ընդդէմ տօնից կատարելոց յԵրուսաղէմ 'ի պատիւ Ճշմարտին Աստուծոյ: Սահմանեաց և հանդիսաւոր տօն յամսեանն ութերորդի յաւուր հնգետասաներորդի նորին ամսոյ՝ զոհել զո՞հս երինջացն: Մինչդեռ կայր նա առաջի անօրէն զոհագործութեանն 'ի մէջ քրմաց, ահա երևեցաւ անդ այր մարգարէ եկեալ յերկրէն Յուդայ, և աղաղակեաց. Սեղան սեղան, ահա եկեսցէ օր, զի ծնցի որդի 'ի զաւակէ Դաւթի Յովսիա անուն, և զոհեսցէ 'ի վերայ քո զքուրմս՝ որք աստ ծխեն զծուխ պղծութեան, և ուր այսօր այրին ողջակէզք՝ այրեսցին ոսկերք մարդկան. և 'ի նշան Ճշմարտութեանս՝ ահա սեղանդ պատառեսցի, և պարարտութիւնդ հեղցի 'ի գետին: Ընդ այս բան ցասուցեալ արքային՝ ձգեաց զձեռն իւր 'ի սեղանոյ անտի, և հրամայեաց ունել զմարգարէն. այլ առ ժամայն գօսացաւ ձեռնն, և ոչ կարաց դարձուցանել: Ի նմին ժամու պատառեցաւ և սեղանն, և հեղաւ պարարտութիւնն 'ի գետին. և 'ի սքանչելեաց աստի զարհուրեցաւ ժողովուրդն ամենայն:

244. Յայնժամ անկաւ Յերոբովամ առաջի մարգարէին. և խնդրեաց աղօթս առնել, զի առողջասցի ձեռն նորա. որպէս և եղև իսկ: Ապա հրաւիրեաց զմարգարէն 'ի տուն իւր ճաշել ընդ նմա, և պարգևս խոստացաւ նմա. այլ նա հրաժարեաց, և չոգաւ զճանապարհ իւր:

Ծեր ոմն 'ի սուտ մարգարէից անտի լուեալ զսքանչելիսն յորդւոց իւրոց եկելոց անդ՝ պընդեցաւ զհետ առն Աստուծոյ, և բռնադատեր զնա դառնալ ընդ նմա 'ի տուն իւր. Իբրև ոչ

կամէր նա, զի պատուէր ունէր 'ի տեառնէ չանսգանել և չուտել հաց 'ի տեղւոջն յայնմիկ, ստեաց նմա՝ թէ հրաման ընկալայ 'ի տեառնէ. քանզի և ես մարգարէ եմ, ասէր: Հաւատաց նմա այրն Աստուծոյ և դարձաւ 'ի տուն նորա. յայնժամ եղև Հոգի տեառն 'ի վերայ ծերոյն, և ասէ առ մարգարէն. փոխանակ զի ոչ պահեցեր զպատուէր տեառն, և դարձար և կերար հաց 'ի տեղիս յայս, մի՛ մտցէ մարմին քո 'ի գերեզման հարց քոց: Իբրև հեռացաւ այրն Աստուծոյ 'ի տանէ անտի, ահա պատահեաց նմա առիւծ և սպան զնա: Իբրև լու եղև այն 'ի քաղաքին յայնմիկ, գնաց ծերն և եգիտ զմարմին նորա անվնաս. եդ զնա 'ի վերայ իշոյն, և բերեալ 'ի Բեթէլ թաղեաց 'ի գերեզմանի իւրում. և պատուիրեաց որդւոց իւրոց, զի 'ի մեռանել իւրում անդ թաղեսցեն և զնա:

245. Յետ բանիցս այսոցիկ հիւանդացաւ Աբիա որդի Յերոբովամայ արքայի Իսրայէլի: Եւ քանզի ոչ գոյր անդ մարգարէ հարցանել վասն մանկանն, նմին իրի մայր մանկանն զգեցեալ հանդերձս գծուծս չոգաւ ծպտեալ կերպարանօք յերկիրն Յուդայ 'ի Սելով առ մարգարէն Աքիա սիլոնացի: Ի մտանել կնոջն առ մարգարէն՝ նա 'ի յայտնելոյ նմա 'ի տեառնէ՝ ծանուցեալ ասէ ցնա. Մուտ, կին Յերոբովամայ, ընդէ՞ր յանծանօթս լինիս. Երթ ասա ցայրն քո յանուն տեառն. փոխանակ զի ընդ այնքանոյ երախտեացն զոր տեսեր՝ անօրինեցար և արարեր քեզ դրօշեալս, ածցէ Աստուած զամենայն չարիս 'ի վերայ տան քո և սատակեսցէ զամենայն սերունդս քո. և զդիակունս նոցա արկցէ 'ի գիշատուածս շանց և թռչնոց երկնից՝ մինչև սպառեսցին. և զմանուկն, որոյ վասն եկիր հարցանել, 'ի մտանելն քո 'ի տուն գայցէ

մեռանել. Նա միայն մնասցէ պատուով 'ի գերեզմանի, զի ոչ խոտորեցաւ զկնի ամբարշտութեան հօր իւրոյ. և զկնի ամաց ինչ յարուցէ Աստուած զայլ թագաւոր՝ որ 'ի նոյն աւուր և 'ի նոյն ժամու 'ի սուր մաշեսցէ զամենայն տունն Յերոբովամայ: Կինն սասանեալ 'ի բանից մարգարէին՝ գնաց լի տրտմութեամբ. և 'ի մտանելն 'ի տունն իւր՝ եգիտ զորդին իւր մեռեալ, զոր թաղեցին պատուով ըստ բանի տեառն Աստուծոյ:

246. Իսկ Ռոբովամ ջերմ յաստուածպաշտութեան՝ ատեր զամբարշտութիւն Յերոբովամայ. որով և զբազումս յաստուածապաշտից յինքն ձգեալ՝ զօրացուցանէր զթագաւորութիւն իւր: Շինեաց նա բազում քաղաքս և ամրոցս ընդդէմ Յերոբովամայ, և միշտ պատերազմէր ընդ նմա:

Ռոբովամ 'ի չորրորդում ամի թագաւորութեան իւրոյ խորհուրդ ամբարշտութեան խորհեցաւ, գրգռեալ յանօրէնութեանց կուապաշտ մօր իւրոյ Նաամայ Ամոնացւոյ: Զի կանգնեաց սեղանս 'ի վերայ բլրոց և 'ի ներքոյ վարսաւոր ծառոց, և նուիրեաց նուէրս: Յայնժամ յարոյց Աստուած 'ի վերայ նորա զՍոսակիմ արքայ Եգիպտացւոց, որ եկեալ պաշարեաց զԵրուսաղէմ: Այն ինչ Ռոբովամ մտեալ 'ի խորհրդարանն խորհէր ընդ իշխանաց, յանկարծ երևեցաւ անդ Սամէաս մարգարէ, և ասէ. Այսպէս ասէ տէր. դուք թողէք զիս. և ես թողից զձեզ 'ի ձեռս Սոսակիմայ: Անդէն Ռոբովամ և իշխանք իւր խոնարհեալ առաջի տեառն խոստովան եղեն զմեղս իւրեանց, և խօսեցան 'ի հաշտութիւն ընդ Սոսակիմայ արքային. որոյ առեալ զամենայն գանձս տաճարին, և տանն արքայի, զվահանս, և զայլ ոս-

կեղէնս՝ զօրս արար Սողոմոն, և դարձաւ յԵգիպտոս :

Մեռաւ Ռոբովամ արքայ Յուդայ յետ թագաւորելոյ յԵրուսաղէմ ամս եօթնևտասն, և թաղեցաւ 'ի քաղաքի Դաւթի. և թագաւորեաց Աբիա որդի նորա ընդ նորա :

247. Իբրև լուաւ Յերոբովամ զթագաւորել Աբիայ, ել 'ի վերայ նորա ութ հարիւր հազար արամբք. և Աբիա ել ընդ առաջ նորա չորեքհարիւր հազար արամբք, և ճակատեցան 'ի վերայ լերին : Անդ Աբիա բարեպաշտ խորհրդով յանդիմանեաց զնոսա, թէ զիարդ թողին զճշմարիտն Աստուած, և պաշտեցին զանկենդան երինջս, և փոխանակ քահանայից և մարգարէից տեառն առին իւրեանց զանօրէն քուրմս. և ահա ընդ մեզ է, ասէ, Աստուած հարցն մերոց, և ձեզ ոչ ևս յաջողեսցի : Մինչդեռ նա խօսէր, Յերոբովամ խաղացոյց գունդ մի յետևոյս լերին և պաշարեաց զբանակն Յուդայ յառաջոյ և 'ի թիկանց : Աղաղակեաց Աբիա առ տէր զօրութեանց, և ամենայն զօրք նորա. և քահանայքն հարին զփողս նշանակաց: Լուաւ տէր ձայնի նոցա, և էարկ 'ի զօրս Յերոբովամայ արհաւիրս մինչև չխոթել նոցա և սասանել : Յայնժամ զօրք Յուդայ յարձակեցան հարին զնոսա, և կոտորեցին հինգ հարիւր հազար ոգիս : Եւ հալածեաց Աբիա զՅերոբովամ, և էառ 'ի նմանէ քաղաքս բազումս:

Զկնի այսր մեծի յաղթութեան եկաց Աբիա 'ի խաղաղութեան. բայց սուղ եղեն կեանք նորա. զի յետ երից ամաց թագաւորութեան իւրոյ մեռաւ և թաղեցաւ 'ի քաղաքի Դաւթի:

248. Եւ թագաւորեաց Ասա որդի նորա ընդ նորա, այր բարեկրօն և նախանձախնդիր փառացն Աստուծոյ. որ և առ ժամայն երարձ զա-

մենայն պղծութիւնս, և զամենայն կուռս խոր-տակեաց. եհան զկռամոլ մայրն իւր 'ի տիկնութենէ վասն լինելոյ նորա քրմուհի կռոց պղծութեան, և այրեաց զամենայն անտառս: Եւ զօրացուցեալ զամրոցս և զքաղաքս՝ զօրացաւ յամենայնի. զի տէր Աստուած ընդ նմա էր, որ ահ արկանէր ամենայն օտար իշխանաց, և պարգևէր նմա զկատարեալ խաղաղութիւն ընդ ամս տասն:

249. Յերրորդ ամի թագաւորութեան Ասայի մեռաւ Յերոբովամ արքայ Իսրայէլի յանօրէն կռապաշտութեան իւրում. և թագաւորեաց Նաբատ որդի նորա ընդ նորա, և գնաց զճանապարհս հօր իւրոյ: Վասն որոյ զկնի երկուց ամաց սպանաւ 'ի Բաասայ, որ եւ կոչէր զինքն թագաւոր Իսրայէլի, և սպառասպառ ջնջեաց զտունն Յերոբովամայ, և ապա դաշնակցեալ ընդ Եթովպացւոց՝ եւ նոքօք 'ի վերայ Ասայի: Իսկ նա օգնականութեամբ տեառն եհար և սատակեաց զամենայն Եթովպացիս, աւերեաց բազում քաղաքաց. և անթիւ աւարս իբրև դարձ առնէր յԵրուսաղէմ՝ եւ ընդ առաջ նորա բազմութեամբ ժողովրդեան Ազարիա մարգարէ, և խնդակից լեալ նմա խրախուսեաց զամենեսեան կալ մնալ հաւատարիմ 'ի ծառայութեան Աստուծոյ: Որով և նա զօրացեալ Ասայի՝ հետամուտ եղև և անհետ արար զամենայն կուռս: Եւ ժողովեալ յԵրուսաղէմ զամենայն իշխանս յորդորեաց մնալ միշտ յաստուածպաշտութեան: Ընդ ամենեքեան միաշունչ ընդ արքայի երդուան տեառն հնչմամբ եղջեր փողոյ հաւատարմութիւն մշտնջենաւոր:

250. Ի հնգերորդի ամի թագաւորութեան իւրոյ արար Ասա նաւակատիս սեղանոյ տեառն,

և եղեն եօթն հարիւր զուարակս, և եօթն հազար ոչխարս, և ընծայեաց նուէրս մեծագինս, արծաթ և ոսկի, և անօթս և սփռս, և զամենայն տարաւ 'ի ներքս 'ի տուն տեառն: Յետ այնորիկ հիւանդացեալ ցաւով ոտից ամս երկու, և մեռաւ՝ յետ թագաւորելոյ ամս քառասուն. և մեծահանդէս փառօք թաղեցին զնա 'ի հոյակապ շիրիմ՝ զոր ինքն արարեալ էր վասն իւր 'ի քաղաքի Դաւթի:

Իսկ Բաասա բռնակալ արքայն Իսրայէլի յառաջ քան զնա մեռեալ էր, յետ թագաւորելոյ ամս քսան և չորս. և յաջորդեաց զնա Էլա որդի նորա. բայց վասն ամբարշտութեան իւրոյ Զամբրի ծառայ նորուն սպան զնա և ջնջեաց զամենայն տունն Բաասայ. և ինքն Զամբրի բռնակալեաց, բայց աւուրս եօթն եւեթ. քանզի զօրքն չընկալան զնա 'ի թագաւոր. այլ 'ի բանակին անդ թագաւորեցուցին զԱմրի սպարապետ զօրուն: Իսկ Զամբրի յուսահատեալ եմուտ յապարանս և այրեաց զնա 'ի վերայ իւր և մեռաւ: Բայց ժողովուրդն ոչ հաճեցաւ ընդ ընտրութիւն Ամրեայ՝ թագաւորեցուցին զԹամնի. այլ յետ չորից ամաց մեռաւ նա, և զօրացաւ դարձեալ Ամրի և տիրեաց ամս երկոտասան. որ և շինեաց զՍամարիա, և անդ հաստատեաց զաթոռ իւր. և մեռաւ երկու ամօք զկնի մահուան Ասայի արքայի Յուդայ:

251. Ընդ այն ժամանակս թագաւորէր 'ի հայս Հոյ, որ ըստ Մագիստրոսի էր հրաշալի տեսլեամբ. և տիրեաց ամս քառասուն և չորս: Յետ նորա պայազատեաց Յուսակ ամս երեսուն և մի: Իսկ Ասորւոց տիրէր Լաւոսթենէս, և ապա Պիւրիադ: Ի նմին ժամանակի ծաղկեցաւ Եսիոդոս բանաստեղծ, և իշխանն բանաստեղծից մեծն Հոմերոս: Զայնու ժամանակաւ շինեցաւ Սամոս,

և Զմիւռնա 'ի մեծ քաղաքի ընդարձակեցան : Թրակացիք ծաւալեցին : Առ սոքօք մարգարէանային Յէու , Յովէդ , Ազարիա կամ Ադդով , և Անանիա [1] :

## ԳԼՈՒԽ Գ

### Յովսափատ . Աքաաբ . Եղիա մարգարէ :

Ա. Ա. 3092

252 . Յովսափատ ճանաչիւր թագաւոր Յուդայ առ կենդանութեամբ Ասայի հօր իւրոյ . և առ բարեպաշտ կրօնաւորութեան ընդ թագաւորելն զհետ եղև անհետ առնել յերկրէ իւրմէ զամենայն մնացուածս հեթանոսութեան : Եւ ապա առաքեաց զերկոսին իշխանս իւր , որք առանձինն Բէնհայիլ , այսինքն որդիք զօրութեանց, և ընդ նոսին քահանայս , Ղեւտացիս և դպիրս օրինաց՝ երթալ հաստատել զժողովուրդն 'ի պահպանութեան օրինացն Աստուծոյ : Շինեաց քաղաքս և ամրոցս զինուց . և ունէր յԵրուսաղէմ զօրավարս հինգ և բիւրաւոր զօրս , որով դողացուցանէր զշրջակայ ազգս անուամբ ահուան :

253 . Իսկ յետ մահուան Ամրեայ արքայի Իսրայէլի յաջորդեաց Աքաաբ որդի նորա . որ և գտաւ ամբարիշտ քան զամենայն թագաւորս Իսրայէլի . քանզի էառ կին զՅեզաբէլ չարաբեր դուստր արքային Սիդոնացւոց , և կանգնեաց 'ի Սամարիա զկուռս Բահաղու և երկիր եպագանէր :

Յայնժամ երևեցաւ Եղիա մարգարէ վառեալ աստուածային նախանձու ընդդէմ կռամոլ ան-

1 Նաւէք. Ճամ. ալէ = ախէ: Սամուէլ :

*օրինաց. և եկն 'ի Սամարիա առ Աքաաբ արքայ Իսրայէլի և սպառնացաւ նմա թէ բնաւ ոչ տեղա-ցի անձրև կամ ցօղ յերկնից, մինչև ինքն ոչ խնդրեսցէ յԱստուծոյ իւրմէ: Զայս ասացեալ էլ անտի Եղիա և գնաց թագեաւ յայրի միում, ուր կերակրէր զնա Աստուած 'ի ձեռն ագռաւուց հացիւ և մսով: Իբրև ցամաքեցաւ ջուր հեղեղատին՝ չոգաւ 'ի Սարեփթա, և եմուտ 'ի դուռն քաղաքին կին մի աղքատ. խնդրեաց 'ի նմանէ ջուր և հաց: Եւ պատասխանի կնոջն՝ թէ չունիմ բնաւ կերակուր, բայց բուռն մի ալեւր և սակաւ մի իւղ վասն իմ և վասն մանկան իմոյ: Ասաց նմա Եղիա առնել անտի փոքրիկ նկանակ մի նախ ինքեան, և ապա, ասէ, արասցես ձեզ. զի այսպէս ասէ Տէր. սափոր ալերն մի պակասեսցի և կամխաւ իւղոյն մի նուազեսցէ՝ մինչև եկեսցէ անձրև 'ի վերայ երկրի: Հաւատաց կինն. և ընկալեալ զմարգարէն 'ի տուն իւր արար ըստ բանի նորա. և այնուհետև ոչ ալիւրն և ոչ իւղն պակասեցաւ: Մեռաւ որդի կնոջն այնորիկ. և Եղիա յարոյց զնա՝ երիցս փչմամբ 'ի մանուկն, և եղև ուրախութիւն մեծ: Եկաց անդ Եղիա առ ժամանակ մի:*

254. *Արդ 'ի վախճան ամին երրորդի երաշտութեան էլ Եղիա բանիւ տեառն և երևեցաւ Աքաաբու, մինչդեռ շրջէր նա 'ի լերինս գտանել կերակուր երիվարաց իւրոց: Եւ ասէ արքայ ցԵղիա. Եթէ դու իցես խանգարիչն Իսրայէլի: Եւ պատասխանի Եղիա. Ոչ ես, այլ դու և տուն հօր քո խանգարիչ եղէք Իսրայէլի, թողլով զօրէնս Աստուծոյ և գնալով զհետ Բահաղիմաց: Յայնժամ հրամայեաց նմա Եղիա ժողովել զամենայն Իսրայէլ 'ի լեառն Կարմեղոս, և անդ գումարել չորեքհարիւր յիսուն մարգարէս ամօթոյ, և այլ չորեքհարիւր՝ որք պաշտէին զկուռս Յեզա-*

բէլայ: Աքաաբ առաքեալ թէ ոչ դադարէ պատուհաս սովուն, կատարեաց զհրաման Եղիայի. ժողովեաց զամենայն ժողովուրդն և զսուտ մարգարէս: Նախ յանդիմանեաց Եղիա զամենեսին վասն անօրէն կռապաշտութեան նոցա. Մինչև ցե՞րբ, ասէ, կաղայք յերկուս հետս. եթէ տէր է Աստուած, երթայք զհետ նորա. և եթէ Բահաղ իցէ, պաշտեցէք զնա. և արդ տացեն մեզ երկու եզինս, զմին յօշեսցեն մարգարէքն ամօթոյ և դիցեն 'ի սեղանն Բահաղու, և հուր մի մատուցանիցեն. և ես նոյնպէս զմիւս եզն արարից. եթէ Բահաղ լուեալ նոցա առաքեսցէ հուր՝ պաշտեցէք զնա. իսկ եթէ Աստուածն իմ տացէ հուր՝ զնա ծանիջիք ճշմարիտ տէր և արարիչ:

255. Ամենեքեան հաւանեցան ընդ այն. և սուտ մարգարէքն յօշեցին զեզն և հանին 'ի սեղանն 'ի վերայ փայտից, և սկսան կարդալ զանուն Բահաղու յայգուէ մինչև ցօր հասարակ, և ասէին մեծաձայն. Լուր մեզ լուր մեզ, Բահաղ: Խոցանէին սրով զմարմինս իւրեանց. այլ ոչ ձայն գոյր և ոչ հուր: Յայնժամ յառաջ մատեաւ Եղիա և կանգնեաց զկործանեալ սեղան տեառն և եդ 'ի վերայ զողջակէզն, և ասաց հեղուլ 'ի վերայ չորս սափորս ջրոյ. զոր եւ կրկնել երիցս. և մերձեցեալ 'ի սեղան անդր սկսաւ աղաղակել առ տէր 'ի ձայն բարձր. և անդէն էջ յերկնից հուր, եկեր և սպառեաց զողջակէզն և զփայտն: Իբրև տեսին ժողովուրդն զսքանչելիսն, անկան 'ի վերայ երեսաց իւրեանց և աղաղակէին. Արդարև տէր նա է Աստուած: Հրամայեաց ապա Եղիա ժողովրդեան ունել զսուտ մարգարէս Բահաղու, և եա կոտորել զնոսա 'ի հեղեղատն Կիսոնի: Յետ կոտորելոյ զնոսա ել Եղիա 'ի գլուխ լերին և խոնարհեալ խնդրէր 'ի տեառնէ անձրև. զոր

իբրև կրկնեաց եօթն անգամ, սկսաւ ապա տա-
րափ յորդահոս : Իսկ Յեզաբէլ իբրև լուաւ
զամենայն զոր արար Եղիա, սպառնացաւ սպա-
նանել զնա. նորին աղագաւ փախեաւ Եղիա և
նստաւ 'ի լեառն Քորեբ :

256. Յետ այսորիկ Աքաաբ երկիցս պատե-
րազմեցաւ ընդդէմ Ասորւոց. այլ քանզի հայ-
հոյութիւն խօսեցան Ասորիք ընդդէմ Աստու-
ծոյ, նմին իրի նկուն եղեն առաջի Աքաաբու
և մատնեաց տէր զարքայն Ասորւոց 'ի ձեռս Ա-
քաաբու. իսկ նա զի արձակեաց զնա խաղաղու-
թեամբ, սորին վասն ասաց նմա մարգարէն, թէ
սպանցիս դու փոխանակ նորա :

Զայնու ժամանակաւ Աքաաբ կամեցաւ առ-
նուլ զայգին Նաբովթայ. այլ նա ըստ օրինաց
հրաժարեցաւ տալ. վասն որոյ առ սաստիկ տրտ-
մութեան հիւանդացաւ արքայ : Իբրև լուաւ
անօրէնն Յեզաբէլ, եհան հրովարտակ յանուն
արքային և ետ սպանանել զՆաբովթ, և յա-
փշտակեաց զայգի նորա :

257. Ընդ այն ժամանակս մինչդեռ նստէր
Եղիա 'ի լեառն Քորեբայ, երևեցաւ նմա տէր և
մխիթարեաց զնա : Ապա էջ անտի հրամանաւ
տեառն և էօծ զԵղիսէէ փոխանակ իւր : Չոգ-
աւ առ Աքաաբ և յանդիմանեաց զնա ասելով՝
Արքայ, անիրաւութեամբ սպաներ զՆաբովթ, և
անիրաւութեամբ երթաս ժառանգել զայգի
նորա. այլ 'ի մի առ, զի 'ի տեղւոջ՝ ուր լա-
փեցին շունք և խոզք զարիւն նորա, անդ լա-
փեսցեն զարիւն քո. և ոչ Յեզաբէլ ապրեսցի
'ի բարկութենէ տեառն. զի և նա եղիցի կերա-
կուր շանց : Խոնարհեցաւ և զղջացաւ Աքաաբ.
պատառեաց զպատմուճան իւր և ակնկորեաց
յերեսաց տեառն :

258. Յետ այսորիկ իբրև հարկ եղև Աքաաբու

ելանել 'ի պատերազմ ընդդէմ Ասորւոց , խըն-
դրեաց նա զի և Յովսափատ արքայ Յուդայ լիցի
ինքեան նիզակակից և ելցէ ընդ նմա 'ի պատե-
րազմ: Յանձն էառ Յովսափատ, բայց նախ կամե-
ցաւ հարցանել զտէր 'ի ձեռն մարգարէից: Սուտ
մարգարէք Բահաղու անդադար գուշակէին զյա-
ջողութիւն պատերազմին . իսկ 'ի մարգարէից
տեառն կատարելոց 'ի Յեզաբէլայ մի միայն գտաւ
յայնժամ Միքիա մարգարէ , և նա ատելի էր
Աքաաբու : Իբրև հանէին զնա առաջի նորա , ե-
հարց զնա Աքաաբ . Միքիա, ելցի՞ 'ի պատերազմ,
թէ դադարեցայց : Եւ յաւել երդմնեցուցանել
զնա զի յայտնեսցէ զամենայն ճշմարտութեամբ:
Եւ պատասխանի Միքիա . Տեսի ես զամենայն
Իսրայէլ ցրուեալ ընդ լերինս իբրև զհօտ՝ որոյ
ոչ գուցէ հովիւ : Լուեալ Աքաաբու զդու-
շակութիւն ձախողակի պատերազմին՝ ոչ միայն
չհաւատաց , այլ և հրամայեաց արկանել զնա 'ի
բանտ, մինչև դարձցի ինքն 'ի պատերազմէ: Յայն-
ժամ ասէ Միքիա . Եթէ առողջութեամբ դարձ-
ցիս դու 'ի պատերազմէ , ապա տէր ոչ խօսե-
ցաւ ընդ իս :

259 . Իբրև ճակատեցան պատերազմականք,
դիմեցին Ասորիք 'ի վերայ Աքաաբու , և հարին
զնա նետիւք, և հոսէր արիւնն 'ի կառաց նորա
մինչև ցերեկոյ . ապա 'ի մտանել արևու ել ոգին
և շունք լիզեցին զարիւնն ըստ բանին Եղիայի :

Եւ Թագաւորեաց Ոքոզիա որդի նորա ընդ նո-
րա . որոյ անկեալ 'ի վանդակապատէ վերնատան
իւրոյ , խօթացաւ մերձ 'ի մահ . և առաքեաց
զծառայս իւր հարցանել զճանճիկ աստուածն
Ակկարոնի , եթէ արդեօք ապրեսցի՞ 'ի ցաւոց
անտի : Ընդ առաջ եղև նոցա Եղիա, և յանդի-
մանեալ զանմտութիւն Թագաւորին՝ ասաց . Ոչ
ևս իջցես 'ի մահճացն՝ յոր անկար , այլ 'ի նմին

մուգլի։ Իբրև լուաւ Ոքոզիա, ծանեաւ թէ Ե-
ղիա է նա․ առաքեաց առ նա զյիսնապետն հան-
դերձ յիսուն զօրականօք բերել զնա։ Դար-
ձեալ առաքեաց զայլ յիսնապետ․ տեսեալ թէ
ոչ դարձան, յաւել առաքել զայլ յիսնապետ։
Սակայն զառաջինն և զերկրորդ յիսունսն բանիւ
Եղիայի էջ յերկնից հուր և եկեր զնոսա․ իսկ
երրորդ յիսնապետն խոնարհեալ առաջի Եղիայի
աղաչէր զնա և խնդրէր խնայել անձին։ Լուաւ
Եղիա, էջ և գնաց առ Ոքոզիա, և ասաց մեռա-
նել նմա․ և մեռաւ, թագաւորեալ ամս երկուս։

260․ Յետ այնորիկ կամեցաւ Տէր վերացու-
ցանել զԵղիա ՚ի միջոյ մարդկան կենդանւոյն
յերկինս․ զոր իմացեալ Եղիա ել ընդ Եղի-
սէի յԵրիքովէ անցանել ընդ Յորդանան․ և
հար զմաշկեակն իւր ՚ի ջուրն, և առժա-
մայն բաժանեցաւ ջուրն, և անցին յայնկոյս։
Եւ մինչդեռ երթային՝ կառք և երիվարք ձևա-
ցեալք ՚ի լուսափայլ ամպոց շարժմամբ մեծաւ
հասեալ յափշտակեցին զԵղիա կենդանւոյն և
վերացուցին յօդս առաջնորդութեամբ հրեշտա-
կաց․ որ ըստ վարդապետութեան եկեղեցւոյ ունի
մնալ կենդանի յանծանօթ վիճակի անդ մինչև
մերձ ՚ի կատարած աշխարհի, և նահատակիլ ընդ
Ենովքայ, ըստ յայտնութեան Յովհաննու։
Յայնժամ հանգեաւ ՚ի վերայ Եղիսէի կրկին ոգի
Եղիայի․ այսէ ոգի մարգարէութեան և ոգի սքան-
չելագործութեան․ և առեալ նորա զմաշկեակն
զոր ընկէց Եղիա ՚ի վերայ նորա ՚ի վերանալն,
անց նովաւ ընդ Յորդանան և գնաց յԵրիքով և
բժշկեաց անդ զյոռի ջուրն քաղաքին։

261․ Զկնի Ոքոզիայ թագաւորեաց Յովրամ
եղբայր նորա։ Սա թէպէտ չպաշտեաց զկուռս,
բայց և ոչ եբարձ զերկու ոսկեղէն երինջսն Յե-
րոբովամայ։ Ել նա ՚ի պատերազմ ընդդէմ Մօ-

վարայ , առեալ ինքեան նիզակակից և զՅովսափատ արքայ Յուդայ : Իբրև հասին յանապատն անջրդի , ծարաւեաց զօրն. անդ գտեալ Եղիսէի մարգարէին՝ լնացոյց զնոսա ջրով, և գուշակեաց նոցա զկատարեալ յաղթութիւն : Եւ այսպէս 'ի գլուխ տարեալ զյաղթութիւնն դարձան 'ի տեղիս իւրեանց :

Մեռաւ բարեպաշտ արքայն Յովսափատ յետ թագաւորելոյ յԵրուսաղէմ ամս քսան և հինգ . և թագաւորեցոյց քսան ամք յառաջ քան զմահ իւր զՅովրամ անդրանիկ որդի իւր [1] :

## ԳԼՈՒԽ Դ

### Յովրամ, Ոքոզիա, Յէու, և Եղիսէէ մարգարէ :

Ա. Ա. 3111

262. Յովրամ էր յիսուն և երկու ամաց յորժամ թագաւորեաց ինքնագլուխ զկնի հօրն , և ելից չարեօք զթագաւորութիւնն Յուդայ . զի կին նորա էր դուստրն Աքաաբու : Եմուտ Յովրամ յերկիր իւր զամենայն կուռս Իսրայէլի. և դարան գործեալ սպան զվեց եղբարս իւր 'ի ձեռն անօրէն որկայից , և յափշտակեաց զքաղաքս և զժառանգութիւնս նոցա՝ զոր տուեալ էր նոցին Յովսափատ հայր իւրեանց : Եւ նորին աղագաւ բարձաւ 'ի նմանէ յաջողութիւն տեառն. կորոյս զբազում քաղաքս , և եհան 'ի ձեռաց զտէրութիւնն Եդովմայեցւոց՝ որք հարկատու էին Յուդայի : Ապա ելին Փղշտացիք և Արաբացիք , մտին

1 Գ Թագ . ԻԲ . 42 :

յԵրուսաղէմ և աւար հարին զարքունիսն նորա. կոտորեցին զորդիս նորա, զդստերս և զկանայս նորա։ Ոքոզիա եւեթ կրսեր որդին և Գոդողիա կինն ապրեցան։ Եւ կնքեաց զպատուհաս անօրէնութեանց իւրոց չար հիւանդութեամբ, յոր ընդ ամս երկուս մաշեալ՝ փտեցան փորոտիք նորա և մեռաւ. և ոչ թաղեցին զնա 'ի գերեզմանս թագաւորաց։

263. Ընդ այն ժամանակս հռչակեալ էր անուն Եղիսէի վասն մեծամեծ սքանչելագործութեանցն։ Դիմեաց առ նա կին մի այրի և խնդրեաց ազատել զերկու որդին 'ի պարտատեառնէ առն իւրոյ, որ կամէր առնուլ զորդիս իւր ծախս պարտուցն։ Եհարց ցնա Եղիսէէ՝ թէ զինչ կայցէ 'ի տան իւրում։ Եւ նա ասէ. սակաւ մի իւղ առ 'ի յօծանել։ Ասէ Եղիսէէ. Երթ խնդրեա յամենայն դրացեաց քոց ամանս ունայնս, և փակեալ զդրունս քո արկցես զիւղն յամենայն ամանսն մինչև լցցին։ Արար կինն ըստ բանին Եղիսէի. և 'ի փոքրիկ անօթոյ անտի իբրև յաղբերէ լցան ամենայն ամանքն։ Եւ իւղն այն հրաշական բաւական եղև ոչ միայն 'ի վճարել զպարտս առն իւրոյ, այլ և 'ի դարմանել զկեանս իւր։

264. Ի գնալն Եղիսէի 'ի լեառն Կարմելոս բռնադատեաց զնա այր մի սոմնացի բարեպաշտօն՝ իջևանս առնել միշտ 'ի տան իւրում։ Եղիսէէ զիջաւ յաղաչանս առն, որոյ և կինն բազում մարդասիրութեամբ պաշտէր զմարգարէն. և ապա շինեցին նմա վերնատուն մի առանձինն հանդերձ ամենայն կարևոր կարասեօք։ Ուր իբրև հանգեաւ, կոչեաց զկինն առ դուրս սենեկին և ասաց ցնա. Ի յաջորդ ամի 'ի սոյն աւուրս ունիցիս 'ի գիրկս մանուկ. զի էր անզաւակ։ Յղացաւ կինն և ծնաւ ըստ ժամանակին որդի, և լցան ամենեքեան խնդութեամբ։

Իբրեւ հաստատեցաւ մանուկն, յաւուր միում հարեալ 'ի տապոյ արեւու՝ մեռաւ. Իսկ մայրն հանեալ զմանուկն 'ի վերնատունն անդր եդ 'ի վերայ մահճաց Եղիսէի, եւ ինքն նստաւ 'ի վերայ իշոյն եւ գնաց 'ի Կարմեղոս առ այրն Աստուծոյ. անկաւ առ ոտս նորա եւ ասէ արտասուալից հեկեկանօք. Միթէ խնդրեցի՞ ես խնդրել զորդի 'ի տեառնէդ իմմէ: Ծանեաւ Եղիսէէ. եւ ետ զցուպն իւր 'ի ձեռս Գեեզեայ աշակերտին իւրոյ երթալ դնել զայն 'ի վերայ երեսաց մանկանն: Այլ կինն երդուաւ 'ի տէր չթողուլ զմարգարէն. մինչեւ եկն Եղիսէէ եւ մտեալ 'ի վերնատունն իւր փակեաց զդուռն եւ եդ զբերանն իւր 'ի վերայ բերանոյ մանկանն եւ ջերմացոյց զմարմին նորա: Այսպէս արար եօթն անգամ. եւ ահա երաց մանուկն զաչս իւր եւ կենդանացաւ. ապա կոչեալ զմայրն՝ ետ նմա զմանուկն կենդանի:

265. Արար Եղիսէէ եւ զայլ սքանչելիս 'ի ժամանակս սովու. զի զթանաւոր դառն խոտն եփեալ 'ի սանի՝ քաղցրացոյց, արկեալ 'ի նմա փոքր մի ալեւր, զոր կերան ժողովուրդքն: Նոյնպէս քսան գարեգէն նկանակս եւ սակաւ արմտիս բաշխեալ հարիւրաւոր արանց, կերան ամենեքեան, եւ յաւելաւ անտի:

Իբրեւ կամէին Ասորիք դարանակալութեամբ սպանանել զՅովրամ արքայ Իսրայէլի, ծանուցանէր նմա Եղիսէէ եւ ազատէր զնա: Զայն իմացեալ Ասորւոց՝ եկին պաշարեցին զքաղաքն, ուր էր Եղիսէէ: Յայնժամ յաղօթս եկաց մարգարէն, եւ ահա հարան ամենեքին շլացութեամբ եւ այլշութեամբ: Եւ ած զնոսա Եղիսէէ 'ի Սամարիա թագաւորանիստ քաղաք, եւ անդ յաղօթս եկաց եւ բացան աչք նոցա: Սակայն ոչ թողեալ սպանանել զնոսա, այլ հրամայեաց կերակրել եւ արձակել խաղաղութեամբ. որպէս եւ արարին իսկ:

266. Զայս ամենայն լուեալ արքային Ասորւոց՝ եկ և պաշարեաց զՍամարիա յորժամ այնքան սաստկացեալ էր անդ սովն, մինչև ուտել զմիս զազիր կենդանեաց, եւս և զմարդոյ։ Մինչդեռ շրջէր արքայ 'ի վերայ պարսպին, աղաղակեաց որդեկեր կին մի առ նա և ասէ. Ապրեցո զիս, տէր արքայ. կինս այս ասաց ցիս. տուր զորդիդ քո և կերիցուք զդա այսօր, և զորդի իմ կերիցուք առ վաղիւ. եփեցաք զորդին իմ և կերաք զնա. և ասեմ ցսա յաւուրն երկրորդի. տուր զորդիդ քո և կերիցուք զդա, և թագոյց զորդին իւր [1]։

Իբրև լուաւ արքայ զբանս կնոջն, զարհուրեալ պատառեաց զհանդերձս իւր. և առ սաստիկ բարկութեան առաքեաց զինուոր մի սպանանել զԵղիսէէ մարգարէն. այլ անդէն զղջացեալ եհաս և արքայ զկնի զինուորին առ դուռն Եղիսէի և խօսէր զթշուառութենէ սովոյն։ Եւ յայնժամ Եղիսէէ 'ի պատասխանին և ասէ. Ոչ այդպէս. այլ լուր զբան տեառն. այսպէս ասէ տէր. վաղիւ յայսմ ժամու լիցի առատութիւն 'ի դրունս Սամարիայ։ Զինակիր արքային յայնժամ ծաղրելով ինչ ասաց. Եթէ զսահանս երկնից բացցէ տէր և նոչինչ և գայր անձրևեացէ։ Ետ պատասխանի Եղիսէէ. Ահա տեսցես դու աչօք քովք, և անտի մի կերիցես։

267. Ի նմին ժամանակի արք չորք բորոտք նստէին արտաքոյ քաղաքին, որք տանջեալ 'ի սովէ դիմեցին գիշերայն 'ի բանակն Ասորւոց և ոչ զոք տեսին անդ, այլ գտին ընթրիս պատրաստականս, և նստեալ կերան և արբին։ Գտին 'ի վրանս և արծաթ և ոսկի, առին և թագուցին զամենայն. և անտի եկեալ աղա-

1 Դ̅ Թագ. Գլ. Զ. 28։

զակեցին առ գրան քաղաքին և պատմեցին պահապանաց գիրան: Իբրև լուաւ արքայ՝ յարուցեալ ժողովեաց զզօրս, և կասկածեալ թէ մի գուցէ դարան գործեալ իցեն Թշնամիք, առաքեաց զերկու ձիաւորս երթալ լրտեսել զնոսա: Իսկ նոքա շրջեալ յամենայն կողմանս, տեսին՝ զի ճանապարհն լի էր զինու և հանդերձիւ. քանզի այնպէս խռովեալ էր զզօրս Ասորւոց, զի առ անհնարին շփոթութեան թողեալ զամենայն փախուցեալ էին: Եւ լրտեսքն դարձան աւետեօք և պատմեցին արքային: Յայնժամ ամենեքեան դիմեցին արտաքս և մտին յաւար Ասորւոց. ուր առ անչափ առատութեան պարենիցն՝ գրիւ մի նաշհոյ եղև սկեղ միոյ արծաթոյ, և երկու գրիւ գարւոյ՝ սկեղ: Իսկ զինակիրն այն, որ ծաղր արարեալ էր զբան մարգարէին, կարգեցաւ յայնժամ հրամանատար առ դրան, և շփոթեալ երխարաց ոտաթուր կոխեցին զնա և մեռաւ. եւս և ոչ եկեր յառատութենէ անտի, ըստ բանին Եղիսէի:

268. Երկիրն Իսրայէլի յետ 'եօթնամեան սովոյն իբրև վայելէր 'ի խաղաղութեան, եհաս անդր Նեեման իշխան զօրուն Ասորւոց, որ բորոտեալ էր: Հրամայեաց նմա Եղիսէէ երթալ եօթն անգամ լուանալ 'ի Յորդանան. և սրբեսցի, ասէ, մարմին նորա: Չոգաւ Նեեման 'ի Յորդանան և լուացաւ եօթն անգամ ըստ բանի Եղիսէի, և առ ժամայն սրբեցաւ 'ի նմանէ բորոտութիւնն: Ծանեաւ նա զձեռն տեառն, և հաւատաց յարարիչն ամենակալ՝ որ պարգևեաց նմա զառողջութիւն: Անտի դարձաւ ուրախութեամբ 'ի Սամարիա առ Եղիսէէ և խոստովան եղև առաջի նորա զքանչելիս բարձրելոյն. և աղաչէր զնա՝ զի ընկալցի զընծայս ոսկւոյ և ար-

ծաթոյ զոր մատուցանէր նմա. այլ մարգարէն հրաժարեցաւ առնուլ: Յայնժամ խնդրեաց Նեեման առնուլ բեռինս երկուց ջորւոց 'ի հողոյ երկրին՝ ուր գոյ, ասէ, ծանօթութիւն ճշմարտին Աստուծոյ, և տանել 'ի Դամասկոս, և կանգնել 'ի վերայ հողոյն այնորիկ սեղան տեառն և պաշտել զնա: Թոյլ ետ Եղիսէէ առնուլ. և արձակեաց զնա խաղաղութեամբ:

269. Արդ յետ մահուն Յովրամայ արքային Յուդայ Թագաւորեաց Ոքոզիա կրսեր որդի նորա ամաց քսան և երկուց, և արար չար առաջի տեառն յաւէտ անօրէն խորհրդով ամբարիշտ մօր իւրոյ դստեր Աքաաբու: Եւ զի ժողովուրդն զակատեալ էր զհետ կռապաշտութեան յաւուրց անտի հօր նորա, նմին իրի առ 'ի հաճոյանալ ժողովրդեան՝ Ոքոզիա երևեցոյց զինքն փոյթեռանդն 'ի կռապաշտութեան: Էառ զդուստր Յովրամայ արքային Իսրայէլի 'ի կնութիւն, և եղև նմա նիզակակից յառնուլ նորա զքաղաքն Ռամոթ: Յետ յաղթութեանն դարձան երկոքին Թագաւորք 'ի Յեզրայել. և զօրքն մնացին անդ:

Յաւուր միում ժողովեալ զօրապետաց իբրև խօսէին ընդ Յէուայ սպարապետին իւրեանց, ահա պատանեակ մի եմուտ 'ի ներքս և ասէ ցՅէու. Բան ինչ է ինձ ընդ քեզ, իշխանդ: Եւ անդէն Յէու և եմուտ յայլ սենեակ ընդ պատանեկին, որ էր 'ի մարգարէից անտի. և հանեալ պատանեկին զսրուակ իւղոյն՝ արկ 'ի գլուխ նորա և ասէ. Այսպէս ասէ տէր Աստուած Իսրայէլի. օծի զքեզ Թագաւոր 'ի վերայ ժողովրդեան իմոյ, և դու արասցես զարդարութիւն ընդդէմ տանն Աքաաբու. և փոխանակ այնչափ անպարտ արեանց ծառայից իմոց զոր եհեղ ամբարիշտ արքայն՝ սատակեսցես զամենայն սերունդս

նորա . և զՅեզաբէլ կերիցեն շունք 'ի վիճակին Յեզրայելի։ Զայս ասացեալ՝ ել և փախեաւ պատանեակն ըստ պատուիրելոյ Եղիսէի մարգարէին ։

270. Իբրև լուան այլ զօրավարք զիրսն 'ի բերանոյ Յէուայ՝ առեալ զվերարկուս իւրեանց և արարին աթոռ ատենի, և նստուցին զՅէու 'ի վերայ նորա և թագաւորեցուցին. և փչեալ զգուան քաղաքին՝ հարին զփողսն եղջերեայս և ասեն . Թագաւորեաց Յէու ։ Ել անտի Յէու ընդ զօրաց իւրոց և փութացաւ գնալ 'ի Յեզրայել, ուր էր Ոքոզիա ընդ աներոյ իւրում Յովրամայ . ուք իբրև լուան, կասկածեալ ելին ընդ առաջ նորա կառօք, և հանդիպեցան միմեանց յագարակին Նաբովթայ ։ Անդ եհար Յէու նետիւ և սատակեաց զՅովրամ, և հրամայեաց ընկենուլ զդի նորա անդր՝ ուր քարկոծեցաւ Նաբովթ հրամանաւ Յեզաբէլայ մօր նորա ։

Պնդեցաւ Յէու և զկնի Ոքոզիայ՝ որ էր թոռն Աքաաբու, և սպան զնա . կոտորեաց և զեղբարսն նորա ։ Անտի չոգաւ 'ի Յեզրայել . զոր լուեալ Յեզաբէլայ՝ ել և հայէր ընդ պատուհանն, և երկու ներքինիք առ նմա ։ Իբրև եհաս զնա Յէու, հրամայեաց ներքինեացն ընկենուլ զնա 'ի փողոց անդր . և ընկեցին. և հարեալ գլխոյ նորա ընդ որմն՝ ցայտեցաւ արիւնն զորմով . և անդէն կերին շունք զդի նորա . և կատարեցաւ բան Եղիայի 'ի վերայ նորա (257)։ Յետ այնորիկ ետ հատանել Յէու զգլուխս որդւոց և թոռանց Աքաաբու եօթանասուն անձանց . և մեծաշուք փառօք չոգաւ 'ի թագաւորանիստ քաղաքն Սամարիա ։

271. Իսկ Գոթողիա մայր Ոքոզիայ արքային Յուդայ, որում ոչ ինչ ցաւեաց տեսանել

զմահ որդւոյն Իւրոյ, նա մանաւանդ ժամ բարեպատեհ համարեալ բռնակալելոյ զԹագաւորութիւնն Յուդայ, գազանային անգթութեամբ կոտորեաց զԹոռունս իւր զորդիս Ոքոզիայ. յորոց մի եւեթ մանուկ մատաղ զերծաւ յորդեկոտոր ձեռաց նորա. որ զկնի վեց ամաց նստաւ յաթոռ Թագաւորութեան Յուդայ. և թէ զիարդ, տեսցուք զկնի (272):

Արդ Յէու յետ կոտորելոյ զամենայն մերձաւորս Աքաաբու, պատրաստեաց զոհ մեծ առնել Բահաղու, և հրամայեաց անդ գումարիլ ամենայն քրմաց երկրին Իսրայէլի: Եկին ամենեքեան ցնծութեամբ 'ի տունն Բահաղու: Եմոյծ 'ի ներքս արս ութսուն սպառազէնս, որք անդէն 'ի սայր սուսերի կոտորեցին զամենայն քուրմս ըստ ակնարկութեան Յէուայ: Ապա հանին անտի զարձանն Բահաղու և այրեցին, իսկ զտաճարն հիմնայատակ արարին, և զտեղին կարգեցին յաղբիւս քաղաքին: Սփռեցան ապա սուրհանդակք և սպառազէնք յամենայն քաղաքս Իսրայէլի, և կործանեցին զամենայն կուռս: Յէու կատարեալ զամենայն կամս տեառն ապանոցեալ 'ի վերայ տանն Աքաաբու, վրիպեցաւ յայնմ՝ զի եթող անկործան զերկուսին երինջսն Յերոբովամայ, զի մի ժողովուրդն 'ի պատճառս զոհից երթեալ յԵրուսաղէմ՝ յարեսցի 'ի Յուդա. Նմին իրի և ինքն վրիպեալ 'ի պաշտպանութենէ ձեռին ամենակալի մինչև խոպա՝ պարտեցաւ առաջի արքային Ասորւոց, որ 'ի հուր և 'ի սուր մաշեաց զմեծ մասն երկրին Իսրայէլի: Յէու թագաւորեալ ամս քսան և ութ՝ մեռաւ և թաղեցաւ 'ի Սամարիա:

272. Իսկ Գոթողիա որ բռնակալէրն յԵրուսաղէմ, իբրև կոտորէր զԹոռունս իւր զորդիս Ոքոզիայ՝ կին Յովիդայեայ քահանայապետի

գաղացաւ 'ի միջոյ նոցա զՅովաս մանուկ միամեայ և պահեաց 'ի տաճարին, և Յովիդայէ քահանայապետ դաստիարակեաց զնա հայրախնամ տեսչութեամբ ընդ ամս վեց ։ Այս Ժողովեալ զզինուորս՝ խորհեցաւ ընդ նոսա թագաւորեցուցանել զնա։ Էր 'ի տաճարին զինարան մեծ, և զէնք 'ի նմա այլ և այլ․ զինեաց նոքօք զամենեսեան, և զերեսին դրունս տաճարին պաշտպանեաց ։ Այս պատրաստեցին գահ 'ի վերայ բեմբի 'ի գաւթի անդ սեղանոյ ողջակիզաց, և ածին զՅովաս մեծապանծ փառօք բազմութեամբ թիկնապահաց 'ի գահ անդր․ և 'ի ձայնէ բազմութեան փողոցն հաչակեցաւ յԵրուսաղէմ եթէ կենդանի է մի յորդւոց Ոքոզիայ, և օծաւ թագաւոր 'ի տաճարին ։

273. Ընդ այս անակնկալ լուր շփոթեալ Գոթողիա՝ ընթացաւ 'ի տաճար անդր․ և տեսեալ զմանուկ արքայն նստեալ յարքայական աթոռ՝ թագ 'ի գլուխ, և մատեան օրինաց 'ի ձեռին, և շուրջ զնովաւ իշխանք և զօրապետք, և ամենայն Ժողովուրդն յերգս և յօրհնութիւնս, պատառեաց զհանդերձս իւր և ասէ․ Դաւ է, դաւ է ։ Կալան զնա դահճապանք, և քարշեալ տարան ցդուռն արքունի ախոռոյն, և սպանին զնա ։

Իսկ 'ի հանդիսի անդ ամենայն Ժողովուրդն երդուաւ հաւատարմութիւն նորապսակ թագաւորին, և ամենեքեան միաբան երդուան յԱստուած․ և եկաց արքայ զաւուրս լինել 'ի տաճարի անդ ընդ դաստիարակութեամբ քահանայապետին ։ Կործանեցին ապա զտունն Բահաղու․ սպանին զՄաթան քրմապետ առ ոտս սեղանոյն, և զամենայն կուռս մանր խորտակեցին ։ Եւ ապա մեծահանդէս փառօք հանին զարքայն 'ի տաճարէ անտի և նստուցին յաթոռ թագաւորաց ։

274. Զայնու ժամանակաւ պայազատեաց 'ի Հայաստան Կայպակ յետ Ամբակայ երկրորդի ամս քառասուն և հինգ, որ և վանեալ զթըշնամիս՝ արար բազում քաջութիւնս: Յետ որոյ նստաւ Փառնաւազ ամս երեսուն և չորս. ապա Փառնակ երկրորդ ամս քառասուն: Իսկ Աստրեստանեայց տիրէր Ոփրատ, և ապա Ոփրատան:

Ի նմին ժամանակի Լիկուրգոս փիլիսոփայ օրէնս դնէ Սպարտացւոց: Յայնժամ գետն Տիբերիս, որ նախ Ալբուլա կոչէր, անուանի յանուն Տիբերինոսի որդւոյ Կարպենտայ: Իսկ Հռոմայեցիք ծովակալէին ամս քսան և երիս [1]:

## ԳԼՈՒԽ Ե

Յովաս, Ամասիա, Ոզիա, Եսայի, և Երկոտասան մարգարէք:

Ա. Ա. 3126=3246

275. Յովաս եօթնամեայ մանուկ նստաւ յաթոռ թագաւորութեան Յուդայ ընդ դաստիարակութեամբ Յովիդայեայ քահանայապետի, և թագաւորեաց ամս քառասուն: Ջան էարկ նախ նորոգել զտունն տեառն և զարդարել զարդու. որ խանգարեալ էր 'ի նախնեացն իւրոց. յորոյ 'ի պէտս ժողովեաց զտուրս ողորմութեան 'ի ժողովրդենէ, և կազմեաց զամենայն կահս և զսպաս տանն տեառն ըստ առաջին պայծառութեանն:

Յետ այնորիկ մեռաւ Յովիդայէ քահանայապետ հարիւր և երեսուն ամաց. զոր ելոյց ա-

1 Եւսեբ. ժամ. աղէ:

միայն Յուդա, քանզի նա էր նեցուկ Թագաւորութեան և աստուածպաշտութեան: Արար Յովաս, ասէ գիր, ուղղութիւն առաջի տեառն զամենայն աւուրս, զորս լուսաւորեաց զնա Յովիդայէ քահանայ: Եւ արքայ ետ մեծահանդէս թաղել զնա 'ի քաղաքի Դաւթի ընդ թագաւորս:

276. Յայնժամ էր Յովաս ամաց երեսնից. որ և ետ համարձակութիւն իշխանաց յաճախել առ ինքն և մարդելոյզ շողմոգութեամբ հաճոյանալ ինքեան: Եւ խոտորեցուցին զսիրտ նորա 'ի չարիս թիւր սկզբամբք. որով ետ ազատութիւն ամենեցուն պաշտել զոր ինչ և կամիցին. և ահա լցաւ երկիրն անօրէն կռապաշտութեամբ, և թողեալ զտաճար տեառն հեթանոսացան կռոց: Յայնժամ Ազարիա կամ Զաքարիա քահանայ որդի Յովիդայեայ լցեալ աստուածային նախանձու՝ կշտամբեաց զամբարշտութիւն նորա: Նմին իրի հրամանաւ ապերախտին Յովասու քարկոծեցին զնա 'ի սրահի տան տեառն:

277. Իսկ յետ մահուան Յէուայ արքային Իսրայէլի թագաւորեաց Յովաքազ որդի նորա: Սա թէպէտ և ոչ չոգաւ զհետ կռապաշտութեան, այլ և ոչ կործանեաց զերկու երինջս Յերոբովամայ. և նորին աղագաւ խորտակեցաւ զօրութիւն նորա առաջի արքային Ասորւոց: Զայն իբրև ետես՝ խնդրեհեալ առաջի տեառն աղաչեաց օգնել ինքեան. յորմէ զօրացեալ վանեաց զթշնամիս սակաւաթիւ զօրօք:

278. Նմանապէս առ 'ի խրատ ուղղութեան յարոյց տէր 'ի վերայ Յովասու արքայի Յուդայ զԱզայէլ արքայ Ասորւոց, և կոտորեաց զամենայն իշխանս և զժողովուրդս Յուդայ, որք ելին ընդդէմ նոցա: Յովաս 'ի մեծի տագնա-

ալ անդ ժողովեալ զամենայն գանձս տան տեառն և արքունեացն՝ և առաքեաց առ Ազայէլ, զի մի զօրք նորա պաշարեսցեն զԵրուսաղէմ: Այսորիկ Թէպէտ դարձան յետս, սակայն բազում նախատինս ետուն Յովասայ: Որոյ առ դառնութեան սրտին հիւանդացեալ հիւանդութիւն մեծ՝ սպանաւ յերկուց ծառայից իւրոց 'ի գահոյս իւր ամաց քառասուն և եօթանց:

Սա 'ի մանկութեան եղև այր կատարեալ հաստուն խորհրդով. ցորչափ կենդանի էր դաստիարակ նորա Յովիդայէ քահանայապետ. իսկ 'ի կատարեալ հասակի՝ մանուկ անմիտ մոլորեալ յուղղութենէ և յաստուածպաշտութենէ. որ և ոչ արժանի գտաւ Թաղիլ 'ի գերեզմանս Թագաւորաց առ ժահահոտութեան գիական նորա, որպէս ասեն:

Երկու ամօք յառաջ մեռեալ էր Յովաքազ արքայ Իսրայէլի, Թագաւորեալ 'ի Սամարիա ամս վեշտասան. և Թագաւորեաց Յովաս որդի նորա ընդ նորա:

279. Ամասիա որդի Յովասու ամաց քսան և հնգից Թագաւորեաց յԵրուսաղէմ փոխանակ հօր իւրոյ ամս քսան և ինն. և արար ուղղութիւն առաջի տեառն նորոգելով անդրէն զկրօնս աստուածպաշտութեան յերկրին Յուդայ. և կալաւ զսպանողս հօր իւրոյ և սպան զնոսա: Ապա ել երեքհարիւր հազար զօրօք 'ի վերայ Եդովմայեցւոց, և յաղթեաց նոցա բանիւ առն Աստուծոյ, և դարձաւ յաղթական փառօք յԵրուսաղէմ: Այլ յաղթութեամբն այնու շլացեալ՝ ընդ աւարին եբեր և զկուռս Եդովմայեցւոց յերկիրն Յուդայ, և սկսաւ պաշտել զնոսա 'ի կործանումն անձին և քաղաքին. Զի իբրև հպարտացեալ ել 'ի վերայ Յովասու արքային

Իսրայէլի, անդէն 'ի պարտութիւն մատնեցաւ. և կալեալ զնա Յովաս՝ առ տարաւ կապանօք ընդ իւր յԵրուսաղէմ։ Ընդ առեալ զամենայն գանձս քաղաքին՝ ետ քակել և 'ի պարսպէն չորս հարիւր կանգուն. ապա եթող նմա զԵրուսաղէմ, և ինքն դարձաւ 'ի Սամարիա փառօք։

280. Ի սկզբան թագաւորութեան Յովասու արքային Իսրայէլացւոց հիւանդացաւ Եղիսէէ մարգարէ առ 'ի մահ 'ի Սամարիա. և գնաց արքայ յայցելութիւն նորա, և նստեալ առ մահճօքն լայր։ Հաճեալ Աստուծոյ ընդ անկեղծ սէր նորա՝ եդ բանս 'ի բերան մարգարէին, որ գուշակեաց նմա զերիս կատարեալ յաղթութիւնս ընդդէմ Ասորւոց։ Ապա ետ բանալ արքային զպատուհանն. և արձակել ընդ այն նետ մի։ Զոր իբրև արար նա, ասէ Եղիսէէ. Նետ փրկութեան տեառն և նետ փըրկութեան ընդդէմ Ասորւոց։ Մեռաւ ապա Եղիսէէ, և թաղեցաւ 'ի շիրմի. և յետ տարւոյ միոյ բացին զտապան նորա և ընկեցին 'ի նա մեռեալ մի, որ ընդ մերձենալ յոսկերս Եղիսէի՝ կենդանացաւ և կանգնեցաւ։ Մեռաւ և Յովաս արքայ Իսրայէլի. և թաղեցաւ 'ի Սամարիա. և թագաւորեաց Յերոբովամ որդի նորա ընդ նորա։

281. Իսկ առ Ամասիա արքայ Յուդայ՝ որ պաշտէր զկուռս Եդովմայեցւոց, առաքեցաւ մարգարէ 'ի տեառնէ և յանդիմանեաց զնա։ Ընդ այն բան ցասուցեալ նորա ասէ. Միթէ խորհրդական իցես թագաւորի. դադար լեր, գուցէ մեռանիցիս։ Ասէ մարգարէն. Դու ինձ մահ սպառնաս. այլ ես ասեմ քեզ յանուն տեառն. զի դու սպանցիս, փոխանակ զի ոչ անսացեր խրատուց իմոց։ Եւ եղև այնպէս. զի

միաբանեալ դարան գործեցին և սպանին զԱմասիա 'ի Լաքիս, և բերեալ զմարմին նորա յԵրուսաղէմ թաղեցին ընդ հարս իւր :

282. Յայնմ ժամանակի զօրացեալ այլազգեացն ասպատակէին յերկիրն Իսրայելի, և ժողովուրդն կայր 'ի տառապանս. զի Թագաւորն Յերոբովամ զակատեալ զհետ կռապաշտ նախնեաց իւրոց, չունէր բաւական զօրութիւն զդէմ ունել նոցա : Յայնժամ Յովնան մարգարէ որդի Ամաթեայ խրախուսեաց զարքայ 'ի պատերազմ, խոստանալով նմա զյաղթութիւն: Եւ Յերոբովամ սակաւագունդ զօրօք, և խաղացեալ յերկիրն թշնամեաց՝ էառ զԴամասկոս զարքայանիստ քաղաք Ասորւոց, և յինքն դարձոյց զամենայն սահմանս թագաւորութեան իւրոյ, զորս կորուսեալ էին նախնիք նորա : Եւ մեռաւ յետ թագաւորելոյ ամս քառասուն և մի:

283. Արդ յետ մահուան Ամասիայ արքային Յուդայ թագաւորեաց Ոզիա որդի նորա վեշտասան ամաց, և արար ուղղութիւն առաջի տեառն աստուածպաշտութեամբ. որում խորհրդական էր Զաքարիա ոմն իմաստուն: Եւ Ոզիա 'ի պատերազմ ընդդէմ փղշտացւոց, էառ և կործանեաց զբազում քաղաքս նոցա, և շինեաց քաղաք և ամրոց հզօր առ 'ի զուսպ ունել զապստամբ ազգս : Հարկատու կացոյց նա և զԱրաբացիս և զԱմմոնացիս. ամրացոյց զպարիսպս Երուսաղէմի աշտարակօք. արար յաջողութեամբ զբազում մեքենայս ճարտարագործս՝ ձգել քարինս մեծամեծս, և կարգաւորեաց զզօրս. որով և հռչակեալ անուն նորա ցհեռաւոր տեղիս՝ ահ արկանէր ամենեցուն. քանզի տէր օգնէր և զօրացուցանէր զնա :

284. Ընդ այս ամենայն յաղթութիւնս մե-

ծառայեալ արքային՝ եմուտ 'ի սրբութիւնն և կամէր ծխել խունկս 'ի վերայ սեղանոյ, որ չէր նմա օրէն։ Յայնժամ մեծ քահանայապետն Ազարիա ընդ այլ քահանայից եւ ընդդէմ արքային, և ասէ. Ոչ է քո, Ոզիա, ծխել խունկս տեառն. ել արտաքս։ Իբրև ոչ անսայր արքայ, եհար զնա տէր բորոտութեամբ. և փութացաւ և ել անտի, և մեկուսացաւ յառանձին տան իւրում, թողեալ զթագաւորութիւնն 'ի ձեռս Յովաթամայ որդւոյ իւրոյ. և եկաց բորոտութեամբ ամս չորս և մեռաւ, թագաւորեալ ամս յիսուն և երկու։

285. Զայսու ժամանակաւ սկսաւ մարգարէանալ մեծն 'ի մարգարէս Եսայի որդի Ամովսայ յազգականութենէ թագաւորացն Յուդայ. որ ըստ սրբոց հարց սղոցեալ նահատակեցաւ 'ի Մանասէէ 'ի կշտամբել նորա զնա վասն չարեաց իւրոց։ Ի մարգարէութիւնս իւր գուշակէ զթշուառութիւն ժողովրդեանն, ըզմեծամեծ շնորհս Աստուծոյ, զաստուածահրաշ մարդեղութիւն Բանին Աստուծոյ և զամենայն անօրինական գործս, զչարչարանս և զմահ նորա։ Գուշակէ դարձեալ և զաւերումն աշխարհի 'ի վերջին դատաստանի։ Նմին իրի կոչեն զնա սուրբ հարք Աւետարանիչ մարգարէ։

286. Ընդ այն ժամանակս ծաղկեցան և երկոտասան մարգարէք, որք յաղագս սղութեան մարգարէական գրոց նոցա փոքր կոչեցան առ համեմատութեամբ չորից մեծ մարգարէից։ Յերկոտասան մարգարէս առաջին համարի Ովսէէ որդի Երեայ 'ի ցեղէն Իսաքարայ. և մարգարէացաւ յաւուրս Ոզիայ, Յովաթամայ, Աքազու և Եզեկիայ թագաւորացն Յուդայ ամս ութսուն։ Ծնաւ նմա որդի, և հրամանաւ տեառն կոչեաց զանուն նորա Յեզրայել. առ 'ի նշանա-

կել՝ թէ որպէս պատուհասեաց Աստուած զտունն Աքաաբու 'ի ձեռն Յէուայ վասն կռապաշտութեանցն, նոյնպէս պատուհասեացէ ընդ փոյթ զամբարշտութիւն որդւոցն Յէուայ: Դարձեալ ծնաւ նմա դուստր, և եդ զանուն նորա Լօրուջամա, այն է Չողորմեալ. առ 'ի ցոյց՝ թէ յետ այնչափ ողորմութեանց ոչ ևս գթասցի 'ի նոսա տէր իբրև մայր, այլ իբրև անաչառ դատաւոր պատժեսցէ զամբարիշտս: Դարձեալ ծնաւ նմա որդի, և եդ զանուն նորա Լօամմի. այսինքն Ոչ ժողովուրդ իմ. 'ի ցուցանել՝ թէ եկեսցէ ժամանակ, զի Իսրայէլ ոչ ևս եղիցի ժողովուրդ Աստուծոյ: Նա և եցոյց նմա Աստուած՝ թէ ընդ բազում ժամանակս Իսրայէլեացիք եղիցին առանց թագաւորի, առանց պատարագի, առանց քահանայի և առանց մարգարէի. այլ յետ այնորիկ 'ի կատարածի դարձցին և պաշտեսցեն զտէր Աստուած ճշմարտութեամբ: Եւ մեռաւ Ովսէէ սրբութեամբ՝ ամաց հարիւրոց:

287. Ամովս հովիւ էր և սկսաւ մարգարէանալ յաւուրս Ոզիա արքայի. նախագուշակէ զկործանումն տանն ցեղից Իսրայէլի, կշտամբէ և զՅուդա. այլ քաջք բանիւք յորդորէ զնոսա փոխել զգնացս և ապաշխարել: Ի քարոզել Ամովսայ 'ի Բեթէլ. Ամասիա քուրմ երնջոյն Բեթէլայ մախացեալ՝ ամբաստան եղև զնմանէ առ արքայ Յերոբովամ, և ասէր ցմարգարէն ելանել անտի և գնալ յերկիրն Յուդայ: Ասէ Ամովս. Եւ դու Ամասիա, որ արգելուս զիս չմարգարէանալ 'ի վերայ Իսրայէլի, լուր զոր ասեմ. ուստերք քո և դստերք քո սրով անկցին, և դու մեռցիս յերկրի անթլփատից. և Իսրայէլ գերելով գերեսցի: Եւ գուշակութիւնս այս կատարեցաւ անվրէպ:

Ըստ ոմանց հարց Ամոս ընկալաւ զվէրս յորդւոց Ամասիայ քրմի և մեռաւ մարտիրոսութեամբ:

288. Յովէլ էր որդի Բաթուէլի, և մարգարէացաւ յաւուրս Ոզիայ 'ի վերայ Յուդայ և Բենիամինի, կոչելով զնոսա յապաշխարութիւն կենաց առ 'ի ցածուցանել զբարկութիւն Տեառն: Նա ասէ՝ թէ 'ի վերջին աւուրս աշխարհի գայցէ Տէր դատել զաշխարհ 'ի ձորն Յովսափատու: Այս քաջալերէ և խոստանայ զմեծամեծ բարիս Հրէից և հեթանոսաց՝ առաքմամբ Հոգւոյն սրբոյ, որ կատարեցաւ յաւուր պենտեկոստէին. և ինքն մեռաւ սրբութեամբ:

289. Յովնան որդի Ամաթեայ մարգարէացաւ վասն քաղաքին Նինուէի. քանզի հրամայեաց նմա Աստուած երթալ անդր և քարոզել նոցա սպառնալեօք՝ թէ այլ ևս երեք աւուրք և Նինուէ կործանեսցի: Խորհէր Յովնան, թէ 'ի լսել ժողովրդեան զայն ահաւոր սպառնալիս՝ դառնայցեն և ապաշխարեսցեն, և սուտ լիցի մարգարէութիւն իւր: Նմին իրի էջ 'ի Յոպպէ և եմուտ 'ի նաւ՝ փախչել 'ի Թարսիս: Այլ անդէն հանդիպեալ սաստիկ հողմոյ՝ սկսաւ նաւն վտանգել. նաւավարքն ամենայն խռովեալ կային. և Յովնան ննջէր 'ի խորշ մի նաւին. յարոյց զնա նաւապետն և պատուիրեաց նմա աղօթել առ Աստուած իւր: Իբրև տեսին թէ և ևս սաստկանայ ալէկոծութիւնն, արկին վիճակ՝ թէ վասն ո՞յր իցեն չարիքն այն. և ել վիճակն Յովնանու: Յայնժամ խոստովան եղև Յովնան զյանցանս իւր և ասէ. Գիտեմ, զի վասն իմ է մրրիկս այս. արդ առէք և ընկեցէք զիս 'ի ծով, և հանդարտեսցի: Իբրև ընկեցին զնա 'ի ծով, առժամայն դադարեցաւ հողմն. և առաքեաց Աստուած վիշապ ձուկն մի, և

եկուլ զնա։ Եկաց մարգարէն 'ի փոր կիտին զերիս տիւս և զերիս գիշերս իբրև 'ի տեղի ապաշխարութեան և աղօթից. և յետ այնորիկ եթուք զնա ձուկն 'ի ցամաք։

Դարձեալ պատուիրեաց նմա Աստուած երթալ քարոզել 'ի Նինուէ։ Գնաց մարգարէն 'ի քաղաքն մեծ, որոյ երկայնութիւն դրանէ 'ի դուռն էր քսան և չորս մղոն, երից աւուրց ճանապարհի. և անդ սկսաւ քարոզել Յովնան՝ թէ յետ երից աւուրց Նինուէ կործանեսցի։ Յաճեղ ապառնալեաց ամբոխն 'ի համբաւոյ սքանչելեաց կլանելոյ վիշապ ձկան զՅովնան այնպէս զարհուրեցան Նինուէացիք, մինչև 'ի խորգ և 'ի մոխիր ապաշխարել ամենեցուն 'ի թագաւորէն մինչև ցյետին ռամիկն։ Ընկալաւ Աստուած զապաշխարութիւն նոցա և ոչ կործանեաց զքաղաքն. այլ ընդ այն տրտմեցաւ Յովնան, զի ոչ կատարեցաւ մարգարէութիւն իւր։ Եւ ելեալ 'ի քաղաքէ անտի՝ իբրև մնայր տակաւին թէ զինչ լինիցի կատարածն, 'ի նմին գիշերի բուսոյց տէր բոյս մի տերևալից առ 'ի հովանի լինել մարգարէին։ Ընդ որ ուրախ եղև Յովնան. այլ 'ի յաջորդ գիշերի որդան հարեալ զարմատն՝ ցամաքեցոյց զբոյսն. և 'ի ծագել արևու քաղէին ոգիք մարգարէին առ մեծի տապոյ, մինչև մահ խնդրել անձին և ասել. Լաւ էր ինձ մեռանել, քան զայս կեանս իմ։ Ասէ ցնա տէր. Դու այդչափ տրտմեալ ես ընդ կորուստ դդմենւոյդ, յոր չեղեր ինչ աշխատ. 'ի գիշերի ել և 'ի միւս գիշերի կորեաւ. որդ զխնայել կամիս, զի ես կործանեցից զՆինուէ քաղաքն մեծ, յորում կան հարիւր և քսան հազար ոգիք։ Այսու հայրագութ յանդիմանութեամբ ուղղեաց տէր զՅովնան յանուղիղ մտաց իւրոց. որ և մեռաւ ապա սրբութեամբ։

290. Միքիա 'ի ցեղէն Յուդայ կամ Եփրեմի մարգարէացաւ 'ի ժամանակս Յովաթամու. գուշակեաց զգերութիւն Իսրայելացւոց, եւ Յուդայ, վասն կռապաշտութեան եւ անիրաւութեանց նոցին։ Խօսի զերջանկութենէ եկեղեցւոյն Քրիստոսի, եւ կշտամբէ զապերախտութիւն Հրէից։ Յայտնի ցուցանէ զծնունդ փրկչին 'ի Բեթղեհէմ Յուդայ. եւ զայլ բազում բանս։ Եւ կնքեաց զկեանս իւր մարտիրոսութեամբ հրամանաւ Յովրամայ։

291. Աբդիու ժամանակակից էր Յովաթամայ. իսկ մարգարէութիւն նորա բովանդակ ուղղեալ է 'ի վերայ Եդովմայեցւոց, սպառնալով նոցա զպատուհաս վասն անբարշտութեան՝ զոր անբարշտեցան յեղբարս իւրեանց յորդիս Յակոբայ. նկարագրէ զկործանումն նոցա, եւ զյաջողութիւն Եբրայեցւոց 'ի խորհուրդ նորոյն Իսրայելի. եւ ինքն մեռաւ խաղաղութեամբ։

292. Նաւում եղկեսացի նախապատմէ զգալուստ Սենեքերիմայ 'ի պաշարումն Երուսաղէմի։ Ի սկիզբն մարգարէութեան յանդիման առնէ զաստուածային արդարութիւնն 'ի վրէժխնդրութիւն ամբարշտաց. գուշակէ զկործանումն Նինուէի եւ զկորուստ Սենեքերիմայ. մի կողմն քաղաքին, ասէ, եղիցի հեղեղեալ 'ի ջուրց, եւ միւս կողմն յափշտակեսցի 'ի թշնամեաց։ Եւ այս մարգարէութիւն անվրէպ կատարեցաւ. իսկ ինքն մեռաւ սրբութեամբ։

293. Ամբակում մարգարէացաւ նախ քան զգերութիւն Բաբելոնի. որ եւ ողբայր առաջի տեառն՝ տեսեալ զանիրաւութիւնս ժողովրդեան. եւ ցուցանէ զաստուածային պատուհասն՝ որ հանդերձեալ էր գալ 'ի վերայ Երուսաղէմի։ Ի մխիթարութիւն մարգարէին նորոգ է

Աստուած զխոստումն յայտնելոյ իւրոյ մարմ-նով 'ի մէջ մարդկան. և մարգարէն բերկրի ցնծութեամբ ընդ այն, և վախճանէ զկեանս իւր :

294. Սոփոնիա որդի Քուսեայ մարգարէա-ցաւ յաւուրս Յովսեայ արքային Յուդայ վասն թշուառութեանց Երուսաղէմի, սպառնա-ցեալ և ընդդէմ փղշտացւոց և այլոց այլազ-գեաց՝ առ 'ի մեղմել զչարութիւն նոցա: Եւ կնքեաց զկեանս իւր սրբութեամբ :

295. Անգէ մարգարէացաւ 'ի ժամանակս Դարեհի. որ է զի սպառնայ ժողովրդեան, և է զի քաջալերէ, խոստանալով թէ երկրորդ տաճարն հրաշափառագոյն եղիցի. զի անդր ե-կեսցէ Աստուած մարդացեալ : Եւ ինքն մեռաւ խաղաղութեամբ :

296. Զաքարիա որդի Բարաքեայ ժամանա-կակից Անգեայ. սորա եղեն խրախուսիչք շի-նութեան տաճարին յաւուրս Զօրաբաբէլի: Յայտնեցան Զաքարիայ փոփոխութիւնք բա-զում թագաւորութեանց զանազան նշանօք, և կատարեցան իսկ : Բացայայտ ևս խօսեցաւ վասն գալստեան փրկչին : Թուի թէ սա է զորմէ խօսեցաւ Քրիստոս յաւետարանի, թէ սպանաւ ընդ մէջ տաճարին և սեղանոյ. զոր ոմանք իմանան վասն Զաքարիայ հօր Յովհան-նու Մկրտչի (524) :

297. Մաղաքիա մարգարէ, որ վերջին հա-մարի 'ի մարգարէս. 'ի մարգարէութիւնս իւր կշտամբէ զիսրայելացիս վասն մեղաց իւրեանց. խօսի զվերջին դատաստանէ և զգալստենէ փրկչին : Զսմանէ ասեն թէ մեռաւ մանկահա-սակ յետ կատարման տաճարին :

## ԳԼՈՒԽ Դ

Յովաթամ, Աքազ, Եզեկիա թագաւորք Յուդայ. և թագաւորք Իսրայէլի, և գերութիւն նոցա։
Ա. Ա. 3246

298. Յովաթամ արքայ Յուդայ ամաց քսան և հնգից նստաւ թագաւոր. և գովելի եղև ամենեցուն յաղագս աստուածպաշտութեանն համանման հօր իւրոյ։ Շինեաց զարևելեան դուռն տաճարին մեծաշէն, կանգնեաց բազում շինուածս ՚ի վերայ պարսպին Երուսաղէմի. կառոյց և ամրոցս և աշտարակս։ Վարեաց ըզթագաւորութիւն իւր ամենայն յաջողութեամբ, մինչև նուաճել պատերազմաւ զարքայն Ամոնացւոց։ Եւ կացեալ յիշխանութեան ամս վեշտասան՝ մեռաւ խաղաղութեամբ և թաղեցաւ ՚ի քաղաքի Դաւթի։

299. Աքազ որդի Յովաթամայ ամաց քսանից թագաւորեաց յԵրուսաղէմ, և արար չար առաջի տեառն քան զամենայն թագաւորս Յուդայ։ Եմոյծ յերկիր իւր զկուռս Իսրայէլի և այլազգեաց. ընդ նոսին և զամենայն հեթանոսական օրէնս և պաշտամունս. մինչև զոհել զորդիս իւր և նուիրել կռոց դարշելեաց։ Եւ նորին աղագաւ չարաչար հարաւ նախ յԱսորւոց, որք առեալ հարին զերկիրն Յուդայ, և զամենայն աւարն տարան ՚ի Դամասկոս։ Երկրորդ հարաւ յԻսրայելացւոց անտի, և կորոյս զբազում զօրս ընդ որդւոյ իւրում Ամասիայ, և ընդ երևելի իշխանաց իւրոց. գերեցան և բիւրաւորք ՚ի ժողովրդենէն, այլ անդրէն յետս դարձուցան բանիւ Ովդեդ մարգարէի։

300. Յետ այնորիկ եկին 'ի վերայ Աքազու Եդովմայեցիք և Փղշտացիք. և առին զբազում քաղաքս Յուդայ: Աքազ 'ի յետին յուսահատութեան մինչդեռ ճեմէր առ Ջրմղին, յանկարծ ել առաջի նորա Եսայի մարգարէ. և քաջալերեաց զնա չերկնչել 'ի թշնամեաց, որք փութով կործանելոց էին. և բազում բանիւք և նշանօք խրախուսեաց զնա ապաւինել յԱստուած և դառնալ 'ի չարեաց իւրոց: Այլ նա յամառեալ յամբարշտութեան իւրում, ոչ ինչ չանսաց 'ի բանից մարգարէին. նմին իրի ոչ մնացին չարիք, որ ոչ եկին 'ի գլուխ նորա յամենայն կողմանց:

301. Ապա ժողովեալ Աքազ զամենայն արծաթ և ոսկի, որչափ գտաւ 'ի տան տեառն, յարքունիս իւր, և 'ի տունս իշխանաց, առաքեաց առ արքայն Ասորեստանեայց Թագղաթփաղասար՝ ազատել զնա 'ի ձեռաց թշնամեաց իւրոց: Եւ նորա հասեալ 'ի վերայ արքային Իսրայէլի, որ 'ի նեղ արկեալ էր զԱքազ, գերի վարեաց զԻսրայելացիս հանդերձ բազում աւարօք. ել ապա 'ի վերայ Դամասկոսի և սպան զարքայն Հռասին: Անդր չոգաւ Աքազ ընդ առաջ արքային Ասորեստանեայց. և տեսեալ զսեղան կռոցն Դամասկոսի՝ էառ զձև և զչափ նորին և առաքեաց յԵրուսաղէմ առ Ուրիա քահանայապետ՝ շինել ըստ այնմ օրինակի նոր սեղան 'ի տան տեառն. և նա արար այնպէս: Իսկ զպղնձի սեղանն կանգնեալ 'ի Սողոմոնէ՝ փոխեաց անտի, և 'ի տեղի նորա եդ զսեղանն զայն պղծութեան:

302. Աքազ անցեալ ըստ չափ յամբարշտութեան իւրում, 'ի բաց արար զամենայն սպասս տան տեառն և խորտակեաց զնոսա. եբարձ զերկոտասան ցուլսն պղնձիս. անհետ ա-

լար զվարագոյրն և զպատուանդան աթոռոյն , ուր թագաւորք նստէին 'ի շաբաթս և 'ի տօնս 'ի ժամու զոհից ։ Ապա իսպառ տապալեալ յաւարչէն՝ փակեաց զդրունս տաճարի նորա , և արար սեղանս գարշելեաց յամենայն անկիւնս Երուսաղէմի ։ Այնպէս արարին և յամենայն քաղաքս Յուդայ . շինեցին սեղանս 'ի վերայ բարձանց , արկանել խունկս կռոց ։ Եւ ասաց անօրէնն 'ի սրտի իւրում . խնդրեցից զաստուածս Դամասկոսի , որք հարին զիս , զի նոքա զօրաւորք են . նոցա այսուհետև զոհեցից , և օգնեսցեն ինձ ։ Զայս օրինակ ամբարշտեալ թագաւորեաց Աքազ ամս վեշտասան , և մեռաւ . այլ ոչ թաղեցաւ 'ի գերեզմանս թագաւորաց ։

303 . Զկնի Աքազու թագաւորեաց 'ի վերայ Յուդայ Եզեկիա բարեպաշտ որդի նորա ամաց քսան և հնգից . որ անդէն և անդ ջանացաւ նորոգել և յառաջին պայծառութիւն անդր ածել զկարգս աստուածպաշտութեան ։ Եհան վաղվաղակի հրաման բանալ և կազմել զդրունս տաճարին . և ժողովեալ զամենայն քահանայս և Ղեւտացիս՝ հրամայեաց նոցա սրբել զանձինս և զտուն տեառն . որք աշխատ եղեն աւուրս վեշտասան , և սրբեցին զպղծութիւնն և զգաւիթս . զսեղանն ողջակիզաց եդին յառաջին տեղւոջ , և զամենայն սպասն ըստ առաջին կարգին յօրինեցին ։ Ապա ժողովեալ Եզեկիայ զամենայն իշխանս . մատոյց Աստուծոյ զոհս և ողջակէզս 'ի ձայն սաղմոսաց , և ազգի ազգի նուագարանաց ։ Առաքեաց քարոզս ոչ միայն յերկիրն Յուդայ , այլ և ընդ ամենայն երկիրն Իսրայէլի , և հրաւիրեաց զնոսա գալ ժողովել յԵրուսաղէմ և առնել զպասեքն տեառն ։ Բազումք դարձան 'ի մոլորութենէ և եկին յԵրուսաղէմ , և արարին 'ի միասին ընդ

Յուդայ զպասեքն . խորտակեցին զամենայն կուռս խերեանց . կոտորեցին զանտառս, և բարձին զբարձրաւանդակսն յամենայն Հրէաստանէ :

304 . Եբարձ Եզեկիա զամենայն հետս աւերդապաշտութեան, և զբարձունսն՝ յորս զոհէին Աստուծոյ ճշմարտին՝ այլ ընդդէմ հրամանի նորա : Եւ որ մեծն է, խորտակեաց զօձն պղնձի՝ զոր արար Մովսէս յանապատին . զոր 'ի սկզբան պահէին իբր յիշատակ աստուածային բարերարութեանց, ապա կարգեալ էին 'ի դասս կռոց և զոհէին նմա : Այսպէս յամենայն արարս իւր զոր միանգամ գործէր Եզեկիա յաղագս կրօնից աստուածպաշտութեան, նպատակ ըղձանս Աստուծոյ միայն ունէր յինքեան ակներև : Նմին իրի ասէ գիր . Յետ նորա նման նմա ոչ եղև յամենայն թագաւորս Յուդայ, և յեղեալսն յառաջագոյն քան զնա . յարեցաւ 'ի տէր և ոչ մեկնեցաւ 'ի նմանէ : Եւ Աստուած օրհնեաց զնա և յաջողեաց զգործս նորա . որով զօրացեալ նորա՝ թօթափեաց զլուծ Ասորեստանեայց, և վանեաց զփղշտացիս յամենայն քաղաքաց Յուդայ . եմուտ քաջութեամբ յերկիր նոցա, աւար եհար, և խորտակեաց զզօրութիւն թշնամեացն :

305 . Յամին չորեքտասաներորդի եւ Սենեքերիմ արքայ Ասորեստանեայց զօրու ծանու, և տիրեալ սահմանագլուխ քաղաքաց՝ խորհեցաւ գալ 'ի վերայ Երուսաղէմի : Հիւանդացաւ յայնժամ Եզեկիա առ 'ի մահ . և եկն առ նա Եսայի մարգարէ և ասէ . Այսպէս ասէ տէր . հրաման տուր, և արա կարգաւորութիւն վասն տան քո և թագաւորութեանդ, զի մեռանիս 'ի հիւանդութենէ այտի : Ելաց Եզեկիա լալիւն մեծ, և աղաւթեալ 'ի տէր՝ խնդրեաց 'ի նմանէ կեանս

ջերմ պաղատանօք ։ Եւ լուեալ եղեն աղօթք նորա · զի դարձեալ եկն առ նա Եսայի մարգարէ և ասէ · Այսպէս ասէ տէր · լուայ աղօթից քոց · աՀա ես բժշկեցից զքեզ և յաւելից յաւուրս քո ամս հնգետասան , և ՚ի ձեռաց Ասորեստանեայց ապրեցուցից զքեզ ։ Եւ ապա ուսուցանէ մարգարէն Եզեկիայի կազմել ապեղանի ՚ի թզոյ՝ և դնել ՚ի վերայ վիրին իւրոյ ։ Որով առողջացեալ արքայ՝ ել յաւուր երրորդի ՚ի տաճարն և երկիր եպագ տեառն [1] ։

306 · Իսկ Սենեքերիմ արքայ հասեալ ՚ի Լաքիս՝ պատրաստէր պաշարել զԵրուսաղէմ ։ Հրեշտակս առաքեաց առ նա Եզեկիա և խնդրէր առնել խաղաղութիւն ընդ նմա ։ Եւ Սենեքերիմ հաճեալ ընդ այն՝ խնդրեաց և էառ ՚ի նմանէ երեք հարիւր տաղանդ արծաթոյ , և երեսուն տաղանդ ոսկւոյ ։ Այլ ՚ի վերայ այնր ամենայնի առեալ Սենեքերիմ դաշնադրութեանն, և առաքեաց երիս պատգամաւորս առ Եզեկիա՝ զի անձնատուր լիցի Ասորեստանեայց ։ Եւ մերձեցեալ նոքա յԵրուսաղէմ և կացեալ ՚ի վերայ ջրմղին վերնոյ , Ռափսակ գլխաւոր նոցա սկսաւ ծանր բանիւք ստիպել զԵզեկիա ՚ի հնազանդութիւն Սենեքերիմայ արքային , և ապա ժայթքեաց հայհոյութիւնս ընդդէմ Թագաւորին և ընդդէմ Աստուծոյ ։ Իբրև լուաւ զայն Եզեկիա ՚ի ձեռն պատգամաւորաց իւրոց , պատառեաց զհանդերձս իւր , և քուրձ զգեցեալ եմուտ ՚ի տաճար տեառն · և առաքեաց զքահանայս քրձազգածս առ Եսայի , աղաչել զի օգնեսցէ նմա աղօթիւք ։ Պատասխանի ետ Եսայի · Մի ինչ երկիցես , զի այսպէս ասէ տէր զօրութեանց վասն Սենեքերիմայ · մի մտցէ նա ՚ի քա-

1 Դ̃ Թագ · Գլ · Ի̃ ։

զօրք յայդ, այլ ընդ Ճանապարհ ընդ որ եկն ընդ նոյն դարձցի, և ապանցի յիւրում քաղաքի: Նա 'ի գիշերին յայնմիկ եւ հրեշտակ տեառն և սատակեաց զամենայն բանակն Թշնամեաց. և Սենեքերիմ ամօթապարտ փախուցեալ գնաց 'ի Նինուէ թագաւորեալ քաղաք իւր, և սպանաւ յորդւոց իւրոց առ սեղանոյ Նասրաքայ կռոց՝ մինչդեռ զոհէր նոցա: Նա անդորրացեալ Եզեկիա 'ի Թշնամեաց և անդրդուելի կացեալ 'ի բարեպաշտութեան, մեռաւ՝ թագաւորեալ ընդ ամենայն ամս քսան և ինն, և թաղեցաւ 'ի բարձրագոյն անդւոջ գերեզմանացն արքայից:

307. Իսկ յետ մեռանելոյ Յերոբովամայ Երկրորդի արքային Իսրայէլի (280), այնքան բազմացան գաղտաւէր խռովարարք, մինչև հազիւ յետ երեքտասան ամաց Զաքարիայ որդւոյ նորա կարող լինել յաջորդել զնա: Բայց Սեղղում ոմն միացեալ ընդ ոխերկայից յարեաւ 'ի վերայ նորա և սպան զնա, և ինքն նստաւ թագաւոր: Այլ յետ միոյ ամսոյ Մանայեմ ոմն եկեալ 'ի Սամարիա, սպան զնա, և առ զթագաւորութիւն նորա. որ և բազում անգթութեամբ թագաւորեաց ամս տասն և մեռաւ: Ապա թագաւորեաց Փակէաս որդի նորա ամս երկուս ևեթ. քանզի Փակէէ ոմն որդի Ռոմելայ գործակցութեամբ դաշնակցաց իւրոց յարեաւ 'ի վերայ նորա 'ի Սամարիա, սպան զնա, և ինքն թագաւորեաց ամս քսան: Յայնժամ եւ արքայն Ասորեստանեայց յերկիրն Իսրայէլի. եկա յափշտակեաց զամենայն գանձս քաղաքաց, և զմասն ժողովրդեան գերի վարեալ բնակեցոյց 'ի Քաղա և 'ի Քաբոր: Իսկ Փակէէ արքայ Իսրայէլի սպանաւ, և Ովսէէ դարանակալ նորին թագաւորեաց ընդ նորա ամս ինն:

308. Ի ժամանակս սորա լի էր երկիրն Իս-

բայելի անիրաւութեամբ և անօրէն կապաշտութեամբ, մինչև զզաւակս իւրեանց ընդ հուր անցուցանել 'ի պատիւ Բահաղու: Թէպէտ գթացեալ Տեառն՝ առաքէր առ նոսա մարգարէս քարոզել ապաշխարութիւն, այլ նոքա ծաղր առնէին և հալածէին զնոսա: Նմին իրի իբրև ետես տէր՝ եթէ լցաւ չափ անօրէնութեանն Իսրայէլի, կնքեաց առ 'ի մերուստ ըղգատակնիք պատուհասին վերջնոյ, ապաստապուտ կործանել զիսրայելեան թագաւորութիւնն այդմամբ: Թող եւ հեթանոսաց, զի որ յիսրայելեան աշէ սատանէին յառաջագոյն, գլորգեալ զամենայն ազգն և զգահն արքունի, և զազգն ողջոյն իբրև զգերի մի անարգ կապանօք առեալ վարեացն յանդարձ տարութիւն: Կատարիչ պատահանեացն Աստուծոյ՝ Սաղմանասար արքայ Ասորեստանեայց. զի նախ հարկատու կացուցեալ զՈվսէէ արքայ Իսրայէլի, իբրև ետես՝ եթէ ապստամբեցաւ նա, եկն և պաշարեաց զՍամարիա ամս երիս, և էառ զթագաւորեալ քաղաքն. կապեաց զարքայն Ովսէէ և ընդ տասն ցեղիցն Իսրայէլի առեալ գերի վարեաց զամենեսեան յԱսորեստան, և բնակեցոյց ընդ այլ գերեալսն յառաջագոյն:

Այլ զի մի՛ մնասցէ երկիրն Իսրայէլի ամայի, ած Սաղմանասար յԱսորեստանէ նոր գաղթականս, և բնակեցոյց անդ առ 'ի մշակութիւն երկրին: Այսպէս թագաւորութիւնն Իսրայէլի սկսեալ 'ի Յերոբովամայ յամի աշխարհի 3029, յետ այսպէս արկածից անցեալ 'ի տասն ցեղս, և վարեալ 'ի քսան թագաւորաց, 'ի վերջ եհաս վասն անօրէնութեան ժողովրդեանն յամի 3282, տևեալ ամս 253:

309. Այդ նոր գաղթականքն որ 'ի Մարաց և 'ի Բաբելոնացւոց, բերին ընդ իւրեանս 'ի

Հրէաստան զկուռս իւրեանց ։ Եւ առաքեաց 'ի նոսա Աստուած առիւծս , որք յամենայն գլուխս ճանապարհաց ընդ առաջ ելեալ կոտորէին 'ի ժողովրդենէն ։ Իբրև եհաս այս լուր յԱսորեստան, ոմանք յիսրայելացւոց ծառային Սաղմանասարայ , թէ այն է պատիժ առաքեալ յԱստուծոյ 'ի վերայ կռապաշտ գաղթականին , որք ոչ ճանաչեն զԱստուածն Իսրայելի։ Հրամայեաց թագաւորն առաքել անդր զմի ոք 'ի քահանայից Եբրայեցւոց՝ ուսուցանել նոցա զօրէնս տեառն ։ Եհաս անդր քահանայն և նստաւ 'ի Բեթէլ․ և լուսաւորեալ զնոսա եմոյծ 'ի նոսա զանազան բարի սովորութիւնս հանդերձ աստուածպաշտութեամբ․ բայց ոչ կարաց անհետ առնել զկռապաշտութիւնն․ Թէպէտ եբարձ անտի Աստուած զպատիժ առիւծուցն ։ Ժողովուրդքս այսոքիկ կոչեցան Սամարացիք,այն է Պահապանք, որք մնացին անդ իբր պահապան աշխարհին՝ անկատար իմն աստուածածանօթութեամբ ։

310․ Զայնու ժամանակաւ պայազատեաց 'ի Հայաստան Սկայորդին քաջ յետ Փառնակայ․ և ապա Պարոյր, որ վասն քաջագործութեանց իւրոց թագիւ պսակեալ՝ եղև առաջին պսակաւոր թագաւոր Հայոց , և տիրեաց ամս քառասուն և երիս ։

Ընդ այն ժամանակս սկսաւ ողոմպիական թուականն 'ի պատճառս խաղու իմիք՝ զոր առնէին մերձ 'ի քաղաքն Ողոմպիա 'ի Յունաստան․ և այնուհետև ստոյգ պատմութիւն Յունաց սկսաւ ընդ թուականին ։ Հռոմուլոս հիմնարկեաց զՀռոմ յամի աշխարհի 3251, յառաջին ողոմպիադին, 750 ամօք յառաջ քան ըզՔրիստոս․ և թագաւորեալ ամս երեսուն և ութ՝ սպանաւ 'ի սինկղիտոսէն ։ Ի Պանտոս

Տրեապետղա շինեցաւ յամի աշխարհի 3247, և յիտալիա կաղիկոն [1] :

# ԳԼՈՒԽ Է

## Մանասէ. Ամոն. Յովսիա. մինչև ցՅովակիմ. և Երեմիա մարգարէ :

Ա. Ա. 3306

311. Յետ մահուան Եզեկիայ թագաւորեաց որդի նորա Մանասէ ամաց երկոտասանից. որոյ դաստիարակ համարի Եղիակիմ Քեղկեայ իմաստուն հազարապետ կամ քահանայապետ կացուցեալ յԵզեկիայ : Նմին իրի ցորչափ Մանասէ ընդ առաջնորդութեամբ նորա էր՝ թագաւորութիւնն բարեկարգեալ և ծաղկեալ էր աստուածպաշտութեամբ : Բայց իբրև բարձաւ 'ի նմանէ Եղիակիմ, անկաւ կործանեցաւ Մանասէ 'ի խորս կռապաշտութեան. կանգնեաց անդրէն զբարձրաւանդակս կռոց. արար անտառս, և երկիր եպագ ամենայն մոլորական աստեղաց : Շինեաց սեղանս յերկոսեան սրահս տանն Տեառն, և կանգնեաց 'ի նոսա կուռս լուսաւորաց երկնից : Այնչափ մեծ եղեն անօրէնութիւնք սորա, մինչև անցուցանել զորդիս իւր ընդ հուր 'ի ձորն Բենեննամայ, ուր կայր կանգնեալ կուռքն Մողոքայ, զամենս ողջակիզեալ, և զայլս 'ի վերայ բագնոյ անցուցեալ 'ի նուիրել զնոսա կռոց : Յաճախեաց վհուկս և կախարդս ընդ ամենայն երկիրն Յուդայ. և անցոյց ամբարշտութեամբ քան զամենայն թագաւորս Հրէա-

1 Եւս. ժամ. աԼ : Խորէն. ա. 20 : Լիվիոս. ա : Սիւնկէղ : Պետ. Հայ. Գիրք ա. գլ. ճ :

տանի ։ Մարգարէք որչափ առաւել բարձրացուցանէին զբարբառ իւրեանց ընդդէմ անօրէնութեանց նորա, նա առաւել եւս ժանտացեալ կոտորէր զնոսա ։ Ի նմին իսկ կատաղութեան ետ կենդանւոյն ընդ մէջ սղոցել զմեծն Եսայիաս, քանզի խստագոյնս կշտամբէր նա զանօրէնն ։

312 . Յայնժամ ելին Ասորեստանեայք ՚ի վերայ նորա . կալան զնա եւ կապեցին կապանօք եւ տարան ՚ի Բաբելոն, եւ եդին ՚ի բանտի երկաթի կապանօք ։ Անդ յանհամբերելի տառապանս դարձաւ ՚ի միտս . ծանեաւ զոր ինչ անօրինեցաւ . զի ասէ գիր . Իբրեւ վտանգեցաւ Մանասէ, խնդրեաց զերեսս տեառն Աստուծոյ իւրոյ, եւ խոնարհեցաւ յոյժ յերեսաց Աստուծոյ հարցն իւրոց ։ Յաղօթս եկաց առ տէր, եւ նա լուաւ գոչման նորա եւ ազատեաց զնա ՚ի տառապանացն, եւ ծանեաւ Մանասէ՝ եթէ տէր նա է Աստուած ։

Ի պատմութենէ գրոյն երեւի՝ եթէ թոյլ ետ տէր արքային Բաբելոնի տանել զՄանասէ ՚ի Բաբելոն, զի ՚ի գերութեան անդ ՚ի միտ եկեալ՝ դարձցի ՚ի չարեաց իւրոց . Վասն այնորիկ իբրեւ դարձաւ Մանասէ սրտի մտօք առ Աստուած՝ գոչելով ՚ի բանտի անդ, „Տէր ամենակալ Աստուած Աբրահամու . Ամենակալ տէր, թող զմեղս իմ“, քաղցրացոյց Աստուած զսիրտ արքային Ասորեստանեայց, որ անդրէն արձակեաց զնա երթալ եւ թագաւորել յԵրուսաղէմ, Իբրեւ եմուտ Մանասէ յԵրուսաղէմ, առժամայն եբարձ եւ խորտակեաց զամենայն կուռս, քակեաց զմեհեանս, սրբեաց զտաճար տեառն, եւ զոհեաց ՚ի վերայ սեղանոյ նորա զոհս փրկութեան, պատուիրելով ժողովրդեանն՝ ծառայել միայն Աստուծոյ իսրայէ-

լի ։ Նորին աղագաւ զօրացոյց զնա տէր և հանգոյց յորդաքին Թշնամեաց ։ Եւ Մանասէ ամրացուցեալ զքաղաք Դաւթի , և զամենայն քաղաքս Յուդայ , պայծառացոյց և զտաճարն՝ փառաւորեալ զանուն Աստուծոյ Իսրայէլի ։ Այսպէս օրինակ եղեալ ամենայն ապաշխարողաց՝ մեռաւ բարեպաշտութեամբ 'ի հասակի վաթսուն և եօթն ամաց , և թաղեցաւ 'ի պարտիզին արքունեաց ։

313 . Զկնի Մանասէի Թագաւորեաց որդի նորա Ամոն ամաց քսան և երկուց , և արար չար առաջի տեառն . զի կանգնեաց զկուռսն կործանեալս 'ի հօրէ իւրմէ , և երկիր եպագ նոցա ։ Յաղագս որոյ արագ պատուհասեցաւ . զի զկնի երկուց ամաց միաբանեալ ոմանց 'ի պաշտօնէից անտի՝ յարեան 'ի վերայ նորա և սպանին զնա յապարանս իւր . և ինքեանք կոտորեցան 'ի ժողովրդենէ ։

314 . Յետ մահուան Ամոնայ Թագաւորեաց 'ի վերայ Յուդայ Յովսիա որդի նորա մանուկ ութամեայ , և սկսաւ խնդրել զտէր Աստուած Դաւթի հօր իւրոյ . և եկաց ընդ դաստիարակութեամբ առն ուրուք խոհականի մինչև ցամս վեշտասան ։ Իսկ 'ի հասակի քսան ամաց ել և շրջեցաւ ընդ երկիր Թագաւորութեան իւրոյ , և ետ կործանել զամենայն կուռս և զսեղանս նոցա . արմատաքի խլեաց զանտառսն , զի մի՛ անդրէն բուսցին . կոտորեաց զամենայն քուրմս . կորոյս զնուիրական ձիսն , և այրեաց զկուռս նուիրեալս արեգական . ջնջեաց զսեղանս կանգնեալս 'ի վերայ բարձանց , ուր զոհէին Աստուծոյ ճշմարտի ընդդէմ պատուիրանի նորա . կործանեաց զսեղանն՝ որ 'ի Բեթէլ շինեալ էր 'ի Յերոբովամայ , և զքուրմս մանրեաց 'ի փոշի ։ Նա հանել 'ի գերեզմանաց զոսկերս քրմացն

Բեթէլայ, և այրել 'ի վերայ սեղանոյն բագնացու, որպէս մարգարէացեալ էր այրն Աստուծոյ յանդիման Յերոբովամայ (243):

315. Իսկ 'ի հասակի քսան և վեց ամաց ձեռն էարկ նորոգել զտաճար տեառն. և յետ կատարելոյ զամենայն՝ հաստատեաց զտապանակն 'ի տեղւոջն, որ 'ի ժամանակս ամբարիշտ թագաւորաց փոխեալ էր յայլ և այլ տեղիս: Ի յուզել զկրս տաճարին եգիտ Քեղկիա քահանայապետ զքննագիր մատեան երկրորդ օրէնաց գրեալ ձեռամբ Մովսեսի, զոր առաքեաց առ արքայ, և նա ետ Սափանայ դպրապետի ընթեռնուլ առաջի իւր: Ի լսել արքային զմեծամեծ սպառնալիսն ընդդէմ յանցաւորաց՝ զարհուրեցաւ յանձն իւր. և պատառեալ ըզհանդերձս, պատուէր ետ քահանայից՝ աղօթիւք ցածուցանել զբարկութիւն ամենակալին, զի մի պատուհասեսցէ զժողովուրդն մեղուցեալ:

316. Ի նմին ժամանակի բնակէր յԵրուսաղէմ կին մի մարգարէ Ոլդան կոչեցեալ: Գնացին առ նա Քեղկիա քահանայապետ և Սափկամ հարցանել վասն աստուածային սպառնալեացն: Եւ նա լուսաւորեալ 'ի տեառնէ ետ պատասխանի, թէ չարիքն սպառնացեալք 'ի մատենին անդ՝ անշուշտ գալոց են 'ի վերայ Երուսաղէմի և 'ի վերայ բնակչաց նորա մեղուցելոց. բայց արքայ ոչ տեսցէ, ասէ, զի երկեաւ յերեսաց տեառն և ելոց:

Ի մարգարէութենէ աստի առաւել ևս բորբոքեալ եռանդն աստուածպաշտութեան 'ի սիրտ արքային, ժողովեաց զամենայն իշխանսն Յուդայ, զքահանայս և զՂեւտացիս. և ընթերցաւ 'ի լուր ամենեցուն զամենայն բանս մատենին այնորիկ. և ելեալ 'ի վերայ սեանն՝ ուր երբեմն յաղօթս էկաց Սողոմոն, եդ ուխտ ա-

առաջի տեառն պահել զպատուիրանս նորա · զնոյն եւ տանել և որդւոց Բենիամինի՝ որ անդ գտան: Եւ այս մեծահանդէս կատարեաց զպասէք տեառն · յորում բաց 'ի գառանց՝ և երեսուն հազար խոյս և նոխազս, և երեք հազար զուարակս նուիրեաց տեառն, և ետ բաշխել ղեւտացւոց յիւրոց ստացուածոց · զնոյն արարին իշխանք և քահանայք: Եկաց Յովսիա անյողդողդ յաստուածպաշտութեան, և ժողովուրդն միշտ հաւատարիմ գտան առ Աստուած զամենայն աւուրս կենաց նորա:

317 · Ընդ այն ժամանակս Նեքաւով արքայ Եգիպտոսի ել զօրու ծանու յօգնութիւն արքային Քաղդէացւոց · զոր լուեալ Յովսիայ, և կասկածեալ՝ թէ գայ 'ի վերայ իւր, ել ընդդէմ նորա: Այլ նա թէպէտ ազդ արար նմա նստել անհոգ, և չխառնել զանձն յօտարին պատերազմ, բայց ոչ ինչ անսացեալ Յովսիա, ել ընդդէմ նորա, և 'ի գլխի հարան միմեանց: Անդ վանդեցաւ Յովսիա 'ի նետից աղեղնաւորաց · և ըստ հրամանի նորա հանին զնա ծառայքն 'ի կառաց իւրոց, և եդեալ յերկրորդ կառս՝ տարան յԵրուսաղէմ, և անդ մեռաւ խաղաղութեամբ 'ի քառասներորդի ամի կենաց իւրոց, թագաւորեալ ամս երեսուն և մի: Սուգ մեծ առ ամենայն ժողովուրդն 'ի վերայ բարեպաշտ արքային · և թաղեցին զնա 'ի շիրմի ընդ հարս իւր մեծաւ պատուով:

Երեմիա մարգարէ առ մեծի ցաւոց սրտին յօրինեաց յայնժամ 'ի վերայ նորա ողբս ցաւագինս, զոր ամենայն իշխանք և կանայք առին 'ի բերան և երգէին · սովորեցին զկնի և յամենայն ձախող դիպուածս երգել զնոյն երգ:

318 · Երեմիա մարգարէ էր քահանայ սրբեալ յորովայնէ մօր իւրոյ, և անդստին 'ի ման-

կուռթենէ, պաշտել 'ի մարգարէութիւն և 'ի քարոզութիւն: Նա հրաժարէր 'ի պաշտամանէ անտի, և Աստուած համարձակեցուցանէր զլեզու նորա՝ մերձեցուցանելով զձեռն իւր 'ի բերան նորա: Եցոյց նմա ապա գաւազան ընկուզի և կաթսայ յեռանդան, որովք նշանակեաց զպատիժս հարուածոց Հրէից յազգաց հիւսիսոյ: Քաջալերեաց զնա արիանալ և տանել ծանր ծանր վշտաց, խոստանալով լինել ընդ նմա 'ի փրկել զնա: Քարոզեաց Երեմիա մեծաջերմութեամբ զպատիժս և զչարիսն, զոր կրելոց էր ժողովուրդն: Իսկ յետ մահուան Յովսիայ արքային կրեաց Երեմիա հալածանս և ապա 'ի բանտ արկաւ:

319. Յովսիա եթող որդիս չորս. որոց անդրանիկն կոչէր Յովանան կամ Յովաքազ. երկրորդն Եղիակիմ, որ և կոչեցաւ Յովակիմ. երրորդն Յովաքազ, որ յետոյ կոչեցաւ Սելլեն. իսկ չորրորդն Մեթթանիա, որ ապա կոչեցաւ Սեդեկիա (325): Յետ մահուան Յովսիայ ժողովուրդն թագաւորեցոյց զՅովաքազ երրորդ որդի նորա ամաց քսան և երից. և նա արար չար առաջի տեառն. նորին ազգաւ յետ երից ամսոց եկն 'ի վերայ նորա Նեքաւով, և կապեալ տարաւ զնա ընդ իւր յաշխարհն Ասորւոց, և անտի յԵգիպտոս. ուր և մեռաւ նա: Նէ կացոյց թագաւոր զԵղիակիմ զերկրորդ որդի Յովսիայ ամաց քսան և հնգից, և կոչեաց Յովակիմ. և արար նա չար առաջի տեառն:

Յայնժամ Նաբուքոդոնոսոր արքայ Քաղդէացւոց հարկատու կացոյց զՀրէաստան, և ընդ ամս երիս հատոյց նմա Յովակիմ հարկս. ապա ժխտեալ երդմանն, զոր արարեալ էր յանուն Աստուծոյ, վտարանջեաց 'ի նմանէ: Նմին իրի եկն Նաբուքոդոնոսոր 'ի վերայ նորա,

և կապեալ զնա պղնձի կապանօք տարաւ 'ի Բաբելոն ։ Ընդ Յովակիմ նոր խոստմամբ և նոր երդմամբ հաւատարմութիւն ցուցեալ Նաբուքոդոնոսորայ՝ դարձաւ յԵրուսաղէմ ։ Այլ անգէն ապստամբեալ նշկահեաց զնա ․ նորին աղագաւ յարեան 'ի վերայ նորա շրջակայ ազգք և աւար հարին զերկիր նորա ։ Եւ ինքն այնչափ ատելի եղև ժողովրդեան , զի յետ մեռանելոյ նորա հանեալ զդի նորին 'ի գերեզմանէ՝ ընկեցին արտաքոյ դրան Երուսաղէմի 'ի կեր թռչնոց և գազանաց , որպէս մարգարէացեալ էր Երեմիա՝ թէ զթաղումն իշոյ թաղեսցի ։

320 ․ Ի ժամանակս Յովակիմայ արքայի բազում տառապանս կրեաց Երեմիա ․ քանզի 'ի քարոզել նորա սպառնալեօք 'ի սրահ տան տեառն՝ յարեան 'ի վերայ նորա արք ամբարիշտք սպանանել զնա ։ Այլ ազատեաց զնա Աքիկամ ոմն այր երկիւղած , արդարացուցեալ զնա՝ թէ 'ի հրամանէ տեառն խօսի , որպէս խօսէր Միքիա յաւուրս Եզեկիայ ։ Սակայն Ուրիա մարգարէ իբրև մարգարէանայր 'ի վերայ Երուսաղէմի ըստ բանից Երեմիայ , ըմբռնեցաւ և սպանաւ հրամանաւ Յովակիմայ ․ որ ետ ընկենուլ զմարմին նորա 'ի գերեզմանս հասարակաց ։

321 ․ Իսկ Երեմիա առաւել ևս զօրացեալ սկսաւ քարոզել զգալի նշանօք և նախագուշակել զխորտակումն ժողովրդեան և Երուսաղէմի ։ Այլ անօրէնք ոչ միայն չդարձան 'ի ճանապարհաց իւրեանց չարաց , այլև խորհեցան սպանանել զնա ։ Պասքոր ոմն իշխան քահանայից և հրամանատար տան տեառն՝ եհար զնա գաւազանաւ , և փակեաց 'ի վերնատան ։ Եւ 'ի վաղիւ անդր իբրև ետ բերել զնա առաջի իւր գատել զնա , ասէ ցնա Երեմիա ․ Ո՞չ ապաքէն Պասքոր կոչիս դու ․ այլ տէր փոխեաց զանուն

քո և կոչեաց զերի Թափառական. և ամենայն Յուդա անցցէ 'ի ձեռս Թագաւորին Բաբելոցւոց, և ամենայն Ճոխութիւնք երկրիս յափշտակեսցին, և դու և ամենայն տուն քո մնասցիք 'ի գերութեան. զնոյն անցս կրեսցեն և բարեկամք քո, զորս խաբես սուտ մարգարէութեամբ քով: Այսպիսի զօրաւոր բանիւք այնպէս ըմբերանեաց զՊասքոր, մինչև ամօթապարտեալ նորա՝ արձակեաց զմարգարէն:

322. Ապա չոքաւ Երեմիա հրամանաւ տեառն քարոզել յարքունիս Յովակիմայ արքային, և մարգարէացաւ վասն աղէտալի գերութեան և մահուան նորա: Նմին իրի կրեաց բազում տառապանս, և արկաւ 'ի բանտ: Հրաման եղև առ նա 'ի տեառնէ, գրել 'ի բանտի անդ զամենայն պատգամս Աստուծոյ: Արդ մարգարէն, և կոչեալ զգպրապետ իւր զԲարուք որդի Ներեայ՝ ետ նմա գրել, և երթալ ընթեռնուլ 'ի տան տեառն 'ի լուր ամենեցուն: Ընթերցաւ Բարուք յականջս ամենայն ժողովրդեան յամին հինգերորդի Յովակիմայ արքայի: Լուան իշխանքն և կոչեցին զԲարուք յարքունիս. և լուեալ զպատգամսն, զահի հարան ամենեքեան, և պահեալ անդ զմատեանն՝ ետուն ընթեռնուլ առաջի արքային 'ի լուր բազմութեան իշխանաց: Այլ ծանրացասուն եղև արքայ ընդ լսել զպատգամսն, և պատառեալ զմատեանն արկ 'ի կրակարանն, և հրամայեաց արկանել 'ի շղթայս զԲարուք և զԵրեմիա: Այլ նոքա քանզի 'ի թագստի էին, պահեցան խնամովք տեառն 'ի սպառնալեաց արքային:

Յայնժամ հրամայեաց Աստուած մարգարէին վերստին գրել զամենայն բանս առաջնոյ քարտիսին, և դարձեալ ընթեռնուլ 'ի հրապարակի 'ի

լուր ամենեցուն ։ Յոր յաւելեան և այլ նոր սպառնալիք առ Յովակիմ. և կատարեցան անվրէպ, որպէս տեսաք 'ի վեր անդր (319) ։

323. Ընդ այն ժամանակս Թագաւորեաց 'ի Հայաստան Հրաչեայ որդի Պարուրայ ամս քսան և երկու. ապա որդի նորա Փառնաւազ ամս երեքտասան. և զկնի Պաճոյճ որդի նորա ամս երեսուն և հինգ. ապա Կոռնակ որդի նորա ամս ութ, և զկնի Փաւոս որդի նորա ամս եօթն և տասն ։

Իսկ 'ի Հռովմ Նումա յաջորդեաց Հռոմուլոսի. և յաւել 'ի տարին զամիս յունուար և զփետրուար, քանզի յառաջ տասն ամսօք սահմանէր տարին. շինեաց նա և զԿապիտոլին ։ Յաշորեստան յետ Սարդանապաղայ տիրէ Թագղաթփաղասար, ապա Սաղմանասար, Սենեքերիմ, Ասորդան և Սաոսդուխին Նաբուքոդոնոսոր [1] ։

## ԳԼՈՒԽ Ը

### Յեքոնիա, Սեդեկիա, Եզեկիել մարգարէ, և գերութիւն Յուդայ ։
### Ա. Ա. 3405

324. Յետ մահուան Յովակիմայ արքային Թագաւորեաց յԵրուսաղէմ Յեքոնիա որդի նորա ընդ նորա. և եկաց ընդ ամենայն աւուրս հօրն իւր՝ յաթոռ թագաւորութեան. և արար չար առաջի տեառն ։ Նմին իրի յարոյց Աստուած զՆաբուքոդոնոսոր 'ի վերայ նորա. որ

1 Եւսեբ. Ա. 95 ։ Դիոդոր. Բ. 7 ։ Խորէն. Ա. 21 ։

առաքեաց զօրս 'ի վերայ Երուսաղէմի, և պաշարեցին զքաղաքն. կալան զՅեքոնիա հանդերձ կանամբք և համօրէն որդւովքն, և տարան 'ի Բաբելոն: Ընդ նոսա վարեցան անդր տասն հազար զինուորք և եօթն հազար զօրաւորք՝ որք կային 'ի պահպանութիւն քաղաքին, և այլ ես հազար այր յարհեստաւորաց: Այսպէս աւարհարեալ Երուսաղէմ, չարաչար կողոպտեցան գանձք տաճարին և տան արքունի և մեծամեծաց ողջոյն. խսկ արքայ կայր 'ի տառապանս բանտին:

325. Զկնի կողոպտելոյ Նաբուքոդոնոսորայ զԵրուսաղէմ 'ի ճոխութեանց և յամենայն կարևոր արհեստաւորաց՝ թագաւորեցոյց զՄեթթանիա զհօրեղբայր Յեքոնիայ, և երդմնեցոյց զնա յանուն Աստուծոյ բարձրելոյ՝ մնալ հաւատարիմ. և փոխեաց զանուն նորա՝ կոչեաց զնա Սեդեկիա: Եւ էր նա յայնժամ ամաց քսան և միոյ. առ որում թէպէտ կայր Երեմիա մարգարէ քարոզիչ, այլ ոչինչ օգտեցաւ 'ի խրատուց նորա. և արար չար առաջի տեառն, ոչինչ ընդհատ յառաջնոց:

326. Իբրև առաքէր Սեդեկիա հրեշտակս 'ի Բաբելոն, Երեմիա ետ տանել թուղթ առ գերեալսն, յորդորելով զնոսա կալ խաղաղութեամբ 'ի Բաբելոն, շինել տունս, և բազմանալ անդ մինչև 'ի լնանալ եօթանասուն ամաց. և այնուհետև դարձցին, ասէ, յԵրուսաղէմ: Գրեաց Երեմիա ըստ պատուիրելոյ տեառն և զայլ թուղթս մխիթարութեան, մարգարէանալով վասն շինութեան տաճարին, և բազմապատիկ յաջողութեանց 'ի գալստեան փրկչին:

Վիճեցաւ Երեմիա ընդ Անանիայ սուտ մարգարէի. որ ասէր՝ թէ յետ երկուց ամաց խորտակեսցի լուծ Բաբելոնացւոց, և գերեալքն ա-

զատեայն․ և առեալ 'ի պարանոցէ Երեմիայի զանուրս փայտեղէնս՝ խորտակեաց, ասելով թէ այսպէս խորտակեսցին Բաբելացիք։ Եւ պատասխանի Երեմիա․ Դու խորտակեցեր զանուրս փայտեղէնս․ ես արարից անուրս երկաթիս դնել 'ի պարանոցս ամենայն ազգաց շուրջանակի, և ամենեքեան ծառայեսցեն Նաբուքոդոնոսորայ արքայի․ և դու Անանիա, որ խաբես ստութեամբ զժողովուրդն, բարձցիս յերկրէ 'ի սմին ամի։ Կատարեցան մարգարէութիւնքն, և մեռաւ Անանիա յետ երկուց ամսոց։

327․ Իսկ Սեդեկիա ընդդէմ երդման իւրոյ եթող զՆաբուքոդոնոսոր և դաշնակցեցաւ ընդ Փարաւոնի արքային Եգիպտացւոց։ Իբրև գիտաց զայն Նաբուքոդոնոսոր, եհաս 'ի վերայ նորա բուռն զօրութեամբ։ Սեդեկիա խնդրեաց յԵրեմիայ մարգարէէ աղօթս առնել առ տէր վասն իւր, և ծանուցանել նմա՝ թէ զինչ պատգամ ունիցի 'ի տեառնէ։ Ասէ Երեմիա․ Երթայք ասասջիք ցարքայն․ այս է բան տեառն․ անգործ արասցէ զզէնս Յուդայ, և խորտակեսցէ զնոսա ձեռամբ թշնամեաց, և Սեդեկիա հանդերձ մնացելովք մատնեսցի 'ի ձեռս Նաբուքոդոնոսորայ, և ոչ ողորմեսցի նոցա։

Ի սմին ժամանակի Քաղդէացիք հասին 'ի դրունս Երուսաղէմի․ և պատնէշ կանգնեալ շուրջանակի պաշարեցին զքաղաքն։ Սակայն լուեալ՝ թէ արքայն Եգիպտացւոց գայ յօգնութիւն Եբրայեցւոց, եթող Նաբուքոդոնոսոր զԵրուսաղէմ, և չոգաւ ընդդէմ Եգիպտացւոց, եհար և հալածական արար զնոսա։

328․ Իսկ Երեմիա տեսեալ զվերահաս պատուհասն՝ կամեցաւ ելանել անտի և գնալ յերկիր Բենիամինի․ այլ այնու առաւել կաս-

կածելի եղև. կալան զնա, գան հարին, և արկին 'ի բանտ: Ի գուշակել նորա զկործանումն ժողովրդեան և թագաւորին՝ գլխաւոր իշխանք խնդրեցին յարքայէ սպանանել զնա: Մատնեաց Սեդեկիա զարդարն 'ի ձեռս նոցա, և նոքա առեալ զԵրեմիա արկին 'ի գուբ մի խորին՝ կոչեցեալ գուբ Մելքեայ. որ էր առ դրան բանտին 'ի հաւաքումն ջուրց և ամենայն աղտեղութեանց: Անդր իջուցին զնա, զի անսուաղութեամբ և 'ի ժանտ շոգեաց մեռցի: Սակայն Աբդիմելէք եթովպացի ներքինի խնդրեաց յարքայէ և արձակեաց զնա: Եւ եկեալ անտի Երեմիա նստաւ 'ի սրահ բանտին:

329. Ի նմին ժամանակի Եզեկիէլ մարգարէ ղեւտացի 'ի կարգէ քահանայից գերի 'ի Բաբելոն՝ մարգարէանայր անդ յար և նման Երեմիայի, գոլով ամաց երեսնից: Սա ինքն նախագուշակեաց զկործանումն Ամոնացւոց, Մովաբացւոց, Եգիպտացւոց և այլոց, որք խնդային ընդ թշուառութիւնս Երբայեցւոց: Բայց առաւել քան զամենայն գուշակէր զկործանումն Երուսաղէմի՝ հանդերձ զարմանալի նշանօք և նմանութեամբք: Յորժամ լուաւ Սեդեկիա զմարգարէութիւնս Եզեկիէլի համաձայն գուշակութեանցն Երեմիայի, խռովեցաւ յանձն իւր, և երթեալ 'ի տաճարն՝ ետ բերել առաջի իւր զԵրեմիա և եհարց զնա վասն առաջիկայ վտանգին: Յայտնեաց նմա Երեմիա անպատրուակ, զի եթէ ինքնին անձնատուր լիցի արքային Բաբելացւոց, փրկեսցէ զանձն և զտուն իւր. ապա թէ ոչ՝ ինքն մատնեսցի, և քաղաքն այրեսցի: Այլ արքայ ոչինչ անսացեալ մարգարէին՝ առաքեաց զնա 'ի սրահ բանտին, պատուէր տուեալ նմա չյայտնել իշխանաց զբանն:

330. Իսկ Նաբուքոդոնոսոր արքայ յետ վա-

նելոյ զփարաւոն արքայ Եգիպտացւոց՝ դարձոյց անդրէն զզօրս իւր յԵրուսաղէմ · պաշարեաց, և կանգնեաց մարտկոցս յամենայն կողմանց · և սաստկացուցեալ զյարձակումն՝ խրամատեաց զպարիսպն ։ Այնչափ զօրացեալ էր սովն յԵրուսաղէմ, զի և պահապանքն չէին կարող պաշտպանել զխրամատս պարսպաց, բայց և այնպէս պաշարեալքն ոչ խոնարհեցան խօսել 'ի հաշտութիւն ։

Քաղդէացիքն անհնարին բռնութեամբ գրոհ տուեալ 'ի պարիսպն · և ութ զօրավարք մտին կալան զմիջին դուռն, և ընդ այն բացին ճանապարհ այլոց զօրավարաց ։ Զայն տեսեալ Սեդեկիայ՝ հնարեցաւ փախչել ընդ սարերկրեայ անծանօթ ճանապարհ, որ էր ընդ մէջ երկուց պարսպաց, և հանէր արտաքոյ Երուսաղէմի, և տանէր մինչև 'ի հին բուրաստանն Սողոմոնի, ուր կային արքունի ապարանք։ Ելեալ Սեդեկիա հանդերձ իւրայնովք յայն գետնափոր ճանապարհ, և եհաս 'ի բուրաստանն, և անտի յանապատն ։ Սակայն իմացան Քաղդէացիք, և զհետ պնդեալ գտին զնա յանապատն Երիքովի ։ Ընդ թողին զնա ամենայն արք իւր և ցրուեցան, և ինքն մնաց 'ի ձեռս Քաղդէացւոց։

331 · Ածին զՍեդեկիա պղնձի շղթայիւք առ Նաբուքոդոնոսոր · որոյ դատեալ զնա անաչառ՝ եգիտ 'ի նմա ոգի ապստամբութեան, աներդմնութեան, և անհաւատարմութեան առ Աստուած և առ մարդ ։ Վասն որոյ եառ կոտորել առաջի աչաց նորա զորդիս նորա և զիշխանս Յուդայ · ապա կուրացուցեալ զաչս նորա՝ տարաւ զնա ընդ իւր շղթայակապ 'ի Բաբելոն, և եդ 'ի տուն աղօրեաց 'ի բանտի · յարդարեալ տեղի ապաշխարութեան, եթէ միայն գիտաց ապաշխարել ։ Մեռաւ խաղաղութեամբ, և ա-

բարինմա յուղարկաւորութիւն պատուով ըստ որում մարգարէացեալ էր Երեմիա ։

332. Յիններորդ ամի թագաւորութեան Սեդեկիայ սկսաւ պաշարումն Երուսաղէմի, և 'ի վախճան մետասաներորդի ամի առաւ անընդհատ պատերազմաւ աւուրս քառասուն։ Զաբաչար աւար հարին զքաղաքն Քաղդէացիք զաւուրս երեսուն. և ոչ մնաց անդ տեղի թագըստեան՝ զոր ոչ յուզեցին առ 'ի յափշտակութիւն գանձուց ։

Ապա եկն յԵրուսաղէմ մեծ սպարապետն Քաղդէացւոց 'Նաբուզարդան դահճապետ. որ զամենայն ընտիր ընտիր գործուածս, ոսկի արծաթի և պղնձի անօթս տաճարին առաքեաց 'ի Բաբելոն։ Իսկ մնացորդք տաճարին, տանն արքայի, և ամենայն քաղաքին, զորս չեղև հնար տանել, հրոյ ճարակ եղեն. քանզի հուր արկեալ յամենայն կողմանց քաղաքին այրեցին զնա ։ Իսկ զպարիսպն և զաշտարակս կործանեցին, և զմեծամեծ ապարանս և զորմունս տաճարին հիմնայատակ արարին ։

Այսպէս Երուսաղէմ՝ քաղաքն այն մեծահռչակ, պատկառելի ազգաց համօրէն և աչարկու բուռն թշնամեաց խուժադուժ հեթանոսաց, և հանապազօրեայ յայտ յանդիման տեսարան մեծավայելչութեանն Աստուծոյ, 'ի մեծ եղեռն անօրէնութեան ապաշնորհ ժողովրդեանն անկաւ տապալեցաւ, և հրոյ ճարակ եղեալ յաճիւն դարձաւ. գերի վարեցան աշխարհի բնակիչքն ընդ թագաւորին իւրեանց կէս մի 'ի Բաբելոն, կէս մի 'ի Պարսիկս, և կէս մի 'ի Մարս. և մնացին 'ի Հրէաստան աղքատք միայն և անչուք մարդիկ՝ գործել և մշակել զայգիս և զագարակս ։

Թագաւորութիւնն Իսրայէլացւոց սկսեալ 'ի

Յուդայ և տևեալ ամս հինգ հարիւր և ութ, իսպառ դադարեաց յամի աշխարհի 3416 :

333. Իսկ Երեմիա մարգարէ քանզի ծանօթ և սիրելի էր Նաբուքոդոնոսորայ սակս գուշակութեանցն, վասն այնորիկ յանձն եղև 'ի նմանէ առ Նաբուզարդան սպարապետ խնամել զնա, և թողուլ երթալ ուր և հաճեսցի : Առեալ զնա Նաբուզարդանայ 'ի սրահէ բանտին յանձնեաց 'ի ձեռս Գոդողիայ որդւոյ Աքիկամայ, որ կացուցաւ փոխարքայ և ոստիկան Հրէաստանի : Նստաւ ընդ նմա Երեմիա 'ի Մասեփա, զի անդ էր աթոռ փոխարքային, և մխիթարէր զժողովուրդն :

Ի սմին ժամանակի, և կամ յառաջ քան ըզպաշարումն Երուսաղէմի, էառ Երեմիա զխորանն վկայութեան, զտապանակն կտակարանաց, և զսեղանն խնկոց, և թագոյց յայրի միում 'ի Նաբաւ անտառախիտ լերին : Իսկ քահանայք առեալ 'ի սեղանոյ զհուրն 'ի ծածուկ՝ թագուցին 'ի խորշս կողմանցն ջրհորոց, և զտեղին հետախաղաղ ծածկեցին (108) :

334. Արդ յետ մեկնելոյ անտի զօրաց Քաղդեացւոց՝ Գոդողիա ոստիկան իբրև հայր խնամէր զամենայն մնացորդս Հրէաստանի, մեծապէս արգահատեալ 'ի դառնութիւն թշուառութեան նոցա : Իսկ 'ի ցրուելոյ անտի Եբրայեցւոց 'ի շրջակայ երկիրս այլազգեաց իբրև լուան զմարդասիրութիւն Գոդողիայ, դարձան ամենեքեան յերկիրն Յուդայ. և նա սիրով ընկալեալ զնոսա՝ տայր երթալ ունել իւրաքանչիւր զագարակ և զկալուածս իւր :

Մինչդեռ նոքա 'ի խաղաղութեան վայելէին, ահա խռովարար ոմն Իսմայէլ որդի Նաթանայ՝ մի 'ի սպարապետաց Սեդեկիայ՝ բանս եդ ընդ թագաւորին Ամմոնացւոց սպանանել զԳո-

դողիա, և զմնացորդս ժողովրդեան վարել 'ի գերութիւն առ Ամոնացիս: Յովհան որդի Կարէի իրազեկ լեալ իրացն՝ ծանոյց Գոդողիայ դաւաճանել անձին. և տուր ինձ, ասէ, հրաման երթալ սպանանել զնա: Այլ արդարամիտն ոչ հաւատայ բանից նորա:

335. Ապա եկն Իսմայէլ 'ի Մասեփա յետ երից ամսոց կործանման Երուսաղէմի. կոչեաց զնա Գոդողիա ընդ սեղան արանց նորա ճաշել 'ի միասին: Ի զուարթանալ անդ նոցա յարեաւ անօրէնն Իսմայէլ, եհար և խողխողեաց զԳոդողիա անդէն 'ի սեղանի իւրում: Եւ ապա ել արտաքս և կոտորեաց զՔաղդեացիս և զՀրէայեցիս. տիրեաց քաղաքին, և փակեաց զդրունս: Ապա կամեցեալ զմնացորդս ժողովրդեան ընդ դստերացն Սեդեկիայ՝ իբրև վարել 'ի գերութիւն առ Ամոնացիս, լուաւ Յովհան որդի Կարէի, և վաղվաղակի ժողովեալ զզօրս ընդդէմ զկնի նոցա, և հասեալ առ նա մերձ 'ի Գաբաւոն՝ եառ ընդ նմա պատերազմ. և նա ութ արամբք փախեաւ առ արքայն Ամոնացւոց. իսկ ժողովուրդն դարձաւ ուրախութեամբ առ Յովհան:

336. Յովհան կասկածեալ թէ Քաղդեացիք լուեալ զայս ամենայն անցս՝ 'ի նա թափեցեն զցասումն բարկութեան, եառ զժողովուրդն և էանց առ Եգիպտացիս: Թէպէտ արգել զնոսա Երեմիա, և խոստացաւ նոցա զապաշխարանութիւն տեառն, այլ նոքա ոչ անսացին: Ամենայն մնացորդք Եբրայեցւոց չոգան յԵգիպտոս. ածին ընդ իւրեանս և զԵրեմիա, որ անդադար խրատէր զնոսա հեռի կալ 'ի կռապաշտութենէ Եգիպտացւոց: Այլ նոքա խստացեալ սրտիւ ոչ միայն անլսող գտան ձայնի առն Աստուծոյ, այլ և քարկոծ արարին զնա անդ յԵգիպտոս:

Նոյնօրինակ սպանաւ և Եզեկիէլ 'ի Բաբելոն կապեալ յագխմիոյ՝ վասն յանդիմանելոյ զկռապաշտութիւն որդւոյն Դանայ :

337 . Ընդ այն ժամանակս Թագաւորեաց 'ի վերայ Հայոց Հայկակ որդի Փառնայ ամս երեսուն և վեց . որ միաբանեալ ընդ Մեծին Նաբուքոդոնոսորայ գնաց 'ի վերայ Երուսաղէմի , և գերեալ զՅուդա՝ խնդրեաց եառ Հայկակ զոմն 'ի գլխաւորաց անտի Հրէից Շամբատ անուն հանդերձ ընտանեօքն , և բնակեցոյց յաշխարհին Հայոց պատուով. յորոց սերեցան Բագրատունիք (613) :

Զայնու ժամանակաւ Աթենացւոց Թագաւորք դադարեցին , և կային իշխանք տարեորք : Կործանեցաւ Տիւրացւոց քաղաքն բազմահարուստ . և շինեցաւ Բիւզանդիոն . և առաւ Եգիպտոս ըստ գուշակութեան Եզեկիէլի: Ծաղկեցան եօթն իմաստասէրք . Թալէս , Բիաս , Սողոն , Պիտտակոս , Կղէոբուղոս , Քիղոն , և Պերիանդր [1] :

## ԳԼՈՒԽ Թ

### ՏՈՎԲԻԹ :

Ա. Ա. 3300

338 . Տովբիթ այր երեւելի աստուածպաշտութեամբ՝ էր 'ի ցեղէն Նեփթաղիմայ 'ի ժամանակս Եզեկիայ արքային Յուդայ . և Աննա կինն նորա բարեպաշտ ծնաւ նմա որդի, և կոչեաց զանուն նորա Տուբիա : Սաղմանասար արքայ նուաճեալ

1 Խորէն . Ա . 22 : Բ Ի . 3 : Վարդան : Եւսեբ . Ժամ . անձ :

զթագաւորութիւնն Իսրայէլի՝ իբրեւ գերի վա-րեալ զտասն ցեղս 'ի զանազան քաղաքս տէրու-թեան իւրոյ (308), ածաւ եւ Տովբիթ հանդերձ կնաւ իւրով եւ զաւակաւ 'ի Նինուէ։ Այլ պա-հեալ միշտ զօրէնս եւ զպատուիրանս Աստու-ծոյ՝ յաջողեցաւ յամենայն գործս իւր, եւ եգիտ շնորհս առաջի Սաղմանասարայ արքային, լինելով գործակալ նորա։ Ի սակաւ ամս մեծացեալ Տով-բիթ եւ առատաձեռնէր աղքատաց։ Նա եւ տասն տաղանդս արծաթոյ 'ի փոխ Գաբայէլի ազգա-կանի իւրում՝ որ բնակէր 'ի Մարս 'ի լերինս Եկբատանայ։

339. Յետ մահուան Սաղմանասարայ առէլ եղե Տովբիթ Սենեքերիմայ որդւոյ նորա, եւ կրեաց 'ի նմանէ բազում վիշտս, մանաւանդ յետ կոտո-րելոյ զօրաց նորա առ պարսպաւ Երուսաղեմի 'ի ժամանակս Եզեկիայ արքայի Յուդայ (306)։ Սակս որոյ կատաղեալ Սենեքերիմայ՝ թափեաց զցասումն բարկութեան 'ի վերայ Եբրայեցւոց ե-ղելոց 'ի Նինուէ, մինչեւ տալ խողխողել զբա-զումս, եւ թողուլ զդիակունս նոցա 'ի հրապա-րակս։ Տովբիթ ելեալ գիշերայն գողանայր զդիա եւ թաղէր. զոր իմացեալ բանսարկուն՝ դատա-պարտեաց զնա 'ի մահ, եւ յափշտակեցան ինչք նորա յարքունիս. բայց բարեկամք նորա փա-խուցին զնա արտաքոյ Նինուէի։

Զկնի իբր յիսուն աւուրց սպանաւ Սենեքե-րիմ յորդւոց իւրոց, եւ թագաւորեաց Ասորդան որդի նորա, որ չէր թշնամի Եբրայեցւոց. եւ զբա-զումս դարձոյց 'ի գերութենէ 'ի Սամարիա։ Սի-րելի էր նմա Աքիաքարոս եղբօրորդի Տովբիթայ, որ վասն հօրեղբօր իւրոյ միջնորդ եղեալ առ ար-քայ՝ դարձոյց զնա 'ի Նինուէ, եւ դարձուցան առ նա ամենայն ինչք նորա։

340. Յետ Ասորդանայ թագաւորեաց Նա-

բուքոգոնոսոր. որ յետ երկոտասան ամաց Երրեհեմայ Յուդիթ զգլուխ Հողոփեռնեայ (357), անդէն նորոգեաց զանգութ թշնամութիւնն Սենեքերիմայ: Զի սկսաւ տանջանօք սպանանել զԵբրայեցիս 'ի Նինուէ, և պատուիրէր անթաղ մնալ դիականց նոցա: Իսկ Տովբիթ գթասիրեալ առ ազգն իւր՝ թաղէր անդադար զդիակունս նոցա: Յաւուր միում խոնջեալ եկն 'ի տուն իւր, և պղծեալ գոլով ըստ օրինաց վասն մերձենալոյ 'ի դիակունս, մինչդեռ ննջէր առ որմովք, աղբք ծիծռանց ջերմաջերմ անկեալ յաչս նորա կուրացուցին զնա: Ծախեաց տառապեալն բազում ինչ առ 'ի գտանել զբժշկութիւն. այլ ինչ ոչ շահեցաւ, և վերստին անկաւ յաղքատութիւն: Ապա կոչեաց առ ինքն զՏուբիա որդի իւր, և յետ խրատելոյ և յորդորելոյ զնա հաստատուն կալ 'ի բարեպաշտութեան՝ պատուիրեաց նմա երթալ 'ի Հռագաւ յերկիր Մարաց, և առնուլ զտասն քանքար արծաթոյն 'ի Գաբայելայ և դարձուցանել զմուրհակն: Եւ ասաց ցնա. Մի երկնչիցիս, որդեակ, թէ աղքատացաք յոյժ. ոչ պակասին քեզ ինչք և ստացուածք, եթէ երկնչիցիս դու յԱստուծոյ, և արասցես զկամս նորա:

341. Որդին լուեալ զամենայն՝ խոստացաւ կատարել և երթալ. այլ զի անգէտ էր ճանապարհին, 'ի հրամանէ հօրն իւրոյ ել 'ի խնդիր գտանել զոք ինքեան ճանապարհակից, և հաւատարիմ և տեղեակ ուղւոյն, եգիտ պատանի մի շնորհալի տեսլեամբ, որ էր հրեշտակ տեառն 'ի կերպարանս ուղեւորի. ողջոյն ետ նմա Տուբիա և եհարց թէ ուստի իցէ: Նա պատասխանի պատանին՝ թէ յորդւոց Իսրայելի. և տեղեակ եմ ճանապարհին. գիտեմ և զԳաբայէլ 'ի լերինս Եկբատանայ: Եւ տա-

բաւ զնա Տուբիա առ հայր իւր։ Տովբիթ յետ խօսելոյ ընդ պատանւոյն յանծանօթս՝ խոստացաւ նմա վարձս դրամ մի աւուրն. և օրհնեաց զորդին իւր և ասէ. Գնա դու, որդեակ, ընդ առնդ այդմիկ. այլ որ բնակեալն է յերկինս Աստուած, յաջողեսցէ զճանապարհս ձեր, և հրեշտակ նորա ուղեկից լիցի ձեզ։

342. Արդ ելեալ նոցա 'ի ճանապարհ՝ հասին 'ի նմին աւուր առ ափն Տիգրիս գետոյ։ Իբրև եմուտ Տուբիա 'ի գետն լուանալ, ահա ձուկն մի մեծ բացեալ զբերան իւր յարձակեցաւ 'ի վերայ նորա։ Եւ նա զարհուրեալ աղաղակեաց առ ընկերն օգնել նմա։ Ասէ հրեշտակն. մի երկնչիր. կալ զականջաց նորա և ձգեա 'ի ցամաք։ Արար Տուբիա։ Ապա ասէ հրեշտակն. բաց զփոր ձկանդ, և հան զսիրտ՝ զլեարդ, և զլեղի գորա, և պահեա զգուշութեամբ, զի են դեղք առողջարարք ախտից։ Եւ զձուկն խորովեալ զմի մասն կերան, և զմնացեալն տարան ընդ իւրեանս։ Իսկ 'ի ճանապարհին ուսոյց նմա հրեշտակն զզօրութիւն սրտի ձկանն և լերդին և լեղւոյն ըստ խնդրոյ Տուբիայ։

Իբրև մերձեցան 'ի Ռագաւ, հրեշտակն եցոյց նմա զգեօղ մի. անդ է, ասէ, Ռագուէլ ազգական քո. և է նորա դուստր միամօր, և անուն նորա Սառա. ես խօսեցայց վասն նորա, զի տացէ զնա քեզ կնութեան. քանզի դու միայն ես յազգէ նորա, և քեզ անկ է ժառանգել զամենայն ինչս նորա։ Խռովեցաւ Տուբիա և ասէ. լուեալ է իմ վասն աղջկանն, թէ տուեալ է եօթն առն, և ամենեքեան սատակեալ են 'ի գիշերին։ Բայց հրեշտակն քաջալերեալ զնա՝ խրատ ետ գիտել առ Աստուած աղօթիւք, և յառաջնում գիշերի ծխել 'ի լերդէ և 'ի սրտէ ձկանն 'ի վերայ աճիւնախառն հրոյ՝ յորում խանկք ծխեալ իցեն. և աչաւն-

դէն հալածի դևն, և այլ ոչ ևս դառնայ ։

343. Այսպիսի խօսակցութեամբ մտին նոքա 'ի տուն Հռագուելայ յանծանօթս և պատուասիրեցան 'ի նմանէ ։ Եհարց Հռագուէլ վասն Տովբիթայ եղբօրորդւոյ իւրոյ, թէ ճանաչէ՞ն զնա, և թէ ո՞ղջ իցէ ։ Ասէ Տուբիա՝ թէ ողջ է, և հայր իմ է։ Եւ յարուցեալ Հռագուէլ անկաւ զպարանոցաւ նորա և համբուրեաց զնա, և ելաց 'ի խնդութենէ. և ընթրիք պատրաստեցան վասն նոցա։ Յայնժամ յուշ արար Տուբիա ընկերի իւրում զբանն որ վասն աղջկանն. և նա յայտնեաց զայն Հռագուելայ։ Խռովեցաւ Հռագուէլ ընդ խնդիրն, և յայտնեաց նոցա՝ թէ զիարդ դևն սպան զեօթն արս նորա։ Ասաց հրեշտակն՝ մի՛ ինչ երկնչել, զի Տուբիա երկիւղած է յԱստուծոյ, և նմա պահեցաւ դուստրն քո ։ Այս բանք այնպէս քաջալերեցին զնա, զի անդէն և անդ կոչեաց զդուստրն իւր՝ ետ Տուբիայ կնութեան՝ ասելով. Ահաւասիկ ըստ օրինացն առ դու զնա և տար առ հայր քո. և ողորմածն Աստուած յաջողեսցէ ձեզ 'ի բարիս։ Ապա խորհեալ ընդ Հեգնայ կնոջ իւրոյ՝ ետուն նոցա զկէս ժառանգութեան իւրեանց յայնժամ. իսկ զմնացեալն տացեն նոցա առնուլ յետ մահու իւրեանց ։ Եւ նստան ուտել և խրախանալ։

344. Զկնի ընթրեացն պատրաստեցին սենեակ վասն նոցա. և մայրն եած անդր զաղջիկն լալագին, և քաջալերեաց զնա՝ ասէր. Տէր երկնից և երկրի տացէ քեզ ուրախութիւն փոխանակ տրտմութեանդ։ Իբրև տարան անդր և զՏուբիա, յիշեաց նա զպատուէր հրեշտակին. էառ զածխինախառն կրակ խնկոց, և ծխեաց 'ի սենեկի անդ զսիրտ և զլեարդ ձկանն. և ել խոյսն դևն 'ի Սառայէ և հալա-

ծեցաւ անօի , զոր կապեաց հրեշտակն . և ոչ ևս դարձաւ 'ի սննեակ անդր : Եւ կացին յաղօթս Տուբիա և Սառա ըստ խրատու հրեշտակին :

Իսկ Հռագուէլ 'ի կասկածանաց սրտին խառվեալ ոչ կարաց 'ննջել . և ելեալ գիշերայն' 'ի ձեռն ծառայից իւրոց պատրաստեաց գերեզման վասն Տուբիայ , զի գուցէ թաղեսցէ զնա' եթէ ըստ օրինակի առաջնոցն և նա սպանցի 'ի դիւէն : Ընդ առաւօտն յղեցին աղախին մի 'ի սննեակ անդր տեսանել զնա . իբրև լուան եթէ 'ի քուն կան երկոքին, լցան խնդութեամբ և օրհնեցին զտէր : Ապա հրաւիրեալ զամենայն մերձաւորս սկսան առնել զհանդէս հարսանեացն . և բանադատեցին զՏուբիա մնալ անդր աւուրս չորեքտասան : Իսկ 'նա առաքեաց զընկեր իւր երթալ 'ի Հռագաւ և բերել զարծաթն , և զնա ինքն զԳաբայէլ հրաւիրել 'ի հարսանիս . և եղև ուրախութիւն մեծ ամենեցուն :

345. Ապա համբուրեալ զնոսա արձակեցին 'ի խաղաղութիւն . առեալ 'նոցա ծառայս և աղախնայս , ուղտս և խաշն և արծաթ բազում : Իբրև մերձեցան 'ի Նինուէ , եթող Տուբիա զկարաւանն , և ընդ հրեշտակին երագեաց յընթացս մտանել 'ի քաղաք անդր : Իսկ ցաւագին մայր 'նորա Աննա , որ ըստ սովորութեան իւրում միշտ ելանէր 'ի վերայ Ճանապարհին և լայր անմխիթար ընդ յամել որդւոյն, իբրև ետես զնա 'ի հեռուստ զի գայր' ընթացաւ խնդութեամբ և ետ աւետիս առն իւրում , թէ ահա որդին քո գայ . և 'նորա մոռացեալ զկուրութիւն իւր յարեաւ և խարխափէր 'ի տան : Եհաս Տուբիա և յարոյց զհայր իւր . և ամենեքին լային յառաւելութենէ խնդու-

թեան. և մայրն ասէր. Տեսի ես զքեզ, որդեակ. այսուհետև անհոգ մեռանիմ։ Եհան ապա Տուբիա զլեղի ձկանն, և օծ նովաւ զաչս հօր իւրոյ ըստ խրատու հրեշտակին. և ահա սկսան լուսունքն կեղևիլ և ելանել յաչաց նորա. և ետես աչօք բացօք զորդին։ Լցաւ յայնժամ տուն նորա ուրախութեամբ, և ամենեքեան զարմանային և խնդակցեալ օրհնէին զԱստուած ընդ Տովբիթայ։

346. Յայնմ վայրի եհաս և Սառա նու իւր և ամենայն կարաւանն ընդ նմա, ծառայք և աղախնայք, անասունք և ինչք նոցա։ Եւ այնպէս տունն սգալից ՚ի վայրկեան ժամանակի դարձաւ ՚ի տուն խրախութեան և հարսանեաց։ Եւ կոչեաց Տովբիթ զՏուբիա որդի իւր, և խորհեալ ընդ նմա վասն ընկերին իւրոյ, որոշեցին տալ նմա զկէս ամենայն ընչիցն զոր բերին։ Պատասխանի ետ հրեշտակն. Օրհնեցէք դուք զբարերիչն երկնից և խոստովան եղերուք առաջի ամենայն կենդանեաց վասն ողորմութեանց զոր արար։ Որք առնեն զողորմութիւն և զարդարութիւն՝ լցցին կենօք։ Յորժամ կայեր դու յաղօթս և նու քո Սառա, ես մատուցի զյիշատակս աղօթից ձերոց առաջի Աստուծոյ. և յորժամ թաղէիր զմեռեալս, ես ընդ քեզ էի։ Առաքեցայ ՚ի տեառնէ բժշկել զքեզ և զնու քո զՍառա ՚ի չար դիւէն։ Ես եմ Հռափայէլ մի յեօթանց որոց անուն հրեշտակաց՝ որք կան առաջի փառաց աթոռոյն Աստուծոյ, և հանեն առ նա զաղօթս սրբոց։

347. Իբրև լուան նոքա, անկան երկիւղիւ ՚ի վերայ երեսաց իւրեանց։ Այլ քաջալերեալ զնոսա հրեշտակին ասէ. Մի երկնչիք. զԱստուած օրհնեցէք, քարոզեցէք զքանչելիս նորա, և գրեցէք զայս ամենայն՝ որ եղեւ։

Զայս ասացեալ եղեւ աներեւոյթ: Եւ նոցա տարածեալ 'ի գետնի օրհնեցին զԱստուած, և յարուցեալ պատմեցին ամենեցուն: Իսկ ծերունին Տովբիթ երգեաց գոհացողական օրհնութիւն առաւն զամենայն աւուրս կենաց իւրոց:

Յորժամ մերձեցաւ ժամանակ մահուան նորա, կոչեաց զորդին և զթոռունս իւր և պատուիրեաց նոցա մնալ հաւատարիմ առ Աստուած, և ողորմած առ մարդիկ. և ասաց ցՏուբիա թողել զնա և զմայր իւր 'ի միում գերեզմանի. և ինքն մեկնեալ անտի գնասցէ ամենայն տամբ իւրով յերկիրն Մարաց. զի մերձ է, ասէր, կործանումն Նինուէի: Գուշակեաց նա և զկործանումն Երուսաղէմի և զվերստին շինութիւն նորա. յաւել և զայլ ինչ մարգարէանալ վասն նոր եկեղեցւոյն Քրիստոսի և երկնաւորին Երուսաղէմի:

348. Մեռաւ Տովբիթ ամաց հարիւր յիսուն և ութից, և թաղեաց զնա որդի իւր պատուով. ետես նա զթոռունս և զորդիս թոռանց: Յորժամ վարեցաւ Տովբիթ 'ի գերութիւն 'ի Նինուէ՝ էր ամաց երեսուն և միոյ. և յորժամ կուրացան աչք նորա՝ ամաց յիսուն և ութից. և մնաց 'ի կուրութեան ամս ութ. և յետ բանալոյ աչացն եկեաց այլ ևս բազում ամս միշտ 'ի նմին սրբութեան և ողորմածութեան: Իբրև մեռաւ կին նորա Աննա՝ թաղեաց զնա որդին 'ի գերեզմանի Տովբիթայ, և ինքն առեալ զտուն իւր գնաց յԵկբատանս Մարաց. և եկաց ընդ ծերունի աներոյ իւրում Ռագուելեայ. որ իբրև մեռաւ, թաղեաց և զնա պատուով, որպէս և զկին նորա Հեդնա, և ժառանգեաց զամենայն ստացուածս նոցա: Ետես Տուբիա զորդիս որդւոց մինչև ցհինգ ազգ. ամենեքեան նոքա բարեպաշտք և աստուածահաճոյք. և մեռաւ հարիւր

քան և եօթն ամաց ։ Եւ մինչ չև էր մեռեալ՝ լուաւ զկործանումն Նինուէի 'ի Նաբուքոդոնոսորայ, և փառս ետ բարձրելոյն, որ պահեաց զնա յամենայն վտանգից ։

## ԳԼՈՒԽ Ժ

### ՅՈՒԴԻԹ ։
Ա. Ա. 3347

349. Սենեքերիմ արքայ Ասորեստանեայց իբրև կորոյս զմեծ բանակ իւր 'ի պաշարման անդ Երուսաղեմի (306), տկարացաւ զօրութիւն նորա. որով և Մարք ապստամբեալ 'ի նմանէ ինքնիշխան տիրեցին. յորոց վերայ թագաւորեալ Արփաքսադ ընդարձակեաց զտէրութիւն իւր և ամրացոյց զքաղաքն Եկբատան ահաւոր պարսպօք և բարձր աշտարակօք։ Ապա ել 'ի վերայ նորա Նաբուքոդոնոսոր արքայ Ասորեստանեայց. եհար և խորտակեաց զՄարս. սպան զԱրփաքսադ և աւար եհար զԵկբատան քաղաք, կործանեալ զպարիսպս նորա ։ Մեծամտեալ ընդ այս յաղթութիւն՝ եդ 'ի մտի տիրել ամենայն աշխարհաց. և հրաման եհան ամենայն ազգաց անձնատուր լինել նմա, եդեալ 'ի վերայ նոցա հարկս ծանունս։ Այլ իբրև նոքա չառին յանձն լինել հարկատու, բարկացաւ յոյժ, և կոչեալ զՀողոփեռնէս սպարապետ իւր՝ հրամայեաց նմա ելանել 'ի վերայ ազգացն այնոցիկ և նուաճել զնոսա բռնութեամբ ։

350. Հողոփեռնէս հանդէս արար զօրուն և եգիտ հարիւր և քսան հազար հետևակաց, և երկոտասան հազար հեծելոց աղեղնաւորաց ։ Եւ առեալ զամենայն պաշար՝ անց ընդ գետն

Եփրատ, աւարեաց զՄիջագետս և զԴամասկոս և զայլ թագաւորութիւնս. կործանեաց զամենայն քաղաքս և զամենայն մեհեանս և զկուռս նոցա ըստ պատուիրելոյ Նաբուքոդոնոսորայ, որպէս զի ամենայն ժողովուրդք զնա միայն պաշտեսցեն և նմին երկիր պագանիցեն իբրև աստուածոյ: Բազում ժողովուրդք և թագաւորք ինքնակամ անձնատուր եղեն Նաբուքոդոնոսորայ, և երթային ընդ առաջ Հողոփեռնեայ երգովք և պարօք:

351. Այս լուր հասեալ յԵրուսաղէմ զարհուրեցոյց զամենեսին: Թագաւորէր անդ ՚ի ժամանակին Մանասէ մանկահասակ ընդ խնամածութեամբ Եղիակիմայ մեծի քահանայապետին (311). որ և առաքեաց պատուէր յամենայն կողմանս Հրէաստանի, զի ամենեքեան ՚ի զէն վառեսցին և ելցեն ամրասցին յամուրս լերանց: Եւ ինքն նորոգեաց զամենայն ամրոցս. և յետ ամենայն կարևոր պատրաստութեանց եւ փակել զամենայն կիրճս և զանցս Երուսաղէմի ընդդէմ Հողոփեռնեայ: Ապա արք և կանայք և համօրէն քահանայք մոխիր արկեալ զգլխով և քուրձ զմիջովք մերկակարդային առ տէր ՚ի գուձս անկեալ ՚ի տաճարի: Եւ Եղիակիմ ել և շրջեցաւ անձամբ յամենայն սահմանագլուխս, խրախուսելով զամենեսին ապաւինել յԱստուած ջերմ պաղատանօք:

352. Իբրև լուաւ Հողոփեռնէս զայս ամենայն պատրաստութիւն Երուսաղէմի, ՚ի հուր բարկութեան բորբոքեցաւ. և անդէն կոչեալ առ ինքն զզօրագլուխս Մովաբացւոց և Ամոնացւոց՝ եհարց ցնոսա եթէ զինչ ոք իցէ Եբրայեցւոցն ազգ: Յառաջ մատեաւ Աքիովր զօրապետ Ամոնացւոց այր խոհական, և պատմեաց նմա ճշմարտութեամբ՝ թէ որպէս յորժամ

անիրաւէին ընդդէմ Աստուծոյ իւրեանց և պաշտէին զկուռս, բարկանայր նոցա Աստուած և մատնէր 'ի ձեռս թշնամեաց իւրեանց. իսկ յորժամ պաշտէին զնա հաւատարմութեամբ, չէր ազգ որ կարիցէ յաղթել նոցա: կատաղեցաւ Հողոփեռնէս ընդ լսելն զզօրութիւն Աստուծոյն Իսրայէլի՝ թէ մեծ իցէ քան զՆաբուքոդոնոսորայն, և կամեցաւ սպանանել զԱքիովր իբրև զհայհոյիչ. սակայն ըստ խորհրդոյ այլոց վճարեաց մատնել զնա 'ի ձեռս Իսրայէլացւոց, առաքելով զնա 'ի ձեռն զօրաց իւրոց 'ի Բեթուղիա: Ածին զնա յոտս լերին, և կապեալ 'ի կոճղ ինչ՝ ինքեանք փախեան անտի: Իսկ Իսրայէլացիք ելեալ 'ի քաղաքէն իբրև տեսին զնա կապեալ, առեալ անտի տարան զնա 'ի Բեթուղիա: Ժողովեցան 'ի վերայ նորա ժողովուրդք քաղաքին, հարցանէին թէ զինչ պատճառք կապանացն իցեն. և նա պատմեաց նոցա ճշմարտութեամբ: Զայն իբրև լուան նոքա, անկեալ յերկիր աղաղակեցին առ Աստուած, և մխիթարեալ զԱքիովր հանգուցին զնա 'ի տան մեծի իշխանին:

353. Ի վաղիւ անդր հրամանեաց Հողոփեռնէս զօրաց իւրոց յառաջ խաղալ ելանել 'ի Բեթուղիա: Ելին և մերձ կային 'ի քաղաք անդր: Զայն տեսեալ Եբրայեցւոց 'ի քաղաքէ անտի՝ միաբան յօգնութիւն կարդային զամենազօր արարիչն. և ամենեքեան զէն 'ի ձեռին կային 'ի պահպանութիւն նեղ անցիցն, զի մի մերձեսցին թշնամիք 'ի պարիսպս քաղաքին: Հողոփեռնէս ետ խնուլ զամենայն անցս ջուրց քաղաքին: Եւ յետ երեսուն և չորս աւուրց պաշարման իբրև եհաս քաղաքն 'ի վերջին կարօտութիւն, խառնաղանձ ժողովուրդն գնացեալ առ իշխանս լային և խնդրէին տալ զքաղաքն 'ի ձեռս Հողոփեռնեայ, զի մի մեռցին 'ի ծարաւոյ: Ընդ ամենեքեան ան-

կան առաջի տեառն և խնդրեցին զօգնութիւն երկնից. իսկ Ոզիա իշխան քաղաքին հանդարտեցուցեալ զքաջութիւնն՝ խնդրեաց համբերել ժամանակ մի ևս, խոստանալով նոցա, զի եթէ մինչև յաւուրս հինգ ոչ առաքեսցէ տէր զողորմութիւն իւր, արասցէ ըստ բանից նոցա:

354. Էր անդ յայնժամ կին մի, և անուն նորա Յուդիթ, յաղնուական տոհմէ, համեստութեամբ և գեղով գիմացն երևելի յոյժ, այրի մնացեալ երեք ամօք յառնէ իւրմէ Մանասէէ. և էր ժառանգ ամենայն հարստութեանց նորա. այլ առ ոչինչ գրեալ զմեծութիւն և զարտաքին ձիրս՝ նստէր սրբութեամբ ՚ի տան իւրում իբրև ՚ի մենաստանի, զգեցեալ զհանդերձ այրութեան: Արդ իբրև լուաւ նա զդաշնադրութիւնն Ոզիայ ընդ ժողովրդեան՝ մատնելոյ զքաղաքն ՚ի ձեռս թշնամւոյն, վշտացաւ յոյժ, և կոչեալ առ ինքն զգլխաւորս յիշխանաց քաղաքին՝ յայտ արար նոցա, թէ ոչ բարւոք արարին զի ուխտեցին ժողովրդեան՝ չափ դնելով կամացն Աստուծոյ: Եւ ապա ասէ. Կայջիք դուք առ դրան քաղաքին՝ որ հանէ ՚ի դաշտ անդր, և համարձակ լիցի ինձ ելանել արտաքս նաժշտաւս. և դուք ամենեքեան յաճախեցէք յաղօթս, զի այցելու լիցի ձեզ տէր Աստուած ՚ի ձեռն իմ, և մի՛ քննէք բնաւ զոր ինչ գործելոցն իցեմ:

355. Հաւանեցան իշխանքն բանից նորա և մեկնեցան անտի. իսկ տիկինն զգեցեալ զքուրձ և արկեալ զգլխով մոխիր՝ անկաւ առաջի տեառն և խնդրեաց ջերմ արտասուօք օգնել նմա: Եւ յետ աղօթիցն ՚ի բաց հանեալ զքուրձն և զհանդերձն այրութեան՝ զգեցաւ հանդերձս ուրախութեան և զարդարեցաւ ամենայն չքեղութեամբ և փառօք. առ ընդ իւր զաղախին մի, և ետ նմա զմախաղն լի փոխնդով և այլ պաշա-

րդք, և զհագաղակն գինւոյ, զի մի՛ ստիպեսցի ուտել զանսուրբ կերակուրս հեթանոսաց։ Եւ եկեալ 'ի դուռն քաղաքին՝ եգիտ անդ զիշխանս. որոց բացեալ զդուռն արձակեցին զնա երթալ, հայցելով յաջողութիւն խորհրդոց նորա։ Յուդիթ դարձեալ եկաց յաղօթս, և ապա դիմեալ ընդ ծործոր հովտին եհաս առ պահապանս Ասորեստանեայց։ Որոց լուեալ 'ի նմանէ՝ թէ գայ ցուցանել նոցա հնարս անաշխատ մտանելոյ զօրականին իւրեանց 'ի քաղաք անդր, ածին զնա պատուով առ Հողոփեռնէս. որ ընդ տեսանելն զնա՝ հիացաւ ընդ գեղ նորա։ Իսկ նա խոնարհեալ առաջի Հողոփեռնեայ երկիր եպագ նմա և ծանոյց զկեալն թշուառութիւն քաղաքին, և թէ ինքն առաքեալ է յԱստուծոյ առնել գործ մի մեծ. և յորժամ թոյլ տացի ինքեան ելանել 'ի բանակէն և կալ յաղօթս առ Աստուած երկնից, նա յայտնէ նմա զժամանակ կործանման Իսրայէլի. և ես, ասէ, տարայց զքեզ յայնժամ 'ի մէջ Բեթուղուայ և Երուսաղէմի։

356. Հիացաւ Հողոփեռնէս, որպէս և ամենայն զօրականք իւր ընդ գեղ և ընդ իմաստութիւն նորին. մինչև խոստանալ նմա՝ զի եթէ կատարեսցին գուշակութիւնք նորա, ինքն ևս պաշտեսցէ զԱստուածն Յուդթայ։ Եւ ապա տանել զնա 'ի խորան գանձուց, որ կից էր խորանին իւրում։ Յայնժամ Յուդիթ էառ հրաման 'ի նմանէ ելանել և մտանել համարձակ և կալ յաղօթս արտաքոյ բանակին առ Աստուած ժամս ինչ, և բերել նմա պատգամ 'ի տեառնէ։ Հրամայեաց Հողոփեռնէս, զի մի՛ ոք բնաւ արգել լիցի նմա երթալ և գալ՝ ոչ միայն արտաքոյ բանակին, այլև 'ի խորան իւր։

Յուդիթ ազատութեամբն այնու սկսաւ ելանել արտաքոյ բանակին և երթալ մինչև 'ի ձորն

Բետիղուայ և լուանալ անդ ըստ օրինաց։ Եւ կայր յաղօթս առ Աստուած յաջողել նմա՛ 'ի փրկութիւն որդւոցն Իսրայէլի. այսպէս առնէր զերիս գիշերս։ Այլ յաւուր չորրորդի հրաւիրեցաւ Յուդիթ յընթրիս Հողոփեռնեայ, և նստաւ յանդիման նորա։ Կերին և արբին ամենեքեան, և արբեցան յոյժ այլ 'ի հրաւիրելոցն, և ծանրացեալք 'ի գինեբրուայ չոքան անկան իւրաքանչիւր 'ի խորանս իւրեանց 'ի ննջել։ Իսկ Յուդիթ մնաց անդ ընդ Հողոփեռնեայ. որոյ գինեհարեալ սաստիկ արբեցութեամբ՝ անկաւ 'ի գահոյս իւր և ննջեաց խոր 'ի քուն. իսկ սենեկապան նորա փակեալ զդուռն խորանին նորա գնաց 'ի խորան իւր։

357. Յայնժամ ասաց Յուդիթ աղախնի իւր՝ կալ արտաքոյ 'ի պահպանութիւն դրան խորանին, և ինքն կացեալ յաղօթս լռելեայն խնդրեաց զօգնութիւն 'ի Տեառնէ։ Ապա էառ զդաշոյն Հողոփեռնեայ՝ որ էր ընդ անուրս, և կալեալ զհերաց նորա ասաց. Զօրացո զիս, Տէր Աստուած Իսրայէլի։ Եւ երկիցս հարեալ եհատ զգլուխ նորա, և զմարմինն ընկէց 'ի գետին։ Եւ բարձեալ անտի զպատուական վարագոյրս նորին Հողոփեռնեայ՝ ետ զայն 'ի մախաղ անդր ընդ գլխոյն և ետ աղախնին իւր։ Ապա փակեալ զդուռն խորանին ելին 'ի Ճանապարհ, և անցեալ ընդ բանակն հասին մերձ առ պարիսպս Բետիղուայ։ Եւ աղաղակեաց առ պահապանսն բանալ զդրունսն։ Իբրև լուան, ամենեքեան անդր դիմեցին. և Յուդիթ մտեալ 'ի քաղաքն գոչեաց մեծաձայն. Որդիք Իսրայէլի, օրհնեցէք զՏէր, որ ոչ մերժեաց զողորմութիւն իւր 'ի մէնջ։ Եւ հանեալ զգլուխն 'ի մախաղէ անտի ասէ. Ահաւասիկ գլուխն Հողոփեռնեայ, ահա և վարագոյրքն. կենդանի է Տէր՝ որ պահեաց զիս 'ի Ճանապարհին յայն-

մինչ յերթալ իմ և կալ անդ. և 'ի դառնալ առա
զի առնուլ գեղջ իմոյ խաբեաց զնա, և տէր պա_
հեաց զնա անարատ 'ի մեղաց:

358. Յայնժամ Ողիա իշխան քաղաքին ողջու_
նեաց զնա բազում գոհութեամբ և օրհնեաց.
և ամենայն ժողովուրդն միաբարբառ գոչեցին,
Եղիցի եղիցի: Անդ և հաս Աքիովր. և իբրև ետես
զգլուխն Հողոփեռնեայ՝ անկաւ առ ոտս Յուդ_
թայ և օրհնեաց զնա. ապա դաւանեալ զճշմա_
րիտ աստուածպաշտութիւն՝ թլփատեցաւ և
յաւելաւ 'ի ժողովուրդն Աստուծոյ: Իսկ Յու_
դիթ յայնմ վայրի խորհուրդ ետ իշխանաց՝ կա_
խել զգլուխն Հողոփեռնեայ զպարսպաց քա_
ղաքին, և յառաւօտուն ամենայն արք զօրա_
ւորք 'ի զէն վառեալ յարձակեսցին 'ի դուրս 'ի
վերայ թշնամեաց և կոտորեսցեն զնոսա:

Արդ 'ի ծագել արևու կախեցին զգլուխն և պա_
տերազմականք յարձակեցան արտաքոյ քաղաքին
փողօք և աղաղակաւ մեծաւ: Զայն լուեալ թըշ_
նամեաց՝ զարմացան ընդ համարձակութիւն Իս_
րայէլացւոց. և դիմեցին զօրապետք 'ի խորանն Հո_
ղոփեռնեայ ազդ առնել նմին: Եմուտ 'ի խորանն
Բագոա սենեկապետն և բաղխեաց զդուռն սե_
նեկին. իբրև ձայն ինչ ոչ լուաւ, համարձակեցաւ
եմուտ 'ի ներքս, և ահա մարմին Հողոփեռնեայ
արիւնաշաղախ անգլուխ անկեալ 'ի գետին. ապ_
շեցաւ յիմարեցաւ, դիմեաց 'ի խորանն Յուդ_
թայ, և չգտեալ զնա անդ՝ իմացաւ զբանն, պա_
տառեաց զպատմուճան իւր և ձայն բարձեալ ա_
ղաղակեաց. Ապստամբեցին ծառայքն. զի կին
մի եբրայեցի արար ամօթ նախատանաց արքային
Նաբուքոդոնոսորայ:

359. Հռչակեցաւ վաղվաղակի դոյժն ընդ
բանակն ամենայն, և անկաւ սարսափ 'ի վերայ
ամենեցուն. մինչև առ հասարակ շփոթեալ 'ի

փախուստ դարձան, թողեալ անդ զխորանս, զզէնս և զամենայն կարասիս: Զայն տեսեալ Իսրայէլացւոց 'ի լեռնէ անտի՝ արշաւեցան զհետ փախստէից կոտորել զնոսա: Հրաման առաքեաց Ոզիա յամենայն քաղաքս երկրին Իսրայէլի յարձակել 'ի վերայ փախստէից, ուր և հանդիպեցին. և սատակեցին 'ի նոցանէ բազում յոյժ: Իսկ որք Բեթուղուայ լցան յղփացան աւարօք թշնամեացն, և զաւուրս երեսուն հազիւ մարթացան ածել 'ի քաղաք անդր զկապուտ կողոպուտ բանակին, զի անթիւ էր 'ի բազմութենէ:

360. Ապա Եղիակիմ քահանայապետն և ծերակոյտն Իսրայէլի եկին յԵրուսաղէմէ յողջոյն Յուդթայ. օրհնեցին և գովեցին զնա պանծալի բանիւք: Եկին առ նա և կանայք մեծարել զնա և երգել երգս պարուք. և ինքն ոստս արմաւենեաց և ձիթենեաց տայր նոցա՝ վերաբերելով զայն ամենայն փառս Աստուծոյն Իսրայէլի: Երգեաց Յուդիթ երգս օրհնութեան առ Աստուած մեծացուցանելով զփառս և զքանչելիս նորա և այլ. Բարձր արարէք զնա և կարդացէք զանուն նորա: Ապա չոգան յԵրուսաղէմ երկիր պագանել տեառն և մատուցանել պատարագս. և Յուդիթ նուիրեաց 'ի տաճար անդր զզէնս և զամենայն պատերազմական կահ կարասի Հողոփեռնեայ, քանզի նմա տուեալ էին զխորանն Հողոփեռնեայ, արծաթ և ոսկի և ականս պատուականս: Եկեաց Յուդիթ 'ի տան իւրոյ ամս հարիւր և հինգ և մեռաւ որբութեամբ:

## ԳԼՈՒԽ ԺԱ

### Ն-Բէր ։
### Ա. Ա. 3448

361. Արտաշէս թագաւոր Մարաց ընդդիմաձ-
կեալ զիշխանութիւն իւր ախրեաց համօրէն աշ-
խարհին Պարսից, և էառ գաւառս բազումս 'ի
Նաբուքոդոնոսորայ յետ կորստեան Հոլոփեռ-
նեայ ։ Ունէր նա հարիւր քսան և եօթն գա-
ւառս սկսեալ 'ի Հնդկաց աշխարհէ մինչև ցԵ-
թովպիա . իսկ զաթոռ թագաւորութեան իւրոյ
հաստատեաց 'ի Սիւսիս մայրաքաղաք Պարսից ։
Թագաւորս այս թէպէտ և առատաձեռն էր և
քաղցրաբարոյ, բայց միանգամայն էր յոյժ բար-
կասիրտ և անչափաւոր 'ի շնորհս սիրելեաց իւ-
րոց . մինչև առանց քննութեան շնորհել նոցա
զամենայն զոր խնդրէին ։

362. Յամին երրորդի թագաւորութեան իւ-
րոյ արար մեծահանդէս կոչունս յարքունիս
իւր զաւուրս հարիւր և ութսուն ամենայն մե-
ծամեծաց Պարսից և Մարաց . և ապա հրա-
ման ետ , զի եկեսցեն վայելել 'ի շնորհս նո-
րա ոչ միայն ազնուականք , այլ և ռամիկք
Սիւսիս քաղաքի 'ի մեծէ մինչև ցփոքրն։ Անդրաւ-
էին անդ զարդք և մեծութիւնք, որպէս և հան-
դերձանք կերակրոց և ըմպելեաց և սպասու-
ց ։ Զայս օրինակ արար և փառաւոր կոչունս
կանանց . և Աստինէ մեծ տիկին իւր ընդ նո-
սա ։ Իբրև արբեցաւ արքայ յաւուրն եօթնե-
րորդի , առաքեաց զներքինիս ածել զԱստինէ
զտիկին իւր անդր 'ի հանդէս բազմութեան ա-
րանց . իսկ նորա համեստութիւն ցուցեալ՝ ոչ

կամեցաւ գնալ. որով և պարտաւոր գտաւ անլսողութեան։ Նա ասաց արքայ 'ի բարկութեան իւրում ցիշխանսն՝ խորհել վասն անհնազանդութեան տիկնոջն։ Նոքա ետուն խորհուրդ՝ հանել զնա 'ի տիկնութենէ, և հրովարտակ արձակել ընդ ամենայն թագաւորութիւն իւր. զի կանայք պատուեսցեն զարս իւրեանց ամենայն հնազանդութեամբ։ Այս վճիռ անդէն 'ի գործ եդաւ։

Սակայն իբրև սթափեցաւ արքայ, ոչ հաճեցաւ ընդ այն, այլ տրտմեցաւ յոյժ։ Զայն տեսեալ իշխանաց երկեան, և գաղտ յարքայէ կորուսին զԱստինէ. և ասացին ցարքայ զի հրաման տացէ, և ժողովեսցին կոյս աղջկունք գեղեցիկք առաջեամբ. և ընդ որ 'ի նոցանէ հաճեսցի նա՝ տացէ նմա տիկնութիւն փոխանակ Աստինեայ։ Հաճոյ թուեցաւ խորհուրդն, և ժողովեցին աղջկունս բազումս յարքունիս անդր։

563. Ածաւ ընդ նոսա անդր Եսթեր կոյս եբրայեցի դուստր Ամինադաբայ հօրեղբօր Մուրթքէի. 'ի ցեղէ Բենիամինի և յազգէ Սաւուղայ. որ որբ մնացեալ 'ի ծնողաց՝ սնեալ էր 'ի համեստութեան և յերկիւղ Տեառն 'ի տան Մուրթքէի, որ էր 'ի պաշտօնէից արքունի դրան։ Իբրև ետես զԵսթեր կոյս Ովգա ներքինին, հաճեցաւ յոյժ ընդ շնորհափայլ գեղ նորին, և առաւելապէս խնամ տանէր նմա։ Այս իբրև ածաւ առ արքայ՝ ընտրեցաւ Եսթեր փոխանակ Աստինեայ. և եդ Արտաշէս 'ի գլուխ նորա թագ արքունական, և հրատարակեաց զնա տիկնաց տիկին, առնելով զաւուրս եօթն հանդէս հարսանեաց։ Բայց Եսթեր պահեաց միշտ զանձն 'ի խոնարհութեան և յաստուածպաշտութեան ըստ խրատու Մուրթքէի. որ յաճախէր միշտ յարքունիս՝ լսել ինչ զնմանէ, և հաղորդել

զգաղանի խորհուրդս իւր Եսթերայ 'ի ձեռն Ա-նաթեա ներքինւոյն հաւատարմի տիկնոջ:

364. Յաւուր միում իմացաւ Մուրթքէ, զի երկու ներքինիք բանիւ Համանայ գարան գոր-ծէին սպանանել զարքայ, և փողփողակի ծա-նոյց զայն Եսթերայ. և նա յայտնեաց արքայի յանուն Մուրթքէի: փութով քննեցաւ այս բան և խոստովան եղեն ներքինիք զոճիրն և կախե-ցան զփայտէ: Այս բան հրամանաւ թագաւորին արձանագրեցաւ 'ի մատեան յիշատակաց. և Մուրթքէ ընդ այլ իշխանս կարգեցաւ պահա-պան արքունեաց:

Յառաջ քան զայս՝ տեսիլ ետես Մուրթքէ, զի լսէր ձայն որոտմանց. և ապա ետես, զի եր-կու վիշապք 'ի կռիւ գային, և 'ի ձայնէ նոցա ամենայն ազգք պատրաստեցան տալ պատերազմ ընդ ազգին արդարոյ, և էր օրն խաւարին և մթին, զի խռովեցաւ ամենայն ազգն արդար վասն չա-րեացն՝ որ գալոց էր 'ի վերայ նոցա. յայնժամ կարդացին նոքա առ Աստուած, և եղև 'ի փոք-րիկ աղբերէ գետ մեծ յստակ, և արեգակն ծա-գեաց, և խոնարհքն բարձրացան և կերան զփա-ռաւորսն: Իբրև զարթեաւ Մուրթքէ, ցան-կայր գիտել թէ զինչ իցէ տեսիլն այն. այլ ոչ անցին բազում ժամանակք՝ զի նա ինքնին անց ընդ փորձ տեսլեանն:

365. Համան ամաղեկացի յազգէ Ագագայ արքայի (191) փառաւորեալ էր յոյժ յաչս Արտաշէսի. և էր այր ամբարտաւան: Յոր-ժամ մտանէր յարքունիս, ամենեքեան երկիր պագանէին նմա իբրև աստուծոյ ըստ հրա-մանի արքային. այլ Մուրթքէ ոչ բնաւ: Նմին իրի կատաղեցաւ Համան, և կամեցաւ ջըն-ջել իսպառ ոչ միայն զՄուրթքէ, այլ և զող-ջոյն ազգն Հրէից: Վասն որոյ յամին երկո-

տասներորդի Թագաւորութեան Արտաշէսի և 'ի չորեքտասաներորդ աւուր ադար ամսոյ մատուցեալ Համան առ Արտաշէս, եցոյց նմա թէ, գոյ 'ի տէրութեանդ ազգ օտար խորամանկ և անհնազանդ հրամանաց արքայից. հրամայեա ջնջել զնոսա, և ես կարգեցից 'ի գանձս արքունի բիւր քանքարս արծաթոյ: Հաճեցաւ Արտաշէս անդէն ընդ բանս նորա. և նմա շնորհեալ զարծաթն զոր խոստանայր նա 'ի գանձ արքունի ամբարել. ինքն հրաման ետ գրել զհրովարտակն ըստ կամի, և ետ նմա զմատանին՝ կնքել զդատակնիք կորստեան Հրէից առ հասարակ: Բայց յայնմանէ առաքեցան և այլ նամակք արքունի կնքով ընդհամօրէն իշխանութիւնս Արտաշէսի 'ի գործադրութիւն մահաւիթ վճռոյն:

366. Իբրև սփռեցաւ հրովարտակն ընդ ամենայն գաւառս, աղաղակ մեծ և կոծումն անհնարին լինէր Հրէից: Լուաւ և Մուրթքէ, և պատառեալ զհանդերձ իւր՝ զգեցաւ քուրձ և ցանեաց մոխիր զգլխով, և ընթանայր 'ի հրապարակս քաղաքին և աղաղակէր. Ընդէ՞ր բառնայք զուր տարապարտուց զազգն իմ, որ ոչինչ չարիս գործեաց: Եկն ապա 'ի դրունս տանն արքունի առ երեկոյս ներքինեաց և նաժշտաց Եսթերայ. որոց տեսեալ զնա յայն կերպարան՝ ծանուցին Եսթերայ: Իսկ նա խռովեցաւ ընդ այն և առաքեաց զԱսունաթէս ներքինին իմանալ զպատճառ այլայլութեանն: Ծանոյց Մուրթքէ զամենայն. և յղեաց առ նա զպատճէն հրովարտակին, պատուիրելով նմա զի անյապաղ մտցէ և խօսեսցի ընդ արքային:

367. Սակայն չէր օրէն ումեք մտանել առ արքայ առանց կոչելոյ նորա. ապա թէ ոչ՝ մահու պարտական գտանէր որ մտանէրն, բայց միայն եթէ ձգէր առ նա արքայ զոսկի գաւազան իւր

'ի ցոյց հաճութեան ընդ մուտն նորա։ Նա եւ աւուրք երեսուն անցեալ էին՝ յորմէ հետէ չէր կոչեցեալ Եսթեր յարքայէ։ Զայս ամենայն դժուարութիւնս ծանոյց Եսթեր Մուրթքէի։ Այլ նա եւս առաւել սրտապնդեալ ստիպեաց զնա ՚նուիրել զանձն վասն փրկութեան ազգին. զի վասն այսր ժամու, ասէր, ամբարձեալ է քո յայն բարձր վիճակ ազատել զազգն։ Եսթեր եդեալ զյոյս իւր յԱստուած՝ յանձն էառ, եւ ազդ արար Մուրթքէի ժողովել զՀրէայս քաղաքին, եւ միաբան պաղատել առ տէր երեքօրեայ պահովք եւ աղօթիւք. եւ ինքն մերկացեալ զհանդերձս փառաց՝ զգեցաւ քուրձ սգոյ, եւ խոնարհեալ'ի պահս եւ յաղօթս խնդրէր զօգնութիւն 'ի տեառնէ՝ յիշելով զողորմութիւնս նորա զառաջինս, զոր արար Իսրայէլի։

368. Ապա յաւուր երրորդի 'ի բաց հանեալ զհանդերձն սգոյ՝ զգեցաւ ծիրանիս շքեղազարդուք. եւ առեալ զերկու նաժիշտս եմուտ ընդ ամենայն դրունս ապարանից։ Այլ իբրեւ եհաս առաջի թագաւորին, տեսեալ զնա ահագնատեսիլ 'ի փառս բարձրութեան գահոյից, առ խռովութեան սրտին նուաղեալ անկաւ 'ի վերայ նաժըշտին իւրոյ։ Դարձոյց Աստուած զսիրտ արքային 'ի գութ. էջ յաթոռոյն եւ խանդաղատեալ գգուէր զտիկինն. Զի՞ է քեզ. ասէ, Եսթեր տիկին. ես եղբայր քո եմ. համարձակեաց, ոչ մեռանիս. ձգեա զձեռն եւ կալ զգաւազանդ ոսկի։ Նա եւ զգաւազանն 'ի վերայ պարանոցի նորա։ Յայնժամ Եսթեր ոգի առեալ ասէ. Տեսի զքեզ, տէ՛ր իմ, իբրեւ զհրեշտակ Աստուծոյ, եւ մեծութի փառաց քոց խռովեցոյց զսիրտ իմ։ Զայս ասացեալ դարձեալ նուաղեցաւ. եւ արքայ առաւել եւս խռովեալ՝ 'ի գթոյն՝ այլ յայլմէ լինէր։ Իբրեւ զգաստացաւ նա՝ ձգեաց արքայ դարձեալ զգաւազանն

տակի առ նա, և նա մեծարանօք համբուրեաց զծայր գաւազանին. և արքայ Թախանձէր զնա գորովով խնդրել զոր կամիցին, և խոստանայր նմա տալ մինչև ցկէս Թագաւորութեան իւրոյ: Եւ պատասխանի Եսթեր և ասէ. Օրս իմ այս նշանաւոր է. եթէ հաճեսցիս, տէր իմ արքայ եկեսցես դու և Համան 'ի կոչունս իմ զոր առնելոց եմ այսօր:

369. Հաճեցաւ արքայն և գնաց ընդ Համանայ 'ի կոչունս նորա: Անդ իբրև ջերմացաւ արքայ 'ի գինւոյ և 'ի սիրոյ, դարձեալ խոստացաւ տալ ակնկալեալն զոր ինչ և կամիցի: Ասէ Եսթեր. Եթէ գտի ես շնորհս առաջի արքայի, եկեսցէ արքայ և Համան 'ի կոչունս՝ զոր առնելոց եմ վաղիւ միւսանգամ: Եւ խոստացաւ արքայ գնալ: Ել Համան անտի բերկրալից ուրախութեամբ. և տեսեալ թէ Մուրթքէ յարքունիս անդ ոչ երկիր եպագ նմա, յուզել սաել զնա. չոքաւ 'ի տուն իւր և խորհեցաւ ընդ կնոջն կանգնել 'ի տան իւրում փայտ մի յիսունկանգնեան, զի ընդ առաւօտն առեալ հրաման յարքայէ տացէ կախել անդ զՄուրթքէ:

370. Ի նմին գիշերի մերժեցաւ քուն յաչաց արքայի. և տայ ցդպրապետն իւր բերել նմա զգիր յիշատակաց: Իբրև ընթերցաւ զբարերարութիւնն Մուրթքէի, որ յայտնեալ էր զգուշութին երկուց ներքինեաց դարանակալացն արքայի, եհարց տեղեկացաւ՝ թէ չէր արարեալ տակաւին հատուցումն նմա ըստ հաւատարմութեան նորին(364): Յառաւօտուն իբրև խորհէր արքայ փառաւորել զՄուրթքէ, եկն Համան առնուլ հրաման յարքայէ կախել զնա: Կոչեաց զնա արքայ և ասէ. Զինչ արարից առն զոր ես կամիմ փառաւորել: Համան խորհեցաւ 'ի միտս իւր՝ զով կամի արքայ փառաւորել, եթէ ոչ զիս. ասէ

ցնա · Այրն զոր կամի փառաւորել արքայ , զարգարեսցի արքունի պատմուճանաւ, և թագ 'ի գլուխ հեծուսցի յերիվարն արքայի , և մի ոմն 'ի փառաւոր իշխանաց կալեալ զերասանակ երիվարին քարոզ կարդասցէ և ասասցէ · այս_պէս եղիցի ամենայն առն զոր փառաւորէ արքայ ։ Ասէ ցնա արքայ · Դու ինքնին առցես վաղվաղակի զպատմուճանն և զերիվարն ար_քունի , և զգեցուցեալ զՄուրթքէ զայր հրեայ՝ հեծուցես յերիվարն · և զգոյշ լեր՝ զի մի վրի_պեսցի բան մի 'ի բանից քոց զոր խօսեցար ա_ռաջի իմ ։

371 · Համան լի ամօթով արար զամենայն զոր միանգամ ասաց առաջի արքային · շրջեցոյց զՄուրթքէ 'ի հրապարակս քաղաքին, և դարձոյց անդրէն յարքունիսն · և ինքն չոքաւ տրտմութեամբ 'ի տուն իւր ։ Նա մինչդեռ խօսէր 'ի վերայ բա_նիցս այսոցիկ · կոչեցաւ 'ի կոչունս Եսթերայ ։ Նստաւ արքայ ընդ Համանայ 'ի գինեըմբուս · և իբրև ջերմացաւ, դարձեալ եհարց ցԵսթեր՝ թէ զինչ խնդրես ։ Յայնժամ յոգւոց եհան Ես_թեր և ասէ · Եթէ գտի շնորհս առաջի քո , ա_զատեսցի ազգն իմ 'ի կործանմանէ · վասն զի ես և ժողովուրդ իմ վաճառեցաք 'ի սպա_նումն և 'ի կորուստ առ կատարութեան առն միոյ, որոյ չարութիւնն հասանէ և առ թագա_ւորն ։ Գոչեաց Արտաշէս և ասէ · Ո՞վ է որ իշ_խեաց ցոյդ վայր յանդգնել ։ Ասէ Եսթեր · Ահա այրս այս Համան , թշնամի իմ և քո ։ Յարու_ցեալ անդէն Արտաշէս լի ցասմամբ եմուտ 'ի ծաղկոցն ։

372 · Իսկ Համան յերկիւղ մահու ըմբռնեալ՝ անկաւ առաջի տիկնոջն աղաչել զնա ։ Արքայ դար_ձեալ 'ի ծաղկոցէ՝ իբրև ետես զնա առ ոտս տիկ_նոջ, ասաց պալատականին · Արդ կամիս և զկինն իմ

բռնադատել՚ի տան խմում: Եւ հրամայեաց, զի կախեսցի Համան զփայտէն զոր պատրաստեաց վասն Մուրթքէի: Ի նմին աւուր յարքունիս գրաւեցան ամենայն գանձք նորա · զորս արքայ պարգեւեաց Եսթերայ· և յայնժամ ծանեաւ՚ի նմանէ, թէ Մուրթքէ ազգական է նորա · նմին իրի արար զնա ինքն զՄուրթքէ գործակալ թագաւորութեան իւրոյ տալով նմա զմատանին Համանայ: Իսկ Եսթեր կացոյց զնա հազարապետ՚ի վերայ տան իւրոյ:

Այս հրամանաւ արքային գրեաց Մուրթքէ հրովարտակ վասն ազատութեան Հրէից, և սփռեաց ընդ ամենայն գաւառս՝ ցուցեալ՚ի նմին զանմեղութիւն ազգին իւրոյ և զչարութիւն Համանայ: Կախեցան և տասն որդիք Համանայ, և բնաւ թշնամիք Հրէից սատակեցան, ընդ ամենայն ոգիք հնգետասան հազար: Եւ այն օր նշանաւոր՝ կարգեցաւ տօն տարեկանաց, որ էր երեքտասան ամսոյն ադարայ: Այսպէս կատարեցաւ տեսիլն Մուրթքէի· զի փոքրիկ աղբիւրն՝ գետ մեծ եղեալ՝ էր Եսթեր · երկու վիշապքն՝ էին Մուրթքէ և Համան · մութն և խաւար և ապա լոյս և արև՝ էին տառապանք և ուրախութիւն Հրէից · խոնարհքն բարձրացան և կերան զփառաւորսն (364):

## ԳԼՈՒԽ ԺԲ

### Նաբուքոդոնոսոր, Շուշան, և Դանիէլ մարգարէ։
### Ա. Ա. 3400

373. Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելացւոց իբրև վարեաց 'ի գերութիւն զՅովակիմ արքայ Յուդայ, ընդ նմին վարեցաւ և Դանիէլ թագաւորազարմ մանուկ շնորհալի երկոտասանամեայ և այլք։ Յայնժամ հրամայեաց թագաւորն Ասփանեզի իշխանին ընտրել 'ի գերելոց անտի մանկունս մատաղահասակ գեղեցիկս և մարզել զնոսա 'ի գիտութիւնս և 'ի լեզու Քաղդէացւոց զամս երիս յարքունիս անդ, և ապա հանել զնոսա առաջի թագաւորին։ Յառաջադէմ լինէր Դանիէլ յամենայն ուսմունս և 'ի գիտութիւնս նոցա. որում ընկերակից գտան երեք մանկունք Անանիա Ազարիա և Միսայէլ։ Ասփանէս փոխեաց զանուանս նոցա. զԴանիէլ անուանեաց Բաղտասար, և զայլս Սեդրաք, Միսաք և Աբեդնագով. որոց տային կերակուր 'ի սեղանոյ արքային։

Բայց Դանիէլ սոսկայր ուտել 'ի պիղծ կերակրոց անտի. վասն որոյ խորհեալ ընդ ընկերաց իւրոց և աղաչեցին զներքինապետ վերակացու գայլոցին, զի տայցէ նոցա յուտել զընդեղէնս, և ջուր յըմպել։ Այլ նա թէպէտ զառաջինն ընդդիմացաւ, զի երկնչէր թէ մանկունք վատին և հիւծին ընդեղինօք. բայց իբրև փորձեաց և եգիտ զնոսա կայտառս և քաջառողջս քան զայլ ընկերակիցս, հաւանեցաւ և արար զկամս նոցին։ Այս ժուժկալութիւն ետ նոցա լինել քաջուսումն, զգաստ և խոհական,

են և պարկեշտք, անարատք և երկիւղածք 'ի տեառնէ:

374. Յետ կատարելոյ երից ամաց ածաւ Դանիէլ ընդ ընկերաց իւրոց առաջի Թագաւորին, և գտաւ գեր 'ի վերոյ քան զայլս. զի բաց 'ի բնական գիտութեանց ունէր և զգերբնականն աստուածապարգև. մինչև գիտել իմանալ զգաղտնի խորհուրդս: Որով յետ սակաւուց հռչակեցաւ իմաստութիւն նորա սակս ազատելոյ զՇուշան տիկին 'ի մահուանէ:

Տիկինս այս ազնուական դուստր էր Քեղկեայ, և կին Յովակիմայ իշխանաւորի. տեղեամբ գեղեցիկ և երկիւղած 'ի տեառնէ: Ի ժամանակին յայնմիկ էին երկու ծերք յԻսրայեցւոց անուն դատաւորք տարւոյն. որք յաճախեալ 'ի տուն Յովակիմայ վասն որոշելոյ ընդատս ընդ մեծի իշխանին, և տեսեալ զՇուշան՝ ցանկացան նմա: Եւ պատմեալ զայն իւրաց՝ ժամադիր եղեն հասանել 'ի վերայ նորա յորժամ միայն գայցէ 'ի բուրաստանի անդ իւրում, յոր զգնայր: Յաւուր միում մտեալ անդ Շուշանայ երկու աղջկամբք՝ կամեցաւ լուանալ. և առաքեաց զաղջկունսն բերել նմա իւղ և օճառ: Յայնժամ երկու ծերքն այնոքիկ՝ որք թաքուցեալ էին 'ի մէջ ծառոց, յարեան և դիմեցին 'ի վերայ նորա, և բանադատէին զնա 'ի մեղս. և սպառնային՝ զի թէ ոչ հաւանեսցի, զրպարտեսցեն զնա իբրև մեղուցեալ ընդ այլում պատանւոյ: Իսկ երկիւղածն այն պաշարեալ երկուստեք՝ առաւել կամեցաւ վտանուն լինել առաջի մարդկան, քան մեղապարտ առաջի Աստուծոյ: Նմին իրի աղաղակեաց 'ի ձայն մեծ. աղաղակեցին և անօրէն ծերքն. և մին ընթացաւ երաց զմեծ դուռն բուրաստանին. իսկ ընտանիք տանն դիմեցին անդ, և լը-

ւեալ 'ի չար ծերոց զզըպարտութիւնն զհամեստ տիկնոջէն՝ զամօթի հարան, և գնացին իւրաքանչիւր 'ի տեղի իւր :

375 . Ի վաղիւ անդր իբրև ժողովեցան ժողովուրդք 'ի տուն Յովակիմայ , հրամայեցին երկու ծերքն ածել զՇուշան յատեան դատաստանի . և եդեալ զձեռս 'ի վերայ գլխոյ նորա վկայեցին զնմանէ իբրև զյանցաւորէ , որպէս ուսուցանեալ էին նմա : Իսկ Շուշան լայր և հայէր յերկինս խնդրելով 'ի տեառնէ զօգնութիւն . լային և իւրքն և ամենեքին որք գիտէին զառաքինի վարս նորին . բայց ոչ կարէին առնել զզըպարտութիւնս ծերոց : Եւ հաւատաց անօրէն ծերոցն այնոցիկ ատեանն ամենայն. և Շուշան ըստ օրինացն Մովսէսի դատապարտեցաւ 'ի մահ : Իսկ նա աղաղակեաց առ տէր 'ի ձայն բարձր , և խնդրեաց յայտնել զանմեղութիւնն իւր : Լուաւ Աստուած ձայնի աղախնոյն իւրոյ , և զարթոյց զհոգի Դանիէլի մանկան :

Քանզի իբրև տանէին բազմութեամբ զՇուշան կորուսանել, ել ընդ առաջ նոցա Դանիէլ աղաղակելով թէ անպարտ եմ ես յարենէ անմեղիդ : Եւ կշտամբեալ զանխորհուրդ դատաստան նոցին՝ ասաց դառնալ անդրէն և նորոգ քննել զդատն. զի սուտ վկայեցին, ասէ : Դարձան վաղվաղակի . և նստուցին զնա ինքն դատաւոր . զի քեզ , ասեն , ետ Աստուած զերիցութիւն : Իբրև նստաւ Դանիէլ , հրամայեաց մեկնել զծերսն 'ի միմեանց . ապա կոչեալ զնոսա մի մի եհարց՝ թէ ընդ որով ծառով տեսին զՇուշան յայն մեղս . մին ասէ ընդ հերձեաւն, և միւսն ընդ սղոցեաւն : Եւ այսպէս 'ի բերանոյ նոցա յանդիմանեցաւ ստութիւն նոցին : Աղաղակեցին յայնժամ ամենեքեան և օրհնեցին

զԱստուած , և քարկոծեալ սպանին զծերսն ըստ օրինաց Մովսէսի : Եւ Դանիէլ եղև մեծ , առ գիրն , յօրէ յայնմանէ և անդր :

376 . Յետ այսորիկ Նաբուքոդոնոսոր ետես երազ , և առ մեծի զարհուրանացն մոռացաւ զերազն : Կոչեցան առ արքայ ամենայն գէտք , կախարդք և երազահանք , գիտել զերազն . այլ ամենեքեան վկայեցին՝ թէ անհնարին է մեկնել զայն , եթէ ոչ լուիցուք յարքայէ : Իսկ արքայ պնդէր՝ թէ բանն վերացեալ է 'ի մտաց իմոց , դուք պատմեցէք ասել զերազն իմ և զմեկնութիւն նորա : Ասեն նոքա . ամենայն թագաւոր մեծ՝ բան զայդպիսի ոչ հարցանէ . զի չիք ոք որ պատմեսցէ զայդ առաջի արքայի , բայց եթէ դիքն՝ որոց ոչ է բնակութիւն 'ի մէջ մարդկան : Յայնժամ բարկացեալ արքային՝ հրամայեաց կոտորել զնոսա : Խնդրեցաւ և Դանիէլ իբրև իմաստասէր . այլ նորա աղաչաւորեալ խօսեցաւ ընդ Արիովքայ սափկանին . զի արքայ դադարեցուցեալ զկոտորած իմաստնոցն՝ տացէ ինքեան փոքր մի ժամանակ մեկնել զերազն :

377 . Եւ 'ի նմին գիշերի ընկալաւ Դանիէլ լոյս 'ի տեառնէ և օրհնեաց զնա . և ընդ առաւօտն աղաչեաց զԱրիովք տանել զինքն առաջի թագաւորին : Եւ նա եմուծ զնա առաջի արքային : Ասէ Նաբուքոդոնոսոր ցԴանիէլ . Արդարև կարիցե՞ս դու պատմել զերազն , զոր ետեսի : Ասէ Դանիէլ . Չեմ ես բաւական , և ոչ իսկ համօրէն իմաստունք . այլ գոյ Աստուած յերկինս՝ որ տեսանէ զամենայն . նա յայտնեաց ինձ զերազն քո , և զնորին խորհուրդ : Դու արքայ՝ խորհէիր յանկողնի քում զբազմադէմ փոփոխութիւնս թագաւորութեանց , և զարդի բարեյաջող վիճակ քո , և թէ զինչ լինելոց է յետ այսորիկ թագաւորութիւն քո . և այսպէս 'ի

քուն մտեր. և եցոյց քեզ Աստուած զկարգ թագաւորութեանց, որ հանդերձեալ է լինել յապա ժամանակս։ Դու արքայ, տեսանէիր պատկեր մեծ և ահաւոր յոյժ. տեսիլ նորա ահընկէց. գլուխն 'ի մաքուր ոսկւոյ, ձեռքն և լանջքն և բազուկք իւր արծաթիք. մէջք նորա և բարձք պղնձիք, և սրունքն երկաթիք, և ոտքն կէս յերկաթոյ և կէս 'ի խեցւոյ։ Եւ մինչ հայէիր սարսափմամբ, ահա հատաւ 'ի լեռնէ վէմ առանց ձեռին մարդոյ, և թաւալեալ եհար զարձանն յերկաթեղէն և 'ի խեցեղէն ոտսն. և խորտակեաց զնա. ապա պղինձն և արծաթն և ոսկին մանրեցան իբրև փոշի. յետոյ շնչեաց սաստիկ հողմոյ՝ տարաւ 'ի տեսութենէ աչաց զփոշին զայն, և վէմն եղև լեառն մեծ՝ որ թուեցաւ քեզ լնուլ զամենայն երկիր։

378. Այս է երազն քո. և այս մեկնութիւն նորա։ Դու ես, արքայ, ոսկի գլուխն՝ արքայից արքայ. զկնի քո յարիցէ այլ թագաւոր խոնարհագոյն՝ նշանակեալ յարծաթն. երրորդն՝ զոր ցուցանէ պղինձն, եղիցի բռնագոյն և տիրեսցէ ամենայն երկրի. այլ զոր օրինակ երկաթ մանրէ զամենայն մետաղ, նոյնպէս չորրորդ թագաւորութիւնն մանրեսցէ և հալեսցէ զամենայն թագաւորութիւնս. իսկ խեցին խառնեալ, յայտ առնէ՝ թէ այս թագաւորութիւն լիցի բաժանեալ, և ոչ ևս միասցի, որպէս ոչ խառնի երկաթ ընդ խեցի։ Եւ ապա Աստուած երկնից յարուսցէ թագաւորութիւն յաւիտենական՝ որ ոչ երբէք անցանիցէ յազգ յայլ. և 'ի նմա վախճան առնուցուն ամենայն թագաւորութիւնք, և նորա վախճան մի լիցի. զի նա կացցէ յաւիտեան։ Ահա զայս նշանակէ վէմն 'ի լեռնէն հատեալ առանց ձեռին, որ մանրեաց զպատկերն, և զփոշին ցրուեալ անհետ արար։

379 · Նաբուքոդոնոսոր յիշեաց անդէն զերազ իւր, և հասու եղեալ ճշմարիտ մեկնութեանն՝ անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց, երկիր եպագ Դանիելի, և հրամայեաց վաղվաղակի զոհս և խունկս մատուցանել նմա իբրև միում յաստուածոց: Այլ խրատեալ 'ի նմանէ գագարեցաւ, և խոստովան եղև՝ թէ Աստուածն Դանիելի է Աստուած աստուծոց և տէր տերանց, որ յայտնէ զխորհուրդս: Նա մեծացուցեալ զԴանիէլ՝ ետ նմա պարգևս մեծամեծս, և կացոյց զնա առաջին իշխան և հրամանատար 'ի վերայ աշխարհին Բաբելացւոց: Սակայն Դանիէլ ոչ մոռացաւ զընկերս իւր, զՍեդրաք զՄիսաք և զԱբեդնագով. և ետ կացուցանել զնոսա ոստիկանս 'ի վերայ գործոց աշխարհին Բաբելացւոց:

Իսկ յաղագս չորից թագաւորութեանց նշանակելոց 'ի պատկեր երազոյն գիտելի է. զի առաջինն ցուցանէր զթագաւորութիւնն Քաղդեացւոց. երկրորդն զՊարսից. երրորդն զՅունաց. իսկ չորրորդն զՀռոմայեցւոց և զյաւիտենական թագաւորութիւնն Քրիստոսի:

380 · Նաբուքոդոնոսոր թէպէտ խոստովան եղև թէ Աստուածն Դանիելի է տէր տերանց, բայց պաշտէր նա և այլ երկուս աստուածս, զԲէլ և զվիշապ մի. բայց Բէլ առաւել նախապատիւ էր. և ընծայէր նմա արքայ օր ըստ օրէ երկոտասան արդու նաշիհ, քառասուն ոչխար, և վեց մար գինւոյ: Յաւուր միում եհարց արքայ ցԴանիէլ, թէ ընդէ՞ր ոչ երկիր պագանէ Բէլայ: Նա պատասխանի, թէ ես ոչ պաշտեմ զձեռագործ կուռս, այլ միայն զԱստուած կենդանի: Ասէ թագաւորն. իսկ Բէլ ո՞չ է Աստուած կենդանի, որ ուտէ և ըմպէ հանապազ: Ասէ Դանիէլ. մի՛ խաբիր, արքայ

քաջ. զի նա 'ի ներքոյ է կաւեայ և արտաքոյ պղնձի՝ ոչ կերեալ և ոչ արբեալ ։ Յայնժամ բարկացեալ արքայի՝ ետ կոչել զքուրմս Բելայ ոգիս եօթանասուն , և ստիպեաց զնոսա ասել զծախարիսն , թէ ո՞վ ուտէ զայնչափ կերակուրս. եթէ Բէլ, մեռցի Դանիէլ իբրև հայհոյիչ. ապա թէ ոչ՝ մեռցին քուրմքն ։ Հաճեցան երկուստեք ընդ վճիռն, և չոքան ամենքեան 'ի տաճարն Բէլայ ։ Ելին արտաքս քուրմքն. և եդ Թագաւորն առաջի Բէլայ զկերակուրսն և զգինին. և կնքեցին զդրունսն արքունի մատանեաւ ։ Այլ յառաջ քան զմեկնել անտի թագաւորին՝ ետ Դանիէլ ցանել մոխիր ընդ մէհեանն առաջի արքային ։

Եւ ընդ առաւօտն չոքան անդր և բացին զդրունս. իբրև ետես թագաւորն զի սպառեալ էր ամենայն կերակուրն, աղաղակեաց. Մեծ ես Բէլ, և ոչ գոյ նենգութիւն 'ի քեզ ։ Ասէ ցնա Դանիէլ. Հայեաց, արքայ, ընդ յատակդ, և տես ո՞յր է հետդ այդ ։ Ասէ թագաւորն. Տեսանեմ զհետս արանց և կանանց և մանկտւոյ ։ Յայնժամ բարկացեալ նորա ետ ունել զքուրմսն, և բռնադատեաց զնոսա յայտնել զխաբէութիւնն. և նոքա ցուցին զգաղտնի դրունսն՝ ընդ որ մտանէին և ուտէին զանազան Բէլայ ։ Սրտմտեցաւ թագաւորն, և առ ժամայն կոտորեաց զնոսա համգերձ կանամբք և որդւովք. և զԲէլ ետ 'ի ձեռս Դանիէլի. և նա խորտակեաց զդրօշեալն, և զմեհեանն կործանեաց ։

381. Յետ այսորիկ ասէ թագաւորն ցԴանիէլ վասն մեծի վիշապին. Միթէ և զդմանէ ասիցե՞ս եթէ պղնձի է. ահաւասիկ կենդանի է. արդ եկ պագ նմա երկիր ։ Ասէ Դանիէլ. Ես տեառն Աստուծոյ կենդանւոյ երկիր պագանեմ. այլ դու արքայ , տուր ինձ իշխանու-

թիւն, և սպանից զվիշապդ առաջի քո առանց սրոյ: Ասէ թագաւորն. տուեալ է քեզ: Յայնժամ էառ Դանիէլ իւղ, ձիւթ, ճարպ և մազ, և եփեալ զնոսա 'ի միասին՝ արար գնտակ և արկ 'ի բերան վիշապին. որոյ կերեալ զայն՝ պայթեալ սատակեցաւ: Ապա խօսեցաւ Դանիէլ բանս յորդորականս առ թագաւորն և առ Բաբելացիս, ցուցանելով նոցա՝ թէ զինչ պաշտէին և ում երկիր պագանէին:

Յայնմանէ անկաւ քրթմնջիւն մեծ 'ի մէջ իշխանաց, թէ թագաւորն դարձաւ 'ի հրէութիւն. զի կուռք իւրեանց փշրեցան, քուրմք կոտորեցան, և վիշապն սատակեցաւ: Մանաւանդ զի գլխաւոր իշխանութիւնն էր 'ի ձեռս Դանիէլի և ընկերաց նորա՝ կասկածէին թէ դուցէ յափշտակեսցեն և զթագաւորութիւնն Բաբելացւոց: Նմին իրի խումբ արարեալ ապստամբացն եկին կուտեցան առ թագաւորն և խնդրէին 'ի նմանէ զԴանիէլ. ապա թէ ոչ՝ սպանանեմք, ասեն, զքեզ և զտուն քո: Թագաւորն ստիպեալ՝ ետ զԴանիէլ 'ի ձեռս նոցա. որոց առեալ զնա՝ առ 'ի նախատինս արկին 'ի գուբ առիւծուցն եօթանց պահելոց յարքունիս անդ, որոց օր ըստ օրէ տային երկու մեռեալ մարմինս, կամ մարդոյ և կամ խշոյ, և երկու ոչխարս: Յայնմ աւուր միայն զԴանիէլ ետուն նոցա 'ի կերակուր. բայց նոքա բնաւ ոչ մերձեցան 'ի նա. և եկաց Դանիէլ անարատ 'ի գբի անդ: Իսկ թագաւորն խորհէր տրտմութեամբ վասն նորա, թէ զինչ արդեօք եղէ նմա:

382. Ապա յաւուրն եօթներորդի եկն արքայ 'ի գուբ անդր, և հայեցեալ ետես զԴանիէլ առողջ և բարետեսիլ, նստեալ հանդարտ, և առիւծունք շուրջ զնովաւ, որոց բնութիւն

փոխեալ էր 'ի հեզութիւն: Իսկ Դանիէլի ճաշ բերաւ 'ի Հրէաստանէ, որ բաւական եղև նմա զաւուրս եօթն. քանզի Ամբակում մարգարէ պատրաստեալ ճաշ վասն հնձողաց իւրոց, իբրև տանէր զայն առ նոսա, ահա հրեշտակ տեառն կալաւ զվարսից նորա, և տարաւ 'ի Բաբելոն 'ի գուբ անդր. իսկ Դանիէլ գոհացեալ զտեառնէ կեր զայն, և հրեշտակն դարձոյց զԱմբակում 'ի տեղի իւր:

Արդ իբրև ետես թագաւորն զԴանիէլ կենդանի, աղաղակեաց 'ի ձայն մեծ ասելով. Մեծ ես տէր Աստուած Դանիէլի, և չիք այլ ոք բաց 'ի քէն: Եւ անդէն հանեալ 'ի գբոյ զԴանիէլ, փոխանակ նորա հրամայեաց արկանել անդր զգլխաւորս ապստամբաց. որոց արկեալ էր ըզԴանիէլ անդր: Իբրև անկան նոքա, հազիւ ժամանեալ 'ի յատակ գբոյն՝ առ ժամայն ծախեցան յառիւծուց անտի առաջի արքային. և նորա ծանուցեալ զճշմարիտն Աստուած՝ եհան հրաման ժողովրդեան իւրոյ պատուել զնա. սակայն ինքն ոչ յանձն առ մտանել ընդ օրինօք նորա:

383. Պատկերն զոր ետես 'Նաբուքոդոնոսոր յերազի անդ, տպաւորեալ էր 'ի միտս իւր, և կամեցաւ կանգնել զայն. և կանգնեաց իսկ համակ ոսկեձոյլ 'ի պաշտօն հասարակաց 'ի դաշտին Դէերայ աշխարհին Բաբելացւոց. բարձրութիւն նորա վաթսուն կանգուն և լայնութիւնն վեց: Եւ հրաման եհան ամենայն ազգաց՝ երկիր պագանել պատկերին այնմիկ. որով յայտնի առնէր ամենեցուն, թէ ոչ եղև հրեայ. որպէս ժողովուրդն կասկածէր: Եւ ժողովեցան ամենայն զօրավարք և զօրագլուխք, պետք և գործակալք 'ի նաւակատիս պատկերին. և 'ի ձայն փողոյ քարոզեցաւ հրովարտակն արքային.

թէ յորժամ լսիցեն զձայն միաբանութեան նուագարանաց, ամենեքեան երկիր պագանիցեն պատկերին. և որ ոչ երկիր պագանիցէ՝ ընկեսցի 'ի հնոց հրոյ բորբոքելոյ: Քանզի 'ի մի կողմն դաշտին դոյր հնոց մեծ վառեալ, և 'ի միւս կողմն յանդիման պատկերին էր աթոռ թագաւորին:

Ոչ գտաւ անդ Դանիէլ, այլ միայն երեք ընկերք նորա՝ Սեդրաք. Միսաք և Աբեդնագով. որք ոչ երկիր պագին պատկերին: Իսկ 'ի հնչել ձայնի նուագարանաց՝ թագաւորն շուրջ հայեր և ապաստաւորաց տեսեալ թէ նոքա երեքեան ոչ պագին երկիր, ամբաստան եղեն զնոցանէ առաջի արքային. որոյ լուեալ՝ լի եղև բարկութեամբ, և հրամայեաց ածել զնոսա առաջի իւր, և պատուիրեաց նոցա զի 'ի լսել միւսանգամ զձայն նուագարանաց՝ անկանիցին և երկիր պագանիցեն. ապա թէ ոչ՝ 'ի նմին ժամու անկցին 'ի հնոց հրոյն բորբոքելոյ. և ո՞վ է, ասէ, Աստուած, որ փրկեսցէ զձեզ 'ի ձեռաց իմոց: Նոքա ետուն պատասխանի ամենայն համարձակութեամբ և ասեն. Չէ արժան վասն բանիդ այդորիկ տալ քեզ պատասխանի. զի է մեր Աստուած յերկինս, զոր մեքն պաշտեմք. կարող է փրկել զմեզ 'ի հնոցէ հրոյդ բորբոքելոյ և 'ի ձեռաց քոց, արքայ, ապրեցուցանել զմեզ. և այս յայտնի լիցի քեզ, զի զդիս քո մեք ոչ պաշտեմք, և պատկերիդ ոսկւոյ երկիր ոչ պագանեմք:

384. Յայնժամ Նաբուքոդոնոսոր լի սրտմտութեամբ հրաման ետ սաստկացուցանել ըզհուր հնոցին եօթնպատիկ առաւել, և ետ հինգ զօրավարաց կապել զնոսա առաջի իւր, և իշխանական զգեստուք նոցա ընկենուլ զնոսա 'ի բոց հնոցին: Իբրև ընկեցան 'ի հնոց անդր, հուրն

ոչ մերձեցաւ 'ի նոսա, այլ միայն զկապանս ձե-
ռաց և ոտից նոցա 'ի մոխիր դարձոյց : Իսկ նո-
քա գնային և ձնմէին 'ի հնոցի անդ : Յայնժամ
Սեդրաք, որ է Ազարիա, եբաց զբերան իւր և
սկսաւ ընդ ընկերաց իւրոց օրհնել և գովել
զԱստուած ասելով. Օրհնեալ ես, տէր Աս-
տուած հարցն մերոց, գովեալ և փառաւորեալ
է անուն քո յաւիտեան : Տեսանէին ամենե-
քեան և լսէին զձայն նոցա, և կատաղեալ բոր-
բոքէին զհնոցն նաւթիւ և ձիթով և ձջով և
որթով այնչափ, զի բոցն ելանէր բարձրանայր
'ի վերոյ քառասուն և ինն կանգուն : Ի նմին
ժամու երևեցաւ 'ի մէջ նոցա հրեշտակ տեառն
'ի կերպարանս մարդոյ, որ թօթափեալ զբոցն՝
հողմ քաղցրաշունչ յարոյց 'ի հնոցին ցօղագին.
իսկ բոցն այն ելեալ շրջէր շուրջ զհնոցաւն և
այրէր զՔաղդէացիս :

385. Մատուցաւ ընդ այն թագաւորն. և մեր-
ձեցեալ 'ի բերան հնոցին ասէ. Ո՞չ արս երիս
կապեալս արկաք աստ. զիա՞րդ արդ տեսանեմ
արս չորս՝ որք գնան 'ի մէջ հնոցին, և ապա-
կանութիւն ինչ ոչ գոյ 'ի նոսա, և տեսիլ չոր-
րորդին նման որդւոյ Աստուծոյ : Ապա խոնարհ
ոգւով կոչեաց զնոսա. Սեդրաք, Միսաք և Ա-
բեդնագով, հաւատարիմ ծառայք Աստուծոյ
բարձրելոյ. ելէք արտաքս և եկայք : Իբրև ելին
նոքա արտաքս, ամենայն նախարարք և զօրա-
վարք ժողովեցան 'ի վերայ նոցա. հայէին և
զննէին զհանդերձս և զհերս գլխոյ նոցա. և
հիացեալ զարմանային, զի ոչ իսկ հոտ հրոյ
գոյր 'ի նոսին :

Այլ Նաբուքոդոնոսոր առաւել քան զամե-
նեսին զարմացեալ երկիր եպագ Աստուծոյ ա-
ռաջի նոցա, և 'ի ձայն բարձր օրհնեաց զարա-
րիչն. և ապաւինեցաւ մանչու պատուհասել որ

ոք ժպրհեսցի խօսել հայհոյութիւն զԱստուծոյն Սեդրաքայ, Միսաքայ և Աբեդնագովի: Նոյն ժամայն բարձրացոյց զնոսա 'ի վերագոյն իշխանութիւն, կացուցանելով իշխան 'ի վերայ ամենայն հրէից եղելոց 'ի թագաւորութեան նորա: Ապա եհան հրովարտակ յայտարար սքանչելեաց տեառն. Արքայութիւն նորա, ասէ, արքայութիւն յաւիտենից, և իշխանութիւն նորա ազգաց յազգս:

386. Յետ այնորիկ Նաբուքոդոնոսոր բազմապատիկ յաղթութեամբք ընդարձակեալ իշխանութիւն իւր մինչև յայնկոյս Եգիպտոսի դարձեալ անկաւ յառաջին ամբարտաւանութիւն, անձին վերագրելով զամենայն փառս: Եւ վասն այսորիկ ետես 'ի տեսլեան գիշերոյ ծառ մի մեծ. բարձրութիւն նորա հասանէր մինչև յերկինս, և լայնութիւն նորա ծածկէր զամենայն երկիր. տերևք նորա գեղեցիկք և պտուղ նորա բազում. 'ի ներքոյ նորա բնակեալ էին գազանք, և յոստս նորա հանգուցեալ էին թռչունք, և անտի կերակրէին ամենայն կենդանիք: Եւ ահա հրեշտակ տեառն իջեալ յերկնից հրամայեաց հատանել զծառն, և ցրուել զամենայն կենդանիս. բայց թողուլ ասաց զշառաւիղ արմատոյ նորա կապեալ երկաթի և պղնձի կապանօք. և կացցէ 'ի գալար վայրի 'ի ներքոյ ցօղոյ երկնից ընդ գազանս անապատի. և մարդկային սիրտ նորա փոխեսցի և սիրտ գազանի տացի նմա ամս եօթն:

387. Ընդ այն տեսիլ զարհուրեալ արքայի կոչեաց զամենայն իմաստունս և զմոգս՝ իմանալ զխորհուրդ երազոյն. այլ երբև չկարացին նոքա ասել ինչ, դիմեաց առ Դանիէլ. և պատմեաց նմա զերազն: Եւ նա առ ժամայն իմացաւ, այլ չիշխէր ասել՝ զի մի վշտանայցէ ար-

քոյ . մինչև առեալ 'ի Նմանէ քաջալերս՝ ասէ համարձակ . Կամէի , արքայ , զի երազն քո և մեկնութիւն 'ի թշնամիս քո ճշգրտեսցի : Դուն մեծացեալ և զօրացեալ դու ես . դատաստանք բարձրելոյն հասեալ են 'ի վերայ արքայիդ . և հալածեսցեն զքեզ 'ի մարդկանէ , և ընդ գազանս անապատի եղիցի բնակութիւն քո , և ըզխոտ իբրև զարջառ կերիցես , գեգերեալ անտուն յանձրև և 'ի ցօղ երկնից ընդ ամս եօթն, մինչև ծանիցես՝ թէ տիրէ բարձրեալն թագաւորութեան մարդկան , և ում կամի՝ տացէ զնա: Ապա թագաւորութիւն քո 'ի քեզ դարձցի , յորժամ ծանիցես՝ թէ 'ի Նմանէ ունիս զայն : Խրատ իմ հաճոյ թուեսցի քեզ , արքայ . զմեղս քո ողորմութեամբ քաւեսջիր , և զանօրէնութիւնս քո գթովք տնանկաց . և այսպէս թերևս գթասցի 'ի քեզ Աստուած :

388 . ՙՆաբուքոդոնոսոր խրատեալ 'ի Դանիէլէ՝ եղև առ ժամանակ մի ողորմած և բարեգութ . այլ զկնի միոյ ամի անդրէն դարձաւ յառաջին ամբարտաւանութիւն իւր : Յաւուր միում մինչդեռ ճեմէր 'ի սրահին արքունեաց , սկսաւ մեծամտել և ասել . Ո՞չ այս այն մեծ Բաբելոն է՝ զոր ես ամրացուցի և մեծացուցի . ո՛ թէ քանի մեծ է կարողութիւն զօրութեան իմոյ , և մեծութիւն փառաց իմոց : Եւ ահա ձայն եղև յերկնից առ Նա . Քեզ ասեմ , Նաբուքոդոնոսոր . Թագաւորութիւն քո անկցի 'ի քէն 'ի ձեռս այլոց . և հալածեսցեն զքեզ 'ի մարդկանէ , և կերիցես խոտ ընդ ամս եօթն , մինչև ծանիցես՝ թէ գոյ բարձրեալ , որ տիրէ քեզ : Լուեալ ձայնն , և անդէն խռով հարեալ ապստամբ խուժանին՝ դիմեցին 'ի վերայ . և նա անոք 'ի մարդկանէ՝ ցնորեցաւ 'ի մտաց . և փախուցեալ յարքունեաց անկաւ 'ի մայրիս

ընդ գազանս. ըստ ոմանց փոխեալ 'ի կերպարանս արջառոյ, և ըստ այլոց միայն սիրտ և բնաւորութիւն նորա փոխեալ յանասնական բարս ամս եօթն։

## ԳԼՈՒԽ ԺԳ.

### Եւիլմարովդաք, Բաղդասար, Դարեհ, և Դանիէլ։
### Ա. Ա. 3442

389. Զկնի մահուանն Նաբուքոդոնոսորայ յաջորդեաց զաթոռ նորա Եւիլմարովդաք որդի նորա, այր քաղցր և մարդասէր առ Եբրայեցիս. և վաղվաղակի խորհեցաւ հանգուցանել զՅեքոնիա արքայ Յուդայ 'ի տառապանաց բանտին՝ ուր արգելեալ կայր (324)։ Վասն որոյ եհան զնա 'ի բանտէ, և փոխել զհանդերձս, և արկ զաթոռ նորա 'ի վերոյ քան զաթոռս ամենայն թագաւորաց նուաճելոց և գերելոց 'ի Բաբելոն. կարգեաց նմա և ռոճիկս, և սեղանակից ինքեան արար։

390. Ընդ այն ժամանակս քարոզէր Բարուք մարգարէ Հրէից 'ի Բաբելոն. քանզի յետ մահուան Երեմիայ յԵգիպտոս՝(336) ածաւ Բարուք 'ի Բաբելոն և անդ սկսաւ գրել զգիրս իւր. յորում ցուցանէ զտառապանսն եկեալ հասեալ 'ի վերայ նոցա վասն մեղաց ժողովրդեան և թագաւորաց նոցին։ Ուրեք ուրեք քաջալերեալ մխիթարէ զնոսա յուսով ազատութեան 'ի գերութենէ անտի, և խոստանայ զերջանիկ դալուստ Մեսիային։ Զայս գիր իւր ընթերցաւ Բարուք յականջս Յեքոնիայ արքայի և ամենայն Հրէից. ամենեքին 'ի զեղջ հարեալ լացին և աղաչեցին պահօք և աղօթիւք։

Եւ որ բաւական ոք էր 'ի նոցանէ, գնէր զըս-
պասս տաճարին Տեառն 'ի ձեռաց զինուորաց.
և առաքէր յԵրուսաղէմ առ Յովակիմ քահա-
նայ: Էին և ոյք արծաթս առաքեցին գնել և
մատուցանել զոհս Տեառն:

391. Առ այնու ժամանակօք մեռաւ Եղմա-
րովդաք արքայ. և Ներիգղիսսար յետ կա-
տարածի եօթն ամաց դարձաւ 'ի միտս իւր, ամ-
բարձ զաչս իւր յերկինս, և խոստովան եղև
զԱստուած կենդանի միշտ ամենակալ և ամե-
նազօր իշխան և տէր ամենայնի: Ընկալաւ Ա-
տուած զխոնարհ խոստովանութիւն նորա, և
փոխանակ արար թշուառութեանց նորա: Իբրև
գի Բաղդասար որդի Եղմարովդաքայ գոլով
մանուկ՝ անբաւական 'ի թագաւորել, Դանիէլ
ծանոյց իշխանաց՝ թէ Ներիգղիսսար կեն-
դանի է. զոր նոքա մեռեալ համարէին. և թէ
չէ նա որպէս յառաջն անձնուէր ամբարտաւան,
այլ հեզ և խոնարհ: Այսպէս եկին նոքա 'ի խնդիր
և գտին զնա յառաջին բնական հանգամանս
մարդոյ, և մեծաւ փառօք ածին զնա 'ի Բաբե-
լոն յաթոռ թագաւորութեան իւրոյ: Եւ նա
այնուհետև ոչ ևս հարստահարեաց զժողո-
վուրդն Հրէից. այլ խնամ տարեալ նոցա՝ քարո-
զէր օրհնէր և փառաւոր առնէր զԱստուած,
մինչև մեռաւ 'ի բարւոք ծերութեան:

392. Բաղդասար որդի Եղմարովդաքայ նըս-
տաւ յաթոռ թագաւորութեան, և վասն ան-
օրէնութեանն վաղահաս մահուամբ սատակե-
ցաւ: Քանզի Բաբելոն իբրև պաշարեցաւ 'ի
Դարեհէ արքայէ Մարաց և Պարսից, Բաղդա-
սար կամելով ցուցանել՝ թէ չունի ուրեք եր-
կիւղ, և առատ է ամենայն ուտելեօք, արար մե-
ծահաց ընթրիս հազար արանց յիշխանաւորաց
իւրոց. ուր բազմեցոյց և զկանայս և զհարճս իւր:

Իբրև ջերմացաւ 'ի գինւոյ, հրամայեաց բերել զսպաս տաճարին, զոր Նաբուքոդոնոսոր բերեալ յԵրուսաղէմէ' 'ի պաշտօն ունէր յարքունի գանձատան, և չէին բնաւ պղծեալ յաշխարհային իրս 'ի կիր արկանելով:

Արդ բերան սպասքն. և այն ինչ արք և կանայք ըմպէին նոքօք և օրհնէին զաստուածս իւրեանց, յանկարծակի երևեցան աչաց արքային մատունք մարդոյ, որ գրէին յորմն. և գիրն մնաց անդ երևելի ամենեցուն: Ջահի հարաւ թագաւորն. գոյն երեսաց նորա շրջեցաւ, և ծունկք նորա բաղխէին. որ թէպէտ ոչինչ իմանայր, բայց խիթայր թէ իցէ նշանակ մեծի թշուառութեան: Հրամայեաց վաղվաղակի ածել զամենայն մոգս և զգէտս Բաբելոնացւոց, խոստանալով, զի եթէ ոք կարասցէ ընթեռնուլ զգիրն զայն և ցուցանել զմեկնութիւն նորա, ծիրանիս զգեցցի, և մանեակ ոսկի 'ի պարանոց նորա, և լիցի երրորդ իշխան 'ի թագաւորութեան նորա: Եկին ամենեքեան, այլ ոչ ոք կարող եղև ընթեռնուլ զայն. որով ևս առաւել խռովեցաւ արքայ, և ամենայն իշխանք նորա:

393. Յայնժամ մայր Թագաւորին եմուտ 'ի տաճար անդր խրախութեան. և պատմեաց զԴանիէլէ, թէ զիարդ 'ի ժամանակի Նաբուքոդոնոսորայ գիտաց մեկնել զերազս և զառակս, և կացուցաւ իշխան 'ի վերայ ամենայն մոգուց և քաղդէից: Եւ Թագաւորն ետ վաղվաղակի ածել զնա առաջի իւր. և պատմեաց նմա' թէ իմաստունք իւր ոչ կարացին ցուցանել նմա զմեկնութիւնն. յիշեաց և զպարգևս խոստացեալս այնմ, որ մեկնեսցէ զայն: Իսկ Դանիէլ հրաժարեալ 'ի պարգևացն' անդէն ընթերցաւ զգիրն այսպէս. Մանէ, որ նշանակէ

թուել. Թեկէլ, ծանրութիւն կամ կշիռ. Փա-
րէս, հատուած: Յաւել և զմեկնութիւնն և
ասէ. Գիտէիր դու, արքայ, զանցս Նաբուքո-
դոնոսորայ, և ինչ ոչ շահեցար անտի. այլ
ամբարտաւանեցար խորհրդովք ընդդէմ Աս-
տուծոյ, և զսպաս տան նորա պղծեցեր՝ դու և
մեծամեծք քո և հարճք քո. և արբեալ նոքօք
զգինի՝ զաստուածս քո զձեռագործս փառաւո-
րեցեր. և զԱստուած երկնից արհամարհեցեր.
վասն այնորիկ առաքեցաւ ՚ի նմանէ թաթ ձե-
ռին գրել զայդ. որոյ մեկնութիւն այս է. Մա-
նէ, թուեաց Աստուած զամս թագաւորու-
թեան քո, և եգիտ՝ զի վախճան հասեալ է.
Թէկէլ. կշռեաց ՚ի կշիռս և եգիտ պակասեալ
՚ի բարեաց. Փարէս, եհատ զթագաւորութիւն
քո ՚ի քէն և ետ Մարաց և Պարսից:

394. Իբրև լուաւ արքայ զգաստակնիք իւր՝ ոչ
միայն չխոտորեցաւ, այլ և մեծացոյց զԴանիէլ:
Բայց ՚ի նմին գիշերի առաւ Բաբելոն, և Բաղ-
տասար սպանաւ, թագաւորեալ ամս իբր չորեք-
տասան. և էր յայնժամ իբր ամաց երեսուն և
երկուց:

Յետ սպանման Բաղտասարայ թագաւորեաց
Դարեհ փոխանակ նորա, և դարձոյց զթագաւո-
րութիւն Բաբելացւոց ՚ի Մարս. և էր ամաց
վաթսուն և երկուց: Եւ բաժանեալ զամե-
նայն թագաւորութիւն իւր ՚ի հարիւր և քսան
գաւառս՝ կացոյց նոյնչափ նախարարս. և ՚ի
վերայ ամենեցուն կարգեաց ատեան մի եռա-
պետական երից գլխաւոր իշխանաց, յոր դի-
մէին ամենայն նախարարք իբր առ բարձրագոյն
ատեան: Մին յերից անտի էր Դանիէլ. քանզի
Դարեհ ծանօթ էր յառաջագոյն իմաստու-
թեան և հանճարոյ նորա. նորին ազգաւ խոր-
հէր և փոխանորդ ևս իւր կացուցանել զնա, և

'ի նա յանձնել զամենայն տեսչութիւն թագաւորութեան իւրոյ ։

395 . Այս ծայրագոյն սէր Դարեհի առ Դանիէլ՝ նախանձ էարկ 'ի սիրտս նախարարաց և ոչ կարէին տանել՝ զի եբրայեցի մի լիցի գերագոյն հրամանատար 'ի վերայ համօրէն թագաւորութեան իւրեանց . վասն այնորիկ խնդրէին գտանել յանցանս ինչ առ 'ի կորուսանել զԴանիէլ ։ Այլ նա այնպիսի իմաստութեամբ վարէր զպաշտօն իւր և անստգիւտ էր յամենայնի զի չտայր բնաւ պատճառս զրպարտութեան իւրեք ։ Եւ նոքա զայլ ինչ չկարացին գտանել 'ի նա , բայց զպաշտօն նորա առ Աստուած . քանզի տեսանէին զնա հանապազ երիցս յամենայն աւուր անխափան կալ յաղօթս , և զայն համարեցին առնուլ պատճառս ամբաստանութեան ։ Այլ.քանզի որպէս Արտաշէս, նոյնպէս և Դարեհ թոյլ տուեալ էին Եբրայեցւոց պահել զօրէնս իւրեանց , սորին վասն խնդրեցին և ընկալան յարքայէ պատուէր՝ հանդերձ ծանր պատժով արգելուլ ամենեցուն, զի մի ոք խնդրեսցէ զինչ և իցէ խնդրուածս 'ի մարդոյ և յԱստուծոյ , բայց եթէ յարքայէ միայնոյ . և որ ոք անցանիցէ զհրամանաւն, անկցի 'ի գուբ առիւծուց ։

396 . Դիւրահաւանն Դարեհ առանց խորհելոյ հրատարակեաց ամենեցուն զհրովարտակ իւր ։ Իբրև լուաւ Դանիէլ զանօրէն հրամանն, ոչ փոխեաց զկարգ իւր . այլ անխռով մտօք ըստ առաջին սովորութեան յերիս ժամանակս աւուրն ծունր դնէր և կայր յաղօթս առ Աստուած 'ի վերնատան անդ իւրում առաջի պատուհանին , որ հայէր 'ի կողմն Երուսաղէմի ։ Տեսեալ զնա թշնամեաց իւրոց՝ ամբաստանեցին զնմանէ առ արքայ ։ Տրտմեցաւ արքայ , և

ջանաջնար եղև ապրեցուցանել զԴանիէլ՝ եր-
կարելով զդատաստանն մինչև ցերեկոյ։ Սա-
կայն 'ի մնդել ատեանց՝ զիջաւ քանութեան նո-
ցին, և ետ հրաման արկանել զԴանիէլ 'ի գուբ
առիւծուց. և դարձեալ առ Դանիէլ և ասաց
ցնա տրտմութեամբ. Երթ, այլ Աստուածն զոր
պաշտես յաճախ՝ փրկեսցէ զքեզ։

397. Արկին զԴանիէլ 'ի գուբ անդր, և ե-
դին վէմ 'ի վերայ գբոյն. զոր թագաւորն կնք-
նին կնքեաց մատանեաւ իւրով և մատանեօք
մեծամեծաց, զի մի՛ չարութիւն ինչ 'ի չարակա-
մաց գործեսցի Դանիէլի։ Եւ գնաց թագաւորն
'ի տուն իւր լի տրտմութեամբ. ոչ եկեր և ոչ
արբ, և քուն հատաւ յաչաց նորա։ Իսկ 'ի վա-
ղիւ անդր յարուցեալ ընթացաւ 'ի գուբն, և
ցաւագին սրտիւ աղաղակեաց ասելով. Դա-
նիէլ ծառայ Աստուծոյ կենդանւոյ, Աստուածն
քո զոր դու յաճախ պաշտէիր, եթէ կարաց
փրկել զքեզ 'ի բերանոյ առիւծուց։ Եւ պա-
տասխանի Դանիէլ 'ի գբոյ անտի. Արքա, տէր
իմ արքայ. զի Աստուած իմ առաքեաց զհրեշ-
տակ իւր և եխից զբերանս առիւծուց, քանզի
գտացի առաջի նորա ուղիղ. և առաջի քո, ար-
քայ, մեղս ինչ ոչ արարի։ Դարեհ լի եղև
խնդութեամբ, և վաղվաղակի ետ հանել զնա
'ի գբոյ անտի. և գտեալ զնա անվնաս, ուրախա-
ցաւ ուրախութիւն մեծ։ Ապա նոյն հետայն
արձակեալ զինուորս 'ի տունս չարախօսացն Դա-
նիէլի՝ ետ ածել զնոսա և ընկենուլ զամենեսին
'ի գուբ անդր հանդերձ կանամբք և որդւովք.
որք մինչ չև էին հասեալ 'ի յատակս՝ անդէն
ծախեցան յառիւծուց։

398. Յայնժամ գրեաց Դարեհ հրովարտակ
ընդ ամենայն թագաւորութիւն իւր, պատուէր
տուեալ ամենեցուն երկնչել յԱստուծոյն Դա-

նիելի. զի նա է Աստուած կենդանի, և արքայութիւն նորա անեղծանելի. նա է փրկիչ ամենակալ, որ առնէ նշանս յերկինս և յերկրի: Դարեհ յետ առնելոյ ՚ի Բաբելոն զամս երկոտասան, և էառ Կիւրոս պարսիկ զթագաւորութիւն նորա: Առ որով առնեն ոմանք զանց կործանման կռոցն Բէլայ և սատակման վիշապին. բայց յաւէտ թուի լեալ առ Նաբուգոդոնոսորաւ, որպէս ասացաք(380): Իսկ Դանիէլ յետ մահուան Դարեհի եկեաց ամս երիս. և եղեն նմա այլ ևս յայտնութիւնք ՚ի տեսանէ. և ապա վախճանեցաւ զցանկալի կեանս իւր իբր իննսուն և վեց ամաց. որ շնորհալի տեսլեամբն և իմաստալից հանճարովն եկաց յիշխանութեան իւրում ՚ի ժամանակս հնգեցունց թագաւորաց անստգիւտ վարուք մինչ պատկառելի ամենեցուն. ցուցեալ աշխարհի՝ թէ և ՚ի մէջ արքունեաց մարթ է ծաղկել սրբութեամբ և սքանչելագործութեամբ:

399. Զայնու ժամանակօք թագաւորէր ՚ի վերայ Հայոց յետ Հայկակայ (337) Երուանդ առաջին. զորոյ զքոյրն էառ Վարդգէս երևելի իշխան, որ շինեաց քաղաք ՚ի վերայ Քասաղ գետոյ. ուր յառաջն կայր Արտիմէդ քաղաք յանուն Արտեմեայ դից: Յետ Երուանդայ թագաւորեաց որդի նորին մեծն Տիգրան՝ երիտասարդ փառացի՝ հզօր և լայնախորհուրդ, որ մեծամեծ քաջագործութեամբք գերագոյն գտաւ քան զամենայն թագաւորս մեր. որոյ բազում բարեկարգութիւնս ՚ի քաղաքականութեան և ՚ի զինուորութեան, մեծանուն հանդիսացեալ և յայլ ազինս: Յաւուրս սորա Կիւրոս թագաւորեաց ՚ի վերայ Պարսից. և բարեկամութեամբ միացեալ ընդ նմա՝ եղին երկոքին ՚ի վերայ Աժդահակայ Մարաց արքայի և սպանին

գնա. յորմէ գերեաց Տիգրան տասն հազար ո_գիս: Իսկ 'ի Հռովմ Թագաւորէր յայնժամ Տարկուինիոս:

400. Ընդ այն ժամանակս Պիւթագորաս սկսաւ ուսուցանել զփիլիսոփայութիւն իւր յԻտալիա. և նախ ինքն անուանեցաւ փիլիսո_փայ: Անակրէոն և Սիմոնիդէս սկսան ծաղ_կել բանաստեղծութեամբ 'ի Յունաստան: Ե_սովպոս հանդիսացոյց զառակս իւր. և Սողոն օ_րէնսդիր Աթենացւոց հանդիսացաւ. և ապա ծաղկեցան Սոփոկղէս, Եւրիպիդէս, և Հերոդո_տոս պատմիչ [1]:

## ԴԻՊՔ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԱՐՈՒՆ

Ամ. աշխ.

2993. Հիմնարկութիւն տաճարին Սողոմոնի:
3080. Ամրի շինէ զՍամարիա:
3108. Եղիա փոխադրի յերկինս:
3133. Լիկուրգոս օրէնս դնէ:
3195. Կարանոս առաջին Թագաւոր Մակե_դոնիոյ:
3246. Եսայի մարգարէանայ:
3251. Հռոմուլոս շինէ զՀռովմ:
3254. Պարոյր Թագիւ պսակի:
3277. Միքիա և Նաւում մարգարէք:
3300. Տովբիթ:
3327. Մանասէ գերի:
3347. Յուդիթ սպանանէ զՀողոփեռնէս:
3369. Սոփոնիա մարգարէ:
3375. Երեմիա մարգարէ:

1 Եւսեբ. ժամ. ռնծէ = ռնխէ: Խորէն. ա. 21: բ. 61:

3395. Ամբակում և Բարուք մարգարէք։
3416. Գերութիւն Հրէից և բարձումն թա-
գաւորութեան նոցա։
3440. Երեք մանկունք ալրին։
3445. Կիւրոս Թագաւորէ։
3447. Տիգրան սպանանէ զԱժդահակ։
3448. Եսթեր։
3466. Առումն Բաբելոնի։

# ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՐ

## ԳԼՈՒԽ Ա

### Ազատութիւն Հրէից 'ի գերութենէ, և շինութիւն տաճարին։

Ա. Ա. 3468=3550

401. Յառաջ քան զթագաւորել Կիւրոսի մարգարէացաւ Եսայի վասն նորա, թէ ազատեսցէ զժողովուրդն Հրէից 'ի գերութենէ և օգնեսցէ նոցա շինել անդրէն զԵրուսաղէմ և զտաճարն տեառն։ Զօրութեամբ այսր մարգարէութեան ետ Կիւրոս հրատարակել յառաջնում ամի թագաւորութեան իւրոյ 'ի Բաբելոն հանրական հրովարտակաւ 'ի ձայն փողոյ, թէ ահա Աստուած երկնից հրամայեաց նմա շինել զտուն իւր յԵրուսաղէմ. արդ ո ոք իցէ 'ի ժողովրդենէն Աստուծոյ, երթիցէ յԵրուսաղէմ և շինեսցէ զտուն տեառն Իսրայէլի. իսկ որք ոչ եկանիցեն անդր, օգնեսցեն շինութեան տաճարին ոսկւով և արծաթով և ամենայն կարասեօք։ Եւ հրամայեաց Միթրիդատայ գանձապետի իւրոյ բերել զամենայն սպաս և զկահ տաճարի տեառն, զոր առեալ Նաբուքոդոնոսորայ և եդեալ էր 'ի պահ 'ի տուն աստուածոց իւրոց։ Եւ ամենայն սպասք ոսկեղէնք և արծաթեղէնք մեծ և փոքր՝ թուով հինգ հազար չորեքհարիւր վաթսուն և ինն՝ յանձնեցան 'ի ձեռս Սաղմանասարայ իշխանին Յուդայ տանել յԵրուսաղէմ։

402. Եւ միաբանեալ Հրէից եկին 'ի չու. և հասեալ 'ի Հրէաստան գրաւեցին զագա-

րակս և զկազմուածս իւրեանց ։ Եւ էին 'ի նոսա
քառասուն և երկու հազար երեք հարիւր և վաթ-
սուն այր . եօթն հազար երեք հարիւր եր-
սուն և եօթն ծառայք . իսկ սաղմոսասացք և
նուագածուք երկերիւր և քառասուն ։ Ուղ-
տաւ ոսկի և արծաթ և այլ կարասիք տուան յար-
քունուստ. Թող զորս ետուն Քաղդէացիքն և մնա-
ցին ժողովրդեան՝ որք մնացին անդ ։ Ապա յամ-
սեանն եօթներորդի որդիքն Իսրայէլի ժողովեցան
յիւրաքանչիւր տեղեաց յԵրուսաղէմ, և Յեսու
Յովսեդեկեան և Զօրաբաբէլ Սաղաթիէլեան
կանգնեցին սեղան զոհից յառաջին տեղին և
սկսան մատուցանել զոհս և զողջակէզս , կատա-
րելով և զտօնս , զամսագլուխս և զշաբաթս ։
Եւ ապա գործավարս կարգեալ վասն շինու-
թեան տաճարին՝ ետուն բերել փայտս 'ի Լիբա-
նանէ ընդ ծով մինչև 'ի Յոպպէ ։

403. Ապա յամսեանն երկրորդի յամին երկ-
րորդի եդին զհիմն տաճարին և սկսան շինել և
'ի կատարել հիմանն՝ արարին տօն մեծահանդէս
ցնծութեամբ, և երգովք սաղմոսաց օրհնէին զԱս-
տուած ։ Խնդային երախտաւորք ընդ հաստա-
կառոյց հիմնարկութիւնն . իսկ ծերք , որք յա-
ռաջ քան զգերութիւնն տեսեալ էին զհոյակապ
շինուած առաջնոյ տաճարին՝ լային կոծելով ։
Ձայն ձայն աղաղակի ողբոց և ցնծութեան
լուեալ Սամարացւոց՝ եկին, և տեսեալ զհիմնար-
կութիւն տաճարին՝ խնդրեցին զի և նոքանք
'ի միասին շինեսցեն ։ Իսկ Զօրաբաբէլ և Յեսու
Յովսեդեկեանց մերժեալ զնոսա ասեն. Մեք մի-
այն շինեսցուք զտուն տեառն Աստուծոյ Իս-
րայէլի , որպէս և հրամայեաց մեզ Կիւրոս թա-
գաւոր Պարսից ։ Քանզի նոքա ընդ սպառու-
կաւ օգնականութեան խափանել կամէին
զգործն . որպէս և խափանեցին իսկ . կաշառ-

լով զխորհրդականս Կիւրոսի և յաջորդաց նորին։ Յայնժամ Հրեայք խորհուրդ կալան նախ շինել զպարիսպս և զտունս քաղաքին ՚ի պաշտպանութիւն յերկաայց արշաւանաց թշնամեաց, և ապա միաբան բուռն հարկանել զշինութենէ տաճարին։

404. Յետ Կիւրոսի յաջորդեաց Կամբիւս, և յետ սորա Արտաշէս առաջին։ Առ սա գրեցին գիր ամբաստանութեան զՀրէից եղելոց յԵրուսաղէմ. ցուցեալ՝ թէ Երուսաղէմ է ապստամբ և գաւառացուցիչ ամենայն շրջակայ թագաւորութեանց։ Հաւանեալ կարկածոտ թագաւորին՝ հրաման ետ նոցա երթալ խափանել զգործ շինութեան քաղաքին, և մի՛ ներել նոցա զհարկս, զի մի բազմասցին և զօրասցին։ Այս հրովարտակ հասեալ ՚ի ձեռս գլխաւորաց նոցա Հռէումայ, Բաաղախմայ, և Սամսայի դպրի՝ վաղվաղակի հասին յԵրուսաղէմ այրուձիով և խափանեցին ՚ի շինելոյ զքաղաքն և զտաճարն. Թէպէտ վասն տաճարին ոչ գոյր արգել, սակայն մնաց խափանեալ ընդ ամս երկոտասան մինչև յերկրորդ ամ Դարեհի։

405. Ի նմին ամի սպանաւ Արտաշէս, և հալածող թշնամիք Հրէից բարձան ՚ի միջոյ։ Զկնի նորա թագաւորեաց Դարեհ Վշտասպեան. որոյ առաջի ատենաբանեաց Զօրաբաբէլ. որ ըստ ասելոյ Յովսեպոսի քանզի յառաջագոյն բարեկամութեամբ էր ընդ Դարեհի մինչ սոսկական ումն էր նա, ՚ի թագաւորել նորա գնաց առ նա, և գտեալ շնորհս առաջի նորա՝ կարգեցաւ սենեկապան նորա ընդ այլոց երկուց պատանեկաց։

Ի նմին ամի արար Դարեհ խրախութիւն մեծ ամենայն իշխանաց և մեծամեծաց Մարաց և Պարսից հարիւրքսան և եօթն նախարարաց։ Յետ

խրախուսութեանն՝ եմուտ Դարեհ 'ի սենեակ իւր և ննջեաց։ Յայնժամ երեք պատանիքն 'ի ներքս 'ի սենեկի սկսան խօսել ընդ միմեանս և ասեն. Եկայք իւրաքանչիւր ասասցուք բան մի. և որ ասասցէ իմաստուն և առաւել զօրաւոր քան զընկեր իւր՝ ընկալցի մեծամեծ պարգևս յարքայէ· Եւ գրեաց առաջինն, թէ յաղթող և զօրաւոր է քան զամենայն՝ գինի. երկրորդն, թէ յաղթող և զօրաւոր է քան զամենայն՝ թագաւոր· իսկ երրորդն, որ էր Զօրաբաբէլ, գրեաց թէ յաղթող և զօրաւոր են քան զամենայն կանայք և քան զամենայն յաղթէ ճշմարտութիւնն։ Եւ զգրեալսն ծալեալ կնքեցին և եդին ընդ սնար թագաւորին։

406. Իբրև զարթեաւ թագաւորն, ընթերցաւ զգիրսն. և հրամայեաց կոչել զամենայն մեծամեծս Մարաց և Պարսից. որոց յանդիման սկսաւ առաջինն խօսել վասն գինւոյ՝ ցուցանելով զմեծ ներգործութիւնս նորա. երկրորդն բարձրացոյց զկարողութիւն թագաւորի։ Իսկ Զօրաբաբէլ խօսեցաւ վասն զօրութեան կանանց՝ ցուցեալ զօրաւորագոյն քան զգինի և քան զթագաւոր, զի գիտեն յաղթել և թագաւորաց. ապա դարձուցեալ զբան իւր, եցոյց թէ քան զամենայն յաղթող և զօրաւոր է ճշմարտութիւնն. ամենայն ինչ որ յերկրի է՝ անցանէ և կորնչի. իսկ ճշմարտութիւնն կայ մնայ և զօրաւոր է յաւիտեան, և է օրհնեալ տէր Աստուած ճշմարտութեան։ Զայս ասացեալ լռեաց. և ամենայն ժողովն աղաղակեցին, Մեծ է ճշմարտութիւն և յաղթող և զօրաւոր։ Յայնժամ թագաւորն հրաման ետ Զօրաբաբէլի խնդրել զինչ և կամիցի։ Իսկ նորա 'ի բաց թողեալ զամենայն անցաւոր մեծութիւն՝ յիշեցոյց թագաւորին զուխտն զոր ուխտեաց Աստուծոյ վասն շինութեան Երուսաղէմի և վասն

դարձուցանելոյ զսուրբ սպասս տաճարին՝ զմնա_ ցեալս 'ի Կիւրոսէ 'ի Բաբելոն : Ի նմին ժամու յարուցեալ Դարեհ համբուրեաց զԶօրաբաբէլ. և եդ նմա հրովարտակ առ ամենայն նախարարս, զի յուղարկեսցեն զնա և զորս ընդ նմա՝ ելանել և շինել զԵրուսաղէմ, պատուիրելով 'ի հրովարտակին ոչ միայն չնեղել զհրեայս վասն հարկաց, այլ և ձեռնտու լինել նոցա 'ի շինութիւն :

407. Առեալ Զօրաբաբէլի զայս հրովարտակ ել յերեսաց արքային, և ամբարձեալ զձեռս իւր յերկինս ընդ կողմն Երուսաղէմի օրհնեաց զտէր. և եկեալ 'ի Բաբելոն պատմեաց եղբարց իւրոց, և միաբան օրհնեցին զԱստուած : Ապա ելեալ անտի հանդերձ այլովք ժողովրդովք չոքան յԵրուսաղէմ, և վաղվաղակի ձեռն 'ի գործ արարեալ սկսան շինել զտաճարն ընդ Յեսուայ՝ ունելով օգնական ինքեանց զմարգարէսն զԱնգէ և զԶաքարիա. որք խրախուսէին զժողովուրդն : Յարեան ոմանք յաչաղկոտաց յայլևայլ խմբէ. և կամեցեալ խափան արկանել շինութեան տաճարին՝ աղդ արարին առ Թագաւորն՝ պէսպէս պատճառս կցկցեալ. և նորա քննեալ դիւանականն՝ եգիտ զհրովարտակն Կիւրոսի գրեալ այսպէս. Յամին առաջնում Կիւրոսի. Կիւրոս Թագաւոր եդ հրաման վասն տան տեառն որ յԵրուսաղէմ. անդ, շինեսցի տաճարն Աստուծոյ և տեղին՝ ուր զոհեն զզոհսն տեառն. և եդ զչափ բարձրութեան կանգունս վաթսուն, և լայնութեան կանգունս վաթսուն. և կարգք երեք 'ի զօրաւոր քարանց, և կարգ մի փայտեղէն » [1] :

408. Վասն որոյ հրաման եհան Դարեհ, զի մի՛ ոք իշխեսցէ խափանել զգործ շինութեան

1 = Եզր. Գլ. Զ. 24 :

տաճարին. նա և պատուէր ետ հարկահանաց մատակարարել յարքունի գանձուց զծախս գործառութեան, և տալ քահանայից յողջակէզ տեառն Աստուծոյ ցուլս, խոյս, ամիկս, և ցորեան, գինի. տուսցեն պատարագս. և աղօթս արասցեն վասն կենաց Թագաւորին և որդւոց նորա. և եթէ ոք յանդգնեսցի ընդդէմ կալ այսմ հրամանի, քակեսցի տուն նորա, և առեալ փայտ 'ի տանէ նորա՝ բևեռեսցի 'ի նմա: Այսմ հրամանի գործակից եղև Թաթանայ կուսակալ Սամարիոյ. մինչև գլխաւորեալ կատարեցաւ շինութիւն տաճարին 'ի վեցերորդ ամի թագաւորութեան Դարեհի. և 'ի քսաներորդ ամի թագաւորութեան Արտաշէսի կատարեցաւ շինութիւն պարսպաց Երուսաղէմի: Արդ 'ի սկզբնաւորութենէ շինութեան տաճարին մինչև ցլրումն շինութեան քաղաքին անցին ամք քառասուն և վեց. ըստ որում ասէին Հրեայք. « Զքառասուն և զվեց ամ շինեցաւ տաճարս այս »[1]:

409. Առ տէրութեամբ Արտաշէսի, որ Երկայնաձեռն կոչի, էր 'ի Բաբելոն յարքունիսն վարդապետ ոմն մովսիսական օրինաց Եզրաս անուն, այր իմաստուն և սիրելի Աստուծոյ 'ի քահանայական կարգէ: Սա ընկալեալ հրաման յԱրտաշիսէ եկ յԵրուսաղէմ հանդերձ հրովարտակաւ ընդարձակ իշխանութեամբ իբրև քննիչ եօթն խորհրդականօք. որ և տարաւ ընդ իւր բազում ոսկի և արծաթ՝ առեալ յարքայէ և յայլոց իբրև նուէր տեառն: Ունէր և զընդարձակ իշխանութիւն ուսուցանել և դարձուցանել զմոլորեալս յաստուածպաշտութիւն և զընդդիմակա սատել, աքսորել և 'ի մահ եւս դատակնքել: որում ընկերացան ութուտասան իշխանաւորք և

1 Ա. Եզ. Զ. 20:

հազար չորեքհարիւր իննսուն և վեց անձինք 'ի գլխաւորաց ժողովրդեան ։

Եզրաս ակսաւ վարել զխնամութիւն իւր զոր եառ 'ի Թագաւորէն. այլ իբրև լուաւ եթէ ոմանք 'ի գլխաւորաց ազատելոց 'ի գերութենէ խառնակեալ են ամուսնութեամբ ընդ այլազգի կանայս, որ արգելեալ էր յաստուածային օրինաց. պատառեաց զհանդերձս իւր և նստաւ 'ի սուգ մեծ՝ տրտմեալ մինչև 'ի ժամ զոհի երեկոյին ։ Ապա յարուցեալ մատոյց զզոհն, և ամբարձեալ զձեռս տարածէր առաջի տեառն զցաւ սրտի իւրոյ, և խոստովանէր զանօրէնութիւնս ժողովրդեան ։ Ժողովեցան զնովաւ մանկունք և երիտասարդք 'ի տաճարի անդ, և ամենեքեան լային ընդ նմա ։ Ապա չոքաւ Եզրաս 'ի տուն Յոհաննու որդւոյ մեծի քահանային Եղիասիբայ. և եա քարոզ կարդալ ընդ ամենայն Հրէաստան, զի մինչև ցերիս աւուրս ամենեքեան գայցեն յԵրուսաղէմ տալ պատասխանի վասն անձանց ։

410. Ընդ ժողովեցան ամենայն արք Յուդայ և Բենիամինի. և ամենայն ժողովուրդն նստէր 'ի մեծի հրապարակի տաճարին ։ Եզրաս յետ յանդիմանելոյ զնոսա յորդորեաց 'ի խոստովաթիւն և յօրհնութիւն տեառն Աստուծոյ, և հրամայեաց որոշել յամենայն հեթանոսաց երկրին և 'ի կանանց այլազգեաց, զորս առարին ։ Ամենեքեան միաձայն ետուն պատասխանի, թէ պատրաստ եմք ամենայնի որ ինչ հրամայեալ է յօրինաց. և վաղվաղակի արձակեցին զկանայս այլազգիս և զորդիս նոցա, և մատուցին խոյս յաղօթակէզ 'ի քաւութիւն մեղաց ։ Իսկ Եզրաս ուրախ լինէր, զի առանց պատժոց եբարձ 'ի ժողովրդենէ տեառն զայնպիսի մեծ անօրէնութիւն ։ Սակայն ընդ այս գործ ցասուցեալ շրջակայ ազգաց՝ ստէպ ասպատակէին շուրջ զԵրուսաղէմաւ

և բազում վնասս գործէին մինչև ցքսաներորդ ամ թագաւորութեան Արտաշէսի. յորում առաքեաց նոցա Աստուած օգնութիւն 'ի ձեռն Նեեմեայ մեծի իշխանին յազգէ Հրէից, որ էր մատռուակ Արտաշէսի:

411. Քանզի 'ի նմին ժամանակի չոքան ոմանք յԵրուսաղէմէ 'ի Շօշ քաղաք արքունեաց առ 'ի գտանել դարման նեղութեանց. Նեեմի իբրև լուաւ 'ի նոցանէ զվիշտս Հրէից զոր կրէին 'ի թշնամեաց, սուգ առ և պահեաց աղօթիւք աւուրս բազումս: Արտաշէս տեսեալ զնա խռովեալ՝ եհարց և իմացաւ զպատճառն. և եհարց զնա թէ զինչ խնդրես: Եւ նորա յոգւոց հանեալ խնդրեաց երթալ արքունի հրամանաւ յԵրուսաղէմ և շինել զքաղաք հարց իւրոց: Իբրև լսելի եղեն խնդիրքն, յաւել Նեեմի խնդրել զերկու հրովարտակս, մի առ սպարապետս կողմանցն յայնկոյս Եփրատայ, զի տայցեն նմա զօրս՝ տանել 'ի Հրէաստան 'ի պահպանութիւն, և միւս ևս առ Ասափ վերակացու արքունի մայրեաց. զի տացէ նմա փայտ 'ի կազմութիւն դրանց և ձեղուանց աշտարակաց: Շնորհեցաւ նմա և այս. զի ձեռն տեառն էր ընդ նմա:

Եհաս Նեեմի յԵրուսաղէմ և յայտնեաց ժողովրդեան զխորհուրդ իւր. զարթոյց զսիրտ ամենեցուն ձեռնամուխ լինել առ 'ի կանգնել զպարիսպս ընդդէմ թշնամեաց: Խրախուսեալ առ հասարակ ամենեքեան և 'ի խումբս խումբս բաժանեալ՝ սկսան շինել և կարկատել զամենայն խրամատս պարսպաց, մինչև բովանդակ շրջապատն եհաս ցկէս բարձրութիւն: Զայն տեսեալ այլազգեաց՝ միաբանեցան ելանել 'ի վերայ Երուսաղէմի և կործանել զշինուածն: Յորմէ բազում վիշտս կրեաց Նեեմի. ևս և յիւրեաց յաշակերտաց ումանց, որք ամբա-

տանելին զնմանէ՝ թէ կամի ապստամբել և լինել թագաւոր ։ Իսկ նա անխարտակելի արութեամբ ընդդէմ եկաց ամենեցուն, և քաջալերեաց զկարծամիտս՝ բաժանեաց զժողովուրդն յերկուս դասս ․ միոյն գործել զցերեկ և հանգչել 'ի գիշերի ․ իսկ միւսոյն գործել 'ի գիշերի և հանգչել 'ի ցերեկի , կարգելով նոցա գունդս զօրաց 'ի պահպանութիւն ։ Որով և 'ի կատար հասոյց զպարիսպս քաղաքին 'ի միջոցի յիսուն և երկու աւուրց յամենայնն իլրուլ ։

412 ․ Յայնժամ ժողովեցան յԵրուսաղէմ իշխանք և քահանայք առնել նաւակատիս ուրախութեան։ Ամենայն բազմութիւնն յերկուս դասս որոշեցան, մին 'ի մի կողմն և միւսն ընդ հակառակ կողմն շուրջ եկեալ 'ի վերայ պարըսպաց, 'ի ձայն եղջերց փողոյ և ծնծղայից և սաղմոսարանօք յերգս օրհնութեան օրհնելով զԱստուած եկին 'ի դուռն պահապանաց ․ և անդ միացեալ գնացին 'ի տաճար անտի կատարել զուխտս իւրեանց։ Անդանօր զոհեցին բազում զոհս 'ի վերայ սրբոյ սեղանոյ և ուրախ եղեն յոյժ, և կարգադրեցին զսրբազան պաշտամունս և ըզտօնս ըստ օրինացն Մովսէսի ։

Նեեմի վարեաց զգերագոյն իշխանութիւն իւր ամս երկոտասան՝ հաստատելով զամենայն կարգս քաղաքականութեան և զօրէնս աստուածպաշտութեան, ողորմելով աղքատաց և թողլով զամենայն պարտս նոցա ․ զի կերակրէին 'ի սեղանոյ նորա յամենայն աւուրս այք հարիւր ։ Եւ 'ի վերայ անբաւ երախտեացն ոչ խնդրեաց յումեքէ վարձս, բայց միայն յԱստուծոյ՝ յիշել զնա 'ի բարութիւն ։

413 ․ Յետ երկոտասան ամաց դարձ արար 'ի Պարսս ․ և եգիտ ընդունելութիւն մեծ յարքայէ և 'ի մեծամեծաց , և ապա նովին շքով

դարձաւ յԵրուսաղէմ. և գտեալ զժողովուրդն յանկարգութեան՝ վաղվաղակի բարեկարգեաց զամենեսին. մաքրեաց զտուն գանձու տաճարին՝ յոր եդեալ էին զկարասիս Տուբիայ ամնացւոյ. դարձոյց զքահանայս և զՂեւտացիս յԵրուսաղէմ, որք առ կարօտութեան ցրուեալ էին յագարակս իւրեանց 'ի գործ մշակութեան. որոց կարգեաց հաստ 'ի տասանորդաց և յամենայն եկամտից՝ եդեալ 'ի վերայ գանձանակի տան տեառն վերակացուս հաւատարիմս և բարեպաշտս: Իսկ 'ի Հրէից անտի, որք արարեալ էին կանայս յայլազգեաց, ետ գան հարկանել զբազումս հրապարակաւ. և այսպիսի հայրագութ կառավարութեամբ վարեաց զիշխանութիւն իւր յԵրուսաղէմ, մինչև մեռաւ:

414. Զայսու ժամանակաւ Վահագն քաջ որդի Տիգրանայ թագաւորեաց 'ի Հայս յետ նորա, զոր վասն մեծամեծ գործոց արութեան բանմանութեան քաջին Հերակլեայ դասեցին 'ի կարգս դից. կանգնեալ նմա անդրի 'ի չափ հասակի իւրոյ. յորմէ եղեն Վահունիք և քուրմք՝ որք պաշտէին զնա: Յետ նորա թագաւորեաց որդի նորին Առաւան. ապա Ներսեհ. յետ նորա Զարեհ. ապա Արմոգ. ապա Բայգամ. և ապա Վան, որ նորոգեալ զՇամիրամակերտ քաղաք մեծ՝ կոչեաց յանուն իւր Վան:

Ընդ այն ժամանակս Աթենացիք, Սպարտացիք և այլ ժողովուրդք Յունաստանի յարուցին պատերազմ 'ի մէջ իւրեանց. որոց քաջ զօրապետք էին Աղկիբիադէս, Ագեսիղայոս, Թուկիդիդէս և Քսենոփոն. յետոյն երկուքն եղեն և մատենագիրք [1]:

1 Խորէն. ա. 31: Յովհան. կաթող: Մադփի-փրոս:

415. Ի յունական պատերազմին Փիլիպպոս արքայ Մակեդոնացւոց երբեմն զմի կողմն ունելով և երբեմն զմիւս կողմն՝ տիրեաց ամենեցուն։ Ի նմին ժամանակի ծաղկեցաւ Սոկրատ փիլիսոփայ․ ապա Դեմոսթենէս, Պղատոն, Զենոն, և Արիստոտէլ, որ եղև դաստիարակ մեծին Աղեքսանդրի։ Իպոկրատ ծաղկեցաւ 'ի բժշկականութեան. Իսոկրատ 'ի ճարտարախօսութեան. Եւկղիդէս յերկրաչափութեան, Պանենոս 'ի նկարչութեան, և Փիդիաս 'ի քանդակագործութեան։

Յայնմ ժամանակի Դաղղիացիք աւերին զՀռովմ. և Հռովմայեցիք պաշարեալ 'ի Կապիտոլիոնի՝ մատնէին գիշերոյն, եթէ 'ի չչնջելոյ ձայնի սագուցն չզարթնուին պահապանքն [1]։

## ԳԼՈՒԽ Բ

### Անցք Հրէից առ Մակեդոնացւովք։
Ա. Ա. 3684=3800

416. Հրեայք զկնի դարձին իւրեանց 'ի գերութենէ չունէին թագաւոր․ միայն քահանայապետք նոցա կառավարէին զժողովուրդն ընդ տէրութեամբ Պարսից ամս հարիւր և քսան մինչև ցմեծն Աղեքսանդր․ որ յաղթող գտեալ Հայոց և Պարսից և բազում ազգաց՝ տիրեաց մեծի մասին աշխարհի։ Բայց յետ թագաւորելոյ զամս երկոտասան, անկաւ յախտ մահու ամաց երեսուն և երկուց․ և կոչեալ զչորեսին երևելի զօրապետս զինակիցս իւր՝ բաժանեաց նոցա զթագաւորութիւնն, որպէս նախագուշակեալ

1 Եւսեբ. ժամ. [illegible]։

էր Դանիէլ։ Ետ զԵգիպտոս Պտղոմէայ, զԱ-սորիս և զԲաբելոն՝ Սելևկեայ Նիկանովրայ. զՄակեդոնիա՝ Փիլիպպոսի. իսկ զՊոնտոս և զմեծ մասն Ասիոյ Անտիգոնոսի։ Եւ զի չէր տա-կաւին տիրեալ համօրէն Եւրոպայ, զմի մասն Ի-տալիոյ զոր ունէր՝ յաւել ՚ի Մակեդոնիա։

417. Պտղոմէոս ինքնակալ առատամիտ և ձիր՝ յաղթական հանդիսացաւ. որպէս և որդի նորա Պտղոմէոս Փիղադելփոս, այսինքն է եղբայրասէր. որ առաւել գտաւ քան զհայր իւր իմաստու-թեամբ, հարստութեամբ և զօրութեամբ։ Սի-րէր սա և զազգն Հրէից. փառաւորեաց զտա-ճարն Երուսաղէմի բազում ընծայիւք. և կոչեալ եօթանասուն և երկու րաբունիս յԱղեքսանդրիա՝ ետ թարգմանել զաստուածաշունչ զսուրբ գիրս ՚ի լեզուէ Եբրայեցւոց ՚ի յոյն։ Յետ մահուան թագաւորեաց անդրանիկ նորա Պտղոմէոս Եւեր-գետես, այն է բարեգործ։ Յետ որոյ թագաւո-րեաց որդի նորա Պտղոմէոս Փիղոպատոր, այս է հայրասէր. յաւուրս սորա հեծէր Եգիպտոս ՚ի դառն խռովութեանց։ Եւ յետ նորա թա-գաւորեաց որդի նորա Պտղոմէոս Եպիփան, այն է երևելի։

418. Մինչև ցայս ժամանակ Հրեայք կային ՚ի խաղաղութեան՝ չունելով բան ընդ ումեք։ Բայց ՚ի նմին ժամանակի ինքնագրգիռ խռովու-թեամբ հերձեալ ՚ի միմեանց բազումք մտին ՚ի զինուորութիւն Անտիոքոսի, և այլք դիմեցին յԵգիպտոս և յարեցան ՚ի Պտղոմէոս։ Եւ զի հռչակեալ էր ՚ի ժամանակին մարգարէութիւն այս. Թէ «Յաւուր յայնմիկ եղիցի սեղան տեառն յերկրին Եգիպտացւոց, և արձան կանգնեալ տեառն ՚ի սահմանս նորա» [1], և ահա այր մի ՚ի

1 Ես. ԺԹ. 19։

Հրէից Ոնիա անուն ժողովեալ ամբոխ բազում
չոգաւ յԵգիպտոս, և ընկալեալ յարքայէ զՀե-
լիուպօլիս կամ զԱրեգ քաղաք՝ կանգնեաց անդ
տաճար ըստ ձևոյ տաճարին Երուսաղեմի ընդ-
դէմ օրինաց տեառն, որ պատուիրեալ էր յԵ-
րուսաղէմ և եթ մատուցանել զոհս և պատա-
րագս:

419. Իսկ մեծն Անտիոքոս արքայ Ասորւոց
տեսեալ՝ թէ Հրեայք ինքնակամ յարեցան 'ի Պտո-
ղոմէոս, չարժեաց զզէնս իւր 'ի վերայ Հրէաստա-
նի և էառ զբազում քաղաքս և զամուրս նոցա, և
բազումս աշխատ արար զնոսա: Ապա պատճա-
ռանօք ուխտ խաղաղութեան եդեալ ընդ Պտղո-
մեայ՝ ետ նմա զդուստր իւր զԿղէոպատրա 'ի
կնութիւն առ. խնամեալ 'ի ձեռն նորա զգաղտնի
խորհուրդս տան իւրոյ: Բայց կինն համձարեղ
չկամեցաւ մատնել զթագաւորութիւն իւր. այլ
յայտնեաց տան իւրում զամենայն պատուէրս
նենգութեան հօր իւրոյ. և ասաց չհաւատալ
կեղծ բարեկամութեան նորա: Իսկ Անտիոքոս վրի-
պեալ 'ի յուսոյն՝ դարձոյց զզօրս իւր յայլ և այլ
կողմանս, և մեռաւ 'ի Պարսս. և թագաւորեաց
որդի նորա Սելևկոս Եւպատոր. զոր մահացոյց
դեղով եղբայր նորա Անտիոքոս Երևելին, և ինքն
թագաւորեաց:

420. Հրէաստան կայր յայնմ ժամանակի
յանդորրու ընդ իմաստուն կառավարութեամբ
Ոնիայ մեծի քահանայապետի տան Աստուծոյ:
Այլ Սիմոն ոմն յազգէ Բենիամինի վերակացու
տաճարին և առաջնորդ տոհմի իւրոյ 'ի ժամա-
նակին՝ կամեցեալ բռնակալել և տիրել, ելից
զքաղաքն աղմկաւ. որում արիաբար դիմադրեալ
Ոնիայ սանձէր զնա: Բայց անօրէնն չոգաւ ե-
գիտ զԱպողոնիոս սպարապետ Սելևկոսի և
պատմեաց նմա, թէ տուն գանձուց Երուսաղեմի

լի է անբաւ հարստութեամբ: Զայս լուր փու-
թով հասոյց նա առ թագաւորն. և նա նոյնժա-
մայն առաքեաց յԵրուսաղէմ զՀեղիոդորոս
զհանդերձապետ իւր արքունի հրովարտակաւ,
զի առցէ զամենայն գանձս տաճարին: Հասեալ
նորա յԵրուսաղէմ յայտնեաց զհրաման արքայի
և սահմանեաց օր և ժամ՝ ինքնին մտանել 'ի տուն
գանձուց և տանել զգանձն առ Սելեւկոս:

421. Այս ձայն իբրև լու եղև յԵրուսաղէմ,
լցաւ քաղաքն ահիւ և դողութեամբ. ամենե-
քեան անկեալ առաջի սրբութեան սեղանոյն
խնդրէին զօգնութիւն 'ի տեառնէ: Լուաւ տէր
աղաչանաց նոցա և ազատեաց զնոսա. քանզի
իբրև եմուտ Հեղիոդորոս 'ի տուն գանձին և
ձեռնէր ամբարշտութեամբ, ահա երևեցաւ
անդ երիտասարդ մի հեծեալ յերիվար, և փա-
ռեալ 'ի զէն և 'ի զարդ ոսկիափայլ. որ խաժա-
հայեցիւք զարհուրեցոյց զնա և զպաշտաւորս
նորա, և երիվարն կիցս արձակեալ՝ ընկէց զնա
'ի գետին: Յայնժամ երևեցան և այլ երկու երի-
տասարդք գեղեցիկ զարդարեալք, և մտրակ 'ի
ձեռս նոցա. և մտուցեալ յաջմէ և յահեկէ
հարին զնա չարաչար, մինչև ամենեքեան մահու
երկիւղիւ ըմբռնեալ ոչ համարձակէին շարժել
'ի տեղւոջէն: Այլ նոքին իսկ Հրեայք բար-
ձեալ հանէին զնոսա կիսամահ 'ի տաճարէ անտի.
Իսկ ժողովուրդն միաբան օրհնէին զտէր, որ
փառաւորեաց զտեղի սրբութեան իւրոյ:

Յայնժամ խնդրեցին բարեկամք Հեղիոդորո-
սի, զի Ոնիա քահանայապետ աղաչեսցէ զԱս-
տուած վասն առողջութեան նորա: Այն ինչ
քահանայապետն զոհս և պատարագս մատու-
ցանէր վասն նորա, ահա նոյն երիտասարդք նո-
վին զինու և զարդու զարդարեալք եկին կա-
ցին առաջի Հեղիոդորոսի, և խթեալ զնա

ասեն. Երթ բազում շնորհս կալջիր դու Ոնիայ քահանայապետին. զի վասն աղաչանաց նորա շնորհեաց քեզ Աստուած զկեանս, և պատմեսջիր զաստուածային զօրութիւնն առ ամենեսին։ Զայս ասացին և վերացան։ Իսկ Հելիոդորոս յարուցեալ մատոյց ողջակէզս պատարագաց, և մեծապարգևս պատուեաց զՈնիա։ Եւ ժողովեալ զզօրս՝ դարձաւ 'ի տեղի իւր, պատմելով ամենեցուն զզօրութիւն տեառն. և հասեալ առ թագաւորն պատմեաց նմա ճշմարտութեամբ զամենայն անցս որք անցին ընդ նա. որ իբրև լուաւ դադարեաց այլ ևս նեղել զհրեայս։

422. Իբրև մեռաւ Սելևկոս, եկաց թագաւոր Ասորւոց եղբայր նորա Անտիոքոս երևելի (419), այր մեծեղեռն անօրէնութեամբ։ Սա գնեաց Յասոնի եղբայր Ոնիայ քահանայապետին՝ յափշտակել բռնութեամբ զքահանայապետութիւնն, խոստանալով նմա վաթսուն քանքար արծաթոյ. և զայլ ութսուն աստի և անտի հաւաքելով. այլ և հարիւր քանքարս՝ եթէ թոյլ տայցէ նմա մուծանել յԵրուսաղէմ զհեթանոսական կրօնս պղծութեան։ Եհաս անօրէն ըղձիցն. զի առեալ զհրամանն 'ի թագաւորէն՝ յինքն յանկոյց վաղվաղակի զբազումս յեղեռնագործաց և սկսաւ 'ի ներքս մուծանել զհեթանոսութիւն. ուրացան զհրէութիւն և շինեցին թատրոնս պղծութեանց, մարզելով յամբշամարտութիւն և 'ի տէգընկեցութիւն։ Հալածական արար Յասոնի զեղբայր իւր զՈնիա. և յետ երից ամաց յղեաց 'ի ձեռն Մենելայոսի զհարկ արքունի առ Անտիոքոս։ Բայց Մենելաոս որսացեալ զախտ թագաւորին՝ յաւել երեք հարիւր քանքարս 'ի գին քահանայապետութեանն, և առեալ զիշխանութիւնն զայն դարձաւ յԵրուսաղէմ և տարագրեաց զՅասոնի։ Սակայն և ոչ ինքն յերկարեաց յիշխա-

նութեան խուռում. քանզի ոչ կարելով հաստա-
ցանել զոր միանգամ խոստացեալ էր արքայի՝
կորոյս զիշխանութիւնն և զքահանայապետու-
թիւն, և կացուցաւ քահանայապետ Լիւսիմա-
քոս եղբայր նորա ։

423. Իսկ Մենելաւոս առ դառնութեան
սրտին գողացաւ 'ի տաճարէ անօթ բազում ոսկի
սպասս, և նոքօք որսացեալ զԱնդրոնիկոս փոխ-
արքայ՝ հրապուրեաց զնա սպանանել զՈնիա-
զոր երդմամբ հանեալ նորա յամրոցէն, ուր
ամրացեալ կայր, խողխողեաց զարդարն։ Եւ եղև
սուգ մեծ ամենեցուն ընդ անպարտ մահ մեծի
քահանայապետին. մինչև Անտիոքոս ինքն լուեալ
արտասուեաց 'ի վերայ սրբութեան և իմաստու-
թեան առն Աստուծոյ, և զրկեաց 'ի պատուոյ
զմարդասպանն Անդրոնիկոս. և 'ի նմին տեղւոջ
ուր խողխողեաց զՈնիա, հարին գահիճք զգլուխ
անօրինին ։

Այնուհետև Մենելաւոս միաբանեալ ընդ
եղբօր իւրում Լիւսիմաքեայ՝ սկսաւ գողա-
նալ զգանձս տաճարին ։ Իբրև լուան ժողո-
վուրդքն խումբ կազմեցին, յարձակեցան 'ի վե-
րայ նորա. և առ գանձի սեմբն սպանին զԼիւսի-
մաքոս։ Դիմեալ ապա ժողովրդեան առ Անտիո-
քոս՝ խնդրեցին 'ի նմանէ զդատաստան Մենելա-
ւոսի. և առաքեցան 'ի ծերակուտէ Հրէից երեք
արք 'ի Տիւրոս, ուր էր Թագաւորն. քննեցաւ
Մենելաւոս և գտաւ պարտաւոր։ Այլ անօրէնն
կաշառեալ զՊտղոմէոս ընտանին արքայի՝ ետ
փոխել զվճիռն և դատապարտել զերիս անպարտ
հրեշտակս իբր զրպարտողս ։

424. Այն ինչ Անտիոքոս մեծաւ պատրաստու-
թեամբ մտանէր յԵգիպտոս, նշան ահեղահրաշ
երևեցաւ յօդս յԵրուսաղէմ. զի բազմութիւն
զօրաց յերկուս գունդս բաժանեալ, հեծեալք

և հետևակք. վառեալք 'ի զարդ բուռն զօրու_թեամբ զէն առ սուսեր ելեալ 'ի դիմի հարկա_նէին միմեանց, և շողիւնք սուսերաց և շառա_չիւնք նետից լսելի լինէին առ ուրս քառասուն: Ցանկային ժողովուրդքն Երուսաղէմի եթէ 'ի կորուստ Անտիոքայ շրջեսցի մեկնութիւն երևութին. սակայն ունէին արգելմունք զի առ ինքեանս կատարեցաւ: Քանզի 'ի հասանել այսր լրոյ յականջս Յասոնի, որ փախուցեալ էր առ Ամմանացիս. ժողովեաց արս հազար, և եկ նոքօք յԵրուսաղէմ. որում թէպէտ և ընդդէմ ելին քաղաքացիք. այլ զի չկայր որ նոցա առաջնորդ՝ չկարացին ունել խաղաղ: Եմուտ Յասոն 'ի ներքս և սկսաւ կոտորել անխնայ զորս և գտանէր: Իսկ բազմութիւն ժողովրդեան յետին յուսահա_տութեամբ գրոհ եառն 'ի զօրս նորա. կէս մի կոտորեցին և կէս մի 'ի փախուստ դարձուցին. և ինքն Յասոն կորագլուխ անկաւ առ Ամմա_նացիս, և անտի հալածական եղեալ կորեաւ յաշխարհին Սպարտացւոց, և դի նորա անթաղ 'ի դաշտի եղև կերակուր գազանաց:

425. Իսկ Անտիոքոս եկեալ յԵգիպտոսէ իբրև եկն յԵրուսաղէմ, Հրեայք ընդդէմ ելին նմա. այլ անդէն նուաճեցան 'ի բուռն զօրու_թենէ նորա: Եմուտ նա 'ի քաղաքն և սկսաւ կոտորել զմեծ և զփոքր. մինչև յերիս աւուրս կոտորեցան ութ բիւրք, և չորս բիւրք 'ի գե_րութիւն վաճառեցան, և այլ չորս բիւրք պահե_ցան: Իսկ անօրէնն Մենելաւոս էած զԱնտիոքոս 'ի տաճար անդր և եցոյց նմա զգաղտնի գանձս մեծագին գանձուց: Ուրանոր զսեղանն ոսկի և զաշտանակն ոսկեձոյլ և զայլ մեծագին սուրբ սպասս խորտակեալ՝ առին և հանին ութ հազար հարիւր քանքարս ոսկւոյ. զոր բարձեալ տարաւ ընդ իւր, աւարեալ և զքաղաքն և քակեալ զպա_

բնակս նորա. տարաւ և զՄենեղաւոս։ Եւ եդ յԵրուսաղէմ առաջնորդ Փիլիպպոս զոմն՝ որ զամս երկուս անհնարին հարստահարեաց զժողովուրդն։ Այպա առաքեաց անդր զԱպողոնիոս ստրատապետ իւր քսան և երկու հազար զօրօք. և պատուէր ետ նմա կոտորել զՀրեայս. որ և կոտորեաց զնոսա յաւուր շաբաթու։

426. Այպա այնուհետև ել հրաման յԱնտիոքայէ, զի ընդ ամենայն տեղիս տէրութեան իրոյ թողցեն ամենեքեան զօրէնս իւրեանց և պաշտեսցեն զդիս որ պաշտին 'ի Յունաստան։ Այլ Հրէից ուրոյն պատուիրէր դառնալ 'ի հեթանոսութիւն, և չմատուցանել զոհս Աստուծոյ իւրեանց, չպահել զշաբաթս և զտօնս տարեկանաց, այլ և փոխել զտաճարն 'ի պաշտօն կռոց, ուտել զխոզենի և զմիս զոհից։ Եւ որ ոչ կայցէ, ասէ, 'ի հրամանի թագաւորին՝ մահու մեռցի։ Նա անօրէնն կանգնել կուռս 'ի վերայ սեղանոյ տաճարին. յորմէ ամենք 'ի Հրէից դարձան յայլադաւանութիւն, և շատք անդրդուելի քաջութեամբ յանձն առին զամենայն տանջանս։ Ամսոյ ամիս 'ի խնդիր ելանէին ստոյկանք, և առ ումեք եթէ գտանէին գիրս կտակարանաց՝ մահու սպանանէին։ Գտին և զերկուս կանայս զորս վասն թլփատելոյ զորդիս իւրեանց՝ զատեանց նոցա կախեալ զմանկունսն՝ շրջեցուցին ընդ հրապարակս, ապա 'ի պարսպաց 'ի վայր հանեցին։

427. Եղիազար ոմն իննսնամեան ծերունի բռնադատեցաւ խոզենիս կամ զոհս պղծութեան մատուցանել կռոց, կամ գէթ ուտել զմիս արգելեալ յօրինաց։ Իսկ նորա անպարտելի քաջութեամբ ընտրեալ մանաւանդ զտանջանս և զմահ քան զկեանս խղճիւ, գիմէր ինքնակամ 'ի տեղի տանջանացն։ Տանջեցին չարաչար

զարի նահատակն պատուաւորք բանաւորին․ այլ նորա յօգուտ հանեալ առ Աստուած՝ փոխեցաւ յերկինս նովին քաջութեամբ ։

428. Այսպէս մատուցան 'ի տանջանս եօթն ծաղկահասակ եղբարք առաջի աչաց մօր իւրեանց Շամունեայ․ որ զքանչելի քաջութեամբ խրատէր զնոսա յանձն առնուլ զտանջանս վասն օրինացն սրբութեան ։ Սոքա զառաջինն հարուածեցան չարաչար առաջի Անտիոքոսի․ այլ ոչինչ հեծութիւն լսելի եղև 'ի բերանոյ նոցա։ Ապա իբրև մի 'ի նոցանէ խօսեցաւ համարձակ յանձն առնուլ զամենայն ազգ տանջանաց քան ժխտել օրինացն սրբութեան , հրաման ետ Անտիոքոս հուր վառել. և ետ նախ հատանել զլեզու նորա, և զմորթ գլխոյն գերծուլ և զերեսօքն դարձուցանել, զձեռսն և զոտս ծայրակատուր առնել առաջի աչաց մօրն և եղբարցն, և ապա 'ի ջեռուցեալ տապակ արկանել։ Զկնի առաջնոյն մատուցաւ երկրորդն 'ի նոյն տանջանս․ ապա երրորդն մինչև զվեցերորդն․ իւրաքանչիւր յօժարական դիմեցին 'ի տանջանս մահուն և անվեհեր համարձակութեամբ խօսէին առ բանաւորն և պարծէին յուսով միւսանգամ ծննդեան յարութեամբ մեռելոց 'ի լաւագոյն կեանս ։ Այլ առաւել քան զամենայն քաջ հանդիսացաւ մայրն․ զի փոխեալ զմայրենի գորովն յանխորտակելի արութիւն՝ մխիթարէր և արտասնգէր զորդիս իւր չերկնչել յանցաւոր տանջանաց , այլ յԱստուած հայել, որ ետ ըղ կեանս։ Ընկան տարածեցան 'ի դեանի կիսախոբով վեցեքին որդիքն նորա․ այլ նա կենդանի հաստատուն վառեալ 'ի յոյս յարութեան՝ եկաց անընկճելի 'ի կանացի գորովոյ և կսկծանաց ։

429. Կայր տակաւին որդին եօթներորդ կրսեր ։ Խոստանայր նմա բանաւորն բա-

զում ինչ՝ ցյամառել և չտալ զմանկութիւնն 'ի սանձահս եղբարցն: Այլ իբրև ետես, թէ չանսայ նմա, կոչեաց զմայրն և աղաչէր զնա խրատել զորդին՝ հնազանդել կամաց թագաւորին: Իսկ նա արհամարհեալ զանօրէն հրամանն՝ դարձաւ առ որդին և ասէ. Որդեակ իմ քաղցրիկ, լեր ուղեկից եղբարց քոց. երանի նոցա, երանի և քեզ, երանի և ինձ մօր ձերում, եթէ միաբան ամենեքեան վասն Աստուծոյն մերոյ գտցուք զկեանս: Իսկ այր պատանին գոչէր քաջութեամբ. Զի՞ կայք, զի՞ յապաղէք բաժանորդ առնել զիս մասին եղբարց իմոց: Ընդ որ առաւել կատաղեալ բռնաւորին՝ ետ կտտամահ սպանանել զնա, և ապա զմայրն: Ահա զայս օրինակ ելին նոքա քաջութեամբ յաշխարհէս՝ կանգնեալ հոգւով յաղթանակ 'ի վերայ բռնութեանն Անտիոքայ, և որ նմանն գործէր՝ սատանայի. և ներբողեցան յարանց սրբոց և պատուեցան յեկեղեցւոյ:

430. Զայնու ժամանակօք թագաւորեաց 'ի Հայս Վահէ որդի Վանայ զամս քսան և երկու. որ բազում քաջութեամբ ընդարձակեաց զտէրութիւն իւր: Այլ իբրև ել նա ընդդէմ Աղեքսանդրի Մակեդոնացւոյ անվեհեր յոխորտանօք, յետ բազում հարուածս գործելոյ 'ի թշնամիսն անկաւ 'ի պատերազմին. և աշխարհն եաց ընդ իշխանութեամբ Մակեդոնացւոյ. և բարձաւ թագաւորութիւն նախնի Հայկազանցն յետ անելոյ ամս հազար եօթն հարիւր եօթանասունեիննն [1]: Եւ յետ երից ամաց կարգեցաւ Միհրան՝ կուսակալ աշխարհին. ապա Նէոպտոլեմոս, Արդուարդ, Հրանտ, Արտաւազ. Արտաշաս, և Արտաւազդ:

1 Խորէն. Ա. 31 :

Ընդ այն ժամանակս ծաղկեցան Արիստարքոս տանեղաբաշխ, Մանեթոս պատմիչ և Արքիմեդէս երկրաչափ ։ Աննիբաղ սպարապետ Կարթագինեցւոց յաղթեալ 'ի Հռովմայեցւոց գայ 'ի Հայս։ Ըստ Եւսեբեայ՝ Հռովմայեցւոց եօթն թագաւորք կացեալ 'ի Հռոմուլոսէ մինչև ցՏարկուինիոս, այնուհետև դադարեցին. յետ թագաւորաց կային հիւպատք Բրուտեանք. ապա ռամկապետք, և դիկտատորք, և դարձեալ հիւպատք մինչև ցՅուլիոս կայսր։ Այս հասարակապետութիւն 'ի նմին ժամանակի տևեաց խաղաղ 'ի մէջոցի հինգհարիւր ամաց. ապա բազում աշխարհաց յետ երկերիւր ամաց ¹ ։

## ԳԼՈՒԽ Գ

### Մակաբայեցիք ։
Ա. Ա. 3837=3999

431. Մատաթի Հմաւոնեան իշխան փառաւոր 'ի կարգէ քահանայից՝ 'ի սկզբան անդ խռովութեանն եղելոյ յԵրուսաղէմ համօրէն տամբ իւրով չոգաւ նստաւ յամուրս այլից 'ի Մովդիմ քաղաք։ Նորա էին հինգ որդիք. Յովհաննէս Կադդիշ, Հմաւոն Թասսի, Յուդա Մակաբէ, Եղիազար Աւարեան, և Յովնաթան Ապփուս։ Սոքա առանձնացեալք 'ի Մովդիմ լային ընդ աւեր Երուսաղէմի, ընդ պղծութիւն տաճարին Աստուծոյ, և ընդ կործանումն բազմաց 'ի հեթանոսութեան։ Անդ եկին հասին սպասաւորք Անտիոքայ և տագնապէին զամենայն Հրեայս 'ի հեթանոսութիւն։ Բայց նախ մատուցեալ առ Մատաթի հրամայէին զնա

¹ Դիոդ. ԺԷ։ Ստրաբոն. Գիրք ԺԵ։ Յուստին. Ժ. ԺԱ։

մեծամեծ խոստմամբք հնազանդել Թագաւորին և զոհել դից ։ Իսկ նա համարձակութեամբ մերժէր զնոսա ասելով, թէ ես և որդիք և եղբարք իմ ըստ պատուիրանաց հարցն մերոց գնասցուք. ոչ անսամք հրամանի Թագաւորին և ոչ Թիւրիմք յաջ կամ յահեակ ։

432. Այն ինչ իբրև ստիպեալ լինէր յուրացութիւն. եւես նա ինքն զայր մի 'ի Հրէից անօր որ յառաջ եկեալ զոհս մատուցանէր առաջի կռոց, զոր կանգնեալ էին սպասաւորք Անտիոքոսի ։ Վառեցաւ Մատաթի 'ի նախանձ տեառն, և ընթացեալ զոտս արձակեաց էհար և սատակեաց զհրեայն առաջի բագնին ։ Նովին վրէժխնդրութեամբ սատակեաց և զայրն, որ ստիպէր զնա զոհս մատուցանել. կործանեաց միանգամայն զբագինն և զմեհեանն. ապա 'ի ձայն բարձր սկսաւ աղաղակել ամենայն քաղաքն. Եթէ ոք ունիցի զնախանձ փառացն Աստուծոյ ամենակալի, երթիցէ զհետ նորա։ Եւ ինքն թողեալ զամենայն՝ եւ անտի որդւովք իւրովք և գնաց ամրացաւ 'ի լերինս. բազումք գնային ընդ նմա, և այլք ըստ օրինակի նորա թողին ըմբնակութիւնս իւրեանց և չոքան ամրացան յանապատս ։

433. Այս ամենայն իբրև ազդ եղև Փիլիպպոսի վերակացուին Երուսաղեմի (425), վաղվաղակի առաքեաց զօրս 'ի վերայ ամրացելոց. որք նենգութեամբ իմն նախ խօսեցան խաղաղութիւն ընդ ամրացեալս 'ի գիւղի, և այն յաւուր շաբաթու. այլ իբրև տեսին՝ եթէ նոքա առ փափուկ պահելոյ զշաբաթն ոչ զկիրճան փակեցին և ոչ իսկ ետուն նոցա պատասխանի, սատակացուցին 'ի վերայ նոցա զպատերազմ և սպանին 'ի նոցանէ հարիւր ոգիս, և զոմանս 'ի գերութիւն վարեցին։ Իբրև լուան զայն Մա-

տութեանք տրտմեցան յոյժ, և խորհուրդ արարեալ հաստատեցին չելանել 'ի վերայ թշնամեաց յաւուր շաբաթու. իսկ եթէ նոքա յարիցեն 'ի վերայ ինքեանց, յայնժամ համարձակ մարտիցեն 'ի վերայ սուրբ կտակարանացն:

434. Իբրև լու եղև 'ի Հրէաստան՝ եթէ Մատաթի զօրաժողով լինի վասն օրինաց ընդդէմ Անտիոքոսի, ժողովեցան առ նա յամենայն կողմանց. եկն առ նա և գունդ մի ասխացի քաջ պատերազմականաց: Եւ զօրացեալ նոքօք Մատաթի արշաւէր 'ի վերայ թշնամեաց. սատակէր զուրացողս և զպաշտօնեայս անօրէնութեան. կործանէր զմեհեանս և զբագինս, և թլփատէր զմանկունս անթլփատս: Այսպէս զօրանայր յաջողութեամբ տեառն: Եւ յառաջ քան զմեռանելն իւր խրատեաց զորդիս իւր հաստատուն պահել զօրէնս տեառն և պաշտպան լինել փառացն Աստուծոյ և ժողովրդեան արեամբ չափ: Եւ զՇմաւոն զերկրորդ որդին հանճարեղ՝ կացոյց նոցա խորհրդական՝ լսել նմա իբրև հօր. իսկ զՅուդա զերրորդ որդին քաջ պատերազմական՝ կացոյց նոցա ասպարապետ առ պատերազմ ընդ թշնամիս տեառն. և ապա օրհնեաց զնոսա և կատարեցաւ: Եւ ամենայն Իսրայէլ սուգ առին և կոծեցան զնա կոծ մեծ:

435. Ամբարձաւ Յուդա Մակաբէ 'ի տեղի հօր իւրոյ զօրավար զօրաց, իշխան ժողովրդեան և քահանայապետ Աստուծոյ: Որ անդէն և անդ ժողովեալ զգնդականս իւր՝ գիշերադանց շրջէր և յինքն յանկուցանէր զբազումս, և կազմեալ գունդ վեց հազար արանց՝ արշաւէր նոքօք 'ի վերայ գիւղից և քաղաքաց, և կոտորէր զապստամբս յուխտից տեառն, և աւար հարեալ հրձիգ առնէր զտեղիս նոցա: Եւ լուեալ եթէ Ապողոնիոս իշխան Սամարիոյ՝ զօրաժողով

լինի ընդդէմ ինքեան, 'ի տէր յուսացեալ ել 'ի վերայ նորա, խորտակեաց զբանակն, և սպան զԱպողոնիոս, առեալ զսուսեր նորին և զաւար բազում: Սատակեաց ապա և զՍերէն իշխան զօրաց Ասորւոց, որ սաստիկ գնդաւ ել 'ի վերայ նորա: Այսու կրկին յաղթութեամբ փառաւորեցաւ Յուդա յոյժ յոյժ:

436. Զայս ամենայն լուեալ Անտիոքոս արքայ հեղձամղձուկ լինէր առ սրտին դառնութեան. և ժողովեալ անհամար զօրս և անբաւ գանձս՝ ետ Լիւսիասայ փոխարքային, յանձն արարեալ 'ի նա զորդի իւր զԱնտիոքոս. և ինքն խաղաց գնաց 'ի Պարսս առ 'ի ժողովել գանձս և նոքօք ջնջել զՅուդա: Իսկ Լիւսիաս վաղվաղակի ետ 'ի ձեռս Պտղոմէոսի քառասուն հազար հետևակս և եօթն հազար ձիս, և օգնական նմին զՆիկանովր և զԳորգիաս: Փիլիպպոս իշխան Երուսաղէմի ընդդէմ դեսպանս առաքէր առ Պտղոմէոս՝ հասանել յօգնութիւն ինքեան. և անդէն եկեալ գնացին առ նա երկու սպարապետք Նիկանովր և Գորգիաս: Իբրև լուաւ Յուդա զահեղ արշաւանս նոցա՝ դիմեաց առ Աստուած. և քաջալերեալ զիւր վեց հազարսն ել գիշերայն ընդ առաջ Գորգիասայ ընդ այլ ճանապարհ. և յեղակարծումն հասեալ 'ի թիկանց՝ եհար զզօրս նորա և զԳորգիաս փախստական արար առ փղշտացիս: Ընդ նմին եհաս և Նիկանովր. այլ անդէն խորտակեցաւ բանակ նորին 'ի զօրութենէ Յուդայ: Այս եղև երրորդ և չորրորդ յաղթութիւն Յուդայ:

Իսկ Նիկանովր՝ որ ածեալ էր ընդ իւր հազար վաճառականս, վաճառել նոցին ութսուն հազար մարդագերիս 'ի Հրէից անտի, ոչ միայն կորոյս զարքունի զօրս և զանբաւ կարասիս, այլ և զարծաթս վաճառականաց. և ինքն կորագլուխ

անկաւ յԱնտիոք, և քարոզէր ամենեցուն՝ եթէ Հրէից օգնական Աստուած է, որ անյաղթելիս առնէ զնոսա: Իսկ Հրեայք ժողովեալ զանբաւ գանձս դարձան 'ի տեղի իւրեանց, զի էր շաբաթամուտ: Ապա յետ շաբաթու հասեալ 'ի վերայ Տիմոթէոսի սպարապետին և Բակքիդեայ՝ հարին 'ի նոցանէ քսան հազար՝ որք միաբանեալ էին ելանել 'ի վերայ Յուդայ. յորում անկաւ և Տիմոթէոս: Այսու հնգերորդ յաղթութեամբ այնպէս հռչակեցաւ անուն Յուդայի, մինչև համօրէն շրջակայ ազգաց սարսեալ յահէ նորա՝ ոչ ոք իշխէր 'ի նոցանէ 'ի փոքր մարտի մտանել ընդ նմա: Յետ յաղթութեան բաժանորդս արար Յուդա աւարին զաղքատս զծերս և զանանկս, և ինքն չոքաւ յԵրուսաղէմ. և կենդանւոյն այրեաց զկալիսթենէս, որ յանդգնեցաւ այրել զդրունս տաճարին:

437. Իսկ Լիւսիաս լուեալ զչարաչար հարուածս արքունի զօրաց՝ մաշէր տրտմութեամբ. և ժողովեալ վաթսուն հազար հետևակս և հինգ հազար հեծեալս՝ ել 'ի վերայ Յուդայ 'ի միւս ամին: Իսկ Յուդա և որք ընդ նմա էին, պաղատեցին առ Աստուած այց առնել նոցա. և ընդ առաջ ելեալ թշնամեաց կոտորեցին ըզբազումս 'ի գնդէ անտի, և յայլս խուճապ արկեալ 'ի փախուստ դարձուցին:

Այնուհետև սուղ ինչ հանդարտեալ՝ կոչեաց Յուդա զամենայն քահանայս և զուխտապահ ժողովուրդս և խորհեցաւ մաքրել և սրբել զտաճարն 'ի հեթանոսական պղծութեանց: Եկին 'ի տաճար անդր և տեսին զայն ամայացեալ. որահք և գաւիթք նորա անտառացեալք. դրունքն այրեցեալք, սեղանն աղտեղեալ 'ի կռոց և ամենայն ինչ խանգարեալ: Սուգ առին ամենեքեան ընդ այն աղէտալի տեսարան: Ապա խրա_

խուսեալ այր զընկեր իւր՝ ձեռն արկին մաքրել զտեղին. զվէմս բագնեացն պղծութեան ընկեցին յաղբեւս. քակեցին զսեղանն ողջակիզաց և անդրէն շինեցին յանկոփ քարանց ըստ օրինաց. նոյնպէս շինեցին զսեղանն խնկոց և զաշտանակն՝ զոր յափշտակեաց Անտիոքոս (425): Ապա սկսան կատարել զպաշտամունս տեառն 'ի տաճարի անդ. արարին նաւակատիս սեղանոյն և տաճարին մեծաւ փառօք աւուրս ութ. և զայն հաստատեցին կատարել ամ ըստ ամէ:

Յետ այնորիկ կանգնեաց Յուդա զշրջապատ պարիսպս Երուսաղէմի հանդերձ աշտարակօք. ամրացոյց և զԲեթսուրա քաղաք ընդդէմ Եդովմայեցւոց: Ապա խաղաց 'ի վերայ Ամաղեկացւոց, եհար զնոսա, և առեալ զաւարս նոցին դարձաւ 'ի գաւառն Բանեայ. կալաւ զամրոցս նոցա, աւերեաց և զբանակս Ամոնացւոց. և դարձաւ փառաւորապէս 'ի Հրէաստան վեցերորդ յաղթութեամբ:

438. Յետ այնորիկ արար Յուդա և զայլ յաղթութիւն մեծ 'ի Գաղաադ. ուր արշաւեալ էր Տիմոթէոս զօրավարն Ամոնացւոց. զի եհար զնոսա չարաչար, և զՀրեայսն որ կային անդ՝ խաղացոյց 'ի Հրէաստան: Բազում աւարաւ զնոյն արար և Շմաւոն եղբայր նորա 'ի Գալիլեա: Դարձեալ արար Յուդա ընդ Յովնաթանու եղբօր իւրում մեծամեծ յաղթութիւնս ընդդէմ Ամոնացւոց՝ կործանելով զբազում քաղաքս նոցա: Սակայն ընդ անցանելն նորա ընդ Եփրոն քաղաք մեծ պարսպապատ՝ բնակիչքն ընդդէմ դարձան նմա: Իբրև ետես եթէ ոչ զիջանին նոքա 'ի խաղաղութիւն, յարձակեցան 'ի վերայ քաղաքին, և հասեալ 'ի ներքս՝ կոտորեցին զամենայն արու, և զքաղաքն հրձիգ արարին: Նա անտի ութերորդ և իններորդ յաղ-

Թուլթեամբ դարձան յԵրուսաղէմ. փառաւորելով զտէր զօրութեանց ։

439. Եւ լուեալ Անտիոքոս 'ի Պարսս զբեկումն զօրաց իւրոց՝ լի եղև խռովութեամբ. և մինչ շտապաւ հրաման տայր կառավարին արագ ժամանել յԵրուսաղէմ, առ 'ի բնաջինջ առնել զՀրեայս և հարթայատակ զտաճարն, անդէն կալան զնա ցաւագին խիթք որովայնի. և 'ի սաստկել զկառսն շրջեցաւ և անկաւ և խորտակեցան ոսկերք նորա։ Ի միտ առնոյր յայնժամ ամբարտաւանն զզօրութիւն բարձրելոյն իբրև տանէին զնա պատգարակաւ ։ Այնչափ սաստկացան ցաւքն և վէրքն, մինչև բոլոր մարմնոյն լինել որդնալից. և ոչ ոք մերձենայր 'ի նա 'ի նեխութենէ հոտոյն ։ Եւ յայնժամ բռնադատեցաւ խոստովան լինել, թէ չէ պարտ ստուածակելայ ձոխանալ, այլ հնազանդ լինել Աստուծոյ. ուխտս դնէր ձոխացուցանել զտաճարն. լինել եբրայեցի, և շրջել յամենայն տեղիս և քարոզել զմեծութիւնն Աստուծոյ։ Այլ 'ի վերայ այսր ամենայնի ոչ երևեցոյց ապաշաւ 'ի վերայ մեղաց իւրոց ։ Այս հրովարտակ գրէր առ ուրացող Եբրայեցիս՝ յանձնելով նոցա զորդի իւր զԱնտիոքոս Եւպատոր իբրև ժառանգ թագաւորութեան նորա ։ Եւ ետ փիլիպպոսի իշխանին զթագն, զպատմուճանն արքայական և զմատանին՝ տանել յԱնտիոք և թագաւորեցուցանել զորդին. և ինքն 'ի դժնդակ տանջանս փչեաց զհոգին յանմարդի լերինս ։

440. Յետ այսորիկ եղ Տիմոթէոս ամենայն անթիւ զօրօք 'ի վերայ Հրէից։ Յուդա յետ խնդրելոյ զվերին օգնականութիւն, իբրև պատրաստեցաւ 'ի պատերազմ, երևեցան նմա յերկնից հինգ հեծեալք սպառազէնք. որոց անցեալ 'ի գլուխ գնդի նորա՝ առին զՅուդա 'ի մէջ իւրեանց

'ի պաշտպանել, և ինքեանք իբրև զտարափ ար-ձակէին զնետս, և տապանին 'ի թշնամեաց զբա-զումս. և այսպէս եղեն աներեւոյթ:

Լիւսիաս լուեալ զկոտորածն զայն՝ ժողովեաց զօր բազում և եկն 'ի վերայ Հրէից: Իսկ Յուդա յետ պաղատելոյ սրտի մտօք առ Աստուած, ա-ռաքել ինքեան զհրեշտակ բարի յօգնութիւն, տեսս զի էջ երիտասարդ մի սպիտակաձի յա-կեղէն զէն վառեալ, որ պատրաստէր յարձա-կել 'ի վերայ թշնամեաց: Յորմէ խրախուսեալ ամենեցուն յարձակեցան քաջաբար 'ի վերայ անօրինաց, զոմանս կոտորէին և զայլս 'ի փա-խուստ դարձուցանէին: Իսկ Լիւսիաս խոնար-հեալ առաջի Յուդայ՝ յանձն էառ հաճել զթագաւորն և տալ նմա ստորագրել ամենայն պայմանաց, զոր ինչ և պահանջեսցէ Յուդա. և առեալ գրով զխնդիրսն մատոյց արքային: Ըն-կալաւ Յուդա զոր ինչ և կամեցաւ. ուր առա-ջին պայմանն էր թողուլ Հրէից 'ի պաշտամունս կրօնի իւրեանց:

441. Յուդա զկնի այլ ևս բազում պատե-րազմաց և յաղթութեանց, որ 'ի հիացումն են ամենայն աշխարհի, պաշարեաց զմիջնաբերդն Երուսաղէմի, ուր էին զօրք թշնամեաց: Ան-տիոքոս պատրաստեցաւ ծանր զօրու եկանել ընդդէմ նորա 'ի գրգռելոյ անօրէնն Մենեղա-ւոսի (425) և այլոց ուխտադրուժ Հրէից: Այլ ինքն Մենեղաւոս չեհաս երազայոյս իշխա-նութեանն զոր ցանկայր գտանել 'ի թագաւորէն. զի ամբաստանեալ 'ի Լիւսիայ վասն անօրէնու-թեանց՝ հրամանաւ թագաւորին արկաւ 'ի բարձր աշտարակէ 'ի մոխրակոյտն և սատակեցաւ: Իսկ Յուդա լուեալ զգալուստ Անտիոքայ խա-ղաց ընդ առաջ նորա. և գիշերայն մտեալ 'ի բա-նակ նորին խառնեցոյց զնոսա. և 'ի հեռանալ

տաստասու անդրէն յարձակել 'ի վերայ նոցա՝ զլաղումն կատարեաց ։ Ընդ եղբայր նորա Եղիազար Աւարեան եւս փիղ մի 'ի զարդ արքունի զարդարեալ. և յաջ և յահեակ կոտորելով յարձակեցաւ 'ի վերայ նորա՝ համարելով թէ արքայն 'ի նմին իցէ. և մտեալ 'ի ներքոյ նորա մխեաց զսուրն 'ի փոր նորին և անդէն սատակեաց զփիղն ընդ փղապանին. բայց փիղն անկեալ 'ի վերայ նորա ճմլեաց զնա ։ Զարհուրեցան թշնամիք զքաջ առեալ զօրութեան Հրէից. և Անտիոքոս դարձուցեալ զզէնս յայլ և այլ կողմանս՝ չկարաց խափան նկուն առնել զՅուդա և զգունդն նորա. և զի գոյժ ապստամբութեան Մակեդոնիոյ եհաս առ նա 'ի նմին ժամու, փութարկեցոյց զմարտն և խօսեցաւ 'ի հաշտութիւն ընդ Յուդայ հանդերձ երդմամբ ։

442. Ապա չոքաւ յԵրուսաղէմ տեսանել զտաճարն և զբերդն Յուդայ, եւեթ և զարմացաւ ընդ մեծագործութիւն տաճարին, զոր մեծարեաց բազում պատարագօք, և ապշեցաւ ընդ ամրութիւն բերդին. ապա առեալ զՅուդա զամենայն առաջնութիւն երկրին 'ի Պտղոմայիդայ մինչև ցԳերարա՝ դարձաւ յԱնտիոք ։ Ընդ այն զԱնտիոքոս Դեմետր հօրեղբօրորդի իւր, և ինքն եկաց թագաւոր ։ Առ սա չոքաւ Ալկիմոս ուրացող քահանայ, և առնել զքահանայապետութիւնն չոքաւ զօրօք յԵրուսաղէմ ընդ Բաքքիդ իշխանին. իսկ Յուդա հասեալ 'ի վերայ՝ հալածական արար զԱղկիմոս, որ ըն դառնութեամբ չոքաւ յԱնտիոք չարախօս լինել զՅուդայէ ։ Դեմետր արքայ յղեաց բարկութեամբ առաքեաց զՆիկանովր 'ի վերայ Յուդայ. որոյ եկեալ նախ նենգութեամբ ընդ խօսեցաւ խաղաղութիւն, և ապա ոտնխառնեալ ընդ Յուդայի՝ ընկալեալ մէջ մեռաւ հաւատարիմ ընդ

նմա ։ Զայն իբրև լուաւ արքայ մատնութեան Աղկիմոսի, հրաման եհան առ Նիկանովր՝ կապեալ ձեռօք և ոտիւք ածել զՅուդա յԱնտիոք. յորմէ դարձեալ ծագեցաւ ատելութիւն 'ի մէջ նոցին. և Յուդա խոյս ետ առ ժամն և առանձնացաւ ։

443. Յայնժամ ամբաստանեցաւ Հռազիս երևելի իշխան Հրէից՝ աստուածասէր և բարեպաշտ, հայր Եբրայեցւոց կարգացեալ։ Նիկանովր առաքեաց զօրս յաղագս նորա ունել զնա ։ Իսկ նա յետ մարտնչելոյ 'ի ներքուստ անտի, իբրև հրձիգ առնէին զդրունսն՝ ընտրեաց աղաօրէն մեռանել քան 'ի ձեռս թշնամեաց տեան անկանել։ Վասն որոյ սուր մխեալ յորովայն իւր ընկէց զինքն 'ի պատուհանէն 'ի վայր. և ա՛ արկեալ 'ի թշնամիս ինքնակամ մահուամբ իւրով ել 'ի վերայ վիմի միոջ, եհան 'ի գիրկս զաղիս իւր, եցոյց 'ի վեր յերկինս, և կարդաց զՏէր հատուցանել զնոյն հատուցումն ։ Եւ նա զայս օրինակ յուսով փրկութեան իւրոյ քաջութբ փոխեցաւ յաշխարհէ ։

444. Լուեալ Նիկանովրայ եթէ Յուդա է 'ի կողմանս Սամարիայ, ել 'ի վերայ նորա ։ Իսկ Յուդայի երևութանայր յերազի Ոնիա սուրբ քահանայապետ կացեալ յաղօթս վասն ժողովրդեան. ընդ նմա և Երեմիա մարգարէ, որ կայր յաղօթս վասն Հրէից և վասն սուրբ քաղաքին, և ետ նմա սուսեր մի ոսկեզարդ՝ ասելով ~ Առ զսուսերդ զայդ սուրբ պարգև 'ի Տեառնէ. դովաւ յաղթեսցես թշնամեաց ժողովրդեան Իսրայէլի ։ Զոր լուեալ զօրացն Յուդայ՝ քաջալերեալ յարձակեցան առիւծաբար. հարին նախ զՆիկանովր և երեսուն և հինգ հազար ընդ նմա, և զայլսն ամենայն 'ի փախուստ դարձուցին ։ Փող եհար Յուդա, և ընդ առաջ ե-

լին փախստէիցն բազմութիւն Հրէից և կոտո_
րեցին զնոսա։ Իսկ Յուդա ետ հատանել զգլուխ
Նիկանովրայ և զաջ բազուկն հանդերձ թի_
կամբն. այլ զհայհոյիչ լեզուն, որով հայհոյեաց
զԱստուած և զտաճարն, ետ մանր մանր կարա_
տել և արկանել 'ի կեր թռչնոց։ Եւ այսպէս
վճարեալ զգործն՝ ամենեքեան 'ի ձայն բարձր
օրհնէին և գովէին զարարիչն. և զայն օր կար_
գեցին 'ի տօնս տարեկանաց ամի ամի կատարել։

445. Յետ այսր ամենայնի սա անդորր պա_
հելոյ Յուդա զազգ իւր 'ի թշնամեաց՝ արար
դաշնադրութիւն ընդ Հռովմայեցւոց. սակայն
ձախողակի դէպք եկին յաճախեցին մի ըստ
միոջէ։ Քանզի արքայ Դեմետր առաքեաց 'ի
Հրէաստան բազում զօրս ընդ Բաքիդեայ և ընդ
Աղկիմոսի. որք իբրև 'ի գլուխ հարան գնդին
Հրէից, մեծ մասն զօրաց Յուդայ փարանջե_
ցին 'ի նմանէ։ Խորհուրդ ետուն նմա զօրավարք
նորա խոյս տալ 'ի ժամուն. այլ զի չգիտէր նա
բնաւ թիկունս դարձուցանել, խրախոյս տայր
ամենեցուն մեռանել վասն եղբարց՝ նուիրելով
զանձինս 'ի կամս Աստուծոյ։ Եւ ինքն մար_
տեաւ քաջութեամբ յայգուէ մինչև ցերեկոյ,
եհար և ցրուեաց զաջ թև թշնամեացն. և իբրև
մարտ գնէր և ընդ ձախոյ թևին, շրջապատեալ
'ի բազմութենէ անտի՝ անկաւ և ինքն քաջ
նահատակն, կացեալ յիշխանութեան ամս վեց։
Իսկ Յովնաթան և Շմաւոն եղբարք նորա բար_
ձին զմարմին նորա և տարեալ փառօք թաղե_
ցին 'ի շիրիմս հարց իւրեանց 'ի Մոդիիմ. և ող_
ջերն Իսրայէլի կոծեցան կոծ մեծ 'ի վերայ նո_
րա աւուրս բազումս։ Յետ սակաւուց ըմբռնե_
ցաւ և Յովհաննէս եղբայր նորին և սպանաւ 'ի
տանելն զէնս առ Յովնաթան։

446. Յայնժամ ժողովեցան բարեկամք Յու_

գայ առ Յովնաթան և խնդրեցին լինել նոցա առաջնորդ։ Յանձն էառ Յովնաթան և կալաւ զօրհականն շաւիղ եղբօր իւրոյ՝ հաստատելով զյոյս իւր առ Աստուած։ Առաջին յաղթութիւն արար Յովնաթան սատակելով զորդիս Ամբրեայ, որք սպանին զՅովհաննէս եղբայր իւր, և փախստական արար զԲակքիդ. իսկ Աղկիմոս երբև հրաման տայր քակել զպարիսպ ներքին սրբութեանց՝ պատուհասեցաւ 'ի տեառնէ, և պապանձեալ չարաչար սատակեցաւ։ Յետ այսորիկ եկն Բակքիդ 'ի վերայ Յովնաթանու. այլ անդրէն կորագլուխ յետս դարձաւ՝ կատարելով զամենայն կամս նորա։ Իսկ Դեմետր կասկածեալ թէ գուցէ Աղեքսանդր հօրեղբօրորդի իւր, որ զօրացեալն էր յայնժամ, դաշինս կապեսցէ ընդ Յովնաթանու, հրովարտակ խաղաղութեան առաքեաց առ Յովնաթան, տալով նմա իշխանութիւն մեծ, և բարեկամ արքայի կոչելով զնա։ Գիտէր Յովնաթան եթէ պատիւն այն ոչ առ 'ի սիրոյ և յարգութեան ինչ էր, այլ առ երկիւղի. սակայն և այնպէս վարեցաւ իմաստութեամբն զոր ընկալաւ։

447. Այլ նորին Աղեքսանդրի պարգևքն առաւել եղեն քան զԴեմետրեայն. զի հրովարտակաւն զոր առաքեաց առ Յովնաթան, ոչ միայն բարեկամ և դաշնադիր արար զնա ինքեան, այլ և ետ հրաման, զի թէ կամեսցի՝ կրեսցէ և զանուն թագաւորի. և առ 'ի ցոյց հրամանին յղեաց առ նա արքունի նշանս, պսակ ոսկի և պատմուճան ծիրանի։ Ընկալաւ Յովնաթան և 'ի հանդիսաւոր տօնին տաղաւարահարաց զգեցաւ զայն. ընդ որ ուրախ լինէին ամենեքին։ Յետ այսորիկ արար Յովնաթան նշանաւոր յաղթութիւն ընդդէմ Դեմետրեայ որդւոյ առաջնոյն Դեմետրեայ. զոր լուեալ Աղեքսանդրի՝

դարձեալ առաքեաց առ նա չինգղ ոսկի 'ի նըշանակ մեծի պատուոյ, զոր կրէին եղբարք ևեթ Թագաւորի. և ետ նմա զԱկկարոն 'ի ժառանգութիւն ։

448. Զայնու ժամանակաւ Տրիփոն ոմն զօրաւոր զօրացեալ Թագաւորեցոյց զպատանեակն Անտիոքոս զորդի Աղեքսանդրի արքային ։ Սա բարեկամացեալ ընդ Յովնաթանու ետ նմա իշխանութիւն արկանել ծիրանիս և կրել չինգղ. յաւել առաքել և ոսկի նուագս և սպասս աճարին 'ի պարգև, և զՇմաւոն կացոյց իշխան 'ի վերայ կողմանց ծովեզերաց ։ Արդ զօրացեալ Յովնաթան կալաւ զԱզովտոս և զԳազա և մինչև ց'Դամասկոս ։ Ի Ճակատամարտի ուրեք ընդ այլազգեաց անկաւ յորոգայթ նոցա հանդերձ երկու քօշ զօրավարօք. և այն ինչ զկորուստն մահառիթ առ ետեղ տեսանէր, աղաղակեաց առ Տէր և յարձակեցաւ 'ի վերայ բանակի նոցա, էլից արհաւրօք զամենեսին և 'ի փախուստ դարձոյց, և անտի դարձաւ մեծաւ փառօք յԵրուսաղէմ ։

449. Յետ այսորիկ առաքեաց Յովնաթան հրեշտակս 'ի Հռովմ և 'ի Սպարտա՝ հաստատել զուխտ հաշտութեան ընդ նոսա ։ Կատարեցան դաշինքն. այլ ինքն չվայելեաց յերկար յարգիւն հաշտութեանն ։ Քանզի Տրիփոն որ խորհէր թագաւորել Ասիացւոց, և զնա ինքն Յովնաթան ևեթ տեսանէր խոչընդոտն յառաջադիմութեան իւրոյ, չոքաւ առ նա իբրև բարեկամ դաշնակից, և յայտնեաց նմա դաւով եթէ եկեալ է առ 'ի ձեռս նորա զքաղաքն Պտղոմայեցւոց. և հրաւիրէր զնա անցանել ընդ իւր 'ի Պտղոմայիս ։ Հաւատաց Յովնաթան, և արձակեալ յիւրմէ զզօրս՝ հազարաւ ևեթ եմուտ 'ի քաղաքն անդր. և նոյն ժամայն փակեցան դրունք քա-

ղաքին, և ինքն մնաց անդէն գերեալ, և հա-
ւարքն մատնեցան 'ի ճարակ սրոյ։ Իբրև եհաս
լուրն յԵրուսաղէմ, սուգ մեծ առին ամենե-
քեան. իսկ Շմաւոն ժողովեալ զծերակոյտ ժո-
ղովրդեանն՝ ընտրեցաւ նոցա զօրագլուխ և իշխան,
և անդէն խաղաց 'ի վերայ Տրիփոնի, որ գայր
հարկանել զԵրուսաղէմ։ Տրիփոն հրեշտակս ա-
ռաքեալ նենգութեամբ խնդրեաց 'ի նմանէ հա-
րիւր քանքարս և զերկուս որդիս Յովնաթանու,
զի արձակեսցէ զՅովնաթան։ Ծանեաւ Շմաւոն
զնենգութիւն նորա. այլ սոսկեալ 'ի ժողովր-
դենէ՝ առաքեաց։ Իսկ անօրէնն առեալ և սպան
'ի ճանապարհի զՅովնաթան և զերկու որդիս
նորա, և ետ թաղել զնոսա անդ։ Եւ տիրեաց
Յովնաթան ամս ինն։

450. Իսկ Շմաւոն բարձեալ անտի զմարմինս
նոցա մեծաւ հանդիսիւ փառօք եդ 'ի շիրիմս հարց
իւրոց 'ի Մոդիիմ. և կանգնեաց 'ի վերայ գե-
ղեցկաշէն բրգունս և պէսպէս քանդակս վան-
դակապատս, որ հրաշակերտ երևէր 'ի ծովէ։
Շմաւոն առաջնորդութեամբն որ քան զոր յա-
ռաջագէմ եղեալ տիրեաց և միջնաբերդին Ե-
րուսաղէմի, և խաղաղացոյց զհրէաստան։ Ա-
կոյն յետ կորստեան Տրիփոնի յերևաց Անտիո-
քոսի որդւոյ Դեմետրեայ, առաքեաց նա ինքն
Անտիոքոս զօր բազում 'ի վերայ Երուսաղէմի։
Այլ որդիք Շմաւոնի Յովհան և Յուդա անդէն
հալածական արարին զնոսա, և քաջ հանդիսա-
ցան յամենայնի։

Շմաւոն հրեշտակս յղեաց 'ի Հռովմ և վահան
ոսկի՝ նորոգել զառաջին դաշնակցութիւն ընդ
նոսա. այլ Աստուած ոչ հաճեցաւ և ընդ այս
ապաւինութիւն յուսոյս. որով եհաս նմա վախ-
ճան կենաց և որդւոց նորա անօրէն դաւաճանու-
թեամբ փեսային իւրոյ Պտղոմէոսի կարգելոյ

'ի նմանէ իշխան 'ի վերայ Երիքովի եւ համօրէն գաւառի նորա: Քանզի 'ի շրջել Շմաւոնի ընդ երկուց որդւոց իւրոց յայցելութիւն գաւառացն՝ էջ յԵրիքով, ուր փեսայ նորա արար նմա ճաշ մեծահաց 'ի Դոք գեղջ իւրում, եղեւ միանգամայն 'ի դարանի արս որսկայս: Իբրեւ կերան եւ արբին, յարեաւ Պտղոմէոս թագուցելովքն եւ սրախողխող արար զՇմաւոն եւ զերկոսին որդիս նորա, եւ զծառայս ընդ նմա: Եկաց Շմաւոն յիշխանութեան իւրում յետ Յովնաթանու ամս ութ:

451. Եւ ապա գրեաց անօրէնն Պտղոմէոս առ արքայն Անտիոքոս՝ հասուցանել առ նա զօրս. եւ առաքեաց զօրականս ըմբռնել զՅովհաննէս զորդի Շմաւոնի: Այլ նորա իմացեալ սպան զնոսա, եւ ինքն ամրացաւ ուրեք. եւ քաջութեամբ յաջորդեաց զքահանայապետութիւն եւ զիշխանութիւն հօր իւրոյ. որ եւ կոչեցաւ Հիւրկանոս. եւ զօրացաւ ընդդէմ Թշնամեաց հանդերձ արութեամբ, մանաւանդ ընդդէմ Անտիոքոսի. որոյ խոնարհեալ ապա եկաց բարեկամութեամբ ընդ Յովհաննու մինչեւ ցմահ իւր: Իսկ Յովհաննէս ընդարձակեալ զսահմանս Հրէաստանի՝ վարեաց զիշխանութիւն իւր զամս քսանեւինն եւ մեռաւ, թողեալ որդիս հինգ:

452. Արիստաբուղոս յաջորդեաց զկնի մահուան հօր իւրոյ Յովհաննու: Սա եղեւ առաջին՝ որ անուանեցաւ թագաւոր եւ քահանայապետ. եւ տիրեալ ապա Եդովմայեցւոց՝ ստիպեաց զնոսա եւ դարձոյց 'ի հրէութիւն: Սակայն յետ միոյ ամի մեռաւ. եւ թագաւորեաց Յաննէոս եղբայր նորա, որ եւ կոչեցաւ Աղեքսանդրոս Ա: Սա թէպէտ քաջութեամբ ընդարձակեաց զտէրութիւն իւր, բայց սակս անկարգութեան եւ անողորմ բռնակալութեան իւրոյ ա-

տեղի եղև ազգին. և Թագաւորեալ ամս քսան և եօթն մեռաւ. և յանձնեաց զԹագաւորութիւն իւր Աղեքսանդրայ կնոջ իւրում: Սա յետ տիրելոյ և կառավարելոյ իմաստութեամբ ամս ինն, մեռաւ:

453. Զկնի նորա յաջորդեաց Հիւրկանոս որդի իւր. որոյ անբաւական լեալ զօրութեամբ՝ չկարաց տիրապետել զիշխանութիւնն. իսկ եղբայր նորին Արիստաբուղոս այր յանդուգն էր ՚ի վերայ եղբօր իւրոյ, և ընկճեալ զնա էառ զԹագաւորութիւն և զքահանայապետութիւնն, և նմա Թոյլ ետ նստել ՚ի տան իւրում: Սորա առաքեցին հրեշտակս առ Պոմպէոս մեծ սպարապետ Հռովմայեցւոց, որ էր ՚ի կողմանս Ասորեստանի, և խնդրեցին գալ որոշել զդատ իւրեանց: Եւ նորա եկեալ յԵրուսաղէմ հաստատեաց զիշխանութիւնն Հիւրկանոսի. և հարկատու կացուցեալ զՀրեայս Հռովմայեցւոց՝ դարձաւ յաղԹանակաւ ՚ի Հռովմ, տարեալ ընդ իւր զԱրիստաբուղոս կապանօք և զորդիս նորա: Իսկ Արիստաբուղոս զկնի ութ ամաց փախուցեալ ՚ի բանտէ եկն ՚ի Հրէաստան. այլ անդրէն ըմբռնեալ գերի վարեցաւ ՚ի Հռովմ. և Հիւրկանոս վարէր զիշխանութիւն իւր ընդ Անտիպատրոսի աւագանւոյն իշխանին, որոյ երկու որդիք Հերովդէս և Փասայել մտին ՚ի վարչութիւն աշխարհի և զօրացան:

454. Անտիգոնոս որդի Արիստաբուղոսի դիմեալ առ Բարզափրան մեծ սպարապետ Տիգրանայ Հայոց արքայի՝ չոքաւ զօրօք նորա յԵրուսաղէմ: Եւ ետ հատանել կամ կորզել ատամամբք իւրովք զականջս Հիւրկանոսի, զի մի այլ ևս կարասցէ լինել քահանայապետ ըստ օրինաց. զոր և ածին ՚ի Հայաստան առ Տիգրան: Իսկ Հերովդէս փախեաւ ՚ի Հռովմ. և անդի

զօրք Հռովմայեցւոց դարձ տարեալ յԵրու-սաղէմ պատերազմեցան ընդ Անտիգոնոսի ամս երիս: Ապա հուսկ յետոյ յաղթեալ Անտիգո-նոս 'ի զօրաց Անտոնիոսի սպանաւ յԱնտիոք. որ և եղև վերջին իշխան 'ի ղեւտական ցեղէ Մակաբայեցւոց. որոց իշխանութիւն տևեաց իբր ամս հարիւր և երեսուն:

Իսկ Հերովդէս Թագաւորեաց յԵրուսաղէմ. ոչ յիրաւանց ինչ ժառանգեալ զիշխանութիւնն զայն. այլ 'ի բռնութենէ Հռովմայեցւոց. յոր-մէ և Հրեայք անկան այնուհետև ընդ իշխանու-թեամբ նոցա. որք և զՀրեաստան բաժանեցին 'ի չորրորդապետութիւնս (460): Եւ այսպէս պակասեցաւ տիրապետական իշխանութիւն 'ի տանէն Յուդայ և յիսրայէլէ ըստ մարգարէու-թեան Յակոբայ նահապետին' որ ասաց. « Մի պակասեսցէ իշխան 'ի Յուդայ և մի՛ պետ յե-րանաց նորա՝ մինչև եկեսցէ նա, որոյ իւրն է հան-դերձեալքն. և նա է ակնկալութիւն հեթանո-սաց »[1]: Եւ ահա յետ երեսուն և երեք ամաց ծնաւ փրկիչն աշխարհի:

455. Ընդ այն ժամանակս ծագեցան աղանդք Փարիսեցւոց և Սադուկեցւոց. անուն Փարիսե-ցւոց առեալ եղև 'ի քաղաքէ անտի, յոր էին նոքա զառաջինն, և հրաժարէին 'ի հասարակաց ըն-կերութենէ՝ դաւանելով մասնաւոր իմն սրբու-թիւն. և էին ինքեանք որք փառասէրք և ախ-տաւորք: Իսկ աղանդ Սադուկեցւոց էր հա-կառակ Փարիսեցւոց. զի ոչ ընդունէին զհո-գի. ոչ զհրեշտակ և ոչ զյարութիւն մեռելոց. սոքա պնդէին ունել զծագումն 'ի Սադովկայ. ոչ զոհէին 'ի տաճարին և ոչ հետևէին օրինացն Մովսէսի: Սամարացիք ձայնակից էին մոլորու-

1 Ծն. ԽԹ. 10:

թեանց սոցա և ոչ խառնակէին ընդ Հրեայս :

456. Զայնու ժամանակաւ Արշակ Ա. Պարթև իշխան 'ի սերնդոցն Աբրահամու՝ եկեալ 'ի կողմանցն Քուշանաց թագաւորէ 'ի Պարս. զոր յաջորդէ Արտաշէս , և ապա Արշակ Բ. որոյ եղբայրն Վաղարշակ այր իմաստուն թագաւորէ 'ի վերայ Հայոց ամս քսանևերկու : Առ որով դադարեաց իշխանութիւն կուսակալութեան Մակեդոնացւոց , և սկիզբն կալաւ թագաւորութիւնն Արշակունեաց : Վաղարշակ արար բազում բարեկարգութիւնս . հաստատեաց զնախարարութիւնս, և եդ զաթոռն 'ի Մծբին : Ապա յետ հայրաբար խնամելոյ զազգն մեր , թողեալ զթագաւորութիւնն որդւոյ իւրում Արշակայ . որոյ տիրեալ բազում աշխարհաց՝ ընդարձակեաց զտէրութիւն իւր : Զսա յաջորդեաց Արտաշէս , և ապա Տիգրան . որոյ մեծապէս զօրացեալ ահարկու հանդիսացաւ ամենայն ազգաց , մանաւանդ յետ հաստատելոյ 'ի թագաւորութեան Պոնտոսի զմեծն Միհրդատ զքեռայր իւր: Ապա թագաւորեաց Արտաւազդ որդի Տիգրանայ . ապա Արշամ, և ապա Աբգար :

457. Ի նմին ժամանակի Յուլիոս Կեսար երեքն զօրապետ Հռովմայեցւոց միացեալ ընդ Պոմպէոսի և ընդ Կրասոսի՝ բաժանեցին 'ի մէջ իւրեանց զտէրութիւն աշխարհին համօրէն : Կրասոս չոգաւ յԱսիա , և յաղթեալ 'ի Պարթևաց սպանաւ . Պոմպէոս կալաւ զՍպանիա և զԻտալիա . իսկ Կեսար արար պատերազմ 'ի Գաղղիա , և տիրեաց Գերմանիոյ, և ապա մեծին Բրիտանիոյ . մինչև նախանձելի լինել Պոմպէոսի և ծերակուտին : Հալածական արար զՊոմպէոս , և յաղթական հանդիսացեալ յԱփրիկէ և յամենայն կողմանս աշխարհի՝ դարձաւ փա-

ւոր 'ի Հռոմ, և եղև առաջին ինքնակալ կայսրր, քառասուն և եօթն ամբ յառաջ քան զՔրիստոս: Սակայն զկնի հնգից ամաց սպանաւ 'ի խորհրդարանի անդ, և եթող ժառանգ կայսերութեան զՈկտաւիանոս, որ ապա կոչեցաւ Օգոստոս կայսր, և զվեցերորդ ամիսն յիւր անուն անուանեաց Օգոստոս:

458. Յայնմ ժամանակի Ասորիք տեսեալ եթէ յաջորդք Աղեքսանդրի բազում արեան հեղութեամբ յաջորդեն միմեանց, երեսս դարձուցին 'ի Թագաւորաց իւրեանց, և եդին հպատակ Տիգրանայ Հայոց արքայի. և ահա ասեն վերջ եղև Թագաւորութեան Սելեւկիացւոց:

Յայնժամ ծաղկեցան 'ի Հռոմ Վիրգիլիոս, Կիկերոն, Ովրատիոս և Ովիդիոս [1]:

## ԴԻՊՔ ՎԵՑԵՐՈՐԴԻ ԴԱՐՈՒՆ

Ամ. աշխ.

3468. Ազատութիւն Հրէից 'ի գերութենէ:
3489. Շինութիւն տաճարին 'ի Զօրաբաբելէ:
3530. Տէրութիւն Յունաց էանց յԱթենացիս 'ի Սպարտացւոց:
3537. Եզրաս առաքի յԱրտաշիսէ յԵրուսաղէմ:
3550. Նեեմի շինէ զպարիսպս Երուսաղէմի:
3568. Երոդոտոս վիպագիր:
3572. Մետոն աթենացի կարգէ զիննևտասանեբեակն:

[1] [illegible] 4. 6 [illegible]

3648. Աղեքսանդր մեծ՝ ծնանի, և տիրէ 'ի հա-
սակի քսան ամաց։

3672. Բառնի թագաւորութիւն Հայկազանց։

3681. Աղեքսանդր մեռանի, թագաւորեալ
ամս երկոտասան։

3727. Թարգմանեն զԱստուածաշունչն եօթա-
նասունք։

3817. Արտաշատ քաղաք շինի։

3836. Բառնի թագաւորութիւն Մակեդոնա-
ցւոց։

3838. Յուդա Մակաբէ առաջնորդ կարգի։

3859. Վաղարշակ կարգէ զնախարարութիւնս

3875. Արշակ Նուաճէ զՊոնտացիս, և տայ
զՊարոս։

3892. Ծագին աղանդք Հրէից՝ Եսսէանց, փա-
րիսեցւոց և Սադուկեցւոց։

3911. Միհրդատ եկաց թագաւոր Պոնտոսի։

3912. Տիգրան Բ. տիրէ թագաւորութեանց,
և յետոյ բառնայ զտէրութիւնն Սե-
լեւկիացւոց։

3941. Մահ մեծին Միհրդատայ։

3951. Սկիզբն կայսերութեան Հռովմայ։

3951. Կրասոս յաղթի 'ի Պարթևաց։

3962. Կիկերոն սպանանի։

3964. Հիւրկանոս քահանայապետ գերի։

3967. Հերովդէս թագաւորէ։ Եւ սկիզբն թը-
ւականին Սպանիացւոց։

3974. Բարձումն թագաւորութեան Եգիպտա-
ցւոց։

3984. Տիգրան փոքր 'ի վերին Հայս տիրէ։

3999. Աբգար թագաւոր յաջորդէ զհայր իւր
զԱրշամ։

## ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ

### Քահանայապետաց Հրէից ։

Առ հնախօսս չէք որոշ ժամանակ քահանայապետացն Հրէից. զի Եւսեբիոս դնէ 'ի ժամանակագրութեան իւրում զԱհարոն յամի Աբրահամու ՇԺԱ ։ Ապա թողեալ զԵղիազար դնէ զփենեէս 'ի ՇՀԸ. յետ որոյ զՀելի յամի ՊԿ. ապա զՍամուէլ 'ի Ջ. և ապա զԱբիաթար 'ի ՋԽԹ։ Իսկ զՍադովկ 'ի ՋՂԷ հաշուելով ութերորդ յԱհարոնէ. ապա կարգէ զԱբիմելէք 'ի ՌԽԲ և զՅովիդայէ 'ի ՌՃԻԵ ։ Բայց Սամուէլ երեց ժողովեալ 'ի գրոց Մնացորդաց առանց ժամանակի այլ ազգ դասակարգէ զնոսա մինչև ցՅովսեդեկ և անդր. ըստ որոյ և մեք կարգեսցուք. ապա յետ այնորիկ նշանակեսցուք և զժամանակն ։

Ա. Ահարոն.
Բ. Եղիազար Ա.
Գ. փենեէս.
Դ. Աբիուդ.
Ե. Բոքքի.
Զ. Ոզիա.
Է. Զարեա.
Ը. Մարիովթ.
Թ. Ամարիա.
Ժ. Աքիտովբ.
ԺԱ. Սադովկ.
ԺԲ. Աքիմաաս.

ԺԳ. Ազարիա Ա.
ԺԴ. Յովնան.
ԺԵ. Ազարիա Բ.
ԺԶ. Ամարիա.
ԺԷ. Աքիտովբ.
ԺԸ. Սադովկ.
ԺԹ. Եղիում.
Ի. Եղքիա.
Ամ աշխ. ԻԱ. Զաղարիա.
ըստ ժամ. ԻԲ. Զարեհ.

3439. ԻԳ. Յովսեդեկ գերի վարեալ.
3468. ԻԴ. Յեսու Յովսեդեկեանց.
3498. ԻԵ. Յովակիմ.
3546. ԻԶ. Եղիասիբ.
3568. ԻԷ. Յովադէ.
3590. ԻԸ. Յովնաթան Ա.
3634. ԻԹ. Յադդուա.
3681. Լ. Ոնիաս Ա.
3702. ԼԱ. Սիմոն Ա.
3716. ԼԲ. Եղիազար Բ.
3749. ԼԳ. Մանասէ.
3761. ԼԴ. Ոնիաս Բ.
3772. ԼԵ. Սիմոն Բ.
3818. ԼԶ. Ոնիաս Գ.
3829. Յասոն.
3832. Մենելաոս.
3834. Լիւսիմաքոս.
3842. Ալկիմոս.
3852. ԼԷ. Յովնաթան Բ.
3861. ԼԸ. Շմաւոն.
3869. ԼԹ. Յովհաննէս Հիւրկանոս.
3898. Խ. Արիստաբուղոս Ա.
3899. ԽԱ. Աղեքսանդրոս Յաննէոս.
3926. ԽԲ. Հիւրկանոս.

3938. ԽԴ. Արիստաբուղոս Բ.
5941. ԽԴ. Հիւրկանոս վերստին.
3964. ԽԵ. Անտիգոնոս.
3967. ԽԶ. Հերովդէս ընդ թագաւորութեան յափշտակեալ և զքահանայապետութիւնն բռնացաւ ամս երեսուն և եօթն մինչև ցգալուստ փրկչին յաշխարհ. այնուհետև, խանգարեցաւ դասակարգութիւն քահանայապետաց վերջ տուեալ միանգամայն հնոյ օրինաց և քահանայապետութեան։

# ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ

## Նահապետաց և Դատաւորաց Իսրայէլի :

Ամ. աշխ.
ըստ ծան.

1658. Սէմ ծնանի զԱրփաքսադ.
1693. Սաղայ ծնանի յԱրփաքսադայ.
1723. Եբեր ծնանի 'ի Սաղայէ.
1757. Փաղեկ ծնանի յԵբերայ.
1787. Ռագաւ ծնանի 'ի Փաղեկայ.
1819. Սերուք ծնանի 'ի Ռագաւայ.
1849. Նաքովր ծնանի 'ի Սերուքայ.
1878. Թարայ ծնանի 'ի Նաքովրայ.
2008. Աբրահամ ծնանի 'ի Թարայէ.
2108. Իսահակ ծնանի յԱբրահամէ.
2168. Յակոբ և Եսաւ ծնանին.
2315. Ղեւի.
2385. Կահաթ.
2479. Ամրամ.
2513. Մովսէս.
2553. Յեսու.
2561. Ծերք կամ Դատաւորք.
2599. Գոդոնիէլ.
2679. Աւովդ.
2699. Սամեգար.
2719. Դեբովրա և Բարակ.
2759. Գեդէոն.
2769. Աբիմելէք.
2772. Թովղա.
2795. Յայիր.

2817 · Յեփթայէ ·
2823 · Եսեբոն ·
2830 · Էղոն ·
2840 · Աբդոն ·
2848 · Հեղի ·
2868 · Սամփսոն ընդ Հեղեայ ·
2888 · Սամուէլ ·
2909 · Սաւուղ առաջին թագաւոր ·

# ԴԱՄԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ

Թագաւորացն Եբրայեցւոց ։

| ԹԱԳԱՒՈՐՔ ՅՈՒԴԱՅ | ԹԱԳԱՒՈՐՔ ԻՍՐԱՅԷԼԻ |
|---|---|
| Ամ աշխ. ըստ Ժամ. | Ամ աշխ. ըստ Եօթ. |
| 2949 · Դաւիթ · | 3008 · Յերոբովամ Ա· (3029) |
| 2989 · Սողոմոն · | 3028 · Նաբատ · |
| 3029 · Ռոբովամ · | 3031 · Բաասա · |
| 3046 · Աբիա · | 3055 · Էլա · |
| 3049 · Ասա · | 3057 · Զամբրի · |
| 3090 · Յովսափատ · | . . . · Ամրի · |
| 3111 · Յովրամ · | . . . · Թամնի · |
| 3119 · Ոքոզիա · | 3069 · Աքաաբ · |
| 3120 · Գոթողիա · | 3091 · Ոքոզիա · |
| 3126 · Յովաս · | 3093 · Յովրամ · |
| 3166 · Ամասիա · | 3105 · Յէու · |
| 3195 · Ոզիա, որ և Ազարիա · | 3133 · Յովաքազ · |
| 3246 · Յովաթամ · | 3150 · Յովաս · |
| 3262 · Աքազ · | 3166 · Յերոբովամ Բ· |
| 3277 · Եզեկիա · | . . . · Զաքարիա · |
| 3306 · Մանասէ · | . . . · Սեղղում · |
| 3361 · Ամոն · | 3208 · Մանայեմ · |
| 3363 · Յովսիա · | 3218 · Փակէաս · |
| 3394 · Յովաքազ · | 3228 · Փակէէ · |

3395. Եղիակիմ, որ և Յովակիմ.
3405. Յեքոնիա.
3406. Սեդեկիա.
3416. Բարձումն թագաւորութեան Յուդայ:

3248. Ովսէէ.
3257. Բարձումն թագաւորութեան իսրայէլի. ըստ ամանց գնի յամի աշխարհի 3283:

# ՍՐԲԱԶԱՆ

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐ ՕՐԻՆԱՑ

### ԳԼՈՒԽ Ա

Ծնունդ սրբոյ Կուսին, և Յովհաննու Մկրտչի։
Աւետումն։ Ծնունդ Յիսուսի։ Մոգքն երկրպագեն։
Կոտորումն մանկանց Բեթղեհեմի։ Քառասուն-
օրեայ ընծայումն։
Ա. Ա. 4000

459. Իբրեւ մերձեցաւ նախասահմանեալ ժամանակ գալստեան փրկչին և նորոգութեան անկեալ բնութեանս, իսպառ պակասեցաւ իշխանութիւն 'ի տանէն Իսրայելի ըստ կանխաբանութեանն (454)։ Քանզի 'ի Դաւթէ մինչև ցՅեքոնիա և մինչև ցՍեդեկիա եկաց միայն թագաւորական իշխանութիւնն 'ի Յուդա։ Զկնի նոցա ապա դատաւորք և նախապատիւ իշխանք 'ի նոյն ցեղէ տիրէին և պայազատէին 'ի վերայ Իսրայելի։ Յետ այնորիկ 'ի զօրանալ Մակաբայեցւոց՝ ցեղն Յուդայ իբր նախագահ ազգին ընտրէր և հաստատէր զնոսա յիշխանութեան

իւրեանց ։ Բայց տակայն 'ի տիրապետել Հերովդի ոչ ևս մնայր իշխանութիւն 'ի Յուդա և ոչ յԻսրայէլ․ այլ անց ընդ իշխանութեամբ Հռովմայեցւոց ։

460․ Արդ Հերովդէս ասկաղոնացի հաստատեցաւ թագաւոր յԵրուսաղէմ ընդ ձեռամբ Հռովմայեցւոց ։ Ուրանօր յետ կատարելոյ նորա զբազում շինութիւնս և գործս, մեռաւ 'ի հասակի եօթանասուն և երկու ամաց ։ Յայնժամ Կեսար, որ տիեզերակալէր 'ի Հռովմ բաժանեաց զտէրութիւնն Հրէից 'ի չորրորդապետութիւնս․ Արքեղայոս որդի Հերովդի տիրեաց Հրէաստանի․ Փիլիպպոս միւս որդին տիրապետեաց աշխարհին Տուրացւոց և Տրաքոնացւոց առ Լիբանանու․ իսկ Հերովդէս Անթիպաս՝ երկրին Գալիլեացւոց ։

461․ Ի քառասներորդ հինգերորդ ամի թագաւորութեան առաջնոյն Հերովդի ծնաւ 'ի զարմէ Դաւթի և 'ի տոհմէն Յուդայ ամենասուրբ կոյսն Մարիամ 'ի Յովակիմայ և յԱննայէ յամուլ ծնողաց 'ի ծերութեան հասակի նոցա, որպէս հասարակ աւանդութիւն է [1] ։

Յովակիմ՝ Հեղի կոչեցեալ 'ի Ղուկայ, էր 'ի ցեղէ Դաւթի միջնորդութեամբ Նաթանայ և Մատաթեայ, որոյ որդին էր Յակոբ հայր սրբոյն Յովսեփայ, և դուստրն իւր Սարա եղև մայր Եղիսաբեթի․ որոյ ամուսնացեալ ընդ Զաքարիայ քահանայի՝ ծնաւ ապա զՅովհաննէս․ նորին աղագաւ և Յիսուս կոչեցաւ որդի Դաւթի ։

Աստ յետ երից ամաց ընծայեցաւ սուրբ կոյսն 'ի տաճարն տեառն ըստ որում ուխտեալ էր մայր նորա ։ Քահանայապետն յայնժամ ընկալեալ օրհնեաց զնա ըստ օրինաց ։ Զկնի

[1] Տես Նոր Կտ․ Գիրք Բ․ Գլ․ Բ ։

տալ յեօթնամեայ հասակի խնդրաւ հրաժարեալ 'ի տանէ ծնողացն եկաց մնաց 'ի կուսատանի 'ի մէջ շրջապատ պարսպաց տաճարին դասել 'ի կարգս արգելական կուսանաց. որք գործէին զգործ տաճարին ։ Իսկ 'ի հասակի իբր երկոտասան ամաց սուրբ կոյսն խօսեցեալ եղև ընդ Յովսեփայ 'ի ձեռն ծնողաց իւրոց և քահանայից խնամակալուաց նորա ։

462 . Աստուած որպէս խոստացեալ էր բերանովք որոց մարգարէից առաքել զկարապետ Մեսիային, յամի երեսներորդի վեցերորդի թագաւորութեան Հերովդի առաքեաց զհրեշտակապետն Գաբրիէլ առ Զաքարիա քահանայ 'ի դասակարգէ Աբիայ՝ 'ի քսան և չորս դասակարգութեանց քահանայից անտի , զոր հաստատեալ էր Դաւիթ սպասաւորել կարգաւ շաբաթ 'ի շաբաթէ 'ի խորանին վկայութեան ։ Առ սա եկն Գաբրիէլ մինչդեռ 'ի ներքս անդ 'ի տաճարին խունկ արկանէր առաջի տեառն ըստ օրինի քահանայութեան ընդ աջմէ սեղանոյ խնկոյն . և ասէ ցնա. Մի երկնչիր . Զաքարիա . զի լուեալ եղեն աղօթք քո , և կին քո Եղիսաբեթ ծնցի քեզ որդի. և կոչեսցես զանուն նորա Յովհաննէս, և եղիցի քեզ ուրախութիւն և ցնծութիւն . զի եղիցի մեծ առաջի տեառն , և Հոգւով սրբով լցցի անդստին յորովայնէ մօր իւրոյ , և զբազումս յորդւոց Իսրայելի դարձուսցէ 'ի տէր Աստուած իւրեանց ։

463 . Իբրև լուաւ զայս Զաքարիա , խռովեցաւ և տարակուսեալ ասաց . Ու՞ստի գիտացից զայդ . զի ես ծեր եմ, և կինն իմ Եղիսաբեթ ամօք անցեալ զաւուրբք իւրովք ։ Յայնժամ պատասխանի ետ հրեշտակն . Ես եմ Գաբրիէլ, որ կամ առաջի Աստուծոյ և առաքեցայ աւետարանել քեզ զայդ . և ահա եղիցիս համր՝ փո-

խանակ զի ոչ հաւատացեր բանից իմոց, մինչև կատարեսցի այս ամենայն։ Եւ նոյն ժամայն կապեցաւ լեզու նորա և կայր պապանձեալ։ Իբրև լցան աւուրք պաշտաման նորա, գնաց 'ի տուն իւր։ Եւ յղացաւ Եղիսաբեթ, և զամիս հինգ թագուցանէր զանձն իւր. հիանայր և գոհանայր զտեառնէ և ցնծայր յանձն իւր։

464. Իսկ յամսեանն վեցերորդի առաքեցաւ Գաբրիէլ հրեշտակ առ կոյսն Մարիամ 'ի Նազարէթ քաղաք 'ի տունն՝ որ մնացեալ էր նմա 'ի ծնողաց իւրոց, և ողջոյն տուեալ ասէ. Ուրախ լեր բերկրեալդ, տէր ընդ քեզ։ Եւ նորա խռովեալ ընդ բանս հրեշտակին խորհէր ընդ միտս իւր, թէ որպիսի ինչ իցէ ողջոյնս այս։ Յայնժամ ասէ ցնա հրեշտակն. Մի երկնչիր, Մարիամ, զի գտեր շնորհս յԱստուծոյ. և ահա յղասջիր Հոգւով սրբով, և ծնցես որդի և կոչեսցես զանուն նորա Յիսուս. որ եղիցի մեծ և թագաւորեսցէ 'ի վերայ տանն Յակովբայ 'ի յաւիտեան, և թագաւորութեան նորա վախճան մի լիցի։ Անդէն և անդ խոնարհեալ կուսին յանձառելի կամս Աստուծոյ՝ ետ հաւանութիւն և ընկալաւ զողջոյնն ասելով. Ահաւասիկ կամ աղախին տեառն, եղիցի ինձ ըստ բանի քում։ Եւ առ ժամայն յղացաւ Բանն Աստուած 'ի մաքրափայլ արգանդին՝ մարմնառեալ 'ի մաքուր արենէ անարատ կուսին զօրութեամբ Հոգւոյն սրբոյ, և բանական հոգին յայնժամ ստեղծեալ միացաւ ընդ մարմնոյն. ապա գնաց 'ի նմանէ հրեշտակն։

465. Իսկ սուրբ կոյսն 'ի նմին ժամու յարուցեալ չոգաւ յայցելութիւն Եղիսաբեթի. և մտեալ 'ի տուն Զաքարիայ ողջունեաց զԵղիսաբեթ. որ իբրև լուաւ զողջոյն կուսին՝ խաղաց ցնծալով վեցամսեայ մանուկն յորովայնի նորա

և անդէն սրբեցաւ 'ի Նմանէ յարգանդի։ Եւ
Եղիսաբեթի լցեալ Հոգւով սրբով աղա_
ղակեաց 'ի ձայն բարձր. Օրհնեալ ես դու 'ի
կանայս և օրհնեալ է պտուղ որովայնի քո. և
ուստի է ինձ այս, զի եկեսցէ մայր տեառն իմոյ
առ իս։ Յայնժամ և սուրբ կոյսն փառաբանե_
լով զԱստուած սկսաւ ասել. Մեծացուսցէ
անձն իմ զտէր, և ցնծացաւ հոգի իմ յԱս_
տուած փրկիչ իմ։ Եկաց Մարիամ առ Եղի_
սաբեթի ամիս երիս և դարձաւ 'ի տուն իւր։
Յովսէփ իբրև ետես զնա յղի, յապուշ կըր_
թեալ խռովեցաւ. սակայն անդէն փարատե_
ցաւ 'ի մտաց նորա խռովութիւնն այն՝ իբրև ե_
տես 'ի տեսլեան զհրեշտակ տեառն, որ ասաց
ցնա. Յովսէփ որդի Դաւթի, մի երկնչիր առ_
նուլ առ քեզ զՄարիամ՝ որ յղացեալ է Հո_
գւով սրբով. ծնցի զորդի, և կոչեսցես զանուն
նորա Յիսուս. զի նա փրկեսցէ զժողովուրդ
իւր 'ի մեղաց իւրեանց ըստ կանխասացութեան
Եսայեայ մարգարէի։

466. Իբրև լցան ժամանակք ծնանելոյ Եղի_
սաբեթի, ծնաւ զորդի. որում խնդակցեալ
ամենայն ազգականաց իւրոց միաբան օրհնէին
զԱստուած ընդ նմա։ Իսկ յաւուրն ութերոր_
դի իբրև եկին թլփատել զմանուկն ըստ օրի_
նացն Մովսէսի, կամէին կոչել յանուն հօր նո_
րա Զաքարիա։ Իսկ Եղիսաբեթ կամէր անուա_
նել զնա Յովհաննէս. որում այլք ընդդիմա_
նային վասն ոչ լինելոյ յազգի նորա Յովհան_
նէս։ Ապա նշանացի իմն ակնարկութեամբ հար_
ցանէին ցհայրն. և նա խնդրեաց տախտակ, և
գրեաց. Յովհաննէս է անուն դորա։ Եւ առ_
ժամայն բացաւ բերան նորա և լեզու, և սկսաւ
խօսել և օրհնել զԱստուած և ասել մարգա_
րէական հոգւով. Օրհնեալ տէր Աստուած Իս_

րայէլի, զի յայց ել մեզ և արար փրկութիւն ժողովրդեան իւրում։

Այս ամենայն սքանչելիքս իբրև պատմէին ընդ ամենայն լեռնակողմն Հրէաստանի, ահ և երկիւղ լինէր 'ի վերայ ամենեցուն. և որք միանգամ լսէին՝ ասէին, զինչ արդեօք լինիցի մանուկս այս։ Իսկ մանուկն Յովհաննէս աճէր և զօրանայր Հոգւով սրբով. որ ապա չոքաւ յանապատ և եկաց անդ, մինչև առաքեցաւ 'ի տեառնէ քարոզել ժողովրդեան զապաշխարութիւն փրկութեան՝ պատրաստելով զճանապարհ Մեսիայի (474)։

467. Իբրև մերձեցաւ ժամանակ ծննդեան Մեսիային, որ ըստ գուշակութեան մարգարէից հանդերձեալ էր լինել 'ի Բեթղեհէմ, ահա ընդ աւուրսն ընդ այնոսիկ ըստ աստուածային տնտեսութեան ել հրաման յՕգոստոս կայսերէ աշխարհագիր առնել, գրել զանուանս ամենեցուն՝ որք էին ընդ իշխանութեամբ նորա։ Յաղագս այսորիկ ել Յովսէփ 'ի Նազարեթէ հանդերձ Մարեմաւ գնալ 'ի Բեթղեհէմ ըստ որում բեթղեհէմացի՝ վասն լինելոյ 'ի տանէ և յազգէ Դաւթի, մտանել յաշխարհագիրն։ Իբրև հասին անդր, և տեսին զի լի էր քաղաքն խուռն բազմութեամբ 'ի պատճառս աշխարհագրին՝ մինչև չլինել նոցա տեղի պատշաճաւոր, ստիպեցան յայնմ գիշերի բնակել յայրի իջևանին, ուր էր մսուր անբանից։ Անդ կամեցաւ ծնանել փրկիչն տիեզերաց, ակնկալութիւն հեթանոսաց և ամենայն մարգարէից։

468. Արդ ծնաւ խոստացեալ Մեսիայն յամի աշխարհի 4000, ըստ ժամանակագրաց, չորեքհարիւր և յիսուն ամօք զկնի շինութեան Հռովմայ. 'ի քառասներորդի ամի կայսերութեան Օգոստեայ, յերեսներորդ եօթներորդ ամի

Թագաւորութեան Հերովդի, և յերկրորդ ամի Թագաւորութեան Աբգարու Հայոց արքայի: Մանուկն նորածին քանզի Աստուած էր և մարդ, ընդ մարմնաւոր խոնարհ կերպարանացն զուգընթաց եղեն և աստուածային անճառելի փառքն: Քանզի հովուացն՝ որք էին 'ի տեղւոջն յայնմիկ բացօթեայք 'ի դաշտս Բեթղեհեմի 'ի պահպանութիւն հօտից իւրեանց, երևեցաւ յանկարծակի հրեշտակն լուսապայծառ փառօք. և երկեան երկիւղ մեծ: Այլ նա քաջալերեալ զնոսա ասէ. Մի երկնչիք. զի ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեան. զի ծնաւ ձեզ այսօր փրկիչ, խոստացեալ Մեսիայն՝ օծեալ տէր, 'ի քաղաքի Դաւթի. և այս լիցի ձեզ նշանակ, ահա գտանիցէք մանուկ պատեալ 'ի խանձարուրս, և եդեալ 'ի մսուր: Եւ յանկարծակի երևեցաւ ընդ հրեշտակին ընդ այնմիկ բազմութիւն զօրաց երկնաւորաց, որք օրհնելով զԱստուած ասէին. փառք 'ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, 'ի մարդիկ հաճութիւն: Իբրև վերացան 'ի նոցանէ հրեշտակքն յերկինս, ընթացան հովիւքն 'ի Բեթղեհէմ և գտին զՄարիամ և զՅովսէփ. և զմանուկն եդեալ 'ի մսուր. և երկիր պագեալ՝ դարձան և փառաւոր առնէին և օրհնէին զԱստուած վասն ամենայնի զոր լուան և տեսին: Զարմանային ամենեքեան որ զտեսիլն հովուաց լսէին. իսկ Աստուածամայրն ցնծայր հոգւովն, և պահեալ 'ի սրտին որ ինչ անցք անցանէին՝ խորհրդազգած լինէր նորոք գաղտնի անտեսութեանն Աստուծոյ:

Այս զկնի անցանելոյ աւուրց ութից, տեառն խոնարհութիւն փրկչին և ընդ անցանել Նորա ընդ մովսիսական օրէնսն Թլփատութեան.

Թլփատեցին զնա, և կոչեցին զանուն նորա Յի-սուս, որ կոչեցեալն էր 'ի հրեշտակէն և պա-տուիրեալ յաւուր աւետման (464), ըստ ո-րում հանդերձեալ էր լինել փրկիչ և կեցուցիչ աշխարհի ։

469․ Սքանչելիք մեծ էին և որ զկնի ծնըն-դեան փրկչին գործեցան 'ի գալստեան անդ երից Թագաւորացն աստեղագէտ մոգուց․ քանզի որ 'ի փրկութիւն ամենայն աշխարհի ե-կեալ էր փրկիչն, 'ի խանձարուրս անուի սկիզբն առնէր ծաւալելոյ զլոյս աստուածգիտութեան ցհեռաւոր աշխարհս․ Նախ իբր երևմամբ հրա-շալի աստեղն ած ձգեաց զնոսա առ ինքն յեր-կրպագութիւն ։ Արդ եկեալ նոցա յարևելից աշխարհէն յԵրուսաղէմ՝ հարցանէին․ Ո՞ւր է որ ծնաւ արքայն Հրէից․ զորոյ տեսաք զաստղն նշանաւոր յարևելս, և եկաք երկիր պագանել նմա ։ Զայն լուեալ բռնակալ արքային Հերով-դի խռովեցաւ, և ամենայն Երուսաղէմ ընդ նմա ։ Եւ ժողովեալ նորա զամենայն քահա-նայապետսն և զդպիրս ժողովրդեանն՝ հարցա-նէր 'ի նոցանէ՝ թէ ո՞ւր արդեօք ծնանելոց էր Քրիստոսն։ Եւ նոքա ասեն ցնա․ 'ի Բեթղեհէմ Հրէաստանի, ըստ մարգարէութեանն Եսայեայ։ Յայնժամ Հերովդէս գաղտ կոչեաց զմոգսն, և քննեալ ստուգեաց 'ի նոցանէ զժամանակ ա-ստեղն երևելոյ․ և արձակեալ զնոսա, ասէ նեն-գութեամբ․ Գնացէք ստուգեցէք վասն ման-կանն․ և յորժամ գտանիցէք, ազդ արասջի՛ք ինձ, զի և ես եկեալ երկիր պագից նմա։

Իբրև մեկնեալ գնացին նոքա անտի, ահա հրաշալի աստղն անդրէն ծագեալ առաջնոր-դեաց նոցա, մինչև եկեալ եկաց 'ի վերայ տանն՝ ուր էր մանուկն ։ Իսկ նոքա իբրև տեսին զաստղն խնդացին յոյժ, և մտեալ 'ի ներքս 'ի տունն՝

աւուրն զմանուկն Յիսուս հանդերձ Մարեմաւ մօրն իւրով, և անկեալ երկիր պագանէին նմա, և բացեալ զգանձս մատուցին նմա ոսկի իբրև Թագաւորի, և կնդրուկ իբրև մարդոյ. և զմուռս որպէս Աստուծոյ : Սոքա որպէս ազդեցութեամբ առեալ եղեն 'ի ճանապարհ և երկիր պագին երկրպագելի Թագաւորին, նոյնպէս նորին ազդեցութեամբ հրաման առեալ 'ի տեսլեան չդառնալ անդրէն առ նենգաւորն Հերովդէս. ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհն իւրեանց :

470 . Տեսեալ անօրէնն Հերովդի եթէ խաբեցաւ 'ի մոգուց, բարկացաւ յոյժ. և երկուցեալ թէ նորածին մանուկն յաւուր միում առցէ յիւրմէ զթագաւորութիւնն, անդէն առաքեաց զզինաւորս և ետ կոտորել զամենայն մանկունս՝ որ էին 'ի Բեթղեհէմ և յամենայն սահմանս նորա յերկեմենից և 'ի խոնարհ. որպէս զի և նա սպանցի ընդ նորա : Սակայն և յոյժ վրիպեցաւ. քանզի Յովսէփ 'ի տեսլեան իմացեալ 'ի հրեշտակէ զչար կամս Հերովդի՝ առ զմանուկն և զմայր իւր և փախեաւ յԵգիպտոս, և անդ մնացին ամ մի կամ աւելի ևս մինչև ցատամահումն Հերովդի : Յետ այնորիկ անդրէն երևեալ հրեշտակին՝ ասէ ցՅովսէփ. Արի առ զմանուկդ և զմայր նորա և գնա 'ի Հրէաստան : Եւ նա յարուցեալ եկն յերկիրն Իսրայէլի : Այլ իբրև լուաւ եթէ Արքեղայոս թագաւորեաց փոխանակ հօր իւրոյ Հերովդի, երկեաւ գնալ 'ի քաղաք իւր, այլ առաջնորդութեամբ հրեշտակին չոգաւ 'ի կողմանս Գալիլեայ 'ի քաղաքն Նազարեթ՝ կատարելով զբան մարգարէին որ ասէ՝ Թէ «Նազովրեցի կոչեսցի». և նստէր անդ յայնժամ իշխան միւս որդին Հերովդի Անթիպաս :

471. Յառաջ քան զգալուստ մոգուցն, կամ ըստ ոմանց զկնի սակաւուց, իբրև եղև Յիսուս քառասնօրեայ՝ ածին զնա ծնողքն յԵրուսաղէմ ըստ օրինացն Մովսէսի յանդիման առնել և ընծայել Տեառն, ունելով ընդ իւրեանս զերկուս ձագս աղաւնեաց 'ի պատարագ: Եւ էր յԵրուսաղէմ ծերունի մի՝ Սիմէոն անուն, այր արդար և երկիւղած յԱստուծոյ. որոյ հրաման առեալ էր 'ի տեսլեան՝ մի՛ տեսանել զմահ մինչև տեսցէ զօծեալն զՔրիստոս: Արդ սա իբրև ետես զՅիսուս 'ի տաճարին, լուսաւորեալ առ յԱստուծոյ ծանեաւ թէ նա ինքն է փրկիչն աշխարհի, հեթանոսաց ականալութիւն և փառք Իսրայէլի. վասն որոյ առեալ զնա 'ի գիրկս իւր օրհնեաց զԱստուած ասելով. Արդ արձակես զծառայս քո, տէր, ըստ բանի քում 'ի խաղաղութիւն. զի տեսին աչք իմ զփրկութիւն քո՝ զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդեան: Ապա դարձեալ առ սուրբ կոյսն և ասէ. Ահա սա կայ 'ի գլորումն և 'ի կանգնումն բազմաց 'ի մէջ Իսրայէլի, և 'ի նշան հակառակութեան. յորմէ և ընդ քո իսկ անձն անցցէ սուր: Յայնժամ Աննա մարգարէուհի այրի իբրև ութսուն և չորից ամաց, որ ոչ մեկնէր 'ի տաճարէն, յարուցեալ գոհանայր զտեառնէ, և խօսէր զնմանէ ընդ ամենեսին: Եւ յետ կատարելոյ զամենայն ըստ օրինաց Տեառն՝ դարձան 'ի քաղաքն իւրեանց 'Նազարէթ:

472. Սուրբ կոյսն Մարիամ և Յովսէփ ելանէին ամի ամի յԵրուսաղէմ 'ի տօնի զատկին, տարեալ ընդ իւրեանս և զՅիսուս: Եւ 'ի տարւոյն յորում երկոտասան ամաց էր Յիսուս՝ իբրև ելին յԵրուսաղէմ ըստ սովորութեանն, 'ի դառնալն նոցա մանուկն Յիսուս յԵրուսա-

զեմ․ զոր ոչ գիտելով ծնողացն՝ կարծէին թէ ընդ ուղեկիցսն իցէ ։ Այլ իբրև եկին աւուր միոյ ճանապարհ և ոչ գտին զնա, դարձան անդրէն յԵրուսաղէմ խնդրել զնա ։ Եւ եղև յետ երից աւուրց գտին զնա 'ի տաճարին․ զի նստեալ ընդ օրէնսուսոյց վարդապետս լսէր 'ի նոցանէ և հարցանէր զնոսա ։ Զարմանային ամենեքեան ընդ իմաստութիւնն և ընդ պատասխանիս նորա ։ Յայնժամ մայր նորա սքանչացեալ ասէ ցնա․ Որդեակ, զի՞նչ գործ գործեցեր դու ընդ մեզ, զի այսչափ տառապեցաք խնդրել զքեզ։ Եւ պատասխանի Յիսուս, Զի՞ խնդրէիք զիս․ ո՞չ գիտէիք՝ եթէ 'ի տան Հօր իմոյ պարտ է ինձ լինել։ Այլ յարուցեալ չոգաւ ընդ նոսա 'ի Նազարեթ, և էր նոցա հնազանդ ։

473․ Ընդ այն ժամանակս Աբգար արքայ Հայոց չոգաւ 'ի Հռոմ առ Օգոստոս կայսր բարեկէր, և յոյժ սիրեցաւ 'ի նմանէ սակս իմաստասէր և քաղցրաբարոյ կենցաղավարութեան իւրոյ․ և ապա դարձաւ 'ի Հայաստան ։

Արքեղայոս չորրորդապետ Հրէաստանի ամբաստանեալ առաջի կայսեր՝ աքսորեցաւ, և եղև չորրորդապետ Լիւսանիաս 'ի վերայ Աբիլենացւոց ։ Իսկ դատաւոր Երուսաղէմի կարգեցաւ Կոպոնիոս․ որում յաջորդեաց Մարկոս․ յետոյ Աննիոս, ապա Վալերիոս, և ապա Պիղատոս պոնտացի ։

## ԳԼՈՒԽ Բ

Քարոզութիւն Յովհաննու։ Մկրտութիւն Յիսուսի, և փորձելն ՚ի սատանայէ։ Պետրոսի և Անդրէի կոչումն։ Կանայ հարսանիքն։ Բանտարկելն Յովհաննու։ Կինն սամարացի։

ԱՄ ՏԵԱՌՆ 15—31

474. Ի հնգետասաներորդի ամի փրկչին մեռաւ Օգոստոս կայսր ՚ի հասակի եօթանասուն և վեց ամաց, թագաւորեալ ամս յիսուն և եօթն. որ երկու ամօք յառաջ քան զմեռանելն եդ ըզթագաւորութիւն իւր փեսայի կամ որդեգրի իւրում Տիբերեայ։ Սա օտար գտաւ յաշխարհաշէն գործոց Օգոստոսի. և ամբարշտութեամբ վարեալ վնաս մեծ գործեաց թագաւորութեան իւրում։

Ի հնգետասաներորդի ամի թագաւորութեան սորա, և ՚ի քսանեւիններորդ ամի փրկչին եղև բան տեառն առ Յովհաննէս որդի Զաքարիայ յանապատի անդ, ուր սնեալ կայր նա ՚ի հրեշտակական վարս առաքինութեան ՚ի մանկութենէ իւրմէ։ Եւ ել նա յանապատէ բանիւ տեառն և եկն ՚ի կողմանս Յորդանանու քարոզել մկրտութիւն ապաշխարութեան ՚ի թողութիւն մեղաց՝ ասելով. Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւնն երկնից։ Եւ ինքն էր զգեցեալ զգեստ ՚ի ստեւոյ ուղտու, և գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր, և կերակուր նորա էր մարախ և մեղր վայրենի։ Յայնժամ ելանէին առ նա ամենայն Երուսաղեմացիք և ամենայն հրէաստանեայք. և խոստովան լեալ զմեղս իւ-

բեանց՝ մկրտէին 'ի Յորդանան գետ, և խրատեալ 'ի Յովհաննէ գաւառային 'ի տեղիս խուբեանց․ ոչ եթէ խորհրդական մկրտութեամբ լուացեալք, զի այն Քրիստոսիւ լինելոց էր․ այլ զի այնու պատրաստական գոյին ընդունելութեան բարձրագոյն վարդապետութեան փրկչին աշխարհի, որ յայտնելոց էր աստուածասքանչ հրաշագործութեամբք:

475․ Մինչ ակն ունէր ժողովուրդն և խորհէին ամենեքեան վասն Յովհաննու, եթէ նա իցէ Քրիստոսն, ետ պատասխանի Յովհաննէս և ասէ․ Ես մկրտեմ զձեզ ջրով․ բայց կայ 'ի մէջ ձերում, զոր դուք ոչ գիտէք, հզօրագոյն քան զիս․ զորոյ չեմ բաւական բառնալ զկօշիկս․ նա մկրտեսցէ զձեզ Հոգւով սրբով և հրով:

Արդ իբրև խուռնընթաց դիմէին ժողովուրդքն յամենայն կողմանց առ Յովհաննէս մկրտել 'ի նմանէ, եկն և Յիսուս ընդ նոսա 'ի Գալիլեէ 'ի Յորդանան առ Յովհաննէս մկրտել 'ի նմանէ 'ի սկիզբն երեսներորդ ամի ծննդեան իւրոյ: Զայն տեսեալ Յովհաննու հրաժարէր և ասէր․ Ինձ պիտոյ է 'ի քէն մկրտել, և դու առ իս գաս: Ասէ ցնա Յիսուս․ Թոյլ տուր այժմ, զի այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւն: Եւ ապա թոյլ ետ նմա: Իբրև մկրտեցաւ Յիսուս ել վաղվաղակի 'ի ջրոյ անտի, և ահա բացան նմա երկինք, և էջ Հոգին Աստուծոյ իբրև զաղաւնի և հանգեաւ 'ի վերայ նորա․ և ահա հայրական ձայն յերկնից, որ ասէր․ դա է Որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճեցայ: Եւ այնուհետև յայտնապարբառ քարոզէր Յովհաննէս ամենեցուն՝ որք գային 'ի մկրտութիւն՝ վասն Յիսուսի, թէ նա է ճշմարիտ Մեսիայն փրկիչ աշխարհի:

476. Յետ այնորիկ առանձնացաւ Յիսուս յանապատին Երկքովն, և պահեալ անդ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր՝ ապա քաղցեաւ։ Սատանայ՝ որում անծանօթ էր խորհուրդ մարդեղութեան, երևեալ նմա՝ կամեցաւ փորձել զնա եթէ նա իցէ ճշմարիտ Որդին Աստուծոյ։ Վասն որոյ ասէ ցնա. Եթէ Որդի ես Աստուծոյ, ասա զի քարինքս այսոքիկ հաց լինիցին։ Իսկ Յիսուս պատասխանեաց զնա ասելով. Գրեալ է՝ թէ ոչ միայն հացիւ կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ Աստուծոյ։ Յայնժամ հրաւիրեալ զնա դևին յԵրուսաղէմ՝ և ածեալ կացուցանէ զնա 'ի վերայ աշտարակի տաճարին, և ասէ. Եթէ Որդի ես Աստուծոյ, արկ զքեզ աստի 'ի վայր։ Այլ անդէն կարկի աստուածային բանիւ, թէ Ոչ փորձեսցես զտէր Աստուած քո։ Ապա և ևս ժպրհեալ փորձիչն հրաւիրէ և ածէ զնա 'ի լեառն մի բարձր՝ ցուցանելով նմա 'ի վայրկեան ժամանակի զամենայն թագաւորութիւնս աշխարհի, և ասէ. Զայս ամենայն քեզ տաց, եթէ անկեալ երկիր պագանիցես ինձ։ Յայնժամ սաստեաց 'ի նա Յիսուս և ասէ. Երթ յետս իմ, սատանայ. զի գրեալ է, տեառն Աստուծոյ քում երկիր պագանիցես և զնա միայն պաշտեսցես։ Ապա հալածեալ անտի դևին, հրեշտակք մատեան և պաշտէին զնա։

477. Առ այնու ժամանակօք յուզէր 'ի մէջ Հրէից խնդիր յաղագս գալստեան Մեսիային. քանզի ժամանակն նշանակեալ 'ի մարգարէից, մանաւանդ 'ի Դանիէլէ, լցեալ տեսանէր հանգերձ զանազան նշանօք. մինչև 'ի գլուխ իսկ գուշակութեանց հեթանոս կուսանաց Սիբիլլեանանելոց գտանէին բանք զՄեսիայէ (588)։ Նմին իրի գլխաւորք Հրէից առաքեցին առ Յովհան-

նէս զքահանայս և զՂևտացիս՝ հարցանել թէ դու ո՞վ ես: Պատասխանի ետ Յովհաննէս և ասէ՝ թէ ես չեմ Քրիստոսն, այլ կարապետ առաքեալ եմ առաջի նորա. և ըստ Եսայեայ՝ ես ձայն բարբառոյ յանապատի եմ, և քարոզեմ ձեզ, պատրաստ արարէք զճանապարհ տեառն, և ուղիղ արարէք զշաւիղս նորա:

Իսկ 'ի վաղիւ անդր իբրև ետես Յովհաննէս զՅիսուս, յայտնաբարբառ քարոզեաց ամենեցուն և ասէ. Ահաւասիկ Քրիստոս գառն Աստուծոյ, որ եկն բառնալ զմեղս աշխարհի. և ես ոչ գիտէի զնա, այլ իբրև տեսի զերկինս բացեալ և զՀոգին Աստուծոյ իջեալ 'ի վերայ նորա, ծանեայ ճշմարտութեամբ և վկայեցի՝ եթէ սա է Որդին Աստուծոյ, որ տայ զանձն իւր 'ի պատարագ առ 'ի բառնալ զմեղս ամենեցուն, և ազատել զմարդն յանիծից և 'ի մշտնջենական դատապարտութենէ:

478. Եւ 'ի միւսում աւուր Յովհաննէս ընդ երկուց աշակերտաց իւրոց տեսեալ զՅիսուս զի գնայր, եցոյց զնա մատամբ և աղաղակեաց ասելով. Ահաւասիկ Քրիստոս գառն Աստուծոյ: Զոր իբրև լուան աշակերտքն այնոքիկ, թողին զՅովհաննէս և գնացին զհետ Յիսուսի: Մի յերկուց անտի էր Անդրէաս եղբայր Սիմոնի Վիմի: Սա գտանէ նախ զեղբայր իւր զՍիմոն, և ծանուցեալ նմա զգալուստ Մեսիային՝ ածէ զնա առ Յիսուս: Տեսեալ զնա Յիսուսի՝ ասէ. Դու կոչեսցիս այսուհետև Կեփաս, որ թարգմանի Պետրոս, այս է վէմ:

Ի վաղիւ անդր մեկնեալ անտի իբրև եկանէր 'ի Գալիլեա, գտանէ զՓիլիպպոս և կոչէ զնա: Սա իսկըն գտանէ զՆաթանայէլ, և քարոզեալ նմա զգալուստ փրկչին՝ ածէ զնա առ նա: Իբրև ետես զնա Յիսուս, վկայեաց ասելով. Ահա

այր ճշմարիտ իսրայէլացի՝ յորում նենգութիւն ոչ գոյ: Ի կենարար բանից տեառն փրկչին լուսաւորեալ նորա ասէ. Ռաբբի, դու ես Որդի Աստուծոյ, դու ես Թագաւոր Իսրայէլի: Սա յոմանց կարծի լինել Բարթողոմէոս առաքեալ (691):

479. Զայս օրինակ անցուցեալ Յիսուս զմնացուած աւուրսն այնորիկ, կենակցելով ընդ Տիրամօրն, ընդ Յովհաննու Մկրտչին, և ընդ աշակերտելոցն, 'ի մուտս երեսներորդ առաջներորդ ամին հրաւիրեցաւ ընդ աշակերտաց իւրոց 'ի հարսանիս 'ի Կանա Գալիլեացւոց: Անդ էր և մայր նորա, որ 'ի պակասել գինւոյն ծանոյց Յիսուսի եթէ գինի ոչ ունին. և նա աստուածահրաշ սքանչելեօք զջուրն 'ի գինի փոխարկեաց 'ի հիացումն ամենեցուն. ուր փեսայն գուշակի լինել Սիմոն կանանացի աշակերտեալ նմա յետ հրաշիցն: Զայս առար Յիսուս սկիզբն նշանաց, և յայտնեաց զփառս իւր. որով հաստատեցան 'ի հաւատս աշակերտքն իւր:

Յետ այսորիկ չոգաւ 'ի Կափառնաում ինքն և մայր իւր և աշակերտք իւր, և անդ լինէր ոչ բազում ինչ աւուրս հրաշիւք և արուեստիւք: Եւ իբրև մերձեցաւ զատիկն Հրէից, չոգաւ յԵրուսաղէմ. և տեսեալ 'ի տաճարին՝ զի վաճառէին և գնէին զարջառս և զոչխարս, և զլումայափոխսն 'ի տալ և յառնուլ զդրամս, արար խարազան չուանեայ, և եհան զամենեսին 'ի տաճարէն ասելով. Առէք զայդ աստի, և մի առնէք զտուն Հօր իմոյ տուն վաճառի: Զայն տեսեալ աշակերտացն՝ յիշեցին զկանխասաց բանն, թէ «Նախանձ տան քո կերիցէ զիս»: Յայնժամ հարցին ցնա Հրեայքն և ասեն. Զի՞նչ նշան ցուցանես դու մեզ, զի այդպիսի

իշխանութեամբ վարիս ընդ մեզ ։ Պատասխանի ետ Յիսուս . Քակեցէք զտաճարդ զայդ, և զերիս աւուրս կանգնեցից զդա ։ Ասեն ցնա Հրէայքն . Զքառասուն և զվեց ամ շինեցաւ տաճարս այս, և դու զերիս աւուրս կանգնե՞ս զդա ։ Բայց նոքա ոչ իմացան, եթէ նա ասէր վասն քակելոյ մահուամբ զտաճար մարմնոյ իւրոյ, և կանգնելոյ երեքօրեայ յարութեամբ ։ Իսկ յորժամ յարեաւ 'ի մեռելոց՝ յիշեցին աշակերտքն նորա թէ այս է զոր ասացն Յիսուս, և հաւատացին գրոյն և բանին ։ Ընդ 'ի տօնի զատկին տեսեալ զսքանչելիս նորա բազումք հաւատացին յանուն նորա ։

480 . Եւ էր այր մի 'ի փարիսեցւոց անուանի Նիկոդեմոս անուն իշխան Հրէից, և մի 'ի բազմութենէ անտի եղելոց 'ի տօնի զատկին, որք տեսին զգործսն Յիսուսի . սա եկն առ Յիսուս գիշերի գաղտ 'ի նոցանէ, և ասէ ցնա . Ռաբբի, գիտեմք՝ եթէ յԱստուծոյ եկեալ ես վարդապետ . զի ոչ ոք կարէ զայդպիսի աստուածագործ նշանս առնել զոր դուդ առնես, եթէ ոչ Աստուած իցէ ընդ նմա ։ Պատասխանի ետ Յիսուս . Ամէն ամէն ասեմ քեզ . եթէ ոք ոչ ծնցի 'ի ջրոյ և 'ի հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւնն Աստուծոյ ։ Եւ ուսոյց նմա զանճառելի խորհուրդ մարդեղութեան իւրոյ և զանչափ սէրն Աստուծոյ, որ ետ զՈրդին իւր միածին փրկանս փոխանակ ամենեցուն ։

481 . Զկնի տօնին ելեալ Յիսուս յԵրուսաղեմէ չոգաւ 'ի կողմանս Յորդանանու, և աշակերտքն ընդ նմա, և անդ քարոզէր և մկրտէր ։ Եւ եղև խնդիր յաշակերտացն Յովհաննու ընդ Հրէից, զի ժողովուրդն յաճախէր առ Յիսուս վասն մկրտութեան, ասեն ցՅովհաննէս . Ռաբբի, որ էրն ընդ քեզ յայնկոյս Յորդանանու՝ ա_

բում դուն վկայեցեր, ահաւասիկ նա մկրտէ, և ամենեքին գան առ նա ։ Պատասխանի ետ Յովհաննէս. Ոչ կարէ մարդ առնուլ յանձնէ և ոչինչ, եթէ ոչ իցէ տուեալ նմա յերկնից ՚ի վերուստ. նմա պարտ է աճել, և ինձ մեղմանալ. Հայր սիրէ զՈրդի, և զամենայն ետ ՚ի ձեռս նորա. որ հաւատայ յՈրդի, ընդունի զկեանսն յաւիտենականս. և որ ոչ հնազանդի Որդւոյ, ոչ տեսցէ զկեանս, այլ բարկութիւնն Աստուծոյ մնայ ՚ի վերայ նորա ։ Յովհաննէս այսպիսի քաղցր քարոզութեամբ խրատէր զամենեսեան աներկբայ հաւատալ ՚ի Ճշմարիտ Մեսիայն Յիսուս, և անստգիւտ վարուք հետևել հետոց նորա ։

482. Բայց Հերովդէս չորրորդապետ անամօթանայր յայտնապէս ընդ Հերովդիայ կնոջ եղբօր իւրոյ Փիլիպպոսի ՚ի գայթակղութիւն բազմաց ։ Թէպէտ խրատէր և սաստէր նմա Յովհաննէս, այլ նա փոխանակ խոտորելոյ ՚ի չարեացն՝ կալաւ զնա նենգութեամբ և արկ ՚ի բանտ ։ Զայն իբրև գիտաց Յիսուս, և տեսեալ ևս զնախանձ փարիսեցւոց, եթող զՀրէաստան և չոգաւ միւսանգամ ՚ի Գալիլեա. և անցեալ ընդ Սամարիա գայ մօտ ՚ի Սիքար քաղաք, և վաստակեալ ՚ի Ճանապարհի նստի ՚ի վերայ աղբեր, որ էր ջրհոր Յակոբայ մերձ ՚ի գեօղն, զոր ետ Յակոբ որդւոյ իւրում Յովսեփայ ։ Գայ կին մի ՚ի Սամարիայ հանել ջուր. Յիսուս իբրև խնդրեաց ՚ի նմանէ ջուր, ասէ ցնա կինն. Դու որ հրեայդ ես, զիա՞րդ յինէն ըմպել խնդրես, զի հրեայք բնաւ ոչ խառնակին ընդ Սամարացիս (309) ։ Յայնժամ Յիսուս պէսպէս բանիւք յայտնեաց նմա զինքն թէ Մեսիայ է ։ Իսկ կինն ընդ լսելն զայն՝ թողեալ զսափորն չոգաւ ՚ի քաղաք անդր, և քարոզ կարգայր ամենեցուն ասե-

լով · Նկայք տեսէք զայր մի , որ ասաց ինձ զամենայն՝ որ ինչ է իմ գործեալ , միթէ սա՞ իցէ Քրիստոսն : Բազումք ելեալ 'ի քաղաքէն ընդ կնոջն գային առ Նա , և լուեալ զշնորհալից բանս Նորա հաւատացին 'ի Նա , և աղաչեցին զՆա և մուծին 'ի քաղաքն , և պահեցին զաւուրս երկուս · յորս հաւատացեալ 'ի Նա բազմաց՝ ասէին ցկինն · Այսուհետև ոչ վասն քո խօսիցն հաւատամք · զի մեզէն իսկ լուաք 'ի դմանէ , և գիտեմք եթէ դա է ճշմարիտ փրկիչ աշխարհաց :

483 · Յիսուս դարձեալ չոգաւ 'ի Կանա Գալիլեացւոց , ուր արար զջուրն գինի · և անդ էր Թագաւորազն մի՝ որոյ որդին հիւանդ կայր 'ի Կափառնաում : Սա լուեալ զսքանչելիս փրկչին՝ եկն առ Նա և աղաչէր երթալ և բժշկել զորդի Նորա , քանզի մերձ էր 'ի մեռանել : Ասէ ցնա Յիսուս · Երթ , որդին քո կենդանի է : Եւ հաւատաց Թագաւորազն բանին Յիսուսի և մեկնեցաւ անտի : Մինչդեռ իջանէր 'ի քաղաք իւր , ընդ առաջ եղեն Նմա ծառայք Նորա , և աւետիս տուեալ ասեն թէ մանուկն Նորա կենդանի է · իսկ Նա հարցանէր ցնոսա թէ յորում ժամու ապաքինեաց : Եւ Նոքա ասեն · Երեկ յեօթներորդ ժամուն եթող զնա ջերմն : Գիտաց հայրն Նորա թէ յայնմ ժամու բժշկեցաւ որդին , յորում ասաց Յիսուս՝ եթէ որդին քո կենդանի է · և հաւատաց ինքն և ամենայն տուն իւր : Զայս երկրորդ Նշան արար Յիսուս եկեալ 'ի Հրէաստանէ 'ի Գալիլեա · Թող զայլ բազում սքանչելիս զոր արար 'ի Հրէաստան :

484 · Ընդ այն ժամանակս Թեւդաս ոմն ապստամբեալ 'ի Հրէաստան՝ ժողովեաց արս չորեքհարիւր , և կամէր Նոքօք խռովել զժողովուրդն · այլ յետ սակաւուց սպանաւ ինքն և

զօրքն ընդ նմա ։ Ապա յարեաւ Յուդաս գալիլեացի և ապստամբեցոյց ժողովուրդ բազում զկնի իւր․ որ էր գլուխ Հերովդիանոսեան աղանդաւորաց, այլ հուսկ յետոյ կորեաւ և նա։

Աբգար արքայ Հայոց յետ դարձի իւրոյ 'ի Հռովմայ շինեաց զերևելի քաղաքն Աբգարշատ, և ապա ամրացուցեալ զԵդեսիա՝ փոխեաց անդր 'ի Մծբնայ զամենայն արքունիս իւր, նա և զմատեանս մեհենից, և զկուռսն՝ Նաբոք, Բէլ, Բաթնիկալ և Թարաթա․ իսկ զքեռորդի իւր Սանատրուկ մանուկ հզօր՝ կարգեաց իշխանաց իշխան։ Իսկ Հերովդէս և Պիղատոս քանզի թշնամութեամբ էին ընդ Աբգարու, գրեցին զնմանէ ամբաստանութիւն առ Տիբեր կայսր․ այլ նա զօրաւոր բանիւք ունայնացոյց զամբաստանութիւն նոցա ։ Ընդ այն ժամանակս ծաղկեցաւ Աթենադորաս փիլիսոփայ ։

## ԳԼՈՒԽ Գ

### Քարոզութիւնք և սքանչելիք Յիսուսի ։

Ա. Տ. 32

485․ Եհաս ժամանակ աշխարհահռչակ քարոզութեանց փրկչին և սքանչելագործութեանց՝ զոր 'ի լման երեսնամեայ հասակին սկիզբն արարեալ էր ։ Քանզի 'ի սկիզբն երեսներորդ երկրորդ ամին սկսաւ համարձակ քարոզել 'ի ժողովրդանոցս Հրէից․ և ձգել զխուռն բազմութիւն հաւատացելոց զկնի իւր՝ փառաւորելով յամենեցունց ։ Եւ քարոզութիւն կենարար վարդապետութեան իւրոյ էր ուսուցանել զապաշխարութիւն կենաց, առանց որոյ չիք փրկութիւն մեղուցելոց․ յորդորել 'ի պահպանու-

թիւն օրինացն Աստուծոյ գործովք բարեաց և ար-համարհել զանցաւոր մեծութիւն աշխարհիս ։ Անդուլ քարոզեր սիրել զամենեսին սուրբ և խոնարհ սրտիւ, ևս և զթշնամիս․ ներել իրերաց և ողորմել անանկաց, հնազանդել տերանց իբրև Աստուծոյ, և փախչել 'ի կեղծաւորութենէ փարիսեցւոց՝ որք 'ի ցոյց մարդկան սուրբ ե-րեւէին, այլ 'ի ներքս լի էին ապականութեամբ։ Ուսուցանէր ամենեցուն կալ յաղօթս յամենայն ժամ և դիմել առ Աստուած յամենայն նեղու-թիւնս, և'ի վեր քան զամենայն սիրել զԱստուած և երկնչել յահեղ դատաստանաց նորա։

486 ․ Եկն Յիսուս 'ի քաղաք իւր 'Նազարէթ՝ ուր սնեալն էր, և եմուտ ըստ սովորութեան իւրում յաւուր շաբաթու 'ի ժողովրդանոցն ։ Ետուն նմա գիրք զգիրս Եսայեայ մարգարէի, և յառնելոյ ընթեռնուլ. և իբրև եբաց զգիրսն, եգիտ զայն տեղին, յորում գրեալն էր․ « Հո-գի տեառն 'ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զիս․ աւետարանել աղքատաց առաքեաց զիս »[1] ։ Եւ խփեալ զգիրսն ետ ցպաշտօնէայն և նստաւ, և ամենեցուն աչք 'ի նա հայէին ։ Յայնժամ բացեալ զաստուածային բերանն իւր՝ սկսաւ մեկ-նել զբան մարգարէին 'ի վերայ իւր, և յերեւս հարկանել զանհաւատութիւն և զապերախտութիւն նոցա, յօրինակ բերեալ զսքանչելիս Եղիայի և Եղիսէի (253) յանդիմանել զկուրութիւն սըր-տից նոցա։ Իսկ նոքա լցան բարկութեամբ, և յարուցեալ հանին զնա արտաքոյ քաղաքին և ածին զնա մինչև յարտեւան լերինն, գահավէժ առնել զնա․ այլ նա աստուածային սքանչե-լեօք անցեալ ընդ մէջ նոցա գնայր ։ Էջ անտի 'ի Կափառնաում և ուսուցանէր զժողովուրդն

1 Ես․ կա․ ա ։

'ի շաբաթս․ զարմանային ամենեքեան ընդ վար-
դապետութիւն նորա, զոր իշխանաբար քարո-
զէր անխտիր ամենեցուն ։

487․ Մինչդեռ կայր Յիսուս առ ծովակին
Գեննեսարեթայ՝ ետես զերկուս ձկնորս, զՍի-
մոն Պետրոս և զԱնդրէաս եղբայր նորա, և կո-
չեաց զնոսա միւսանգամ ասելով․ Եկայք զկնի
իմ, և արարից զձեզ լինել որսորդս մարդկան ։
Եւ մատուցեալ անտի յառաջ՝ ետես զՅակով-
բոս Զեբեդեայ և զՅովհաննէս եղբայր նորա 'ի
նաւի և կոչեաց զնոսա․ իսկ նոցա թողեալ վաղ-
վաղակի զնաւն և զհայր իւրեանց՝ գնացին զհետ
նորա ։ Ապա ել 'ի նաւն Սիմոնի և ուսուցանէր
'ի նաւէ անտի զժողովուրդսն․ և յետ լռելոյ հրա-
մայեաց արկանել զուռկանսն յորս․ իբրև ար-
կին՝ փակեցին 'ի ներքս բազմութիւն ձկանց
յոյժ, մինչև լցան երկոքին նաւքն ։ Յայնժամ
Պետրոս առ մեծի երկիւղին անկաւ առ ծունկսն
Յիսուսի և ասէ․ Ի բաց գնա յինէն, տէր, զի այր
մեղաւոր եմ ես ։ Նոյնպէս յահի մեծի ըմբռ-
նեցան Յակովբոս և Յովհաննէս որսակիցք Սի-
մոնի ։ Այլ նորա քաջալերեալ զնոսա ասէ․ Մի՛
երկնչիր, Սիմոն, յայսմ հետէ զմարդիկ որսա-
ցես 'ի կենս ։

488․ Հանեալ ապա զնաւն 'ի ցամաք՝ թողին
զամենայն և գնացին զհետ նորա․ իսկ Յիսուս
նոքօք հանդերձ եմուտ 'ի Կափառնաում, ուր
եղև գլխաւոր բնակութիւն նորա․ զի անդր դի-
մէին ժողովուրդք յամենայն կողմանց ։ Եւ ե-
մուտ 'ի տուն Պետրոսի, և ետես զի զզոքանչ նո-
րա անկեալ դնէր տապացեալ․ կալաւ զձեռա-
նէ նորա, և եթող զնա ջերմն, յառն եկաց և
պաշտէր զնոսա ։ Չոգաւ դարձեալ քարոզել 'ի
ժողովրդանոցն․ և տեսեալ զդիւահար մի, հրա-
մայեաց դիւին ելանել 'ի նմանէ․ իսկ դեն ա-

զաղաղակեաց ասելով. Թող տուր, զի՞ կայ մեր և քո, Յիսուս Նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ: Սաստեաց 'ի նա Յիսուս, և ել դեւն 'ի նմանէ, և զարմացան ամենեքեան: Եւ 'ի նմին ժամանակի բժշկեաց զբորոտ և զբազում հիւանդս 'ի պէսպէս ախտից և զդիւահարս, որք ժողովեալ կային առ դուրսն: Յետ այսորիկ դարձաւ Յիսուս առ ափն ծովուն. և Պետրոս հրամանաւ նորա արկեալ զուռկանս յորս՝ եհան զբազմութիւն յոյժ ձկանց, որ զգիշերն ողջոյն աշխատ եղեալ և ոչինչ կալեալ էր:

489. Իբրև կամեցաւ անցանել յայնկոյս ծովակին, եմուտ 'ի նաւ ընդ աշակերտաց իւրոց. և ննջէր 'ի խելս նաւին. և էջ մրրիկ հողմոյ 'ի ծովակն և ուռնոյր, մինչև մերձ ընկղմել նոցա: Մատուցեալ առ նա ասեն. Վարդապետ, կորնչիմք աւասիկ: Եւ նա յարուցեալ սաստեաց հողմոյն և խռովութեան ջրոյն, և եղև խաղաղութիւն: Այն ինչ ել Յիսուս 'ի ցամաք յաշխարհն Գերգեսացւոց, պատահեցին նմա երկու դիւահարք չարաչարք յոյժ. աղաղակեցին մեծաձայն. Զի՞ կայ մեր և քո, Յիսուս Որդի Աստուծոյ բարձրելոյ. աղաչեմք զքեզ, մի տանջեր զմեզ: Քանզի հրաման տայր լեգէոնի դիւաց ելանել 'ի նոցանէ՝ յորս բնակեալ էին: Իսկ դեւքն աղաչէին զնա՝ չառաքել զնոսա յանդունդս, այլ յերամակն խոզից արօտականաց 'ի լերին անդ: Եւ ելեալ դեւքն հրամանաւ նորա մտին 'ի խոզեանն. և նոյն ժամայն անկաւ երամակն 'ի դաշտ անտի 'ի ծովակն և հեղձաւ:

490. Եւ իբրև անցանէր Յիսուս ընդ Կափառնաում. ետես զՂեւի Մատթէոս մաքսաւոր և կոչեաց զնա. և նորա թողեալ զամենայն՝ գնաց զհետ նորա: Յետ բժշկելոյ զբազում հիւանդս և զլուսնոտս, զարմանալի սքանչելեօք բժշկեաց

զանդամալոյծ մի. և զկինն տեռատես, մերձե-նալով ևեթ կնոջն 'ի քղանցս հանդերձի նորա։ Ցարոյց ապա և զմեռեալ դուստր ժողովրդապետին Յայրոսի. և զհամրն դիւահար ազատեաց 'ի դիւէ։ Եւ այսպէս որչափ յաճախէր նա գործել սքանչելիս՝ բժշկելով զանհամար ախտաժէտս, այնչափ երթայր հռչակ զնմանէ ընդ ամենայն աշխարհ։

491. Իբրև մերձեցաւ տօն զատկին Հրէից, ել Յիսուս յԵրուսաղէմ, և 'ի Պրոբատիկէ մեծի աւազանին բժշկեաց զանդամալոյծ մի երեսուն և ութամեայ, որ անկեալ դնէր մերձ յաւազանն, յորում լուանային զզոհս յառաջ քան զմատուցանելն 'ի տաճար անդր, կամ զխորոտին խաշանց 'ի պէտս ողջակիզաց։ Եւ հրեշտակ տեառն իջանէր երբեմն յաւազանն և յուզէր զջուրսն. և որ յախտացելոց որ նախ 'ի շարժումն ջուրցն իջանէր յաւազանն, անդէն բժշկէր սքանչելեօք յինչ և իցէ ախտից, ոչ ունելով նշան ինչ հիւանդութեան։ Իսկ տառապեալ անդամալոյծն այն չունէր զոք՝ զի արկցէ զինքն յաւազանն. Նմին իրի այնչափ ամս մնացեալ էր անդ 'ի հիւանդութեան։

492. Իյաճախել աստուածահրաշ սքանչելեացս յաճախէր և կոյր ատելութիւն դպրաց և փարիսեցւոց ընդդէմ Յիսուսի՝ որք ոչ միայն արհամարհողք բարերարութեանց նորա լինէին, այլ և խորհէին ևս սպանանել զնա։ Յիսուս յայնժամ անցեալ նա անտի 'ի կողմանս Գալիլեացւոց։ Եւ իբրև ուսուցանէր անդ առ ծով եզերբն, խռնեցաւ զնովաւ ժողովուրդ բազում, մինչև 'ի նաւ մտանել նմա և ուսուցանել զնոսա 'ի ծովէ անտի բազում առակօք։

493. Յայնմ ժամանակի կոչեաց զաշակերտսն իւր և ընտրեաց 'ի նոցանէ երկոտասանս, զորս

և Առաքելոյ անուանեայ, տալով խորաքանչիւրոց իշխանութիւնս հրաշագործութեան. որպէս զի լինիցին քարոզիչք 'ի դարձուցանել զաշխարհս 'ի հաւատս Յիսուսի Մեսիայի: Եւ առաքելոց անուանքն էին այսոքիկ. առաջին Սիմոն Պետրոս, և Անդրէաս եղբայր նորա, Յակովբոս Զեբեդեայ և Յովհաննէս եղբայր նորա, Փիլիպպոս, և Բարդուղիմէոս, Թովմաս, և Մատթէոս մաքսաւոր. Յակովբոս Ալփեայ, և Ղեբէոս՝ որ անուանեցաւ Թադէոս. Սիմոն Կանանացի, և Յուդա Իսկարիովտացի՝ որ եղև մատնիչ: Սոքօք հանդերձ ել 'ի լեառն, և բացեալ զբերան իւր ուսուցանէր զնոսա, երանելիս կոչելով որք աստուածահաճոյ առաքինութեամբ քաղաքավարին յերկրի աստ: Ուսուցանէր դարձեալ և զժողովուրդն զքանչելի վարդապետութեամբ:

494. Իբրև կատարեաց զամենայն բանս իւր 'ի լսելիս ժողովրդեանն, եմուտ 'ի Կափառնաում: Հարիւրապետի ուրումն ծառայ չարաչար հիւանդացեալ մերձ էր 'ի վախճանել: Այս հեթանոս Հռոմայեցի իբրև լուաւ զսքանչելիս Յիսուսի՝ առաքեաց զծերսն 'ի Հրէից անտի աղաչել զնա, զի ապրեցուսցէ զծառայն նորա: Չոգաւ Յիսուս ընդ նոսա. և իբրև ոչինչ կարի հեռի էր 'ի տանէն՝ յղեաց առ նա հարիւրապետն բարեկամս և ասէ ցնա. Տէր, մի ինչ աշխատ լինիր. զի չեմ բաւական, եթէ ընդ յարկաւ իմով մտցես. այլ ասա բանիւ ևեթ, և բժշկեսցի մանուկն իմ. քանզի հաւատամ եթէ աստուածահրաշ բան քո կարող է և 'ի հեռուստ առնել որ ինչ և կամի: Եւ իբրև լուաւ զայս Յիսուս, վկայեաց և ասէ. Ամէն ասեմ ձեզ, թէ և ոչ յԻսրայէլի այսչափ հաւատս գտի երբէք: Եւ դարձան անդրէն պատգամաւորքն 'ի

տուն հարիւրապետին, և գտին զծառայն հիւանդ՝ բժշկեալ:

Նոյնպէս և՛ի միւսում աւուր յարոյց զմանուկն միամօր մերձ ՚ի դուռն Նային քաղաքի. զոր բարձեալ տանէին թաղել բազմութիւն ժողովրդեան: Յորմէ ահ կալաւ զամենեսին. և ամենեքեան փառաւոր առնէին զԱստուած, ասելով թէ մարգարէ մին մեծ յարուցեալ է ՚ի միջի մերում. և թէ՝ այց արար տէր ժողովրդեան իւրում ՚ի բարութիւն:

495. Յետ այսորիկ հրաւիրեցաւ Յիսուս ՚ի տուն Սիմոնի փարիսեցւոյ՝ ուտել հաց ընդ նմա: Եւ կին մի էր ՚ի քաղաքին մեղաւոր, որ համարի Մարիամ մագդաղենացի. իբրև լուաւ զՅիսուսէ՝ բերեալ շիշ մի ազնիւ իւղոյ. և անկեալ յոտս Յիսուսի լայր, և արտասուօքն սկսաւ թանալ զոտս նորա, և հերով գլխոյ իւրոյ սրբէր. և համբուրեալ զոտս նորա, օծանէր իւղովն: Իսկ Յիսուս հայեցեալ ՚ի զեղջ նորին, արձակեաց զնա ասելով. Կին դու, թողեալ լիցին մեղք քո: Եւ եղեալ անտի Յիսուս քարոզէր զարքայութիւնն Աստուծոյ ՚ի մէջ բազմութեան. ուր էին կանայք ոմանք որք բժշկեալ էին յայսոց չարաց և ՚ի պէսպէս հիւանդութեանց: Յայնժամ եկն առ Յիսուս մայր իւր ընդ ազգականաց իւրոց կամ եղբարց: Իբրև ազդ արարին նմա՝ ոչ ընդհատեաց զվարդապետութիւն իւր, այլ սրտապնդեաց զաշակերտսն ասելով. Մայր իմ և եղբարք իմ սոքա են, որ զբանն Աստուծոյ լսեն և առնեն:

Իսկ դպիրքն և փարիսեցիք վառէին ատելութեամբ ընդդէմ նորա, և հալածէին և դիւահար կոչէին զնա: Այլ նա երթայր քաղաքէ ՚ի քաղաք և անընդհատ սերմանէր զբանն կենաց՝ բժշկելով զամենայն հիւանդս իւրաքանչիւր տե-

ղեաց ։ Առաքէր և զաշակերտսն երկուս երկուս ընդ այլևայլ կողմանս՝ ուսուցանել զժողովուրդն և ծաւալել զաստուածային շնորհս նորա յամենեսին ։

496. Յովհաննէս տեսեալ թէ մերձեալ է վախճան իւր, առաքեաց զաշակերտս իւր առ Յիսուս, զի տեսցեն զսքանչելիս նորա և աշակերտեսցին նմա ։ Իսկ նա արար առաջի նոցա բազում սքանչելիս, բժշկելով զհիւանդս ՝ի պէսպէս ախտից և յայսոց չարաց ։ Հերովդէս որ եդեալ էր ՝ի բանտ զՅովհաննէս, կամէր և սպանանել զնա սակս յանդիմանութեանց նորա (482)։ Բայց երկնչէր ՝ի ժողովրդենէն. զի ամենեքին պատուէին զնա իբրև մարգարէ տեառն ։ Սակայն յաւուր խրախութեան իբրև կոչաւեաց աղջիկն Հերովդիադայ առաջի բազմականաց և հաճեցոյց զՀերովդէս, նախ խրատեալ ՝ի մօրէն խնդրեաց յարքայէ զգլուխն Յովհաննու Մկրտչի. և նա առաքեաց դահիճ և գլխատեաց զՅովհաննէս, և ետ զգլուխն ցաղջիկն ։ Իսկ աշակերտքն թաղեցին զմարմին նորա, և եկեալ պատմեցին Յիսուսի. և նա տեղի ետ անտի ։

497. Զայսու ժամանակաւ մեռաւ արքայն Պարսից Արշաւիր, և եթող զերիս որդիս զԱրտաշէս, զԿարէն և զՍուրէն և զդուստրն Կոշմ՝ կին Ասպահապետի. և անկաւ խռովութիւն մեծ ՝ի մէջ նոցա ։ Մինչև չոքաւ ՝ի Պարս մեծն Աբգար և հաստատեաց զԱրտաշէս ՝ի թագաւորութեան Պարսից. և համոզեաց զեղբարս նորա. որք կոչեցին Պահլաւք յանուն աշխարհին իւրեանց Բահլայ. զի լինիցին առաջին քան զամենայն նախարարս իբրև թագաւորազունք ։ Յորմէ որոշեցան երեք երևելի ցեղք Պահլաւունեաց. որք և կոչեցան Կարենի Պահլաւ, Սու-

րենի Պահլաւ և Ասպահապետի Պահլաւ ։ Յետ կատարելոյ զայս ամենայն Աբգարու՝ անկաւ 'ի գժնդակ ախտ բորոտութեան յաշխարհին Պարսից . վասն որոյ փութացեալ դարձաւ յարքունիս իւր յԵդեսիա ։ Եւ ապա լուեալ զսքանչելիս փրկչին՝ յղեաց առ նա թուղթ և պատգամաւորս , որպէս ցուցցի 'ի կարգին . Թէպէտ 'ի կարգէ աւետարանին գուշակի լինել այն զկնի ծաղկազարդին (554) ։

## ԳԼՈՒԽ Դ

### Յայտնութիւն հրաշագործութեանց Յիսուսի ։

Ա. Տ. 33

498 . Համբաւ աստուածահրաշ սքանչելեաց փրկչին տարածեցաւ առ հասարակ ընդ աշխարհս , և առաւել 'ի կողմանս Ասորւոց և Հայաստանեայց ։ Աբգար արքայ Հայոց վարակեալ յախտ բորոտութեան յեօթն ամաց հետէ յԵդեսիա քաղաքի , իբրև լուաւ զհամբաւ սքանչելեաց Յիսուսի , և ընդ նմին զնախանձ և զատելութիւն դպրաց և փարիսեցւոց ընդդէմ նորա , փափաքէր գտանել 'ի նմանէ զառողջութիւն ։ Յորժամ դարձան պատգամաւորք իւր 'ի կողմանց Պաղեստինոյ , որք եկեալ էին յԵրուսաղէմ . և տեսեալ զսքանչելիս փրկչին 'ի վերոյ ասացելոց , պատմեցին սոքա զամենայն թագաւորին իւրեանց Աբգարու ։ Զայն լուեալ նորա՝ հաստատեաց 'ի միտս իւր թէ նա իցէ Ճշմարիտ Որդի Աստուծոյ , որ առնէ զսքանչելիս և յարուցանէ զմեռեալս ։ Սորին վասն առաքեաց առ Յիսուս հրեշտակս ընդ Անանեի սուրհան-

գակին հանդերձ Թղթով, որ ունէր օրինակ զայս [1] .

499. «Աբգար Արշամայ իշխան աշխարհի, առ Յիսուս փրկիչ և բարերար, որ երևեցար յաշխարհի Երուսաղէմացւոց, ողջոյն: Լըւեալ է իմ վասն քո և վասն բժշկութեանդ՝ որ լինին 'ի ձեռս քո առանց դեղոց և արմատոց. զի որպէս ասի, տաս դու կուրաց տեսանել, և կաղաց գնալ, և զբորոտս սրբել և զդևս պղծս հանես, և որ ժամանդակ չարչարեալ են երկար հիւանդութեամբք՝ բժշկես. դու և զմեռեալս յարուցանես: Եւ իբրև լուայ վասն քո զայս ամենայն, եդի 'ի միտ իմում մի յերկուց աստի. կամ թէ դու Աստուած իցես, իջեալ յերկնից գործես զայդ. կամ թէ Որդի իցես դու Աստուծոյ, և զայդ առնես: Արդ վասն այնորիկ գրեցի ես առ քեզ՝ աղաչել զքեզ, զի աշխատ լինիցիս և եկեսցես առ իս և բժշկեսցես զհիւանդութիւնս, զոր ունիմ ես: Նա և լուայ զի Հրեայք տրտնջեն զքէն և կամին չարչարել զքեզ. բայց քաղաք մի փոքրիկ և գեղեցիկ է իմ, և բաւական է մեզ երկոցունցս »:

500. Պատուէր ես տուեալ էր Աբգար հրեշտակացն՝ մատուցանել զոհս 'ի տաճարի նորա Երուսաղէմ: Այլ թէ յղեաց ընդ նոսա և նկարիչ մի, որ 'ի Յայսմաւուրս մեր Յովհաննէս կոչի. իսկ պատմիչք Յունաց համարին ըզնոյն ինքն զԱնանէ գիտակ նկարչութեան. որպէս զի՝ եթէ ոչ եկեսցէ Յիսուս, գէթ զպատ-

1 Խորէն Բ. 30. 31. 32: Եւսեբիոս. Ա. 13: Դարաբեւս 'ի ձեռն Եօթանասնից: Պրոկոպիոս. պարս. Բ. 12: Եւագրիոս Գիրք. 4: Դամասկ. Համառ. Դ. 17: Յայսմ. Հ. և Յ. օգոստ. 16:

կէր նորա նկարեալ բերցէ. հաւատալով թէ պատկերն եւս կարող է բժշկել զնա 'ի չար ախտէ անտի: Հասին հրեշտակք Աբգարու յերուսաղէմ յաւուր մտանելոյ փրկչին 'ի նոյն քաղաք. և խնդրէին տեսանել զՅիսուս, այլ ոչ համարձակէին անձամբ մերձենալ առ նա: Ապա դիմեցին առ Փիլիպպոս, և ասեն. կամիմք զՅիսուս տեսանել. և Փիլիպպոս խօսեցեալ ընդ Անդրէի՝ երկոքին 'ի միասին ծանուցին նմա: Եւ Յիսուս պատասխանի ետ նոցա և ասէ. Եհաս ժամ զի փառաւորեսցի որդի մարդոյ: Ապա հրամայեաց Թովմայի առաքելոյ գրել առ Աբգար պատասխանի թղթոյն օրինակ զայս.

501. « Երանի իցէ այնմ՝ որ հաւատայ յիս՝ իբրև ոչ իցէ նորա տեսեալ զիս. զի գրեալ է վասն իմ այսպէս. Զի որք տեսանենն զիս՝ ոչ հաւատասցեն յիս, և որք ոչն տեսանեն՝ նոքա հաւատասցեն և կեցցեն: Իսկ վասն այնր զի գրեցեր դու առ իս՝ գալ ինձ առ քեզ. արժան է ինձ կատարել աստ զամենայն ինչ վասն որոյ առաքեցայ ես: Եւ իբրև կատարեցից զայս, ապա համբարձայց առ այն՝ որ առաքեացն զիս. և յորժամ համբարձայց, առաքեցից զմի յաշակերտաց անտի իմոց, զի զցաւս քո բժշկեսցէ, և կեանս քեզ և որոց ընդ քեզ են շնորհեսցէ » (613):

502. Իսկ նկարիչն ոչ համարձակեալ դէմ յանդիման նկարել զպատկեր Յիսուսի, զի և ամբոխն իսկ ոչ թոյլ տայր ումեք մերձենալ առ նա, ել 'ի վերայ վիմի. և մինչդեռ խօսէր Յիսուս ընդ ամբոխին, նա գուն գործէր կերպարանել զկենդանագիր դիմաց փրկչին. այլ ոչ իւիք կարաց առնուլ զնմանութիւն դիմաց նորա: Զայն գիտացեալ ծածկագիտին Յիսուսի, ետ կոչել զայրն. և առեալ գաստառակ մի եդ 'ի

վերայ աստուածային դիմացն, և անդէն սքան-չելապէս տպաւորեաց ի նմին զհրաշալի պատկեր դիմաց իւրոյ. և առեալ զայն ցԱնանէ հրա-մայեաց տանել առ Աբգար հանդերձ թղթովն։ Եւ ըստ Կեդրենոսի եդ Քրիստոս ի վերջ թղ-թոյն կնիք եօթն եբրայական տառիւք գրոշ-մեալ, որք նշանակէին, « Աստուածահրաշ տե-սիլ, աստուածային սքանչելիք »։ Խոկ Աբգար իբրև ետես՝ անկաւ ի վերայ երեսաց իւրոց և երկիր եպագ աստուածային պատկերին կենդա-նի հաւատով և կաթոգին սիրով և անդէն ըզ-գայ յանձն իւր զթեթևութիւն ցաւոց. ըն-թերցեալ ապա և զթուղթն մխիթարեցաւ յոյժ, և պահեաց զայնոսիկ բազում յարգութեամբ։

503. Այլ իբրև դարձան առաքեալքն ի քաղաքութենէ անտի (495) մերձ ի տօնն զատ-կի, առանձնացաւ Յիսուս նոքօք հանդերձ յա-նապատին Բեթսայիդայ։ Խոկ ժողովուրդն իբ-րև գիտաց եթէ անդ է, ամենեքեան գնացին զհետ նորա փափաքանօք. և նորա ընկալեալ զնոսա՝ խօսէր վասն արքայութեանն Աստուծոյ, և որոց պէտք էին բժշկութեան՝ բժշկէր մար-դասիրապէս։ Սակայն իբրև օրն սկսաւ տարա-ժամել, մատեան աշակերտքն առ Յիսուս և ա-սեն. Ժամ է արդ արձակել զժողովուրդդ, զի երթիցեն շուրջ ի գեօղս և յագարակս գտանել զկերակուրս, և մի՛ մնալ նօթի յանապատի աստ։ Ասէ ցնոսա Յիսուս. Դուք տուք դոցա ուտել։ Եւ նոքա ասեն. Ոչ գոյ մեզ աւելի քան զհինգ նկանակ և զերկուս ձկունս. բայց եթէ տաս մեզ հրաման՝ երթալ և գնել կերակուր բազ-մաց ժողովրդեանդ։ Յայնժամ հրամայեաց Յի-սուս բազմեցուցանել զնոսա ի վերայ խոտոյ դաս դաս յիսուն յիսուն. և առեալ զհինգ նկանակն և զերկուս ձկունսն՝ հայեցաւ յերկինս,

օրհնեաց և եբեկ, և տայր ցաշակերտսն արկանել ժողովրդեանն։ Կերան և յագեցան ամենեքեան, և բարձին զնշխարս կոտորոցն երկոտասան սակառի լի։ Եւ էին որք կերանն իբրև հինգ հազար այր։

504. Իսկ մարդիկն իբրև տեսին զնշանսն զոր արար՝ ասէին. սա է Ճշմարիտ մարգարէն, որ գալոց էր յաշխարհ. մինչև միաբանեալ ամենեցուն՝ կամէին յափշտակել զնա և կացուցանել ՚ի վերայ իւրեանց թագաւոր։ Իբրև գիտաց զայն Յիսուս՝ ել ՚ի լեառն միայն, և հրամայեաց աշակերտացն անցանել նաւու յայնկոյս ծովակին, մինչև ինքն ընդ ցամաք գնասցէ առ նոսա։ Ի մերձենալ երեկոյին մտին աշակերտքն ՚ի նաւ և գնային յայնկոյս ծովակին ՚ի Կափառնաում. իսկ ծովն ՚ի սաստիկ հողմոյ շնչելոյ յուզէր ՚ի գիշերին յայնմիկ. և վարեալ իբրև ասպարէզս քսանևհինգ և աւելի, տեսանէին զՅիսուս ՚ի չորրորդում պահու գիշերոյն, զի գնայր ՚ի վերայ ծովուն և մերձ էր ՚ի նաւն. համարեցան թէ առ աչօք ինչ իցէ, յորմէ զարհուրեալ աղաղակեցին։ Եւ Յիսուս ասէ ցնոսա. Քաջալերեցարուք, ես եմ մի երկնչիք։ Պատասխանի ետ նմա Պետրոս և ասէ. Տէր եթէ դու ես, հրամայեա ինձ գալ առ քեզ ՚ի վերայ ջրոցս. և նա ասէ, եկ։ Եւ իջեալ ՚ի նաւէ Պետրոս՝ գնաց ՚ի վերայ ջուրցն և եկն առ Յիսուս. բայց տեսեալ զհողմն սաստիկ՝ երկեաւ և սկսաւ ընկղմել. նմին իրի աղաղակեաց ասելով. Տէր փրկեա զիս։ Եւ վաղվաղակի ձգեաց Յիսուս զձեռն իւր, յարոյց զնա, և ելեալ ՚ի նաւն՝ դադարեաց հողմն։ Իսկ որ ՚ի նաւին էին՝ մատեան և երկիր պագին նմա ասելով. Արդարև Որդի Աստուծոյ ես դու։

505. Անցեալ անտի ՚ի ցամաք եկն ՚ի Գեննեսարէթ. և խոկոյն ծանեան զնա արք տեղւոյն այ-

նորին․ և աւաքեցին ընդ ամենայն գաւառն, և ածին առ նա զամենայն հիւանդս, և աղաչէին զնա, զի գոնէ միայն 'ի քղանցս հանդերձի նորա մերձեսցին․ և որ միանգամ մերձեցանն՝ փրկեցան յախտից իւրեանց ։

Եւ յորժամ էր Յիսուս 'ի Կափառնաում, եկն առ նա ժողովուրդն՝ զոր եթող յայնկոյս ծովուն, զարմացեալ 'ի վերայ սքանչելեաց հացին․ իսկ Յիսուս կամելով բացայայտել նոցա զանմահական հացն երկնից՝ ասէ ցնոսա․ Երթայք գործեցէք մի զկորստական կերակուրն, այլ զայն որ տայ կեանս աշխարհի ։ Իբրև զարմանային նոքա ընդ այս բարձրագոյն վարդապետութիւն՝ ասէ․ Հայրքն ձեր կերան զմանանայն յանապատի անդ և մեռան (88)․ ես իսկ եմ հացն կենաց՝ որ յերկնից իջեալ․ եթէ ոք ուտիցէ 'ի հացէ յայսմանէ, կեցցէ 'ի յաւիտեան․ և հացն զոր ես տաց, մարմին իմ է, վասն կենաց աշխարհի ։ Իսկ Թանձրամիտ Հրեայք յիմարեալ 'ի լսելն զայս՝ հակառակէին ընդ միմեանս և ասէին․ զիա՞րդ կարէ սա տալ մեզ ըզմարմին իւր յուտել ։ Ասէ ցնոսա Յիսուս․ Ամէն ամէն ասեմ ձեզ․ զի մարմին իմ ճշմարիտ կերակուր է, և արիւն իմ ճշմարիտ ըմպելի է․ որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, յիս բնակեսցի, և ես 'ի նմա ։ Այսու բարձրագոյն վարդապետութեամբ և խորհրդով մարմնոյ և արեան ցուցանէր զամենակարողութիւն իւր ընդ անհուն բարութեան․ որով հաղորդէր զինքն իւրոց հաւատացելոց ։ Սակայն բազումք ոչ կարելով ըմբռնել՝ ասէին․ Խիստ է բանդ այդ, և ո՞ կարէ լսել դմա ։ Գիտաց Յիսուս յանձն իւր զտրտունջ նոցին և ասէ․ Բանն, զոր ես խօսեցայ ընդ ձեզ, հոգի է և կեանք, և ոչ մարմնեղէն մտօք ըմբռնելի․ որ հաւատայ յիս, ի-

մանկայ զգերահրաշ խորհուրդ ասացելոցս ։

506 ․ Յետ այսորիկ ելեալ անտի Յիսուս գնայ 'ի կողմանս Տիւրոսի և Սիդոնի առ 'ի հեռանալ 'ի Թշնամեաց իւրոց և յատելեաց ։ Եւ ահա կին մի հեթանոս քանանացի 'ի սահմանաց անտի նոցա ելեալ աղաղակէր և ասէր ․ Ողորմեաց ինձ, տէր, որդի Դաւթի ․ զի ահա դուստր իմ չարաչար այսահարի ։ Իսկ Յիսուս զառաջինն ոչինչ ետ նմա պատասխանի ․ վասն որոյ մատուցեալ աշակերտացն՝ աղաչէին զնա լռել նմա ։ Նա պատասխանի ետ և ասէ ․ Ես առաքեցայ առ կորուսեալ տանն Իսրայէլի ։ Իսկ կինն անդադար աղաղակէր ․ Տէր, օգնեա ինձ ։ Եւ Յիսուս ասէ ․ Ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց Իսրայէլացւոց, և արկանել շանց հեթանոսաց ։ Իսկ կինն նովին աղաչանօք ասէ ․ Այո տէր, քանզի և շունք կերակրին 'ի փշրանաց անկելոց 'ի սեղանոյ տեառն իւրեանց ։ Յայնժամ պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ ․ Ով կին դու, մեծ են հաւատք քո ․ եղիցի քեզ որպէս և կամիս ։ Եւ ահա 'ի նմին ժամու բժշկեցաւ դուստրն նորա ։

507 ․ Անտի չոգաւ Յիսուս 'ի ծովեզրն Գալիլեացւոց ․ և ելեալ 'ի լեառն՝ մատեան առ նա ժողովուրդք բազումք, և բժշկեաց զամենայն հիւանդս նոցա ․ մինչև զարմանալ ամենեցուն 'ի վերայ մեծամեծացն Աստուծոյ, և մնալ առ նմա զաւուրս երիս լսել զբանս կենաց ։ Եւ Յիսուս կոչեալ զաշակերտսն ասէ ․ Գթամ ես 'ի վերայ ժողովրդեանդ ․ զի ահա երեք աւուրք են՝ զի կան առ իս անսուաղ, և չկամիմ արձակել զդոսա նօթիս, գուցէ նքթիցեն զճանապարհայն ։ Ասեն ցնա աշակերտքն ․ Ուստի՞ իցէ այնչափ հաց՝ յագեցուցանել զայնչափ ժողովուրդ ։ Ասէ Յիսուս ․ Քանի՞ նկանակ ունիք ․ և նոքա

ասեն՝ եօթն, և սակաւ ձկունս ։ Յայնժամ հրամայեաց ժողովրդեան բազմել 'ի վերայ գետնոյ . և առեալ զնկանակսն և զձկունսն օրհնեաց և ետ աշակերտացն՝ արկանել ժողովրդեան ։ Կերան ամենեքեան և յագեցան, և բարձին զնշխարս կոտորոցն եօթն զամբիղ լի . իսկ կերողքն էին իբրև արք չորք հազարք, բաց 'ի մանկանց և 'ի կանանց ։ Եւ անտի արձակեալ զժողովուրդն եկն նաւաւ 'ի սահմանս Մագդաղեայ ։

508 . Յետ այսորիկ բերին առաջի Յիսուսի խուլ մի և համր . բժշկեաց զնա, և հրամայեաց չհրատարակել զսքանչելիս նորա, զի մի բորբոքեսցի ատելութիւն փարիսեցւոց ընդդէմ նորա ։ Սակայն նա որչափ պատուիրէր՝ նոքա եւս առաւել քարոզէին և մեծացուցանէին զփառս նորա ։ Ապա բժշկեաց կոյր մի 'ի Բեթսայիդա . ընդ որ զարմացան ամենեքին ։ Այնուհետև սկսաւ Յիսուս մեղմով իմն յայտնել աշակերտաց իւրոց զչարչարանս և զանպարտական մահ իւր 'ի քահանայապետից և 'ի դպրաց անտի, և զերեքօրեայ յարութիւնն ։

509 . Իսկ Հերովդէս չորրորդապետ թէպէտ էր 'ի Հրէաստանի՝ ուր գործէին այս ամենայն սքանչելիք, սակայն չունէր զծանօթութիւն ինչ զնմանէ ։ Այլ զկնի մահուան Յովհաննու իբրև լսէր զսքանչելիս Յիսուսի՝ համարէր թէ Յովհաննէս յարուցեալ 'ի մեռելոց յանձն Յիսուսի՝ գործէր զայնպիսի սքանչելիս ։ Բայց ոմանք իւր լցեալ խռովութեամբ, մանաւանդ սակս անհամեստ գործոցն նորա ընդ Հերովդիադայ՝ յարուցին 'ի վերայ նորա պատերազմաւ զԱրետաս թագաւորն Արաբացւոց 'ի վրէժխնդրութիւն նախատանաց դստեր նորա զոր առեալ էր նմա 'ի կնութիւն ։

## ԳԼՈՒԽ Ե

Այլակերպութիւն Յիսուսի։ Բժշկութիւն լուսնոտին։
Եօթանասնից ընտրութիւն ։ Օրինականն ։
Մարթա և Մարիամ։
Ա. Տ. 33

510. Զկնի լուսաւորելոյ փրկչին զամենայն կողմանս Հրէաստանի կենարար վարդապետութեամբ իւրով և սքանչելի նշանագործութեամբ, չոգաւ ապա 'ի կողմանս Կեսարեայ քաղաքին Փիլիպպեայ շրջագայելով. և հարցանէր զաշակերտսն իւր ասելով. Զո՞ ոք ասեն զինէն մարդիկն թէ իցեմ։ Նոքա պատասխանի ետուն և ասեն. Ոմն ասէ զՅովհաննէս Մկրտիչ, այլք զԵղիա, ոմանք զԵրեմիա, և կէսք զմի ոք 'ի մարգարէից անտի։ Կրկնեաց Յիսուս. Իսկ դուք զո՞ ասէք զինէն թէ իցեմ ես։ Անդէն դաւանեալ զնա Պետրոս, ասէ համարձակ. Դու ես Քրիստոսն Որդի Աստուծոյ կենդանւոյ։ Յայնժամ երանի ասաց նմա Յիսուս, զի լուսաւորեալ 'ի Հօրէն լուսոյ յայտնեաց զայն ճշմարտութիւն առաջի ամենեցուն։ Եւ նորին աղագաւ անդ Պետրոս կացուցաւ գլուխ սուրբ հաւատոյ և հիմն եկեղեցւոյ. հաստատեալ անյեղլի ձայնիւ փրկչին. «Եւ ես քեզ ասեմ. զի դու ես վէմ, և 'ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, և դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն ։ Եւ տաց քեզ զփականս արքայութեան երկնից. և զոր միանգամ կապեսցես յերկրի, եղիցի կապեալ յերկինս. և զոր արձակեսցես յերկրի, եղիցի արձակեալ յերկինս [1]»։

[1] Մատթ. ԺԶ. 18։

511. Այնուհետև յայտնի ցուցանէր Յիսուս աշակերտաց իւրոց՝ թէ պարտ է նմա չարչարիլ և անարգիլ 'ի ծերոց ժողովրդեան։ Եւ 'ի հակառակել նոցա, նա մխիթարէր զնոսա յորդորական բանիւ՝ կրել և վշտանալ յաշխարհի 'ի սէր արարչին, տալ անխնայ զանձն յաստի կեանս առ 'ի գտանել զայն յերկինս, և առնուլ զհատուցումն բարի յարարչէն ամենեցուն։ Եւ 'ի հաստատութիւն ասացելոյն 'ի վերայ բերէ. Ամէն ասեմ ձեզ. զի են ոմանք 'ի սոցանէ որ աստ կան, որք տեսանելոց են զփառս արքայութեան իմոյ յառաջ քան զճաշակ մահու։

512. Այսպէս յետ վեց աւուր առեալ ընդ իւր Յիսուսի զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս ելանէ 'ի լեառն Թաբոր առանձինն, և այլակերպի առաջի նոցա. զի լուսաւորեցան երեսք նորա իբրև զարեգակն, և հանդերձք նորա եղեն սպիտակ փայլուն լուսատեսիլ։ Եւ ահա անդ երևեցան նոցա Մովսէս և Եղիա, որք խօսէին ընդ նմա զելիցն նորա՝ զոր կատարելոց էր յԵրուսաղէմ։ Յայնժամ այլ յայլմէ եղեալ Պետրոսի ասէ ցՅիսուս. Տէր, բարւոք է մեզ աստ լինել. և թէ կամիս՝ արասցուք երիս տաղաւարս, մի քեզ, և մի Մովսէսի, և մի Եղիայի։ Մինչդեռ նա այսպէս խօսէր, ահա ամպ լուսաւոր հովանի եղև 'ի վերայ նոցա. և եկն յամպոյ անտի հայրական ձայն, որ ասէր. Դա է Որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ, դմա լուարուք։ Իբրև լուան աշակերտքն զայն երկնաւոր բարբառ՝ անկան 'ի վերայ երեսաց իւրեանց և երկեան յոյժ. իսկ Յիսուս մատուցեալ բուռն եհար զնոցանէ և ասէ. Յառն կացէք և մի երկնչիք։ Անդրադարձին զաչս իւրեանց և ոչ զոք տեսին՝ բայց միայն զՅիսուս. որ և պատուիրեաց նոցա յիջանելն իւրեանց 'ի լեռնէ անտի, մի ումեք ասել

զտեսիլն զայն, մինչև որդի մարդոյ 'ի մեռելոց յարիցէ :

513 . Այլ իբրև եկին 'ի ժողովուրդն, մատեաւ այր մի, 'ի ծունր իջանէր ասելով. Տէր, ողորմեաց որդւոյ իմում. զի լուսնոտի և չարաչար հիւանդանայ. բազում անգամ անկանի 'ի ջուր, և երբեմն 'ի հուր: Նոյն հետայն սաստեաց Յիսուս դիւին, և ել 'ի մանկանէն, և բժշկեցաւ մանուկն 'ի նմին ժամու : Անտի չոգան 'ի Գալիլեա. և մինչդեռ շրջէին, միւանգամ առաջի արար Յիսուս աշակերտացն զչարչարանս և զմահ իւր, թէ որպէս մատնելոց է 'ի ձեռս մարդկան, և սպանցեն զնա և յերիր աւուր յարիցէ. իսկ նոքա տրտմեցան յոյժ:

Իբրև եկին 'ի Կափառնաում, մատեան առ Պետրոս որք պահանջէին զերկդրամեան գլխահարկս, և խնդրեցին զայն : Բայց յառաջ քան զյայտնելն Պետրոսի՝ հրաման ետ նմա Յիսուս երթալ և ընկենուլ զկարթ 'ի ծով, և բացեալ զփոր առաջնոյ ձկան գտանել սքանչելապէս զստատեր, և տալ զայն վասն Յիսուսի և վասն իւր:

514 . Տեսեալ աշակերտքն զյաճախութիւն տէրունեան հրաշից՝ համարէին թէ նա առ ժամայն յայտնելոց է զթագաւորութիւն իւր. Նմին իրի վիճէին ընդ միմեանս զճանապարհայն, թէ ով 'ի նոցանէ լինելոց է մեծ յարքայութեան նորա : Զայն իբրև գիտաց Յիսուս, կոչեաց առինքն մանուկ, և կացուցեալ 'ի մէջ նոցա ասէ. Եթէ ոչ դարձջիք և լինիջիք իբրև զմանկտի՝ ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից : Այսպիսի բանիւ և այլ ևս յոլովագունիւք յորդոր լինէր նոցա միշտ պատկառ կալ խոնարհութեան և փախչել 'ի գայթակղութեանց, ներել իրերաց բազում անգամ մինչև ցեօթանասնեկին եօթն, և միաբան լինել յանուն Ա-

տուծոյ. որով և ինքն ընդ նոսա լինելոց է։ Այսմ օրինակ բերեալ զԹագաւորն առէ, թէ իբրև կամեցաւ նա համար առնել 'ի մէջ ծառայից իւրոց, մատուցաւ առ նա պարտապան մի բիւր քանքարոյ։ Եւ իբրև ոչ ունէր հատուցանել, անկեալ առ ոտս նորա երկիր պագանէր նմա և ասէր. երկայնամիտ լեր առ իս և զամենայն հատուցից քեզ։ Գթացեալ 'ի նա տէրն իւր եթող զպարտսն, և արձակեաց զնա մնալ ազատ 'ի պարտուց։ Իսկ ծառայն ելեալ եգիտ զմի 'ի ծառայակցաց իւրոց, որ պարտէր նմա հարիւր դահեկան. և կալեալ խեղդէր ասելով. հատո ինձ զոր պարտիս։ Եւ նորա թէպէտ անկեալ յոտս նորա աղաչէր զնա երկայնամիտ լինել, այլ նա ոչ կամէր լսել նմա, մինչև արկ զնա 'ի բանտ։ Զայն իբրև լուաւ Թագաւորն՝ կոչեաց զնա և բարկացեալ ասէ. ծառայ չար և ապերախտ, ես թողի զամենայն զպարտս քո, վասն զի աղաչեցեր զիս. իսկ արդ ո՞չ էր արժան և քեզ ողորմել ծառայակցին քում. յայնժամ մատնեաց զնա դահճաց։ Նոյնպէս և Հայրն երկնաւոր արասցէ ձեզ, եթէ ոչ թողուցուք իւրաքանչիւր եղբօր իւրում 'ի սրտից ձերոց զյանցանս նոցա։

515. Յետ այսորիկ փոխեցաւ Յիսուս 'ի Գալիլեէ և չոգաւ յայնկոյս Յորդանանու. գնացին զհետ նորա ժողովուրդ բազում և բժշկեաց զհիւանդս նոցա։ Անդ իբրև կամէին փարիսեցիք փորձել զնա վասն արձակելոյ զկանայս, ափիբերան արար զնոսա բանիւ սուրբ գրոց, թէ զոր Աստուած զուգեաց, մարդ մի մեկնեսցէ։ Ի նմին ժամու մատուցան առ նա մանկունս, զի ձեռն դիցէ 'ի վերայ նոցա և աղօթս արասցէ. իսկ աշակերտքն սաստէին նոցա՝ չմերձենալ առ նա։ Ասէ Յիսուս. Թոյլ տուք մանկտւոյդ գալ

առ իս. զի այդպիսեացդ է արքայութիւն երկ-
նից. և եդեալ ձեռս 'ի վերայ նոցա՝ գնաց անտի:

Եւ եղև 'ի մերձենալ աւուրց վերանալոյ նո-
րա կամեցաւ երթալ յԵրուսաղէմ. և առաքեաց
հրեշտակս առաջի իւր. որոց 'ի գնալն մտին
'ի գիւղ մի Սամարացւոց պատրաստել ինչ
նմա: Իսկ Սամարացիք հերձեալք 'ի Հրէից
անտի (309) ոչ գիտացին յարգել զՅիսուս.
և ոչ ընկալան զնա: Իբրև տեսին աշակերտքն
Յակոբոս և Յովհաննէս ասեն. Տէր, կամիս զի
ասասցուք իջանել հուր յերկնից և սատակել
զնոսա: Սաստեաց 'ի նոսա Յիսուս և ասէ. Ոչ
գիտէք որոյ հոգւոյ էք դուք. զի ոչ եկի ես
կորուսանել զոգիս մարդկան, այլ կեցուցա-
նել: Եւ գնացին յայլ գեօղ:

516. Յետ այսորիկ ընտրեաց Յիսուս և այլ
ևս եօթանասուն և երկու աշակերտս, և առա-
քեաց զնոսա երկուս երկուս առաջի իւր յամե-
նայն քաղաքս և 'ի տեղիս՝ ուր ինքն երթալոց
էր և ասէ. Երթայք, ահա առաքեմ զձեզ իբրև
զգառինս 'ի մէջ գայլոց. յոր տուն մտանիցէք՝
բժշկեսջիք որ 'ի նմա հիւանդք իցեն, և ասասջիք
նոցա. Մերձեալ է 'ի վերայ ձեր արքայութիւն
Աստուծոյ: Որ ձեզ լսէ, ինձ լսէ. և որ զձեզ անար-
գէ, զիս անարգէ. և որ զիս անարգէ, զառաքիչն
իմ անարգէ: Յայնժամ սկսաւ վայ տալ քաղա-
քացն Հրէաստանի, յորս եղեն այնչափ զօրու-
թիւնք և սքանչելիք. և նոքա ոչ հաւատացին.
այլ կացին մնացին ապառում և անհաւան ա-
ռաւել քան զՍոդոմայեցիս և զՍիդոնացիս: Իբրև
դարձան խնդութեամբ 'ի քարոզութենէ եօ-
թանասուն և երկուքն՝ ասեն ցՅիսուս. Տէր, և
դևք հնազանդին մեզ յանուն քո: Եւ նա
ասէ ցնոսա. Տեսանէի զսատանայ անկեալ
յերկնից իբրև զփայլակն. ահա ետու ձեզ իշխա-

նութեան կոխել զօձս և զկարիճս և զամենայն զօրութեանս թշնամւոյն, և ձեզ ոչինչ մեղանչիցեն :

517 . Ընդ մատեաւ ումն օրինական, և կամելով փորձել զնա ասէ . Վարդապետ, զինչ գործեցից զի զկեանսն յաւիտենականս ժառանգեցից : Եւ նա ասէ . Զինչ գրեալ է յօրէնս . պահեա զպատուիրանս և կեցցես : Իսկ նա ամբարտաւանութեամբ խին պարծէր թէ չիք նորա ընկեր 'ի պատուիրանապահութեան : Նմին իրի ասաց նմա Յիսուս զառակս զայս . Այր ումն իջանէր յԵրուսաղէմէ յԵրիքով, և անկաւ 'ի ձեռս աւազակաց , որք մերկացուցեալ զնա , վէրս 'ի վերայ եդին և թողին կիսամահ: Էջ ընդ նոյն ճանապարհ քահանայ մի, և տեսեալ զնա զանց արար . նոյնպէս արար և ղեւտացի մի : Իսկ սամարացի ումն տեսեալ զնա գթացաւ , և մատուցեալ պատեաց զվէրս նորա՝ արկեալ 'ի վերայ ձէթ և գինի . և եդեալ 'ի վերայ գրաստու ած զնա 'ի պանդոկի մի և դարմանեաց զնա: Եւ 'ի վաղիւ անդր իբրև կամէր գնալ անտի, ետ ցպանդոկապետն երկուս դահեկանս և ասէ . դարմանն տար դմա . և զոր ինչ ծախեսցես 'ի դա , 'ի միւսանգամ գալստեան իմում հատուցից քեզ: Արդ ո՞ յերեցունց անտի եղև առաւել բարերար անկելոյն : Եւ նա ասէ . այն՝ որ արար զգործ ողորմութեան : Ասէ ցնա Յիսուս . Երթ և դու արա զնոյն և կեցցես . ապա թէ ոչ՝ լոկ բանիւ չկարես արդարանալ առաջի Աստուծոյ :

518 . Մինչ չև էին աշակերտքն դարձեալ 'ի քարոզութենէ՝ եմուտ Յիսուս 'ի գիւղ մի . և կին ումն անուն Մարթա ընկալաւ զնա 'ի տուն իւր առ 'ի պատուասիրել զնա . իսկ քոյր նորա Մարիամ եկն նստաւ առ ոտսն Յիսուսի և լսէր

ջերմ եռանդեամբ զբան նորա ։ Իսկ Մարթա քանզի զբաղեալ էր 'ի բազում սպասու, եկն և կաց առ նմա և խնդրեաց՝ զի հրամայեսցէ քեռն իւրում երթալ օգնել նմին ։ Յայնժամ եցոյց նմա Յիսուս, թէ Մարիամ մասն բարի ընտրեաց լսելոյ ձայնի տեառն, որ մեծ է յոյժ քան զպատուասիրութիւն քո. և ոչ բնաւ բարձցի 'ի նմանէ ։

519. Մինչդեռ աղօթէր Յիսուս 'ի տեղւոջ ուրեք, խնդրեաց ոմն յաշակերտաց իւրոց ուսուցանել նոցա կալ յաղօթս, որպէս ուսուցեալ էր Յովհաննէս աշակերտաց իւրոց ։ Ուսոյց նոցա Յիսուս զտէրունական աղօթսն՝ Հայր մեր ։ Ապա ցուցեալ նոցա զզօրութիւն աղօթիցն՝ ասէ առակաւ. Եթէ ոք երթայցէ առ բարեկամն 'ի մէջ գիշերի և խնդրիցէ փոխ երիս նկանակս, և նա թէպէտ և ոչ կամիցի աշխատ լինել սակս բարեկամութեանն, սակայն վասն ժտութեանն յարուցեալ տացէ նմա զինչ և պիտոյ իցէ։ Այսպէս եթէ ոք խնդրէ ինչ յԱստուծոյ ջերմ աղօթիւք, առնու. և որ հայցէ, գտանէ ։

Խօսեցաւ անդ և առակ մի սակս աշխարհասէր ագահին, և ասէ. Առն ուրումն մեծատան եռուն անդք տոհմականս, և խորհէր 'ի միտս իւր և ասէր. քակեցից զշտեմարանս իմ, և կս մեծամեծս շինեցից, և անդր ժողովեցից զցորեան և զամենայն բարութիւնս իմ. և ասացից ցանձն իմ. անձն, ունիս բազում բարութիւնս համբարեալ ամաց բազմաց, հանգիր, կեր արբ և ուրախ լեր։ Ասէ ցնա Աստուած. Անմիտ, եթէ յայսմ գիշերի զոգիդ 'ի քէն 'ի բաց պահանջիցեն, իսկ զոր պատրաստեցերն ում արդեօք լինիցի։ Յորդոր լինէր ամենեցուն մի՛ հոգալ վասն անցաւորիս այլ քաջայոյս լինել յողորմութիւն բարձրելոյն, որ կերակրէ զագռաւս՝ որոց ոչ գոն շտեմարանք. և

գեղեցիկ զարդարէ զշուշանն վայրի երկին երկին երանգօք: Խնդրեցէք. առէ զարքայութիւնն Աստուծոյ, և այն ամենայն յաւելցի ձեզ:

520. Ի նմին ժամանակի պատմեցին նմա վասն Գալիլեացւոց՝ որք եկին յԵրուսաղէմ զոհել տեառն, բայց Պիղատոս գոլով թշնամի Հերովդի՝ 'ի նախատինս նորա եւ սպանանել զնոսա և խառնել զարիւնն ընդ զոհս նոցա: Զայն իբրև լուաւ Յիսուս ասէ. Համարիք եթէ Գալիլեացիքն այնոքիկ եղեն մեղաւորք քան զամենայն Գալիլեացիս, զի այնպիսի անցս կրեցին. ոչ այդպէս, այլ ասեմ ձեզ. եթէ ոչ ապաշխարեսջիք, ամենեքին նոյնպէս կորնչիջիք: Եւ զի ընդ այն ժամանակս անկաւ աշտարակն 'ի Սելովամ և սպան ութուտասն անձինս, ասէ Յիսուս. Համարիք թէ նոքա պարտապանք եղեն քան զամենայն մարդիկ, որ բնակեալ են յԵրուսաղէմ. ոչ այդպէս. այլ ասեմ ձեզ. եթէ ոչ ապաշխարեսջիք, ամենեքեան նոյնպէս կորնչիջիք:

## ԳԼՈՒԽ Զ

Հրաշալի բժշկութիւնք Յիսուսի. Տասն բորոտքն. Կինն կորկամեալ. Ջրգողեալ այրն. Ի ծնէ կոյրն. Կինն շնացեալ:

Ա. Տ. 33

521. Իբրև ելանէր փրկիչն յԵրուսաղէմ, էանց ընդ մէջ Սամարիայ և Գալիլեացւոց. և 'ի մտանելն 'ի գիւղ մի՝ պատահեցան նմա տասն այր բորոտք որք կացեալ 'ի հեռաստանէ բարձին զձայնս և ասեն. Յիսուս վարդապետ, ողորմեաց մեզ: Իսկ նա պատուիրեաց նոցա երթալ ցուցանել զանձինս քահանայիցն: Իբրև

գնացին, առ ժամայն սրբեցան։ Մի ոմն 'ի նոցա-նէ երախտագէտ մտօք դարձեալ առ Յիսուս՝ 'ի ձայն մեծ փառաւոր առնէր զԱստուած, և ան-կեալ առ ոտս նորա գոհանայր զնմանէ. և ինքն էր սամարացի։ Ասէ Յիսուս. Ո՞չ տասն ողջ սրբեցան. իսկ արդ ինննքն ո՞ւր են, զի ոչ գը-տացին դառնալ փառս տալ Աստուծոյ, բայց միայն այլազգիս այս։ Ապա ասէ ցայրն. Արի գնա զի հաւատք քո կեցուցին զքեզ։

522. Իսկ իբրև ուսուցանէր 'ի ժողովրդա-նոցն յաւուր շաբաթու, տեսանէր անդ զկին մի գլխաշուռ, որ յութուտասն ամաց հետէ կորկա-մեալ՝ չկարէր և ոչ իսկ 'ի վեր հայել, հրամայեաց բերել զնա առ ինքն. և գթասիրեալ 'ի նա ասէ. Կին դու, արձակեալ ես 'ի հիւանդութենէ քումմէ։ Եւ եդեալ 'ի վերայ նորա զձեռն իւր, առ ժամայն բժշկեալ ուղղեցաւ կինն և փառա-ւոր առնէր զԱստուած։ Իսկ բարկացեալ ժո-ղովրդապետն ցասուցեալ, թէ ընդէր Յիսուս 'ի շաբաթու բժշկեաց, ասէ ցժողովուրդն. Վեց օր է, յորս արժան է գործել. յայնս եկայք բժշկեցարուք, և մի յաւուր շաբաթու։ Եւ զի պապանձեցուցանէ Յիսուս զժողովրդապետն՝ ա-սաց. Կեղծաւորք, իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ յա-ւուր շաբաթու ո՞չ արձակէ զեզն իւր կամ զէշ 'ի մսրոյ և տանի տայ ջուր. իսկ այս դուստր Աբ-րահամու է, զոր կապեաց սատանայ ահաւա-սիկ ութուտասն ամ. ո՞չ արժան էր արձակել 'ի կապանաց անտի 'ի շաբաթու։ Զայս իբրև ասաց Յիսուս, յամօթ լինէին ամենեքին որք հակա-ռակն կային նմա. իսկ հաւատացեալ ժողո-վուրդն ուրախ լինէր 'ի վերայ ամենայն փա-ռաւորութեանցն՝ որք գործէին 'ի նմանէ։

523. Մինչդեռ ուսուցանէր Յիսուս զժո-ղովուրդն, ասէ ցնա ոմն. Տէ՛ր, եթէ սակա՞ւք իցեն

որք հատանելոց իցեն փրկութեան: Իսկ նա առ
'ի կործանել զընդվայրաբանութիւն նոցա՝ ասէ. Ջա-
նացարուք մտանել ընդ դուռն նեղ. ասեմ ձեզ,
զի բազումք խնդրեսցեն, այլ ոչ կարասցեն մտա-
նել առանց առաքինութեան։ Յորմէհետէ մտցէ
տանուտէրն 'ի ներքս և փակեսցէ զդուռնն, և
որք մնան արտաքոյ՝ սկսանին աղաղակել. տէր
տէր բաց մեզ. անդ լուիցեն զպատասխանիսն խո-
րհեանց 'ի ներքուստ՝ թէ ոչ գիտեմ զձեզ՝ ուստի
էք. յայնժամ սկսանիցին ասել. կերաք առաջի
քո և արբաք, և 'ի հրապարակս մեր ուսուցեր։
Այլ դարձեալ լուիցեն զայն ահաւոր պատաս-
խանի, թէ ոչ գիտեմ զձեզ. 'ի բաց կացէք յի-
նէն ամենայն մշակք անիրաւութեան։ Անդ եղի-
ցի լալ և կրճտել ատամանց՝ յորժամ տեսանիցէք
զամենայն մարգարէս և զսուրբս յարքայու-
թեանն Աստուծոյ, և զձեզ հանեալ արտաքս։

524. Ի նմին աւուր ոմանք 'ի փարիսեցւոց
մատեան առ Յիսուս և ասեն. Գնա աստի, զի
Հերովդէս կամի սպանանել զքեզ։ Նա պատա-
խանի. Երթայք ասացէք խորամանկ աղուեսուն
այնմիկ. աՀաւասիկ դեւս հանեմ և բժշկութիւնս
կատարեմ այսօր և վաղիւ և ապա յերիր աւուր
կատարիմ. և զի՞նչ չար արարեալ է իմ, զի կամի
անօրէնն սպանանել զիս։ Սակայն պարտ է ինձ
յետ աւուրց ինչ երթալ յԵրուսաղէմ, և անդ
չարչարիլ. ուրանօր ամենայն մարգարէք կա-
տարեցան. զի ոչ է մարթ կորնչել մարգարէի
արտաքոյ քան զԵրուսաղէմ. որպէս զի եկեսցէ
'ի վերայ ձեր ամենայն արիւն արդար հեղեալ
յերկրի 'ի ձեռն ձեր՝ յարենէն Աբելի արդարոյ
մինչև ցարիւնն Զաքարիայ որդւոյ Բարաքեայ՝
զոր սպանիք ընդ մէջ տաճարին և սեղանոյ (296)։

525. Հրաւիրեցաւ Յիսուս 'ի տուն ուրումն
յիշխանացն փարիսեցւոց 'ի շաբաթու ուտել

հաց. և գտաւ անդ այր մի ջրգողեալ առաջի նորա։ Յայնժամ Յիսուս առիթ առեալ զայն՝ եհարց ցօրինաւորսն և ցփարիսեցիսն՝ որ անդ բազմեալ էին, եթէ արժա՞ն իցէ 'ի շաբաթու բժշկել։ Նո՛ 'ի պապանձել նոցա՝ բուռն հարեալ զնմանէ բժշկեաց զնա։ Ապա ասէ ցնոսա. Ո՞յր ուրուք 'ի ձէնջ էշ կամ եզն անկանիցի 'ի ջրհոր և ոչ վաղվաղակի հանիցէ զնա յաւուր շաբաթու։ Եւ ոչ ոք կարաց տալ նմա պատասխանի այն։ Ապա սկսաւ խրատել զկոչնականսն, որք ջանային բարձրնախ լինել. Յորժամ, ասէ, կոչիցէ ոք զքեզ 'ի կոչունս. մի՛ բազմեսցիս յառաջին բարձին. գուցէ պատուականագոյն ևս քան զքեզ իցէ կոչեցեալն 'ի նմանէ. և եկեալ որ զքեզ և զնա կոչեաց՝ ասիցէ ցքեզ, տուր սմա տեղի. և ապա սկսանիցիս ամօթով զյետին տեղին ունել։ Այլ յորժամ գնաս բազմիս 'ի յետին տեղւոջ, և տեսեալ զքեզ անդ որ կոչեացն զքեզ՝ ասիցէ ցքեզ. բարեկամ, 'ի վեր մատիր. յայնժամ եղիցի քեզ փառք առաջի բազմականացն քոց։

526. Ապա դարձուցեալ զբանն իւր առ կոչնատէրն ասէ. Յորժամ առնիցես ճաշ կամ ընթրիս, մի՛ կոչեր զբարեկամս քո և մի՛ զեղբարս քո և մի՛ զմեծամեծս. զի մի և նոքա փոխարէն կոչեսցեն զքեզ, և լինիցի քեզ հատուցումն։ Այլ յորժամ առնիցես զընդունելութիւն, կոչեա զաղքատս և զխեղս և զկաղս և զկոյրս, և երանելի լինիցիս, զի ոչ ունին փոխարէն հատուցանել քեզ. և հատուցի քեզ 'ի յարութեան արդարոց։ Զայս իբրև լուաւ ոմն 'ի բազմականացն ասէ. Երանի որ կերիցէ ճաշ յարքայութեանն Աստուծոյ։ Առ այս եբեր Յիսուս յօրինակ զմեծատունն՝ որ գործեաց ընթրիս և հրաւիրեաց զբազումս. այլ նոքա յուլացեալ՝ ոմն չոքաւ յա-

գարակ իւր, ոմն գնաց փորձել զեզինս իւր. և այլ ոմն առ կին իւր․ և բարկացեալ տանուտէրն՝ արհամարհեաց զնոսա, և եմոյծ ՚ի կոչունս իւր զաղքատս, զխեղս և զկոյրս ։ Ապա ասէ․ Ոչ ոք յայնց կոչեցելոց ճաշակեսցէ յընթրեաց իմոց ։

527․ Մինչդեռ Յիսուս յԵրուսաղէմ էր, եանս յաւուր շաբաթու կոյր մի ՚ի ծնէ․ հարցին աշակերտքն զնմանէ և ասեն․ Ռաբբի, ո՞յր աղագաւ կոյր ծնեալ է սա․ արդեօք վասն յանցանաց զորա՞. թէ հօր և մօր իւրոյ ։ Պատասխանի ետ Յիսուս․ Ոչ զորա յանցանք են և ոչ ծնողացն․ այլ զի յայտնի փառաւորեսցին գործքն Աստուծոյ ՚ի դմա․ և ինձ պարտ է գործել զգործս այնորիկ՝ որ առաքեացն զիս ։ Ապա եթուք ՚ի գետին և արար կաւ, և ծեփեաց այնու զաչս կուրին, և հրամայեաց նմա երթալ և լուանալ յաւազանին Սելովմայ․ որոյ ջուր գալով յականէ Գեհոնին՝ ընթացեալ ՚ի վերին կողմն քաղաքին՝ կոչէր Առաքեալ։ Չոգաւ կոյրն և լուացաւ ըստ հրամանի նորա, և բացան աչք նորա ։

Իսկ ծանօթք նորին և դրացիք զարմացեալք ասէին․ ո՞չ սա է որ նստէրն և մուրանայր։ Ոմանք ասէին՝ նա է․ այլքն ասէին՝ նման է նմա․ իսկ ինքն ասէր՝ ես եմ։ Հարցին ցնա և ասեն․ իսկ զիա՞րդ բացան աչք քո։ Նա պատասխանի․ այր մի՝ որում Յիսուսն ասեն, կաւ արար և ծեփեաց զաչս իմ և ասէ ցիս․ երթ ՚ի Սելովամ և լուա․ չոգայ լուացայ և տեսանեմ։ Ածին զնա առ փարիսեցիս, որք հարցանէին զնա՝ թէ զիա՞րդ տեսանես․ և նա զնոյն պատասխանի ետ նոցա։ Իսկ նոքա հայհոյէին զՅիսուս, և ոչ կամէին հաւատալ թէ նա եբաց զաչս նորա, մինչև կոչեցին զծնողս բացելոյն և հարցին թէ սա՞ է որդին ձեր, զորմէ ասէիք թէ կոյր ծնաւ, արդ զիա՞րդ

տեսանէ: Նոքա ասեն՝ թէ սա է որդին մեր, և զի կոյր ծնաւ. բայց թէ զիա՞րդ տեսանէ կամ թէ ո՛ եբաց զաչս դորա՝ մեք ոչ գիտեմք. ցդա իսկ հարցէք: Դարձեալ հարցին ցկոյրն և ասեն. տուր փառս Աստուծոյ. մեք գիտեմք, զի այրն այն մեղաւոր է: Եւ նա ասէ՝ թէ ես ոչ գիտեմ զնա մեղաւոր. այլ զայս գիտեմ, զի կոյր էի, և տեսանեմ. 'ի յաւիտենից ոչ ոք լուաւ եթէ ոք եբաց զաչս կուրի 'ի ծնէ կոյր ծնելոյ. եթէ նա ոչ էր յԱստուծոյ, ո՞րպէս կարէր առնել զայսպիսի սքանչելիս: Ընդ այս բան կատաղեալ նոցա ասեն. 'ի մեղս իսկ ծնեալ ես ամենևին, և դու վարդապետե՞ս լինիս մեր. և անդէն վարեցին զնա արտաքս: Զայն լուեալ Յիսուսի, իբրև եգիտ զնա՝ կամեցաւ յայտնել նմա զինքն լինել Որդի Աստուծոյ: Եւ նա առ ժամայն դաւանեալ ասէ. Հաւատամ տէր. և երկիր եպագ նմա:

528. Ի նմին ժամանակի ասէ Յիսուս. Ի դատաստան եկի յաշխարհս այս, զի որ ոչն տեսանեն՝ տեսցեն, և որ տեսանենն՝ կուրասցին: Իսկ փարիսեցիքն ասէին. Միթէ և մեք կո՞յրք իցեմք: Ասէ ցնոսա Յիսուս. Եթէ կոյրք էիք, ոչ էր ձեր մեղք. բայց արդ ասէք թէ տեսանեմք, և մեղքն ձեր 'ի ձեզ հաստատեալ են: Դարձեալ հերձուած լինէր 'ի մէջ նոցա. ոմանք ասէին, թէ դև քո 'ի նմա և մոլեգնի. զի՞ բնաւ լսէք նմա. կէսքն ասէին. այսպիսի բանք ոչ են դիւահարի. միթէ դև կարէ՞ զաչս կուրի բանալ:

Դեռ ևս Յիսուս էր յԵրուսաղէմ, ածին առաջի նորա փարիսեցիք կին մի ըմբռնեալ 'ի շնութեան. և փորձելով հարցանէին վասն նորա, զի չարախօսեսցեն զնմանէ: Իսկ փրկիչն գթացեալ 'ի կինն՝ գրէր մատամբ 'ի գետնի. և ասէ ցնոսա. Եկայք ամենեքեան ընթերցջիք զգիրս զայս,

և որ անմեղն է 'ի ձէնջ՝ նախ նա ընկեսցէ քար 'ի վերայ դորա ։ Անդ լուսաւորեաց զխիղճս մտաց նոցա, և ընթեռնուին մի ըստ միոջէ զյանցանս իւրեանց ․ և սկսեալ 'ի քահանայապետից մինչև ցփարիսեցիսն՝ ելին ամենեքեան , և մնաց միայն կինն ։ Եւ ասէ ցնա Յիսուս ․ Եւ ոչ ես կամիմ դատապարտել զքեզ ․ երթ , այլ մի ևս մեղան_չեր յայսմհետէ ։

529 ․ Ի ժամանակս ձմերայնոյն սկսան կա_տարել զնաւակատիս տաճարին յԵրուսաղէմ զոր կարգեալ էր Յուդա Մակաբէ (444) ․ և շրջէր Յիսուս 'ի տաճարի անդ 'ի սրահին Սո_ղոմոնի ։ Շուրջ եղեն զնովաւ Հրեայքն և ասեն, Մինչև յերբ թափես զոգիս մեր ․ եթէ դու ես Քրիստոսն , ասա մեզ համարձակ։ Ետ պատաս_խանի Յիսուս ․ Ասացի ձեզ , և ոչ հաւատայք ինձ ․ գործքն իսկ գործեալք յինէն վկայեն վասն իմ՝ թէ եմ Որդի Աստուծոյ և Աստուած ․ այլ դուք ոչ հաւատայք , զի չէք յոչխարաց անտի իմոց ․ քանզի ոչխարք իմ լսեն ձայնի ի_մում , և գան զկնի իմ, և ես տամ նոցա զկեանս յաւիտենականս ․ Հայրն իմ ետ ինձ զնոսա՝ զի մի կորիցեն յաւիտեան ․ ես և Հայր իմ մի եմք։ Ընդ այս բան այնչափ կատաղեցան նոքա, մինչև վէմս առին քարկոծել զնա ։ Ասէ ցնոսա Յի_սուս․ Բազում գործս բարիս ցուցի ձեզ 'ի Հօրէ իմմէ , վասն որո՞յ գործոյ 'ի նոցանէ քարկոծ առնէք զիս ․ արդ եթէ ոչ գործեմ զգործս Հօր իմոյ , մի հաւատայք ինձ ․ ապա թէ գործեմ, գէթ գործոցն հաւատացէք․ զի ծանիջիք թէ Հայր յիս է, և ես 'ի Հայր։ Դարձեալ խնդրէին զնա ըմբռնել, և ել 'ի ձեռաց նոցա ․ և գնաց միւսանգամ յայնկոյս Յորդանանու և եկաց անդ , ուր երբեմն մկրտէր Յովհաննէս ։

## ԳԼՈՒԽ Է

Առակախօսութիւնք Յիսուսի : Անառակ որդին : Տնտեսն : Մեծատունն և Ղազարոս : Դատաւորն : Փարիսեցին և Մաքսաւորն :
Ա. Տ. 33

530 . *Ըստ սովորութեան այնր ժամանակի բազում ինչ առակօք խօսէր Յիսուս առ 'ի դիւրմաց առնել զգերմարդկային վարդապետութիւն իւր թանձրամիտ ժողովրդեանն . որք էր զի բարկանային 'ի վերայ նորա , և էր զի հալածէին. և յաճախակի տրտնջէին՝ յորժամ տեսանէին թէ ոչ գարշի 'ի մեղաւորաց , այլ խօսի քաղցրութեամբ , և խրատէ մարդասիրութեամբ առ 'ի ածել զնոսա յապաշխարութիւն կենաց: Յաւուր միում յորժամ մերձ էին առ նա բազում մաքսաւորք և մեղաւորք լսել 'ի նմանէ զկենսատու բանս . սկսան փարիսեցիքն և դպիրք տրտնջել զնմանէ՝ թէ ընդէ՞ր ընդունի զնոսա: Յայնժամ ասաց առ նոսա զառակս զայս . Եթէ ոք 'ի ձէնջ կորուսանիցէ զմի 'ի հարիւր ոչխարաց իւրոց , ո՞չ թողուցու զիննսուն և զինն յանապատի, և երթիցէ զհետ կորուսելոյն մինչև գտանիցէ զնա: Իսկ ընդ գտանելն դնէ զնա 'ի վերայ ուսոց իւրոց խնդալով, և կոչէ զբարեկամս իւր և ասէ . ուրախ եղերուք ընդ իս , զի գտի զոչխարս իմ զկորուսեալ: Ասեմ ձեզ . զի այսպէս է ուրախութիւն յերկինս վասն միոյ մեղաւորի՝ որ ապաշխարիցէ , քան վասն իննսուն և ինն արդարոց: Կամ եթէ կին ոք կորուսանիցէ զմի 'ի տասն դրամից , ո՞չ լուցանէ ճրագ , և ածէ աւել 'ի տան մինչև գտանիցէ զայն . և*

իբրև գտանէ՝ կոչէ զբարեկամս և զդրացիս և ասէ․ ուրախ լերուք ընդ իս, զի գտի զդրամն իմ՝ զոր կորուսի։ Այնպէս լինի ուրախութիւն առաջի հրեշտակաց Աստուծոյ 'ի վերայ միոյ մեղաւորի, որ ապաշխարիցէ ։

531․ Յաւել Յիսուս և զայս առակ առաւել ազդու ։ Այր մի ունէր երկու որդիս ․ կրսերն անհնազանդութեամբ իմն ստիպեաց ըզհայրն, և էառ զբաժին իւր յընչից նորա ․ և յետ ոչ բազում ինչ աւուրց չոգաւ յաշխարհ հեռի, և անառակութեամբ վատնեաց զբաժին իւր։ Յետ այնորիկ եղև անդ սով սաստիկ, մինչև սկսաւ ինքն ևս չքաւորել․ և առ դառնութեան սովոյն չոգաւ յարեցաւ յումն բարեկեցիկ առ 'ի գտանել կերակուր ․ իսկ նա յղեաց զնա յագարակ իւր արածել զխոզս ։ Սակայն և այնպէս առ կարի իմն չքաւորութեան ցանկայր ուտել յեղջերեն՝ զոր խոզքն ուտէին ։ Անդ ապա անագան ուրեմն եկն 'ի միտս իւր և ասէ․ Քանի՜ վարձկանք են 'ի տան հօր իմոյ հացալիցք, և ես աստ սովամահ կորնչիմ․ յարուցեալ գնացից առ հայր իմ և ասացից․ Հայր, մեղայ յերկինս և առաջի քո, և ոչ ևս եմ արժանի կոչիլ որդի քո ․ արա զիս իբրև զմի 'ի վարձկանաց քոց ։ Այն ինչ կորագլուխ գնայր առ հայր իւր, ետես զնա հայրն 'ի հեռուստ, և շարժեալ 'ի գորովական գթոյն ընթացաւ ընդ առաջ նորա, և անկեալ զպարանոցաւն համբուրեաց զնա ։ Ասէ ցնա որդին ․ Հայր մեղայ յերկինս և առաջի քո ․ և ոչ ևս եմ արժանի կոչիլ որդի քո։ Ասէ հայրն ցծառայս իւր․ Վաղվաղակի բերէք զպատմուճանն զառաջին և ագուցէք նմա, և տուք զմատանին 'ի ձեռս նորա, և կօշիկս յոտս նորա, և ածէք զեզն պարարակ․ զենէք, կերիցուք և ուրախ լիցուք․ զի այս որդի

իմ մեռեալ էր և եկեաց, կորուսեալ էր և գտաւ. և այսպէս սկսան ամենեքեան ուրախ լինել:

532. Իսկ երէց որդի նորա քաղաքի յագարակին էր. իբրև եկն և մերձեցաւ 'ի տունն և լուաւ զձայն երգոց և պարուց, եհարց և խնացաւ զպատճառն. բարկացաւ և ոչ կամէր մտանել 'ի ներքս: Իսկ գթած հայրն ելեալ արտաքս աղաչէր զնա. այլ նա 'ի դէմս ածէր հօրն թէ այսչափ ամս ծառայեցի քեզ հնազանդութեամբ, և ոչ երբէք անցի զպատուիրանաւ քով. ուլ մի ոչ ետուր ինձ ուրախանալ ընդ բարեկամս իմ. իսկ յորժամ եկն այս անառակ որդիդ՝ զեներ դմա զեզն պարարակ: Եւ նա որգահատելով ասէր. Որդեակ, դու հանապազ ընդ իս ես, և ամենայն որ ինչ իմ է՝ քո է. այլ ուրախ լինել պարտ էր, զի եղբայր քո մեռեալ էր և եկեաց, կորուսեալ էր և գտաւ: Ահա այսու առակաւ յամօթ արար Յիսուս զփարիսեցիս, որք իբրև զերէց եղբայրն՝ չկամէին տալ վայելել կրսերոյն 'ի գութ հօրն, որ ոչ կամէր ըզմահ մեղաւորին, այլ զդառնալ նորա և զկեալն:

533. Յաւել Յիսուս և զայս առակ. Այր ոմն մեծատուն ունէր տնտես, որ անհաւատարիմ գտեալ 'ի գործ պաշտաման իւրոյ՝ ամբաստանեցաւ առաջի տեառնն՝ որպէս թէ վատնիցէ զինչս նորա: Նմին իրի կոչեաց զնա տէր իւր, և ասէ. Զինչ է այս զոր լսեմ զքէն. տուր զհամար տնտեսութեան քո, զի ոչ ևս կարես լինել տնտես: Յայնժամ ասէ ընդ միտս իւր տնտեսն. զի՞նչ գործեցից իբրև ելանիցեմ 'ի գործոյ տնտեսութեանս. գործել ոչ կարեմ, մուրանալ ամաչեմ: Ապա խորհեալ նորա խորամանկ խորհուրդ, կոչեաց առ ինքն մի ըստ միոջէ զպարտապանս տեառն

իւրոյ . և ասէ ցառաջինն . քանի՞ ինչ պարտիս տեառն իմում . ասէ , հարիւր մար ձիթոյ . և նա ասէ , թողեալ զկէսն՝ նիստ գրեա վաղվաղակի յիսուն : Դարձեալ ցմիւսն ասէ . դու քանի՞ ինչ պարտիս . և նա ասէ , հարիւր քոռ ցորենոյ . և ասէ . առ զգիր քո և գրեա ութսուն : Զայն իբրև լուաւ տէր իւր՝ գովեաց զտնտեսն անիրաւութեան . զի իմաստութեամբ եթող նոցա , որպէս զի յետ ելանելոյ 'ի տնտեսութենէն՝ նոքա ընկալցին զնա 'ի տունս իւրեանց : Այսու առակաւ խրատ ետ Յիսուս՝ երկրաւոր մամոնայիւ 'ի ձեռն ողորմութեան բարեկամս ունել զաղքատս և զսուրբս . զի յետ մահուանս ընկալցին նոքա 'ի յարկսն յաւիտենականս :

534 . Դարձեալ այլ առակ արկ Յիսուս առ նոսա և ասէ . Այր ոմն էր մեծատուն , և ագանէր բեհեզս և ծիրանիս , և հանապազ ուրախ լինէր առատապէս : Եւ աղքատ ոմն անուն Ղազարոս անկեալ դնէր առ դրան մեծատանն վիրաւորեալ , և ցանկայր կերակրել 'ի փշրանաց սեղանոյ նորա . իսկ շունք գային և լեզուին զվէրս վիրաւորելոյն : Այս աղքատ յետ բազում համբերութեան մեռաւ յայսպիսի տառապանս , և զհոգի նորա հանգուցին հրեշտակք 'ի գոգն Աբրահամու սակս առաքինի համբերութեանն : Յետ այնորիկ մեռաւ և մեծատունն յղփացեալ , և թաղեցաւ մեծահանդէս փառօք . այլ 'ի դժոխսն ամբարձ զաչս իւր մինչ 'ի տանջանսն էր , ետես զԱբրահամ 'ի հեռաստանէ և զՂազարոս 'ի գոգ նորա հանգուցեալ . և աղաղակեաց 'ի խորոց անտի և ասէ . Հայր Աբրահամ , ողորմեաց ինձ և առաքեա զՂազարոս , զի թացցէ զծագ մատին իւրոյ 'ի ջուր , և զովացուսցէ զլեզու իմ . զի պա_

տանջիմ 'ի տապոյ աստի: Իսկ Աբրահամ եցոյց նմա անհնարին գոլ. զի վիհ մեծ է, ասէ, 'ի մէջ մեր. զի ոչ ոք կարէ այտի առ մեզ անցանել, և ոչ աստի ոք առ ձեզ: Այլ յուշ լիցի քեզ, թէ դու ընկալար յաշխարհի զբարիս 'ի կեանս քում, իսկ Ղազարոս ընկալաւ համբերութեամբ զչարչարանս. արդ արժան է զի սա աստ մխիթարեսցի ըստ արդեանցն, և դու այդր պապակեսցիս ըստ խստասրտութեանդ: Կրկնեաց անդրէն գաղաչողութեանն. արդ աղաչեմ զքեզ հայր, առաքեսցես զդա 'ի տուն հօր իմոյ. զի են իմ անդ եղբարք հինգ, տացէ նոցա վկայութիւն, զի մի և նոքա գայցեն յայս տեղի տանջանաց: Եւ ասէ Աբրահամ. նոքա ունին զՄովսէս և զգիրս մարգարէից, 'ի նոցանէ խրատեսցին: Եւ նա ասէ. ոչ, հայր Աբրահամ, բայց եթէ 'ի մեռելոց ոք երթիցէ՝ հաւատասցեն և ապաշխարեսցեն: Ասէ ցնա. եթէ Մովսէսի և մարգարէիցն ոչ լսեն, և ոչ եթէ 'ի մեռելոց ոք երթիցէ՝ հաւատասցեն:

535. Զկնի այնորիկ իբրև կամեցաւ Յիսուս յորդոր լինել ժողովրդեանն՝ անդադար կալ յաղօթս և մի ձանձրանալ, ասէ առակս. Դատաւոր մի էր 'ի քաղաքի ուրեմն, յԱստուծոյ ոչ երկնչէր և 'ի մարդկանէ ոչ ամաչէր. և այրի մի էր 'ի նմին քաղաքի զրկեալ 'ի թշնամւոյ իւրմէ. գայր առ նա և ասէր. դատ արա ինձ յոսոխէ իմմէ: Բայց դատաւորն անիրաւութեան 'ի բազում ժամանակս ոչ կամէր լսել նմա. ապա իբրև կարի իմն թախանձեցաւ 'ի նմանէ՝ ասէ 'ի միտս իւրում. թէ և յԱստուծոյ ոչ երկնչիմ և 'ի մարդկանէ ոչ ամաչեմ, գոնէ վասն թախանձելոյ և աշխատ առնելոյ զիս այրւոյն՝ արարից նմա դատ, զի մի իսպառ եկեալ թախանձիցէ զիս: Ապա 'ի վերայ երկր

Յիսուս. Տեսանե՞ք զինչ խորհի դատաւորն անիրաւութեան. իսկ Աստուած որ դատաւոր է արդարութեան, ո՞չ լուիցէ ծառայից իւրոց՝ որք աղաղակեն առ նա 'ի տուէ և 'ի գիշերի. այո, ասեմ ձեզ, արասցէ վրէժխնդրութիւն նոցա վաղվաղակի, և դատեսցէ զդատաստան նոցա արդարութեամբ:

536. Յետ այսորիկ դարձուցեալ զդէմս բանին առ ոմանս՝ որք պանծային յանձինս իբրև արդարք, և խոտէին զբազումս, ասէ ցնոսա զառակս զայս. Արք երկու ելին 'ի տաճարն կալ յաղօթս. մին փարիսեցի, և միւսն մաքսաւոր. փարիսեցին ամբարտաւան մտօք կայր մեկուսի և զայս առանձին աղօթս մատուցանէր պանծալով. Աստուած իմ, գոհանամ զքէն, զի ոչ եմ իբրև զայլս 'ի մարդկանէ զյափշտակողս և զանիրաւս, և իբրև զայս մաքսաւոր. այլ պահեմ երկիցս 'ի շաբաթու, և տամ տասանորդս յամենայն ստացուածոց իմոց: Իսկ մաքսաւորն ծանուցեալ զինքն յանցաւոր՝ կայր մեկուսի յանկեան տաճարին, և առ խոնարհութեան ոչ կամէր զաչս ընդ երկինս ամբառնալ. այլ կոծէր զկուրծս իւր և ասէր. Աստուած, քաւեա զիս զմեղաւորս: Յաւել ասել փրկիչն. Ասեմ ձեզ, էջ սա արդարացեալ 'ի տուն իւր քան զփարիսեցին. զի ամենայն որ բարձրացուցանէ զանձն իւր՝ խոնարհեսցի. և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի առաջի Աստուծոյ:

537. Յետ այսորիկ իբրև երթայր Յիսուս զճանապարհայն, ընդ առաջ եղև նմա ոմն մեծատուն. 'ի ծունր իջանէր և ասէր. Վարդապետ բարի, զինչ գործեցից, զի զկեանսն յաւիտենականս ժառանգեցից: Նա պատասխանի Յիսուս. Զի՞ հարցանես զիս զբարւոյ. ո՞չ գիտես զպատուիրանս Աստուծոյ. եթէ կամիս մտանել

'ի կեանս, պահեա զպատուիրանս: Ասէ ցնա այրն. պահեալ եմ զայնս 'ի մանկութենէ իմմէ: Յայնժամ ասէ ցնա Յիսուս. Միւս եւս պակաս է քեզ. եթէ կամիս կատարեալ լինել, երթ՛ զամենայն զոր ունիս վաճառեա և տուր աղքատաց, զի ունիցիս գանձս յերկինս, և եկ զկնի իմ: Իբրև լուաւ զայս մեծատունն՝ տրտմեցաւ յոյժ, և մեկնեցաւ անտի. զի ունէր ինչս բազումս: Եւ ասէ Յիսուս. Ո՛րչափ դժուարին է մեծատանց յուսացելոց յինչս՝ մտանել յարքայութիւնն Աստուծոյ: Դիւրագոյն իցէ մալխոյ ընդ ծակ ասղան անցանել, քան այնպիսի մեծատանց յարքայութիւնն Աստուծոյ մտանել:

538. Ի նմին ժամու ասէ Պետրոս ցՅիսուս. Ահաւասիկ մեք թողաք զամենայն և եկաք զկնի քո. արդ զի՞նչ արդեօք տացի մեզ: Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ասեմ ձեզ. դուք՝ որ հրաժարեալ յամենայնէ, եւ և 'ի կամաց ձերոց, եկիք հնազանդութեամբ զկնի իմ, 'ի միւսանգամ գալստեան՝ յորժամ նստցի յաթոռ փառաց իմոց, նստջիք և դուք յերկոտասան աթոռ՝ դատել զերկոտասան ազգս Իսրայէլի: Եւ ոչ միայն դուք, այլ և ամենայն ոք՝ որ թողու զանցաւորս վասն անուան իմոյ, հարիւրապատիկ առցէ, և զկեանսն յաւիտենականս ժառանգեսցէ:

539. Յայնժամ այլ առակ արկ ասելով. Նման է արքայութիւնն երկնից առն տանուտեառն, որ ընդ առաւօտս 'ի վարձու կալեալ մշակս՝ արկ վարձս աւուրն դահեկան, և առաքեաց յայգի իւր գործել: Ապա ելեալ զերրորդ ժամու, զվեց ժամու, զինն ժամու, և զմետասաներորդ ժամու, եգիտ զայլս դատարկ. և առաքեաց յայգի իւր: Իբրև երեկոյ եղև

հրամայելոյ գաւառապետին՝ տալ մշակացն զվարձս՝ սկսեալ 'ի յետնոցն մինչև ցառաջինսն : Իբրև առին մէն մի դահեկան եկեալքն զմետասան ժամուն, առաջինքն համարէին թէ աւելի առնուցուն. բայց և նոքա առին մէն մի դահեկան : Նմին իրի տրտնջէին զտանուտեառն ասելով, թէ դոքա յետինքդ մի ժամ գործեցին, և դու արարեր զնոսա հաւասարակորդս մեզ՝ որ շոգ և զծանրութիւն աւուրն բարձաք : Իսկ նա ետ պատասխանի, թէ չզրկեմ զձեզ. ո՞չ դահեկանի միոջ սակ արկէք ընդ իս. առէք զձեր և երթիջիք. եթէ կամիմ՝ կարեմ տալ յետնոցս, որպէս ձեզ. այլ ձեր ակն չար է, և ես առատ եմ : Ըստ այսմ օրինակի, ասէ Յիսուս, 'ի վերջին դատաստանի բազումք՝ որ այժմ առաջինք համարին, եղիցին յետինք, սակս զուրկ լինելոյ 'ի գործոց բարեաց. և յետինքն յաչս մարդկան՝ եղիցին յայնժամ առաջինք՝ սակս առաքինի գործոց իւրեանց, և փառաց պսակեսցին :

## ԳԼՈՒԽ Ը

Յարութիւն Ղազարու : Մայր որդւոցն Զեբեդեայ : Երիքովի կոյրն : Զաքէոս : Մարիամայ օծանելն :

Ա. Տ. 34

340. Իսկ ոմն հիւանդ Ղազարոս եղբայր Մարեմայ և Մարթայի 'ի Բեթանիայ գեղջէ. որ իբրև հիւանդացաւ՝ առաքեցին քորքն նորա զնմանէ առ Յիսուս և ասեն. Տէր, ահաւասիկ զոր դուն սիրէիր, հիւանդացեալ է : Իսկ Յիսուս 'ի նմին ժամանակի արտաքոյ Հրէաստանի առանձնա-

ցեալ կայր յերեսաց ատելեաց իւրոց և թշնամեաց, որք խնդրէին զնա քարկոծ առնել: Իսկ լուեալ եթէ բարեկամին հիւանդացեալ է, զտեղի կալաւ անդէն ուր էրն՝ աւուրս երկուս: Ապա յետ այնորիկ ասէ ցաշակերտսն իւր. Եկայք երթիցուք միւսանգամ 'ի Հրէաստան: Ասեն ցնա աշակերտքն. Ռաբբի, այժմ եւս խնդրէին զքեզ Հրեայքն քարկոծ առնել, և դարձեալ երթաս անդրէն: Ասէ ցնոսա Յիսուս ծածկաբանութեամբ իմն. Ղազարոս բարեկամ մեր ննջեաց, երթամ զարթուցանել զնա: Աշակերտքն համարելով թէ վասն ննջելոյ քնոյն ասէ, ասէին. Եթէ ննջեաց, ապա ապրի: Յայնժամ ասէ յայտնապէս, թէ Ղազարոս մեռաւ. և ես ուրախ եմ, զի դուք տեսեալ զսքանչելիս իմ հաւատասջիք ինձ: Եւ եկն Յիսուս 'ի Բեթանիա մերձ յԵրուսաղէմ իբրև հնգետասան ասպարիսօք: Անդ բազումք 'ի Հրէից եկեալ էին մխիթարել զքորսն Ղազարու:

541. Մարթա իբրև լուաւ թէ Յիսուս գայ՝ ընդ առաջ գնաց և ասէ ցնա. Տէր, եթէ աստ էիր լեալ, եղբայրն իմ չէր մեռեալ. սակայն հաւատամ եթէ զոր ինչ խնդրեսցես յԱստուծոյ, տացէ քեզ: Ասէ ցնա. Յարիցէ եղբայրն քո: Ասէ ցնա Մարթա. Գիտեմ զի յարիցէ յաւուրն յետնում: Յայնժամ Յիսուս հաստատեաց զհաւատ նորա, թէ ինքն է Որդի Աստուծոյ՝ տէր մահու և կենաց. մինչև աղաղակեաց Մարթա. Ես հաւատացի եթէ դու ես Քրիստոսն Որդի Աստուծոյ, որ յաշխարհ գալոց էիր: Ապա գնաց անտի Մարթա և կոչեաց լռելեայն զքոյր իւր զՄարիամ, ծանուցեալ նմա զգալուստ վարդապետին և զկոչումն նորա: Իսկ Հրեայք որք էին ընդ նմա 'ի տան անդ առ 'ի մխիթարել զնա, գնացին զհետ նորա, հա-

մարելով թէ 'ի գերեզմանն երթայ, զի լացցէ անդ: Բայց Մարիամ եկեալ առ Յիսուս՝ անկաւ յոտս նորա և ասէ. Տէր, եթէ աստ էիր գտեալ՝ ոչ էր մեռեալ եղբայրն իմ: Յիսուս իբրև ետես զնա յանմխիթար լաց, և ամենայն բարեկամք լային ընդ նմա, շարժեցաւ գութ նորա և ասէ. ո՞ւր եդիք զնա: Ասեն ցնա. եկ և տես: Իբրև ետես զգերեզման բարեկամին՝ արտասուեաց 'ի վերայ նորա. ապա հրամայեաց 'ի բաց առնուլ զվէմն գերեզմանին, և սկսաւ աղաչել զերկնաւոր Հայրն իւր՝ ցուցանել զփառս և զքանչելիս աստուածութեան իւրոյ:

542. Ապա աղաղակեաց Յիսուս 'ի ձայն բարձր. Ղազարէ, արի եկ արտաքս: Եւ աջագոյգ ընդ ձայնին յարեաւ մեռեալն չորեքօրեայ, կապեալ ոտիւք և ձեռօք: Ասէ Յիսուս ցնոսա. Լուծէք զդա և թողէք երթալ: Իբրև տեսին որք անդն կային՝ զի մեռեալն խօսի և ընթանայ, բազումք հաւատացին 'ի նա, և ոմանք գնացին առ փարիսեցիսն և պատմեցին նոցա զքանչելիսն՝ զոր արար Յիսուս: Յայնժամ թշնամիք նորա քահանայապետք և փարիսեցիք ժողովեցին ատեան, և ասեն ցմիմեանս. զի՞նչ արդեօք արասցուք, զի այրն այն բազում նշանագործութեամբ դարձուցանէ զաշխարհ. և եթէ թողումք զնա այնպէս՝ գայցեն Հռոմք և բառնայցեն զազգս և զտեղի մեր: Անդ քահանայապետն տարւոյն այնորիկ Կայիափայ՝ խորհուրդ ետ նոցա և ասէ. Լաւ է մեզ, զի այր մի մեռանիցի 'ի վերայ ժողովրդեանս, և մի ամենայն ազգս կորիցէ: Զայս ոչ յանձնէ ինչ ասաց նա. այլ զի քահանայապետ էր տարւոյն այնորիկ, մարգարէացաւ թէ Յիսուս մեռանելոց էր 'ի վերայ ազգին և ժողովրդեան առ 'ի ժողովել զցրուեալ որդիսն Իսրայէլի 'ի մի: Ա-

պա յայնմ օրէ խորհուրդ վասն հաստատելոյն նորա սպանանել զնա ։ Եւ Յիսուս այնուհետեւ ոչ համարձակ լինէր շրջէր 'ի մէջ Հրէիցն . այլ գնաց անտի յԵփրայիմ գիւղաքաղաք, եւ անդ լինէր աշակերտօքն հանդերձ ։

543. Անցեալ էին զկնի մկրտութեանն Յիսուսի երեք զատկական տօնք . ըստ որում յայտ է յաւետարանէն Յովհաննու [1] ։ Այս չորրորդ տօնն եղեւ վերջին, յորում պարտէր փրկիչն կատարել կամաւոր մահուամբ զամենայն գրեալս վասն իւր 'ի մարգարէից անտի ։ Նորին աղագաւ հարկ եղեւ նմա անդրէն դառնալ յԵրուսաղէմ եւ մատնիլ 'ի ձեռս մարդոց մեղաւորաց, եւ 'ի խաչ ելանել ։ Զայս ամենայն պատմեաց աշակերտաց իւրոց 'ի ճանապարհի յանմխիթար սուգ նոցա ։ Ի նմին ժամանակի բազումք ելանէին յԵրուսաղէմ յառաջ քան զզատիկն, որպէս զի սրբեսցեն զանձինս իւրեանց ըստ օրինացն ։ Ուրանօր խնդրէին զՅիսուս թշնամիք նորա եւ ասէին ընդ միմեանս մինչ կային 'ի տաճարին . զինչ թուի ձեզ, ոչ գայցէ 'ի տօնն ։ Քանզի պատուէր տուեալ էր քահանայապետիցն եւ փարիսեցւոց, զի թէ ոք գիտասցէ թէ ուր է Յիսուս՝ գուշակեսցէ, զի կալցեն զնա ։

544. Յայնժամ մայր որդւոցն Զեբեդեայ հանդերձ որդւովք իւրովք մատեաւ առ նա, երկիր պագանէր եւ խնդրէր՝ զի յորժամ յայտնեսցի թագաւորութիւն նորա՝ բարձրացուսցէ զորդիս իւր յիշխանութիւն, նստուցանելով զմին ընդ աջմէ եւ զմիւսն ընդ ահեկէ յարքայութեան իւրում ։ Ետ պատասխանի Յիսուս . Իմ թագաւորութիւն չէ որպէս աշխարհի . այլ որ կամիցի 'ի ձէնջ մեծ լինել, եղիցի ամենեցուն ծառայ ըստ օրինակիս իմում ։

1 Գւ. Բ̃. Ե̃. Զ̃. ԺԲ̃ ։

Եւ կալեալ նորա զճանապարհ Երիքովի, իբրև մօտ եղև 'ի քաղաք անդր՝ պատահեցան նմա երկու կոյրք նստեալք առ ճանապարհաւն մուրացիկ. որոց լուեալ թէ Յիսուս Նազովրեցի անցանէ, աղաղակեցին. Յիսուս որդի Դաւթի, ողորմեաց մեզ: Զաւեղի էառ Յիսուս, և կոչեալ առ ինքն զնոսա՝ առ ժամայն բժշկեաց, որք երթային զհետ նորա և փառաւոր առնէին զԱստուած:

545. Յիսուս մտեալ չոքէր ընդ Երիքով, և ահա այր մի մեծատուն մաքսապետ Զաքէոս կոչեցեալ՝ խնդրէր տեսանել թէ ո՞վ իցէ Յիսուս բարերար աշխարհի. բայց ոչ կարէր 'ի խուռն բազմութենէն, զի կարճ էր հասակաւ. վասն որոյ յառաջ ընթացեալ ել 'ի ժանտաթզենին, ընդ որ անցանելոց էր Յիսուս: Իբրև եկն 'ի տեղին, հայեցաւ 'ի վեր Յիսուս և ասէ ցնա. Զաքէ, փութա էջ այտի. զի այսօր արժան է ինձ 'ի տան քում ագանել: Իսկ նա անդէն փութանակի էջ և ընկալաւ զնա ուրախութեամբ. ապա 'ի զեղջ եկեալ՝ ասէ ցնա. Տէր, ահա զկէս ընչից իմոց տաց աղքատաց, և եթէ զոք զրկեցի՝ հատուցից չորեքկին: Յայնժամ ասէ ցնա Յիսուս. Այսօր եղև փրկութիւն տանս այսմիկ:

546. Ապա յաւել ասել առակ մի վասն մերձենալոյ իւրոյ յԵրուսաղէմ. Այր մի ազնուական գնաց յաշխարհ հեռի՝ առնուլ անձին զիւր թագաւորական իշխանութիւն, և դառնալ. և կոչեալ զծառայս իւր՝ ետ նոցա տասն մնաս ասելով. յարդեցէք զայդ մինչև ես գամ: Իսկ քաղաքացիքն ատէին զնա, մինչև ժպրհեցան առաքել զհետ նորա հրեշտակս՝ ասելով թէ ոչ կամիմք թագաւորել դմա 'ի վերայ մեր: Եւ եղև իբրև դարձաւ առեալ զթագաւորու-

թիւնն, նախ կոչեաց զծառայս՝ որոց տուեալ էր զարծաթն, զի գիտասցէ թէ ո զինչ շահեցաւ: Եկն առաջինն և ասէ. տէր, մնասն քո արար տասն մնաս: Եւ նորա վարձատրեալ զնա ասէ. ազնիւ՝ ծառայ բարի և հաւատարիմ, որովհետև 'ի փոքուդ հաւատարիմ եղեր՝ կացուցից զքեզ իշխան 'ի վերայ տասն քաղաքաց: Եկն երկրորդն և ասէ. մնասն քո արար հինգ մնաս: Ասէ ցնա տէրն. և դու լինիջիր իշխան 'ի վերայ հինգ քաղաքաց: Եկն և միւսն և ասէ. ահա մնասն քո, զոր ունէի ծրարեալ 'ի վարշամակի. երկնչէի 'ի քէն, զի այր ստամբակ ես. բառնաս զոր ոչ եդեր, և հնձես զոր ոչ սերմանեցեր: Եւ նա ասէ. ի բերանոյ քումմէ դատեցայց զքեզ ծառայ անհաւատ. գիտէիր՝ թէ ես այր ստամբակ եմ, ընդէ՞ր ոչ ետուր զարծաթն իմ 'ի սեղանաւորս, և եկեալ ես տոկոսեօք պահանջէի. և ասէ ցսպասաւորսն. առէք 'ի դմանէ զմնասն, և տուք այնմ, որ ունիցի զտասն մնաս. ասեմ ձեզ, եթէ ամենայնի որ ունիցի՝ տացի, և որ ոչն ունիցի՝ բարձցի 'ի նմանէ: Բայց զթշնամիսն իմ զայնոսիկ որք ոչն կամէին զիս թագաւորել 'ի վերայ նոցա, ածէք այսր և սպանէք առաջի իմ:

547. Զայս իբրև ասաց Յիսուս գնաց յառաջ ելանել յԵրուսաղէմ. բայց նախ չոգաւ 'ի Բեթանիա վեց աւուրբք յառաջ քան զզատիկն իբր յութեւտասն մարտի, որ էր ուրբաթ. և 'ի հետևեալ աւուր շաբաթու հրաւիրեցաւ յընթրիս 'ի Սիմոնէ բորոտէ: Անդանօր 'ի սպասու կայր Մարթա, և Ղազար մի էր 'ի բազմելոց ընդ նմա. իսկ Մարեմայ առեալ լիտր մի ազնիւ իւղոյ մեծագնոյ՝ օծ զոտսն Յիսուսի, և հերով իւրով մաքրէր, և թափեաց զիւղն 'ի գլուխ նորա 'ի բազմականին, մինչև լի եղև

տունն 'ի հոտոյ իւղոյն ։ Յայնժամ Յուդա իսկարիովտացի՝ որ մատնելոց էր զնա, շարժեալ յագահութենէ ասէ. Ընդէ՞ր իւղդ այդ ոչ վաճառեցաւ երեքհարիւր դենարի և տուաւ աղքատաց ։ Զայս ոչ վասն աղքատացն ասէր, այլ վասն իւր. զի գող էր, և զարկղն ինքն կրէր ։ Յայնժամ ասէ Յիսուս. Թոյլ տուք դմա, մի՛ ինչ աշխատ առնէք զկինդ. գործ մի բարի գործեաց դա յիս՝ որ յիշեսցի յաւերժաբար ընդ համայն գալս. յամենայն ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք, բայց զիս ոչ հանապազ ընդ ձեզ ունիք. արկանել դորա զիւղդ 'ի մարմին իմ՝ առ 'ի թաղելոյ զիս նշանակեաց ։

548. Իսկ ժողովուրդն իբրև գիտաց թէ անդ է Յիսուս, եկին բազումք՝ ոչ միայն վասն նորա, այլ զի և զՂազար տեսցեն՝ զոր յարոյց 'ի մեռելոց ։ Խորհուրդ արարին քահանայապետքն, զի և զՂազար սպանցեն ։ Քանզի բազումք 'ի Հրէից յաճախէին անդր, և տեսեալ զՂազար յարուցեալ 'ի մեռելոց՝ սքանչանային և հաւատային 'ի Յիսուս ։ Եւ այսպէս օր ըստ օրէ բազմանային հաւատացեալք. որոյ վասն թշնամիք նորա կատաղեալ՝ փութային բառնալ զնա 'ի միջոյ ։

## ԳԼՈՒԽ Թ

Գալուստ Յիսուսի յԵրուսաղէմ ։ Սադուկեցւոց պապանձին ։ Առակ հարսանեացն ։ Կործանելոյն Երուսաղէմի [illegible] ։ Դատաստան ։ Տաղանդքն ։

Ա. Տ. 34

549 . Այն ինչ և Յիսուս 'ի Բեթանիայ 'ի
հետեւեալ աւուր 'ի կիւրակէի, մօտ 'ի լեառն
Ձիթենեաց առաքեաց երկուս յաշակերտացն իւ-
րոց 'ի հանդիպակաց գիւղն . և բերին անտի ա-
նա զէշ մի և զյաւանակ ընդ նմին . և արկին
զնովաւ զհանդերձս իւրեանց և հեծուցին զնա
'ի վերայ 'նորա ըստ կանխասաց մարգարէու-
թեանն Զաքարիայ ։ Մինչդեռ երթայր Յի-
սուս, տարածանէին զհանդերձս զճանապար-
հաւ . և մերձ եղեալ 'ի զառիվայր լերինն Ձի-
թենեաց՝ սկսաւ ամենայն բազմութիւն աշակեր-
տացն ուրախութեամբ օրհնել զԱստուած վասն
ամենայն զօրութեանցն եղելոց և տեսին . Օրհ-
նեալ որ գայ թագաւորդ յանուն տեառն .
խաղաղութիւն յերկինս և փառք 'ի բարձունս։
Իսկ ժողովուրդն՝ որ առաջին և զկնի երթային՝
փառաւոր առնէին զԱստուած՝ գոչելով և տա-
րածանելով զհանդերձս իւրեանց 'ի ճանապար-
հի . և այլք ոստս 'ի ծառոց բերեալ մատուցա-
նէին երկնաւոր թագաւորին՝ յաճախ կրկնե-
լով զՈվսաննայն, որ է՝ Ովսէ կամ Յեսու փըր-
կեա զմեզ ։ Զայն տեսեալ անօրէն փարիսեցւոց՝
զառնացեալ ասէին . Սաստեա աշակերտացդ,
զի լռեսցեն ։ Ասէ ցնոսա Յիսուս . Ասեմ ձեզ .
եթէ դոքա լռեսցեն՝ քարինքդ աղաղակեսցեն ։

550. Իբրեւ մերձեցաւ յԵրուսաղէմ, տեսեալ զքաղաքն ելաց 'ի վերայ նորա, թէ զիարդ դառն պաշարելոց է 'ի թշնամեաց եւ նեղելոց յամենայն կողմանց, մինչեւ չմնալ քար 'ի քարի վերայ. փոխանակ զի ոչ ծանեաւ զժամանակ այցելութեան իւրոյ ։ Իսկ 'ի մտանելն նորա յԵրուսաղէմ արքունական փառօք՝ դղրդեցաւ քաղաքն ամենայն, եւ ասէին. Սա է ճշմարիտ մարգարէն Յիսուս ։ Եւ մտեալ 'ի տաճարն՝ եհան զամենեսին, որք վաճառէին եւ գնէին. անդ մատեան առ նա կոյրք եւ կաղք, եւ բժշկեաց զնոսա ։ Իբրեւ տեսին քահանայապետքն եւ դպիրք զսքանչելիսն զոր արար. եւ զմանկունսն որք աղաղակէին 'ի տաճարին, Ովսաննայ օրհնութիւն որդւոյ Դաւթի՝ բարկացան յոյժ ։ Բայց Յիսուս անդէն պապանձեցոյց զնոսա բանիւ սաղմոսին, թէ 'ի բերանոյ տղայոց եւ ստնդիեաց կատարեցեր զօրհնութիւն ։ Ի նմին երեկոյի առ ահի թշնամեացն Յիսուսի ոչ ոք հրաւիրեաց զնա յընթրիս. նմին իրի չոքաւ դարձեալ 'ի Բեթանիա աշակերտօքն հանդերձ, եւ անդ ագաւ ։

551. Եւ այգուցն յերկուշաբաթի իբրեւ դարձաւ անդրէն յԵրուսաղէմ՝ քաղցեաւ. եւ տեսեալ թզենի մի 'ի վերայ ճանապարհին՝ եկն 'ի նա եւ ոչինչ եգիտ, բայց միայն տերեւ, եւ ասէ. Մի այսուհետեւ 'ի քէն պտուղ եղիցի յաւիտեան ։ Եւ առ ժամայն չորացաւ թզենին ։ Իբրեւ տեսին աշակերտքն՝ զարմացան. եւ ասէ ցնոսա Յիսուս. Եթէ ունիցիք հաւատս եւ ոչ երկմտիցիք, ասիցէք լերինդ՝ բարձիր եւ անկիր 'ի ծով, եղիցի. եւ զամենայն ինչ զոր եւ խնդրիցէք յաղօթս հաւատով՝ առնուցուք ։

552. Այլ իբրեւ եմուտ 'ի տաճարն եւ ուսուցանէր զժողովուրդն՝ հասին 'ի վերայ նորա քահանայապետքն եւ դպիրք հանդերձ ծերովք

և ասեն. Ասա մեզ որո՛վ իշխանութեամբ գործես զայդ, և ո՛վ է որ ետ քեզ զիշխանութիւնդ զայդ: Պատասխանի ետ Յիսուս և ասէ. Հարցից և ես զձեզ բան մի, և ասացէք ինձ. Մկրտութիւնն Յովհաննու յերկնից էր եթէ 'ի մարդկանէ: Եւ նոքա խորհէին 'ի միտս իւրեանց և ասէին. եթէ ասեմք յերկնից էր. ասէ ցմեզ. ընդէ՞ր ոչ հաւատացէք նմա. և եթէ ասեմք՝ 'ի մարդկանէ, ամենայն ժողովուրդն քարկոծ առնեն զմեզ՝ գիտելով զնա մարգարէ: Ապա պատասխանի ետուն չգիտել թէ ուստի իցէ: Եւ նա ասէ. Եւ ոչ ես ասեմ ձեզ՝ թէ որով իշխանութեամբ առնեմ զայս:

553. Յաւել Յիսուս ասել զայս առակ. Առն միոյ էին երկու որդիք. և ասէ առ առաջինն. որդեակ, երթ այսօր գործեա յայգւոջ: Նա պատասխանի ետ և ասէ. երթամ տէր, և ոչ չոգաւ: Մատեաւ ապա առ միւս որդին. նա պատասխանի ետ և ասէ, ո՛չ կամիմ. բայց յետոյ զղջացաւ և չոգաւ յայգին: Արդ ո՞ յերկոցունց արար զկամս հօրն. ասեն. յետինն. ասէ ցնոսա. ահա այսպէս մաքսաւորք և պոռնիկք յառաջեսցեն քան զձեզ յարքայութիւնն Աստուծոյ:

Այլ առակ արկ առ նոսա և ասէ. Այր մի էր տանուտէր, որ տնկեաց այգի. և ցանկով պատեաց, և ետ զնա ցմշակս. և ինքն գնաց 'ի տար աշխարհ: Իսկ 'ի ժամանակին առաքեաց առ մշակսն ծառայ, զի 'ի պտղոյ այգւոյն տացեն նմա. և մշակքն գան հարին և արձակեցին ունայն: Յաւել յղել միւս ևս ծառայ. նոքա գան հարին և զնա և առաքեցին ունայն: Եւ յաւել զերրորդն առաքել. նոքա վիրաւորեցին զնա և հանին արտաքս: Ապա առաքեաց զորդին իւր սիրելի: Իբրև տեսին զնա մշակքն, ասեն ընդ

միմեանս․ սա է ժառանգն, եկայք սպանցուք զսա, զի մեր լիցի ժառանգութիւնն․ և հանին զնա արտաքս քան զայգին և սպանին։ Արդ զի՞նչ արասցէ ընդ նոսա տէր այգւոյն․ ո՞չ ապաքէն գայցէ և կորուսանիցէ զմշակսն, և տայցէ զայգին այլոց։ Ի նմին ժամու կատաղեալ նոցա կամեցան արկանել 'ի նա ձեռս և ըմբռնել․ զի գիտացին փարիսեցիք եթէ վասն ինքեանց ասաց զառակն զայն․ բայց երկեան 'ի ժողովրդենէ։ Եւ Յիսուս չոգաւ 'ի տեղի իւր 'ի նմին երեկոյի։

554․ Իսկ 'ի հետևեալ աւուր երեքշաբաթի մինչ ուսուցանէր 'ի տաճարի անդ, առաքեցին առ նա քահանայապետք և դպիրք զդաւաճանս կեղծաւորեալս հերովդիանոսք հանդերձ՝ առ 'ի ըմբռնել զնա բանիւք և մատնել դատաւորին։ Վասն որոյ հարցին զնա և ասեն․ Վարդապետ, գիտեմք զի ուղիղ խօսիս և ոչ առնուս ակն․ արդ արժան է մեզ հարկս տալ կայսեր թէ ոչ։ Իսկ նորա իմացեալ զխորամանկութիւն նոցա՝ ասէ․ ցուցէք ինձ զդահեկան մի․ և նոքա ցուցին։ Ասէ․ ո՞յր է պատկերս այս և գիր։ Ասեն ցնա, կայսեր։ Եւ նա ասէ․ երթայք տուք զկայսերն կայսեր և զԱստուածոյն Աստուծոյ․ և զարմացեալ նոքա ընդ քաջ պատասխանին՝ կարկեցան։

Այսպէս մտուցեալ ոմանք 'ի Սադուկեցւոց հարցին զնա, թէ էին առ մեզ եօթն եղբարք․ առաջինն էառ կին և մեռաւ անորդի․ էառ զնոյն կին երկրորդն և երրորդն մինչև չեօթներորդն, և ոչ թողին որդի․ յետ ամենեցուն մեռաւ և կինն․ արդ 'ի յարութեան ո՞յր 'ի նոցանէ լինիցի կին, զի եօթանեքին կալան զնա կին։ Ընդէն պապանձեցոյց զնոսա ասելով․ Որդիք աշխարհիս այսորիկ կանայս առնեն և արանց լի-

նին. իսկ որ արժանի լինէին այնմ աշխարհի հասանել, ոչ կանայս առնեն և ոչ մեռանել եւս կարեն, զի հաւասար հրեշտակաց են և որդիք Աստուծոյ:

Ի նմին ժամու հայեցեալ ետես Յիսուս զմեծատունս, որք արկանէին զտուրս իւրեանց 'ի գանձանակն. ետես և կին մի այրի, որ արկ անդր երկուս լումայս, և ասէ. Արդարև ասեմ ձեզ. զի այրին այն աղքատ աւելի արկ քան զամենեսին. զի նոքա 'ի մթերից իւրեանց արկին յընծայսն Աստուծոյ, բայց նա 'ի չքաւորութենէ իւրմէ արկ զամենայն զկեանս իւր զոր ունէր:

Իբրև ել Յիսուս 'ի տաճարէն, ոմանք 'ի հեթանոսաց յառաջ մատեան տեսանել զնա. որք ըստ Խորենացւոյն էին հրեշտակք Աբգարու Հայոց թագաւորին (498):

555. Յայնժամ սկսաւ ասել զառակս զայս. Նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի, որ արար հարսանիս որդւոյ իւրում և առաքեաց զծառայս իւր կոչել զհրաւիրեալսն 'ի հարսանիս. այլ նոքա ոչ կամեցան գնալ: Դարձեալ առաքեաց զայլ ծառայս՝ ասել նոցա թէ ամենայն ինչ պատրաստ է, եկայք 'ի հարսանիս. իսկ նոքա յուլացեալք գնացին՝ ոմն 'ի գործս իւր, ոմն 'ի վաճառս իւր, և այլք թշնամանեցին զծառայս նորա և սպանին: Իսկ թագաւորն իբրև լուաւ, բարկացաւ, և առաքեաց զօրս և սատակեաց զսպանողսն զայնոսիկ. և ասէ ցծառայս իւր. հարսանիքս պատրաստ են, և հրաւիրեալքն չէին արժանի. արդ երթայք յանցս ճանապարհաց, և զոր միանգամ գտանիցէք՝ կոչեցէք 'ի հարսանիս. և այնպէս լցան հարսանիքն բազմականօք: Իսկ թագաւորն մտեալ ետես, զի այր մի չէր զգե-

ցեալ հանդերձ հարսանեաց, և ասէ ցնա. ըն-
կեր, զիա՞րդ մտեր այսր. և նա պապանձեցաւ:
Յայնժամ հրամայեաց կապել զձեռս և զոտս
նորա և հանել 'ի խաւարն արտաքին, ուր լալ
աչաց է և կրճել ատամանց. զի բազումք են
կոչեցեալք, և սակաւք են ընտրեալք:

556. Իբրև ելանէր Յիսուս արտաքս 'ի տա-
ճարէն, ասեն ցնա աշակերտքն. Տես որպիսի
են քարինքս և որպիսի մեծագործ շինուածք:
Նա պատասխանի. Ամէն ասեմ ձեզ. եկեսցէ
ժամանակ, զի ոչ մնասցէ քար 'ի քարի վերայ,
որ ոչ քակեսցի: Յետոյ իբրև չոքան 'ի լեառն
ձիթենեաց, դարձեալ Յիսուս սկսաւ խօսել 'ի
վերայ կործանման տաճարին և Երուսաղեմի,
թէ հանդերձեալ է կործանել ահեղ պատերազ-
մօք և անհնարին նեղութեամբք, և բնակիչքն
անկցին 'ի սուր սուսերի և գերեսցին յամենայն
հեթանոս, մինչև կատարեսցին ժամանակք
հեթանոսաց: Յաւել ասել և զկատարածէ աշ-
խարհի. թէ խաւարեսցի արեգակն և լուսին, և
աստեղք յերկնից թօթափեսցին, և զօրութիւնք
երկնից շարժեսցին: Եւ ապա երևեսցի նշան
որդւոյ մարդոյ յերկինս. և յայնժամ կոծես-
ցին ամենայն ազգք երկրի, և տեսցեն զորդի
մարդոյ եկեալ 'ի վերայ ամպոց երկնից զօրու-
թեամբ և փառօք բազմօք. և առաքեսցէ զհրեշ-
տակս իւր փողով մեծաւ և ժողովեսցեն զըն-
տրեալս նորա 'ի չորից հողմոց՝ 'ի ծագաց երկնից
մինչև 'ի ծագս նոցա: Արդ 'ի վերայ երեք.
արթուն կացէք այսուհետև, յամենայն ժամ
աղօթս արարէք՝ զերծանել յայնմ ամենայնէ և
կալ առաջի որդւոյ մարդոյ:

557. Դարձեալ ասէ ցնոսա. Արքայու-
թիւնն երկնից նման է տասն կուսանաց. որոց
առեալ զլապտերս իւրեանց ելին ընդ առաջ փե-

տայի և հարսին։ Հինգն՝ զի յիմարք էին, առին զլապտերս, և ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին. իսկ հինգ իմաստունքն առին և ձէթ. և 'ի յամէլ փեսային նիրհեցին ամենեքին։ Եւ 'ի մէջ գիշերի եղև բարբառ. ահա փեսայ գայ, ելէք ընդ առաջ նորա։ Յայնժամ յարեան իմաստունք և կազմեցին զլապտերս իւրեանց։ Ասեն յիմարքն ցնոսա. տուք մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա շիջանին լապտերքս մեր։ Պատասխանի ետուն իմաստունքն և ասեն. գուցէ ոչ իցէ մեզ և ձեզ բաւական, երթայք գնեցէք 'ի վաճառականաց։ Իբրև գնացին՝ եկն փեսայն, և պատրաստքն մտին ընդ նմա 'ի հարսանիսն, և փակեցաւ դուռնն։ Յետոյ գան յիմար կուսանքն և ասեն. տէր տէր, բաց մեզ։ Եւ նա ասէ. ամէն ասեմ ձեզ եթէ ոչ գիտեմ զձեզ։ Արթուն կացէք. զի ոչ գիտէք զօրն և ոչ զժամ գալստեան իմոյ։

558. Յաւել Յիսուս ասել և զմարգարէութիւն վերջին դատաստանի։ Յորժամ եկեսցէ, ասէ, որդի մարդոյ փառօք իւրովք և ամենայն հրեշտակք ընդ նմա, յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոց դատել զաշխարհ. և ժողովեսցին առաջի նորա ամենայն ազգք, և մեկնեսցէ զնոսա 'ի միմեանց, որպէս հովիւ մեկնէ զոդիս յայծեաց, և կացուսցէ զոդիսն ընդ աջմէ և զայծիսն 'ի ձախմէ։ Եւ ասիցէ թագաւորն ցաջակողմեանսն. Եկայք, օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն 'ի սկզբանէ աշխարհի. զի քաղցեայ, և ետուք ինձ ուտել. ծարաւեցի, և արբուցէք ինձ։ Յայնժամ ասասցեն նմա արդարքն. տէր, երբ տեսաք զքեզ քաղցեալ և կերակրեցաք։ Պատասխանի տացէ թագաւորն. ամէն ասեմ ձեզ, որովհետև արարէք մի-

ում 'ի փոքրկանցս յայսցանէ, ինձ արարիք։ Ապա ասէ և ցահեկեանս. Երթայք յինէն, անիծեալք, 'ի հուրն յաւիտենական, որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա. զի քաղցեայ, և ոչ ետուք ինձ ուտել. ծարաւեցայ, և ոչ արբուցէք զիս։ Յայնժամ ասիցեն նոքա. Տէր, Երբ տեսաք զքեզ քաղցեալ և ծարաւի, և ոչ պաշտեցաք զքեզ։ Եւ նա պատասխանի տացէ նոցա. որովհետև ոչ արարիք միում 'ի փոքրկանցս յայսցանէ, և ոչ ինձ արարիք։ Եւ երթիցեն սոքա 'ի տանջանսն յաւիտենականս, և արդարքն 'ի կեանս յաւիտենականս։

Իբրև կատարեաց Յիսուս զամենայն զբանս և զվարդապետութիւնս զայսոսիկ՝ ասէ ցաշակերտսն իւր. Գիտէք զի յետ երկուց աւուրց զատիկ լինի, և որդի մարդոյ մատնի 'ի խաչ ելանել։ Ապա չոքան 'ի նմին երեկոյի իւրաքանչիւր 'ի տեղի իւր։

## ԳԼՈՒԽ Ժ

ՄԱՏՆՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ։ ԸՆԹՐԻՔ, ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴ ՊԱՏԱՐԱԳԻ, ԵՒ ԼՈՒԱՑՈՒՄՆ ՈՏԻՑ։

Ա. Տ. 34

559. Արդ 'ի հետևեալ աւուր 'ի մեծի որեքշաբաթի գիտաց փրկիչն եթէ հասեալ է ժամանակ փոխելոյ նորա յաշխարհէ աստի, սիրեաց զաշակերտսն, ընդ որս և զամենայն հաւատացեալս իւր. զորս ապա յանձն արար մաղթողական բանիւ Հօրն երկնաւորի։ Ի նմին աւուր եղև ժողով մեծ 'ի սրահ մեծի քահանայապետին Կայիափայ, ուր ժողովեալ էին քահանայապետք և դպիրք, իշխանք և ծերք

*ժողովրդեան։ Այս անօրէն ժողով անդէն վճռեաց սպանանել զՅիսուս անարգական մահուամբ։ Բայց նոքա տակաւին երկնչէին 'ի ժողովրդենէ, մի՛ գուցէ 'ի սէր բարերար փրկչին ապստամբեսցին յիշխանաց և աղմուկ յարուսցեն։ Նմին իրի ոմանք ասէին. մի՛ 'ի տօնի աստ, զի մի՛ խռովութիւն ինչ լինիցի 'ի ժողովրդեան. և խնդրէին պատշաճ ժամանակ ըմբռնել զանպարտն։*

560. *Իբրև մերձեցաւ տօն բաղարջակերացն՝ եհաս և ժամ կատարելոյ ամենայն գրելոցն վասն նորա ըստ սահմանելոյ Հօրն երկնաւորի։ Սակայն չորս աւուրբք յառաջ, եմուտ սատանայ յաշակերտն յայն 'ի կոչեցեալն Յուդա Իսկարիովտացի, որ ապիրատ խորհրդով հարեալ զագահութեամբ՝ չոքաւ եդ բանս ընդ քահանայապետսն և ընդ իշխանս ժողովրդեան, զի մատնեսցէ նոցա զվարդապետն իւր։ Իսկ նոցա մեծի յաջողութեան դիպեալ՝ խնդացին յոյժ, և խոստացան տալ նմա արծաթ, և ետուն իսկ 'ի վարձ անօրէն մատնութեանն երեսուն արծաթի։ Յանձն էառ. և խնդրէր պարապ մատնել զնա 'ի ձեռս նոցա մեկուսի յամբոխէ անտի, զի մի՛ ոք խոչընդոտ լինիցի անզգամութեան իւրում։*

561. *Իսկ 'ի քսանեչորսին մարտի, և 'ի չորեքտասաներորդ աւուրն լուսնական ամսոյ տարւոյն Հրէից եղև հինգշաբաթի աւուրն օր բաղարջակերաց, յորում օրէն էր զենուլ զպասեքն։ Այն ինչ Յիսուս էր 'ի լեառն Ձիթենեաց՝ առաքեաց զՊետրոս և զՅովհաննէս 'ի քաղաքն անդր պատրաստել զպասեքն, զի ուտիցեն 'ի միասին ըստ օրինացն։ Իբրև հարցին նոքա՝ թէ ո՞ւր պատրաստեսցուք զպասեքն, ասէ Յիսուս. ահա 'ի մտանել ձեր 'ի քաղաքն պա-*

տահեսցէ ձեզ այր մի բարձեալ սափոր ջրոյ. երթիջիք զհետ նորա 'ի տունն, և նա ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ զարդարեալ. և անդ պատրաստեսջիք ։ Յետ պատրաստութեանն չոքաւ անդր յերեկոյին Յիսուս և բազմեցաւ ընդ նոսա և ասէ ցնոսա. Ցանկանալով ցանկացայ ուտել զայս պասեք ընդ ձեզ յառաջ քան զչարչարանս իմ ։ Մինչդեռ ուտէին՝ կամեցաւ հաստատել զխորհուրդ պատարագին և հաղորդութեան։ Վասն որոյ էառ 'ի ձեռին հաց, օրհնեաց և մանրեաց և ետ աշակերտացն ասելով. Առէք կերայք. այս է մարմին իմ՝ որ վասն բազմաց տուեալ։ Նոյնպէս առեալ բաժակ՝ գոհացաւ, ետ նոցա և ասէ. Արբէք 'ի դմանէ ամենեքին. զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ 'ի վերայ բազմաց հեղանի 'ի թողութիւն մեղաց ։ Անդ ետ նոցա իշխանութիւն պատարագելոյ ասելով. Զայս արարէք առ իմոյ յիշատակի ։ Ապա ասէ. Այսուհետև ոչ ևս արբից 'ի բերոյ որթոյ մինչև ցօրն ցայն՝ յորժամ արբից ընդ ձեզ նոր յարքայութեան Հօր իմոյ ։

562. Գիտաց Յիսուս եթէ ժամ է կատարել զամենայն և գնալ առ Հայր. յառնէ յընթրեաց անտի և դնէ զհանդերձս, և առեալ զենջակ մի ածածաւ ։ Ապա արկ ջուր 'ի կոնք և սկսաւ լուանալ զոտս աշակերտացն 'ի ցոյց խոնարհութեան, և սրբէր զենջակաւն։ Իբրև եկն առ Պետրոս, և նա հրաժարէր, ասէ. Եթէ ոչ լուացից զքեզ, ոչ ունիցիս ընդ իս մասն ։ Եւ կարգ ըստ կարգէ լուացեալ զոտս ամենեցուն, ապա էառ զհանդերձս իւր և բազմեցաւ, և ասէ ցնոսա. Գիտէք զինչ արարի ձեզ. ահա ես տէր և վարդապետս լուացի զոտս ձեր. արդ և դուք պարտիք զմիմեանց ոտս լուանալ։ Եթէ ըստ օրինակի իմում խոնարհութեան սիրես_

ջիք զմիմեանս, և անդրդուելի մնասջիք 'ի նեղութեան վասն անուան իմոյ. և ես ուխտեմ ձեզ. որպէս և Հայր իմ ուխտեաց ինձ զարքայութիւն. զի ուտիցէք և ըմպիցէք 'ի սեղան իմ յարքայութեան իմում և նստջիք յերկոտասան աթոռ՝ դատել զերկոտասան ազգն Իսրայէլի:

563. Յայնժամ դարձուցեալ Յիսուսի զբան իւր առ Պետրոս ասէ. Սիմոն Սիմոն, ահա սատանայ խնդրամանկ նենգութեամբ խնդրեաց զձեզ խարբալել իբրև զցորեան. այլ ես զօրացուցից զձեզ, զի մի պակասեսցեն հաւատք քո և դու դարձցիս և հաստատեսցես զեղբարս քո: Ամէն ամէն ասեմ ձեզ, որ ընդունի զոր ոք ես առաքեցից, զիս ընդունի. և որ զիս ընդունի, զայն ընդունի՝ որ առաքեացն զիս: Զայս իբրև ասաց Յիսուս՝ խռովեցաւ յոգի իւր սակս կորստեան Յուդայի և ասէ. Ամէն ասեմ ձեզ, զի մի ոմն 'ի ձէնջ մատնելոց է զիս: Հայէին ընդ միմեանս աշակերտքն տարակուսեալք՝ թէ ով արդեօք իցէ: Ի նմին ժամու Յովհաննէս, որ բազմեալ էր առ Յիսուսիւ, առ սիրոյ սրտին սաստիկ այլայլեցաւ. ակնարկէ նմա Պետրոս հարցանել թէ ով իցէ նա: Եւ Յովհաննու անկեալ զլանջօքն Յիսուսի ասէ՝ Տէր. ով է: Պատասխանի ետ Յիսուս և ասէ. Նա է, որում ես թացից զպատառն և տաց. ինձ պարտ է կատարել զվճիռ Հօր իմոյ և գնալ. բայց վայ մարդոյն այնմիկ, որ լինի մատնիչ անպարտականիս:

564. Ապա թացեալ զպատառն տայ Յուդայի Իսկարիովտացւոյ. որ յետ պատառոյն գլխովին զգեցեալ զսատանայ՝ զրկեցաւ յաստուածային շնորհաց: Յայնժամ ասէ Յիսուս. Արդ զոր ինչ առնելոց ես, արա վաղվաղակի:

Եւ զայս բան ոչ ոք իմացաւ 'ի բազմականաց անտի՝ թէ առ ինչ ասաց ցնա. զի համարէին թէ ասաց նմա գնել զինչ պիտոյ էր 'ի տօնին և վասն աղքատաց ։ Իսկ նորա անդրդուելի կացեալ 'ի խորհուրդն անօրէնութեան, ել և չոգաւ առ քահանայապետս և դպիրս առ 'ի հաստատել զբան մատնութեան. և էր գիշեր ։

565. Այն ինչ ել Յուդա արտաքս, սկսաւ խօսել Յիսուս. Այժմ փառաւորեցաւ որդի մարդոյ, և Աստուած փառաւորեցաւ 'ի նմա, և Աստուած փառաւորեսցէ զնա յանձն իւր, և վաղվաղակի փառաւորեսցէ զնա։ Որդեակք իմ, փոքր ինչ ժամանակ ընդ ձեզ եմ. խնդրեսջիք զիս. զի ուր ես երթամ՝ դուք ոչ կարէք գալ։ Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրիցէք զմիմեանս՝ որպէս ես զձեզ սիրեցի։ Յայսմ գիտասցեն ամենեքեան, եթէ իմ աշակերտք էք եթէ սիրիցէք զմիմեանս ։ Յայնժամ ասէ ցնա, Պետրոս. տէր յո՞վ երթաս ։ Պատասխանի ետ Յիսուս. Ուր ես երթամ, դու ոչ կարես այժմ գալ զկնի իմ. բայց յետոյ եկեսցես։ Ասէ ցնա Պետրոս. Ընդէ՞ր ոչ կարիցեմ գալ այժմ զկնի քո. արդէն զանձն իմ իսկ եդից 'ի վերայ քո։ Պատասխանի ետ Յիսուս. Զա՞նձն քո դիցես 'ի վերայ իմ. ամէն ասեմ քեզ. չև իցէ հաւու խօսեալ, մինչև դու երիցս ուրասցիս զիս։ Բայց ասեմ ձեզ. զի այս ամենայն՝ որ գրեալ է վասն իմ, պարտ է կատարել յիս, թէ ընդ անօրէնս համարեցաւ. քանզի որ վասն իմ ինչ է՝ վճարեալ է, օն արիք գնասցուք աստի ։

566. Զայս ասացեալ յարեաւ 'ի սեղանոյ՝ գնալ ընդ աշակերտացն յաղօթս 'ի պարտէզն. և զճանապարհայն յերկար վարդապետութեամբ կատարեաց զվերջին կտակ իւր, խրատելով զնոսա հաստատուն կալ յամենայն փոր-

ձու թիւնս աներկբայ հաւատով, անդրդուելի յուսով, և անշէջ սիրով։ Խոստանայ նոցա զպահպանողական օգնութիւն իւր յաւախ, և զանճառելի օթևանս տան Հօր իւրոյ յարքայութեան։ Այսպէս աղաչէ զՀայր պահել զնոսա և զամենայն հաւատացեալս իւր՝ առաքելով առ նոսա զՀոգին սուրբ յանուն իւր. որ եկեալ լուսցէ զնոսա շնորհօք։ Եւ ապա ասէ. Հայր զորս ետուր ինձ, կամիմ զի ուր եմ ես, և նոքա ընդ իս իցեն. զի տեսցեն զփառս իմ։ Զայս իբրև ասաց՝ ել և գնաց ըստ սովորութեանն 'ի լեառն Ձիթենեաց՝ առանձնանալ անդ և կալ յաղօթս առ Հայրն երկնաւոր։

## ԳԼՈՒԽ ԺԱ

### Դատապարտութիւն և Չարչարանք Քրիստոսի։
Ա. Տ. 34

567. Իբրև մերձեցաւ սահմանեալ ժամ չարչարանաց տեառն՝ անց ընդ ձորն Կեդրոնի և եմուտ 'ի գիւղն Գեթսեմանի, և թողեալ անդ զաշակերտսն՝ էառ ընդ իւր զՊետրոս, զՅակովբոս և զՅովհաննէս, և չոգաւ եմուտ 'ի պարտէզ մի. և էր ժամ չորրորդ։ Յայնժամ սկսաւ տրտմել և հոգալ վասն չարչարանացն, և ասէ ցաշակերտսն. Տրտում է անձն իմ մինչև ցմահ. կացէք աստ և սկեցէք ընդ իս։ Անտի սակաւ մի յառաջ մատուցեալ՝ անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց, եկաց յաղօթս ասելով. Հայր իմ, եթէ հնար է՝ անցցէ յինէն բաժակ չարչարանաց իմոց. բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու։ Դարձաւ անտի առ աշակերտսն և եգիտ զնոսա 'ի քուն, և ասէ ցՊետրոս. Այդպէս ոչ կարացէք

ժամ մի արթուն կալ ընդ իս. արդ արթուն կացէք և աղօթս արարէք, զի մի՛ անկանիցիք 'ի փորձութիւն: Դարձեալ երկրորդ և երրորդ անգամ չոքաւ և եկաց յաղօթս, և զնոյն բան ասաց, և թոյլ ետ անձին վշտանալ 'ի տրտմութենէ, մինչև առաքեցաւ յերկնից հրեշտակ զօրացուցանել զնա: Եւ տրտմութիւն չարչարանացն և սէր փրկութեան մարդկան միացեալ այնպէս տագնապեցին զնա, մինչև հոսել 'ի նմանէ արեան քրտանց իբրև զկայլակն: Ապա յարուցեալ անտի եկն միւսանգամ, եգիտ 'ի քուն զաշակերտսն և ասէ ցնոսա. Ննջեցէք այսուհետև և հանգերուք. զի ահա եհաս ժամ մատնել որդւոյ մարդոյ 'ի ձեռս մեղաւորաց:

568. Գիտէր մատնիչն Յուդա զտեղին, ուր բազում անգամ ժողովեալ էր Յիսուս աշակերտօքն հանդերձ: Ապա 'ի կէս գիշերի առեալ ընդ իւր սպասաւորս 'ի քահանայապետաց և 'ի Փարիսեցւոց՝ դայ անդր իբրև պարագլուխ անօրէն խմբին ջահիւք և լապտերօք և զինուք, և Լրբութեամբ մերձեցեալ առ Յիսուս համբուրեաց զնա. քանզի նշան տուեալ էր նոցա, թէ ընդ որում ես համբուրեցից՝ նա է, զնա կալարուք: Ասէ ցնա Յիսուս քաղցրութեամբ. Յուդա, համբուրելո՞վ մատնես զորդին Աստուծոյ: Յորդոր ապաշխարութեան էր ձայնս այս. այլ նա չկամեցաւ յաստուածամարտ անզգամութենէն: Աշակերտացն այլ յայլմէ եղեալ խնդրէին հրաման 'ի փրկչէն՝ հարկանել և սպանանել զնոսա սրով. և անդ 'ի խուռն եհար Պետրոս զՄաղքոս ծառայ քահանայապետին, և 'ի բաց եհան սրով զաջոյ ունկն նորա: Ընդ 'ի տագնապ ժամուն պատնչելիք մեծ եղեն, այլ ոչ ինչ թնդաց: Զի Յիսուս յանդիմանեալ զնախանձն Պետրոսի՝ բժշկեաց անդէն զունկն Մաղ-

քսոփ։ Եւ իբրեւ ել անվեհէր ընդ առաջ ամբոխին եւ հարցանէր թէ զո՞ խնդրէք, եւ նոքա ասեն, զՅիսուս Նազովրեցի. իբրեւ ասաց՝ թէ ես եմ, անդէն նոքա յետս յետս չոգան եւ զարկան զգետնի կրկին անգամ։

569. Յայնժամ ասէ Յիսուս ցեկեալսն 'ի վերայ իւր ցքահանայապետս եւ ցիշխանս տաճարին. Իբրեւ 'ի վերայ աւազակի՞ ելէք սուսերօք եւ բրօք. հանապազ ընդ ձեզ էի 'ի տաճարին եւ ոչ ձգեցէք ձեռս յիս. այլ այս է ձեր ժամ եւ իշխանութիւն խաւարի։ Ասաց եւ թոյլ ետ նոցա կապել զինքն եւ տանել նախ առ Աննա քահանայապետ. որոյ տեսեալ զնա յայն վիճակ գտանութեան՝ ուրախ եղեւ, եւ առաքեաց առ փեսայ իւր Կայիափա մեծ քահանայապետ տարւոյն այնորիկ։ Իսկ Կայիափա, առ որ ժողովեալ էին քահանայք եւ ծերք ժողովրդեան, իբրեւ ետես զՅիսուս, եհարց վասն աշակերտացն եւ վասն վարդապետութեան նորա։ Պատասխանի ետ նմա Յիսուս. Զի՞ հարցանես զիս. ես յայտնապէս ուսուցի 'ի ժողովրդեանն. հարց ցայնոսիկ՝ որք լուանն։ Իբրեւ զայս ասաց, մի ոմն 'ի սպասաւորաց անտի ած ապտակ նմա ասելով. Ա՞յդպէս համարձակ խօսիս ընդ քահանայապետիդ։ Եւ ասէ Յիսուս հեզութեամբ. Եթէ չար խօսեցայ, վկայեա վասն չարին. իսկ եթէ բարի, զի՞ հարկանես զիս։

570. Իսկ քահանայապետն եւ ամենայն ատեանն խնդրէին սուտ վկայութիւն զնմանէ եւ ոչ գտանէին. Թէպէտ բազումք բազում ինչ ստութեամբ յառաջ բերէին, այլ զի չէին նման միմեանց՝ անդէն զբանս իւրեանց եղծանէին։ Եւ քահանայապետն Կայիափա ստիպէր զՅիսուս տալ պատասխանի ամբաստանութեանցն, որպէս զի բանս որսասցէ 'ի բերանոյ նորա՝

պարտաւորեսցէ զնա : Իբրև ետես՝ եթէ նա իւր զգաստն լուռ եւեթ կայ, յարուցեալ երդմամբ հարցանէր ցնա ասելով. Երդմնեցուցանեմ զքեզ յԱստուած կենդանի, զի ասասցես մեզ՝ թէ դու ես Քրիստոսն Որդի Աստուծոյ: Եւ պատասխանի Յիսուս. Ասեմ ձեզ, տեսանիցէք զՈրդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրութեանն և եկեալ ընդ ամպս երկնից:

Զայն լուեալ քահանայապետին՝ պատառեաց զհանդերձս իւր և ասէ, հայհոյեաց. և ամենեքեան վկայեցին՝ թէ մահապարտ է, զի զանձն իւր, ասէն, Որդի Աստուծոյ արար: Յայնժամ եդուն զնա 'ի ձեռս զօրաց. որոց առեալ զնա 'ի մէջ իւրեանց՝ չարչարեցին զնա զգիշերն ողջոյն մինչև ցառաւօտ. զի նախատէին զնա, և թքանէին ընդ երեսս նորա, և կատականօք ծաղր առնէին, և ծածկեալ զերեսս նորա՝ ապտակս հանէին նմա ասելով. Մարգարեա՛ց, ո՞վ է որ հարկանէ զքեզ:

571. Ի նմին ժամու Պետրոս և Յովհաննէս մնացեալ էին զկնի Յիսուսի 'ի պալատ քահանայապետին: Անդ Պետրոս հարցեալ յայլ և այլ անձանց 'ի սպասաւորացն՝ թէ և դու յաշակերտաց անտի Յիսուսի իցես և 'ի խմբէ նորա, երիցս ուրացաւ՝ թէ չեմ 'ի նոցանէ. և առ ժամայն հաւ խօսեցաւ: Դարձաւ Յիսուս մինչդեռ 'ի տանջանս էր 'ի վայրագութիւն անդ, և հայեցաւ 'ի Պետրոս, և ազդեաց 'ի սիրտ նորա յապաշխարել. և նա անդէն յիշեաց զբան նորա (565). և ելեալ արտաքս յապարանից ելաց դառնապէս, զմտաւ ածեալ թէ մեղաւ մեծապէս՝ ուրանալով զլինել աշակերտ Քրիստոսի, և ոչ զաստուածութիւն նորա: Իսկ անօրէնն Յուդա փոխանակ 'ի զեղջ գալոյ և դիմելոյ առ գթած վարդապետն՝ անկաւ յապէ-

տալի յուսահատութիւն, և տարեալ արկ ա-
ռաջի քահանայապետից զործաթն զոր առեալ
էր 'ի նոցանէ 'ի վարձ մատնութեան, և չոքաւ
արկ խեղդ ընդ պարանոցն և կորեաւ զյաւիտե-
նական կորուստն :

572. Իբրև այդ եղև, վերստին խորհուրդ ա-
րարին ամենայն քահանայապետքն և ծերք ժո-
ղովրդեանն՝ փութանակի 'ի գործ դնել զվճիռ
դատապարտութեան Յիսուսի: Այլ քանզի
վճիռ նոցա ոչ զօրէր սպանանել զոք առանց
հաւանութեան դատաւորին, նմին իրի ածին
զՅիսուս առ Պիղատոս դատաւոր որպէս մահա-
պարտ, և սկսան չարախօս լինել ասելով. Դը-
տաք զդա զի թիւրէր զազգս մեր, և արգելոյր
'ի տալոյ հարկս կայսեր, համարեալ զինքն թա-
գաւոր Հրէից: Իսկ Պիղատոս քննեալ 'ի վե-
րայ եհաս իրացն, և իմաց ինչ ոչ եգիտ 'ի նմա.
այլ զի մի՛ անհաճոյ լինիցի յաչս Հրէից, առա-
քեաց զնա առ Հերովդէս՝ գիտելով թէ յիշխա-
նութենէ նորա էր: Հերովդէս իբրև ետես զՅի-
սուս, ուրախ եղև. զի ցանկայր 'ի բազում ժա-
մանակաց տեսանել զնա հետաքրքրութեամբ.
քանզի բազում ինչ լուեալ էր զնմանէ, և ակն
ունէր նշան ինչ տեսանել: Հարցանէր զնա բա-
նիւք բազմօք. այլ Յիսուս ոչինչ ետ նմա պա-
տասխանի: Կային անդ քահանայապետքն և
դպիրք և ժանդագոյնս չարախօսէին զնմանէ:
Իսկ Հերովդէս դժուարացեալ ընդ լռութիւն
նորա՝ արհամարհեաց զնա. և այսպէս արարեալ
արկ զնովաւ հանդերձս սպիտակս 'ի ծաղր ամե-
նեցուն, և ետ տանել անդրէն առ Պիղատոս:

573. Սակայն Պիղատոս տեսեալ թէ և ոչ
Հերովդէս գիտաց դատել զնա որպէս մահա-
պարտ, երկեաւ յոյժ հաւանել Հրէից. մանա-
ւանդ զի և կին իւր խռովեալ յանուրջս՝ սաի-

պէր զնա արձակել զՅիսուս ։ Վասն որոյ սկըսաւ հնարս հնարել ազատութեան նորա, և դառնացեալ սրտիւ ասէր ցքահանայապետսն. Ածէք մատուցէք առ իս զայրս զայս իբրև խոտորեցուցիչ ժողովրդեան. և ահաւասիկ առաջի ձեր դատեցայ, և մեղս ինչ ոչ գտի 'ի սմա, այլ և ոչ Հերովդէս. արդ ոչինչ մահու արժանի գործեալ է դորա, խրատեցից զդա և արձակեցից ։ Այլ թշնամիք Յիսուսի ոչինչ հաւանէին բանից դատաւորին, և ոչ բնաւ զիջանէին 'ի կատաղի մոլեգնութենէն ։

574. Տեսեալ Պիղատոսի թէ Հրէայք ծարաւի են անմեղ արեան նորա, կրկին հնարս խորհեցաւ. մի՛ զի սովորութիւն էր Հրէից ամի ամի յամենայն երեւելի տօնս արձակել զմահապարտ ոք ըստ ընտրութեան ժողովրդեանն 'ի յիշատակ ազատութեան իւրեանց 'ի դառն ծառայութենէ Եգիպտոսի (83), և էր 'ի ժամանակին Բարաբբայ ոմն կապեալ 'ի բանտի, ասէ ցնոսա Պիղատոս. Զո՞ կամիք յերկուց աստի արձակել. զՅիսո՞ւս, եթէ զԲարաբբայն ։ Եւ ամբոխն յուզեալ 'ի քահանայապետից՝ աղաղակեաց բառնալ զՅիսուս մահու խաչի, և արձակել զԲարաբբայ ։ Իբրև ետես Պիղատոս՝ թէ այս ոչ յաջողեցաւ, զմիւսոյ հնարիցն բուռն եհար՝ ահեղ քան զառաջինն. զի կամեցեալ նորա մեղմել զՀրէայսն 'ի դաժանութենէ, գան հարել զՅիսուս՝ ետ զնա 'ի ձեռս զինուորաց խսրոց չարչարել ըստ հաճոյս։ Առին զնա զինուորքըն և սկսան դառն տանջանօք ծաղրել. զի լուեալ յամբոխէն՝ թէ կամէր թագաւորել, մերկացուցին 'ի նմանէ զիւր հանդերձն և արկին զնովաւ ցնցոտի քղամիդ կարմիր իբրև զծիրանի թագաւորի, և եդին 'ի գլուխ նորա պըսակ 'ի դժնդակ փշոյ իբր թագ, և եղեգն յաջոյ

ձեռին որպէս գաւազան արքունի, և 'ի ծունր իջեալ առաջի նորա կատակէին և ասէին. կեցցէ արքայդ Հրէից. և թքեալ 'ի նա՝ առնուին զեղէգն և ծեծէին զգլուխ նորա։

575. Պիղատոս համարեալ եթէ ողորմ տեսարանաւն այնու շատ իսկ զիջան Հրէայք, եհան զնա արիւնաթաթախ 'ի ցոյց ամենեցուն ասելով. Ահա այրդ ցձեզ։ Սակայն յետս ընդդէմ պատահեցին իւրքն. զի խուժանն կատաղի ընդ տեսանելն զՅիսուս առաւել ևս մոլեգնեալ աղաղակեաց. Ի խաչ հան զդա։ Պիղատոս տեսեալ թէ 'ի դերև ելին ամենայն հնարք իւր ազատելոյ զՅիսուս, և խռովութիւն ամբոխին և ևս զօրանայր, առեալ ջուր առաջի Հրէից լուաց զձեռս իւր ասելով. Քաւեալ եմ ես յարենէ արդարոյդ այդորիկ։ Եւ նոքա աղաղակեցին. Արիւն դորա 'ի վերայ մեր և 'ի վերայ որդւոց մերոց։ Յայանի տեսանէր Պիղատոս զանմեղութիւնն Յիսուսի. այլ զի երկեաւ յաղաղակէ բազմութեանն՝ թէ չես բարեկամ կայսեր եթէ զդա արձակես, թուլացաւ անկաւ 'ի հաստատութենէ մտացն. սիրեաց թշուառականն քան զխղճի մտացն անաստգիւտ վկայութիւն՝ առաւել 'ի շնորհացն կայսեր չխնայել. նմին իրի զիջաւ հաճեաց զմիտս ամբոխին. արձակեաց զԲարաբբայ, և զՅիսուս մատնեաց 'ի կամս նոցա, զի խաչեսցի։

576. Էր ուրբաթն զատկի և ժամ իբրև վեցերորդ, և առին զՅիսուս զինուորք Պիղատոսի, մերկացին 'ի նմանէ զքղամիդն և ագուցին նմա զիւր հանդերձս, և բերին զխաչն պատարատականն՝ եդին 'ի վերայ նորա։ Իբրև հանին զնա յապարանից Պիղատոսի ածել 'ի Գողգոթա՝ գտին զայր Սիմոն Կիւրենացի. զնա կալան պահակ, զի բարձցէ զխաչն Յիսուսի։ Եւ երթայր

զհետ նորա խուռն բազմութիւն ժողովրդեան և կանանց զգաստից, որք կոծէին և աշխարէին զնա։ Դարձաւ Յիսուս և ասէ ցնոսա. Դստերք Երուսաղէմի, մի լայք 'ի վերայ իմ, այլ լացէք 'ի վերայ անձանց և 'ի վերայ որդւոց ձերոց. զի եկեսցեն աւուրք յորս ասիցեն, երանի ամլոց՝ որք ոչ ծնան, և ասիցեն լերանց՝ ծածկեցէք զմեզ։

## ԳԼՈՒԽ ԺԲ

### Խաչելութիւն և թաղումն Յիսուսի ։
### Ա. Տ. 34

577. Ածեալ տարան զՅիսուս արտաքոյ քաղաքին խուռն բազմութեամբ ժողովրդոց մինչև 'ի լեառն Գողգոթայ՝ որ էր տեղի կատարելոյ զմահապարտս։ Ընդ ածին զերկու չարագործս խաչել ընդ նմա առ մեծի նախատանաց. զի լցցի գիրն, թէ « Ընդ անօրէնս համարեցաւ »։ Ընդ պատրաստեցին սեղան զխաչն քառաթև առ 'ի զոհել 'ի վերայ նորա զնորին խաւհակ զանարատ գառն Աստուծոյ։ Եւ յառաջ մատուցեալ դահճաց՝ մերկացուցին զնա և ձգեալ 'ի վերայ խաչին բևեռեցին զնա։

578. Բայց սովորութիւն էր 'ի ժամանակին տալ մահապարտաց դեղս թմբեցուցիչս առ ոչ զգալոյ զտանջանս. ետուն յայնժամ և Յիսուսի ըմպել զգինի ընդ լեղի խառնեալ. և իբրև ակաւ մի ճաշակեաց՝ ոչ կամեցաւ ըմպել, զի մի ազատ գոլ 'ի ցաւոց իւրոց՝ զոր կամաւոր կրէր վասն փրկութեան մարդկան։ Ի հասարակել աւուրն հանին զնա 'ի խաչ և կանգնեցին. ընդ նմին և զերկու աւազակս. զմին յաջմէ և զմիւսն

ընդ աչէկէ : Իսկ որ անցանէին անտի, հայհոյէին զնա, և շարժեալ զգլուխս իւրեանց ասէին. Վահ, որ քակէիր զտաճարն և զերիս աւուրս կանգնէիր զնա, այժմ ապրեցո զքեզ 'ի ձեռաց մերոց, էջ 'ի խաչէդ եթէ Որդի ես Աստուծոյ: Նոյնպէս և քահանայապետքն ընդ դպրաց ծաղրէին զնա երգիծանողական բանիւք. Զայլս ապրեցոյց, ասէին, զանձն ոչ կարէ ապրեցուցանել. Քրիստոս արքայդ Իսրայէլի իջցէ այժմ 'ի խաչէդ, և հաւատասցուք դմա. եթէ յուսացաւ յԱստուած, փրկեսցէ այժմ եթէ կամի զդա:

579. Իսկ զինուորքն յետ հանելոյ զնա 'ի խաչ՝ առին զհանդերձս նորա և արարին չորս մասունս. իսկ զպատմուճանն քանզի առանց կարանի էր 'ի վերուստ փորանկեալ ամենևին, ասեն ցմիմեանս. մի պատառեսցուք, այլ արկցուք վիճակ 'ի վերայ դորա, ում և ելցէ. Որով լցաւ գիրն, թէ « Բաժանեցին զհանդերձս իմ. և 'ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկին »: Յայնժամ Պիղատոս գրեաց 'ի վերայ տախտակի զվնաս նորա, և եդ դնել 'ի վերայ խաչին, և էր գրեալ. Յիսուս Նազովրեցի Թագաւոր Հրէից: Դժկամակեալ քահանայապետացն ասէին ցՊիղատոս, մի կոչել զնա Թագաւոր Հրէից: Նա Պիղատոս ասէ. զոր ինչ գրեցի՝ գրեցի:

580. Իսկ մի ոմն յաւազակաց անտի կախելոց 'ի խաչին պարսաւագիր լինէր Յիսուսի ասելով. Ո՞չ դու ես Քրիստոսն, փրկեա զանձն քո և զմեզ: Եւ պատասխանի ընկերն սաստելով նմա. Չերկնչի՞ս դու յԱստուծոյ, զի ահա 'ի նմին պատժի կաս. մեք արդարև ընդ չարագործութեանց մերոց արժանի հատուցումն առնումք. իսկ սա ոչ միայն ապիրատ ինչ ոչ գործեաց, այլ և ամենեւին բարի արար: Զայս

ստացեալ անկեղծ միտք, և լուսաւորեալ ծա-
նեաւ թէ որպիսի ոք է որ խաչեալն է ընդ ա-
ւազակս. և աներկմիտ հաւատով ասէ ցնա. Յի-
շեա զիս, տէր, յորժամ գայցես արքայու-
թեամբ քով: Եւ Յիսուս ընկալեալ զդաւա-
նութիւն նորա՝ խոստացաւ նմա զարքայութիւն
ասելով. Ամէն ասեմ քեզ, այսօր ընդ իս իցես
՚ի դրախտին:

581. Անդ կայր առ ոտս խաչին մայրն Յիսու-
սի՝ ի ծով ցաւոց ընկղմեալ, և քոյր մօր նորա Մա-
րիամ Կղէովպայ, և Մարիամ մագդաղենացի, և
Յովհաննէս: Յիսուս իբրև ետես զմայրն և զա-
շակերտն Յովհաննէս՝ յանձնէ զնոսա միմեանց
փոխանակի ասելով. Կին դու, ահա որդի քո
Յովհաննէս. և նմա ասէ. Ահա մայրն քո: Եւ
յայնմ օրէ էառ աշակերտն այն զմայրն տեառն
առ իւր, և որդիաբար սպասաւորէր նմա:

Յետ այսորիկ իբրև գիտաց Յիսուս եթէ ա-
մենայն ինչ որ վասն իւր գրեալ էր կատարեցաւ,
ասէ. Ծարաւի եմ: Եւ անդ կայր աման լի
քացախով. և նոցա սպունգ ինչ լցեալ քացա-
խով ընդ լեղւոյ՝ մատուցին ՚ի բերան նորա:

582. Այսպէս կայր Յիսուս զերիս ժամս
չարչարեալ ՚ի դժնդակ տանջանս խաչին: Եւ
ահա ՚ի վեց ժամէ աւուրն խաւար եղև ՚ի վե-
րայ ամենայն երկրի մինչև ցիններորդ ժամ:
Քանզի աստուածահրաշ սքանչելեօք լուսինն
փոխեալ զընթացս իւր և անցեալ ընդ արեգա-
կամբ ծածկեաց զլոյս նորա յերկրէ, որպէս
պատմէ Դիոնեսիոս ՚ի թղթին առ Պօղիկարպոս:
Եւ զինն ժամաւն գոչեաց Յիսուս մեծաձայն.
Աստուած իմ Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս:
Որով եցոյց թէ մարդկութիւն իւր բոլորովին
՚ի չարչարանս ընկղմեալ՝ զուրկ էր ՚ի մխիթարու-
թենէ աստուածութեան: Քանզի առ ՚ի փըր-

կել զմարդ հարկ եղև կրել զամենայն մարդկային կիրս անմխիթար տանջանօք, ըստ կանխասաց մարգարէութեանն՝ թէ հեռի եղեր 'ի փրկութենէ իմմէ վասն բանից յանցանաց խոցայոխնքն ժողովրդեան։

583. Զայս ամենայն կատարեալ փրկչին սքանչելի համբերութեամբ՝ ապա աղաղակեաց 'ի ձայն բարձր. Հայր, 'ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ։ Եւ խոնարհեցուցեալ զգլուխն աւանդեաց զհոգին։ Եւ ահա վարագոյր տաճարին ցելաւ յերկուս 'ի վերուստ մինչև 'ի վայր, երկիր շարժեցաւ, և վէմք պատառեցան, և գերեզմանք բացան, և մարմինք մարգարէից և սրբոց կենդանացան յայնժամ, և ապա յետ յարութեան փրկչին ելեալ 'ի գերեզմանաց իւրեանց մեծասքանչ հրաշիւք մտին յԵրուսաղէմ, և երևեալ բազմաց՝ հաստատեցին զաստուածաբար յարութիւնն Յիսուսի։

584. Իսկ հարիւրապետն և որք ընդ նմա պահէին զՅիսուս, իբրև տեսին զայս ամենայն սքանչելիս և զշարժումն՝ հիացան և սոսկացան. մինչև հարիւրապետին յայտնի վկայել և ասել, թէ արդարև Աստուծոյ Որդի էր սա։ Նոյնպէս և բազում ժողովուրդք տեսեալ որ ինչ եղեն՝ բախէին զկուրծս և դառնային։ Անդ էին ամենայն ծանօթք Յիսուսի. և կանայք ոմանք 'ի հեռաստ անտի ցաւակցէին նմա. յորս էր Մարիամ Մագդաղենացի և Մարիամ Յակովբայ և այլք։

585. Իսկ Հրէիցն ցայն վայր անօրինեալ. սկսան խնդրել՝ զի մի մարմինք կախելոցն մնասցեն մինչև 'ի հետևեալ օրն 'ի վերայ խաչին ընդդէմ օրինաց. զի էր օր մեծի շաբաթուն զատկի։ Նմին իրի հրաման առին 'ի Պիղատոսէ խորտակել զոսկերս բարձից նոցա, որպէս զի փու-

Թող մեռեալ բարձցին անտի և թաղեսցին 'ի նմին աւուր ։ Արդ եկին զինուորք դատաւորին և խորտակեցին զսրունս աւազակաց, և մեռան նոքա. բայց իբրև եկին առ Յիսուս, և տեսին զի այն ինչ մեռեալ էր, չխորտակեցին զբարձս նորա, ըստ գրոյն՝ թէ « Ոսկր նորա մի՛ փշրեսցի »։ Սակայն մի ոմն 'ի զինուորաց տիգաւ խոցեաց զկող նորա. և ահա կրկնակի հրաշիւք ել անտի վաղվաղակի արիւն և ջուր. զոր իբրև ետես հարիւրապետն՝ հաւատաց. որպէս և զինուորք, որք և վկայեցին ճշմարտութեան վասն նորա ։

586. Այն ինչ պատրաստեցան դահիճքն արկանել զմարմինս խաչելոց 'ի գուբ ինչ գերեզմանի, Յովսէփ արեմաթացի իշխան Հրէից, և ծածուկ աշակերտ Յիսուսի, աստուածային իմն ազդմամբ չոքաւ առ Պիղատոս, և խնդրեաց զմարմին նորա ։ Եկն և Նիկոդեմոս իշխան, և երկոքեան նոքա միաբան իջուցին զմարմինն Յիսուսի 'ի խաչէն և զմռսեալ ազնիւ հալուէիւ խառն ընդ խնկոց և ընդ մեծագին օծանելեաց պատեցին զամենասուրբ մարմինն Յիսուսի սուրբ կտաւովք, որպէս օրէն էր Հրէից պատել զմարմինս մեծամեծաց ։ Իսկ 'ի տեղւոջն յայնմիկ ուր նա խաչեցաւ՝ ունէր Յովսէփ պարտէզ, և 'ի պարտիզի անդ գերեզման նոր վասն իւր փորեալ 'ի վիմի, յորում ոչ ոք երբէք էր եդեալ ։ Անդ եդին զՅիսուս փառաւոր թաղմամբ 'ի նմին երեկոյի. և թաւալեցուցեալ վէմ մի մեծ կափարիչ դրան գերեզմանին՝ իւրաքանչիւր ոք չոքաւ 'ի տեղի իւր ։ Անդ էին կանայք ոմանք, որք եկեալ էին ընդ նմա 'ի Գալիլեէ և պաշտէին զնա ։

587. Իսկ 'ի վաղիւ անդր յետ ուրբաթուն ժողովեցան քահանայապետք և փարիսեցիք առ Պիղատոս և ասեն. Տէր, յիշեցաք, զի Յիսուս այն մոլորեցուցիչ մինչ կենդանի էր՝ ասէր, թէ

յետ երից աւուրց յառնել. արդ հրամայեա զօրաց պահպանել զգերեզմանն մինչև ցերիս աւուրս. մի գուցէ աշակերտքն եկեալ գիշերի գողանայցեն զնա, և ասիցեն թէ յարեաւ 'ի մեռելոց. և լինիցի յետին մոլորութիւնն չար քան զառաջինն: Եւ նոցա Պիղատոս զօրականս պատուէր տուեալ զգուշանալ և պահպանել զգերեզմանն: Եւ նոքա երթեալ նախ կնքեցին զվէմն գերեզմանին կնքով քահանայապետին՝ զի մի 'ի զինուորացն գաւ ինչ գործիցի. և եդեալ անդ զզօրականսն 'ի զգուշութիւն գերեզմանին՝ գնացին իւրաքանչիւր 'ի տեղի իւր:

588. Ըստ ժամանակագրութեան Եւսեբեայ և այլոց՝ Յիսուս ծնեալն եկն 'ի չարչարանս յինն-ուտասներորդի ամի թագաւորութեան Տիբերի: Ընդ այն ժամանակս գրեցաւ 'ի յունական յիշատակարանս, թէ արեգակն այնպէս խաւարեցաւ, մինչև տիւն եղև գիշեր. Բիւթանիա սաստիկ շարժեցաւ, և Նիկիոյ մեծ մասն կործանեցաւ: Պատմէ Յովսեպոս հրեայ, թէ յաւուրս պենտեկոստէից զղրդիւն և սոսափիւն նախ զքահանայիւքն պատէր, և ապա բարբառ յանկարծակի անդուստ 'ի ներքուստ 'ի տաճարէն լսելի լինէր զայս ձև օրինակի. Գնամք աստի գնամք: Դարձեալ նա ինքն Եւսեբիոս յԵրիթրեանն Սիբիլլայէ հեթանոսաց յիշատակէ զասացեալն. « փրկիչ անմահ թագաւոր չարչարեալ վասն մեր »: Եւ Լակտանտիոս զայն՝ թէ «Տայեն Աստուծոյ ապտակս... թուքս թունաւորս... տաճարին պատառեսցի վարագոյր. գիշեր եղիցի, զերիս աւուրս ննջեալ » և այլն [1]:

1 Եւսեբ. ժամ. ՄԽԸ: Ի Հայր Կոստանդ. գլ. Է. 18: Լակտ. գիրք Դ. 6:

## ԳԼՈՒԽ ԺԳ

### Յարութիւն և Համբարձումն Յիսուսի:
### Ա. Տ. 34

589. Յետ կատարելոյ փրկչին անպարտական մահուամբ իւրով զփրկութիւն աշխարհի, ընդ բաժանելն բանական հոգւոյն 'ի մարմնոյ իւրմէ էջ յաղթանակաւ 'ի լիմպոսն հարց 'ի գոգն Աբրահամու, ազատել զհոգիս նահապետաց և մարգարէից 'ի գերութենէ բանտարկութեն: Ուրանօր մխիթարեալ զնոսա և լուսաւորեալ, ցուցանէ թէ յետ երից աւուրց զերծ կացուցանելոց է զհոգիս ամենայն արդարոց 'ի բանտէն, և հանգուցանել յերանական իմն վիճակի առ ժամն մինչև ցհամբարձումն (596):

Արդ 'ի սկիզբն երրորդ աւուր միացեալ հոգւոյ նորա ընդ մարմնոյ իւրոյ, 'ի նմին իսկ առաւօտու միաշաբաթին յարեաւ 'ի մեռելոց, անխախտ պահեալ զկնիք գերեզմանին. զի ձիրք մարմնոյ նորա էին այնուհետև անկրելութիւն, փառաւորութիւն, արագութիւն և նրբութիւն: Յարոյց ընդ իւր և զհոգիս սրբոց:

590. Չիք տարակոյս, թէ փրկիչն ընդ յառնելն նախ չոգաւ յայցելութիւն մօր իւրում ամենասուրբ Աստուածածնի, որ ընդ միածնին մատուցաւ յողջակէզ 'ի սեղան խաչին ինքնանուէր խարուկեալ 'ի փառս Հօր Աստուծոյ: Սակայն 'ի մէջ բարեբաստ վկայից փառաւոր յարութեան Յիսուսի վեհ հանդիսացաւ Մարիամ Մագդաղենացի, որում զառաջինն երևեցաւ Յիսուս և մխիթարեաց զնա: Քանզի յերեկոյի միաշաբաթուն ընդ այլոց իւղաբեր կա-

նանց պատրաստեալ նորա զխունկս և զանուշահոտ իւղս՝ վաղ քան զինչ առաւօտն չոքան 'ի գերեզմանն խնկել և օծանել զմարմինն Յիսուսի. որք և 'ի ճանապարհին տարակուսեալ ասէին, թէ ո՞վ թաւալեցուսցէ զվէմն 'ի դրաց գերեզմանին։ Իբրև հասին նոքա անդր՝ նոյն հետայն եղև շարժումն մեծ. զի հրեշտակ տեառն իջեալ յերկնից՝ մատուցեալ 'ի բաց թաւալեցոյց զվէմն և նստէր 'ի վերայ նորա փայլակնացայտ գիմօք և սպիտակափայլ հանդերձիւք։ Զայն տեսեալ պահապանքն գերեզմանին խռովեցան և եղեն իբրև զմեռեալս. և ոմանք 'ի զօրականացն անտի ընթացան 'ի քաղաքն և պատմեցին քահանայապետացն զամենայն որ ինչ եղեն։ Եւ նոքա ժողովեալ հանդերձ ծերովքն և խորհուրդ առեալ՝ետուն նոցա արծաթ բազում. և պատուիրեցին ասել ամենեցուն՝ թէ աշակերտքն Յիսուսի եկեալ գիշերի գողացան ըզմարմին նորա՝ մինչ մեք 'ի քուն էաք։ Եւ եթէ լուր լիցի այդ՝ ատեն, առ դատաւորն, մեք հաճեսցուք զնա կաշառօք, և զձեզ անհոգս արասցուք և անպատիժ 'ի դատաւորէն։ Եւ նոքա առեալ զարծաթն՝ այնպէս խօսէին 'ի մէջ Հրէից. որպէս ուսան 'ի նոցանէ։

591. Արդ իւղաբեր կանայքն մտեալ 'ի ներքս գերեզմանին. իբրև ոչ գտին զմարմին Յիսուսի՝ խիանային ընդ այն. և ահա երկու հրեշտակք 'ի հանդերձս լուսաւորս հասին առ նոսա անդր. նոքա իբրև զահի հարան, ասեն ցնոսա հրեշտակքն. Զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս. չէ աստ, այլ յարեաւ, որպէս ասէր ինքն մինչ էր 'ի Գալիլեա. արդ փութացարուք և պատմեցէք աշակերտացն, թէ յարեաւ։ Իսկ Մարիամ Մագդաղենացի իբրև ետես թէ չէ անդ մարմինն Յիսուսի, ընթացաւ առ Պետրոս և առ

Յովհաննէս և ասէ ցնոսա. Բարձին զտէր 'ի գերեզմանէ անտի, և ոչ գիտեմ ուր եդին զնա: Եւ նոքա ընթացեալ 'ի գերեզմանն՝ ոչ գտին զմարմին Յիսուսի, այլ լոկ զկտաւսն ծալեալ 'ի մի կողմն. և դարձան պատմեցին այլոց առաքելոց: Բայց Մարիամ կայր արտաքոյ գերեզմանին և լայր. և խոնարհեալ 'ի գերեզման անդր՝ ետես զհրեշտակսն նստեալս մի 'ի սնարից և մի յանոտից՝ ուր կայր մարմինն Յիսուսի: Ասեն ցնա. Կին դու, զի՞ լաս: Ասէ ցնոսա. Զի բարձին զտէրն իմ 'ի գերեզմանէ աստի, և ոչ գիտեմ ուր եդին զնա: Զայս իբրև ասաց, դարձաւ 'ի թիկունս կոյս և տեսանէ զՅիսուս անդ, և թուեցաւ նմա թէ պարտիզպանն իցէ: Ասէ ցնա Յիսուս. Զի՞ լաս, զո՞ խնդրես: Ասէ կինն. Տէր, եթէ դու բարձեր զնա, ասա ինձ ուր եդիր զնա: Ասէ ցնա Յիսուս. Մարիամ: Եւ նորա ծանուցեալ զձայն փրկչին՝ աղաղակեաց, Րաբունի. և ընթացեալ կամէր մերձենալ յոտս նորա: Բայց յայնժամ ոչ թողլ ետ նմին մերձենալ յինքն, և առաքէ զնա անտի պատմել զայն ամենայն աշակերտացն:

592. Եւ 'ի նմին աւուր կիւրակէի ահա երկուք յաշակերտաց իւրոց երթային 'ի գեօղն Եմմաուս հեռի յԵրուսաղէմէ երկու փարսախ. որք յերթալն խօսէին ընդ միմեանս սակս անցիցն Յիսուսի: Ընդ և ինքն Յիսուս մերձեցաւ և երթայր ընդ նոսա: Հարցանէ ցնոսա. Զի՞նչ վիճէիք ընդ միմեանս այդպէս տրտմութեամբ: Ասէ մին 'ի նոցանէ՝ որում անուն էր Կղէովպաս. Դու միայն կաս յԵրուսաղէմ, որ ոչ գիտացեր զինչ գործեցաւ անդ յաւուրս յայսոսիկ. զիա՞րդ զՅիսուս Նազովրեցի սուրբ և արդար մատնեցին քահանայապետքն 'ի դատաստան մահու, և հանին զնա 'ի խաչ. մեք ակն

ունէաք թէ նա է՝ որ փրկելոց է զԻսրայէլ. և այս երրորդ օր է յորմէ հետէ այն գործեցաւ: Սակայն և կանայք ոմանք զարմացուցին զմեզ, որք չոքան 'ի գերեզմանն անդր և ոչ գտին զմարմին նորա. այլ և տեսիլ հրեշտակաց ևս տեսին, որք ասէին՝ թէ յարեաւ 'ի մեռելոց: Յայնժամ Յիսուս բացեալ զբերան իւր՝ մեկնէր նոցա, սկսեալ 'ի Մովսիսէ և 'ի մարգարէից՝ որ ինչ յամենայն գիրս գրեալ էր զնմանէ: Իբրև մերձեցան 'ի գեօղն, առնէին զնա ագանել ընդ նոսա, զի էր ընդ երեկս: Եւ եղև 'ի բազմելն նորա ընդ նոսա՝ առեալ զհացն օրհնեաց, եբեկ և ետ նոցա: Եւ նոյն ժամայն բացան աչք նոցա և ծանեան զնա, և նա եղև 'ի նոցանէ աներևոյթ. Նոքա զարմացեալ ասէին ցմիմեանս. Ո՞չ իսկ և սիրտք մեր ճմլէին 'ի մեզ մինչ խօսէրն ընդ մեզ զճանապարհայն, և որպէս բանայր մեզ զգիրս: Եւ նոյն ժամայն յարուցեալ անտի դարձան յԵրուսաղէմ, և գտեալ զաշակերտսն ժողովեալս՝ աւետիս ետուն նոցա և պատմեցին՝ թէ որպէս Յիսուս երևեցաւ նոցա 'ի ճանապարհի:

593. Այն ինչ ժողովեալ աշակերտքն պատմէին իրերաց զայս ամենայն սքանչելիս՝ փակեալ զդրունս յահէ Հրէից, ահա ինքն Յիսուս եկաց 'ի մէջ նոցա և ասէ. Խաղաղութիւն ընդ ձեզ. ես եմ, մի երկնչիք: Իսկ նոքա զահի մեծի հարեալ երկնչէին, և համարէին ոգի ինչ տեսանել: Եւ ասէ ցնոսա Յիսուս. Զի՞ խռովեալ էք. տեսէք զձեռս իմ և զոտս, զի ես նոյն եմ. շօշափեցէք և տեսէք զիս: Եւ զի տակաւին չհաւատային 'ի խնդութենէն, 'ի քաջալերութիւն նոցա եկեր ընդ նոսա խորխի մեղու և մասն ինչ ձկան խորովելոյ: Եւ ապա փչմամբ իւրով 'ի նոսա զՀոգին սուրբ՝ ետ նոցա իշխանութիւն երթալ և քարոզել յամենայն աշ-

խարհ զաւետարանն. կապել և թողուլ զմեղս խորհրդով առաքելութեան՝ զոր անդ սահմանեաց:

594. Յորժամ երևեցաւ նոցա Յիսուս, Թովմաս մի յերկոտասանիցն ոչ էր անդ. ասէին ցնա այլ աշակերտքն՝ եթէ տեսաք զտէր. այլ նա չհաւատայր, ասէր, մինչև տեսից 'ի ձեռս նորա զնշան բևեռացն և կողիցն: Վասն որոյ յետ ութ աւուրց իբրև միւսանգամ ժողովեալ էին աշակերտքն, Յիսուս գայ 'ի մէջ նոցա դրօքն փակելովք, և ողջոյն տուեալ նոցա՝ ասէ ցԹովմաս. Տես զձեռս իմ և զկողս, և շօշափեալ մատամբ զվէրս՝ հաւատա ճշմարիտ յարութենս: Յայնժամ աղաղակեաց Թովմաս. տէր իմ և Աստուած իմ: Իսկ Յիսուս ետ երանի այնոցիկ՝ որք ոչ տեսեալ հաւատասցեն:

595. Պատուէր ետ Յիսուս ամենայն աշակերտացն ժողովել 'ի Գալիլեա 'ի լեառն Թաբոր, որպէս կարծի. ուր կամք եղեն նմա՝ յայտնապէս երևել ամենեցուն, և հաստատել զամենեսեան: Իբրև երթային ամենեքեան, Պետրոս զի պատրաստեսցէ զկարևոր կերակուրս ընկերակցացն՝ ընդ այլոց վեց աշակերտաց խաղացեալ 'ի Ճանապարհէն՝ եկաց առ ծովեզերն Տիբերիայ ձուկն որսալ: Մտին 'ի նաւ, բայց յայնմ գիշերի կալան և ոչինչ: Իբրև այգ եղև, երևեցաւ նոցա Յիսուս և հրամայեաց արկանել զուռկանն յաջակողմն նաւին. և իբրև արկին՝ ոչ կարէին ձգել 'ի բազմութենէ անտի ձկանցն: Ընդ յետ ճաշելոյ 'ի հացէ և 'ի ձկանց անտի՝ հարցանէ Յիսուս երիցս անգամ զՊետրոս, եթէ սիրեա՞ս զիս: Իբրև էառ 'ի նմանէ զսիրոյն հաւաստիս՝ կարգեաց զնա գլուխ եկեղեցւոյ իւրոյ և ընդհանուր հովիւ ամենայն ոչխարաց և գառանց իւրոց (1321): Անտի չոգան 'ի լեառն

Գալիլեայ՝ ուր ժամադիր եղև նոցա տէր. և գըտան անդ ժողովեալ հինգ հարիւր անձինք. և մատուցեալ խօսեցաւ ընդ նոսա՝ գնալ այնուհետև մկրտել զամենայն հեթանոսս յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Յետ ուսուցանելոյ նոցա զամենայն պատուէրս և զսահմանս առաջնորդել եկեղեցւոյ իւրում, խոստացաւ լինել ընդ նոսա և պաշտպանել նոցա մինչև ՚ի կատարած աշխարհի:

596. Իսկ յետ քառասուն աւուրց դարձեալ հրամանաւ փրկչին ժողովեցան աշակերտքն ՚ի Բեթանիա մերձ ՚ի լեառն Ձիթենեաց: Անդ երևեալ նոցա Յիսուս զայս վերջին նուագ, պատուիրեաց նոցա մի մեկնել յԵրուսաղեմէ, այլ սպասել անդ ընդունելութեան վերջին կատարելութեանց առ ՚ի Հոգւոյն սրբոյ: Եւ ապա օրհնեալ՝ մեկնեցաւ ՚ի նոցանէ և վերանայր յերկինս, թողեալ զհետս ոտից իւրոց ՚ի վիմին՝ ուստի վերացաւն, որ պահի մինչև ցայժմ: Յայնժամ միացան ընդ ելին նորա հոգիք արդարոց, սկսեալ ՚ի Հաբէլէ. որ մխիթարեալ ՚ի լիմբոսի ՚ի յարութեան անդ (589) սպասէին ելանել ՚ի փառս ընդ գերափառ յաղթանակողին. որոց ընթացակից եղեն և հրեշտակք: Յիսուս այն ինչ եմուտ ՚ի մէջ ամպոց՝ եղև աներևոյթ ՚ի տեսութենէ. և ահա երևեցան նոցա երկու հրեշտակք ՚ի հանդերձս սպիտակս և ասացին. Ով Գալիլեացիք. զի՞ զարմացեալ հայիք ընդ երկինս. այս Յիսուս որ վերացաւն ՚ի ձէնջ՝ նոյնպէս եկեսցէ յաւուր միում փառաւոր գալստեանն: Յայնժամ երկիր պագեալ նոցա փրկչին՝ դարձան յԵրուսաղէմ ուրախութեամբ մեծաւ, և էին հանապազ ՚ի վերնատան անդ հանդերձ Մարեմաւ մարբն Յիսուսի, օրհնէին և գովէին զԱստուած:

## ԳԼՈՒԽ ԺԴ

Գալուստ Հոգւոյն սրբոյ, և տարածութիւն աւետարանին :

Ա. Տ. 34

597. Յետ համբարձման Քրիստոսի հաւատացեալքն, որ էին իբր հարիւր և քսան ոգիք, 'ի մի ժողովեալ սպասէին աղօթիւք և պաղատանօք գալստեան Հոգւոյն սրբոյ : Յայնժամ Պետրոս իբր գլուխ առաքելոց յարուցեալ 'ի մէջ եղբարցն խօսեցաւ սակս ընտրելոյ զոմն յաշակերտաց անտի 'ի տեղի Յուդայի որդւոյն կորստեան 'ի լրումն երկոտասան թուոյ առաքելոց : Եւ կացուցեալ 'ի ժողովն իւրեանց երկուս, զՅովսէփ և զՄատաթիա, յաղօթս կացին, և վիճակ արկեալ՝ ընտրեցաւ Մատաթիա, և համարեցաւ երկոտասաներորդ առաքեալ (697) : Ըստ աւանդութեան՝ տունն ուր ժողովեալ էին, այն էր՝ յորում արարին զզատիկն. անդանօր առաքեալքն օրհնեցան 'ի տեառնէ նախ քահանայ և ապա եպիսկոպոս. և յետ յարութեան երկիցս երևեցաւ նոցա Յիսուս 'ի տան անդ :

598. Իսկ 'ի տասներորդում աւուր՝ յորում Հրէայք հռչակէին զտօն պէնտէկոստէից 'ի յիշատակ օրինաց տեառն՝ որ տուաւ նոցա 'ի լեառն Սինա, ահա էջ Հոգին սուրբ յաւուր կիւրակէի 'ի վերնատան անդ, ուր վանքն իւր էին. և եղև յանկարծակի հնչիւն յերկնից, և ելից զամենայն տունն յորում նստէին, և երևեցան նոցա բաժանեալ լեզուք իբրև 'ի հրոյ կամ որպէս ամպ բոցափայլ՝ բաժանեալ 'ի փոքրիկ

բայց 'ի ձև լեզուաց, և նստաւ իւրաքանչիւր'ի վերայ նոցա: Անդ ամենեքեան լցան Հոգւով սրբով. անտեսաբար ընդ գալն այնց նշանաց. որով և եղեն խորհրդագործ խորոյն Աստուծոյ. և նոյն հետայն լի աստուածային հանճարով և իմաստութեամբ՝ սկսան համարձակ խօսել յայլևայլ լեզուս ըստ թելադրելոյ նոցա Հոգւոյն սրբոյ:

Ի ժամանակին բնակեալ էին յԵրուսաղէմ Հրեայք յամենայն երկրէ՝ Պարթևաց, Մարաց, Իլամացւոց և Հռովմայեցւոց. իբրև եղև բարբառս այս՝ եկն միաբան բազմութիւնն, և ամենեքին սքանչանային երբ լսէին խօսել նոցա յիւրաքանչիւր լեզուս, և ասէին. զինչ կամիցի այս լինել: Անդանօր ոմանք 'ի թշնամեաց Յիսուսի ընդ խաղ արկեալ ասէին, թէ աքա քաղցուալիցք և արբեալք իցեն: Իսկ Պետրոս սրեալ զհրեղէն լեզու իւր՝ սկսաւ ամբիրան ատենել զնոսա մարգարէական բանիւ Յովէլեայ[1] թէ «Յաւուրս յետինս հեղից յոգւոյ իմմէ 'ի վերայ ամենեցուն, և մարգարեասցին ուստերք ձեր և դստերք ձեր»: Եւ այնուհետ հզօր բանիւք յայտնի արար նոցա զյարութիւն Յիսուսի բանիւ մարգարէին Դաւթի. մինչև զղջանալ նոցա և ասել ցառաքեալսն, Զինչ գործեսցուք: Ասէ ցնոսա Պետրոս. Ապաշխարեցէք, և մկրտեսցի իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ յանուն անուան Յիսուսի Քրիստոսի 'ի թողութիւն մեղաց. և ընկալջիք զաւետիս Հոգւոյն սրբոյ: Բազումք 'ի նոցանէ յօժարութեամբ ընկալեալ զբան նորա՝ մկրտեցան, և յաւելան յաւուր յայնմիկ հոգիք երեք հազարք:

599. Ամենայն հաւատացեալք հանապա-

[1] Յովէլ. Բ. 28:

զորդէին լսել զվարդապետութիւն առաքելոց. և հաղորդել հացին և աղօթից. և ՚ի բազում նշանաց և սքանչելեաց որ ՚ի ձեռս առաքելոցն գործէին, ահ և երկիւղ լինէր ամենեցուն: Եւ ամենայն հաւատացելոցն ինչք հասարակաց էին. վաճառէին զստացուածս, և զգինսն բերեալ առ առաքեալսն՝ բաշխէին ում պիտոյ ինչ լինէր, և չէր ոք ՚ի նոսա կարօտ իւիք: Զայս արար և Անանիա ոմն, այլ ոչ յստակ մտօք. զի յետ վաճառելոյ զագարակ իւր, խորեաց ՚ի գնոյ անտի գիտակցութեամբ կնոջ իւրոյ Սափիրայ. և զմի մասն եբեր առ ոտս առաքելոցն: Ասէ ցնա Պետրոս. Անանիա, ընդէ՞ր ելից սատանայ զսիրտ քո պահել առ քեզ զմասն ինչ ՚ի գնոյ ագարակին. և ստել Հոգւոյն սրբոյ. գիտեա զի ոչ մարդկան ստեցեր, այլ Աստուծոյ: Անանիա անդէն պատուհասակոծ լեալ անկաւ ՚ի գետին, և եհան զոգին: Այսու ժամանակաւոր պատուհասիւ պատժեցաւ և կին նորա զկնի երից ժամուց. յորմէ երկիւղ մեծ անկաւ ՚ի վերայ ամենեցուն՝ որ լուան և տեսին զայս ամենայն:

600. Յաճախէին սքանչելիք որ ըստ օրէ ՚ի ձեռն առաքելոց. յորոց մի էր և բժշկութիւն աղքատի ուրումն կաղի ՚ի ծնէ՝ քառասնամեայ: Զի Պետրոս և Յովհաննէս մինչդեռ ելանէին ՚ի տաճարն յաղօթս, տեսին զաղքատն զայն նըստեալ առ գեղեցիկ դրան տաճարին. որոյ տեսեալ զնոսա՝ աղաչէր առնուլ զողորմութիւն ՚ի նոցանէ: Ասէ ցնա Պետրոս. Արծաթ և ոսկի ոչ ունիմ. բայց զոր ունիմս՝ զայս տաց քեզ. յանուն Յիսուսի Քրիստոսի արի և գնա: Եւ կալեալ զաջոյ ձեռանէ նորա յարոյց զնա. և առժամայն հաստատեցան բարձք և սրունք նորա. վազվազէր իբրև զմանուկ, և մտեալ ընդ

նոսա 'ի տաճար անդր օրհնէր զՏէր, մինչ զարմանալ ամենայն ժողովրդեան ։ Զայն առիթ կալեալ Պետրոսի քարոզեաց նոցա զՔրիստոս և զզօրութիւն անուան նորա, որոյ կոչմամբն եւեթ հաստատեալ բժշկեցաւ կաղն յանդիման ամենեցուն ։ Յորդորեաց զնոսա ապաշաւել 'ի մեղաց, որովք անօրինեցան 'ի Քրիստոս, և դառնալ առ Տէր՝ իբրև ճշմարիտ որդիք Աբրահամու և մարգարէից ։ Եւ բազումք 'ի լսողաց անտի հաւատացին, և յաւելան 'ի հաւատացեալսն անձինք իբրև հինգ հազար ։

601. Մինչդեռ քարոզէին անդ Պետրոս և Յովհաննէս զաւետարանն Քրիստոսի, հասին 'ի վերայ նոցա քահանայապետք և իշխանք Հրէից, զայրագնեալք 'ի վերայ նոցա՝ վասն պատմելոյ զյարութիւն փրկչին. ածին զնոսա և արկին 'ի բանտ, զի էր ընդ երեկս ։ Իսկ 'ի վաղիւ անդր ժողովեցան իշխանք և երիցունք, և Աննա և Կայիափայ քահանայապետք, և կացուցեալ յատենի զառաքեալսն հարցանէին՝ թէ որով զօրութեամբ կամ որով անուամբ բժշկեցին զկաղն ։ Անդ յառաջ մատուցեալ Պետրոս սկսաւ ցուցանել նոցա բանիւք մարգարէից զաստուածութիւն Յիսուսի և զփառաւոր յարութիւն նորա. որոյ անուամբ, ասէ, սա կայ ահաւասիկ այսօր առաջի ձեր ողջացեալ ։ Տեսեալ նոցա զհամարձակութիւն Պետրոսի և Յովհաննու՝ գիտելով չափ թէ էին արք տգէտք և այնպէս ազատաբերան աստուածաբանէին, յապուշ կրթեցան. մանաւանդ զի տեսեալ ընդ նոսա և զայրն բժշկեալ, չկարէին տալ պատասխանի բան մի ։ Խորհեցան առանձինն՝ թէ զիարդ մարթասցին ծածկել զնշանն զայն երևելի, այլ առ ժամն սպառնացան նոցա՝ մի' ամենևին խօսել և մի' բնաւ ուսուցանել

յանուն Յիսուսի ։ Եւ նոքա ետուն պատասխանի. Ոչ կարեմք զոր տեսաքն և լուաք՝ չխօսել ։

602. Եւ անտի արձակեալ եկին առ միւս առաքեալսն, և պատմեցին նոցա զամենայն ։ Եւ միաբան յաղօթս կացեալ ամբարձին զձայնս իւրեանց առ Աստուած, և խնդրեին համարձակութիւն խօսելոյ զբանն կենաց, և գործելոյ զսքանչելիս անուամբ Յիսուսի ։ Կատարեցան խնդիրք նոցա նորանշան սքանչելեօք. զի տեղին՝ յորում ժողովեալ էին՝ շարժեցաւ, և լցան ամենեքին վերստին Հոգւով սրբով ։ Նորին աղագաւ յաճախէին այնուհետև 'ի ձեռս նոցա նշանք բժշկութեանց. և հանապազ յաւելուին հաւատացեալքն. մինչև 'ի հրապարակս հանել ամբոխին զհիւանդս պատգարակօք և մահճօք, զի ընդ անցանելն Պետրոսի գոնէ հովանի նորա հասցէ ումեք 'ի նոցանէ և բժշկեսցէ ։

603. Քահանայապետն լուեալ զգործս առաքելոցն՝ լցաւ նախանձու. և կալեալ զնոսա եդ հրապարակաւ 'ի բանտի ։ Այլ հրեշտակ տեառն եկեալ 'ի գիշերին յայնմիկ եբաց ըզդրունս բանտին և եհան զնոսա անտի ասելով. Գնացէք կացէք 'ի տաճարին և պատմեցէք ժողովրդեան զամենայն պատգամս կենաց ։ Չոգան 'ի տաճարն ընդ առաւօտն, և ուսուցանէին ։ Իսկ քահանայապետն ժողովեալ զամենայն ծերակոյտն՝ առաքեաց ածել զնոսա 'ի բանտէն ։ Իբրև եկին սպասաւորքն և ոչ գտին զնոսա 'ի բանտի, երթեալ պատմեցին նոցա՝ թէ գտաք զբանտն փակեալ ամենայն զգուշութեամբ, այլ 'ի ներքս ոչ ոք էր ։ Իբրև հիացեալ կային ամենեքեան ընդ նորահրաշ իրսն, լու եղև առ նոսա, եթէ են նոքա 'ի տաճարի անդ և ուսուցանեն ։ Յայնժամ երթեալ իշխանքն ածին

զնոսա ոչ բռնութեամբ. քանզի երկնչէին 'ի ժողովրդենէ, զի մի՛ քարկոծեսցին։

604. Իբրև ածին առաքեալքն յատեան, ասէ ցնոսա քահանայապետն. Ո՞չ պատուիրելով պատուիրեցաք ձեզ մի՛ ուսուցանել յանուանն յայն. և արդ ահաւասիկ լցէք զԵրուսաղէմ ուսմամբ ձերով, և կամիք ածել 'ի վերայ մեր զարիւն զառնն այնորիկ։ Պատասխանի ետ Պետրոս և այլ առաքեալքն՝ թէ հնազանդել պարտ է Աստուծոյ առաւել քան մարդկան։ Ընդ որ այնչափ կատաղեցան, մինչև կամէին սպանանել զնոսա. բայց Գամաղիէլ օրէնսուսոյց պատուական ամենայն ժողովրդեանն, և 'ի ծածուկ աշակերտ Յիսուսի, յարուցեալ 'ի մէջ ատենին հաւանեցոյց զնոսա թողուլ յազատութեան զառաքեալսն. զի եթէ 'ի մարդկանէ իցէ, ասէ, գործդ, որպէս Թևդասին և Յուդայի՝ քակտեսցի (484). ապա թէ յԱստուծոյ, ոչ կարէք քակտել զնա. գուցէ և աստուածամարտք գտանիցիք։ Իսկ նոքա գան հարին զառաքեալսն, և պատուիրեցին մի ևս խօսել յանուն Յիսուսի, և ապա արձակեցին զնոսա։ Եւ գնացին առաքեալքն խնդալով յերեսաց ատենին, զի վասն անուան Յիսուսի արժանի եղեն անարգելոյ։ Սակայն և այնպէս ոչ դադարէին զամենայն օր աւետարանել զՅիսուս Քրիստոս 'ի տաճարին և առտնին։

605. Զայսու ժամանակաւ ըստ պատմութեան Յովսեպոսի՝ Պիղատոս դատաւոր եմուծ զկայսերական պատկերն և կանգնեաց գիշերայն 'ի տաճարի անդ, ուր չէր օրէն. որով և մեծի խռովութեան եղև պատճառ. և անտի բազում վիշտք հասանէին 'ի վերայ ազգին Հրէից։ Յետ որոյ ապա նա ինքն Պիղատոս զգանձանակն նոցա՝ որ Կորբան կոչէր, ծա-

խեղաց 'ի ջրէջս ջուրց և կրկին խռովութեաննոցա եղև պատճառ [1] ։

## ԳԼՈՒԽ ԺԵ

Քարկոծումն Ստեփանոսի։ Փիլիպպոս սարկաւագ։ Սիմոն մոգ։ Ներքինին։ Ղազարոս և քորք։ Թադէոս։ Բժշկութիւն Աբգարու։

Ա. Տ. 35

606. Յաւուրսն յայնոսիկ 'ի բազմանալ աշակերտացն խորհեցան առաքեալքն ընտրել եօթն անձինս և կացուցանել 'ի վերայ պիտոյից կարօտելոց. որպէս զի ինքեանք ազատ գտեալ յայնպիսի զբաղմանց՝ հոգատար լիցին աղօթից և աստուածային պաշտաման։ Իբրև հաճոյ թուեցաւ խորհուրդս այս առաքելոց ամենայն բազմութեանն՝ ընտրեցին զՍտեփանոս այր լի հաւատով և Հոգւով սրբով, և զՓիլիպպոս, և զՊրոքորոն, և զՆիկանովրայ, և զՏիմոնեայ, և զՊարմենայ, և զՆիկողայոս։ Ապա կացուցին զնոսա առաջի առաքելոցն, և աղօթս արարեալ եդին 'ի վերայ նոցա ձեռս՝ և կոչեցին զնոսա 'ի սարկաւագութիւն. որով բանն Աստուծոյ աճէր, և թիւ աշակերտացն բազմանայր յոյժ, մինչև բազումք 'ի ժողովրդոց և 'ի քահանայից իսկ անսային հաւատոցն. զորս և հաստատէր Ստեփանոս 'ի ձեռն մեծամեծ նշանաց և սքանչելագործութեանց։

607. Ի նմին ժամանակի յարեան ոմանք 'ի ժողովրդենէ անտի լի նախանձու և ատելութեամբ՝ կամելով վիճել ընդ Ստեփանոսի. սա-

[1] Ծննդ. Ժա. ԺԲ։

կայն ոչ բաւէին զդէմ ունել զիմաստութեան և զՀոգւոյն՝ որով խօսէր նա ։ Իբրև յանհնա-ըրս մնին՝ հրապուրեցին զարս անօրէնս առ 'ի չարախօս լինել զնմանէ՝ թէ բանս հայհոյութեան խօսի նա 'ի Մովսէս և յԱստուած ։ Եւ խռովեցալ ժողովրդեան և երիցանց 'ի բանից նոցա , հասին 'ի վերայ և յափշտակեցին զնա, և ածին յատեան քահանայապետին ։ Եւ կացուցին երկուս վկայս սուտս , որք ասէին թէ Ստեփաննոս անդադար խօսի բանս հայհոյութեան զտաճարէն և զօրինացն . լուաք 'ի դմանէ որ ասէր՝ թէ Յիսուս Նազովրեցի քակեսցէ զտեղիս զայս , և փոխեսցէ զօրէնսն Մովսէսի ։

608. Յարուցեալ քահանայապետն եհարց ցնա՝ թէ արդարև այդ այդպէ՞ս իցէ . որպէս զի բանիւ նորին դատապարտեսցէ զարդարն ։ Իսկ երանելին լցեալ Հոգւովն սրբով՝ երաց զբերան իւր և սկսաւ հրաշալի աստուածաբանութեամբ առաջի առնել նոցա զխոստումն Աբրահամու և զկարգաւորս 'ի բանից սուրբ գրոց յառաջ բերեալ հաստատեաց զգալուստ Մեսիային ։ Եւ դարձուցեալ զբան իւր առ նոսա 'ի դէմ եհար նոցա՝ թէ 'ի սկզբանէ անտի ծնողքն անշնորհակալու գտան ընդդէմ բարերարութեանցն Աստուծոյ , և խստապարանոց և անթլփատ սրտիւք և ականջօք հակառակ եղեն հանապազ Հոգւոյն սրբոյ՝ հալածելով և կոտորելով զմարգարէս . որք պատմեցին վասն գալստեան արդարոյն Յիսուսի . զոր դուք , ասէ , այժմ մատնիք 'ի խաչն ։

Զայն լուեալ նոցա՝ զայրանային 'ի սիրտս իւրեանց և կրճտէին զատամունս 'ի վերայ նորա ։ Իսկ նա լի Հոգւով սրբով հայեցաւ յերկինս, և ետես զփառս Աստուծոյ , և զՅիսուս զի կայր ընդ աջմէ հօրն երկնաւորի ։ Եւ իբրև պատ-

մեայ նոցա զանեխլն զայն՝ աղաղակեցին Թշնամիքն 'ի ձայն մեծ, և խցեալ զականջս իւրեանց դիմեցին առ հասարակ 'ի վերայ նորա, և քարշեալ ձգեցին զնա արտաքոյ քաղաքին, և քարկոծ առնէին. որ կարդայր և ասէր. Տէր Յիսուս, ընկալ զոգի իմ։ Եւ ծունր եդեալ աղօթէր վասն քարաձգողացն՝ ասելով 'ի ձայն բարձր. Տէր, մի համարիր դոցա զայս մեղս։ Զայս ասացեալ երանելոյն՝ աւանդեաց զհոգին. զոր առեալ բարձին արք երկիւղածք, և կոծով մեծաւ Թաղեցին զնա [1]։

609. Ոչ զիջան Հրէայքն 'ի մոլեգնութենէ իւրեանց արեամբն Ստեփաննոսի, այլ և ևս բորբոքեցան. զի 'ի նմին աւուր յարուցին հալածումն մեծ 'ի վերայ եկեղեցւոյն յԵրուսաղէմ, և ամենեքեան ցրուեցան 'ի գիւղս Հրէաստանի, և 'ի Սամարիա. բայց մնացին առաքեալք 'ի հաստատել զնորածին եկեղեցին Քրիստոսի։ Սօղոս (616) այն լի նախանձու պաշտպանութեան օրինացն Մովսէսի, որ և 'ի քարկոծման Ստեփաննոսի սրտապնդէր զքարկոծողսն, մնաս մեծ հասոյց եկեղեցւոյն 'ի հալածման անդ. զի 'ի տունս տունս մտեալ նորա՝ քարշէր զարս և զկանայս և մատնէր 'ի բանտ։

610. Յայնմ ժամանակի Փիլիպպոս սարկաւագ մի յեօԹանց անտի չոգաւ 'ի Սամարիա, և դարձոյց զժողովուրդն 'ի հաւատս Քրիստոսի,

[1] Լուկիանոս աւագերէց յԵրուսաղէմ դատմ 'ի սկիզբն հինգերորդի դարուն երևել նմա Գամաղիէլի և ցուցանել զտապան մարմնոյն Ստեփաննոսի, որ ճայց օր մի արտաքոյ հիւսիսային դրան Երուսաղէմի՝ որ կոչի 'ի կէտար, և ապա Թաղեցաւ 'ի գեօղ նորին Գամաղիէլի, ուր եդաւ ապա և մարմին նորա (729)։

բժշկելով զամենայն ախտաժէտս և զդիւահարս: Այսր առաքեցան անդր Պետրոս և Յովհաննէս առ 'ի տալ զհոգեշնորհ դրոշմն կամ զՀոգին սուրբ՝ մկրտելոցն 'ի Փիլիպպոսէ: Ընդ անոր Սիմոն ոմն մեծանուն մոգ կախարդական հնարիւք ապշեցուցանէր զազգն Սամարացւոց, մինչև կոչել 'ի ռամկաց Զօրութիւն Աստուծոյ: Սակայն յորժամ հաւատացին քարոզութեան Փիլիպպոսի և անուան Յիսուսի՝ յետս կացին 'ի նմանէ և մկրտեցան 'ի Փիլիպպոսէ: Եւ իբրև հասին անդր Պետրոս և Յովհաննէս և եդին ըզձեռս 'ի վերայ նոցա, անդէն առնուին և նոքա զՀոգին սուրբ: Զայն տեսեալ Սիմոնի՝ մատոյց նոցա ինչս, և խնդրէր զիշխանութիւնն զայն տալոյ զՀոգին սուրբ. իսկ Պետրոս ասէ ցնա. Արծաթ քո ընդ քեզ լիցի 'ի կորուստ, զի ըզպարգևսն Աստուծոյ համարեցար ընչիւք ստանալ: Եւ խրատեաց զնա ապաշխարել 'ի չարեաց և դառնալ առ տէր և գտանել զթողութիւն մեղաց: Եւ առաքեալքն յետ քարոզելոյ անդ զբանն Աստուծոյ՝ դարձան յԵրուսաղէմ, աւետարանելով 'ի բազում գիւղս Սամարացւոց (735):

611. Եւ եղև յետ բանից այսոցիկ հրեշտակ տեառն խօսեցաւ առ Փիլիպպոս գնալ դէպ 'ի կողմն հարաւոյ ընդ Ճանապարհն անապատին: Եւ 'ի գնալ նորա հանդիպեցաւ նմա այր մի եթովպացի ներքինի գանձապետ Կանդակայ թագուհւոյն Եթովպացւոց. որ եկեալ էր երկիր պագանել յԵրուսաղէմ, և անդրէն դառնայր 'ի տեղի իւր: Յայնժամ ասէ Հոգին ցՓիլիպպոս. Մատիր և յարեաց 'ի կառսդ յայդոսիկ: Եւ ընթացեալ Փիլիպպոս լսէր՝ զի ընթեռնոյր նա զմարգարէութիւնն Եսայեայ. և գլուխ գրոյն էր այս. «Իբրև զոչխար 'ի սպանդ

վարեցաւ, և իբրև որոջ առաջի կտրչի իւրոյ անմռունչ » ¹ : Եհարց ներքինին զՓիլիպպոս՝ թէ վասն ո՞յր ասէ մարգարէն զայս . վասն իւր եթէ վասն այլոյ ուրուք : Եբաց Փիլիպպոս զբերան իւր, և սկսեալ 'ի գրոյ անտի աւետարանեաց նմա զՏէր : Իբրև երթային զճանապարհայն՝ եկին 'ի ջուր ինչ, և ասէ ներքինին. ահաւասիկ ջուր. մկրտեա զիս . զի հաւատամ, եթէ Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ: Եհրամայեաց կացուցանել զկառսն. և իջեալ երկոցունց 'ի ջուրն՝ մկրտեցաւ ներքինին. և իբրև ել 'ի ջրոյ անտի. եկն Հոգին սուրբ 'ի վերայ ներքինւոյն. և հրեշտակ տեառն յափշտակեաց զՓիլիպպոս , որ գտաւ յԱզովտոս , և շրջեալ աւետարանէր ամենայն քաղաքացն մինչև 'ի Կեսարիա : Իսկ ներքինին գնայր զճանապարհ իւր ուրախութեամբ մեծաւ . և եղև քարոզիչ կողմանցն այնոցիկ՝ փառաւորելով զանունն Յիսուսի 'ի թագաւորութեան Եթովպացւոց:

612 . Ընդ այն ժամանակս մինչդեռ ցրուեալ գնային աշակերտքն աստ և անդ յերեսաց հալածանաց՝ Ղազարոս և քոյր նորա Մարիամ և Մարթա 'ի միասին աքսորեցան 'ի Հրէից ընդ ծովն Միջերկրական. և վարեալ 'ի հողմոյ՝ հասին 'ի Մարսիլիա քաղաք Գաղղիոյ, և եղեալ անդ իբրև առաքեալք յԱստուծոյ՝ լուսաւորեցին զժողովուրդ անդւոյն լուսով աւետարանին :

613 . Զայնու ժամանակաւ Թովմաս առաքեալ մի յերկոտասանից անտի ըստ յանձնելոյ նմա փրկչին առաքեաց զԹադէոս մի յեօթանասնից՝ առ 'ի լուսաւորել և բժշկել զԱբգար : Հասեալ Թադէի յԵդեսիա՝ եմուտ

¹ Ես. ԾԳ. է :

Նախ 'ի տուն Տուբիայ բագրատունւոյ իշխանին յազգէ Հրէից (337) . որ և ընկալեալ զնա՛ հաւատաց 'ի Քրիստոս : Եւ 'ի յաճախել անդ զբանչելեաց 'ի ձեռն առաքելոյն՝ տարածեցաւ համբաւ նորա և եհաս յականջս Աբգարու : Որոյ կոչեալ առ ինքն զՏուբիա հրամայեաց ածել զառաքեալն առ ինքն : Իբրև եմուտ առաքեալն առ նա 'ի վաղիւ անդր, ետես Աբգար յերեսս նորա զաստուածային իմն տեսիլ, և անդէն յարուցեալ յաթոռոյն երկիր եպագ նմա, և այսպէս եհարց ցնա եթէ դո՞ւ իցես աշակերտ Յիսուսի Որդւոյն Աստուծոյ օրհնելոյ, որ գրեաց առ իս վասն քո, և կարո՞ղ իցես բժշկել զիս : Ասէ ցնա առաքեալն . Եթէ հաւատասցես 'ի նա, ըստ հաւատոց քոց եղիցի քեզ զոր ինչ և խնդրեսցես : Ասէ Աբգար . Ես հաւատացեալ եմ 'ի նա, և հաստատուն բոլորով սրտիւ : Յայնժամ առաքեալն յետ քարոզելոյ նմա զհաւատս Քրիստոսի՝ եդ ձեռն 'ի վերայ նորա և բժշկեաց զնա : Ի նմին աւուր բժշկեաց Թադէոս և զԱբդիու քաղաքապետ յանդամալուծութենէ և զայլ բազում ախտաժէտս, և հռչակեցաւ անուն նորա յոյժ (498):

614 . Յետ քարոզելոյ առաքելոյն 'ի նմին քաղաքի զաւուրս ինչ, իբրև ետես թէ առ հասարակ լուսաւորեցան նոքա 'ի շնորհացն Աստուծոյ, մկրտեաց զնոսա հանդերձ թագաւորաւն . և ապա հրամայեաց նոցա փակել զդրունս կռատանց, և եղծանել զամենայն պատկերս կռոց : Շինեաց 'ի քաղաքի անդ եկեղեցի, որ յետոյ նուիրեցաւ յանուն սրբոյ Աստուածածնին: Եբարձ Աբգար 'ի բարձր տեղւոջէ դրան քաղաքին զպատկեր դիցն Հելլէնացւոց զեդեալն անդ 'ի վաղ ժամանակաց առ 'ի մատուցանել նմա յարգութիւն, և 'ի տեղի

նորա հաստատեալ զանձեռագործ պատկեր փրկչին (502) տպաւորեալ 'ի տախտակի ոսկեզօծ չքնաղակաւ, և ընդ նովաւ էր քանդակեալ զայս բան. «Քրիստոս Աստուած, որ 'ի քեզ յուսայ, ոչ վրիպի 'ի յուսոյն» ։ Եւ հրամայեաց, զի ամենեքեան որք մտանեն 'ի քաղաք անդր՝ երկիր պագցեն աստուածային պատկերին ։

615 . Զկնի լուսաւորելոյ Թադէի զԱբգար և զժողովուրդն Եդեսիոյ, եկաց հրաժարել յարքայէ · զի կամէր գնալ քարոզել յայլևայլ քաղաքս Հայաստանի ։ Բայց նախ ձեռնադրեաց 'ի տեղի իւր եպիսկոպոս Եդեսիոյ զմետաքսագործ ոմն խոյրարար Աբգարու՝ եդեալ նմա անուն Ադդէ · և ապա ելեալ գնաց 'ի Հայս 'ի Շաւարշան առ Սանատրուկ մեծ իշխան քեռորդի Աբգարու · որ և նա հաւատաց 'ի տէր և մկրտեցաւ հանդերձ նախարարօք և ժողովրդովք · որպէս և դուստր նորա Սանդուխտ ։ Եւանդ եւս ձեռնադրեալ առաքելոյն եպիսկոպոս զՋաքարիա ոմն, չոգաւ ապա մինչև յԱղուանս քարոզել և ծաւալել զճշմարիտ հաւատս Քրիստոսի ։

## ԳԼՈՒԽ ԺԶ

Դարձ Պօղոսի և քարոզութիւն նորա։ Յակոբոս Եղբայր Տեառն։ Աբգարու թղթեր առ Տիբեր և առ այլս։

Ա. Տ. 35

616. Պօղոս՝ որ այն ինքն է Սօղոս՝ հալածիչ եկեղեցւոյ զառաջինն (609) ազգաւ եբրայեցի 'ի ցեղէ Բենիամինի ծնեալ 'ի Տարսոն Կիլիկիոյ, աշակերտեալ 'ի ծնողաց իւրոց յԵրուսաղէմ յաշակերտութիւն մեծին Գամաղիելի օրէնսուսոյց վարդապետի։ Ընդ առաջադէպ կրօնասիրութեամբ համարեալ նորա՝ թէ աշակերտք Յիսուսի խանգարիչ են օրինացն Մովսէսի՝ այնչափ վառեցաւ բորբոքեցաւ նախանձու և ատելութեամբ ընդդէմ նոցա, մինչև մատուցեալ առ քահանայապետսն՝ խնդրեաց էառ 'ի նոցանէ թուղթս 'ի Դամասկոս առ ժողովուրդսն, որպէս զի զոր ոք և գտցէ յաշակերտելոց անտի՝ կապեալ ածցէ յԵրուսաղէմ։

617. Իսկ եղև յերթալն նորա և 'ի մերձենալ 'ի Դամասկոս, յանկարծակի շուրջ զնովաւ փայլատակեաց լոյս յերկնից, և անկեալ յերկիր լուաւ բարբառ՝ որ ասէր ցնա. Սաւուղ Սաւուղ, զի՞ հալածես զիս։ Ջահի մեծի հարեալ նորա ասէ. ո՞վ ես Տէր։ Եւ նա ասէ. Ես եմ Յիսուս, զոր դու հալածես. այլ յարի կաց և մուտ 'ի Դամասկոս, և անդ պատմեսցի քեզ զինչ պարտ իցէ առնել։ Իսկ արքն որք ընդ նմա երթային՝ զձայնն Սօղոսի միայն լսէին, և պակուցեալ կային անշշունջ, և ոչ գիտէին թէ ընդ ում խօսի։ Յարեաւ Սօղոս, և աչօք

բայց ոչ՛ զոք տեսանէր. և կալեալ զձեռանէ նորա մուծին 'ի Դամասկոս, և անդ աւուրս երիս ոչ եկեր և ոչ էարբ:

618. Էր յայնժամ 'ի Դամասկոս աշակերտ ոմն Անանիա անուն: Ասէ ցնա տէր 'ի տեսլեան. Անանիա, յոտն կաց և գնա ընդ փողոցն ուղիղ, և խնդրեա զՍօղոս անուն տարսոնացի յապարանս Յուդայ: Նա պատասխանի Անանիա. Տէր, լուայ 'ի բազմաց վասն նորա՝ թէ որչափ արար չարիս սրբոց քոց յԵրուսաղէմ. և աստ ունի իշխանութիւն 'ի քահանայապետաց՝ կապել և հալածել զամենեսեան, որք կարդան զանուն քո: Ասէ ցնա տէր. Երթ դու, զի անօթ ընտրութեան է ինձ նա՝ կրել զանուն իմ առաջի հեթանոսաց և թագաւորաց և որդւոցն Իսրայէլի: Գնաց Անանիա, և եգիտ զնա, և եդեալ 'ի վերայ նորա ձեռս՝ ասէ. Սաւուղ եղբայր, 'ի վեր հայեաց. տէր առաքեաց զիս երևեալն քեզ 'ի ճանապարհի, որպէս զի տեսցես, և լցցիս հոգւով սրբով: Եւ նոյն ժամայն անկան յաչաց նորա իբրև կեղևանք, և տեսանէր համարձակ. և ապա յարեաւ և մկրտեցաւ:

619. Անդ 'ի Դամասկոս վաղվաղակի սկսաւ Սօղոս քարոզել զՅիսուս, եթէ նա է Որդին Աստուծոյ: Հիացան ամենեքեան ընդ անակնկալ փոփոխութիւն նորա: Եւ անդադար էր նա քարոզել զանունն Յիսուսի և յաղթահարել զՀրեայսն որ բնակեալ էին 'ի Դամասկոս. որք և խորհեցան նենգութեամբ սպանանել զնա: Յայտնեցաւ նմա նենգութիւն նոցա. և թէպէտ նոքա սպահէին զգուշութ՟ զդրունս քաղաքին 'ի տուէ և 'ի գիշերի, այլ աշակերտացն առեալ զնա 'ի գիշերի ընդ պարիսպն կախեալ իջուցին վանդակաւ: Անտի իբրև եկն

յԵրուսաղէմ, ամենեքեան երկնչէին 'ի նմանէ, զի չհաւատային եթէ իցէ աշակերտ. բայց Բառնաբաս աշակերտ նորա առեալ զնա ած առ առաքեալսն, և պատմեաց նոցա զամենայն պատճէլսն՝ որք գործեցան 'ի Ճանապարհին: Իսկ Սօղոս խօսէր և վիճէր ընդ Յոյնս. և նոքա խորհէին սպանանել զնա. և իմացեալ զայն եղբարց՝ իջուցին զնա 'ի Կեսարիա և առաքեցին 'ի Տարսոն առ ազգակիցս իւր:

620. Ի նմին ժամանակի Յակոբոս եղբայր տեառն ձեռնադրի 'ի Պետրոսէ հաւանութեամբ առաքելոց առաջին եպիսկոպոս Երուսաղէմի, և մատուցանէ զառաջին պատարագ 'ի վերնատան: Եւ եկեղեցին ընդ ամենայն Հրէաստան և 'ի Սամարիա և 'ի Գալիլեա ունէր խաղաղութիւն մեծ՝ շինեալ և երթեալ զհետ երկիւղի տեառն, և օր քան զօր բազմանայր: Քանզի կայսրն Տիբեր մահ սպառնացաւ ամենեցուն՝ որք յանդգնին հալածել զքրիստոնեայս, և հրաման եհան 'ի պաշտօն առնուլ զՅիսուս և դնել 'ի կարգս դից իւրոց՝ սակս մեծամեծ հրաշագործութեանցն՝ զոր լուաւ: Որ և եւ աքսորել զՊիղատոս յանդարձ օտարութիւն, և 'ի տեղի նորա կարգեաց զՄարկեղոս դատաւոր Հրէաստանի: Իսկ Պիղատոս յետ դառն տառապանաց եղեալ անձին դահիճ աննուէր՝ չոքաւ զիւրովի: Եւ թէ ուստի այսքիկ՝ տեսցուք:

621. Քանզի Աբգար արքայ Հայոց, որ մտերիմ էր Տիբերեայ, գրեաց առ նա թուղթ, և ծանոյց նմա վասն բարերարին իւրոյ Յիսուսի, թէ զիարդ տարապարտ սպանին զնա Հրեայք. մանաւանդ և յորդորէր զնա հաւատալ 'ի նա և տալ պաշտել ամենեցուն: Եւ էր օրինակ թղթոյն այսպիսի. «Աբգար արքայ Հայոց, տեառն Տի-

մամ Տիբերի կայսեր Հռովմայեցւոց խնդալ։ Գիտելով իմ, թէ ոչինչ ծածկի 'ի քումդ թագաւորութեանդ, այլ իբրև զմանրիմ քո՝ աւելի ևս իմացուցանեմ 'ի ձեռն գրոյ։ Զի Հրեայք՝ որ բնակեալ են 'ի գաւառս Պաղեստինացւոց, ժողովեալ խաչեցին զՔրիստոս առանց իրիք յանցանաց, 'ի վերայ մեծամեծ երախտեացն՝ զոր արար առ նոսա, նշանս և սքանչելիս, մինչև զմեռեալս անգամ յարուցանել։ Եւ գիտեա, զի զօրութիւնքս այս ոչ են սոսկ մարդոյ, այլ Աստուծոյ. զի և 'ի ժամանակին յորում խաչեցինն զնա՝ արեգակն խաւարեցաւ, և երկիր շարժեալ տատանեցաւ. և ինքն յետ երից աւուրց յարեաւ 'ի մեռելոց և երևեցաւ բազմաց։ Եւ այժմ յամենայն տեղիս անուն նորա 'ի ձեռն աշակերտաց նորա սքանչելիս մեծամեծս կատարէ. որ և առ իս ինքեան եցոյց յայտնապէս։ Եւ արդ այսուհետև տէրութիւնդ քո գիտէ, որ ինչ արժան է հրամայել 'ի վերայ ժողովրդեանն Հրէից՝ որ զայն գործեցին. և գրել ընդ ամենայն տեղիս՝ զի երկրպագեսցեն Քրիստոսի իբրև Ճշմարիտ Աստուծոյ. ողջ լեր։

622. Իսկ կայսրն առեալ զայս թուղթ՝ առաջի արար ծերակուտին զբանսն Աբգարու, և գրեաց նմա այսպէս. «Տիբերիոս կայսր Հռովմայեցւոց՝ Աբգարու թագաւորի Հայոց խընդալ։ Զթուղթ մտերմութեանդ քո ընթերցան առաջի իմ, վասն որոյ շնորհակալութիւն 'ի մէնջ քեզ հասցէ։ Թէպէտ և 'ի բազմաց մեր լուեալ զայդ յառաջագոյն, եցոյց և Պիղատոս ստուգապէս վասն նշանացն նորա, և եթէ յետ յարութեանն 'ի մեռելոց հաւատարիմ եղև բազմաց, թէ Աստուած է։ Վասն որոյ և ես կամեցայ առնել զայդ, զոր և դու խորհեցար։ Այլ քանզի սովորութիւն է Հռով-

մայեցւոց՝ աստուած 'ի հրամանէ Թագաւորի միայնոյ ոչ նստուցանել, մինչև ոչ փորձել քըն-նեսցի նա 'ի սինկղիտոսէն, վ̃ որոյ և իմ յայտ-նեալ զբանս զայս սինկղիտոսին, արհամարհեաց սինկղիտոսն, զի ոչ քննեցաւ նա յառաջագոյն 'ի նմանէ: Այլ մեք տուաք հրաման ամենայն ումեք որում և հաճոյ թուեսցի Յիսուս, ըն-կալցին զնա ընդ աստուածս, և մահ այնոցիկ սպառնացեալ՝ որ չարախօս կայցեն զքրիստո-նէից: Եւ վասն ժողովրդեանն Հրէից, որ յանդգնեցան խաչել զնա, զորմէ լսեմ՝ թէ ոչ արժանի խաչի էր նա և մահու, այլ պատուի և երկրպագութեան, յորժամ ուրեք պարա-պումն 'ի պատերազմէս Սպանիացւոց ապստամ-բողաց յինէն, քննեալ հատուցից նոցա զար-ժանինս: Դարձեալ գրեաց առ նա Աբգար Թուղթ, յորում այպանելի ցուցանէ զգործ սինկղիտո-սին և յորդորէ պատուհասել զՊիղատոս [1]:

623. Զայսու ժամանակաւ Ներսեհ մանուկ արքայ Ասորեստանի որդի Արտաշէսի Պարսից արքայի, որ նստէր 'ի Բաբելոն, լուեալ զժըշ-կութիւն Աբգարու՝ գրէ առ նա Թուղթ՝ առա-քել առ ինքն զԹադէոս, և միանգամայն ար-ձակել 'ի կապանաց զիշխանն Պերոզ: Եւ Աբ-գարու արձակեալ զՊերոզ՝ գրէ Թուղթ օրի-նակ զայս. «Աբգար արքայ Հայոց, որդւոյ իմոյ Ներսեհի խնդալ: Զգիր ողջունի քոյ տեսի, և զՊերոզ լուծի 'ի կապանաց, և զխաշն նորա Թո-ղի նմա. և եթէ կամ իցէ քեզ, կարգեսցես զնա 'ի վերակացութիւն Նինուէի, որպէս և կամիս: Այլ վասն այնր՝ զի գրեցեր առ իս, թէ տուր ածել զայրդ բժիշկ, որ զնշանս առնէ և քա-րոզէ այլ աստուած 'ի վեր քան զհուր և ըզ-

1 Խորէն. Բ. 30: Յովհ. Կաթ.:

ջուր, զի տեսից և լուայց զմա, նա ոչ էր՝ բժիշկ ըստ արուեստի մարդկան, այլ աշակերտ էր Որդւոյն Աստուծոյ՝ արարչի հրոյ և ջրոյ. և վիճակ հասեալ 'ի կողմանս Հայոց առաքեցաւ: Բայց յընկերաց նորա գլխաւորաց Սիմոն անուն, նա 'ի կողմանս Պարսից առաքեալ է. խնդիր արարեալ՝ լուիցես նմա, յորժամ և հայրն քո Արտաշէս: Եւ նա բժշկեսցէ զամենայն հիւանդութիւնս, և ճանապարհ կենաց ցուցցէ»:

624. Այնօրինակ գրեաց և առ Արտաշէս յորդոր լինելով գալ 'ի ծանօթութիւն ճշմարտին Աստուծոյ. օրինակ զայս. «Աբգար արքայ Հայոց. Արտաշիսի եղբօր խնամ Պարսից արքայի խնդալ: Գիտեմ զի արդ լուեալ է քո վասն Յիսուսի Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ, զոր խաչեցին Հրեայքն. որ յարեաւ 'ի մեռելոց, և առաքեաց զաշակերտսն իւր ընդ ամենայն աշխարհս՝ ուսուցանել ընդ հանուր. և մի յաշակերտաց նորա գլխաւորաց Սիմոն անուն՝ է 'ի կողմանս քոյոյ տէրութեանդ: Արդ խնդրեր արարեալ գտցես զնա, և նա բժշկեսցէ զամենայն ախտս հիւանդութեանց՝ որ 'ի ձեզ, և ճանապարհ կենաց ցուցցէ. և հաւատասցես բանի նորա, դու և եղբարք քո և ամենեքեան, որ հնազանդին քեզ կամաւոր: Զի ախորժելի է ինձ, զձեզ ըստ մարմնոյ ազգականս՝ լինել ինձ մտերիմ հարազատս և ըստ հոգւոյ»: Զպատճէնս այսոցիկ թղթոց եդ երանելին Աբգար 'ի դիւանի իւրում. և չև ևս ընկալեալ զպատասխանին՝ փոխեցաւ յաստեացս, կեցեալ յետ հաւատալոյն իբր ամս երիս, և թագաւորեալ ընդ ամենայն ամս երեսուն և ութ, և թաղեցաւ 'ի քաղաքի իւրում յԵդեսիա:

## ԳԼՈՒԽ ԺԷ

### Սքանչելագործութիւնք առաքելոյն Պետրոսի: Տաբիթա: Կոռնելիոս:

Ա. Տ. 38

625. Եկեղեցի Քրիստոսի իբրև անդորրացեալ որ ըստ օրէ պայծառանայր սքանչելեօք 'ի ձեռն աշակերտաց, սուրբն Պետրոս իբրև ընդհանուր հովիւ եւ յայցելութիւն հօտին. և զի 'ի ժամանակին Անտիոք էր մայրաքաղաք Ասորւոց, նախ անդ ծաւալեալ զհաւատն Քրիստոսի, և անդ նախ հաստատեաց զաթոռ իւր առաքելապետական 'ի հինգերորդ ամի համբարձման տեառն: Ապա եկեալ անտի, և 'ի շրջելն առ ամենեքումբք՝ էջ առ սուրբսն, որ բնակեալ էին 'ի Լիւդիա. որում գիւտեցաւ այր մին Էնէա անուն ութամեան անդամալոյծ: Ասէ ցնա Պետրոս. Էնէա, բժշկէ զքեզ տէր Յիսուս Քրիստոս. արի և քեզէն թօթափեա զանկողինս քո: Եւ յարեաւ վաղվաղակի և ընթանայր: Զարմանային ամենեքեան որք բնակեալ էին 'ի Լիւդիա և 'ի Սարոնա. և ամենեքին դարձան 'ի տէր և մկրտեցան:

626. Ի Յոպպէ ծովեզերեայ քաղաք էր կին մին աշակերտեալ՝ անուն Տաբիթա՝ լի գործովք բարեաց և ողորմութեամբք: Եւ եղև յաւուրսն յայնոսիկ հիւանդանալ նմա և մեռանել. զոր լուացին և եդին 'ի վերնում դստիկոնի և պատրաստէին թաղել զնա: Լուեալ աշակերտացն եթէ Պետրոս է 'ի Լիւդիա մօտաքաղաք, առաքեցին երկուս արս կոչել զնա: Եւ նորա յարուցեալ եկն վաղվաղակի. զոր իբրև հանին 'ի վերնա-

տունն, ուր էր մեռեալն, կացին շուրջ զնովաւ այրքամք և այրիք, և յիշելով զողորմութիւնս կնոջն՝ լային ։ Իսկ Պետրոս հանեալ զամենեսեան արտաքս՝ եդ ծունր, եկաց յաղօթս, և դարձեալ 'ի մեռեալն ասէ. Տաբիթա, արի կաց յանուն տեառն Յիսուսի Քրիստոսի ։ Եւ աժամայն եբաց մեռեալն զաչս իւր և նստաւ ։ Ձեռն ետ նմա Պետրոս և յարոյց զնա. և կոչեալ զորբսն և զայրիս՝ առաջի կացոյց զնա կենդանի. յորմէ բազումք անդ 'ի Յոպպէ հաւատացին 'ի տէր ։ Եկաց Պետրոս 'ի քաղաքի անդ աւուրս բազումս 'ի տան Սիմոնի խաղախորդի 'ի հաստատել զհաւատացեալս ։

627. Յայս վայր զպարգևս քրիստոնեական հաւատոյ վայելեցին որ յԵբրայեցւոց անուն էին. այլ աստի և անդր հաղորդեցան և հեթանոսք պարգևացն այնոցիկ. և առաջին 'ի նոսա Կոռնելիոս ոմն հարիւրապետ, ազգաւ ոչ եբրայեցի, այլ գործովք և ճանաչմամբ ոչ նուազ քան զաստուածապաշտ ոք հրեայ. քանզի բարեպաշտօն և երկիւղած էր յԱստուծոյ ամենայն տամբ իւրով ։ Արդ իբրև կայր նա յաղօթս՝ եսես 'ի տեսլեան զիններորդ ժամու աւուրն զհրեշտակ տեառն, որ ասէր ցնա. Կոռնելիէ, աղօթք քո և ողորմութիւնք ելին յիշատակաւ առաջի Աստուծոյ. և արդ յղեա այր 'ի Յոպպէ և կոչեա զՊետրոս ։ Ի վաղիւ անդր առաքեաց նա զծառայս՝ կոչել զՊետրոս ։ Ոյք իբրև մօտ եղեն 'ի քաղաք անդր՝ ել Պետրոս 'ի տանիս, և 'ի կալ նորա յաղօթս զվեցերորդ ժամուն՝ քաղցեաւ և կամէր ճաշակել ինչ ։ Եւ նոյնժամայն յափշտակեալ մտօք, եսես զերկինս բացեալ, և զչորեցունց ատնոց կախեալ անօթ ինչ իբրև կտաւոյ մեծի իջեալ և նստեալ 'ի վերայ երկրի. յորում էին ամենայն չորքո-

տանիք, սողունք երկրի և թռչունք երկնից. և եղև ձայն առ նա յերկնից. Արի, Պետրոս, զեն և կեր: Ասէ Պետրոս. Քաւ լիցի, տէր. զի ոչ երբեք կերայ խառնակ ինչ և անսուրբ: Ձայն եղև առ նա կրկին անգամ. Զոր Աստուած սրբեաց՝ դու մի՛ պիղծ համարիր: Այսպէս եղև երիցս. և վերացաւ անօթն յերկինս:

628. Եւ մինչդեռ զարմացեալ էր Պետրոս վասն տեսլեանն, եբաց Աստուած զմիտս նորա՝ գիտել թէ բացեալ է դուռն կենաց և առաջի հեթանոսաց, և ամենեքեան 'ի մի մարմին Քրիստոսի յօդեսցին Հրեայք և հեթանոսք: Եւ ահա 'ի նմին ժամու արքն առաքեալք 'ի Կոռնելեայ հարցանէին զապարանիցն Սիմոնի, և կացեալ առ դրանն հարցանէին զՊետրոս: Յայնժամ ասէ Հոգին ցՊետրոս. Ահաւասիկ արք ոմանք խնդրեն զքեզ. արի էջ և երթ ընդ նոսա առանց իրիք խղճելոյ: Էջ Պետրոս, և կոչեալ զնոսա 'ի ներքս ագոյց առ իւր, և 'ի վաղիւ անդր գնաց ընդ նոսա. գնացին ընդ նմա և ոմանք յեղբարց անտի, և 'ի միւսում աւուր հասին 'ի Կեսարիա. և Կոռնելիոս ժողովեալ առ ինքն զազգատոհմն իւր և զկարևոր բարեկամս՝ մնայր նոցա: Եւ եղև 'ի մտանելն Պետրոսի՝ ընդ առաջ եղև նմա Կոռնելիոս, և անկեալ առ ոտսն երկիր պագանէր: Իսկ Պետրոս կանգնեաց զնա և ասէ. Յոտն կաց, և ես ինքն մարդ եմ: Եւ իբրև մտին 'ի ներքս, բացեալ զբերան իւր Պետրոս սկսաւ քարոզել և ուսուցանել բազմութեանն զհաւատսն Քրիստոսի բանիւք մարգարէից և գործովք Յիսուսի: Եւ 'ի խօսել նորա հանգեաւ Հոգին սուրբ 'ի վերայ ամենեցուն՝ որք լսէին զբանն:

629. Զարմացան որք 'ի թլփատութենէ անտի հաւատացեալք էին՝ թէ զիարդ և 'ի հեթանոսս

պարգեւք Հոգւոյն սրբոյ զեղուլին. քանզի լսէին 'ի նոցանէ խօսել լեզուս եւ մեծացուցանել զԱստուած: Յայնժամ հրամայեաց նոցա Պետրոս մկրտել յանուն Յիսուսի Քրիստոսի: Եւ յետ աւուրց ինչ իբրեւ ելանէր յԵրուսաղէմ՝ խղճէին 'ի նմանէ ոմանք 'ի թլփատութենէ անտի հաւատացելոց եւ ասէին, եթէ եմուտ առ արս անթլփատս եւ եկեր ընդ նոսա: Յայնժամ սկսաւ Պետրոս պատմել նոցա զտեսիլ կտաւոյն եւ զհրաշս Հոգւոյն սրբոյ: Զոր լուեալ զարմանային եւ փառաւոր առնէին զԱստուած ասելով. ուրեմն եւ 'ի հեթանոսս ետ տէր զապաշխարութիւն կենաց :

Ի նմին ժամանակի Բառնաբաս այր լի Հոգւովն սրբով եկ 'ի Տարսոն, եւ խնդրեալ եգիտ զՊօղոս, եւ ածեալ յԱնտիոք գործակից եղեն առաքելոց 'ի քարոզութիւն բանին: Անդ յԱնտիոք նախ անուանեցին Քրիստոնեայ զամենայն մկրտեալս: Յայնմ միջոցի Յակոբոս եղբայր Յովհաննու որոշեցաւ 'ի քարոզութիւն աւետարանին, եւ չոգաւ 'ի Սպանիա ծաւալել զլոյս հաւատոյն Քրիստոսի: Եւ այսպէս Պարթեւք եւ Մարք եւ Իլամացիք եւ Հռովմայեցիք, որք 'ի քարոզութենէ անդ Պետրոսի ընկալեալ էին զհաւատս Քրիստոսի (598), այժմ ամենեքեան առ հասարակ աշակերտեցան առաքելոյն եւ լուսաւորեցան լուսով աւետարանին :

630. Զայսու ժամանակաւ մեռաւ Տիբերիոս կայսրն 'ի կղզին Կապրի եօթանասուն եւ ութ ամաց յետ թագաւորելոյ ամս քսան եւ երիս. որում յաջորդեաց Կայիոս այր անմիտ, որ կամեցաւ աստուածանալ եւ ճանաչել յամենեցուն աստուած ոմն՝ պէսպէս յիմարական գործովք. մինչեւ 'ի չորրորդում ամի տէրութեան իւրոյ չարաչար սպանաւ : Սորա յաջորդ եկաց Կղօ-

գլուխ ամս չորեքտասան. և էր այր ակար և թուլամորթ, և ամուսնացաւ ընդ Ագրիպպայ մօր Ներոնի. և Ագրիպպա չարարուեստ հնարիւք դեղակուր արարեալ զայր իւր, կացոյց զորդի իւր զՆերոն՝ կայսր Հռովմայեցւոց:

631. Յետ մահուան մեծին Աբգարու թագաւորեաց որդի նորա Անանէ յԵդեսիա, և Սանատրուկ քեռորդի նորա 'ի Շաւարշան հակառակ նմին: Եւ 'ի նուազելոյ աստուածպաշտութեան՝ բազումք 'ի նախարարաց դարձան 'ի կռապաշտութիւն: Իբրև զի թագաւորն Անանէ եբաց զտաճարս կռոց, և խորհէր բառնալ զպատկերն փրկչին զեդեալն 'ի վերայ դրան քաղաքին, և դնել միւսանգամ 'ի տեղի նորա զպատկեր դիւցն. որում իրազեկ եղեալ Ադդէ եպիսկոպոս՝ գուն գործեաց խափանել զանօրէն խորհուրդն զայն: Ապա 'ի միում գիշերի շոքաւ 'ի տեղին, և լուցեալ կանթեղ մի կախեաց առաջի աստուածանկար պատկերին, և զտեղին ծոցաւոր ծածկեալ կղմինդրաւ ծեփեաց արտաքոյ և անյայտ արար զփրկչական պատկերն, որ յետ բազում ժամանակաց գտաւ անարատ: Իբրև զի յամի 539 յայտնեաց Տիրամայրն 'ի տեսլեան Եւղաղեայ եպիսկոպոսին Եդեսիոյ, եթէ սուրբ դաստառակն է 'ի վերայ դրան քաղաքին ընդ կղմինդրաւ: Որոյ փնտրեալ իբրև 'ի վեր եհան զկղմինդրն՝ եգիտ զայն անեղծ, և զճրագն անշէջ յայնչափ ամաց հետէ. որով և փրկեցաւ քաղաքն 'ի պաշարմանէ Պարսից (1451):

Իսկ Անանէ յետ հաստատելոյ 'ի կռապաշտութեան՝ ետ սպանանել զԱդդէ. այլ փութով եկոյծ զվրէժ անօրէնութեանն. քանզի իբրև առաջի կայր նա նորոգութեան ապարանից իւրոց՝ սիւն անկեալ 'ի վերայ նորա սպան զնա 'ի չորրորդում ամի թագաւորութեան իւ-

րոյ ։ Զայն լուեալ Սանատրկոյ եկն յԵդեսիա ուրախութեամբ, և Թագաւորեաց հանդերձ երդմամբ չառնելոյ ինչ չար քրիստոնէից։ Այլ անդէն առեալ երդմանցն՝ կոտորեաց զամենայն զաւակ տանն Աբգարու. իսկ Հեղինէ կին Աբգարու չոգաւ յԵրուսաղէմ յաւուրս Կղօդեայ կայսեր, յորս եղև սով սաստիկ ըստ մարգարէութեանն Ագաբոսի. և տուեալ գանձ բազում՝ գնեաց ցորեան յԵգիպտոսէ և բաշխեաց կարօտելոց, ըստ որում պատմէ Յովսեպոս ։ Այս 'ի մեռանել իւրում Թաղեցին զնա փառօք առաջի դրան Երուսաղէմի՝ շինեալ 'ի վերայ փառաւոր շիրիմ, որ կայր մինչև ցժամանակս Խորենացւոյն, որպէս պատմէ նա ինքն[1]։

## ԳԼՈՒԽ ԺԲ

Ազատութիւն Պետրոսի 'ի բանտէ։ Հերովդէի սատակումն։ Նահատակութիւն Թադէի։

Ա. Տ. 44

632. Ընդ ժամանակս Տիբերեայ կայսեր Հերովդէս Ագրիպպաս Թոռն Հերովդի ասկաղոնացւոյ (460) չոգաւ 'ի Հռոմ և եղև սիրելի յոյժ կայսեր։ Այլ չափազանց իշխանասիրութեամբն՝ որով անձկայր լինել տէր աշխարհի, կասկածելի երևեալ փակեցաւ 'ի բանտի մինչև մեռաւ Տիբեր. և յաւուրս Կղօդեայ կայսեր ազատեալ կարգեցաւ արքայ Հրէաստանի և Սամարիոյ։ Ընդ ժամանել իւր 'ի Հրէաստան՝

[1] Յովսեպոս Հնախն. Ի. 2. 3. 4։ Պատեր. Ե. 2. 6. 8։ Եւսեբիոս Բ. 12։ Խորէն. Բ. 32։ Եւագր. Դ. 27։

բանադատեաց զՀերովդէս չորրորդապետ եր-թալ 'ի Հռովմ ընդ կնոջ իւրոյ Հերովդիադայ, և տալ համարս գործոց իւրոց. և աքսորեցան նոքա 'ի կայսերէ 'ի Լիոն քաղաք Գաղղիոյ, և անդ կորեան չարաչար 'ի վրէժխնդրութիւնա-րեան Յովհաննու (496):

633. Իսկ Ագրիպպաս Հերովդէս նմանեալ հաւուն իւրում՝ գուն գործէր հաճոյանալ Հրէից, որք յայնժամ ոգւով չափ առէին զա-շակերտան Քրիստոսի: Վասն որոյ ձեռն արկ չարչարել զոմանս յեկեղեցւոյն, և սպան սրով զՅակովբոս զեղբայր Յովհաննու: Տեսեալ եթէ հաճոյ է Հրէից, յաւել ևս ունել զՊետրոս յա-ւուրս բաղարջակերացն և եդ 'ի բանտի, և պա-տուիրեաց զինուորաց պահել զնա. զի կամէր յետ զատկին մատնել զնա 'ի ձեռս Հրէից: Բայց առէպ լինէին աղօթք յեկեղեցւոյն առ Ա-ստուած վասն ազատութեան նորա: Իբրև պատ-րաստէր Հերովդէս ածել զՊետրոս և սպանա-նել. 'ի գիշերին յայնմիկ մինչդեռ 'ի քուն էր Պետրոս 'ի մէջ երկուց զինուորաց կապեալ կրկին շղթայիւք, և պահապանքն առաջի դրան պահէին զբանտն, ահա հրեշտակ տեառն եկն եկաց 'ի վերայ, և լոյս ծագեաց 'ի տանն, և խթեալ զկողն Պետրոսի՝ յարոյց զնա և ասէ. Արի վաղվաղակի: Եւ առ ժամայն անկան շղթայքն 'ի ձեռաց նորա: Եւ ասէ ցնա հրեշ-տակն. Ած զգօտի քո, և արկ զհողաթափս յոտս քո, և արկեալ զձորձս եկ զկնի իմ: Եւ ելեալ Պետրոս 'ի միջոյ պահապանաց երթայր զհետ նորա, համարելով եթէ երազ տեսանէ: Իբրև եկին 'ի դուռն երկաթի՝ որ հանէր 'ի քաղաքն, ինքնին բացաւ նոցա, և մտեալ անցին ընդ փո-ղոց մի. և անդէն վաղվաղակի մեկնեցաւ 'ի նմանէ հրեշտակն:

634. Իսկ Պետրոս իբրեւ 'ի միտ եկն՝ ասէ. արդ գիտեմ ճշմարտիւ եթէ առաքեաց Աստուած զհրեշտակ իւր. եւ փրկեաց զիս 'ի ձեռաց Հերովդի եւ 'ի ժողովրդենէն Հրէից: Եւ գոհացեալ զտեառնէ՝ անց անտի եւ եկն 'ի տուն Մարեմու մօր Յովհաննու՝ որ կոչեցաւն Մարկոս. ուր էին բազումք ժողովեալ եւ աղօթս առնէին առ տէր: Մինչդեռ բաղխէր Պետրոս զդուռն, մատեաւ աղախին մի ունկն դնել թէ ով է. եւ անդէն ծանեաւ զձայն Պետրոսի, եւ առ մեծի խնդութեանն ոչ եբաց զդուռն, այլ 'ի ներքս ընթացեալ պատմեաց եթէ Պետրոս առ դրանն կայ: Նոքա այլ յայլմէ եղեալ ոչ հաւատային բանից նորա, այլ ասէին. Մոլիս, աղջիկ դու: Իսկ 'ի պնդելն նորա թէ այդպէս է, նոքա համարէին թէ գուցէ հրեշտակ նորա իցէ: Իբրեւ կարի շատ բաղխէր Պետրոս, բացին զդուռն, տեսին զնա եւ զարմացան. եւ նա պատուիրեաց նոցա լռել: Ապա սկսաւ պատմել զարանչելիսն՝ եթէ որպէս եհան զնա տէր 'ի բանտէ. եւ հրամայեաց նոցա պատմել զայն եղբարց, եւ ինքն ելեալ անտի առանձնացաւ 'ի Կեսարիա, եւ անդ լինէր: Իբրեւ այգ եղեւ, տեսեալ զինուորաց եթէ չիք անդ Պետրոս՝ խռովեցան յոյժ, եւ զահի հարեալ ասէին՝ եթէ զի՞ արդեօք եղեւ Պետրոսի: Իսկ Հերովդէս իբրեւ խնդրեաց զնա եւ ոչ եգիտ, հրամայեաց սպանանել զպահապանսն:

635. Զայնու ժամանակաւ եկին առ Հերովդէս դեսպանք 'ի Տիւրացւոց եւ 'ի Սիդոնացւոց խօսել 'ի խաղաղութիւն. քանզի թշնամութեամբ էր ընդ նոսա: Եւ 'ի սահմանեալ աւուրն իբրեւ յանդիման եղեն նորա, Հերովդէս նստեալ յաթոռի անդ 'ի հանդերձս պայծառս առ 'ի ցոյց համօրէն ժողովրդեանն եւ գե-

պանայն այնոցիկ եկեղեց առ նա, սկսաւ խօ-
սել ընդ նոսա հրապարակաւ մեծաւ ամբար-
տաւանութեամբ: Եւ յաղաղակել մարդկե-
ղոց ամբոխին, եթէ Աստուծոյ բարբառ է այդ
և ոչ մարդոյ, անդէն եհար զնա հրեշտակ
տեառն, և որդնալից եղեալ սատակեցաւ յեօթ-
ներորդ ամի թագաւորութեան իւրոյ. թողեալ
զորդի մի համանուն՝ որ յաջորդեաց հօրն:

636. Ի պատճառս հալածանացն զոր յարոյց
Հերովդէս՝ աշակերտքն Յիսուսի ցրուեցան յայլ-
և այլ կողմանս աշխարհի և ծաւալեցին զլոյս
աւետարանին յընդհանուր տիեզերս: Պետրոս
յետ հաստատելոյ յԱնտիոք զաթոռ իւր ամս
եօթն՝ ձեռնադրեաց անդ եպիսկոպոս զԵւո-
դիոս. ապա փոխադրեաց անտի զաթոռ իւր 'ի
Հռովմ յերկրորդում ամի կայսերութեան
Կղօդեայ: Եւ անտի առաքեաց զաշակերտս յա-
շակերտաց իւրոց քարոզել զբանն կենաց 'ի
Գաղղիա, 'ի Սպանիա, և յաշխարհս հիւսիսա-
կանաց: Իսկ Բառնաբաս և Պօղոս դարձան յԵ-
րուսաղէմ յետ կատարելոյ զպաշտօնն, առեալ
ընդ իւրեանս զՅովհաննէս Մարկոս զեղբօրոր-
դի Բառնաբայ. իսկ միւս Մարկոս էր 'ի Հռովմ,
աշակերտ և գործակից Պետրոսի (700):

637. Ընդ այն ժամանակս սուրբն Թադէոս
դարձեալ 'ի կողմանցն Ասորւոց քարոզէր 'ի
Հայաստան. և լուեալ զամբարիշտ գործս Սա-
նատրկոյ արքային՝ տրտմեցաւ յոյժ, և չոգաւ 'ի
Կեսարիա: Անդանօր հաստատեալ զեկեղեցին
ձեռնադրեաց եպիսկոպոս զԹէոփիլոս, և ան-
տի էջ 'ի Միջագետս՝ գնալ յՆդեսիա և վերըս-
տին քարոզել անդ զՔրիստոս: Բայց 'ի սահ-
մանս Միջագետաց պատահեցան նմա դեսպանք
առաքեալք 'ի Հռովմայ առ Սանատրուկ՝ որք
հինգ փառաւորք և աւագայագոյնք, որոց գլու-

խաւորն կոչէր Խոչ—ի, այսինքն Ոսկի։ Քարոզեաց նոցա սուրբն Թադէոս, և դարձուցեալ 'ի հաւատս մկրտեաց զնոսա. ապա ձեռնադրեաց քահանայ զՈսկի։ Իսկ նոցա անդէն վաճառեալ զամենայն ինչս իւրեանց՝ սկսան շրջել ընդ առաքելոյն և քարոզել զՔրիստոս, որք և կոչեցան Ոսկեանք։ Զայն լուեալ Սանատրկոյ կոչեաց առ ինքն զԹադէոս 'ի Շաւարշան, և անդ նահատակեաց զնա. իսկ Զաքարիա աշակերտ նորա հովուէր զժողովուրդն (615)։ Նահատակեցաւ ընդ Թադէի և զդուստրն իւր զՍանդուխտ վասն հաստատուն կալոյ նորա 'ի հաւատս փրկչին։ Եւ 'ի լինել մեծամեծ սքանչելեաց 'ի վերայ որբուհւոյն՝ հաւատայ 'ի Քրիստոս նախարար ոմն հանդերձ ամենայն տամբ իւրով, և մկրտեալ կոչեցաւ Սամուէլ, և նահատակեցաւ 'ի Սանատրկոյ։ Նոյնպէս և ոսկին ոմն Զարմանդուխտ ընդ իւրոց երկերիւր արանց նահատակեցաւ 'ի նմանէ վասն 'ի Քրիստոս հաւատոյն։

638. Յաւուրս բաղարջակերացն ամբոխ մեծ յարուցին Հրեայք յԵրուսաղէմ. մինչև Թիւ 'ի միմեանց կոխելոյն և սատակելոյն անցանել քան զերից բիւրուց։ Յայնժամ արք խարեբայք և նենգաւորք յարուցեալ խռովէին զժողովուրդն. յորս և ոմն Եգիպտացի սուտ մարգարէ պատրեալ զժողովուրդն գումարեաց երիս բիւրս արանց անզգամաց՝ լինել ձեռնամուխ 'ի մեծամեծ իրս ապստամբութեանց։ Սակայն հուսկ յետոյ քակտեալ կործանեցաւ. զորմէ ասացաւ Պօղոսի 'ի հազարապետէն անտի, միթէ դու այն Եգիպտացի իցես. որ յառաջ քան զաւուրս զայսոսիկ հաներ յանապատ չորս հազարս արանց (671)։

## ԳԼՈՒԽ ԺԹ

Քարոզութիւնք Պօղոսի, և տանջելք նորա։
Թէկղէ։ Անտիոքայ ժողով։
Ա. Տ. 48

639. Պօղոս և Բառնաբաս զամ մի ողջոյն քարոզեալ յԱնտիոք՝ դարձուցին զբազումս 'ի հաւատս Քրիստոսի։ Յաւուր միում ժողովեալ աշակերտացն մինչդեռ աղօթս առնէին՝ յայտնեաց նոցա Հոգին սուրբ, զի որոշեսցեն զՊօղոս և զԲառնաբաս գնալ քարոզել զաւետարանն 'ի մէջ հեթանոսաց։ Յայնժամ պահեալ նոցա և աղօթս արարեալ՝ ձեռնադրեցին զնոսա եպիսկոպոս և արձակեցին։ Որոց նաւեալ 'ի Կիպրոս՝ անվեհեր պատմէին զբանն Աստուծոյ 'ի ժողովուրդս Հրէից. և շրջեալ ընդ ամենայն երկիրն մինչև ցՊափոս քաղաք՝ գտին անդ զոմն մոգ սուտ մարգարէ հրեայ, որոյ անունն էր Բարեյեսու։ Սա ինքն գունդ գործէր դարձուցանել 'ի հաւատոց զՍերգի Պաւղոս փոխանակ բդեշխին, որ հանապազ խնդրէր լսել զբանն կենաց։ Յայնժամ Պօղոս լցեալ Հոգւով սրբով հայեցաւ 'ի նա և ասէ. Ով լի ամենայն նենգութեամբ և խորամանկութեամբ որդի սատանայի՝ թշնամի ամենայն արդարութեան, ոչ դադարես 'ի թիւրելոյ զուղիղ ճանապարհսն. և արդ ահա ձեռն տեառն 'ի վերայ քո. և եղիցիս կոյր՝ չտեսանել զարև մինչև 'ի ժամանակ մի։ Եւ նոյն հետայն անկաւ 'ի վերայ նորա մէգ և խաւար և աւ խարխափ շրջէր խնդրել զառաջնորդ։ Տեսեալ Սերգեայ զսքանչելիսն՝ որք եղեն, հաստատեցաւ 'ի հաւատսն

Քրիստոսի, և զարմանայր ընդ զօրութիւն և ընդ վարդապետութիւն տեառն ։

640 ․ Իսկ Պօղոս անտի չոգաւ յԱնտիոք Պիսիդեայ, և մտեալ 'ի ժողովուրդն յաւուր շաբաթու սկսաւ ցուցանել նոցա յաստուածաշունչ գրոց զգալուստ Մեսիային և զյարութիւն նորա ։ Իբրև արձակեցաւ անտի ժողովուրդն՝ զհետ երթային բազումք 'ի Հրէից անտի և 'ի պաշտօնէից եկամտից Պօղոսի և Բառնաբայ, որք խօսէին ընդ նոսա և հաւանեցուցանէին կալ մնալ 'ի շնորհսն Աստուծոյ ։ Եւ 'ի գալ միւսոյ շաբաթուն՝ գրեթէ ամենայն քաղաքն ժողովեցաւ անդ լսել զբանն Աստուծոյ ․ ընդ որ նախանձեալ Հրէից՝ ընդդէմ դարձան ասացելոցն 'ի Պօղոսէ և հայհոյէին ։ Համարձակեալ Պօղոսի և Բառնաբայ ասէին ․ Քանզի մերժէք դուք, և ոչ արժանիս համարիք զձեզ կենացն յաւիտենից, ահաւասիկ դառնամք 'ի հեթանոս ։ Զայն լուեալ հեթանոսաց ուրախ լինէին, և փառաւոր առնէին զբանն Աստուծոյ ։

641 ․ Իբրև այսպէս օրըստ օրէ աճէր և ծաւալէր բանն Աստուծոյ ընդ ամենայն գաւառն, և լուսաւորէր զՀրէայս և զհեթանոսս առ հասարակ, անհաւանք 'ի Հրէից անտի գրգռեցին զպաշտօնեայ կանայս գլխաւորս քաղաքին, և դառն հալածանս յարուցեալ 'ի վերայ առաքելոցն՝ հանին 'ի սահմանաց իւրեանց ։ Իսկ նոցա թօթափեալ զփոշի ոտից 'ի վերայ նոցա եկին յԻկոնիոն ․ և անդ 'ի քարոզելն նոցա անհաւանն դառն բանիւք նոցա Հրէայք ․ մինչև միաբանեալ ամենեցուն կամէին քարկոծել զնոսա ․ և ազդեցեալ նոցա փախեան 'ի Լիւստրա, և շուրջ ընդ գաւառան աւետարանէին ամենայն ժողովըրդեան ։

642. Անդ առնոր լիւստրացի ոմն կաղ 'ի ծնէ նստեալ ունկն դնէր քարոզութեան Պօղոսի. անսեալ առաքելոյն եթէ ունի նա հաւատ փրկութեան, ասէ մեծաձայն. Քեզ ասեմ յանուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յառն կաց 'ի վերայ ոտից քոց ուղիղ: Եւ առժամայն ուղղեցան ոտունք նորա, գնայր և վազվազէր 'ի տես ամենեցուն: Զայն տեսեալ ժողովրդոց՝ բարձին զձայնս իւրեանց և ասեն. Աստուածք նմանեալ մարդկան իջին առ մեզ: Եւ կոչէին զԲառնաբաս Դիոս, և զՊօղոս Հերմէս. իսկ քուրմն Դիոսի ցուլս և պսակս հասուցեալ 'ի դրան քաղաքին հանդերձ բազմութեամբք կամէր զոհել: Յայնժամ առաքեալքն պատառեալ զհանդերձս իւրեանց՝ արտաքս վազեցին յամբոխն անտի ասելով. Զի՞նչ գործէք, եղբարք, մեք ձեզ նմանող մարդիկ եմք ընդ կարեօք, որք աւետարանեմք ձեզ՝ յայդպիսի ունայնութեանց դառնալ յԱստուած կենդանի, որ արար զերկինս և զերկիր: Եւ հազիւ դադարեցուցին զնոսա 'ի զոհելոյ:

643. Այլ յուսուցանելն առաքելոց անդ 'ի Լիւստրա, եկին հասին յԱնտիոքայ Հրէայք, և խռովեցուցեալ այնպէս զրգռեցին զժողովուրդն, մինչև յարեան 'ի վերայ Պօղոսի, և քարկոծեալ զնա քարշեցին արտաքոյ քաղաքին և համարէին զնա մեռեալ: Եւ 'ի պատել զնովաւ աշակերտացն՝ յարեաւ եմուտ 'ի քաղաքն, և 'ի վաղիւ անդր չոգաւ 'ի Դերբէ հանդերձ Բառնաբաւ: Անդ բազում նշանօք և սքանչելի քարոզութեամբ աշակերտեալ զբազումս՝ դարձան 'ի Լիւստրա և յԻկոնիոն և յԱնտիոք հաստատել և մխիթարել զաշակերտսն. Ձեռնադրեցին նոցա երիցունս, և աղօթս արարեալ՝ եկին 'ի Պամփիլիա. և քար-

զեալ 'ի Պերգէ՝ եկին յԱտալիա . և անտի նաւարկեալ գնացին 'ի մեծն Անտիոք , ուստի ելեալ էին : Եւ ժողովեալ զեկեղեցին պատմեցին որչափ արար Աստուած զսքանչելիս՝ բանալով հեթանոսաց զդուռն արքայութեան երկնից :

644 . Մինչդեռ Պօղոս էր յԻկոնիոն , եմուտ յաւուր միում 'ի տուն Ոնեսիփորայ , և սկսաւ քարոզել 'ի տան անդ առաջի բազմութեան հաւատացելոց . անդ գտաւ Թեկղի կոյսն՝ դուստր հեթանոս մեծատան . և լուեալ զբանն Աստուծոյ հաւատոյ 'ի Քրիստոս և աշակերտեցաւ առաքելոյն . թողեալ զխօսնայր իւր զԹամիւրոս հեթանոս : Սակս այսորիկ արկաւ 'ի հուր . այլ Աստուած պահեաց զնա աղօթիւք առաքելոյն . և երթեալ ընդ նմա յԱնտիոք Պիսիդեայ արկաւ 'ի հեթանոսաց առաջի գազանաց , բայց պահեցաւ անարատ , և դարձոյց զբազումս 'ի տէր իբրև առաքելուհի նշանօք և արուեստիւք , և ապա մեկուսացաւ : Յետ այսորիկ 'ի դիմել 'ի վերայ նորա անամօթ արանց 'ի լեառն Սելեւկիոյ՝ ուր ճգնէր , պատառեցաւ վէմն և ընկալաւ 'ի ներքս զսրբուհի կոյսն :

645 . Յայսքան մեծահռչակ նշանաց և քաջութեանց առաքելոց դրդեալ Հրէից՝ չարախօս եղեն զքրիստոնէից առաջի Կղօդեայ կայսեր . որ հրաման եհան վարել 'ի Հռովմայ զամենայն քրիստոնեայս իբրև խռովեցուցիչս ժողովրդեան : Նորին ազգաւ և սուրբն Պետրոս յետ եօթն ամաց ելեալ 'ի Հռովմայ չոքաւ անդրէն յԵրուսաղէմ յայցելութիւն արևելեան եկեղեցւոյն : Եւ եղև այս յաստուածային նախախնամութենէ . քանզի 'ի նմին ժամանակի Կերինթոս աւխացի աղանդապետ խռովեցուցանէր զեկեղեցին , առաջելով զՀրէայս

և զհեթանոսս դարձեալս 'ի քրիստոնէութիւն պահել զօրէնս Մովսէսի և թլփատել. յորս խաղաղութիւն մեծ ծագեցաւ յԵրուսաղէմ 'ի մէջ քրիստոնէից (738) ։

646. Յայնժամ ժողով արար Պետրոս յԵրուսաղէմ, ուր էին Յակովբոս եղբայր տեառն եպիսկոպոս անդուստ, Յովհաննէս, Պօղոս՝ և կեփաս յԱնտիոքայ ընդ Բառնաբայ, և այլք ոմանք 'ի գլխաւոր աշակերտաց անտի, և յերէցանց ։ Եւ յետ բազում խնդրոյ լինելոյ 'ի ժողովն անդ՝ յառն եկաց Պետրոս և ասէ ցնոսա. Արք եղբարք, դուք ինքնին գիտէք, զի յաւուրցն առաջնոց ընտրեաց Աստուած բերանով իմով լսել հեթանոսաց բանին աւետարանին և հաւատալ, տալով նոցա զհոգին սուրբ՝ որպէս և մեզ, և ոչինչ ընտրութիւն արար 'ի մէջ նոցա և մեր, հաւատովք սրբեալ զսիրտս նոցա. արդ ընդէ՞ր փորձէք զԱստուած դնել լուծ 'ի վերայ պարանոցի աշակերտացն, զոր ոչ հարքն մեր և ոչ մեք կարացաք բառնալ։ Լռեալ ամենայն ժողովն և լսէին Բառնաբայ և Պօղոսի պատմելոյն՝ որչափ արար Աստուած նշանս և արուեստս 'ի հեթանոսս 'ի ձեռն նոցա։ Եւ յետ լռելոյ նոցին ասէ Յակովբոս. Եւ ես խրատու համարիմ մի նեղել զայնոսիկ որք 'ի հեթանոսացն դառնան առ Աստուած. այլ պատուէր տալ նոցա խորշել 'ի կերակրոց կռոց և 'ի պոռնկութենէ և 'ի մեռելոտւոյ և յարենէ ։ Յայնժամ հաճոյ թուեցաւ ամենայն ժողովոյն՝ արս ընտրեալս 'ի նոցանէ առաքել յԱնտիոք ընդ Պօղոսի և ընդ Բառնաբայ, զՅուդա և զՇիղա՝ գրեալ առ եղբարս զայս ինչ.

647. «Առաքեալք և երիցունք եղբարք. յԱնտիոք և 'ի Սիւրիա և 'ի Կիւլիկիա եղբարցդ որ 'ի հեթանոսաց էք, ողջոյն։ Քանզի լուաք թէ

ոմանք խռովեցուցին զձեզ բանիւք՝ խախտել զանձինս ձեր. ասեն թլփատել և պահել զօրէնսն: Հաճոյ թուեցաւ մեզ միաբան ժողովելոցս յղել առ ձեզ արս ընտրեալս զՅուդա և զՇիղա ընդ Պօղոսի և ընդ Բառնաբայ զնոյն պատմել: Զի հաճոյ թուեցաւ Հոգւոյն սրբոյ և մեզ, մի ինչ աւելի բեռն դնել ձեզ, բայց միայն 'ի բաց կալ 'ի զոհելոյ կռոց, և յարենէ և 'ի հեղձուցելոյ և 'ի պոռնկութենէ. յորոց պահեալ զանձինս բարւոք առնէք: Ողջ լերուք»:

Եւ նոքա հասեալ յԱնտիոք՝ ընթերցան ըզթուղթն առաջի ժողովրդեան. որք և ուրախ եղեն բազում մխիթարութեամբ և հաստատեցան 'ի հաւատս: Եւ եղեալ անդ ժամանակս ինչ՝ ապա երթեալ շրջէին ընդ բազում քաղաքս, աւանդէին նոցա պահել զհրամանսն պատուիրեալս յառաքելոցն և յերիցանց որ յԵրուսաղէմ:

648. Իսկ Պետրոսի չեղև հնար դադարել 'ի Հռովմ յաթոռ իւր, բայց եթէ յետ մահուան Կղօդեայ: Եւ շրջէր և քարոզէր յայլևայլ կողմանս աշխարհի. չոգաւ և յԵգիպտոս և յԱփրիկէ, և 'ի Դամասկոս՝ ուր ձեռնադրեաց զԱնանիա՝ եպիսկոպոս տեղւոյն. և նա ապա կատարեցաւ անդ քարկոծմամբ: Ձեռնադրեցաւ և Բագարատ եպիսկոպոս Տաւռոմենայ քաղաքին Սիկիլիոյ, որ 'ի մանկութեան գնացեալ յԵրուսաղէմ և տեսեալ էր զՅիսուս և ապա աշակերտեալ սորին Պետրոսի. և կատարեցաւ 'ի կռապաշտից 'ի նմին քաղաքի յետ լուսաւորելոյ զժողովուրդն լուսով աւետարանին:

## ԳԼՈՒԽ Ի

### Վիճակ Պօղոսի, ՚ի դարձի Գիտնէականի։
### Ա. Տ. 49

649. Յետ շրջելոյն Պօղոսի ընդ փռիւգիա և ընդ Գաղատիա և լուսաւորելոյն զժողովուրդս հանդերձ Շիղայիւ. զի ՚ի պատճառս Մարկոսի մեկնեալ էր Բառնաբաս ՚ի նմանէ, իջին ՚ի Տրովադա։ Եւ անդ տեսիլ երևեցաւ Պօղոսի ՚ի գիշերին. քանզի այր մի Մակեդոնացի, կամ ըստ ոմանց՝ պահապան հրեշտակն Մակեդոնիոյ կայր աղաչէր զնա, զի անցեալ ընդ Մակեդոնիա՝ օգնեսցէ նոցա։ Անդ ընդ նոսա էր և Ղուկաս. որք վաղվաղակի չոգան ՚ի Մակեդոնիա՝ գիտելով թէ Աստուած հրաւիրեաց զնոսա աւետարանել նոցին զհաւատս Քրիստոսի։ Եւ անցեալ ընդ այլեայլ քաղաքս հասին ՚ի Փիլիպպուս առաջին քաղաք Մակեդոնացւոց։ Ուրանօր դադարեալ աւուրս ինչ՝ ելին յաւուր շաբաթու արտաքոյ քաղաքին առ գետափն. և անդ սկսաւ խօսել Պօղոս ընդ ժողովեալ կանայս։ Զոր լուեալ կին մի Լիդիա անուն ծիրանավաճառ երկիւղած յԱստուծոյ՝ հաւատաց քարոզութեանցն Պօղոսի, և մկրտեցաւ ինքն և ամենայն տուն իւր. ապա բռնադատեալ տարաւ զնոսա ՚ի տուն իւր։

650. Այն ինչ երթային զճանապարհայն, պատահեաց նոցա աղախին մի դիւահար, որ մոլեկանն զօրութեամբ հարցուկ դիւին՝ շահս բազումս տայր տերանց իւրոց։ Սա զհետ եղեալ Պօղոսի և ընկերաց նորա ՚ի բազում աւուրս աղաղակէր ասելով. Արքս այս ծառայք Աստուծոյ

բարձրելոյ են, որ պատմեն ձեզ զճանապարհս փրկութեան ։ Յայնժամ զայրացեալ Պօղոսի դարձաւ և ասէ ցայսն . Պատուիրեմ քեզ յանուն Յիսուսի Քրիստոսի ելանել 'ի դմանէ ։ Եւ առժամայն ել այսն 'ի նմանէ . ընդ որ զարմանային ամենեքեան ։ Սակայն տեարք նորա իբրև տեսին եթէ հատաւ յոյս շահու նոցա՝ առեալ զՊօղոս և զՇիղա ձգեցին 'ի հրապարակն, և կուտեալ 'ի վերայ նոցա զամբոխն՝ ածին առ իշխանսն և առ զօրագլուխսն իբրև խռովեցուցիչս ։ Յայնժամ հրամայեցին զօրագլուխքն գան հարկանել . և բազում վէրս եդեալ 'ի վերայ նոցա արկին 'ի բանտ , պատուիրելով բանտապետին զգուշութեամբ պահել զնոսա . որ և արկ զնոսին 'ի ներքին բանտն , և զոտս նոցա պնդեաց 'ի կոճեղս ։

651 . Իսկ 'ի մէջ գիշերին մինչդեռ Պօղոս և Շիղա կային յաղօթս առ տէր , և ունկն դնէին նոքին կալանաւորքն , յանկարծակի շարժումն մեծ եղև, և բացան դրունքն ամենայն և լուծան կապանք ամենեցուն ։ Իբրև զարթեաւ բանտապետն և ետես բացեալ զդրունս բանտին՝ զահի հարաւ, և ձգեալ զսուրն կամէր սպանանել զինքն՝ կարծելով փախուցեալ զկապեալսն ։ Անդէն գոչեաց Պօղոս մեծաձայն և ասէ . Մի ինչ գործեր չար ընդ անձն քո . քանզի ամենեքին աստ եմք ։ Նա խնդրեաց լոյս և դիմեաց 'ի ներքս . իբրև ետես զնոսա լուծեալս՝ անկաւ առաջի առաքելոցն և ասէ . Տեարք , զի՞նչ պարտ է ինձ առնել, զի ապրեցայց ։ Եւ նոքա ասեն . Հաւատա 'ի տէր Յիսուս Քրիստոս և ապրեսցիս դու և ամենայն տուն քո ։ Եւ ածեալ զնոսա 'ի տուն՝ լուէին ամենեքին որք էին 'ի տան՝ զբանն Աստուծոյ . իսկ նա առեալ լուաց զնոսա 'ի վէրաց անտի , և մկրտեցաւ ինքն և իւրքն

ամենայն. ապա եդեալ առաջի նոցա սեղան ուրախ եղեւ ամենայն տամբն: Իբրեւ այգ եղեւ հրաման ետուն զօրագլուխքն բանտապետին արձակել զնոսա: Ելին անտի առաքեալքն եւ մտին 'ի Լիւդիա, եւ տեսեալ զեղբարս մխիթարեցին եւ հաստատեցին զամենեսին 'ի հաւատս:

652. Յետ այսորիկ շրջեալ նոցա ընդ Ամփիպօլիս եւ ընդ Ապողոնիա եկին 'ի Թեսաղոնիկէ, ուր էր բազմութիւն ժողովրդեան Հրէից: Եմուտ Պօղոս ըստ սովորութեան իւրում առ նոսա, եւ շաբաթս երիս խօսէր ընդ նոսա 'ի գրոց եթէ պարտ էր Քրիստոսի չարչարել եւ յառնել 'ի մեռելոց, եւ թէ նա է Մեսիայն զոր ես քարոզեմ ձեզ: Բազումք 'ի նոցանէ հաւանեցան եւ միաբանեցան, մանաւանդ 'ի պաշտօնէից հեթանոսաց եւ 'ի կանանց գլխաւորաց. մինչեւ նախանձեցան Հրեայք, եւ ամբոխ արարեալ խռովեցուցին զքաղաքն եւ զքաղաքապետսն ասելով. սոքա ամենեքեան հակառակ հրամանաց կայսեր գործեն, թագաւոր զայն ասեն զՅիսուս: Բայց հաւատացեալքն վաղվաղակի գիշերայն յուղարկեցին զՊօղոս եւ զՇիղա 'ի Բերիա. եւ բնակիչքն ընկալան զբանն ամենայն յօժարութեամբ, եւ հանապազ քննէին զգիրս, եւ հաւատային բանից նոցա: Ընդ նս հասին Հրեայք 'ի Թեսաղոնիկեայ, եւ խռովեցուցին զժողովս եւ զքաղաքապետսն. իսկ աշակերտքն առաքեցին զՊօղոս գնալ 'ի ձեռաց նոցա մինչեւ 'ի ծովեզրն:

653. Չոգաւ Պօղոս յԱթէնս, եւ տեսեալ զքաղաքն 'ի կռապաշտութեան՝ զայրանայր 'ի հոգի իւր: Խօսէր հրապարակաւ ընդ ամենեցուն, եւ աւետարանէր որոց պատահէր: Ոմանք 'ի փիլիսոփայից անտի հակառակեալ վիճէին ընդ նմա վասն յարութեան Յիսուսի. եւ ա-

ծեալ զնա 'ի մեծ տաճարն արիսպագին առ_
փիլիսոփայս՝ կամէին իմանալ թէ զինչ իցէ վար_
դապետութիւն նորա ըստ իւրեանց հետաքննին
քննութեան : Եկաց Պօղոս 'ի մէջ արիսպագին
և սկսաւ ցուցանել նոցա նախ զպաշտօնամոլու_
թիւն իւրեանց՝ որք 'ի մէջ կռատան եդեալ էին
բագին մի մակագրեալ «Անծանօթի Աստուծոյ»
որ էր պատկեր արարչին երկնի և երկրի՝ անծանօթ
և անճառ 'ի մարդկանէ՝ քարոզեալ 'ի Պօղոսէ :
Ապա յորդոր լինէր նոցա չպաշտել զձեռագործս
յոսկւոյ և յարծաթոյ, 'ի քարէ և 'ի փայտէ
հնարեալս ճարտարութեամբ մարդկան : Ոմանք
'ի նոցանէ լուեալ զյարութիւն մեռելոց՝
ծաղր առնէին. և այլք հաւատացեալ բանիցն
Պօղոսի՝ աշակերտեցան նմա. ընդ որս էր Դիոնե_
սիոս արիսպագացի, և այլք : Ապա ել անտի
Պօղոս և չոգաւ 'ի Կորնթոս :

## ԳԼՈՒԽ ԻԱ

### Վերափոխումն Աստուածածնին :

Ա. Տ. 49

654. Արդ Դիոնեսիոս եղև այնուհետև ե_
րևելի աշակերտ և մեծանուն վարդապետ եկե_
ղեցւոյ. գրելով ճառս և գիրս խորինս և աս_
տուածաբանականս : Գտաւ սա ներկայ 'ի հան_
գիստ ննջման Աստուածածնին, և գրեաց զպատ_
մութիւնն, որ գիտաւ 'ի սոյն իսկ ժամանակի
ըստ աւանդութեան հարց սրբոց : Քանզի իբրև
մերձեցան աւուրք ննջման Աստուածամօրն՝ առա_
քեցաւ հրեշտակապետն Գաբրիէլ աւետել
նմա՝ թէ ահա գայ 'ի մօտոյ Աստուածորդին
վերառնուլ զքեզ յերկինս : Այս եղև 'ի լե_

ընկն ձիթենեաց, ուր զառաջինն խոստացեալ էր Յիսուս զայն Տիրամօրն 'ի համբառնալն իւրում: Եւ եկեալ սրբոյ կուսին 'ի վերնատունն հրամայեաց Յովհաննու մատուցանել զփրկական պատարագն, և պաշտել նմա զմարմին և զարիւն տեառն: Յետ ընդունելոյ զհաղորդութիւն անյագ փափաքմամբ՝ հրաման ետ կուսանաց և կանանց զգաստից լուցանել ջահս և լապտերս և պատրաստ լինել յուղարկել զնա: Կամեցաւ և տեսանել միանգամայն զդասս առաքելոց, որք սփռեալ էին ընդ ամենայն աշխարհ 'ի քարոզութիւն, որպէս զի տացէ նոցա զմայրենի ողջոյն հրաժարական: Եւ ահա յանկարծակի 'ի քթթել ական անդր գտան ժողովեալ ամենայն առաքեալք և աշակերտք, որք միանգամ կենդանի էին. և յառաջիկայութեան նոցա եկն էջ Քրիստոս. զորմէ ասէ Պօղոս՝ թէ յետ ամաց չորեքտասանից միանգամ ելի յԵրուսաղէմ ըստ յայտնութեանն:

655. Յայնժամ տարածեաց Աստուածամայրն սրբամաքուր աղօթիւք զամենասուրբ ձեռս իւր և աւանդեաց զհոգին 'ի ձեռս Աստուածորդւոյն. և ընդ հրեշտակական դասուց վերացաւ յերկինս: Եւ առաքելոցն բարձեալ զսուրբ մարմին նորա սաղմոսիւք և օրհնութեամբ եդին 'ի գերեզմանի 'ի տեղւոջն Գեթսեմանի, ուր մինչև ցերիս աւուրս լսելի լինէր 'ի վերայ գերեզմանին սաղմոսերգութիւն հրեշտակական ձայնից. և ապա փոխեցաւ և մարմնով յերկինս: Քանզի Բարդուղիմէոս առաքեալ որ 'ի ժամ վախճանի սուրբ կուսին ոչ գտաւ անդ, յետ թաղման նորա եկն և վշտանայր և խնդրէր թախանձանօք ցուցանել նմա զմարմին Տիրամօրն, բացին առաքեալքն զտապանն և գտին զայն ունայն: Յայնժամ 'ի մի-

տուխն՝ թէ յետ դադարելոյ հրեշտակական օրհներգութեանցն փոխադրեալ եղև սուրբ մարմինն 'ի ձեռն հրաքուն զօրաց յերկնային խորանն լուսոյ:

656. Այսպէս գրէ մեծն Դիոնեսիոս 'ի թուղթն առ Տիմոթէոս՝ ասելով. «Եւ որբազնակատարն իմ Յերոթէոս համդերձ աստուածընկալ քահանայապետօքն մերովք, և բազումք 'ի սրբազանից եղբարցն մերոց 'ի տեսութիւն գնացաք կենդանապետական և աստուածընկալ մարմնոյ կուսին. անդ էր և աստուածեղբայրն Յակոբոս, և Պետրոս գլխաւորն, և երիցագոյն աստուածաբանիցն ծայրութիւն Յովհաննէս. ապա յետ տեսութեան հաճոյ թուեցաւ օրհնաբանել քահանայապետիցն ըստ իւրեանց կարի զանբաւազօր աստուածպետականին կարութիւն ('ի գովեստ Տիրամօրն): Յետ աստուածաբանիցն հզօրագոյն ցուցաւ աստուածաբանութիւնն Յեթէոսի, և այլն: Ըստ որոյ գրէ և Խորենացին 'ի թուղթն առ Սահակ Արծրունի. «Սուրբ կոյսն զքանչելի վարուք սրբութեամբ առաւելեալ քան զամենայն որք . . . միահամուռ ամենայն ամք կենաց նորա վաթսուն ամ. 'ի տասնեհինգ ամին ծնաւ զփրկիչն աշխարհի. և երեսուն և երեք ամ մինչև 'ի խաչելութիւն փրկչին. իսկ յետ համբառնալոյ յերկինս փրկչին՝ երկոտասան ամ. (ըստ այլոց հնգետասան): Հրաւիրեալ սրբո…ն 'ի փոխումն առ Որդին՝ յայտնեալ աւետարանչին զփայտն կիպարիս. յորմէ կենսաբեր խաչն, մեծաւ թախանձանօք կերպաձևէ զպատկեր Տիրամօրն առ 'ի մնալ նշխար կենաց մերոց առ անձուկ սրտին իւրոյ . . .

657. Անդ 'ի ժողովել աշակերտացն համագումար միաբանութեամբ 'ի յղարկել զՆո-

տուածածային իւրեանց . . . առեալ ամենորհնեալ սրբուհւոյն զպատկերն նկարեալ ('ի Յովհաննէ) 'ի սուրբ ձեռս իւր՝ տարածեալ զտատուածընկալ ձեռս իւր (աղօթէր) . . . Եւ առացեալ առաքելոցն զամենն՝ նոյնժամայն կամօք լուսեղէն եկաց 'ի վերայ սրբուհւոյն. և լոյս ամպեղէն խաչանման կաթեաց 'ի սուրբ պատկերն, և եդեալ սրբուհւոյն զսուրբ պատկերն 'ի վերայ երեսաց իւրոց և թողեալ յորդահոս արտասուօք. զոր հեղոյր առաջի տեառն : Եւ առեալ առաքելոցն Պետրոսի և Պօղոսի զպատկերն 'ի ձեռաց սրբուհւոյն. և ամենեքեան երկրպագեցին : Իսկ յորժամ աւանդեաց զհոգին իւր սուրբ անարատ կոյսն 'ի ձեռս տեառն, անբոյր հրեղէն յուղէր, և հասեալք 'ի վերայ առաքելոցն կամելով յափշտակել զմարմին կուսին, և հարան ամենեքեան կուրութեամբ. իսկ այր մի անուն Յոփոնիա բուռն եհար (զդագաղէն) . . . մնաց ձեռք կախեալ յարմկացն զմահճաց. լայր և աղաչէր այլն . . . աղաղակեաց անբոյն. խոստովանիմք զՔրիստոս Որդի Աստուծոյ, որ եառ մարմին անճառապէս 'ի սուրբ կուսէդ . . . Եւ առեալ զձեռանէ նորա Պետրոսի եբեր մերձեցոյց 'ի հատուածս ձեռացն, և միացեալ յարեցան իբրև զառաջինն. և լուսաւորեցան խաւարեալքն, և մկրտեցան հրէայք և հեթանոսք յոյժ բազմութեամբ. և բորոտք որք էին 'ի քաղաքին՝ գային առ առաքեալսն և օծանէին իւղով, և սմուռնադրէին սուրբ պատկերաւն, և առ ժամայն բժշկէին յախտից. և ամենայն ախտաժէտք գային 'ի համբաւն 'ի ննջման տիրուհւոյն. և լինէին նոյնժամայն ողջացեալք . . .

658. Այս յոյժ սգացեալ Բարդուղիմէոս, զի ոչ ժամանեաց նա տեսութեան սուրբ կու-

ածին, և ոչ լուսաւ զօրհնութիւնն վերջին, որպէս զայս առաքելոյն և զաշակերտացն տեսան, և ոչ 'ի գերեզմանին եգիտ, որոմէր առաւել քան պատուել: Զայն տեսեալ երանելի առաքելոյն՝ մխիթարել զեղբայրն իւրեանց կամեցեալ՝ ետուն նմա զպատկեր ախրամօրն, որ էր 'ի փայտ նկարեալ բնաւորեալ զօրութեամբ: Զոր առեալ Բարդուղիմէոս զուարճացաւ, և լրիւ ընդ կենդանւոյն համարեալ նայէր: Այս մեծաւ փութով եւ 'ի Հայս հրամանաւ սուրբ Հոգւոյն. զի զԹադէոս առաքեալ սպանեալ էր Սանատրուկ արքայ յԱրտազ գաւառի Հայոց»:

659. Իսկ առաքելոյքն յառաջ քան զմեկնել 'ի միմեանց յօրինեցին զառաքելական հանգանակն հաւատոյ. և է այս. «Հաւատամ յԱստուած Հայր ամենակալ՝ արարիչն երկնի և երկրի: Եւ 'ի Յիսուս Քրիստոս Որդի նորա միակ 'ի տէր մեր. որ յղացաւ 'ի Հոգւոյն սրբոյ, ծնաւ 'ի Մարիամայ կուսէն: Չարչարեցաւ առ պոնտացւոյ Պիղատոսիւ, խաչեցաւ, մեռաւ և թաղեցաւ, էջ 'ի դժոխս, յերրորդ աւուր յարեաւ 'ի մեռելոց, համբարձաւ յերկինս, նստի ընդ աջմէ Աստուծոյ Հօր ամենակալի, ուստի գալոց է դատել զկենդանիս և զմեռեալս: Հաւատամ 'ի Հոգին սուրբ, 'ի սուրբ եկեղեցի: Ի հաղորդութիւն սրբոց, 'ի թողութիւն մեղաց, 'ի յարութիւն մարմնոց, 'ի կեանսն յաւիտենականս, ամէն»: Զայս հանգանակ յետոյ հայրապետք յայլ և այլ ժողովս բացատրեալ ձոխացուցին:

## ԳԼՈՒԽ ԻԲ

Պօղոսի շրջել ընդ Ասիա, և երթ նորա Երուսաղէմ։ Ապողոս։ Պետրոսի դարձ 'ի Հռոմ։ Բարթողոմէոս, և պատկեր Տիրամօրն։ Եղիշէ աշակերտ Թադէի։ Ա. Տ. 51=56

660. Կացեալ Պօղոսի 'ի Կորնթոս ամ մի և ամիսս վեց, գրէ անտի զառաջին թուղթ առ Թեսաղոնիկեցիս, առ որս առաքեալ էր նախ զՏիմոթէոս առ 'ի հաստատել զնոսա 'ի հաւատս Քրիստոսի։ Անդ եգիտ զոմն Հրեայ Ակիւղաս անուն խորանակար համարուեստ, որ եկեալ էր 'ի Հրէաստան ըստ հրամանին Կղօդեայ կայսեր յորոշել զամենայն Հրեայս։ Ի տուն յարեցաւ Պօղոս և գործէր ընդ նմա՝ առ չտալոյ այլոց զծանրութիւն. սակայն և այնպէս ոչ դադարէր խօսել 'ի ժողովրդեան ըստ ամենայն շաբաթուց, և հաւանեցուցանէր ըզՀրեայս և զհեթանոսս։ Անդ Կրիսպոս ժողովրդապետն հաւատացեալ 'ի տէր ամենայն տամբ իւրով մկրտեցաւ, և բազմաց Կորնթացւոց լուեալ հաւատացին և մկրտեցան։ Եւ զի էին անդ 'ի Կորնթոս որ ընդդէմ դարձան նմա և հայհոյէին ևս, երևեցաւ նմա տէր 'ի գիշերի և ասէ ցնա. Մի երկնչիր, այլ խօսեաց. զի ես ընդ քեզ եմ, և ժողովուրդ բազում է իմ 'ի քաղաքիս յայսմիկ։

661. Առ Գաղղիոնաւ փոխանակաւ բդեշխին Աքայեցւոց յարեան Հրեայք 'ի վերայ Պօղոսի և ածին զնա յատեան. բայց դատաւորն մերժեաց զնոսա յատենէ անտի՝ վկայելով վասն Պօղոսի թէ անիրաւութիւն կամ խարդախու-

թիւն ընդդէմ օրինաց չէ գործեալ։ Բայց Պօղոս տակաւին մնացեալ անդ աւուրս բազումս՝ 'ի վախճանի կամէր նաւել յԱսորիս։ Հասեալ ապա յԵփեսոս՝ եմուտ 'ի ժողովուրդն, խօսէր հանապազ ընդ Հրէայսն։ Եւ անտի և էջ 'ի Կեսարիա և յԱնտիոք՝ հաստատել զեկեղեցին. և շրջեալ կարգաւ ընդ Գաղատիա և ընդ Փռիւգիա քարոզէր զաւետարանն Աստուծոյ։ Եկն եհաս հրեայ մին Ապողոս անուն աղեքսանդրացի այր ճարտարաբան և զօրաւոր գրովք, որ տեղեկացեալ ճանապարհին Աստուծոյ՝ եռայր հոգւով, խօսէր և ուսուցանէր ճշմարտութեամբ վասն Յիսուսի, և զՀրէայսն ընդդադայնս յանդիմանէր հրապարակաւ, ցուցեալ 'ի գրոց՝ եթէ Քրիստոսն է Յիսուս։ Ապա չոքաւ Ապողոս 'ի Կորնթոս. և մինչ քարոզէր անդ՝ եհաս Պօղոս յԵփեսոս, և եկաց անդ ամս երիս։ Ուրանոր մկրտեալ զբազումս, իբրև եդ զձեռն 'ի վերայ նոցա՝ հանգեաւ Հոգին սուրբ 'ի նոսա. խօսէին լեզուս և մարգարէանային։ Եւ այսպէս հանապազօր խօսէր և քարոզէր 'ի դիւանին Տիւրաննեայ ուրումն, մինչև ամենայն բնակչաց Ասիացւոց լսել զբանն Աստուծոյ։

662. Այնչափ զօրութիւնս առնէր Աստուած 'ի ձեռն Պօղոսի, մինչև տանել 'ի հիւանդս 'ի քրտանէ նորա թաշկինակս, յորմէ փարատէին ախտք և մերժէին դևք։ Զայն տեսեալ ոմանց 'ի շրջող Հրէից, որ երդմնեցուցիչք էին, սկսան յանդգնութեամբ անուանել 'ի վերայ այսահարաց զանուն տեառն Յիսուսի՝ ասելով. երդմնեցուցանեմք զձեզ 'ի Յիսուս՝ զոր Պօղոսն քարոզէ. զայս առնէին և որդիքն Սկևեայ հրէի քահանայի։ Պատասխանի ետ այսն չար ասելով. զՅիսուս գիտեմ, և զՊօղոս ճանաչեմ. բայց դուք ո՞վ էք։ Եւ վազեալ այրն՝ յորում

էր այն չար՝ և ըմբռնեալ զերկոսեան յաղթահարեաց զնոսա. մինչև մերկս և վիրաւորս փախչել նոցա 'ի տանէ անտի: Այս ամենայն յայտնի եղև համօրէն Հրէից և հեթանոսաց, որք բընակեալ էին յԵփեսոս, և անկաւ երկիւղ յամենեսեան. որով և մեծանայր անուն տեառն Յիսուսի. և բազումք 'ի հաւատացելոց գային և խոստովան լինէին զգործս իւրեանց: Նա և բազումք 'ի կախարդաարացն բերեալ զգիրսն այրէին առաջի ամենեցուն. և համարեցան ըզգինս նոցա, և գտանէին արծաթոյ բիւրս հինգ, որ է յիսուն հազար դահեկան արծաթի:

663. Յետ այսորիկ առաքեաց Պօղոս 'ի Մակեդոնիա երկուս 'ի պաշտօնէից իւրոց զՏիմոթէոս և զԵրաստոս. և ինքն մնացեալ յԵփեսոս՝ գրեաց անտի զառաջին թուղթն առ Կորնթացիս: Յայնժամ Դեմետրիոս ոմն արծաթագործ, որ գործէր կռուս արծաթիս դիցն Արտեմեայ, ժողովեալ զձեռագէտս արուեստին՝ ասէ, թէ շահ մեր է 'ի կռոց աստի, իսկ Պօղոս ոչ միայն զԵփեսացւոց, այլ և զամենայն Ասիացւոց ժողովս շրջեաց, և յոչինչ համարեալ զմեհեանն Արտեմեայ՝ քակելոց է զմեծութիւն նորա, զոր ամենայն Ասիա և տիեզերք պաշտեն: Զայն լուեալ՝ լի եղեն բարկութեամբ և աղաղակէին մեծաձայն. Մեծ է Արտեմիս Եփեսացւոց: Լցաւ յայնժամ քաղաքն խռովութեամբ՝ և դիմեցին առ հասարակ 'ի թէատրոնն. բայց դպրապետն լռեցոյց զամբոխն և արձակեաց զամենեսեան: Իսկ Պօղոս այնուհետև կոչեալ զաշակերտսն մխիթարեաց, և ողջոյն տուեալ չոգաւ 'ի Մակեդոնիա:

664. Ի յիններորդ վեցերորդ ամի փրկչին մեռաւ կայսրն Կղօդիոս յետ թագաւորելոյ ամս չորեքտասան. և եղև ազատութիւն Հրէից

դառնալ 'ի Հռովմ, ուստի արտաքսեալ էին (645)։ Յայնժամ դարձաւ և Պետրոս յաթոռ իւր՝ հաստատելով զեկեղեցին Քրիստոսի։ Կամէր և Պօղոս գնալ անդ յօգնութիւն առաքելականին, բայց նախ կամեցաւ շրջել 'ի կղզիս և անցանել ընդ Ասիա և ընդ Երուսաղէմ։ Ապա զկնի բաղարջակերացն հասեալ 'ի Տրովադա խօսէր ընդ ժողովրդեան յաւուր շաբաթուց։ Եւ 'ի միում աւուր երկայնեաց զբանն մինչև 'ի մէջ գիշերի. և էին լապտերք բազումք 'ի վերնատանն, ուր ժողովեալ էին կատարել զխորհուրդ պատարագի։ Անդ երիտասարդ ոմն Եւտիքոս անուն նստեալ 'ի վերայ պատուհանին՝ ննջէր 'ի քուն թանձրութեան։ Ի խօսելն Պօղոսի յաճախ՝ անկաւ այն յերրորդ դստիկոնէ 'ի վայր, և բարձաւ մեռեալ։ Յայնժամ Պօղոսի առեալ զնա 'ի գիրկս իւր, եած զնա կենդանի, և մխիթարեցան ամենեքեան։

665. Եւ անտի գնացեալ նորա 'ի Միլետոնէ, կոչեաց զերիցունս եկեղեցւոյն Եփեսոսի և հաստատեաց զնոսա քաղցր վարդապետութբ։ Ուրանոր մարգարէանալով պատմեաց նոցա թէ յետ այնորիկ գալոց են գայլք յափշտակողք և կեղեքիչք հօտին Քրիստոսի. յաղագս որոյ պարտին արթուն լինել, զի ոչ ունէին այնուհետև տեսանել զվարդապետն իւրեանց զՊօղոս։ Ապա յանձն արարեալ զնոսա Աստուծոյ, ետ զողջոյն հրաժարական և մեկնեցաւ. ուր եղև բազում լալիւն և մորմոք սրտի։ Իսկ նորա հասեալ 'ի Տիւրոս՝ եգիտ անդ զաշակերտսն, որք աղաչէին զնա չելանել յԵրուսաղէմ։ Չոգաւ անտի 'ի Կեսարիա և ագաւ յապարանս Փիլիպպոսի աւետարանչի, որ էր մի յեօթանց սարկաւագաց։ Ի նոյն աւուրս էջ 'ի Հրէաստանէ 'ի Կեսարիա Ագաբոս մարգարէ։ Սա առեալ

զգօտին Պօղոսի՝ կապեաց զձեռս և զոտս իւր, մարգարէացաւ և ասէ. Այսպէս ասէ Հոգին սուրբ. ըստ այսմ օրինակի կապեսցեն զՊօղոս Հրեայք յԵրուսաղէմ, և մատնեսցեն 'ի ձեռս հեթանոսաց: Զայն լուեալ աշակերտացն առղէին զնա մնալ անդ. այլ 'ի չանսալն նորա՝ թողին զնա 'ի կամս իւր. և ոմանք յաշակերտաց իւրոց եկին ընդ նմա յԵրուսաղէմ:

666. Զայսու ժամանակաւ հրամանաւ Կղօդեայ կարգեալ էր յԵրուսաղէմ դատաւոր Փելիքս, առ որով եղև մարտ Հրէից 'ի Կեսարիա, և բազում գունդք անկան 'ի նոցանէ: Իսկ յետ մահուան Կղօդեայ թագաւորեաց 'ի Հռովմ Ներոն եօթնևտասն ամաց. և մայր իւր Ագրիպպա էր հրամանատար տէրութեան (630): Առ սա առաքեաց Սանատրուկ հրեշտակս հանդերձ ընծայիւք՝ հաստատել զդաշնման հաշտութեան: Տեսեալ զնոսա Ներոնի՝ հրաւիրեաց եկանել 'ի կայսերական գահոյս և նստել 'ի միասին. սակայն գաղափարակ իւր Սենեկա փիլիսոփայ անպատեհ համարեալ զայն՝ արգել: Իսկ Սանատրուկ արքայ արար բազում գործս երևելիս 'ի Հայաստան. շինեաց զքաղաքն Մծբին՝ որ քանդեալ էր 'ի դեռնաշարժութենէ, և զանդրի իւր կանգնեաց 'ի քաղաքամիջի՝ ունելով 'ի ձեռին դրամ մի, յայտ արարեալ թէ սպառեցան ամենայն գանձք նորա, և այս միայն մնաց:

667. Բարդողոմէոս առաքեալ, որ ընդ այն ժամանակս բերեալ էր 'ի Հայաստան զպատկեր Տիրամօրն (658), և զօրութ̃ նորին հալածէր զդևս 'ի տեղեաց տեղեաց. մանաւանդ 'ի Դարբնոց քարէ՝ ուր կայր կուռքն Անահտայ. կամ Աֆրոդիտեայ դից: Եւ անդ 'ի լերին կանգնեաց նախ զխաչ մի, և ապա շինեաց զեկեղեցի յանուն Աստուածածնի, և եդ 'ի նմա զհրաշալի պատ-

կերն զայն ։ Առ որով շինեաց զհօգւոց վանս, և անդ ժողովեաց զկուսանս և զսուրբ կանայս, և կացոյց գլուխ նոցա զՄարիամ քոյր իշխանին Յուսկան, և ինքն աւետարանեալ զՔրիստոս՝ դարձոյց զբազումս 'ի հաւատս. ընդ որս և զքոյր Սանատրկոյ, և զհազարապետ նորա ։ Իբրև լու եղև, կալաւ Սանատրուկ զքոյր իւր և սպան. և ապա ետ հանել զմորթ Բարդողոմէայ, և զնա 'ի խաչ հանել 'ի տեղւոջն Աղբակ, որ կոչեցաւ Բարդողիմ, և անդ թաղեցաւ մարմին նորա. այլ յետ ժամանակաց փոխադրեցաւ 'ի Նփրկերտ քաղաք մարտիրոսաց ։ Իսկ Մարիամ յանձն արարեալ զվանսն 'ի ձեռս Աննայի քեռ Որմզդանայ, էանց յայնկոյս գետոյն, և շինեալ իւր խրճիթ՝ կատարեցաւ սրբութեամբ ։ Այսպէս արար և Աննա. իսկ այլ կուսանք կատարեցան, ոմանք ճգնութեամբ և ոմանք մարտիրոսութեամբ ։ Զվանս զայս յետ ժամանակաց նորոգ շինեաց սուրբ Լուսաւորիչն. և զխաչն կանգնեալ 'ի Բարդողոմէայ՝ ընդ իւր շրջեցուցանէր, և նովաւ գործէր բազում սքանչելիս. զոր յետոյ կանգնեցին 'ի վերայ գերեզմանին Տրդատայ ։

668. Ի ժամանակին յայնմիկ Եղիշէ աշակերտ Թադէոսի առաքելոյն, որ ձեռնադրեալ էր եպիսկոպոս 'ի Յակովբայ եղբօրէ տեառն, եկն 'ի Հայս, և շրջեալ ընդ Աղուանս չոքաւ 'ի գեօղն Գիս երեք աշակերտօք և դարձոյց զամենսին. և կատարեցաւ անդ քարկոծմամբ, և ընկեցաւ մարմին նորա 'ի գուբ մի անյայտ. բայց յետ ժամանակաց 'ի յայտ եկեալ՝ տարան զնա 'ի վանսն Ջրվշտիկ ։ Ուր յետոյ Վաչական արքայ Աղուանից կանգնեաց սիւն 'ի վերայ գբին. յորոյ վերայ ճգնեալ հանգեաւ և սենեկապետ իւր ։ Եկն 'ի Հայս և սուրբն Եւստաթէոս մին

յեօթանասնից, և նահատակեալ թաղեցաւ 'ի տեղւոջն տաճարեւ. ուր ապա շինեցաւ վանք ։

## ԳԼՈՒԽ ԻԴ

### Կապել Պօղոսի յԵրուսաղէմ և գնալ 'ի Կեսարիա ։

Ա. Տ. 57

669. Եմուտ Պօղոս յԵրուսաղէմ յամի տեառն 57, և 'ի չորրորդ ամի կայսերութեան Ներոնի. և ընկալան զնա հաւատացեալ եղբարք բազում խնդութեամբ. և 'ի վաղիւ անդր գնաց առ Յակովբոս եղբայր տեառն եպիսկոպոս Երուսաղէմի ։ Անդ եկին առ նա ամենայն երիցունքն. որոց ողջոյն տուեալ Պօղոս՝ պատմէր միըստմիոջէ զոր արար Աստուած 'ի հեթանոսս 'ի ձեռն պաշտաման նորա ։ Իսկ նոցա լուեալ փառաւոր առնէին զտէր ։ Ապա ասեն ցնա. տեսանե՞ս, եղբայր, քանի բիւրք են հաւատացելոց Հրէից, և ամենեքեան նախանձաւոր օրինացն են. բայց իրազեկ եղեն վասն քո թէ ապստամբութիւն 'ի Մովսիսէ ուսուցանես Հրէից եղելոց 'ի հեթանոսս. արդ զի՞նչ լինիցի 'ի լսելն թէ եկեալ ես ։

670. Յայնժամ Պօղոս ըստ խորհրդոց նոցա առեալ զարս չորս ուխտադիրս՝ 'ի վաղիւ անդր սրբեալ եմուտ ընդ նոսա 'ի տաճարն կատարել զեօթնօրեայ կարգ սրբութեան ուխտաւորաց հանդերձ զոհիւք ։ Անդ տեսեալ զնա Ասիացւոց Հրէից՝ զեղուին զնովաւ զամենայն ամբոխն, և արկեալ 'ի նա ձեռս աղաղակէին. Արք Իսրայելացիք, օգնեցէք. այս այր է, որ հակառակ ժողովրդեան և օրինացն և տեղւոյս այսորիկ ուսու-

ցանե։ Շարժեցաւ քաղաքն ամենայն և կուտեցաւ անդր. և առեալ զՊօղոս ձգէին արտաքոյ տաճարին. և փակեալ զդրունսն վաղվաղակի խորհէին անդէն 'ի տեղւոջն սպանանել զնա։ Լուեալ հազարապետի գնդին, եթէ խառնեալ է ամենայն Երուսաղէմ, առեալ զօրականս դիմեաց 'ի վերայ նոցա. որոց տեսեալ զհազարապետն ընդ զօրականօքն՝ դադարեցին 'ի հարկանելոյ զՊօղոս։ Հազարապետն կալեալ զնա անդէն կրկին շղթայիւք, և հարցանէր թէ ով իցէ, և զինչ գործեալ իցէ։ Իբրև ոչ կարաց գիտել զստոյգն վասն ամբոխին՝ հրամայեաց տանել զնա 'ի բանակն. և մինչդեռ տանէին զնա, զհետ երթայր ամենայն բազմութիւնն և աղաղակէին. Բարձ զդա։

671. Իբրև եմուտ Պօղոս 'ի բանակ անդր, ասէ ցնա հազարապետն. Մի թէ դու իցես եգիպտացին այն, որ յառաջ քան զայսօրեկ աւուրս ապստամբեցուցեր և հաներ յանապատ չորս հազար արս սիկարեանս։ Եւ ասէ Պօղոս. Ես եմ այր հրեայ 'ի Տարսոնէ Կիլիկեցւոց՝ ոչ աննշան քաղաքի քաղաքացի. աղաչեմ զքեզ, հրամայեա ինձ խօսել առ ժողովուրդդ։ Իբրև հրամայեցաւ նմա՝ լռեաց ամբոխն. և Պօղոս սկսաւ ատենաբանել հրէարէն առ ժողովուրդն զվարս իւր, և զանցսն զոր եանս 'ի Ճանապարհին Դամասկոսի (617)։ Եւ ամենայն ժողովուրդն իբրև ունկն դնէին նմա մինչև յայն բան՝ թէ Աստուած առաքեաց զնա 'ի հեթանոսս հեռաւորս պատմել նոցա զճանապարհ կենաց, բարձին զձայնս իւրեանց և ասեն. Բարձ յերկրէ զայդպիսիդ, զի չէ պարտ այդպիսւոյդ կեալ։ Եւ յաղաղակել նոցա կատաղաբար և ընկենուլ զհանդերձս և զփոշին ցանել յօդս, հրամայեաց հազարապետն մուծանել

զնա 'ի բանակն ։ Ընդ պրկեալ զնա փոկով պատրաստեցան գանիւ հարցանել զնա եւ գիտել զստոյգն ։ Յայնժամ ասէ Պօղոս ցհազարապետն, եթէ զայր հռովմայեցի եւ անպարտ պա՞րտ իցէ ձեզ գան հարկանել ։ Իբրեւ լուան եթէ հռովմայեցի գոլեալ է, վաղվաղակի 'ի բաց կացին 'ի նմանէ ։

672. Ի վաղիւ անդր հրամայեաց հազարապետն կոչել յատեան զամենայն քահանայապետսն եւ զծերս ժողովրդեան, եւ իջուցեալ զՊօղոս կացոյց 'ի մէջ նոցա ։ Եւ 'ի խօսելն Պօղոսի զանմեղութենէ անձին՝ քահանայապետն Անանիա հրամայեաց սպասաւորացն հարկանել զբերան նորա ։ Յայնժամ ասէ Պօղոս. Հարկանելոց է զքեզ Աստուած, որմ բռեալ. եւ դու նստիս դատել զիս ըստ օրինաց, եւ առանց օրինաց հրամայես հարկանել զիս ։ Եւ տեսեալ եթէ մի կողմն Սադուկեցւոց է եւ միւսն փարիսեցւոց՝ աղաղակէր 'ի մէջ ատենին. Արք եղբարք, ես փարիսեցի եմ որդի փարիսեցւոյ. վասն յուսոյ եւ յարութեան մեռելոց ես ահաւասիկ դատիմ ։ Լուեալ զայս բազմութիւնն պատառեցաւ, եւ եղեւ աղաղակ մեծ ։ Յոտն կացին ոմանք 'ի փարիսեցի դպրաց անտի. հակառակէին եւ ասէին. Ոչինչ չարութիւն գտանեմք յառն յայսմիկ. բայց եթէ հրեշտակ խօսեցաւ 'ի դմա ։ Իսկ 'ի բազմանալ ամբոխին հրամայեաց հազարապետն յափշտակել զՊօղոս 'ի միջոյ նոցա, եւ ածել 'ի բանակն ։

673. Ի նմին գիշերի երեւեցաւ տէր 'ի տեսլեան Պօղոսի եւ ասէ ցնա. Քաջալերեաց, Պօղոսէ, զի որպէս վկայեցեր վասն իմ յԵրուսաղէմ՝ այնպէս պարտ է քեզ եւ 'ի Հռովմ վկայել ։ Իբրեւ այգ եղեւ, ժողով արարեալ Հրէից նզովեցին զանձինս իւրեանց ոչ ուտել եւ ոչ ըմ-

պել մինչև սպանցեն զՊօղոս. և էին աւելի քան զքառասուն, որք մատեան առ քահանայապետսն և առ երիցունս, և պատմեցին նոցա զխորհուրդ իւրեանց, որպէս զի համոզեսցեն զհազարապետն իջուցանել զՊօղոս յատեան ծերակուտին Հրէից, և նոքա դարան գործեալ 'ի ճանապարհի սպանցեն զնա: Զայն լուեալ քեռորդւոյն Պօղոսի՝ ածապարեաց զեկոյց նմա. և նա առաքեաց զնա առ հազարապետն զգացուցանել նմա: Իբրև լուաւ հազարապետն ըղդաւաճանութիւն Հրէից, առաքեաց զնա գիշերայն 'ի Կեսարիա առ Փելիքս դատաւոր հանդերձ զօրականօք և թղթով:

674. Հասեալ նոցա 'ի Կեսարիա և տուեալ դատաւորին զթուղթն՝ առաջի կացուցին նորա զՊօղոս. և հրամայեաց դատաւորն պահել զնա յապարանսն Հերովդի: Ապա յետ հինգ աւուրց էջ քահանայապետն Անանիա հանդերձ ծերովք ոմամբք, ունելով ընդ իւր և զՏերտիւղոս ճարտարախօսն, որ յանդիման եղեալ դատաւորին, սկսաւ ամբաստան լինել զՊօղոսէ, ցուցեալ զնա իբրև խռովեցուցիչ ժողովրդեանն: Իսկ Պօղոս՝ յակնարկել առ նա դատաւորին՝ ցրեաց զամբաստանութիւն նոցա այնպիսի պերճարտութեամբ, մինչև ափիբերան արար ըղհակառակորդս իւր: Ապա յետ աւուրց ինչ դատաւորն Փելիքս դարձեալ կոչեաց զՊօղոս, և լուեալ 'ի նմանէ վասն որ 'ի Քրիստոս հաւատոյն և վասն արդարութեան և ժուժկալութեան և հանդերձեալ դատաստանին, զահի հարաւ ասելով. Առ այժմ երթ, և յորժամ ժամ լինիցի՝ կոչեցից զքեզ:

675. Ապա 'ի կատարել երկուց ամաց եկն փոխանակ Փելիքսի Փեստոս Պորկիոս դատաւոր Հրէաստանի. որ յետ երից աւուրց հասանե-

լոյ 'ի Կեսարիա Պաղեստինոյ՝ ել յԵրուսաղէմ յայցելութիւն. յայնժամ զգացուցին նմա քահանայապետքն և գլխաւորքն զՊօղոսէ, և աղաչէին՝ զի կոչեսցէ զնա յԵրուսաղէմ, որպէս զի դարան գործեալ սպանցեն զնա 'ի ճանապարհի։ Իսկ Փեստոս ետ պատասխանի, թէ ինքն ընդ հուպ երթալոց է 'ի Կեսարիա. անդր եկեսցեն ինքեանք և ամբաստան լիցին զնմանէ առաջի նորա։ Իբրև էջ դատաւորն 'ի Կեսարիա, 'ի վաղիւ անդր նստեալ յատենի հրամայեաց ածել անդր զՊօղոս։ Եւ իբրև եկն, կացեալ շուրջ զնովաւ Հրեայք և ծանր ծանր վնասս դնէին 'ի վերայ նորա, զորս ոչ կարէին ցուցանել. քանզի պատասխանի տայր Պօղոս՝ եթէ ոչ յօրէնս Հրէից. ոչ 'ի տաճարին, և ոչ 'ի կայսր ինչ վնասակար եմ։ Սակայն և այնպէս 'ի կամելն Փեստոսի շնորհս առնել Հրէից՝ ասէ ցՊօղոս. կամի՞ս յԵրուսաղէմ ելանել, և անդ վասն դոցին իրաց դատել առաջի իմ։ Յայնժամ երկուցեալ Պօղոսի՝ զի մի անկցի 'ի ձեռս Հրէից՝ ասէ. Յատենի կայսեր հաստեալ կամ, ուր պարտ է ինձ դատել. Հրէից չեմ վնասակար. ապա եթէ վնասակար եմ, և արժանի ինչ մահու գործեցի, ոչ զանգիտեմ 'ի մեռանելոյ. իսկ եթէ ոչինչ է՝ զորոց սոքա ամբաստան լինին զինէն, ոչ ոք կարէ զիս դոցա շնորհել. 'ի կայսր բողոքեմ։ Յայնժամ դատաւորն խորհրդով իրոյն արար պատասխանի. Ի կայսր բողոքեցեր, առ կայսր երթիջիր։

## ԳԼՈՒԽ ԺԴ

Պօղոս առաքեալ 'ի Հռովմ։
Ա. Տ. 60

676. Ի սմին ժամանակի Թագաւորէր 'ի Հրէաստան Ագրիպպաս փոխանակ հօր իւրոյ Հերովդի. որ ընդ քեռն իւրոյ Բերենիկեայ եկն 'ի Կեսարիա յողջոյն Փեստոսի։ Իբրև լուաւ զՊօղոսէ, խնդրեաց լսել նմա։ Եւ 'ի վաղիւ անդր մտեալ յատեանն բազում երևելի արամբք և հազարապետօք, հրաման ետուն բերել զՊօղոս։ Այն ինչ երևեալ Պօղոսի յատենի անդ՝ հրամայեցաւ նմա խօսել համարձակ։ Յայնժամ Պօղոսի ձգեալ զձեռս սկսաւ խօսել և պատասխանել ամենայն ամբաստանութեանց Հրէից. առաջի անէր նոցա զվարս իւր, և զտեսիլն՝ զոր ետես 'ի Ճանապարհին Դամասկոսի։ Զարմացեալ Փեստոսի ընդ բանս բերանոյ նորա աղաղակեաց 'ի ձայն բարձր. Մոլիս. Պօղէ. բազում գիտութիւնք զքեզ 'ի մոլորութիւն դարձուցանեն։ Իսկ Պօղոս ասէ. Ոչ մոլիմ, քաջդ Փեստոս, այլ զճշմարտութեան բանս բարբառիմ։ Յայնժամ Ագրիպպաս յաղթահարեալ 'ի ճշմարտութենէ անտի ասէ ցՊօղոս. Փոքունին համոզեցուցանես զիս լինել քրիստոնեայ։ Եւ Պօղոս ասէ, խնդրեմ յԱստուծոյ՝ ոչ միայն զքեզ, այլ և զամենեսեան որ լսեն ինձ այսօր՝ լինել այնպիսի, որպէս ես եմ, բաց 'ի կապանացս։ Յոտն կացեալ ամենեքեան, և հանեալ զնա յատենէն՝ ասէին, թէ ոչինչ արժանի մահու կամ կապանաց գործեալ է այրս այս։ Սակայն և այնպէս խնդրեցեալ արձակել զնա վասն բո-

ղոքելոյ նորա 'ի կայսր, հրաման եղև նմա նաւել և գնալ 'ի Հռովմ առ կայսրն Ներոն:

677. Արդ ետուն զՊօղոս և զայլ կապեալս 'ի ձեռս հարիւրապետի ուրումն Սեբաստեան գնդին, որում անուն էր Յուլիոս. ընդ նմա էր և Ղուկաս պատմիչ բանիցս այսոցիկ և Արիստարքոս աշակերտ: Եւ ելեալ նոցա 'ի նաւ մի Ասիոյ սկսան նաւել. 'ի վաղիւ անդր հասին 'ի Սիդոն, և անտի 'ի Կիպրոս, ապա 'ի Միւռա: Անդ գտեալ հարիւրապետին նաւ մի աղեքսանդրացի՝ եմոյծ զնոսա անդր՝ գնալ յԻտալիա: Ուր 'ի բազում աւուրս ծանրանաւեալք հազիւ հասին 'ի տեղին կոչեցեալ գեղեցիկ նաւահանգիստ: Իբրև բազում ժամանակք անցանէին, խրատ տայր Պօղոս անդանօր ձմերել. այլ 'ի չանսալն նմա՝ ելին 'ի ծով: Եւ ահա դիպաւ նոցա մրրիկ մեծ առ Կրետաւ, մինչև 'ի վտանգի լինել նաւուն. Թափեցին 'ի ծով զաւուրս երիս զկարասին առ 'ի թեթևութիւն նաւուն, այլ տակաւին 'ի յուզելոյ ալեացն 'ի վտանգի կային և յուսահատեալ էին: Յայնժամ յարուցեալ Պօղոս քաջալերեաց զնոսա ասելով, թէ ոչինչ վնաս գոյ անձանց՝ բաց 'ի նաւէն. քանզի երևեցաւ ինձ, ասէ, յայսմ գիշերի հրեշտակ տեառն և ասէ. մի երկնչիր, կայսեր ես քեզ պարտ է յանդիման լինել. և ահա շնորհեալ է քեզ յԱստուծոյ զամենեսին՝ որ են ընդ քեզ 'ի նաւիդ:

678. Այլ 'ի չորեքտասաներորդ գիշերի ծփեալ յանդունդս ծովուն՝ նաւավարքն խորհէին փախչել 'ի նաւէ անտի. նմին իրի իջուցին զկուրն 'ի ծով անդր: Յայնժամ ասէ Պօղոս ցհարիւրապետն. Եթէ դոքա ոչ մնան 'ի նաւիս, դուք ապրել ոչ կարէք: Շարժեալ նոցա 'ի բանից առն՝ նոյն հետայն հասին զօրա-

կանգն զլորս կրին և 'ի բաց ընկեցին ։ Եւ 'ի վաղիւ անդր աղաչէր Պօղոս զամենեսին ճաշակել զկերակուր, և ինքն առեալ հաց գոհացաւ զԱստուծոյ առաջի ամենեցուն, եբեկ և սկըսաւ ուտել ։ Յորժամ քաջալերեցան ամենեքեան, առին կերակուր և զօրացան, և թափեալ զցորեանն 'ի ծով թեթևացուցին զնաւն. և էին ընդ ամենայն 'ի նաւին ոգիք երկերիւր եօթանասուն և վեց ։ Ի վաղիւն խորշ մի նաւահանգստի նշմարեալ 'ի հեռուստ, զոր և չճանաչէին, խորհէին անդր զերծուցանել զնաւն. և զի անհնար էր խարիսխ վերացուցանել, հատին զչուանն, 'ի բաց առին զղեկն, և զառագաստն իջուցեալ՝ ետուն զնաւն հողմոյ՝ գնալ յափն կոյս ծովուն ։ Եւ այսու օրինակաւ յառաջացեալ, անկան առաջ 'ի տեղի մի և թիւրեցին զնաւն ։ Յայնժամ զօրականացն խորհուրդ վառ խորհեալ կամէին սպանանել զկապեալսն, զի մի փախիցեն լուղելով ։

679. Սակայն հարիւրապետն կամելով ապրեցուցանել զՊօղոս՝ արգել զնոսա 'ի խորհըրդոց անտի. և հրաման արար, զի որ կարօղն իցեն լողել՝ ելցեն 'ի ցամաք ։ Ոմանք 'ի ձեռն տախտակաց և 'ի ձեռն այլոց կահուց ապրեցան. և այլք 'ի լող անցանելով. և այսպէս ամենեքեան զերծան 'ի կղզին Մելիտինէ ։ Թէպէտ ժողովուրդ տեղւոյն էին վայրենաբարոյ, բայց ոչ սակաւ մարդասիրութիւն ցուցին նոցա. լուցին խարոյկ և ընկալան զնոսա 'ի ներքս ։ Եւ 'ի ժողովել խուխ բազում վառն հրոյ՝ իժ մի 'ի ջերմութենէ անտի ելեալ կալաւ զձեռանէ Պօղոսի ։ Իբրև տեսին բնակիչքն զգազանն կախեալ զձեռանէ նորա՝ ասէին ցմիմեանս. թէ արդարև չարագործ է այր այս, որ թէպէտ ապրեցաւ 'ի ծովէ, սակայն իրաւունքն ոչ ե-

տուն դմա կեալ ։ Այլ Պօղոս անմիտս Թօթափեաց զգազանն ՚ի հուր ։ Նորա իբրև տեսին, թէ ոչինչ վնաս եղև՝ յայլ միտս դարձուցեալ զբանս ասէին, թէ աստուած ոմն է սա ։ Եւ բերէին առ նա զամենայն հիւանդս կղզւոյն այնորիկ, և ամենեքեան բժշկէին յանուն տեառն, և պատուէին զնա բազում մեծարանօք, և հոգային սիրով զամենայն պէտս նորա ։

680․ Զկնի երից ամսոց ելեալ նոցա ՚ի նաւ և անցեալ ընդ այլեայլ տեղիս՝ հասին ՚ի Պատիողոս ՚ի վիճակին Հռովմայ, և անտի եկին ՚ի Հռովմ քաղաք կայսերական ։ Ընդ լուեալ ըզգալուստ Պօղոսի՝ ելին ընդ առաջ նորա հաւատացեալ եղբարք ոմանք ՚ի տեղին կոչեցեալ Ապփեայ հրապարակ, և այլք ՚ի փոքրն անուանեալ Երիցն կրպակաց․ ուր տեսեալ զնոսա Պօղոս՝ քաջալերեցաւ և գոհացաւ զԱստուծոյ ։ Ապա հրամայեցաւ Պօղոսի լինել յարձակի առանձինն իբրև ՚ի գիտապահօք հանդերձ զինուորաւ միով պահպանաւ ։ Իսկ յետ երից աւուրց կոչեաց Պօղոս զգլխաւորս Հրէից և խօսեցաւ ընդ նոսա բազում քաղցրութեամբ, ցուցեալ զանմեղութիւն իւր և զատելութիւն թշնամեացն ասելով, թէ չեմ ինչ հակառակ գործեալ ժողովրդեանն Հրէից և կրօնի հայրենեաց մերոց․ բայց կապեալ յԵրուսաղեմ մատնեցայ ՚ի ձեռս Հռովմայեցւոց․ որք իբրև գատեցան զիս՝ կամեցան արձակել վասն ոչ գտանելոյ յիս վնաս ինչ․ այլ ՚ի հակառակել Հրէից՝ հարկ եղև բողոքել ՚ի կայսր ։

681․ Յայնժամ Հրեայք ետուն պատասխանի՝ թէ մեք ոչ թուղթս ընկալաք ՚ի Հրէից անտի, և ոչ եկեալ ոք պատմեաց վասն քո ինչ չար ։ Բայց ժամ եգին այնուհետև գնալ առ նա և լսել վասն ՚ի Քրիստոս հաւատոցն ։ Եւ իբրև

գային 'ի վանան Պօղոսի , խօսէր ընդ նոսա և պատմէր վասն արքայութեանն Աստուծոյ՝ հաւանեցուցեալ զնոսա վասն Յիսուսի յօրինացն Մովսէսի և 'ի մարգարէից անտի՝ յայգուէ մինչև ցերեկոյ ։ Բազումք հաւանեալ բանիցն Պօղոսի լսող լինէին , և կէսք չհաւանեալ խստանային 'ի միտս իւրեանց ։ Եւ այսպէս Պօղոս եղեւ անդ զերկեամ մի բովանդակ իւրով վարձու , և ընդունէր զամենեսեան՝ որք մտանէին առ նա . քարոզէր զարքայութիւնն Աստուծոյ , և ուսուցանէր հանապազ վասն տեառն Յիսուսի Քրիստոսի անխափան ամենայն համարձակութեամբ ։ Յայնմ ժամանակի գրեաց Պօղոս 'ի Հռովմայ թուղթս առ փիլիպպեցիս , առ կողոսացիս , և առ Եփեսացիս . ապա գրեաց և առ Եբրայեցիս յոյժ վսեմ ։

Զկնի երկամեայ քննութեանն իբրև գտաւ Պօղոս ոչինչ մեղուցեալ՝ եկաց յազատութեան , և միացեալ ընդ առաքելոյն Պետրոսի ծառայէր յարեմտուս զլոյս աւետարանին ։ Գործակից էր նմա և Ղուկաս աւետարանիչ , որոյ գնացեալ յայլևայլ կողմանս 'ի քարոզութիւն՝ հանգեաւ յԵլլադա (699) . իսկ Պետրոս և Պօղոս կատարեցան 'ի Հռովմ , որպէս տեսցի յիւրում տեղւոջ (1321) ։

## ԳԼՈՒԽ ԻԵ

### Մատենագրութիւնք և ճառագրութիւն առաքելոց:
Ա. Տ. 65=103

682. Եկեղեցին Քրիստոսի զառաջինն հիմնեցաւ 'ի վերայ երկոտասան առաքելոց, և եօթանասուն և երկուց աշակերտացն, որք առաքեցան 'ի տեառնէ քարոզել ընդ տիեզերս, և ուսուցանել զճշմարիտ հաւատս աւետարանին. զոր նախ ինքեանք ուսեալ էին 'ի Քրիստոսէ: Ի սոցանէ ընտրեաց Աստուած անձինս ութ, որք ոչ միայն քարոզութեամբ աշակերտեցին զբազումս, այլ և թողին յաշխարհի գիրս աստուածաշունչս 'ի մխիթարութիւն և 'ի հաստատութիւն հաւատացելոց: Դարձեալ և 'ի սոցանէ չորք եւեթ գրեցին զաւետարանն հոգւով սրբով, և կոչեցան Աւետարանիչք. յորոց նախ Մատթէոս գրեաց յԵրուսաղէմ 'ի լեզու եբրայեցի զկնի ութից ամաց համբարձման տեառն: Մարկոս՝ որ էր յաշակերտաց կարգէ, գրեաց յԱղեքսանդրիա 'ի լեզու եգիպտացի զկնի հնգետասան ամաց համբարձման՝ հրամանաւ Պետրոսի: Ղուկաս՝ նոյնպէս յաշակերտաց կարգէ, գրեաց յԱնտիոք 'ի լեզու ասորի զկնի եօթնևտասան ամաց համբարձման՝ հրամանաւ Պօղոսի: Հուսկ յետոյ Յովհաննէս առաքեալ գրեաց զաւետարանն յԵփեսոս 'ի լեզու յոյն զկնի վաթսուն և վեց ամաց համբարձմանն: Այս գիրք բովանդակէ համառօտ զվարս և զվարդապետութիւնս փրկչին. և կոչի Աւետարան, այսինքն լի աւետեօք փրկութեան, և հաշտութեան Աստուծոյ ընդ մարդկան:

683. Ղուկաս գրեաց գործեալ և զԳործս առաքելոց, որ է պատմութիւն սկզբնաւորութեան եկեղեցւոյ զկնի համբարձման։ Եւ Յովհաննէս գրեաց զերիս թուղթս. զառաջինն ընդդէմ հերձուածողապետացն Կերինթոսի և այլոց, որք 'ի նմին ժամանակի երևեալ ուրանային զաստուածութիւնն Քրիստոսի (738)։ Իսկ այլ թղթովքն հաստատէ զաշակերտեալսն 'ի սէր և յերկիւղն Աստուծոյ, և 'ի սէր միմեանց ամենայն բարեկարգութեամբ։ Բայց յայսցանէ գրեաց նա ինքն Յովհաննէս զՅայտնութիւնն յառաջ քան զգրութիւն աւետարանին երբ աքսորեալ էր 'ի կղզին Պատմոս. ուր յայտնեաց նմա Աստուած զխորին խորհուրդս մարգարէականս, որ ինչ լինելոց էր 'ի մէջ եկեղեցւոյ՝ սկսեալ յառաջին գալստենէն Քրիստոսի մինչև ցերկրորդն։

684. Եւ Պետրոս գլուխն առաքելոց գրեաց զերկուս թուղթս առ Հրեայս հաւատացեալս, որք ցրուեալ էին ընդ ամենայն աշխարհ 'ի մէջ կռապաշտից. որովք հաստատէ զգալուստ փրկչին՝ ցուցեալ 'ի մարգարէից անտի։ Ըստ այսմ գրեաց և Յակովբոս առաքեալ եղբայր տեառն թուղթ առ Հրեայս հաւատացեալս, զորս յորդորէ յառաքինութիւն։ Այսպէս և սորա եղբայր Յուդա Թադէոս առաքեալ գրեաց համառօտ թուղթ առ նորին հաւատացեալս՝ յորդորելով զնոսա զօրաւոր բանիւք հեռանալ մոլորեցուցչաց։ Այսպիսի եօթնեակ թուղթք կոչին Կաթուղիկեայք, այսինքն ընդհանրական. զի գրեցան ընդ համօրէն աշխարհ առ Հրեայս ցրուեալս։

685. Այլ Պօղոս երեքտասաներորդ առաքեալ՝ յետ շրջելոյ ընդ այլեւայլ կողմանս աշխարհի և քարոզելոյ մեծաւ մասամբ հեթանո-

սայ՝ կոչեցաւ Վարդապետ հեթանոսաց . և գրեաց չորեքտասան թուղթս առ մասնաւոր եկեղեցիս՝ զորս ըստ մեծի մասին ինքն հիմնեալ էր : Նախ գրեաց առ Հռովմայեցիս 'ի Կորնթոսէ թուղթ վարդապետական յառաջ քան զտեսանելն զնոսա՝ ձեռամբ Տերտիոսի աշակերտին իւրոյ : Զերկու խրատական թուղթս գրեաց առ Կորնթացիս . զմին յԵփեսոսէ և զմիւսն 'ի Մակեդոնիայ : Զչորրորդ թուղթն գրեաց առ Գաղատացիս՝ կամ յԵփեսոսէ և կամ 'ի Հռովմայ , որով հաստատէ զնոսա 'ի հաւատս : Զհինգերորդ թուղթն գրեաց 'ի բանտի 'ի Հռովմայ առ Եփեսացիս ձեռամբ Տիքիկոսի աշակերտին իւրոյ : Ընդ և զվեցերորդն առ Փիլիպպեցիս ձեռամբ Եպափրոդիտեայ : Զեօթներորդն 'ի Հռովմայ առ Կողոսացիս՝ որք բնակէին 'ի փոքրն Ասիա : Զութերորդն և զիններորդն առ Թեսաղոնիկեցիս , զառաջինն յԱթենայ և զերկրորդն 'ի Կորնթոսէ կամ 'ի Հռովմայ : Զտասներորդն յԻտալիոյ 'ի Հրէաստան առ Եբրայեցիս՝ յորդորելով զնոսա հաստատուն կալ 'ի հաւատս Քրիստոսի և համբերել վասն անուան նորա : Զմետասաներորդն և զերկոտասաներորդն ուղղեաց առ Տիմոթէոս սիրելի աշակերտ իւր , զոր ձեռնադրեալ էր եպիսկոպոս Եփեսոսի , զմին 'ի Մակեդոնիայ և զմիւսն 'ի Հռովմայ : Զերեքտասաներորդն 'ի Մակեդոնիայ առ Տիտոս աշակերտ իւր , զոր ձեռնադրեալ էր եպիսկոպոս Կրետացւոց : Զչորեքտասաներորդ թուղթն գրեաց 'ի Հռովմայ առ Փիլիմոն բարեկամ իւր վասն Ոնեսիմեայ ծառային , որ աշակերտեալ էր Պօղոսի :

686 . Արդ առաքեալք և աշակերտք Քրիստոսի զկնի լուսաւորելոյ զախեղերս կենարար վարդապետութեամբ իւրեանց և հաստատելոյ

զեկեղեցին Քրիստոսի պէսպէս պաշտելով , կատարեցան յայլեայլ կողմանս աշխարհի զանազան տանջանօք ։ Պետրոս վէմն հաւատոյ գալով յազգէ Նեփթաղիմայ 'ի Բեթսայիդայ Գալիլեացւոց որդի Յովնանու եւ եղբայր Անդրէի , յետ քարոզելոյ 'ի Կապադովկիա , 'ի Գաղատիա , 'ի Պոնտոս եւ 'ի Պամփիլիա՝ էանց ապա 'ի Դաղմատիա . նախ հաստատեաց զաթոռ իւր յԱնտիոք , եւ ապա 'ի մեծն Հռոմ զամս քսան եւ հինգ ։ Ուր եւ միաբան ընդ սրբոյն Պօղոսի նշաւակեալ զՍիմոն մոգ՝ յետ մեծամեծ գործոց անդէն կատարեցաւ խաչեալ գլխիվայր հրամանաւ Ներոնի կայսեր յամի տեառն 66 . եւ յամի ծննդեան նորա 69 . որում յաջորդեաց Լինոս աշակերտ իւր (1322) ։ Յայնժամ յարոյց հալածանս Ներոն 'ի վերայ քրիստոնէից եւ զբազումս չարչարեաց ։

687 . Անդրէաս առաքեալ նախկին աշակերտ Քրիստոսի յետ համբարձման տեառն չոքաւ յաշխարհ բարբարոսաց , Սկիւթացւոց եւ մարդակերաց . ուրանօր սերմանեալ զբանն կենաց մեծամեծ սքանչելեօք աշակերտեաց զբազումս մանաւանդ 'ի հիւսիսային ազգաց . ապա շրջեալ 'ի Պոնտոս եւ 'ի Բիւթանիա , կարգեաց եպիսկոպոս 'ի Բիւզանդիոն զՍտաքէոս զաշակերտ իւր , եւ ապա կատարեցաւ յԱքայիա , ելեալ 'ի խաչ հրամանաւ Եգէատայ դատաւորին յամի տեառն 69 . եւ յամի ծն . 72 ։

688 . Յակովբոս առաքեալ մեծն՝ որդի Զեբեդեայ եւ եղբայր Յովհաննու յետ համբարձման շրջեալ ընդ Հրէայս ցրուեալս մինչեւ 'ի Սպանիա 'ի քարոզել զաւետարանն , եւ դարձեալ անդրէն յԵրուսաղէմ քարոզէր ամենայն համարձակութեամբ . զոր կալեալ Ագրիպպաս Հերովդէս սպան սրով 'ի Կեսարիա

յամի տեառն 42 կամ 45. որ եղև առաջին մարտիրոս 'ի մէջ երկոտասանից (633): Իսկ մարմին նորա եհաս սքանչելեօք 'ի Գաղիկիա քաղաք Սպանիոյ, այլ գլուխ նորա պահի յԵրուսաղէմ:

689. Յովհաննէս աստուածաբան աւետարանիչ սիրելի աշակերտ Յիսուսի և մօր նորա. զկնի փոխման Տիրամօրն և կատարման ամենայն առաքելոց եհաս 'ի խոր ծերութիւն. ծառայելով միշտ զբանն կենաց յամենայն եկեղեցիս Ասիացւոց՝ եդեալ զաթոռ իւր յԵփեսոս: Նա ապա առ Տրայիանոսիւ 'ի հասակի իննսուն և երկուց ամաց յամի տեառն 100, կամ 103 յաւուր կիւրակէի ննջեաց 'ի գերեզմանի, զոր ինքն եա փորել. և ոչ գտաւ յետոյ մարմին նորա, մինչև կարծել աշակերտացն թէ յարեաւ:

690. Փիլիպպոս առաքեալ քաղաքակից Պետրոսի, շրջեալ քարոզութեամբ յԱսիա և յաշխարհն Սկիւթացւոց եկն 'ի Հերապօլիս քաղաք, և անդ կատարեցաւ կախեալ գլխիվայր զխաչաւ հրամանաւ Նիկանովրայ բդեշխին առ Տրայիանոսիւ:

691. Բարթողոմէոս առաքեալ շրջեցաւ քարոզութեամբ 'ի բազում տեղիս արևելից՝ սկսեալ 'ի Հայոց և 'ի Մարաց մինչև ցԽորասան և 'ի Հնդիկս. բայց կոչի նա Հայաստանեայց առաքեալ, զի շինեաց զեկեղեցի և կուսաստան 'ի Վասպուրական աշխարհի. և եդ անդէն 'ի Հոգւոց վանս զհրաշանկար պատկեր սուրբ Աստուածածնին (667): Եւ յետ այլոց մեծամեծ գործոց անցեալ ընդ Գողթն գաւառ՝ լուսաւորեաց զքոյր և զհաւատացեալս Սանատրկոյ. վասն այնորիկ մորթազերծ կատարեցաւ հրամանաւ Սանատրկոյ յամի տեառն 50 կամ 53:

692. Թովմաս առաքեալ անուանեալն Եր-

կուրեակ՝ շրջեցաւ քարոզութեամբ յարեւելեան աշխարհս Պարթեւաց, Մարաց, Հնդկաց եւ Սինէացւոց. եւ յետ բազում մեծամեծ պանչելեաց կատարեցաւ գեղարդեամբ 'ի Հնդիկս մօտ 'ի Մատրաս:

693. Մատթէոս առաքեալ եւ աւետարանիչ նախ քան զգնալն իւր 'ի քարոզութիւն գրեաց զաւետարանն 'ի խնդրոյ եկեղեցւոյն Երուսաղեմի, եւ ապա շրջեալ ընդ բազում ազգս հեթանոսաց, մինչեւ եհաս յաշխարհն մարդակերաց. եւ անդ դարձուցեալ զբազումս յանհաւատից՝ ձեռնադրեաց անդ զՊղատոն եպիսկոպոս, եւ ինքն կատարեցաւ վասն անուան Տեառն:

694. Յակոբոս առաքեալ Ալփեան եղբայր Մատթէոսի՝ յետ քարոզելոյ զաւետարանն Հրէից եւ հեթանոսաց՝ սաստիկ գանիւ կատարեցաւ յանհաւան Հրէից յերկրին Ասորւոց:

695. Յուդա Թադէոս առաքեալ՝ կոչեցեալն Ղեբէոս եղբայր Յակոբայ արդարոյ՝ շրջեցաւ քարոզութեամբ 'ի Միջագետս, 'ի Պարսս եւ 'ի Հայս: Եւ կատարեցաւ 'ի սահմանս Աղբակայ բազում տանջանօք եւ սքանչելեօք:

696. Շմաւոն առաքեալ Նախանձայոյզ՝ նոյն համարի ընդ Նաթանայելի, որ շրջեցաւ քարոզութեամբ յԵգիպտոս մինչեւ 'ի Մաւրիտանիա, կրեալ զբազում չարչարանս 'ի խուժադուժ ազգաց. գնաց եւ 'ի Պարսս, եւ ապա կատարեցաւ 'ի Հայաստան 'ի գաւառին Ուշտունեաց:

697. Մատաթիա առաքեալ՝ փոխանակ ընտրեալ 'ի տեղի Յուդայ՝ շրջեցաւ յԵթովպիա, դարձուցանելով զբազումս, եւ ձեռնադրեալ նոցա քահանայս՝ անդէն կատարեցաւ գանակոծ:

698. Պօղոս երեքտասաներորդ առաքեալ՝ շրջեցաւ 'ի բազում տեղիս, եւ աշակերտեալ զբազումս՝ հուսկ յետոյ չոգաւ 'ի Հռոմ. եւ անդ

ընդ սրբոյն Պետրոսի յանդիման Ներոնի վիճեցաւ ընդ Սիմոնի մոգին . որոյ 'ի չարաչար սատակելն աղօթիւք սրբոցն՝ հրաման ետ Ներոն սպանանել զնոսա 'ի միում աւուր յամի տեառն 66 , և յամի ծն. 69 (1321) :

699 . Ղուկաս աւետարանիչ անտիոքացի՝ արուեստիւ բժիշկ և նկարիչ . տեսեալ զգործս փրկչին յԵրուսաղէմ հաւատաց 'ի նա և յարեցաւ յաշակերտսն՝ լինելով գործակից Պօղոսի : Գրեաց զաւետարանն հրամանաւ Պօղոսի , և զԳործս առաքելոց 'ի խնդրոյ Թէոփիլոսի : Սա յետ կրելոյ զբազում հալածանս և առնելոյ զբժշկութիւնս՝ նկարեաց պատկերս սուրբ Աստուածածնին և հանդերձ խաղաղութեամբ ննջեաց :

700 . Մարկոս աւետարանիչ աշակերտ և գրիչ սրբոյն Պետրոսի՝ գնացեալ ընդ նմա 'ի Հռովմ գրեաց զաւետարանն հրամանաւ նորա , և առաքեալ 'ի նմանէ 'ի քարոզութիւն 'ի կողմանս Եգիպտոսի ուսուցանէր զաւետարանն , և ձեռնադրէր քահանայս և պաշտօնեայս . մինչև հաստատեաց զաթոռ իւր յԱղեքսանդրիա : Իսկ յաւուր տօնի հեթանոսաց հասեալ 'ի վերայ նորա քարշեցին և արկին 'ի բանտ . ուրանօր երևեալ նմա փրկչին մխիթարեաց , և 'ի վաղիւ անդր կատարեցաւ տանջանօք յամի տեառն 61 կամ 64 : Իսկ 'ի տեղի նորա նստաւ եպիսկոպոս Աղեքսանդրիոյ Անանիաս աշակերտ իւր ամս քսան և վեց : Մարմին սրբոյն փոխադրեալ 'ի Վենետիկ պահի 'ի մայր եկեղեցին սրբոյն Մարկոսի :

701 . Յակոբոս առաքեալ եղբայր տեառն գլուխ եօթանասուն աշակերտաց , ձեռնադրեցաւ 'ի Պետրոսէ առաջին եպիսկոպոս Երուսաղեմի : Սա մատոյց զառաջին պատարագն զկնի

Քրիստոսի 'ի մերժումն Սիոնի և գրեաց զԹուղԹն կաԹողիկէ. և 'ի վախճանի կատարեցաւ յԵրուսաղէմ՝ 'ի վայր արկեալ յաշտարակէ տաճարին, և հարեալ Թափչաւ ընդ գլուխն: Որում յաջորդեաց Շմաւոն եղբայր իւր, որ 'ի հասակի հարիւր և քսան ամաց նահատակեցաւ յամի 108 կամ 111:

702. Զայնու ժամանակաւ յամի տեառն 67 կամ 70 մեռաւ Սանատրուկ արքայ Հայոց՝ նետահար սպանեալ յորսի 'ի ծառայէն իւրմէ վրիպակաւ, Թագաւորեալ ընդ ամենայն ամս երեսուն և չորս. և յաջորդեաց 'ի տեղի նորա Երուանդ՝ արշակունի 'ի կողմանէ մօրն, որոյ կասկածեալ սպան զորդիսն Սանատրկոյ. յորոց կրսերն ևեԹ ապրեցաւ Արտաշէս, փախուցեալ 'ի Պարս:

703. Յամի 69 կամ 72. Հրեայք տագնապեալ յանհնարին բռնակալուԹենէ Փլորոսի դատաւորին Երուսաղէմի, ապստամբեցին 'ի տէրուԹենէ Հռովմայեցւոց. ընտրեալ իւրեանց առաջնորդ զօրս իշխանս, յորոց մի էր Յովսեպոս պատմագրան: Խրախուսեալ Ներոնի ապստամբուԹեան նոցա, առաքեաց 'ի վերայ նոցա զՎեսպասիանոս քաջ զօրավար, և զորդի նորա զՏիտոս՝ նուաճել զնոսա: Նա զկնի բազում և ծանր պատերազմաց՝ մինչդեռ 'ի պատրաստի էր յարձակել 'ի վերայ Երուսաղէմի՝ գուժկան եհաս Թէ մեռաւ Ներոն, և Թագաւորեաց Գալբա, ապա ՈԹոն, և ապա Վիտելլիոս: Իսկ զօրք նորա խորհուրդ արարեալ կացուցին անդէն զնա ինքն Վեսպասիանոս կայսր Հռովմայ. որ իբրև հաստատեցաւ՝ գնաց յԵգիպտոս, և անտի առաքեաց զօրու ծանու զորդի իւր զՏիտոս 'ի վերայ Երուսաղէմի. որ սաստիկ պաշարմամբ և պատերազմաւ եառ զԵրուսաղէմ քա-

ղաք մեծ յամի տեառն 70 կամ 73, և արար հիմնայատակ : Անդ կորեան միլիոն մի և աւելի Հրէայք 'ի սրոյ և 'ի սովէ . նոյնչափ ևս փախըստեայք հալածեցան յանծանօթ վայրս, լուծեալ զկեժ տիրապետութեան՝ զոր անօրինեցան 'ի փրկիչն (575) : Կործանեաց անկանգնելի զհրաշակերտ տաճարն սողոմոնեան, յորոյ երկրորդ շինութէ անցեալ էին ամք հինգ հարիւր և իննսուն. իսկ յառաջին շինութենէ առ Սողոմոնիւ ամք հազար հարիւր և երեք : Նա կործանմամբ նորին վախճան եղև հնոյ եկեղեցւոյն և օրինացն Հրէից, և սկիզբն կալաւ ծաղկելոյ քրիստոսական եկեղեցւոյս և օրինաց նորոյ ուխտիս բազմապատիկ պաշտելեօք 'ի ձեռն առաքելոցն Քրիստոսի լուսաւորչացն տիեզերաց համօրէն : Որոց «Յերուսաղէմէ մինչև 'ի Լիւրիկիա և 'ի հարաւոյ մինչև ցՌինինկաւրայ և 'ի ժառանգութենէն Սեմայ մինչև 'ի ծագս հիւսիսոյ տանն Յաբեթի հետախոտ ընթացեալ, զամենեսեան աշակերտեցին՝ հոգւով զօրացեալքն և մարմնով տառապեալքն . . զորս անկիւնս աշխարհի մարդ մի և անձն մի և շունչ մի և մարմին մի և տաճար մի՝ Աստուծոյ իւրեանց արարին . . . Վկայքն զինէին և զօրագլուխքն մարզէին, առաքեալքն սնգէին և վարժիչքն քաջալերէին, Ճգնութեամբն ժուժկալ լինէին . . . Նախ բարձրեալն Աստուած և հաճեցաւ. հայեցաւ 'ի նորին Հարէլ 'ի միածնին իւր Որդի և 'ի պատարագ մարմնոյ իւրոյ յեկեղեցի, և հաստատեցաւ 'ի հաս անուշից . եհան զնոսա այնուհետև յանապատէ կռապաշտ իշխանացն հալածանաց և ած 'ի Սաղիմ հոգևոր և մարմնաւոր խաղաղութեան 'ի ձեռն բարեպաշտ թագաւորաց » [1] :

1 Լամբ . տպէն :

# ՍՐԲԱԶԱՆ

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ

### ԳԼՈՒԽ Ա

Հանգամանք Եկեղեցւոյն Քրիստոսի ։

704. ՅՈՒՆԱԿԱՆ ձայնս Եկեղեցի՝ 'ի մեզ թարգմանի կոչումն կամ հրաւէր յերեւելի ինչ համախմբութիւն . և առանձինն նշանակէ ժողովուրդ Աստուծոյ ուխտական , որպէս 'ի հնումն էր տունն Իսրայէլի, որ և այժմ Սինագոգէ կոչի , այսինքն հաւաքումն որպիսի և իցէ իրաց ։ Իսկ նորս եկեղեցի է ժողով հաւատացելոց սփռելոց յընդհանուր աշխարհ և միաբանելոց 'ի միութեան ճշմարիտ հաւատոյ յայտնելոյ յԱստուծոյ, և 'ի հաղորդակցութեան խորհրդոց, ընդ միով աներեւոյթ գլխով Քրիստոսի կառավարեալ յերեւելի հովուապետէ փոխանորդէ նորա ։

705. Արդ ըստ առաքելոյն «Մի է տէր, մի հաւատ , մի մկրտութիւն, մի Աստուած և Հայր

ամենեցուն» [1]. զոր և պարախմբ պաշտել հոգւով և Ճշմարտութեամբ վասն ամենայն բարեաց տուելոց մեզ առ 'ի Նմանէ ։ Որում և կամք եղեն ոչ միայն Նորոգել անպարտական մաքրութեամբ միածնին զեղծեալ բնութիւնս մեր, այլ և Նորոգել և հիմնեցուցանել զեկեղեցի իւր իբրև ոխն հաստատութեան առ 'ի հրահանգել Ճշմարտութեամբ զքրիստոնեայս 'ի պաշտօն փառաց իւրոց, կոչելով զազգս ամենայն 'ի մի հաւատ 'ի ձեռն աշակերտաց իւրոց, յորոց վերայ զառաջինն հիմնեաց զայն և հաստատեաց հալածանօք հանդերձ ։ Որք և յամօթ արարին զերևելի երևելի իմաստունս աշխարհիս այսորիկ, և արկին առ ոտս խաչին և զհզօր թագաւորութիւնս երկրի. յայս արարեալ՝ թէ յայսմ հիաքանչ գործողութեան զանի մասն Աստուծոյ միակ գործադրիչ և համախմբող հաւատացելոց 'ի ծագաց երկրի 'ի մի կոչումն սուրբ ։

706. Յաղագս այսորիկ՝ Տրիդենտեան ժողովն համեմատէ զեկեղեցին Քրիստոսի մեծի բանակի գեղեցիկ իմն կարգադրելոյ ընդ միով ընդհանուր զօրավարաւ [2] ։ Եւ այս զարմանալի ստորակարգութիւն եկեղեցւոյ ընդ միով գլխով, բազմութեան հաւատացելոց մի գոլով սիրտ և անձն. յայս է և 'ի բանից սուրբ գրոց. բառ որում ասէ առաքեալ. «Մի հոգի և մի մարմին 'ի մի յոյս կոչման կոչեցեալք. այլ գլուխ Քրիստոս է, ուստի ամենայն մարմինն յօդեալ և պատշաճեալ կայ ամենայն խաղաղեօք» [3] ։ Ընդ այսմ խօսի և Լամբրոնացին. «Յետ գերելոյ զմիտս հեթանոսաց 'ի հնազանդութիւն

1 Եփես. Դ ։
2 Հատւ. 23. Գլ. Դ ։
3 Եփես. Դ ։

Քրիստոսի առաքելոյն՝ ամենեքեան 'ի Քրիստոս միաբանեսցին , և մարմին և ոսկերք նորա անուանեսցին, և ընդ նա յօդակապութեամբ հոգւոյն խառնեսցին ” [1] :

## ՅՕԴՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

### Դասակարգութիւն յեկեղեցւոջ Քրիստոսի :

707 · Գրէ Լամբրոնացին. «Երանելի հայրդ մեր Դիոնեսիոս գրելով առ Տիմոթէոս՝ զեկեղեցի պատկեր երկնաւորաց կարգաց և դասաւորութեանց ուղղեաց յերկրի ” [2] : Իբրև զի ըստ նմանութեան երկնայնոցն քահանայապետութեանց կարգեաց աստ յեկեղեցւոջ զոմանս առաքեալս, և զոմանս հովիւս և վարդապետս 'ի հաստատութիւն սրբոց , 'ի գործ պաշտաման , 'ի շինուած մարմնոյն Քրիստոսի առ 'ի պահել զհաւատացեալս 'ի մոլորութեանց , և մատակարարել նոցա զսուրբ խորհուրդս , մինչև հասցեն ամենեքեան 'ի մի միաբանութիւն հաւատոց՝ զօրացեալք յառաքինական վարս և 'ի գործս բարութեան, իբրև պաշտօնեայս Աստուծոյ և հազարապետս ըստ առաքելոյն [3] : Բայց կարգեալք միշտ ընդ միով գլխով Քրիստոսիւ , և ընդ միով փոխանորդաւ նորա : Որով և միապետէ եկեղեցին տիեզերակալութեամբ և ծայրագոյն իշխանութեամբ :

708 · Այսպէս որք ապստամբին յեկեղեցւոյ մոլորեալք 'ի հաւատս , արտաքսին 'ի նոյն միաբանութենէ և լինին արտաքոյ եկեղեցւոյ նե-

1 Խորհրդածութիւն. գլ · Ծ :
2 Խորհրդած · գլ · Է : 3 Ա. Կոր · Դ :

րետիկոսք ։ Նոյնպէս և որք ապստամբին յօրի-
նաւոր հովուաց ունողաց զաթոռ առաքելոց,
և կամ յօրինաւոր հովուապետէն փոխանորդէ
Քրիստոսի՝ լինին արտաքոյ եկեղեցւոյ հերձուա-
ծողք ըստ վճռոյ տեառն. «Ապա թէ և եկե-
ղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրև զհեթա-
նոսն և զմաքսաւոր»[1] ։ Յորմէ յայտ է՝ թէ ան-
դամք եկեղեցւոյ են ամենայն ուղղափառ քրիս-
տոնեայք սփռեալք յաշխարհ ամենայն ։ Ուր
արդարք են առողջ անդամք, և մեղաւորք ախ-
տաւոր անդամք. բայց ընդհանրապէս անդամք
եկեղեցւոյ ասին, և են անդամ Քրիստոսի.
որպէս և հաստատեն խորհրդաւոր անուանք ե-
կեղեցւոյ՝ Մարմին Քրիստոսի, Հօտ Քրիստո-
սի, Մայր հաւատացելոց, Արքայութիւն Աս-
տուծոյ, Տուն Աստուծոյ, Լեառն տեառն,
Հարսն Քրիստոսի, այլովքն հանդերձ ։ Ապա
որ ոք ունի ճշմարիտ հաւատս, թէ և սէր ոչ
ունիցի՝ անկեալ գոլով ՚ի մեղս, է ՚ի մարմնոյ
եկեղեցւոյ։ Նոյնպէս անարգեալք որդիք կորըս-
տեան՝ են առ այժմ ՚ի մարմնոյ եկեղեցւոյ ։
Իսկ նախասահմանեալք չև ևս մկրտեալք՝ ասին
անդամք եկեղեցւոյ յապառնիս, այլ ոչ ներ-
գործութեամբ. որովհետև չև են միացեալք
ընդ եկեղեցւոյն. սակայն հերետիկոսք և հեր-
ձեալք, ուրացողք և բանադրեալք՝ են արտա-
քոյ եկեղեցւոյ իբրև հատեալ անդամք ։

709. Իսկ զի հերետիկոսութիւնն է մոլո-
րութիւն ուղղակի ներհակ ճշմարտութեան
ուղղափառ հաւատոյ և բանից սուրբ գրոց ՚ի
նմա, որ լիցէ քրիստոսադաւան և յամառեալ
՚ի մոլար կարծիս՝ յետ ծանուցելոյ զճշմարտու-
թիւնն ։ Իսկ եթէ չիցէ յամառեալ՝ ասի նիւ-

1 Մատթ. ԺԸ ։

թական. որ պարզապէս անկեալ լիցի 'ի մոլար կարծիս. քանզի ըստ ասածին, Ոչ մոլորութիւնն, այլ յամառութիւն մոլորութեան առնէ հերետիկոս: Իսկ հերձուածն է բաժանումն 'ի միութենէ եկեղեցւոյ. որովհետև եկեղեցին է մարմին, և որ ոք անձամբ զանձն հերձանէ 'ի միութենէ եկեղեցական սիրոյ, մանաւանդ եթէ լիցի հերձուածն կամաւոր և դրական, և այն' առաւական և լրացեալ հերձմամբ' քակտելով զյօդ սիրոյ և զներքին միաւորութիւն ընդ եկեղեցւոյ, է արդարև հերձուածող: Ապա թէ ոչ' լինի նիւթական գիտնական արտաքին միութեան եկեղեցւոյ և եղբայրական սիրոյ: Ըստ որոյ ասէ Լամբրոնացին. «Որ համարի զինքն քրիստոնեայ, և 'ի համանուն քրիստոնէէ վասն տարալեզուութեան խորշի, յայտ է թէ կամաւ զինքն 'ի գլխոյն Քրիստոսի որոշեաց և 'ի նորա անդամոցն» [1]:

## ՅՕԴՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

### Նշանք եկեղեցւոյն Քրիստոսի:

710. Եկեղեցին ունի նշանակս, որովք որոշի 'ի սուտ եկեղեցեաց այլափառաց. և են սոքա' Միութիւն, Սրբութիւն, Ընդհանրականութիւն և Առաքելականութիւն. որպէս ասի 'ի հանգանակին. «Հաւատամք ... 'ի մի, սուրբ, կաթողիկէ և առաքելական եկեղեցի»: Եւ 'ի ժամագիրս մեր. «Աղաչեսցուք զամենակալն Աստուած վասն միայնոյ, սուրբ, կաթողիկէ և առաքելական եկեղեցւոյ»:

1 Խորհրդած. դր. ճժ:

711. Ուստի առաջին նշան եկեղեցւոյն Քրիստոսի է միութիւն, որպէս և յայտ առնէ սուրբ գիրն՝ յասելն. «Եղիցին մի հօտ և մի հովիւ: Որպէս մարմին մի է, և անդամս բազումս ունի, և ամենայն բազում անդամք մարմնոյն՝ մի մարմին է, նոյնպէս և Քրիստոս: Այլ դուք մարմին Քրիստոսի էք և անդամք յանդամոց նորա: Մի հաց մի մարմին եմք բազումքս. զի ամենեքին 'ի միոջէ հացէ անտի վայելեմք»[1]: Սակայն միութիւն ընդ հանուր եկեղեցւոյ պահանջէ զմիաբանութիւն մասնաւորաց ընդ նմին, միանգամայն և ընդ գլխաւորս: Նմին իրի հերձուածքն որոշեալ բաժանեալ են՝ ոչ կարեն կացուցանել զմի բոլոր կամ զմի եկեղեցի: Արդ այս միութիւն եկեղեցւոյ առաւել լինի 'ի մի միայն գլխոյն 'ի Քրիստոսէ. քանզի մի է Աստուած, մի հաւատ և մի մկրտութիւն, այսպէս և մի եկեղեցի, զոր նա ինքն յօրինեաց հարսն իւր՝ առ 'ի ցուցանել թէ ոչ կարէ լինել երկու, այլ մի միայն պահպանող հաւատութեանց զնոյն հաւատ, զնոյն գիրս, աւանդութիւնս և զնոյն խորհուրդս: Որպէս և 'ի հնումն մի էր ժողովարանն Հրէից. թէպէտ և ոչ էր մի մարմին ընդհանուր, և չէր հարկաւոր 'ի փրկութիւն լինել 'ի հաղորդութեան նորա, ըստ որում յայտ է 'ի բանէ անուան վասն Նինուէացւոց, որք փրկեցան միայն ճշմարիտ ապաշխարութեամբ առանց միանալոյ ընդ եկեղեցւոյն Հրէից[2]: Այսպէս որ ոք արտաքոյ գտանի 'ի միութենէ եկեղեցւոյ՝ գնայ 'ի կորուստ, որպէս կորեան 'ի ջրհեղեղէ մնացեալքն արտաքոյ տապանին, ըստ որում հաստատէ առաքեալն

1 Յովհ. Ժ: Ա. Կոր. Ժ. ԺԲ:
2 Մատթ. ԺԲ:

Պետրոս [1] : Ըստ այսմ և անլոյզք և անշնա_գանգք եկեղեցւոյ 'ի նոյն կորուստ մատնին . քանզի 'ի նմա են Ճշմարիտ հաւատք և խորհուրդք . առանց որոց անշնար է հաճոյ լինել Աստուծոյ ըստ առաքելոյն [2] :

712 . Երկրորդ նշան եկեղեցւոյն Քրիստոսի է սրբութիւն . «Այլ դուք ազգ էք ընտիր , թագաւորութիւն , քահանայութիւն , ազգ սուրբ . . . Քրիստոս սիրեաց զեկեղեցի և մատնեաց զանձն իւր վասն նորա , զի զնա սրբեսցէ սրբութեամբ աւազանին բանիւ . զի կացուսցէ ինքն իւր յանդիման փառաւոր զեկեղեցի , զի մի՛ ունիցի ինչ արատ կամ աղտեղութիւն կամ այլ ինչ յայնպիսեաց , այլ զի իցէ սուրբ և անարատ » [3] : Զնոյն հաստատէ և Շարականոցն . «Ուրախ լեր , սուրբ եկեղեցի , կոյս սուրբ և հարսն երկնաւոր խորհրդոյն : Խորան սրբութեան . . . պայծառ և սիւն լուսոյ լցեալ աստուածային շնորհիւ : Հարանարան արանց արդարոց : Եկեղեցիք արդարոց և ժողովք ուղղափառաց » . և այլն :

713 . Այլ քանզի ըստ բանի տեառն եկեղեցին նման է ագարակի , յորում սերմանէ Թշնամին զորոմն 'ի մէջ ցորենոյ Թագաւորութեանն Աստուծոյ , և ըստ Պօղոսի՝ նման գոլով մեծի տան պարունակէ յինքեան զանօթս խեցեղէնս և ոսկեղէնս , են որք 'ի պատուի , և են որք յանարգութեան [4] , ապա զհետ գոյ՝ թէ գոն յեկեղեցւոջ անսուրբ և անարգ անդամք խառն ընդ պատուաւոր և սուրբ անդամոց : Զայս հաստատէ և Յովհաննէս 'ի տեսիլն Յայտնութեան գրելով առ զանազան եկեղե_

1 Տս . Պետ . Դ :
2 Եբր . ԺԱ :
3 Տս . Պետ . Բ : Եփես . Ե :
4 Մատթ . ԺԳ : Տս . Տիմ . Բ :

ցիս մամանաւորս՝ ցուցանելով. թէ են ոմանք ապականեալ անդամք։ Նոյնօրինակ հաստատէ և ժողովն Տրիդենտեան. թէ հաւատացեալն մեղանչելով՝ յիւրաքանչիւր կորուսանէ զշնորհս, այլ գոլով յուղղափառ հաւատս՝ ոչ դադարի անա 'ի լինելոյ անդամ եկեղեցւոյ[1]։ Ապա թէ ոչ՝ զիա՞րդ մարթ էր արդարանալ մեղաւորին և գտանել 'ի շնորհս 'ի ձեռն սուրբ խորհրդոց, եթէ չէր յեկեղեցւոջ։ Այլ անսրբութիւն գործոց մամանաւորաց ոչ կարէ անսուրբ առնել զեկեղեցին. որոյ գլուխ Քրիստոս է սուրբն սրբոց և միշտ միաւորէ զանդամս իւր. ըստ այնմ որ 'ի Շարակնոցի. «Որով նստար ընդ աջմէ Հօր (Քրիստոս) գլուխ եկեղեցւոյ հրաւիրելով զանդամս քո 'ի նոյն միութիւն»։ Եւս և սրբարար եկեղեցւոյն է Հոգին սուրբ 'ի ձեռն սուրբ խորհրդոց՝ հաւատոյ և վարդապետութեան վարուց յառաջ անդամս և 'ի սուրբս, որք անպակաս են յեկեղեցւոջ։

714. Երրորդ նշան եկեղեցւոյն Քրիստոսի է ընդհանրականութիւն. զի է կաթողիկէ և ըստ յունին καθολική, այն է տիեզերական. որպէս հաստատեն և բանք սուրբ գրոց. «Երթայք յաշխարհ ամենայն, և քարոզեցէք զաւետարանն ամենայն արարածոց։ Աշակերտեցէք զամենայն հեթանոսս։ Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա, և մինչև 'ի ծագս աշխարհի են խօսք նոցա։ Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի։ Ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս։ Որոյ թագաւորութեան ոչ եղիցի վախճան»[2]։

715. Վասն այսորիկ յամենայն ժամանակի

1 Հատուած. 6. գլուխ. Է։ ԻԷ։ Մատ. ԺԷ։ Հանգանակ։
2 Մարկ. ԺԶ։ Մատթ.

իրրև երևեցաւ հերետիկոսութիւն ինչ․ իշխանք եկեղեցւոյ հովիւք և վարդապետք իւրաքանչիւր ածառոցփոյթ կալան ջնջել զնա, և զհօտ իւրեանց անարատ պահել անախ ։ Եւ 'ի լինել հարկի ժողովեալ նոցա յարևելից և յարևմտից գումարեցան առաջի տանել զտիեզերական եկեղեցի ։ Որոյ վարդապետութիւն տարածեալ է ընդ տիեզերս համօրէն բառ ամենայն մասանց ճշմարիտ հաւատոյ՝ հանդերձ հոգևոր իշխանութեամբ․ և նման նմին չէք տեսանել յաշխարհական պետութիւնս ։ Արդ ամենայն հարազատ անդամ եկեղեցւոյ է կաթողիկեան և ուղղափառ ։ Նմին իրի առ Յոյնս և առ Լատինս նոյնանշան վարին բառքս Գաթօլիգօս կամ ընդհանրական, և Օրթօտօքսօս, կամ ուղղափառ ։ Ուստի ասէ Լամբրոնացի «Մի և եկեղեցի նորա ընդ ծագս տիեզերաց առ բազմութիւնս ազգաց, որք յայս խորհուրդ ձեռնանան» [1] ։

716․ Այլ ինչ է եթէ ընդհանրական առաջնորդ ոք, կամ եպիսկոպոսապետ ազգի միոյ կոչեցի Կաթողիկոս՝ առ որոշելոյ յայլոց մանաւոր առաջնորդաց եղելոց ընդ նովաւ․ որպէս կոչի կաթողիկոսն Հայոց․ Վրաց․ Աղուանից ։ Նոյնպէս և Յոյնք երբեմն 'ի պատիւ արևելեան կայսրութեան իւրեանց կոչեցին զպատրիարքն Կոստանդինուպոլսոյ Իգումէնիգօս, կամ տիեզերական ։ Սակայն նկատմամբ ընդհանուր եկեղեցւոյ միայն Քրիստոս է բացարձակ կաթողիկոս և իգումենիգոս, և յետ նորա տեղակալ իւր յաջորդն Պետրոսի առաքելապետի․ առ որ խօսի Լամբրոնացին․ «Երկիրորդ յետ Քրիստոսի գլուխ ուսաք, ով Պետրոս․ գլուխ յետ գլխոյն գտանար աշակերտելոցս․ վէմ

1 Խորհրդած․ պր․ Ժ ։

հաստատութեան բնաւիցս զքեզ էարկ 'ի հիմն տաճարին · զգաւինս և զոչխարսն 'ի ձեռս քո աւանդեաց արածել յետ անկցս զդրաւական սիրոյդ» [1] : Յաղագս այսորիկ առաջին ժողովն Կոստանդինուպօլսոյ վճռեաց՝ թէ «Կոստանդինուպօլսոյ եպիսկոպոսն ունիցի զպատիւ նախագահութեան զկնի եպիսկոպոսին Հռովմայ» :

717 · Չորրորդ նշան եկեղեցւոյն Քրիստոսի է առաքելականութիւն. ըստ այնմ. «Որպէս առաքեաց զիս Հայր, և ես առաքեմ զձեզ [2] : Ոչ էք օտարք և պանդուխտք, այլ քաղաքակիցք սրբոց և ընտանիք Աստուծոյ՝ շինեալք 'ի վերայ հիման առաքելոց և մարգարէից. որոյ գլուխ անկեանն Յիսուս Քրիստոս» : Զնոյն հաստատեն և ամենայն երեւելի վարդապետք եկեղեցւոյ. Իրանեոս 3, Տերտուղիանոս, Եպիփան, Հերոնիմոս. որպէս և Օգոստինոս յասելն, «կալցէ զիս յեկեղեցւոջ 'ի նոյն խակ աթոռոյն Պետրոսի առաքելոյ, որում յանձն արար Տէր արածել զխաշինս մինչև ցներկայ քահանայապետս» 4 :

718 · Արդ յայտ է թէ առաքելականութիւն եկեղեցւոյ նախ հաստատեալ կայ 'ի հիմն առաջին 'ի Քրիստոս՝ առաքեալ 'ի Հօրէ և քահանայապետ խոստովանութեան մերոյ. իսկ երկրորդական հիմունք են առաքեալք, որոց գլուխ է Պետրոս վէմն հաւատոյ : Նմին իրի սուրբ վարդապետք ոչ միայն զերկոտասանն միանգամայն կոչեն «Առաքեալք Աստուծոյ սիւնք հաւատոյ կաթողիկէ եկեղեցւոյ : Երեւցար յարուցեալ եկեղեցւոյ քո հիմունքն» ,

1 Ճառ :
2 Մտթ . ԻԵ :
3 Գիրք Գ . գլ . Գ :
4 Ընդդէմ թղ . հիմն . գլ . Դ :

այլ և 'ի մասնաւորի ասէն զՊետրոսէ միայն , «Գլուխ սուրբ հաւատոյ, հիմն եկեղեցւոյ։ Վէմ անվանելի 'ի դրանց դժոխոց » [1] ։ Զնոյն և Սեւերիանոս ասէ . «Վէմ է և եկեղեցի , քանզի զհաստատուն վէմն ունի զՔրիստոս , և միւս վէմ զՊետրոս , որ դաւանութեամբն առ զա-նուն » [2] ։ Երկրորդ՝ հաստատեալ կայ յանընդհատ յաջորդութեան վարդապետութեան և իշխանութեան ըստ բանի տեառն . «Ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի ։ Առաքեմ զաւետիս Հօր իմոյ 'ի ձեզ . . . ընդ ձեզ բնակեսցի 'ի յաւիտեան ։ Դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն » 3 ։

719. Յորմէ զհետ գայ թէ առաջնորդք ճշմարիտ եկեղեցւոյ ոչ միայն պարտին ունել զհարազատ վարդապետութիւն առաքելոց , այլ և զյաջորդութիւն աթոռոյ նոցա անընդհատ իջելոյ 'ի սկզբանէ և այսր՝ անվրէպ դասակարգութեամբ ձեռնադրողաց և ձեռնադրելոց ։ Արդ եթէ պակասեսցի կամ յաջորդութիւն օրինաւոր ձեռնադրութեան և հովուր իշխանութեան , և կամ յաջորդութիւն վարդապետութեան առաքելոց , ոչ ևս լինի առաքելական ։ Վկայէ ասացելոցս Նարեկացին խօսելով առ եկեղեցի . «Ուրախ լեր . . . որ 'ի սկզբան անդ գծագրեցար , և առ 'ի նորումս հանդերձեցար . . . եկեալ ինքնին անդրանիկն Հօր . . . արկեալ հիմունս պաշտելիս զառաքելոցն դամարութիւն » 4 ։

1 Ճառ. է ։
2 Ճառ Ե ։
3 Ղուկ. ԻԴ ։ Մատթ. ԺԶ ։
4 Գանձ եկեղեցւոյ ։

## ՅՕԴՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

### Գ-ոյ ճշմարիտ եկեղեցւոյ :

720. Յայտ է յասացելոցս՝ թէ հարկ է լինել և իրօք գոյ 'ի վերայ երկրի ճշմարիտ եկեղեցի յայտնապէս ունող զչորեսին նշանան միանգամայն : Այլ թէ ո՞չ ընդ բառնիւ եկեղեցւոյն Քրիստոսի, բառնի ընդ նմին և հաւատք քրիստոնէից. քանզի եկեղեցին միայն է պահպանող հաւատոյ, օրինաց, խորհրդոց և սուրբ գրոց, մայր գոլով հաւատացելոց և սիւն հաստատութեան : Սակայն գոն եւ միաբանութիւնք կամ ժողովք քրիստոնէից բաժանեալք, որք կոչուցանեն զառանձին կամ մասնաւոր եկեղեցիս, այլ ոչ ընդհանուր. իբր զի ընդհանուր եկեղեցին է մի, սուրբ, կաթողիկէ և առաքելական (710) : Արդ այն եկեղեցի որ յինքն փակէ զամենայն զյայտնի և զանյայտ ուղղափառս 'ի տիեզերս՝ ընդհանուր է. զոր և հաստատէ Լամբրոնացին յասելն. « Մի եկեղեցի Քրիստոսի ըստ իւրաքանչիւր ազգաց քրիստոնէից բազմութեան. և մի անդամք եմք ըստ իւրաքանչիւր պատուոյ՝ յարմարեալք առ միմեանս և պատկանեալ 'ի հասարակաց գլուխն Քրիստոս » [1] :

721. Արդ չորեքին նշանքս այսորիկ փայլին 'ի հռովմէական եկեղեցւոջ. ըստ որում է մայր ամենայն ուղղափառ եկեղեցեաց, կապող և արձակող յընդհանուր տիեզերս յամե-

[1] Խորհրդած. ՃՀ. ԼԷ :

Նոյն ազգս և՛ի լեզուս իբրև միահեծան հրամանահան ծագաց 'ի ծագս աշխարհի հոգևոր իշխանութբ և երկնաւոր բանալեօք. և այն 'ի դառն հալածանս անգամ, որպէս տեսաք: Քանզի հոգևոր իշխանութիւն առաքելապետին տարածեալ գոլով 'ի յաջորդս, միութիւն գլխոյն է ծայրագոյն և եզական. որպէս և միութիւն հաւատոյ ըստ ամենայն մասանց այնպէս միացեալ յամենեսին, մինչև երևել իբրև մի հոգի հոգևորիչ ամենայն անդամոց: Նորին աղագաւ զամենայն վճիռս նորա միօրինակ ընկալեալ ամենայն ազգաց հնազանդելոց իւրոց յամենայն վայրս՝ պահպանեն ամենայն զգուշութեամբ մինչև ցնշանախեց մի: Ըստ որոյ և առաքելութիւն նորա նախապատիւ է, զի աթոռ է առաքելապետական. զոր ուղղափառ յաջորդութեամբ պահէ անվրէպ, և անխառն վարդապետութեամբ հանդիսանայ: Յորում և սրբութիւն հաւատոյ պայծառ փայլէ հանդերձ առաքինական վարուք յանհամար անձինս ծաղկեալս սրբութեամբ և նշանագործութեամբ զոյգ ընդ իմաստութեան: Զայս ամենայն հաստատեն և բանք տաթևացւոյն իսկ Գրիգորի յասելն. «Տէրն մեր զչորս յատկութիւնս ունի. նախ՝ զի է Քրիստոս սկիզբն և հիմն եկեղեցւոյ... զայս յատկութիւնս ետ առաքելոյն Պետրոսի յասելն՝ դու ես վէմ. . Երկրորդ յատկութիւն, որ Քրիստոս միայն է գլուխ ամենայն հաւատացելոց. և զայս գործս ետ Պետրոսի յասելն՝ դու կոչեսցիս կեփաս, որ է գլուխ. զի նա է գլուխ առաքելոց: Երրորդ յատկութիւն, զի Քրիստոս է հովիւ եկեղեցւոյ. և զայս շնորհեաց առաքելոյն Պետրոսի յասելն՝ արածեա զոչխարս իմ և զգառինս: Չորրորդ յատկութիւն, զի Քրիստոս է դատաւոր եկեղեցւոյ.

և զայս ասաց Պետրոսի. զոր կապեսցես յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս ” [1] ։

722. Որով յայտ է թէ ճշմարիտ եկեղեցին յանձնեալ Պետրոսի 'ի Քրիստոսէ ըստ որում մի, սուրբ, կաթողիկէ և առաքելական, սա 'նա և Հռովմէական՝ առանց արտաքսելոյ զայլ եկեղեցիս ուղղափառաց. սա և Մայր ամենայն եկեղեցեաց, ըստ որում միաբան գտանին ընդ նմա յայտնապէս կամ լռելեայն. զի ճըշմարտութիւն ոչ հակառակի ճշմարտութեան։ Նմին իրի Ժողովն Տրիդենտեան անուանեաց զնա «Մայր և վարդապետ ամենայն եկեղեցեաց ” [2] ։

Զնոյն հաստատէ և Ժողովն Փլորենտեան միաբանութեամբ արևելեան և արևմտեան եկեղեցւոյ. «Սուրբ և առաքելական աթոռն և Հռովմայ քահանայապետն յընդհանուր աշխարհս ունի զնախագահութիւն. և նա ինքն Հռովմայ քահանայապետն է յաջորդ երանելոյն Պետրոսի առաքելոցն պետի, և ճշմարիտ փոխանորդ Քրիստոսի»։ Եւ 'ի Ճառընտիրս մեր գրի. «Յուլիոս եպիսկոպոսապետն Հռովմայ գոյ 'ի Ժողովն Սարդիկեայ. զի ոչ էր արժան առանց նորա կամացն Ժողով լինել ըստ սահմանի ուղղափառաց»։ Եւ Զաքարիա կաթողիկոս ասէ. «Յառաջագոյն քան զծնանելն 'ի Բեթղեհէմ տայ զերկրաւոր պետութիւնն 'ի Հռովմայեցւոց, որ չորրորդ գազանն անուանեալ 'ի Դանիէլէ. քանզի 'ի Հռովմ հանդերձեալ էր կարգել զաթոռն Պետրոսի և Պօղոսի և գլխաւորութիւն սուրբ եկեղեցւոյ» [3]։ Իսկ 'ի Թուղթն գաշանց ասի. «Երկնաւոր բանալեօք ունիմ իշ-

1 Ի հաւ. ամբող. գլ. ձհէ. երես 682 ։
2 Հատուած. Դ. կանոն Է։ 3 Ճառ ԺՆ ։

իշխանութիւն յարեւմտից մինչեւ յարեւելս 'ի վերայ ամենայն ազգաց քրիստոսադաւանից, կապող եւ արձակող 'ի յերկինս եւ 'ի յերկրի, եւ հրամանահան հզօր յընդհանուր եկեղեցիս Քրիստոսի . . . եւ ինքնագլուխ պատուապապս Հռովմայ Սեղբեստրոս»: Հուսկ յետոյ ժողովն Մխիթարայ կաթողիկոսի հաստատէ այսպէս. «Եկեղեցին Հռովմայ գլուխ է այլ ամենայն եկեղեցեաց. որոյ գլուխ է պապն. նմին իբր կաթողիկոս Հայոց եւ այլ պատրիարգունք են 'ի ներքոյ իշխանութեան նորա . . . Յառաջին եւ յերկրորդ ժողովն Նիկիոյ հարքն ետուն վճիռ, թէ եկեղեցին Հռովմայ գլուխ է այլոց եկեղեցեաց. նմանապէս եւ քահանայապետն Հռովմայ գերագոյն է քան զայլ քահանայապետս» (989):

## ՅՕԴՈՒԱԾ ՉՈՐՐՈՐԴ

### Յատկութիւնք եկեղեցւոյ:

723. Եկեղեցին Քրիստոսի բաց 'ի նշանաց ունի եւ զայսոսիկ յատկութիւնս. որք են՝ Երեւելութիւն, Անպակասելութիւն եւ Անսխալութիւն: Քանզի ճշմարիտ եկեղեցին ունելով զերեւելի եւ զարտաքին իրս՝ ոչ միայն երեւելի է եւ անպակաս մինչեւ 'ի կատարած աշխարհի, այլ եւ անսխալ կանոն հաւատոյ ըստ սուրբ գրոց. ունի ներքին ձիրս անտեսանելիս, որպիսի են շնորհք, սէր, ներքին սրբութիւն, խորհուրդք հաւատոյ, զորս աներեւոյթ գլուխ նորա հանէ 'ի մարմին իւր յեկեղեցի:

724. Արդ երեւելի է եկեղեցին եւ յայտնի ամենեցուն, զի բաղկանայ 'ի հաւատացելոց,

եթէ սխալելոց և եթէ հաւատքելոց, որք են ե-
րևելի․ որպէս և ամենայն պաշտամունք և կարգք եկեղեցւոյ, նա և արտաքին դաւանութիւնք և վճիռք զգալիք են․ այս հարկաւ և ինքն է երևելի: Որում ապացոյցք բազում են 'ի սուրբ գիրս․ զի կոչի տաճար, հօտ, քաղաք, ագարակ, լեառն և այլ ևս․ ըստ այնմ․ «Եղիցի յաւուրս յետինս յայտնի լեառն տեառն, և տուն Աստուծոյ 'ի վերայ գլխոց լերանց, և բարձրասցի 'ի վերայ բլրոց, և եկեսցեն 'ի նմա ամենայն հեթանոսք» [1]: Զորմէ այսպէս խօսի սուրբն Օգոստինոս․ «Զի՞նչ այլ ունիմք ասել՝ եթէ ոչ զաչացուս, որք զայնպիսի լեառն մեծ չտեսանիցեն, և ընդդէմ ճրագի եդելոյ 'ի վերայ աշտանակի զաչս կափուցեն» [2]: Եւ Զաքարիա կաթողիկոս․ «Որպէս շուշան երևելի և վայելուչ է 'ի մէջ զանազան խոտոց, այսպէս սուրբ եկեղեցի Քրիստոսի հրաշափառ փայլելով ծագեսցէ 'ի մէջ ազգաց» [3]: Նորին աղագաւ և Պօղոս ողջունէր զեկեղեցին՝ ըստ որում երևելի ժողով հաւատացելոց․ որպէս և ժողով առաքելոց զնոյն ցուցանէր յասելն․ «Հաճոյ թուեցաւ առաքելոցն և երիցանցն և ամենայն եկեղեցւոյն» [4]: Զերևելիութիւն եկեղեցւոյ խոստովանի և Կալվին աղանդապետ՝ բանդատեալ 'ի ճշմարտութենէ․ «Եկեղեցին, ասէ, պարտի լինել երևելի․ արտաքոյ որոյ չիք փրկութիւն․ և եթէ Բաղկանոյ յարգարոյ և 'ի մէջաւորոյ․ և ոչ իսկ կարէ լինել առանց հովուաց և վարդապետաց» [5]:

725․ Ըստ նախին օրինակի հաստատեն բանք

1 Եսայ․ Բ:
2 Ճառ Բ:
3 Ճառ յեկեղ․:
4 Գործ․ ԺԵ:
5 Ամփ․ գիրք 4․ գլ․ Ա․ 4:

տեւան, թէ ճշմարիտ եկեղեցին ոչ միայն է երեւելի, այլ և անպակասելի մինչև 'ի կատարած աշխարհի: Քանզի որպէս միշտ գոյ աներեւոյթ գլուխն Քրիստոս, գոյ և մարմին նորա երեւելի հանդերձ զանազան ձրիւք: Եւ որպէս մնան միշտ հաւատացեալք, նոյնպէս հաւատք և սէր. ըստ այնմ. «Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի» [1]: Ըստ որոյ հեգնէ Օգոստինոս զԴոնատեանս յասելն. «Այն եկեղեցի՝ որ ամենայն ազգաց է՝ ոչ եւս է, կորեաւ: Զայդ ասեն ոյք 'ի նմա չեն: Ո՜վ ապարասան ձայնից. չէ՞ք նա, զի դու չես 'ի նմա. տես, գուցէ վասն այդորիկ իսկ դու չգուցես, զի նա լինի՝ թէ և դու չլինիցիս» [2]: Ասէ Կալվին. «Եկեղեցին Յիսուսի Քրիստոսի է հարսն իւր. և պարտի լինել միշտ, զի չէք ժամանակ՝ յորում մարդիկ ոչ կարիցեն փրկիլ» [3]:

726. Հետևի յասացելոցս՝ թէ ճշմարիտ եկեղեցւոյն պարտ է լինել նա և անսխալ և կենդանի կանոն հաւատոյ՝ անմոլար 'ի հաւատալն և յուսուցանելն. ըստ այնմ. «Դու ես վէմ, և 'ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ. և դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն» [4]: «Զի գիտասցես թէ որպէս պարտ իցէ քեզ 'ի տան Աստուծոյ շրջել, որ է եկեղեցի Աստուծոյ կենդանւոյ, սիւն և հաստատութիւն ճշմարտութեան» [5]: «Ես աղաչեցից զՀայր և այլ մխիթարիչ տացէ ձեզ. զի ընդ ձեզ բնակեսցէ 'ի յաւիտեան . . . Նա ուսուսցէ ձեզ զամենայն և յիշեցուսցէ զամենայն որ ինչ ա-

1 Մատթ. ԻԸ: Գլ. Ա:
2 Ի սաղմ. ՃԱ: 4 Մատթ. ԺԶ:
3 Սահմ. Գիրք Դ. 5 Ա. Տիմ. Գ:

տացի ձեզ. առաջնորդեսցէ ձեզ ամենայն ճշմարտութեամբ: Ուսուցէք նոցա պահել զամենայն որ ինչ պատուիրեցի ձեզ »[1]: Ըստ որոյ խօսի և Նարեկացին. «Առաքեալք ոչ հասին 'ի կատարած աշխարհի. այլ ուրեմն յայտ է թէ մինչև ցայժմ ընդ ամենայն հաւատացելոց է (Քրիստոս) 'ի տեսանել զծաղիկս (հաւատոյ) և զուարճանալ ընդ բերս պտղոյն »[2]:

727. Արդ եկեղեցին վասն անսխալութեան 'ի հաւատոյս կանոն և առաջնորդ է հաւատացելոց 'ի փրկութիւն: Եւ հարկ իսկ է ճշմարիտ եկեղեցւոյն լինել անսխալ. որպէս զի մարդն սխալական կացեալ անվրէպ 'ի ճշմարիտ հաւատս եկեղեցւոյ, հասցէ փրկութեան. այլ թէ ոչ՝ անկարելի լինէր ումեք փրկիլ: Եւ նորին աղագաւ յամենայն ժամանակի վկայեալն 'ի վարդապետութենէ եկեղեցւոյ մոլորեցաւ անկեալ ընդ նզովիւք. «Ասասջիր յեկեղեցւոյ. այլ թէ եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրև զհեթանոսն 3:

## ԳԼՈՒԽ Բ

### Վարչութիւն եկեղեցւոյն Քրիստոսի:

728. Իբրև հիմն դնէր Քրիստոս իշխանութեան եկեղեցւոյ. նախաձայնեաց առ աշակերտսն իւր և ասէ. Յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք բազմադիմի հալածանօք յերեսաց անօրինաց. սակայն քաջալերեցարուք, զի ես յաղթեցի աշխարհի: Արդ ըստ որոյ վարդապետաց եկե-

1 Յովհ. ԺԴ: Մատթ. ԻԸ:
2 Մեկն. Երգոց. Գլ. Է:
3 Մատթ. ԺԸ:

դեցին ծնաւ 'ի խաչին և 'ի հալածանս․ որոյ ընդդէմ յարոյց սատանայ զառաջինն զկատաղի Հրէայս, և զանագորոյն ազգս և զԹագաւորս հեԹանոսաց, որք ոչ միայն առ անխախտ պահելոյ զգենս իւրեանց, այլ և բազում անգամ առ քաղաքական նկատմանց մաքառեալ ընդդէմ Ճշմարտութեան հնարեցան ազգս ազգս տանջանաց 'ի տապալել զեկեղեցի Քրիստոսի։ Սակայն նա երԹալով երԹայր և զօրանայր արեամբ որոց նահատակաց․ ըստ այնմ․ « Զայս տուն հաստատ զոր 'ի վերայ Քրիստոսի շինեցին նոքա, և Քրիստոս 'ի վերայ իւրեանց, 'ի վերայ այդր, ասէ, վիմի շինեցից զեկեղեցի իմ, շրջեցուցին հարքն մեր բազում ժամանակս յանապատ կռապաշտութեան հալածանաց փառօք և պատուով։ Եւ տես 'ի ներքոյ այսր հաստատ յիմանալիս տան ... վկայքն պատարագեցան, մարտիրոսքն նահատակեցան, քահանայապետքն սուրբք զառաքինուԹիւնս նոցա Աստուծոյ նուիրեցին »[1]։

## ՅՕԴՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

### Հալածմունք յառաջին դարու։

729․ Զկնի համբարձման Քրիստոսի յարուցին Հրեայք հալածումն դժնդակ 'ի վերայ եկեղեցւոյն յերուսաղէմ՝ խնդրելով զհաւատացեալս 'ի մահ։ Որով բաց յառաքելոց բազումք յաշակերտելոց՝ ի քարկոծման սրբոյն Ստեփաննոսի ցրուեցան 'ի գեօղս Հրէաստանի և 'ի Սամարիա (609)։ Այս հալածումն անեալ յերուսաղէմ առ ժամանակ մի ըստ վկայութեան Պօղոսի․ « Զբա-

1 Լամբ․ ատենաբ։

զումս, ասէ, 'ի սրբոց ես բանտարգել առնէի 'ի քահանայապետիցն առեալ իշխանութիւն, եւ զսպանելոցն նոցա բերէի զհամուր »[1]: Եւ 'ի յայտնութեան սրբոյն Գամաղիէլի առ Լու-կիանոս քահանայ ասէ նա ինքն. «Զնիկոդեմոս զի աշակերտ էր Քրիստոսի՝ հանեալ Հրեից յիշ-խանութենէ, եւ նզովեալ եւ յաքսորս վարեալ՝ ես յիմում ագարակի ընկալեալ դարմանեցի եւ զգեցուցի մինչեւ 'ի վախճան կենաց նորա, ա-պա առընթեր Ստեփանոսի պատուով թաղե-ցի զնա »:

730. Իսկ Բասխոս 'ի ստորագրել զնշանս Ճըշ-մարիտ եկեղեցւոյ 'ի վերայ բերէ, թէ 'ի միջո-ցի առաջին երից դարուց միայն 'ի Հռովմ քա-ղաք նահատակեցան երեք հարիւր հազարք 'ի հաւատացելոց, յորս էին երեսուն եւ երկու քահանայապետք։ Եւ ընդ ամենայն ուրեք յայլ-այլ տեղիս նահատակեցան՝ հինգ միլիոն անձինք հաշուին. ամենեքեան վասն 'ի Քրիստոս հաւա-տոց արբին զըբաժակ մահու 'ի հալածանս եկե-ղեցւոյ։

731. Ի վախճան երրորդի դարուն անգութն Դիոկղետիանոս այնպիսի դառն հալածանս յա-րոյց ընդդէմ եկեղեցւոյ, մինչեւ հեթանոսաց իսկ զահի հարեալ ասէին՝ թէ չիջա քրիստո-նէութիւն։ Զի ասի թէ յիւրում լայնածաւալ տէրութեան ետ նահատակել 'ի ձեռն հրովար-տակաց իւրոց իբր երկու միլիոն հաւատացելոց։ Այլ նոցա թիւ երթալով երթայր եւ աճէր զօրացեալք 'ի հաւատս, թէ եւ ոչ բռնաւո-րացն անգութ դուռն գործէր ծախել զնոսա դառն հալածանօք. մինչեւ ասել նոցին իսկ հե-թանոսաց, թէ քրիստոնեայք հիդրա են եօթ-

1 Գործ. ԻԶ։

նագլխի. եթէ զմին հատցես, եօթն 'ի տեղի միոյն բուսանին:

732. Սակայն 'ի սկիզբն չորրորդ դարուն յամի տեառն 306 կամ 307 իբրև մեծն Կոստանդիանոս կալաւ զաթոռ հռովմէական կայսերութեան ամաց երեսնից, ոչ յեա բազմաց զերծոյց զեկեղեցին 'ի գժնդակ հալածանաց անտի: Զի գործեալ նորա 'ի կռոց պաշտելութենէ 'ի քրիստոնական հաւատս, համարձակ եղև արքութեան կրօնիցս անարգել և անխափան ծաւալել ընդ ամենայն աշխարհ, և պայծառանալ աստուածային պաշտամամբ:

## ՅՕԴՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

### Աղանդապետք կամ հերետիկոսք, և մոլորութիւնք նոցա որ երևեցան յեկեղեցւոջ:

733. Եկեղեցի Քրիստոսի թէպէտ և մեծապէս վրդովեցաւ 'ի դառն հալածչացն հեթանոսաց, այրիացեալ յանթիւ որդւոց իւրոց, այլ ինդայր նա՝ զի որդիս Աստուծոյ ածնէր զնոսա՝ զերծուցեալ յաշխարհէ և գանձեալ յերկինս: Սակայն վշտացաւ նա և ազգաց անմխիթար յաղագս որ ինչ միանգամ 'ի չարաղանդ հերձուածողացն անցք անցին ընդ նա: Որոց օգտեալ 'ի նմանէ և թոյն առեալ 'ի նենգաւոր բանսարկուէն՝ 'ի մահ վիրաւորեցին զորդւոց եկեղեցւոյ ոչ զմարմինս՝ իբրև զհեթանոսս, այլ զհոգիս նոցա չարաչար հարուածովք: Այս է զոր ասէ Սերբերինոս. « Զոր օրինակ քան զամենայն պատերազմ՝ ընտանի պատերազմն չար է, նոյնպէս քան զամենայն մոլորութիւնս՝ հերձուածողացն մոլորութիւն ... զհրեայն չգրեմ ինչ, քանզի յայտնի իսկ թշնամի է. հերձուա-

ծոցն՝ որ պատճառ ի գտանել զՔրիստոս, եւ ուրանայ 'ի Քրիստոսէ. որ բարքի քարոզել զհոգին սուրբ, եւ հայհոյէ զսուրբ Հոգին, այն պատերազմ տագնապէ զնա ի բրև զընտանի պատերազմ» [1] : Ըստ որում գոչէ և Լամբրոնացին. « Ո՛վ աղէտից. 'ի տանէն զչարն բուսուցանէր (սատանայ), եւ զվերակացուս խորանին քակոիչս կանգնէր. զմատակարարն 'ի տապալելն կցորդ իւր ընդունէր, եւ զհովիւսն հօտից օգտողս զինէր, զՄակեդոն՝ Հոգւոյն պարգեւաց թշնամի յարուցանէր եւ աստուածութե նորին զժխտելն խրատէր. զՆեստոր՝ միածնին փառաց եւ անճառ խորհրդոյ անօրէնութեանն զլացող լինել յորդորէր. զԵւտիքէս՝ խաւար խաւարաւ բժշկել վարդապետէր եւ զներհամարգութիւնն ունոյն ցուցանել յորդորէր ... տապալէր այնուհետեւ զմիութիւն եկեղեցւոյ 'ի մասունս բաժանմն. քակէր զտաճարն Աստուծոյ, զոր շինեաց Ճշմարիտն Սողոմոն 'ի ձեռն իմաստուն ճարտարապետացն, եղծանէր գործ երջանիկն առաքելոց » [2] :

734. Զթիւ բազմախումբ աղանդոց եւ անլուր հերետիկոսութեանց նոցա որ 'ի սկզբանէ հետէ 'ի վեր երևեցան, նշանակէ Գուլթիէր յիւրում ժամանակագրական աղիւսակին: Իսկ սուրբն Օգոստինոս 'ի սկիզբն հինգերորդի դարուն թուէ հարիւր տեսակս զանազան հերետիկոսութեանց ծագելոց մինչև ցժամանակս իւր, որք օր ըստ օրէ յաճախեցին եւ բազմացան այլեայլ մոլորութեամբք [3] : Այլ մեք նշանակեսցուք աստանօր զերևելին 'ի նոցանէ միայն ընդ աղանդապետաց, սկսեալ 'ի ժամանակէ անտի ա-

1 Ճառ. Գ:
2 Ատենաբանութիւն:
3 Հերես. հատ. Է:

ռաքելոց մինչև ցաւուրս մեր, եդեալ առ Նմին 'ի կարգիս և զդատապարտութիւն նոցին 'ի զանազան ժողովս ըստ իւրաքանչիւր դարուց :

ԴԱՐ Ա

Սիմոն մոգ :

735. Սամարացի ժամանակակից առաքելոց, զառաջինն վարէր զմոգութիւն իւր 'ի Սամարիա, և ապշեցուցեալ զժողովուրդն ասէր զանձնէ՝ թէ մեծ ոմն իցէ, իբր զօրութիւն Աստուծոյ : Ապա յետ մկրտութեան իւրոյ իբրև կամեցաւ արծաթով առնուլ զՀոգին սուրբ, մերժեաց զնա առաքելապետն Պետրոս (610) : Սակայն ոչինչ ուղղեալ 'ի յանդիմանութենէ անտի սկսաւ այնուհետև չարարուեստ մոգութեամբ իւրով պատրել զբազումս և յինքն ձգել զորս հաւատադրուժն՝ ուսուցանելով նոցա նորանոր աղանդս : Զի ասէր զանձնէ իւրմէ թէ իցէ Հայր Աստուած տուող հին օրինաց, Որդի երևեալ առ Տիբերիաւ, և Հոգի սուրբ իջեալ 'ի վերնատուն 'ի վերայ առաքելոց : Ոչ ընդունէր զմարգարէս և զհին կտակարանս . ուրանայր զհարկաւորութիւն բարի գործոց և զյարութիւն մեռելոց . եդ հոգեփոխութիւնս մարմնոց . ասէր թէ աշխարհ ոչ արարաւ յԱստուծոյ, այլ 'ի հրեշտակաց : Ասէր և եւս՝ թէ որ ոք ապաւինի յինքն և 'ի պոռնիկ կին նորա Հեղինէ՝ փրկի : Սուրբն Կղեմէս քահանայապետ պատմէ թէ Սիմոն մոգ չոքաւ յետոյ 'ի Կեսարիա, և անդ վերստին մերժեալ 'ի Պետրոսէ եկաց յԻտալիա և 'ի Հռովմ[1] . ուրանոր

1 Գիրք [illegible]. գլ. Է.

պատուեալ զնա մեծապէս, որպէս ասէ Յուստինոս, կանգնեցին 'ի Տիբերիս ընդ մէջ երկուց կամրջաց զանդրի նորա վերտառութեամբս. « Սիմոնի Աստուծոյ սրբոյ » [1] : Այլ յաւուր միում օգնութեամբ գիւլին երբ յօդս ճախրեր նա, սուրբն Պետրոս աղօթիւք ընկէց զնա 'ի գետին, և խորտակեցան ոտունք նորա 'ի ծայր և 'ի կատականս ամենեցուն. և առ յուսահատութեան գահավէժ արարեալ զանձն սատակեցաւ չարաչար (1321) :

Մենանդր :

736. Սամարացի աշակերտ էր Սիմոնի մոգի. և լցեալ չարաղանդ մոլորութեամբ նորա. և ասէր զանձնէ յերկնից իջեալ առ 'ի փրկել զաշխարհ : Ասէր և զհրեշտակաց թէ իցեն արարիչք և գատապարտեն զմարդ. միայն լուացեալքն խմով սահմանեալ մկրտութեամբ փրկին 'ի դատապարտութենէ նոցա, և ոչ ծերանան, և ոչ մեռանին : Այս աղանդաւոր զօրացաւ յԱնտիոք. և յետոյ կորեաւ :

Նիկողայեցիք :

737. Էին լիրբք աղանդաւորք խառնիճք եկեղեցւոյ, որք ուսուցանէին անխտիր պոռնկել ընդ կանայս, և ուտել զզոհեալ : Իսկ վասն ստեղծման աշխարհի առասպելաբանէին՝ թէ ոչ յԱստուծոյ, այլ յիշխանութենէ ինչ ստեղծաւ : Էին որք ասեն թէ առաջնորդ աղանդոյս եղև Նիկողայոս մին յեօթն սարկաւագաց. այլ զայս ինքեանք հնարեցին առ 'ի ծածկել զգարշ մոլորութիւն իւրեանց անուամբ Նիկողայոսի. որպէս ասէ սուրբն Իգնատիոս. « փախիցուք փա

1 Գործ. Ը. Ժ :

խիցուք 'ի պիղծ Նիկողայեցեաց, որք սուտ անուն անուն ինքեանց »[1]:

### ԿԵՐԻՆԹՈՍ:

738. Աշակերտ էր սա և յաջորդէր առ առաքելովն յԵրուսաղէմ, և եղև առիթ ժողովոյ նոցա 'ի պնդելն թէ պարտ է պահել զԹլփատութիւն: Ասէր թէ աշխարհս ոչ արարաւ յԱստուծոյ. զՅիսուս ասէր 'ի Յովսեփայ սոսկ մարդ, և չև ևս յարուցեալ, և 'ի Հոգւոյն ընկալեալ զշնորհս նշանագործութեան 'ի Յորդանան: Յետ հազարամեայ յարութեան թագաւորել ասէր 'ի վերայ երկրի ամենայն մարդոյ հազար ամ հանդերձ մարմնական հեշտութեամբք: Ընդդէմ սորին գրեաց Յովհաննէս զաւետարանն (645): Հետևողք սորա Կերինթեանք կամ Մերինթեանք' յաւելին մերժել զաւետարանն Մատթէի. մկրտէին զմեռեալ երեխայս. զմարտիրոսս մերժէին, և զՅուդա պատուէին: Տես և զՀազարամեայս (747):

### ԵԲԻՈՆ:

739. Էր աշակերտ Կերինթեան, որ ասէր զՔրիստոս լոկ մարդ. դնէր և զերկու սկզբունս, զՔրիստոս այսր աշխարհի և զսատանայ հանդերձելոյն: Ասէր ևս թէ զօրէնս Քրիստոսի և զհին օրէնս միանգամայն պարտ է պահել: Սա զօրացաւ յԱսիա և 'ի Հռովմ. և հետևողք նորա Եբիոնիտք' սոսկ ջրով և բաղարջիւ պատարագէին:

### ՆԱԶՈՎՐԵՑԻՔ:

740. Էին շաղախեալք 'ի նախադրեալ աղանդս, և վարէին աւետարանաւն, որ կո-

1 Իգնատ. առ Տրալլացիս:

չիւր Պետրոսի. ուսուցանէին Թլփատիլ և հեթանոսաց ։ Սոքա էին 'ի քրիստոնէից կոչեցելոց յանուն Յիսուսի Նազովրեցւոյ ։

### Օսսեանք ։

741. Ծագեալ էին սոքա յաղանդաւոր Հրէից աշակերտելոց Եղքասյեայ սուտ մարգարէի. որք նախ քան զՔրիստոս պատուէին զՋուր իբր սկիզբն կենաց, ատէին զժուժկալութիւն, թոյլ տային զարտաքին ուրացութիւն և զկռապաշտութիւն ։

### Հիմենոս և Փիղետոս ։

742. Սոքա ուրանային զյարութիւն մարմնոյ, և ընդունէին միայն զխորհրդական յարութիւն, որ է մկրտութիւն. որով գամք, ասէին, 'ի մահուանէ 'ի կեանս ։ Զսոսա մերժեաց Պօղոս ։

## ԴԱՐ Բ

### Կայենեանք ։

743. Պատուէին սոքա զԿայէն, զԵսաւ, զԿորխ և զՍոդոմայեցիս իբրև 'ի գերագոյն զօրութենէ առեղծեալս. իսկ զՀաբէլ 'ի տկարէ ուժմնէ ։ Նոյնպէս տային պատիւ Յուդայի, որ մատնեաց զՅիսուս եղծիչ օրինաց. կամ գործակից եղև, ասէին, փրկութեան մարդկան ։ Եւ էին սոքա անխառն յամենայն չարիս ։

### Եղքասայիք ։

744. Կոչէին սոքա և Սամփսեայք հետևողք մերոյ ասացեալ սուտ մարգարէին Եղկեսեայ.

կամ Ելքսայեայ . և ասէին զՔրիստոս լոկ մարդ իբր մեծ ումն Թագաւոր . զՀոգին սուրբ քոյր Քրիստոսի ասէին . մերժէին և զպատարագն :

### Սատուրնինեանք :

745 . Աշակերտ էր հետևող Մենանդրի . որ միայն զՀայր ասէր Աստուած աներևոյթ . և թէ նորա է ստեղծեալ զհրեշտակս , յորոց եօթնեքին գաղտ 'ի նմանէ ստեղծին զաշխարհս , և երկուք 'ի նոցանէ զմարդիկ՝ զոմանս 'ի բնէ բարիս , և զոմանս չարս : Նա և ուսուցանէր թէ Քրիստոս եկն յաշխարհ խափանել զԱստուածն Հրէից , որ էր մին 'ի հրեշտակաց անտի . զմարմին նորա առաչօք ասէր և նրբատեսակ . իսկ զամուսնութիւնն գիւտ սատանայի կոչէր :

### Բասիլիդեանք :

746 . Էր աղեքսանդրացի ընկեր Սատուրնինոսի . որ ուսուցանէր թէ աշխարհս ստեղծաւ 'ի հրեշտակաց , և երկինք են թուով երեք հարիւր վաթսուն և հինգ : Ուրանայր զճշմարիտ մարմին առնուլն Քրիստոսի և զխաչելն . այլ Սիմոն Կիւրենացի , ասէր , 'ի տեղի նորա խաչեցաւ : Դնէր ևս թէ հոգիք մարդկան յայլ կենաց մեղուցեալ՝ փոխադրին այսր և պատժին , այն է միայն պատիժ ասէր . ուրանայր զյարութիւն . թոյլ տայր ուրանալ զհաւատս առաջի բռնաւորաց , զի նոքա շունք և խոզք են՝ ասէր . եհան և զաւետարան յանուն իւր :

### Հազարամեայք :

747 . Սոքա հետևողք էին Կերինթոսի (738) , և ասէին թէ հազար ամս զուարճանալոց իցեն 'ի վերայ երկրի , 'ի ձախող միտս առեալ զբան

Յայտնութեան [1], և յետ թագաւորելոյ 'ի վերայ երկրի վերանալոց լինեն յերկինս։ Որոց հետևեցան երևելի անձինք, որպէս և Պապիաս եպիսկոպոս Հերապօլսոյ. այլ նա զթագաւորութիւնն զայն օրինաւոր զուարճութեամբ ասաց լինել, որպէս վայել է սրբոց. և թէ յետ այնորիկ վերանալոց են 'ի տեսութիւն Աստուծոյ։ Սմա հետևեցան և Կայանագիրք, որք ասէին՝ եթէ սուրբք այժմ ոչ հասանեն յերանութիւն, այլ սպասեն 'ի կայանս ուրեք մինչև 'ի հասարակաց յարութիւն։ Սակայն զայս կարծիս մերժեցին հարք. և զհազարամեայս դատապարտեաց նախ սուրբն Դիոնեսիոս պատրիարգ Աղեքսանդրիոյ, և ապա Դամասոս պապ։

ԳՆՈՍՏԻԿԵԱՆՔ ։

748. Որ նշանակէ գիտունք կամ լուսաւորեալք։ Սոքա երկու աստուածս ասացին լինել, և զծնունդն Քրիստոսի առաջնք. ուրանային զյարութիւն, անգոսնէին զժուժկալութիւն և զմարտիրոսութիւն։ Անձնատուրք գոլով 'ի ցանկութիւնս՝ ասէին թէ հոգիք այնչափ անցանեն 'ի մարմնոյ 'ի մարմին, մինչև ջնջիլ ամենայն մեղաց։

ՊՐԻՍԿԻՂԵԱՆՔ ։

749. Էին 'ի նոյն իսկ յաղանդաւորացն Գնոստիկեանց զակատեալք 'ի ցանկութիւնս և 'ի մոլորութիւնս. պարծէին 'ի չարիս, և անգոսնէին զառաքինութիւնս. որք յետոյ փոխեալ զանուանս այսպէս կոչեցան։

1 «Թագաւորեացն ընդ նմա Հայոց ամ ՅՅ. Գ. Ը. Ի։

### Կարպոկրատեանք :

750 . Էր աղեքսանդրացի աշակերտ Սիմոնի և առաջնորդ Գնոստիկեանց. ասէր թէ մարմինղէնք 'ի հրեշտակաց արարան. առանց չար գործոյ չէ մարթ անցանել ընդ իշխանութիւնս : ԶՔրիստոս ասէր 'ի Յովսեփայ ծնեալ և առ աչօք չարչարեալ . զպատկեր նորա համապատիւ համարէր ընդ պատկերաց Հոմերոսի , Պղատոնի և այլոց . և ուրանայր զյարութիւն : Որդի էր սա Եպիփանէսի չարին , որոյ 'ի մեռանելն ամաց եօթնուտասանից՝ կանգնեցին նմա տաճար 'ի Սամոս քաղաքի :

### Ադամեանք :

751 . Հետևողք էին Ադամայ աշակերտքն Կարպոկրատեսի . որք ըստ վիճակի անմեղութեան նախահօրն շրջէին՝ ասէին թէ Քրիստոս փրկելով զմեզ վերածեաց 'ի վիճակ Ադամայ . մերժէին զամուսնութիւն , և զմեղուցեալս արտաքսէին յեկեղեցւոյ իւրեանց իբր 'ի դրախտէ : Զայս աղանդ նորոգեաց Պիկարդոս բելգացի յամին 1415 :

### Վաղենտինեանք :

752 . Էր սա եգիպտացի և կամէր եպիսկոպոսանալ վասն հանճարոյ իւրոյ . իբրև ոչ յաջողեցաւ , առ զայրոյթ սրտին ուսուցանէր թէ գոն երեսուն յաւիտեանք կամ աստուածք . զմարմին Քրիստոսի յերկնից բերեալ ասէր , և թէ իբրև ընդ խողովակ էանց ընդ կոյսն : ԶԵրրորդութիւնն խաչեալ ասէր . ուրանայր զկրօն , զյարութիւն և զժուժկալութիւն :

### Սէկունդեանք :

753 . Սոքա կոչին և Պաղոմեանք , հետևողք վերնոյն , որ ուրացեալք զհոգին և զաստուածութիւն՝ ուսուցանէին զայլևայլ մոլորութիւնս ընդդէմ Երրորդութեան և ընդդէմ մարդեղութեան Բանին :

### Մարկոս :

754 . Աշակերտ Վաղենտինեանց՝ անձնատուր 'ի ցանկութիւնս . զՔրիստոս առաջոք առէր , և մկրտէր այսու ձևով . « Յանուն անծանօթի Աստուծոյ ամենայն եղելոց և ճշմարտութեանն , որ ապաւէն է ամենեցուն , և այնմ որ էջ յերկնից 'ի վերայ Յիսուսի » : Ի չորրորդ դարու յարեաւ և այլ ոմն Մարկոս մանիքեցի և տարածեաց զաղանդն 'ի Գաղղիա :

### Սեթեանք :

755 . Սոքա ուսուցանէին՝ թէ Կայէն և Հաբէլ 'ի հրեշտակաց ստեղծան , և 'ի մեռանել Հաբէլի անկաւ հակառակութիւն 'ի նոսա , մինչև ամենեքին հանճեցան , զի յետ Հաբէլի յղացի Սէթ . զոր իբրև զՔրիստոս պաշտէին , կամ 'ի տեղի Քրիստոսի եկեալ ասէին :

### Հերակլեանք և Կողորբասեանք :

756 . Էին 'ի Վաղենտեան աղանդաւորաց , որք ասէին՝ թէ առաջին ծնող էիցս կոչի մարդ : Երկրորդ՝ ամենայն ճշմարտութիւն գտանի , ասէին , յայտնաբերեալ Յիսուսի . ըստ այնմ թէ « Ես եմ ալֆա և օվ » : Երրորդ՝ զճշմարիտ մարդկութիւնն Քրիստոսի ուրանային : Ի սոցանէ էին Բոռփոնեանք , որք ուրացան զընդհանուր դատաստանն :

Փռւրինոս և Բղնոփորոս:

757. Էին երեք հռոմայեցիք 'ի Վաղենտեանց անուն. առաջինն ասաց թէ Աստուած իցէ հեղինակ չարի. և երրորդն ասաց թէ պարտ է ընդ Հրէից կատարել զպասեք 'ի չորեքտասան լուսնի:

Արխոնտիկեանք :

758. Ուսուցանէին սոքա զաշխարհս 'ի հրեշտակաց լինել, մերժէին զմկրտութիւն, և ինքեանք անձնատուր էին 'ի ցանկութիւնս: Ասի թէ այս աղանդ 'ի փոքր Հայս երևեալ, առս յամին 361 տարածեալ իցէ յայլ յՆստակտանէ ուսմանէ:

Կերդոն :

759. Ուսուցանէր զաղանդ Սիմոնի 'ի Հռոմ յամին 140. զերկուս աստուածս ասաց լինել, զմին չար՝ արարող աշխարհի Կերդոն անուամբ, և միւսն բարի երկնաւոր և հայր Քրիստոսի: Առաջեք ասէր զՔրիստոս, ուրանայր զյարութիւն մարմնոյ, և ընդունէր զյարութիւնն հոգւոյ: Լուսով բանի պարտ է, ասէր, ընդունել զաւետարանն և զթուղթս, այլ ոչ զամենայն բանս. սուտ է ասէր Գործք առաքելոց և գիրքն Յայտնութեան: Զսա դատապարտեաց սուրբ Հիւգինոս պապ (1330): Իսկ հետևողք սորա դատապարտեցան 'ի ժողովն արևելեան (1038):

Մարկիոն :

760. Էր պոնտացի որդի եպիսկոպոսի՝ 'ի մանկութեան մաքրասէր. այլ յետոյ ոչ նոյնպէս: 'Ի մին իւր աղտաղեալ յեկեղեցւոյ 'ի ձեռն հօր

Խուրոյ՝ խոյս ետ 'ի Հռոմ և յարեցաւ 'ի կլեր-գոն. և նա զերկու արարիչս ասաց՝ բարի և չար, ուրացաւ զյարութիւն, ընկալաւ զհոգեփոխութիւն, և զՔրիստոս առաջօք ասաց : Ցաւել ուսուցանել երկուս Քրիստոս, զմին երևեալ առ Տիբերիաւ, և զմիւսն որ գալոց է 'ի նորոգել զօրէնս Հրէից. զամենայն անօրէնս համարէր փրկեալս՝ զԿայէն, զՍոդոմայեցիս և զայլս. իսկ զարդարս համարէր դատապարտեալս : Մերժեաց զհին կտակարանս, և զնորն փոփոխեաց՝ պահեալ միայն զաւետարանն Ղուկայ ընդ յապաւեալ թղթոց Պօղոսի. անվաւեր ձեռն մկրտէր. նա և նոր մկրտութիւն ինչ կարգեաց վասն ծանր յանցանաց :

761. Մարկիոնեանք զկենդանիս մկրտէին վասն մեռելոց. զորս կանայք ևս մկրտէին: Ատեցողք էին մարմնոց իւրեանց և որդէծնութեան. և ոմանք գահավիժեալ 'ի բարձանց՝ մարտիրոս համարէին զինքեանս : Սոքա դատապարտեցան յարևելեան ժողովն յամին 160 : Իսկ ընդդէմ Մարկիոնի գումարեցաւ ժողովն Լուգդոնի յերկրորդ դարուն 'ի սրբոյն Երանոսէ (1110):

### Թէոդորոս :

762. Էր բիւզանդացի խաղախորդ, այր ճարտար, որ 'ի հալածանս Սեւերոսի ուրացեալ զՔրիստոս՝ ասէր, թէ ոչ զԱստուած, այլ զմարդ ուրացայ : Մերժէր զաւետարանն Յովհաննու և զՅայտնութիւնն : Դատապարտեաց զնա Վիկտոր պապ : Հետևողք սորա կոչեցան Աբանք. զի ուրանային թէ իցէ Քրիստոս Բան Հօր:

### Թէոդոտոս Սոկէրէւ:

763. Իբր հետեւող վերնոյն, որ զՔրիստոս ստորին համարէր քան զՄելքիսեդեկ. զի նա, ասէր, ունէր զմայր. իսկ Մելքիսեդեկ ոչ: Սա յաւուր միում յօգս համբարձեալ 'ի գիւղն՝ անկեալ 'ի վայր սատակեցաւ:

### Արտէմոն:

764. Հետեւող եղեւ վերնոյն, որ լրբութեամբ ուսուցանէր զՔրիստոս լոկ մարդ. և կամակորէր 'ի Թիւր միտս զամենայն բանս աւետարանին:

### Ոփիտեանք:

765. Սոքա կոչին Օձեանք, և առաջնորդ նոցա եղեւ Փրատէս ոմն. քանզի ասէին՝ թէ Քրիստոս է այն օձն, որ խաբեաց զԱդամ և զԵւա, նա և իջեալ յերկնից եբեր զգիտութիւն բարւոյ և չարի. նմին իրի և պատուէին զօձ: Իսկ զՅիսուս Քրիստոս յերկուս բաժանէին. զՅիսուս ծնեալ ասէին, և զՔրիստոս իջեալ 'ի վերայ նորա. նա և որպէս պատմէ Որոգինէս, նզովէին զփրկիչն:

### Ղուկիանոս:

766. Ապել և Լուսիանոս, հետեւող Մարկիոնի, որ երկուս Աստուածս ասէր լինել. մերժէր զՀին կտակարանն, և առաջօք ասէր երեւեալ զՔրիստոս:

### Ապեղէս:

767. Իբր մարկիոնեան, որ ասէր, մի է Աստուած ծնող այլ Աստուծոյ՝ որ ստեղծ զաշխարհ: Զմարմին Քրիստոսի ասէր առաջօք կազմեալ յաստեղաց յիջանելն յերկնից. իսկ յելա-

նէլն զատուցեալ զմատունս մարմնոյն միայն հոգին վերացաւ :

## Տոփիանոս :

768 . Այգուս տարի էր և իմաստասէր, որ ընթերցմամբ սուրբ գրոց ընկալեալ զհաւատ՝ յարեցաւ 'ի սուրբն Յուստինոս, այլ զկնի մահուան նորա անկաւ 'ի հերձուածս և եղև առաջնորդ Ենկրատեանց, այսինքն Հրաժարելոց: Զամուսնութիւն և զգինի մերժէր. նմին իրի 'ի պատարագի ջուր միայն դնէր. յորմէ հետևողք նորա Ջրամատոյցք կոչեցան, ենթադրեալ թէ գոյր 'ի մէջ ուղղափառաց սովորութիւն՝ զի յառաւօտեան պատարագս ջուր միայն դնէին առ 'ի յոչ առնուլ զհոտ գինւոյ հեթանոսաց, և որոշել զքրիստոնեայս : Ընդդէմ սորին գրեաց սուրբն Եպիփան: Դարձեալ ասէր Տափիանոս, թէ դատապարտեալ է նախահայրն. իսկ աշակերտք նորա եդին նաև զատանայ արարիչ :

## Սեւերոս :

769 . Էր անուանի ոմն հետևող Տափիանոսի, որ ոչ ընդունէր զհին կտակարանս, զթուղթս Պօղոսի և զԳործս առաքելոց : Ուրանայր զյարութիւն. և զկանայս և զգինի գործ սատանայի ասէր :

## Բարդածան :

770 . Ասորի ազգաւ ծնեալ յԵդեսիա, այր գիտնական և նախանձաւոր հաւատոյ. յաղթահարէր զՄարկիոնեանս, այլ յետոյ անկաւ ինքն 'ի նոյն, և ուրացաւ զյարութիւն. որ և ելեալ 'ի Հայս՝ ջան եդ դարձուցանել զնոսա 'ի

կառապաշտութենէ յաղանդ իւր. այլ ոչ յա-
ջողեցաւ։ Յիշեն զսա Եւսեբիոս և Խորենացին։

Մոնտանոս։

771. Էր 'ի Միւսիոյ հարեալ յախտ փառասիրութեան առ 'ի յերևել այր մի Հոգեւով որով իբրև մարգարէ, և ունէր երկուս կանայս, յորոց իմացեալ զգաղտնիս՝ գուշակէր այլոց։ Ընդդէմ սորա եղև ժողով 'ի Գաղղիա յամին 197. և զկնի քան և երկուց ամաց սպանաւ 'ի կանանց անտի։ Հետևողք սորա Մոնտանեանք պատուէին զնա իբրև զՀոգի սուրբ. մերժէին զերկրորդ ամուսնութիւն. պահէին զերիս քառասնորդական պահս իբր կարևորս առ փրկութիւն. ուրանային թէ գոյ յեկեղեցւոջ իշխանութիւն թողլոյ զծանր յանցանս. զհոգիս մարմնեղէն ասէին. իսկ 'ի պատարագս իւրեանց զհաց և զպանիր նուիրէին, յորմէ և կոչեցան Արտոտիրիտք, այն է Հացպանրեանք. զհաց պատարագի զանգէին արեամբ տարևոր տղայոց, և զտղայսն զայնոսիկ մարտիրոս կոչէին։

Հերմոգինէս։

772. Էր այր գծնեալ, որ յարեալ 'ի Ստոյիկեան փիլիսոփայս ասէր, թէ նիւթն առաջին է անծին և մշտնջենակից Աստուծոյ։ Մարմինն Քրիստոսի, ասէր, հանգչի յարեգակն. իսկ դևք 'ի տարերս. և մի անձն միայն է յԱստուած։

Պրաքսէաս։

773. Գլուխ էր սա Հայրաչարչար աղանդաւորաց. զի ասէր՝ թէ Քրիստոս է Հայր և Որդի։ Եւ աշակերտեալ Մոնտանոսի՝ առաւել գծնեալ գտաւ քան զնա։ Զայս մոլորութիւն յերրորդ դարուն նորոգեցին Նէոտոս և Սաբէլ (782)։

### Սելեւկեանք և Հերմեանք:

774. Էին 'ի Գաղատիոյ հետեւողք Հերմոգինեայ, որք ասէին զնիւթն առաջին լինել իբր Աստուած. և թէ Աստուած ունի մարմին. ըզհոգիս, ասէին, հրեշտակք արտադրեն 'ի հողոյ. զմկրտութիւն ջրոյ մերժէին և մնային այլում մկրտութեան, որ հոգւով և հրով լինիցի: Հետեւողք սոցա առաջօք ասացին զմորդանալն Քրիստոսի:

### Չորեքտասանեայք:

775. Սոքա ուսուցանէին տօնել զզատիկն 'ի չորեքտասաննն լուսնին ընդ Հրէից. այլ հերքեցան 'ի ժողովն Նիկիոյ յամին 325:

## ԴԱՐ Գ

### Աղաւօքեանք:

776. Ուսուցին թէ Քրիստոս առաջօք էանց ընդ մարմին՝ ուսեալք յառաջագունից. որոց պաշտպան եղև Ցուլիոս Կասեանց յամին 200, որ և մերժէր զամուսնութիւն՝ ուսեալ 'ի սուտ աւետարանէ Եգիպտացւոց կոչեցելոյ:

### Առաքելականք:

777. Հետեւողք Ենկրատեանց և Կաթարոսաց, որք համարէին զինքեանս իբր պահօղս առաքելական աւանդից, և ուսուցանէին թէ ամուսնութիւն և ստացուածք անմաքուր առնեն զմարդ 'ի փրկութենէ: Զայս աղանդ նորոգեցին ոմանք յերկոտասաներորդ և յերեքտասաներորդ դարու, մերժելով ևս զմկրտութիւն ման-

կանց. զքաւարան և զպարեխօսութիւն սրբոց (1510):

### Տերտուղիանոս:

778. Էր զառաջինն ներհուն վարդապետ հզօր ախոյեան և գլխաւոր Մարկիոնի, Ապեղեսի և այլոց. բայց և ինքն մոլորեցաւ. Նախ զի հաւատս ընծայէր Մոնտանոսի իբրև մարգարէի առ ժամանակ մի. երկրորդ ուրանայր զթողութիւն ծանր մեղաց. երրորդ զհոգիս ասէր սերմնդեամբ անցանել 'ի ծնողաց առ որդիս. չորրորդ զվաւթարան յետ մահու գեա լինել ասէր. հինգերորդ դատապարտեաց զամուսնութիւն: Ոմանք համարին թէ զԱստուած մարմնաւոր համարեցաւ, և զՔրիստոս արարած. այլ վէճ է 'ի վերայ այսր:

### Կիպրիանոս:

779. Եպիսկոպոս էր Կարթագինեայ. որ ուսուցանէր թէ պարտ է կրկին մկրտել զմկըրտեալսն 'ի հերետիկոսաց. այլ չյամառեալ նորա 'ի կարծիս իւր՝ չեղև հերետիկոս:

### Որոգինէս:

780. Ադամանդ կոչեցեալ, այսինքն է անյաղթելի. որդի էր Լեւոնիդեայ վկային, այր մեծանուն և դաստիարակ մեծամեծ վարդապետաց և մարտիրոսաց: Այլ ինքն մոլորեցաւ Նախ՝ զի ասէր զՈրդի կրսեր քան զՀայր. և զՀոգին կրսերագոյն քան զՈրդի. երկրորդ՝ թէ հոգիք մարդկան հրեշտակք էին, այլ առ 'ի պատիժ մեղաց արգելան 'ի մարմինս, ուստի դիպուածով իմն լեալ ասէր զաշխարհն վասն պատժելոյ զհոգիս. Նա և այլաբանութիւն համարէր զդրախտն, զի ծառովք զհրեշտակս

խնամայք, և զմաշկեղէն զգեստն մարմին է ա-ռէր՝ որով ծածկեալ էին Ադամ և Եւա. Եր-րորդ՝ զհոգին Քրիստոսի միաւորեալ ասաց ընդ Բանին յառաջ քան զմարդեղութիւնն. չոր-րորդ՝ ուսոյց թէ Քրիստոս միանգամ ու-նի 'ի խաչ ելանել վասն փրկութեան դիւաց և դատապարտելոց. Հինգերորդ թէ 'ի յարու-թեան ամենեքեան լինին բոլորակ ձևով. վեցե-րորդ՝ զհուր դժոխոց ասէր լինել միայն զխիղճն մտաց. եօթներորդ՝ զաստեղս հոգեւորս հա-մարէր և ընդունակս աղօթից ։

Նէոտոս ։

781. Ուրացաւ զԵրրորդութիւն, և մի միայն անձն ասէր յԱստուած ։ Եփեսացի էր սա և զօրացաւ յԱսիա և յինքն ձգեաց զբազումս. և ապա դատապարտեցաւ 'ի սրբոց հարց ։

Սաբէլ ։

782. Էր լիբէացի ծնեալ 'ի Պտղոմայիդ, որ աշակերտեալ Նէոտոսի՝ ուսուցանէր զերիս ան-ձինս Երրորդութեան 'ի մի դէմս խառնակեալ. նոյն անձն էր, ասէ, որ երևեցաւ 'ի Յորդանան, նոյն որ չարչարեցաւ, և նոյն որ հանգեաւ յա-ռաքեալսն ։ Սա դատապարտեցաւ 'ի սրբոյն Դիո-նեսիոսէ յամին 319 ։

Վաղէսեանք ։

783. Էին ժանտ աղանդաւորք, որք ուսեալ յումեմնէ արաբացւոյ Վաղէս կոչեցելոյ՝ թոյլ տային ներքինացուցանել ։ Որոց ընդդէմ գու-մարեցաւ ժողով յԱքայիա յամին 250 ։ Զայ-նու ժամանակաւ Արաբացիք ասէին՝ թէ հոգին մեռանի ընդ մարմնոյ և ընդ նմա յառնէ ։ Եւ

ընդդէմ սոցա եղև ժողով յԱրաբիա յամին 247 (1049)։

Նովատեանք։

784. Կոչին և կաթարոսք, այսինքն սուրբք, որք հետևեցան Նովատիանոսի երիցու Հռովմայեցւոյ, և այլում Նովատոսի կարթագինեցւոյ։ Նովատիանոս այս Ճարտարաբան միացեալ ընդ Նովատոսի կալաւ զաթոռ հակառակ Կոռնելիոսի քահանայապետին, և եղև առաջին հակապապ. որ ուսուցանէր թէ մեղուցելոց չէք թողութիւն յեկեղեցւոջ. զաշակերտեալսն կրկին մկրտէր և զերկկին պսակեալս 'ի բաց մերժէր։ Աշակերտք սորա 'ի մկրտութեան ոչ վարէին զօծումն իւղոյ. նա և անխտիր առնէին զզատիկն 'ի չորեքտասանն լուսնի և 'ի կիւրակէի. ընդդէմ սոցա գրեաց երանելին Սեբերիանոս. ևս և եղև ժողով 'ի Կարթագինէ յամին 255 (1119)։

Պօղոս Սամոսատցի։

785. Ասորի ազգաւ այր մուրացիկ. սապա նստեալ եպիսկոպոս յամին 262, կամեցաւ հաստատել զհրէութիւն օգնութբ Զենոբիայ դշխոյին։ Ուրանայր զաստուածութիւն Քրիստոսի. երկուս անձն ասէր 'ի Քրիստոս, և երկուս որդի՝ բնական և որդեգրական, և բնական որդին ասէր է զօրութիւն Աստուծոյ. նա և ուսոյց զօրէնս թլփատութեան։ Զոր և դատապարտեաց երկրորդ ժողովն Անտիոքայ յամին 264 (1018)։

Մանի կամ Մանիքեանք։

786. Նշանակէ մխիթարիչ. էր ազգաւ պարսիկ, և ծառայ այրի կնոջ միոյ, որում յետոյ եղև

որդեգիր և ժառանգ ընչից նորա, փոխելով զառաջին անունն 'ի Կիւրապիկոս: Եւ սկսեալ նորա վարել զօրութեամբ մոգութեան՝ ասէր թէ առաքեցայ 'ի Յիսուսէ. այլ իբրև ոչ կարաց բժշկել զորդի Շապհոյ արքային Պարսից, ըս-պանաւ 'ի նմանէ յամի 278: Սա ինքն ուսոյց նախ զերկու սկզբունս՝ բարի և չար: Երկրորդ՝ զմարմինն 'ի նիւթոյ ասէր, և զհոգին 'ի չար սկզբնէ, նմին իրի արգելուլ զամուսնութիւն, զի մի՛ չար արարածն բազմասցի: Երրորդ՝ զմարմինն Քրիստոսի առաջոք ասէր: Չորրորդ՝ ըստ Ոփիտեանց ասէր զՔրիստոս լինել այն օձ, որ եցոյց նախաստեղծից զգիտութիւն բարւոյ և չարի: Հինգերորդ՝ իբր զօրութիւն Աստուծոյ ասէր զՔրիստոս բազմեալ յարեգական, և իբրև իմաստութիւն Աստուծոյ՝ 'ի լուսնի: Վեցերորդ՝ ասէր զՔրիստոս եկեալ միայն 'ի նորոգութիւն հոգւոյ և ոչ մարմնոյ, և ուրանայր զյարութիւն մարմնոց. նա և զերկու հոգիս դնէր 'ի մարդ հակառակ միմեանց: Ուրանայր զանձնիշխանութիւն, և պատճառ մեղաց դնէր զբնութիւն չար սկզբան: Ուսուցանէր զհոգեփոխութիւն. անկոց ծառոց ընծայէր զզգայութիւնս. որով և մերժէր զերկրագործութիւն իբր մարդասպանութիւն: Մանիքեցիք ասէին՝ թէ խոստումն Քրիստոսի վասն գալստեան Հոգւոյն սրբոյ կատարեցաւ 'ի Մանիքէոս:

Հիերակ:

787. Եգիպտացի էր ազգաւ, և մոլորութիւն նորա խառն էր 'ի Մանիքեցւոց և 'ի Գնոստիկեանց: Հետևողք սորա մերժէին զամուսնութիւն. միայն չափահաս ամուրեաց ասէին լինել փրկութիւն և ոչ մանկանց. ոչ ընդունէին զերկրաւոր դրախտ. ժուժկալէին 'ի կերակրոց և

'ի գինւոյ, և զՄելքիսեդեկ ունէին 'ի տեղի Հո-
գւոյն սրբոյ ։

## ԴԱՐ Դ

### Դոնատեանք ։

788. Գլուխ սոցա եղև Դոնատոս եպիսկո-
պոս Կարթագինեցւոց՝ այր խռովարար յեկեղե-
ցւոջ ։ Որք և կրկին մկրտէին զմկրտեալս 'ի հե-
րետիկոսաց, և զՃշմարիտ եկեղեցին ասէին լի-
նել միայն առ իւրեանս ։ Դատապարտեցան 'ի
ժողովն Արլեսայ յամին 314 ։

### Արիոսք ։

789. Էր երէց աղեքսանդրացի ծնեալ 'ի Լի-
բիա մերձ յԵգիպտոս. որ յարեցաւ նախ 'ի
հերձուածն Մելիտոսի, ապա յետս կացեալ
անտի՝ ձեռնադրեցաւ սարկաւագ 'ի սրբոյն
Պետրոսէ աղեքսանդրացւոյ ։ Այլ անդրէն դար-
ձեալ յառաջին հերձուածն՝ արտաքսեցաւ 'ի
նմանէ. և յետ մահուն նորա ձեռնադրեալ քա-
հանայ, կարգեցաւ երէց եկեղեցւոյն յամի 315 ։
Այնուհետև սկսաւ ուսուցանել, թէ Որ-
դին է արարած և ոչ համագոյակից Հօր ։ Ասէր
և՝ թէ մարդն Քրիստոս չունէր բանական հո-
գի, այլ Բանն եկաց զտեղին. որ և դատա-
պարտեցաւ նախ 'ի ժողովն Աղեքսանդրիոյ 'ի
հարիւր եպիսկոպոսաց, և ապա 'ի Նիկիա յա-
մին 325 ։

### Կողութեանք ։

790. Էին հետեւողք Կողութոսի երիցու Ա-
ղեքսանդրիոյ ժամանակակցին Արիոսի ։ Նոկ

քահանայ էր այրն և ձեռնադրէր զքահանայս. նա և զԱստուած ասէր պատճառ մեղաց։

### Եւնոմիոս ։

791. Որդի էր երկրագործի, և ասէր զանձնէ գիտել զէութիւնն Աստուծոյ, որպէս գիտէ զինքն Աստուած։ Սա նախ 'ի զինուորական կարգէ լեալ, եղև ապա ուսուցիչ մանկանց և դպիր Այետիոսի սարկաւագի (792). յորմէ ուսեալ զամենայն չարիս՝ 'ի միասին քարոզէին զՈրդին աննման Հօր, և զՀոգին կրսերագոյն։ Ընդդէմ սորա եղև ժողով յԱղեքսանդրիա 'ի մեծէն-Աթանասէ յամի 362 ։

### Այետիոս ։

792. Էր անախորժացի անաստուած սարկաւագ, որ ուրացաւ զհաւասարութիւն անձանց Երրորդութեան, և ուսուցանէր ընդ արբանեկի իւրում Եւնոմիոսի, թէ ամենայն ստորոգելիք Աստուծոյ և ոչ բանիւ զանազանին յէութենէ։ Ձիք 'ի Քրիստոս, ասէին, բանական հոգի. մերժէին զնշխարս սրբոց, և զառ 'ի նոյանէ սքանչելիս գիւթութիւն համարէին։ Մկրտէին 'ի մահն Քրիստոսի և ոչ յանուն Երրորդութեան. ոչ թողլ տային չմկրտելոց մկրտել. գլխովին օրինազանցք էին. չունէին իսկ պահս։ Ընդդէմ սորա եղև ժողով յԱքայիա յամի 359։

### Կիսաարիոսեանք ։

793. Կոչէին և Ակակիոսեանք, զի գլուխ նոցա էր Ակակիոս առաջնորդ Կեսարիոյ. որք ուրացեալք զհամագոյակիցն՝ ասացին զՈրդի նմանագոյ Հօր. այլ դատապարտեցան 'ի ժողովն Աղեքսանդրիոյ յամի 362 ։ Տես 'ի կարգս մասնաւոր ժողովոց։

### Աւդէոս:

794. Ըստ Եպիփանու էր այր երեւելի 'ի Միջագետաց. եղեւ առաջնորդ Մարդակերպեաց, և պնդէր թէ մարդն ոչ միայն ըստ հոգւոյ, այլ և ըստ մարմնոյն է պատկեր Աստուծոյ. և կատարէր, ասեն, զզատիկն ընդ Հրէից:

### Փոտինոս:

795. Էր եպիսկոպոս Սիրմիոյ և ծննդեամբ գաղատացի. այր ճառավարժ, բայց հետեւեալ Սամոսատացւոյն՝ ասէր թէ Քրիստոս 'ի Մարիամայ ունի զսկիզբն, և ոչ Աստուած յԱստուծոյ: Ընդդէմ սորա եղեւ ժողով 'ի Մեդիոլան յամի 347:

### Մակեդոն:

796. Եպիսկոպոս էր Կոստանդինուպօլսոյ. որ և կոչեցաւ հոգեմարտ. զի ուսուցանէր թէ միայն Որդին է նման Հօր, իսկ Հոգին արարած 'ի վայր քան զԱստուած բնութեամբ և պատուով: Սա դատապարտեցաւ նախ յԱղեքսանդրիա յամին 362. ապա յառաջին ժողովն Կոստանդինուպօլսոյ յամին 381:

### Ապողինար:

797. Էր երէց Լաւոդիկեայ, և որդի նորա Ապողինար գրամատիկ. որք ուսուցին նախ՝ թէ 'ի Քրիստոս չիք բանական հոգի և միտք. զի զտեղի նոցա, ասէին, լնու աստուածութիւնն: Երկրորդ՝ թէ մարմինն Քրիստոսի յերկնից բերեալ եղեւ, որ միշտ ընդ Քրիստոսի էր: Երրորդ ուրացան զհաւասարութիւն անձանց Երրորդութեան: Սոքա դատապարտեցան յԱղեք-

ասնգրիա, և յառաջին ժողովն Կոստանդինուպօլսոյ:

Մասսաղեանք:

798. Այն են Աղօթականք, որք և Էնթուսեանք կոչին, որոց պարագլուխ եղեն Դադոյ և Սաբբաս հետևողք Սիմոնի: Ասէին՝ թէ ամենայն ոք ունի սեպհական դև առանձին յորդորիչ 'ի չարն: Մկրտութեամբ բողբոջք մեղաց խամրին ասէին, և աղօթիւք ջնջին: Մարդն կարող է, ասէին, 'ի ծայր առաքինութեան և գիտութեան հասանել հաւասարել Աստուծոյ: Մարմնաւոր աչօք, ասէին, տեսանելոց եմք զԵրրորդութիւն. նա և ուսուցանէին, թէ 'ի հարկաւորութեան մարթ է ուրանալ զհաւատս: Սոքա անգործ և խարազնազգեաց շրջէին մուրացութեամբ. և որք և կանայք 'ի տօթի օթէին, ասելով, անմարթ է մեզ ստանալ ինչ զերկրաւոր: Որք և դատապարտեցան 'ի Հռովմ յամին 381:

Բոկոտնեայք:

799. Սոքա անկօշիկ և բոկոտն շրջելով յորդորէին զամենեսեան նմանել ինքեանց վասն բանին. «Լոյծ զկօշիկս»: Որով համարէին զինքեանս հաճոյս տեառն իբրև զՄովսէս:

Հեղուիդեանք:

800. Կոչին ըստ Եպիփանու Անտիդիկոմարեանիտք, այսինքն հակառակողք Մարիամու. զի ասէին, թէ սուրբ կոյսն յետ ծննդեան Յիսուսի ստացաւ 'ի Յովսեփայ զայլ որդիս: Եւ ոչինչ խտիր դնէին ընդ կուսութիւն և ընդ ամուսնութիւն. որոց գլուխ Հեղուիդիոս էր այր չինական: Ընդդէմ նորա գրեաց սուրբն Հերոնիմոս:

### Պրիսկիղիանոսք :

801 . Էր յաղանդականաց Մանիքեցւոց, այր ճարտար . որ օգնութեամբ երկուց եպիսկոպոսաց յարոյց զմոլորութիւն իւր՝ թէ մի անձն իցէ յԵրրորդութեան . յայն սակս , ասէր , Քրիստոս կոչի Միածին , զի 'ի բազում որդւոցն Աստուծոյ ինքն միայն ծնաւ 'ի կուսէ : Զհոգին Քրիստոսի ասէր նոյնաէական գոյացութիւն ընդ Աստուծոյ . զաշխարհ ասէր առեղծեալ 'ի չար սկզբնէ . նա և ուրանայր զյարութիւն մարմնոց : Հետևողք սորա ընդ Գնոստիկեանց կոչին ազատականք . զի զքրիստոնէական ազատութիւնն յայնմ դնէին՝ թէ քրիստոնէից ամենայն ինչ օրէն է : Ընդդէմ նորա եղև ժողով 'ի Սպանիա 'ի 447 :

### Յովինիանոս :

802 . Էր միայնակեաց 'ի Մեդիոլան , որ ուսուցանէր թէ ամենայն մեղք հաւասար են , որպէս և ամենայն վարձք : Զճշմարիտ հաւատով մկրտեալս անընդունակս մեղաց ասէր . իսկ զսուրբ կոյսն Մարիամ ոչ համարէր կոյս 'ի ծննդեան : Ընդդէմ սորա գրեաց Հերոնիմոս . և դատապարտեցաւ սա 'ի Հռովմ յամի 390 :

### Կողիրիդեանք :

803 . Կոչին Բլիթեանք արաբացիք , որք 'ի սահմանեալ աւուրս ինչ մատուցանէին Աստուածածնի իբրև աստուածուհւոյ բլիթս 'ի ձեռն կանանց իբր քահանայից իւրեանց :

### Չիրքումկելլիանք :

804 . Որ է ասել Թափառականք . զի յածեալ աստ և անդ պատժէին զոչ հնազան-

դեալ ինքեանց . և միանգամայն առաքէին ըղ-
պարտատեարս և զտեարս թողուլ զպարտս և ա-
զատել զծառայս կամ զգերիս ։ Սոքա էին 'ի
Դոնատեանց անտի . որոց գլուխ եղեն Մաքի-
դոս և Փասիսեր . որք 'ի 340 ամի արկեալ զին-
քեանս 'ի բարձունս կամ 'ի հուր՝ համարէին
մարտիրոսանալ. որպէս և կանայք նոցա։ Զսոս
դատապարտեաց Ոնորիոս պապ։ Այսու անուամբ
եղին և այլ աղանդաւորք յերեքտասներորդ
դարու, որք ասէին թէ ամենայն առաջնորդք
եկեղեցւոյ, նա և քահանայապետն անկեալ ի-
ցեն 'ի մոլորութիւնս . և ոչ ոք կարէ կատարել
զխորհուրդս . նա և չիք ոք, ասէին, ընդունակ
բանադրանաց ։

Աէրիոս ։

805 . Էր յոյն երէց պոնտացի . որ դժկամա-
կեալ ընդ եպիսկոպոսութիւն Եւստաթէոսի,
որում ինքն ակն ունէր, ասաց թէ ամենայն
քահանայք հաւասար են եպիսկոպոսաց։ Զապ-
նախմբութիւն զատկի համարէր արարս Հրէից ։
Չէ արժան, ասէր, աղօթել վասն ննջեցելոց .
և ոչինչ օգնէ պատարագն 'ի մեղաց թողութիւն։

Բոնոսեանք ։

806 . Սոքա հետևողք Բոնոսի եպիսկոպոսի
Սարդիկեայ, սուտ մարդ համարէին զՔրիստոս .
որպէս թէ երկու որդի, զմին ժամանակաւոր և
զմիւսն յաւիտենական . և թէ Մարիամ առա-
ջաւ զայլ որդիս ։ Դատապարտեցան սոքա 'ի
Թեսաղոնիկէ յամի 389 (1090) ։ Ի մին ժամա-
նակի Լուկիփերոսս կալարիացի հերձեալ յեկե-
ղեցւոյ՝ մերժեաց զժողովն Աղեքսանդրիոյ իբրև
անգլուխ ։

## ԴԱՐ Ե

### Վիգիլանտիոս ։

807. Էր կալագուրիտացի քահանայ եկեղեցւոյն Բարկինոնայ և ընտանի որդւոյն Պաւլինոսի. որ ուսուցանէր թէ չէ պարտ պատուել զնշխարս սրբոց և զբարեխօսութիւն նոցա հայցել, զի դեռ չեն հասեալ։ Ընդդէմ որոյ գրեաց Հերոնիմոս ։

### Պելագիոս ։

808. Միայնակեաց էր սա Իռլանտոյ. որ գտեալ գործակից զոմն միայնակեաց Կեղեստինոս՝ ուսոյց 'ի 405, թէ չիք սկզբնական մեղք 'ի մարդիկ և ոչ շնորհք. զի 'ի լինել շնորհաց, ասէր, բառնի անձնիշխանութիւն. ուստի առանց շնորհաց, ասէր, հնար է լնուլ զամենայն պատուիրանս։ Որ և դատապարտեցաւ 'ի ժողովս կարթագինեայ։ Սորա ընդդէմ ել ախոյեան և գլխաւոր մեծն Օգոստինոս ։

### Յուլիանոս ։

809. Ապուլեցի այր նշանաւոր հետևող Պելագեայ, որ յաշխարհիկ կարգէ ելեալ յեպիսկոպոսութիւն՝ զօրացոյց զաղանդ նորա գրով և բանիւ, յայտնի ուրանալով զշնորհս Աստուծոյ ։

### Կիսապելագեանք ։

810. Էին 'ի նոյն աղանդոյ, այլ մեղմացուցեալ՝ ասէին թէ սկիզբն փրկութեան 'ի մէնջ է, և միայն կատարումն 'ի շնորհացն Աստուծոյ ։

Առաջնորդք մոլորութեանս եղեն արք երևելիք. բայց դատապարտեցան 'ի ժողովն Արաւսիկոյ յամի 429 : Որոց ընդդէմ գրեաց և սուրբն Օգոստինոս (1033) :

### Թէոդորոս :

811 . Մոպսուեստացի կամ Մամեստացի եպիսկոպոս աշակերտ Դիոդորի Տարսոնացւոյ մոլորելոյ, և վարդապետ Նեստորի. որ և ուսոյց՝ թէ Քրիստոս է լոկ մարդ, և թէ մարդն Քրիստոս վասն գործոց իւրոց եհաս յայն շնորհս, մինչև կոչել Որդի Աստուծոյ. և թէ եկն Քրիստոս ոչ 'ի բառնալ զսկզբնական մեղս, զոր ինքն ոչ ընդունէր, այլ զի լիցի օրինակ և վարդապետ: Զսա նախ դատապարտեցին Հայք, և ապա երկրորդ ժողովն Կոստանդնուպօլսոյ յամի 553 :

### Նեստոր :

812 Եպիսկոպոս Կոստանդնուպօլսոյ և աշակերտ Մոպսուեստացւոյն. որ յամի 430 ուսոյց՝ թէ Մարիամ չէ Աստուածածին, և թէ 'ի Քրիստոս գոն երկու անձինք. ուրացաւ զհաղորդութն յատկութեանցն. զի միայն բարոյական միութիւն ասէր 'ի Քրիստոս, և ոչ գոյացական: Սա նախ դատապարտեցաւ 'ի Հռոմ և յԱղեքսանդրիա 'ի 430, և ապա յԵփեսոս 'ի 431 :

### Եւտիքէս :

813 . Էր վանահայր 'ի Կոստանդնուպօլիս՝ այր թանձրամիտ, որ առ 'ի դիմակալել չարախորհուրդն Նեստորի՝ անկաւ 'ի ներհական մոլորութիւն. զի 'ի Քրիստոս մի բնութիւն ասաց շփոթեալ: Գործակից եղև սորա Դէոսկորոս

պատրիարգ Աղեքսանդրիոյ, և Պարսամ արքի-մանդրիտ սամոսատացի: Որք և դատապարտեցան 'ի Կոստանդնուպօլիս յամի 448, և 450, նա և 'ի Քաղկեդոն յամի 451:

### ՏԻՄՈԹԷՈՍ ԿՈՒԶ:

814. Սա բռնի պատրիարգ կացեալ Աղեքսանդրիոյ, եղև ջատագով աղանդոյն Եւտիքեսի, և դատապարտեցաւ 'ի Հռոմ յամի 478: Տես 'ի կարգս մասնաւոր ժողովոց:

### ՊԵՏՐՈՍ ԹԱՓԻՒ:

815. Նոյնպէս և սա էր բռնակալ պատրիարգ Անտիոքայ, և հետևող եղև Եւտիքեսի: Զսմանէ ասի՝ թէ աստուածաչարչար մտօք յաւելեալ էր զխաչեցարն 'ի Սուրբ աստուածն:

### ՍԵՒԵՐԻՈՍ:

816. Էր անտիոքացի հետևող Եւտիքի. որ և եղև գլուխ Անգլուխ անուանելոց, որք մերժէին զեկեղեցին Քրիստոսի:

### ՅԱԿՈԲ ԾԱՆԾԱՂՈՍ:

817. Սա յասորի ազգէ լեալ՝ հաստատեաց զմիաբանութիւն յԱսորիս իբրև ինքնագլուխ աղանդաւոր. յորմէ ելին Յակոբիկք հերետիկոսք: Ասի թէ սա դրոշմէր շանթիւ զճակատս դրոշմելոց և մկրտելոց, վասն բանին՝ թէ «Նա մկրտեսցէ զձեզ . . . և հրով»:

### ՅՈՒԼԻԱՆԷ ԱՂԻԿԱՌՆԱՑԻ:

818. Եպիսկոպոս էր Կարիոյ, և ուսուցանէր՝ թէ մարմինն Քրիստոսի էր անչարչարելի և անապական անդստին 'ի յղութենէ, որպէս և յետ յարութեան՝ իբր առաջօք: Սա դատա-

պարտեցաւ 'ի Կոստանդնուպօլիս, և ընդ նախընթացից խայտառակեցաւ 'ի հարց անտի: Սորա հետևող գտաւ Յովհաննէս մայրագոմեցի և աշակերտ նորին Սարգիս չարաղանդ յեօթներորդ դարու. որոց ընդդէմ գրեաց Յովհան իմաստասէր զօրաւոր բանիւք [1]:

Քսենայայ:

819. Էր ազգաւ պարսիկ և մանիքեցի: Ի ծառայական կարգէ լեալ սորա՝ յամին 483 էանց 'ի Միջագետս առ 'ի ծառայել ումեք: Ուրանոր յարեցաւ յԵւտիքեանս. և չև ևս մկրտեալ՝ եղև եպիսկոպոս 'ի Պետրոսէ Թափչէ. Թէպէտ ոչ ոք հետևեցաւ նմա, բայց եղև առաջին մերժող պատկերաց:

Բարծումայ:

820. Ընդ սմին և Ակակ պարսիկ էին ջատագովք աղանդոյն Նեստորի, և թոյլ տային եպիսկոպոսաց պսակել զկանայս. զորս դատապարտեցին հարք ժողովով:

Նախասահմանականք:

821. Էին աղանդաւորք ուրացողք մարդկային ազատութեան. որոց գլուխ եղև երէց ոմն Ղուկիդոս անուն: Սոքա ասէին՝ թէ Աստուած նախասահմանեաց զոմանս 'ի կեանս և զոմանս 'ի մահ կամ 'ի կորուստ. ուստի հարկաւ առնեն զամենայն զբարի կամ զչար առանց ազատութեան: Որք և դատապարտեցան 'ի ժողովն Արելատայ յամին 475:

1 Տես ընդդէմ երևութականաց (952):

## ԴԱՐ Զ

### Յովհաննէս Գրամատիկ ։

822 . Կոչի սա և փիլոպոնոս . և էր եւտիքեան աղանդաւոր . այսպէս եղև գլուխ Եռաստուածեանց . որք զերիս անձինս Երրորդութեան երիս աստուածս ասէին , և ուրանային զյարութիւն մարմնոց ։

### Թեմիստիոս ։

823 . Սարկաւագ էր սա եպիսկոպոսին Աղեքսանդրիոյ՝ եւտիքեան աղանդաւոր . այլ եղև գլուխ Անգիտից Ագնոիտէ կոչեցելոց , որք ասէին՝ թէ Քրիստոս ոչ գիտէ զօրն յարութեան յետին ։

### Ջատագովք Երից Գլխոց ։

824 . Էին խառնակորդք , որք առ 'ի ջատագովել զժողովն Քաղկեդոնի՝ սկսան ջատագովել զգիրս և զանձինս մոլորելոց , Մոպսուեստացւոյն , Իբասայ , և Թէոդորի Կիւրացւոյն . նմին իրի և դատապարտեցան ընդ նոսա յերկրորդ ժողովն Կոստանդինուպօլսոյ (914) ։

## ԴԱՐ Է

### Միակամեանք ։

825 . Սոցա աղանդ այն էր , զի ասէին 'ի Քրիստոս զմի կամս և զմի ներգործութիւն . որոց պարագլուխ եղէն յամին 630 Կիւրոս

պատրիարգ Աղեքսանդրիոյ և Սերգիոս պատրիարգ Կոստանդինուպօլսոյ ։ Դատապարտեցան յերրորդ ժողովն Կոստանդինուպօլսոյ յամին 680 (915) ։

## ԴԱՐ Ը

### Ադելբերտոս ։

826 . Ուսուցանէր սա՝ թէ ունի ինքն սրբութիւն և ծածկագիտութիւն . մերժէր զեկեղեցիս, և կանգնէր խաչս յանուն իւր . զհերս իւր տայր հեռաւորաց իբրև զնշխարս, և ասէր թէ ունի թուղթ ինչ յերկնից բերեալ իբրև 'ի Քրիստոսէ ։

### Կղէմէս ։

827 . Էր աղանդաւոր նման վերնոյն , որ անարգէր զկանոնս սրբոց հարց և ժողովոց . ասէր՝ թէ 'ի նոր օրէնս արժան է յարուցանել զզաւակ եղբօր մեռելոյ . և թէ Քրիստոս եհան 'ի դժոխոց և զամբարիշտս . որ և դատապարտեցաւ 'ի Գերմանիա յամին 745 (1067) ։

### Պատկերամարտք ։

828 . Այսպէս կոչեցան նոքա՝ որք մերժէին զպատկերս ։ Սկիզբն այսր աղանդոյ եղև հրեայ ոմն (1414) , այս Կոստանդին եպիսկոպոս Նիկողիոյ՝ որ 'ի Փռիւգիա, մոլորեալ 'ի նոյն գրգռեաց զԼեւոն կայսր Իսաւրացի և զորդի նորա . որք անհնարին աղմուկս յարուցին յեկեղեցւոջ՝ այրելով զպատկերս . և դատապարտեցան յերկրորդ ժողովն Նիկիոյ յամին 787 ։

### Փելիքս Ուրգելացի:

829. Սորա գործակից էր Եղիպանդոս տոլետացի. երկոքին եւ եպիսկոպոսունք Սպանիոյ, որք ուսուցանէին թէ Քրիստոս է որդէգիր Աստուծոյ եւ ոչ որդի. վասն որոյ և դատապարտեցան 'ի ժողովն Փրանկֆորտոյ յամին 794 (1318):

### Պաւղիկեանք:

830. Էին մարմնապաշտք մնացորդք յԱրևորդեայց, որք հետեւեալ Պօղոսի մանիքեցւոյ և Յովհաննու' ուրանային զօրէնս քրիստոնէութեան. մերժէին զխաչ, զպատկեր, զեկեղեցի և զխորհուրդս: Հնարեցան զայսպիսի ձև մկրտութեան. «Ես եմ ջուր կենդանի». և զձև հաղորդութեան այսպէս. «Առէք, կերէք, արբէք»: Զսոսա դատապարտեաց Յովհաննէս Իմաստասէր (951):

## ԴԱՐ Թ.

### Կղոդիոս:

831. Էր եպիսկոպոս Տուրինոյ, որ զակառեալ զհետ պատկերամարտից' մերժէր զխաչ, զպատկեր և զյարգութիւն նշխարաց սրբոց, նա և զուխտագնացութիւն 'ի սուրբ տեղիս:

### Գոթէսկալկոս:

832. Նորոգիչ էր սա Նախասահմանականաց, և ասէր' թէ Քրիստոս ոչ վասն ամենեցուն մեռաւ, այլ միայն վասն նախասահմանելոց, որք հարկաւ փրկին ըստ եղեալ վճռոյն:

### Թոնդրակեցիք:

833. Էին նոր Մանիքեցիք 'ի Թոնդրակ աւա-
նէ, ուր աճեցին նոքա. որոց գլուխ եղև սուտ-
անուն եպիսկոպոս ոմն Սմբատ, որ յարեալ
'ի պաւլիկ բժիշկ ոմն Մջուսիկն մոգ՝ ուսաւ
զմոլորութիւն նորա, և ուրանայր զհանդեր-
ձեալ կեանս, զմեղս և զպատիժս, զնախախնա-
մութիւն և զշնորհս, զխորհուրդս եկեղեցւոյ
և զվարդապետութիւն ուղիղ վարուց: Հե-
տևողք սորա գնէին զերկու սկզբունս՝ բարի
և չար: Ժողովարան սոցա Շնավանս անուա-
նէ Լասախմերոցին. որք և նզովեցան 'ի Յով-
հաննու կաթողիկոսէ յամին 847:

## ԴԱՐ ԺԱ

### Պողոմէլեանք:

834. Էին աղանդաւորք իբրև զԱրևորդիս՝
ըստ Շնորհալւոյն. որք ուրացան զԵրրորդու-
թիւն անձանց. զԱստուած մարդակերպ ասէին,
և զաշխարհ 'ի գիւաց եղեալ: Գլուխ սոցա էր
Բասիլիոս ոմն, որ հրով այրեցաւ հրամանաւ
կայսեր Ալեքսի:

### Բերենգարեանք:

835. Էր աւագ սարկաւագ եկեղեցւոյն Ան-
դեգաւատոյ. յառաջն ասէր թէ չէք 'ի հաղոր-
դութե Ճշմարիտ մարմին և արիւն Քրիստոսի. յե-
տոյ թողեալ զայն ասէր թէ միայ ընդ մարմնոյն
Քրիստոսի և գոյացութիւն հացի: Ուստի թէ
մանկունք չէին ընդունակ մկրտութեան: Բայց
հուսկ յետոյ հերքեալ զայս ամենայն մեաւ-

ուղղափառ. զի 'ի Հռովմ ժողով եղև ընդդէմ նորա յամի 1050։ Տես անդ. որպէս և այլուր (1054)։

## ԴԱՐ ԺԲ

### Հաբելարդոս աբբայ։

836. Մոլորեալ ասէր՝ թէ 'ի հաղորդութեան Բանին այնպէս միաւորի ընդ հացին, որպէս միաւորեցաւ ընդ մարդկութեանն։

### Յովհաննէս Կոռնուալցի։

837. Մաքառեցաւ ընդ վերնոյն. այլ մոլորեալ ասէր, թէ հացն 'ի հաղորդութեան միաւորի ընդ Բանին ոչ անմիջապէս, այլ միջնորդութեամբ մարդկութեան։

### Պետրոս Պրուտէան։

838. Էր կարգուրաց, որպէս և Հենրիկոս, որք զմանկունս անընդունակս ասէին մկրտութեան. ուրանային թէ կայցէ պատարագ յեկեղեցւոջ. նա և մերժէին զխաչս, զտուրբս և զաղօթս վասն ննջեցելոց։ Դատապարտեցան սոքա յերկրորդ ժողովն Լատերանու յամին 1139։

### Պետրոս Աբայելարդոս։

839. Սորա հետևող եղև Առնալդոս պրէշիացի ժամանակակից Բեռնարդոսի. որք զանձինս Երրորդութեան անհաւասարս միմեանց ասէին, և ուսուցանէինն՝ թէ չէ պարտ ընդունել զհաւատս առանց տրամաբանութեան։ Սոքա համախոհ գոլով ընդ վերնոյն 'ի վերայ մկրտութեան մանկանց և հաղորդութեան՝ դատապարտեցան ընդ նմա։

### ԳԻԼՊԵՐՏՈՍ ։

840. Նոր պօրէտացի եպիսկոպոս Պիկտաւիոյ, որ եդ յԱստուած զիրական զանազանութիւն մեծ 'ի մէջ էութեան և ստորոգելեաց, մինչև ասել յեկեղեցւոյ՝ թէ Աստուածութիւնն ոչ է Աստուած, այլ տեսակ՝ որով է Աստուած. որ և դատապարտեցաւ 'ի Փարիզ յամին 1147 ։ Տես անդ ։

### ԷՈՆ ։

841. Տխմար ոմն էր սա և շինական 'ի Բրիտանիոյ, որ քարոզէր զանձն լինել որդի Աստուծոյ, և զիւրն կոչէր հրեշտակս և առաքեալս. և գիւղական արուեստիւ պատրէր զբազումս, և մեռաւ յարգելանս ։ Դատապարտեցաւ 'ի ժողովն Հռեմսեան յամի 1148 (1157) ։

### ՊԵՏՐՈՍ ՎԱԼԴՈՍ ։

842. Յամին 1170 ուսոյց թէ չէ պարտ հնազանդել պապին. զի զիշխանութիւն արձակելոյ և քահանայագործելոյ շնորհեալ է, ասէր, աշխարհականաց ։ Ուրանայր զներողութիւն և զքաւարան, և ասէր թէ սուրբք ոչ լսեն զխնդրուածս ։ Սորա հետեւողք կոչին Աղքատք Լուգդունի և Անշարաթեանք, զի տօնս ինչ ոչ պահէին ։ Ոյք և դատապարտեցան յերրորդ ժողովն Լատերանու յամին 1179 ։

### ՊԵՏՐՈՍ ՅՈՎՀԱՆՆԵԱՆ ։

843. Ասէր՝ թէ կենդանի էր Քրիստոս 'ի խոցել կողիցն տիգաւ. ուրանայր թէ հոգին բանական իցէ տեսակ մարմնոյ. զեկեղեցին համարէր Բաբելոն յիշատակեալ 'ի Յայտնութեան, և զհայրապետն օրինակ Ներոնի. որ և

դատապարտեցաւ 'ի ժողովն Վիեննայի յամին 1311 :

## ԱԼԲԻԳԷՆՍՔ :

844 . Խռովարարք էին սոքա եկեղեցւոյ ոչ միայն մոլորութեամբ, այլ և զինուք . երկու արարիչս ասէին . զմին աներևութից՝ բարի աստուած և տէր Նոր կտակարանին, և զմիւսն երևելեացս՝ չար աստուած և տէր Հին կտակարանին: Զնահապետս դատապարտեալ ասէին, և զՅովհաննէս մի 'ի դիւաց : Յերկրի ծնեալ Քրիստոսն չար է ասէին, և բարի Քրիստոսն չև է ծնեալ մարմնով, այլ հոգեպէս բնակեալ 'ի Պօղոս, և յաներևոյթ երկրի ծնեալ, և խաչեալ : Զամենայն խորհուրդս մերժէին, և զամուսնացեալս անյոյս 'ի փրկութենէ ասէին: Ուրանային զյարութիւն, զդժոխս, զհրապատ մեռելոց, զյարգութիւն պատկերաց, կոչելով զեկեղեցին այր աւազակաց : Ոմանք 'ի նոցանէ ասէին՝ թէ բարի աստուածն ունէր երկուս կանայս և ծնաւ ուստերս և դստերս. այլք ասէին՝ թէ Քրիստոս ծնաւ և զգեաս : Սոքա զօրացեալ էին 'ի Գաղղիա, այլ ընջեցան 'ի զինուորաց, դատապարտեալ 'ի չորրորդ ժողովն Լատերանու յամին 1215 :

## ԴԱՐ ԺԴ

## ԳՈՒԼԻԵԼՄՈՍ :

845 : Էր վարդապետ փարիզեան . այլ ատելութեան ասէր՝ թէ չէ արժան ումեք հրաժարել յաշխարհէ, բայց այնմ՝ որում հարկ 'ի վերայ կայ :

ԴՈՒՐԱՆԴԵՐԻՈՍ :

846. *Էր ընդգործակցի, որ զնոյն աղանդ ուսոյց, և յաւել ևս՝ թէ չէ պարտ մնանել 'ի կրօնս այն՝ որ ոչ ունիցի հաստ ինչ:*

ՖՐԱՏԻՃԵԼԼԵԱՆՔ :

847. *Ասէին զեկեղեցին, և ուսուցանէին՝ թէ աղանդ իւրեանց իցէ անմիջապէս 'ի Քրիստոսէ իջեալ. և թէ գաղարեալ իցէ Նախագահութիւն Հռովմայ, և ինքեանք միայն իցեն Ճշմարիտ եկեղեցի և անպարտական հնազանդել ումեք: Որք և դատապարտեցան 'ի ժողովն Վիեննայի յամին 1311:*

ԴԱՐ ԺԴ

ԲԷԳՀԱՐԴԵԱՆՔ :

848. *Էին միայնակեացք, և Բեկուինեանք էին կուսանք՝ որք ասէին թէ հնար է մարդոյ լինել անմեղանչական աստ, և չէ պարտական պահել զպահս և ունել զշնորհս և լինել երանելի: Որքս ևս դատապարտեցան 'ի ժողովն Վիեննայի:*

ԼՈԼԼԱՐԴՈՍ ԳՈՒԱԼԹԷՐ :

849. *Ասէր լրբութեամբ՝ թէ Աստուած յանիրաւի դատապարտեաց զՍադայէլ. զի էակ էր նա գերագանց:*

ԳՐԻԳՈՐ ՊԱՂԱՄԱՍ :

850. *Էր սա յոյն ազգաւ եպիսկոպոս Թեսաղոնիկեայ. և ասէր՝ թէ բնութիւնն Աստու-*

ծոյ ոչ տեսանի յերանելեաց, այլ միայն լոյս ինչ զանազանեալ 'ի նմանէ. նա և դնէր զիրական զանազանութիւն 'ի մէջ էութեան և գործողութեանց Աստուծոյ: Դատապարտեցաւ 'ի Կոստանդնուպօլիս յամին 1350(1148):

Մարսիլիոս :

851. Էր 'ի Պատաւինէ, և ընդ Յովհաննու անդունացւոյ աղանդակցի իւրոյ ուսուցանէր՝ թէ սուրբն Պետրոս ոչ է գլուխ եկեղեցւոյ. նա և Քրիստոս զերկդրամեանն ետ հարկս իբրև պարտաւոր օրինաց: Որք և դատապարտեցան 'ի Յովհաննէ ԻԲ (1516):

Փլաճէլլանք :

852. Այսինքն են Ձաղկիչք. որք ասէին թէ ոչ ոք փրկի, եթէ ոչ նոքա, որք կարկամ չուանօք ձաղկելով մկրտին արեամբ: Ուրանային զխորհուրդս եկեղեցւոյ, և զքաւարան: Սոքա գեգերէին յԻտալիա և 'ի Գերմանիա (1518):

Յովհաննէս Վիկլէֆ :

853. Էր անգղիացի. և յամին 1372 յարոյց զմոլորութիւն իւր՝ թէ 'ի հաղորդութեան ոչ է ճշմարտիւ Քրիստոս. և հայհոյէր ևս՝ թէ Աստուած պարտական է հնազանդել սատանայի. թէ աղաչաւորութիւնն է աւելորդ, և մուրացիկ կրօնաւորք են հերետիկոսք. և թէ պապն չէ փոխանորդ Քրիստոսի, և այլ ևս: Սա դատապարտեցաւ 'ի ժողովն Կոստանդեան յամին 1413, և գրեանքն այրեցան (926):

ԴԱՐ ԺԵ

### Յովհաննէս Հուս :

854. Նշանաւոր Ուս. էր բոյեմիացի, որ զմո-լորութիւնս վերինոյն տարածեաց 'ի Բոյեմիա՝ ասե-լով թէ եկեղեցին միայն 'ի նախասահմանեալս է. հպատակութիւն առ եկեղեցին չէ յաս-տուածային իրաւանց. որինչ է եպիսկոպոսու-թիւն այնր, որ 'ի մեղս է : Զսա ընդ Հերոնի-մոսի բրակացւոյ եա 'ի հուր այրել Ժողովն Կոս-տանդեան յամին 1418 :

### Հուսեանք :

855. Էին հետեւողք վերինոյն. այլ ոմանք մոլորեալք զհետ Պիքարտոսի գաղղիացւոյ հա-ւատային նմա. որ ասէր զանձնէ թէ իցէ որդի Աստուծոյ եւ Ադամ :

### Հերմանոս :

856. Էր բատաւիացի 'ի Հոլանտիոյ. որ ասէր թէ հոգին մեռանի ընդ մարմնոյ, եւ չիք դժոխք: Զհաւատս եւ զաւետարանն կեղծիս համարէր, եւ զՔրիստոս յիմար ոք :

ԴԱՐ ԺԶ

### Մարտինոս Լութեր :

857. Կրօնաւոր էր Օգոստինեան սաքսոնիա-ցի, որ առ չարութեան սրտին ընդդէմ քա-հանայապետին Լեւոնի՝ ժայթքեաց զթոյնս

դաւանութեան. զի կամէր ինքն լինել մատակարար հրապարակելոյ զնորոգութիւնն 'ի Գերմանիա յամի 1517։ Ուսոյց գրեաց ընդդէմ Իշխանութեան պապին՝ անուանելով զնա Նեռն. հաւատովք միայն արդարանալ ասէր. և թէ մեղօքն Ադամայ բարձաւ անձնիշխանութիւն. 'ի հաղորդութեան միայ, ասէր, հացին գոյացութիւն։ Ուրացաւ զնորոգութեան զօրութիւն, ընդ նմին զքաւարան և զշնորհս խորհրդոց։ Մեղքն ոչ ջնջին ասէր։ Որ և դատապարտեցաւ 'ի ժողովն Տրիդենտեան յամին 1549։

### Անդրէաս։

858. Առաջին աշակերտ Լուտերի. որ 'ի քահանայութեան էառ կին, և միաբանեալ ընդ Զուինգլիոսի քարոզէր՝ թէ հաղորդութիւնն չէ մարմին Քրիստոսի, այլ նշանակ. և մերժէին զսուրբ պատկերս և զեկեղեցի։ Դատապարտեցան 'ի ժողովն Տրիդենտեան։

### Բաղթասար և Բէնարդոս։

859. Եղեն նորոգիչք աղանդոյ Կրկնակնունք անուանելոց. ասէին՝ թէ չէ պարտ զմանկունս մկրտել, և զմկրտեալս պարտ է կրկին մկրտել։

### Փիլիպպոս Մելանքթոն։

860. Աշակերտ էր Լուտերի, որ գրեաց զԱւգուստայ խոստովանութիւնն 'ի 1530. յորմէ Խոստովանականք կոչին հետևողքն, որք ասացին թէ մասունք ապաշխարութեան են երկու, երկիւղ խղճի և հաւատք. իսկ թողութիւն մեղաց լինի Քրիստոսիւ։

## ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱԼՎԻՆ ։

861 . Էր ժողովրդապետս գաղղիացի 'ի գիւղ ինչ 'ի Պիքարտիա՝ այր աշխոյժ, բայց ամբարտաւան և մոլի . մինչև մերժեալ յեպիսկոպոսէն վարեցաւ 'ի վիճակէ անտի՝ դրոշմեալ 'ի Ճակատն խարանաւ ։ Այս աշակերտեցաւ Զուինգլեայ . այլ անդէն մերժեալ զնա՝ հաստատեաց նոր աղանդ 'ի 1538 , թէ որդիք մկրտելոց արդար ծնանին. ընկալեալն շնորհ ոչ երբէք կորընչի . ամենայն հաւատացեալք են նախասահմանեալ , յորս միայն է եկեղեցի ։ Դարձեալ ասէր . Աստուած անվրէպ նախասահմանէ . ուստի ոչ կամի զամենեցուն փրկութիւն։ Նմին իրի ոմանք 'ի նոցանէ ասէին, թէ Աստուած յառաջ քան զսկզբնական մեղս մինչ էր մարդն 'ի դրախտի , սահմանեալ իցէ զոմանս 'ի կեանս և զոմանս 'ի կորուստ . վասն որոյ այսպիսիք կոչեցան ՍՈՒՊԷՐԼԱՓՍԱՐԷԱՆՔ ։ Իսկ այլք թէ յետ սկզբնական մեղաց նախասահմանէ զնոսա . ուստի կոչեցան ԻՆՖՐԱԼԱՓՍԱՐԷԱՆՔ ։ Ուրացաւ զքաւարան և զլինել սրբոց այժմ 'ի փառս , և այլն։ Դատապարտեցաւ 'ի ժողովն Տրիդենտեան (928) ։

## ՄԻՔԱՅԷԼ ՍԵՐՎԷՏՈՍ ։

862 . Բժիշկ էր սա սպանիացի , որ 'ի քսան և չորս ամի հասակին իւրոյ եցոյց զանձն թէ իցէ մարգարէ . ասաց՝ թէ չէր յԱստուած իրական ծնունդ և ոչ զանազանութիւն անձանց , և թէ չէ պարտ մկրտել նախ քան զերեսնամեայ հասակ ։ Սա մատնութեամբ Կալվինոյ այրեցաւ 'ի հուր 'ի Գենեւա ։

### Դաւիթ Գէորգ:

863. Էր 'ի Բատաւիոյ, որ ասէր զանձնէ թէ իցէ մեծ մարգարէ և որդի Աստուծոյ 'ի վեր քան զՔրիստոս: Ցեա մահուան իմոյ, ասէր, յառնելոց եմ զկնի երից ամաց և կանգնելոց եմ զԹագաւորութիւնն Իսրայէլի:

### Գասպար Շուէնքֆէլտոս:

864. Էր աղանդաւոր խոստովանական, և ասէր՝ թէ մարդկային բնութիւն Քրիստոսի յետ համբարձման փոխեցաւ յաստուածային. մերժէր զաւանդութիւն, և ասէր թէ հոգւով միայն պարտ է վարիլ:

### Անդրէաս Ոսիանդր:

865. Խոստովանական աղանդաւոր էր և սա, որ ուսուցանէր թէ սէր և արդարութիւն և իմաստութիւն են էութիւն Աստուծոյ. և թէ Քրիստոս արդարացուցանէ զմարդիկ աստուածային բնութեամբ ևեթ:

### Յովհաննէս Պրէնտիոս:

866. Նոյնպէս և սա ևս էր խոստովանական. և ուսուցանէր՝ թէ մարդկութիւնն Քրիստոսի 'ի մարդեղութեան եղև ամենայն ուրեք. յորմէ եղեն Ամենուրեքեան աղանդաւորք:

### Մատթիաս Փղակիոս:

867. Լիւրիկեցի էր սա, հայր կարդացեալ Լուտերականաց և գլուխ հարիւրորդական պատմագրութեան Մագդեբուրգայ. որ ասէր՝ թէ սկզբնական մեղքն է գոյացութիւն:

### Ազատականք:

868. Էին աղանդաւորք հետեւողք Կուինտինոսի, որք ուսուցանէին թէ առ երեսս օրէն է փոխել զճշմարտութիւն և հաղորդել ընդ ամենեցուն. և առաջօք առնէին զՔրիստոս: Մի միայն հոգի անմահ կայ, ասէին. իսկ հրեշտակք և հոգիք մարդկան են մահկանացու:

### Վալէնտինոս:

869. Էր կոնսենտացի, որ ՚ի 1537 ուսուցանէր զաղանդն Արիոսի՝ և զերիս անձինս երիս յաւիտենական գոյացութիւնս էական թուով տարբերեալ, զՀայր մեծ առնէր: Այլ ՚ի ժամ գլխատման ՚ի Նորաղանդից առէր պարծելով թէ ես քան զմարտիրոսս առաւել եմ. զի նոքա ՚ի փառս Որդւոյ մեռան, ես ՚ի փառս Հօր մեռանիմ:

### Ֆրանկիսկոս Դաւիթ:

870. Հայհոյէր սա՝ թէ Հայր միայն է ճշմարիտ Աստուած. իսկ Որդի և Հոգի զօրութիւնք Աստուծոյ: Հետեւողք սորա զՔրիստոս լոկ մարդ ասացին, իբր պատմող զԱստուծոյ, յորմէ կոչի բան:

### Սոկինեանք:

871. Էին կալվինեան աղանդաւորք իբր նոր Արիոսեանք. որոց գլուխ եղև Սոկինոս և եղբօրորդի նորա Փաւստոս Սենացիք. որք ուրացան զխորհուրդ Երրորդութեան և մարդեղութեան, եւ և զսկզբնական արդարութիւն մարդոյ: Այս աղանդ տարածեցաւ ՚ի Գերմանիա և այլուր:

### Միքայէլ Բայոս:

872. Էր 'ի Մեքլին քաղաքէ Բելգիոյ՝ այր գիտնաւոր, բայց մոլորեցաւ 'ի վերայ ներելի և սկզբնական և ներգործական մեղաց, և 'ի վերայ պատուիրանացն Աստուծոյ. և զամենայն մոլար վարդապետութիւնս իւր թուով եօթանասուն և ինն, զորս հերքեաց Պիոս Ե, և նա ևս յետս կոչեաց և մեռաւ 'ի 1589:

### Քուակէրք:

873. Աղանդաւորքս այսոքիկ երևեցան յԱնգղիա 'ի 1655 ամին, որոց գլուխ էր Յակոբ Նայլըր. ուսուցին թէ չէ օրէն ումեք լինել իշխան, այլ ամենեցուն լինել հաւասար. և թէ պարտ է բառնալ զամենայն քաղաքական իրաւունս: Ասէին ևս՝ թէ ամենայն ոք ունի զլոյս առ 'ի զսուրբ գիրսն իմանալոյ. Նմին իրի մերժէին զմկրտութիւնս և զբանս վարդապետաց:

### Նախադամեանք:

874. Ի քաղաքին Փարիզացւոց երևեցան աղանդաւորքս յամին 1655, որք ասէին թէ գոյր այլ Ադամ և այլ մարդիկ նախ քան զԱդամ:

### Բենեդիկտոս Սպինոզա:

875. Սպանիացի ազգաւ այր անաստուած՝ 'ի Հրէից անտի Ամստրդամ քաղաքի. որ ջանայր եղծանել զամենայն կրօնս, իբր օրէնս ինչ քաղաքական. անարգէր զմարգարէութիւնս, և ասէր թէ Աստուած չէ յանսահմանս կատարեալ, և թէ նիւթն է Աստուած: Սա երևեցաւ 'ի Հոլանտիա յամին 1677:

### Միքայէլ Մոլինա :

876. Էր երէց սպանիացի, և ուսուցանէր թէ պարտ է մարդոյ կալ յանդորր վիճակի՝ և չունել ինչ փոյթ զլուցկելոյ ցանկութեան: Նախ 'ի Հռոմ ներմանեաց զմոլորութիւն իւր. արկաւ 'ի բանտ, և անդ մեռաւ վաթսնամեայ: Գտան սորա բազմապատիկ գրուածք. յորս ուսուցանէր անօգուտ լինել աղօթից և ճգանց առ 'ի ընդդէմ կալ փորձութեանց, և այլն:

### Կոռնելիոս Յանսենիոս :

877. Եպիսկոպոս էր Իպրիոյ, այր խորամիտ և գիտուն. որոյ բազում են գովելի բանք. այլ 'ի գիրքն Օգոստինոս մակագրեալ՝ հինգ նախադասութիւնք նորին դատապարտեցան յԻննովկենտիոսէ Ժ. որք են նախ՝ թէ 'ի պատուիրանս Աստուծոյ են ինչ ինչ անկարելիք, և չիք շնորհ այնպիսի՝ որով լիցին նոքին կարելիք: Երկրորդ՝ ներքին շնորհաց ոչ երբէք լինի հակառակ կալ 'ի վիճակի յանցուցեալ բնութեանս: Երրորդ՝ առ 'ի փրկութիւն և կամ առ 'ի դատապարտութիւն ոչ պահանջի 'ի մարդն յանցուցեալ բնութեան ազատութիւն 'ի հարկէ, այլ շատ է ազատութիւն 'ի բռնութենէ: Չորրորդ՝ Կիսապելագեանք դնէին զհարկ նախաժաման շնորհաց առ իւրաքանչիւր ներգործութիւնս, և առ սկիզբն հաւատոյ. և յայսմ էին հերետիկոս, զի դնէին զայն շնորհս այնպիսի լինել, որում կարող է մարդ ընդդէմ կալ կամ հաւանել: Հինգերորդ՝ Կիսապելագեանց է ասել՝ թէ Քրիստոս մեռաւ վասն ամենայն մարդկան (1558):

Կուէսնէլեանք :

878. Էին աղանդաւորք հետևողք Կուէսնելոսի երիցու ՚ի կարգէ աղօթականաց վարդապետի Սորբոնեան, որ գրեաց գիրս բարոյականաց. յորում են մոլորական բանք հարիւր և մի թուով, զորս դատապարտեաց Կղեմէս ԺԱ. զի պարունակէին զմոլորութիւնս Յանսենիոսի, Կալվինոյ, Լութերի և այլոց (1565) :

ԴԱՐ ԺԸ

Փրամասոնք :

879. Էին գաղտնածածուկ աղանդաւորք, որք ժողովեալ ՚ի թագուն և ՚ի մթին վայրս՝ ընդունէին զայլս յընկերութիւն իւրեանց երկիւղալից արարողութեամբք և զարհուրելի երդմամբք առ ՚ի թագուն պահելոյ զաղանդս իւրեանց և զխորհուրդս: Արտաքուստ ձեւանային եղբայրասէր և բարեպաշտ. այլ գործ նոցա յայտնի արար՝ թէ են անկրօն ընդդէմ եկեղեցւոյ և թագաւորաց: Նմին իրի յամենայն վայրաց մերժեցին զնոսա :

Վոլթէռ :

880. Էր գաղղիացի այր խորամիտ և վայելչախօս, այլ բաց մեծի մասին վայրաբան և ծաղրածու. զի ՚ի գրուածս իւր զգեղեցիկ իմաստս և բանս ՚ի կատակական վարէ ընդդէմ Աստուծոյ և կրօնի. որով թունաւորեալ զմիտս բազմաց՝ ուսոյց զանաստուածութիւն և վեր ՚ի վայր տապալեաց զԵւրոպա, մանաւանդ զԳաղղիա :

Ռուսաց ։

881 . Էր գաղղիացի հետեւող վերնոյն ընդ այլոց բազմաց, որք ջանացին բառնալ զկրօն և զեկեղեցի՝ ուսումնական գրուածովք իւրեանց. յորս գոն խորամիտ բանք և հանճար, այլ և սկզբամբք անաստուածութեան, ուստի հերքեցան յաջողմամբ և խափանեցան չարին ծնունդք։

ԴԱՐ ԺԹ

Ֆրանմասոնք ։

882 . Էն աղանդաւորք ժամանակիս այլք անկրօնք մնացորդք Ֆրանմասոնից, որք բազում խռովութիւնս յարուցին 'ի Սպանիա և յԻտալիա 'ի վերջին ժամանակս։ Սոքա ջանան բառնալ 'ի կենաց զմեծամեծս յեկեղեցականաց և 'ի թագաւորաց. և ունին զծածուկ միաբանութիւն ընդդէմ եկեղեցւոյ և տէրութեանց աշխարհի. զորս դատապարտեաց ընդ վերնոց Պիոս Է. քահանայապետ (1573)։

ԳԼՈՒԽ Գ

Վարդապետք եկեղեցւոյ ։

883 . Տեսաք ցայս վայր զխուժան հերձուածողաց մոլելոց և զառ 'ի նոյանէ զթոյնս մոլորութեան 'ի վրդովել զեկեղեցի Քրիստոսի. տեսցուք արդ և զդասս վարդապետաց զհզօր ախոյեանս նորին եկեղեցւոյ ընդդէմ չարքշելոյն այնոցիկ մարտ տուեալ։ Թոյլ ես նոյա

Աստուած ըստ չափու թեան իւրեանց սահմանել և զօրանալ, տեսիլ եղեալ աշխարհի՝ թէ ցոր վայր յանդգնիցի մարդ մերձել յայն կալ՝ մաքառել ընդդէմ ճշմարտութեան ։ Յարոյց և զասա, զի տեսցէ աշխարհ թէ չէ զօրութեան մարդոյ և ոչ բռնութեան դժոխոց հաւասարել կամ յաղթել ճշմարտութեան եկեղեցւոյ, որոյ հիմն է ինքն Քրիստոս, և ըստ նմանէ կարգեալ անսայթաք առաջնորդք յեկեղեցւոջ առաքեալք, մարգարէք, վարդապետք և այլն ևս, զոր կարգ ըստ կարգէ թուէ առաքեալ [1] ։

884 · Արդ քանզի եկեղեցին Քրիստոսի առաջնորդի 'ի Հոգւոյն սրբոյ 'ի ձեռն սրբոց հարց և վարդապետաց, զհետ գայ եթէ զօրութիւն բանից նոցա երբ միաձայն են ամենեքեան՝ է նոյն ընդ աստուածային աւանդութեան և անսխալ կանոն հաւատոյ հանդէպ սուրբ գրոց. յորս հիմնի բան նոցա ։ Այս է զոր ասէ սուրբ Լուսաւորիչն մեր. «Վկայութիւնք լաւութեանն... 'ի վարդապետութիւն Հոգւոյն սըրբոյ, որ 'ի ձեռն մարգարէից և առաքելոց և վարդապետաց գրով աւանդեցին մեզ... Օրէնադրեցաւ 'ի մարգարէիցն և յառաքելոցն և 'ի սուրբ հարց մերձաւորացն Աստուծոյ» [2] ։ Ապա որ ոք խոտորի 'ի շաւղաց հարց և վարդապետաց, 'ի հարկէ և մոլորի. որպէս եղեն ամենայն հերետիկոսք և աղանդաւորք 'ի սկզբանէ և այսր ։

885 · Արդ ամենայն վարդապետք և աստուածաբանք, որք հետևին առաքելոց Քրիստոսի, են իշխանք եկեղեցւոյ՝ հարք աւանդապահք և հաստատիչք սուրբ հաւատոյ. որովք Քրիստոս զօրացուցանէ զեկեղեցի իւր անպա-

1 Ա · Կոր · ԺԲ · 28 ։
2 Յաճախ · Ճառ · Է · Ը ։

կաս մինչև ցկատարած աշխարհի: Ըստ այսմ խորհրդաբանէ Լամբրոնացին. «Քրիստոս արկ զխորհրդապետութիւն իւր յարգանդ մօրս եկեղեցւոյ իւրոյ սրբոյ, և ծնաւ 'ի նմանէ որդեգրազունս և հասակս զանազանս, զդասս հարցն և հայրապետացն և մարտիրոսաց և Ճգնաւորաց, արդարոց և սրբոց: Եւ որպէս մայրն յետ ծնանելոյ զորդին՝ առ 'ի կատարելութիւն սնուցանէ զնոսա, ըստ այսմ և սորին մշտաբուղխ եկեղեցւոյ միշտ դիեցուցանէ, մինչ հասուցանէ զամենեսեան յայր կատարեալ 'ի չափ հասակի կատարման Քրիստոսի» [1]:

886. Արդ բուն իսկ վարդապետք եկեղեցւոյ սոքին այնոքիկ 'ի հարց, որք առաւելեալ իցեն գրաւորական արդեամբք քան զայլս, սրբութեամբ և հնութեամբ. որպիսիք են երկոտասանեքին սոքա. Դիոնեսիոս, Յերոթէոս, Սեղբեստրոս, Աթանաս, Կիւրեղ Երուսաղեմացի, Եփրեմ, Բարսեղ, Գրիգոր Նիւսացի, Գրիգոր աստուածաբան, Եպիփան, Ոսկեբերան և Կիւրեղ աղեքսանդրացի: Եւս և մեծն Գրիգոր, Օգոստինոս, Ամբրոսիոս և Հերոնիմոս: Եւ առ մեզ, Լուսաւորիչն, Յակոբ Մծբնայ հայրապետ, Սահակ պարթև, Մեսրովպ, Նարեկացի, Շնորհալի և Լամբրոնացի:

887. Բայց ընդհանուր աւանդութեամբ մտածեալ, ոչ միայն նոքա զոր ասացաք, այլ և այլք բազումք 'ի հարց անուանին վարդապետք եկեղեցւոյ, որոց ջատագով լեալ իցէ ուղղափառ վարդապետութեան եթէ գրաւոր վաստակովք, և եթէ անգիր վարդապետութեամբ վաստակեալ որ և իցէ օրինակաւ 'ի գործ մղորելոյ. Թէպէտ և ամանց 'ի նոցանէ չիցէ սրբու-

1 Խորհրդ. պր. ծ:

թեան անուամբ պատուեալ։ Արդ զատս և զօրս 'ի վերոյ ասղեցաք, թէպէտ ոմանք յեկեղեցական մատենագրաց այլևայլ օրինակաւ յառաջ բերեն, ոմանց ճշդելով և այլոց կարի խիտ յաճախելով զթիւ անուանցն, և ոմանց յայլ և այլ կարգս վերածելով զնոսա, այլ մեք զմիջինն կալեալ շաւիղ՝ քանզի զընթերցողսն մեր փոքր մի հմուտ կամիմք առնել նոյին կարգացն և ոչ կատարեալ աստուածաբանս, զամենայն յիշատակելին մեր միահաղոյն կարգեմք աստանօր ըստ իւրաքանչիւր դարուց յորս ծաղկեցան նոքա։ Արդ յառաջնում դարուն յարեաւ Սուրբ Կղեմէս, Ս. Դիոնեսիոս արիսպագացին, Ս. Յաւթէոս և Ս. Իգնատիոս։ Յերկրորդ դարու Ս. Յուստինոս, Ս. Պօղիկարպոս, Ս. Երանոս, և Աթենագորաս։

888. Յերրորդ դարու Տերտուղիանոս, Մինուկիոս Փելիքս, Ս. Կղեմէս աղեքսանդրացի և աշակերտ նորա Որոգինէս, և սորա աշակերտ՝ Ս. Գրիգոր սքանչելագործ, Ս. Կիպրիանոս, Ս. Դիոնեսիոս աղեքսանդրացի։ Առաջին գրութիւնք Տերտուղիանոսի և Որոգինեայ ջատագովութիւն էին ճշմարտութեան ընդդէմ մոլորելոց. այլ յետոյ շեղեցան ինքեանք 'ի մոլար կարծիս, որպէս ասացաք (778)։

889. Ի չորրորդ դարու Եւսեբիոս եպիսկոպոս Կեսարիոյ, Արնոբիոս, Լակտանտիոս, Ս. Աթանաս պատրիարք Աղեքսանդրիոյ. Ս. Գրիգոր լուսաւորիչն մեր, Ս. Յակոբ Մծբնայ հայրապետ, Ս. Եփրեմ, Ս. Իլարիոս եպիսկոպոս, Ս. Ոպտատոս եպիսկոպոս Միլեվիոյ յԱփրիկէ, Ս. Կիւրեղ եպիսկոպոս Երուսաղէմի, Ս. Բարսեղ հայրապետ Կեսարիոյ, և եղբայր նորա, Ս. Գրիգոր Նիւսացի, Ս. Գրիգոր աստուածաբան, Ս. Եպիփան, Պրուդենտիոս, Ս.

Ամբրոսիոս և Ս. Հերոնիմոս։ Եւ 'ի հայրապետաց մերոց որդիք և Թոռունք Լուսաւորչին, Ս. Արիստակէս, Ս. Վրթանէս, Ս. Յուսիկ, Ս. Գրիգորիս և մեծն Ներսէս։

890. Ի հինգերորդ դարու Ս. Յովհան Ոսկեբերան, Սեբերիանոս եմեսացի, Ս. Օգոստինոս, Ս. Մաքսիմոս, Սեւերոս Սուլպիկիոս, Ս. Պաւլինոս եպիսկոպոս Նոլայի, Ս. Սահակ պարթև և Ս. Մեսրովպ, և յաշակերտաց նոցա, Ս. Եղիշէ, Ս. Մովսէս խորենացի, Ս. Դաւիթ անյաղթ, Գիւտ հայրապետ, Յովհան մանդակունի հայրապետ և այլք։ Դարձեալ 'ի նմին դարու ծաղկեցան Ս. Կիւրեղ աղեքսանդրացի, Թէոդորետոս, Ս. Պրոկղ եպիսկոպոս Կոստանդինուպօլսոյ, Կասիանոս, Ս. Եւքերիոս եպիսկոպոս Լիոնի, Վինչենցիոս երէց, Խափիգորոս, Ս. Լեւոն մեծ քահանայապետ, Ս. Սիմէոն սիւնակեաց, Ս. Պրոսպերոս ագուիտանացի, Ս. Իղաբիոն եպիսկոպոս Արելատայ, Ս. Պետրոս ոսկեբան, Սաղուիանոս երէց Մարսիլիոյ, Ս. Գելասիոս քահանայապետ, Ս. Հաւեմիկիոս եպիսկոպոս Հաւեննայ, և Գեննադիոս։

891. Ի վեցերորդ դարու Ս. Փուլգենտիոս ափրիկեցի եպիսկոպոս Հռուսպայ, Բոյեսիոս, Ս. Բենեդիկտոս աբբայ, Կասիոդորոս, Ս. Գրիգոր տուրոնեցի, և Ս. Յովհաննէս Կլիմաքոս։

892. Յեօթներորդ դարու մեծն Գրիգոր սուրբ քահանայապետ, Ս. Իսիդորոս եպիսկոպոս Սիւիլլիոյ, Ս. Մաքսիմոս աբբայ, Անանիա վարդապետ, Թէոդորոս վարդապետ Քռթենաւոր, և Գրիգոր եպիսկոպոս Արշարունեաց։

893. Յութերորդ դարու Բեդա պատուական քահանայ, Ս. Գերմանոս պատրիարգ Կոստանդնուպօլսոյ, Ս. Յովհան դամասկացի.

Ստեփաննոս սիւնեցի · Յովհան իմաստասէր, Մաշտոց վարդապետ, և այլք ։

894 · Յիններորդ դարու Ս· Նիկեփորոս եպիսկոպոս Կոստանդինուպօլսոյ, Զաքարիա կաթողիկոս, Համամ վարդապետ, Ինգմարոս եպիսկոպոս Հռեմսայ, Ամաղոս եպիսկոպոս Լիոնի, Անաստասիոս գրապետ, Փոտ եպիսկոպոս, Նիտարդոս, Պասքասիոս աբբայ Կորբիոյ, Սիմէոն Մետափրաստէս ։

895 · Ի տասներորդ դարու Լևոն կայսր իմաստասէր քաջ գրեաց առ ամիրապետն Արաբացւոց ընդդէմ աղանդոյ նորա, Ս· Ոդոն աբբայ Գլունիոյ, Անանիա վարդապետ Նարեկացի, որ գրեաց ընդդէմ Թոնդրակեցւոց · Մեծն Խոսրով եպիսկոպոս Անձևացի, և որդի նորա Ս· Գրիգոր Նարեկացի ։

896 · Ի մետասաներորդ դարու Ս· Փուլբերտոս եպիսկոպոս Կարթուսիոյ, Ս· Ոդիլոն աբբայ Գլունիոյ, Պետրոս Դամիանոս, Լանփրանկոս, Պետրոս Գետադարձ կաթողիկոս, Գրիգոր Վկայասէր, Ստեփանոս վարդապետ Երանաշնորհ ։

897 · Յերկոտասաներորդ դարու Ս· Նորբերտոս, Ս· Բեռնարդոս, Սարկաւագ վարդապետ, Ս· Գրիգոր Պահլաւունի, Ս· Ներսէս Շնորհալի, Սարգիս վարդապետ մեկնիչ, Իգնատիոս վարդապետ մեկնիչ, Ս· Ներսէս Լամբրոնացի ։ Նա և Ռուպերտոս, Ուգոն, Ռիքարդոս, Պետրոս Կղունիացի, Գրատիանոս կրօնաւոր, Գէորգ վարդապետ ։ Ի սմին ժամանակի Պետրոս Լոմբարդոս եպիսկոպոս Փարիզու արար հաւաքումն աստուածաբանական վճռոց · որով և կոչեցաւ վարդապետ վճռոց ։

898 · Յերեքտասաներորդ դարու Ինոկենտիոս Գ· քահանայապետ, Ս· Փրանչիսկոս աս-

սիզայի, Ս. Անտոն 'ի Պատաւինէ, Գուլիէլ-
մոս, Ս. Դոմինիկոս, Վինչենցիոս բելլովացե-
ցի, մեծն Ալպերտ 'ի Կողոնիա, Գրիգոր սկեւռա-
ցի, Վանական վարդապետ, մեծն Վարդան,
Յովհաննէս երզնկայի:

899. Ի չորեքտասաներորդ դարու Սկոտ, Ս.
Անտոնինոս, Դուրանդոս, Ոքամոս, Պետրարքա:

900. Ի հնգետասաներորդ դարու Ս. Վին-
չենցիոս Ֆերրերեան, Յովհաննէս Գերսոն ա-
տուածաբան, Տոստատոս մեկնիչ, Դիոնեսիոս
Կարթուսեան, Ս. Լաւրենտիոս Յուստինեան,
Թովմա գեմբացի, Ս. Բեռնարդոս սենացի:

901. Ի վեշտասաներորդ դարու Եգիոս Ճըլ-
խահար Լուտերի, Ս. Ֆրանչիսկոս Քսաւե-
րեան, Ս. Իգնատիոս հիմնադիր Յիսուսեանց,
Կարոլոս կարդինալ, Գրիգոր քաջանայապետ,
Միքայէլ կաթողիկոս, Բարոնիոս կարդինալ,
և այլ բազում աստուածաբան վարդապետք
յայլեայլ կարգաց և կրօնաւորք ջատագովք
Ճշմարտութեան և գլխաւորք հերետիկոսաց:

902. Յեօթնուտասներորդ դարու Ս. Ֆրան-
չիսկոս Սալեզեան եպիսկոպոս, Սուարեզ,
Կոռնելիոս Ալափիտէ. Աղէքսանդր Նատալիս:
Յարեան առ Գաղղիայիս և այլ արք առաքելա-
նմանք և մեծ ստրատաղէնք ընդդէմ նորաղանդից
ժամանակին, յորս հռչակաւոր է մեծն Պոսիւէ:

903. Յութուտասներորդ և յիննետասնե-
րորդ դարու զօրացան ընկերութիւնք աստուա-
ծաբանից 'ի Գաղղիա և 'ի Հռոմ: Նա և ելին
երևելի և խորիմաստ աստուածաբանք յայլե-
այլ խմբէ կրօնաւորաց, որք 'ի հաստատութիւն
սրբոյ եկեղեցւոյ գլխաւոր եղեն մոլորելոց զօ-
րաւոր բանիւք և ողջամիտ վարդապետութեամբ:
Յորում ժամանակի և 'ի մերում ազգիս յա-
րեաւ մեծն Մխիթար աբբայ սեբաստացի:

904. Արդ սոքա ամենեքեան ըստ բանին տեառն լոյս են աշխարհի աստուածիմաստ վարդապետութեամբ և անքուն զգօնութեամբ պահպանելով զհաւատացեալս յապականութենէ մոլորութեանց։ Նմին իրի վեցերորդ ընդհանուր ժողովն ընդ Տրիդենտոնի ժողովոյն հրամայէ հաւատացելոց չխոտորել բնաւ 'ի շաւղաց հարց և վարդապետաց եկեղեցւոյ։ « Եւ այսպէս, ասէ Լամբրոնացին, միշտ 'ի Քրիստոսէ իջեալ յեկեղեցի իւր շնորհք Հոգւոյն՝ յայտնէ բնաւին զխորս խորհրդոց նորա ըստ Առաքելոյն, այլ մեզ յայտնեաց Աստուած Հոգւովն իւրով. զի Հոգին զամենայն քննէ և զխորս Աստուծոյ։ Յայսմ Հոգւոյ լուսաւորեալ մարգարէքն և առաքեալքն և վարդապետք եկեղեցւոյ հարքն զայս խորհրդոյ զօրութիւն ետուն մեզ յիւրաքանչիւր բանս » [1]։

## ԳԼՈՒԽ Դ

### Ժողովք ։

905. Յանհաստատութենէ մտաց և 'ի փառասիրութենէ զհետ գան ազգի ազգի վէճք և աղմուկք 'ի մարդիկ, և այն մանաւանդ յեկեղեցւոջ 'ի բանս հաւատոյ, ձգելով իւրաքանչիւր զսուրբ գիրն յիւր կողմն այլ և այլ մեկնաբանութեամբք։ Սորին վասն աստուածայինն նախախնամութիւն շնորհեաց եկեղեցւոյ գերագոյն իշխանութիւն՝ օրինաւոր ժողով առնել և վճռաւ որոշել զամենայն երկբայութիւն և զվէճ 'ի վարդապետութեան հաւատոյ 'ի ձեռն

1 Խորհրդած. պր. ա.։

*տուաւչնորդաց հայրապետացն սրբոց ։ Քանզի ըստ Նամբրոնացւոյն՝ « Ցայժմ հոգեորական իշխանութեանս ածու սուրբ եկեղեցի նախապատիւ. և փոխանակ Աստուծոյ է եպիսկոպոսն »[1] ։*

906 . *Զի թէ չէր յեկեղեցւոջ գերագոյն իշխանութիւնս այս ընդհանուր, ապա իւրաքանչիւր առանձին չունելով իրաւունս դատաստան ժողովով եւեթ որոշել երևելի ինչ խնդիր հաւատոյ, հաւատացելոցն միջ յոր յերկրի կային տատանեալ յանստուգութեան։ Յորմէ և չէր մարթ մնալ միութեան հաւատոյ, որ է յօդ միաւորիչ անդամոց ընդ գլխոյն . և ոչ իսկ յարատևէր եկեղեցին ըստ խոստմանն Քրիստոսի մինչև 'ի կատարած աշխարհի ։*

907 . *Սոյին աղագաւ յորժամ 'ի սկզբան անդ անկաւ տարաձայնութիւն 'ի մէջ նորընծայ քրիստոնէից յաղագս պահպանութեան ծիսից ինչ հին օրինաց, ամփոփեցան առաքեալքն ժողով գումարել և որոշել 'ի ժողովի անդ զվէճըն, որպէս և եղև իսկ ։ Նոյն այն եղև սկիզբն և օրինակ հետևեալ ժողովոց, որք գումարեցան հետզհետէ՝ եթէ գաւառականք սակս մասնաւոր ազգաց և իրաց, և եթէ տիեզերականք կամ ընդհանուրք առ 'ի վճարել և որոշել զխնդիրս վերաբերեալս առ բան հաւատոյ, կամ առ 'ի հաստատել զկարգապետութիւնս և զկանոնս ընդհանուր եկեղեցւոյ ։*

908 . *Նմին իրի մեծն Գրիգոր սուրբ քահանայապետ խօսելով յաղագս առաջին քառեակ ժողովոց յարէ . « Հարկ է այնչափ յարգել զայնս, որչափ յարգեմք զչորս աւետարանս » ։ Իբրև զի ընդհանուր ժողովն է եկեղեցի հաւաքեալ և օրինաւոր համախմբութիւն եպիս-*

1 Խորհրդ . գր . Է ։

կաղապաց, որք են իշխանք և հովիւք եկեղեցւոյ. որոց և անկ է տեսանել և որոշել զամենայն դատ եկեղեցական ընդդէմ մոլորելոց 'ի ճշմարտութենէ, և խոտորելոց 'ի բարեկարգութենէ վարուց և սպասաւորաց եկեղեցւոյ: Նորին աղագաւ վճիռք ժողովոց կամ սահման հաւատոյ են և կամ կանոն բարեկարգութեան, յորոց բաղկանան գիրք կանոնաց և խրատուց. ուստի և համազօր աստուածային աւանդութեան:

909. Արդ 'ի բաց առեալ զԹեմական, ըզգաւառական և զազգային ժողովս, որք են մասնաւորք որպէս տեսցի (997). բուն ընդհանուր սուրբ ժողովք հաշուին թուով 18 ենթ. յորոց ութ կոչին արևելեան՝ վասն գումարելոյ յարևելս, և տասն արևմտեան՝ վասն գումարելոյն յարևմուտս: Այլ գլուխ ամենեցուն է ժողովն առաքելոց, ուր ժողովեալ էին հիմունք եկեղեցւոյ ընդ Հոգւով սրբով նախագահութեամբ Պետրոսի վիմին և աթոռակցութեամբ առաքելակցաց. որք և սահմանեցին զհանգամանսն հաւատոյ: Որոց հետևեցան յայլ և այլ ժամանակս և հետևեալ ժողովք (659):

### ՅՕԴՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

### Ընդհանուր ժողովք:

### Նիկիոյ Ա.

910. Ժողովս այս գումարեցաւ 'ի Նիկիա քաղաք Բիւթանիոյ առ Սեղբեստրոսիւ Հռովմայ հայրապետաւ յերեքհարիւր ութուտասան հայրապետաց յամին 325. Նպաստաւորութ կայսեր մեծին Կոստանդիանոսի, ընդդէմ Արիոսի ուրացողի զաստուածութիւն Քրիստոսի (789):

Ցորում դատապարտեցաւ նա ինքն Արիոս, և հաստատեցան կանոնք ուղղափառ հաւատոյ. Ճոխացաւ հանգանակն առաքելոց, և որոշեցաւ ժամանակ տօնախմբութեան զատկի ընդդէմ Չորեքտասանեայց (775)։ Նախագահ ժողովյն էր փոխանորդ սրբոյն Սեղբեստրոսի Ոսիոս եպիսկոպոս Կորդուայ Սպանիոյ ընդ կրկին երիցանց, որք և ստորագրեցին սահմանաց ժողովյն։ Բայց և ինքն Սեղբեստրոս զկնի մասնաւոր ժողով արարեալ 'ի Հռովմ, հաստատեաց զսահմանս Նիկիոյ, պատուէր տուեալ ամենայն քրիստոնէից հեռանալ վարդապետութեան նորա։ Իսկ Արիոս զկնի դատապարտելոյն աստանդեցաւ 'ի գարշելին։ Ի նպաստ այսր ժողովոյ գումարեցան 'ի Սարդիկէ երեքհարիւր եօթանասունևվեց հայրապետք յամին 347, և սահմանեցին կանոնս քսան և մի։ Ի ժողովն Նիկիոյ առաքեցաւ 'ի Լուսաւորչէն մերմէ կրսեր որդի իւր Ս. Արիստակէս. որ իբրև եբեր 'ի Հայս զսահմանս հաւատոյ, ժողովով ընկալան (929)։ Նոյնպէս եղեն այլևայլ մասնաւոր ժողովք 'ի զանազան տեղիս 'ի պատճառս Կխարիանանց (793)։ Թող զժողովակս աղանդաւորաց, որք արարին յայնժամ 'ի ցրել զկանոնս սուրբ ժողովյն Նիկիոյ։

Կոստանդնուպօլսոյ Ա.

911. Գումարեցաւ 'ի հարիւր և յիսուն հայրապետաց առ ժամանակօք Դամասոսի քահանայապետին Հռովմայ և Մեծին Թէոդոսի յամին 381. ընդդէմ Մակեդոնի ուրացողի զաստուածութիւն Հոգւոյն սրբոյ (796). յաւելին հայրք ժողովյն բացայայտութիւնս 'ի հանգանակն Նիկիոյ. դատապարտեալ զՄակեդոն և զՀա-ղորամեայս (747)։ Ընդ ներկայ դասու սուրբ

հայրապետն մեր Մեծն Ներսէս 'ի կողմանէ Հայոց : Զկնի այսր ժողովոյ իբր յամի 416 եղեն յԱփրիկէ գաւառական ժողովք 'ի Կարթագինէ և 'ի Միլեւիա. յորս դատապարտեցան մոլորութիւնք Պեղագեայ (808), և ուր սուրբն Օգոստինոս քաջ ջատագով եղև ճշմարտութեան:

ԵՓԵՍՈՍԻ :

912. Գումարեցաւ ժողովս յերկու հարիւր հայրապետաց առ ժամանակօք Կեղեստինոսի Հռովմայ հայրապետի և փոքուն Թէոդոսի յամին 431, ընդդէմ Նեստորի (812): Ուր նախագահ էր սուրբ Կիւրեղ Աղեքսանդրացի 'ի կողմանէ պապին ընդ երից դեսպանաց նորա: Անդանօր դատապարտեցաւ Նեստոր. որ և բազումս հնարեցաւ խոչընդոտն լինել սուրբ ժողովոյն 'ի ձեռն արքունեկաց իւրոց պատրելով զկայսրն ընդ բազմաց և զրպարտելով զսուրբն Կիւրեղ իբրև մոլորեալ: Սակայն յաղթանակեաց ճշմարտութիւն սուրբ հաւատոյ, և ինքն որդնալից սատակեցաւ յաքսորս: Կայսրն առաքեաց դեսպան առ սուրբն Օգոստինոս՝ գալ յայս ժողով. այլ նա 'ի նմին ժամանակի վախճանեցաւ: Գտան անդ աշակերտք Թարգմանչաց մերոց Ղեւոնդ երէց. Յովհան եկեղեցացի. Յովսէփ պաղնացի, Արձան, Եզնիկ և Կորիւն:

ՔԱՂԿԵԴՈՆԻ :

913. Գումարեցաւ 'ի վեց հարիւր երեսուն և վեց հայրապետաց առ մեծ քահանայապետաւն Լեւոնիւ, և Մարկիանոսիւ կայսերաւ յամին 451, ընդդէմ Եւտիքի դատապարտելոյ 'ի Փլաբիանոսէ պատրիարգէ Թեմական ժողովով: Այլ 'ի բռնանալ նորա թեւակցութեամբ Դէոսկորոսի և այլոց կուսակցաց, առնելով չարա-

ժողով յԵփեսոս ընդդէմ ուղղափառաց, դարձեալ դատապարտեցաւ 'ի նոյն ժողով անեղրական ընդ համախոհս իւր։ Ուր նախագահ էին դեսպանք քահանայապետին Հռոմայ. այլ 'ի Հայոց ոչ ոք գտաւ անդ 'ի պատճառս հալածանաց Յազկերտի և նահատակութեան Վարդանանց։

### Կոստանդնուպօլսոյ Բ.

914. Գումարեցաւ 'ի հարիւր վաթսուն և հինգ կամ բատ ոմանց յերկերիւր և ութսուն հայրապետաց առ Վիգիլեաւ քահանայապետիւ և Յուստինիանոսիւ կայսերաւ յամին 553 ընդդէմ Երից գլխոյ. այսինքն նախ՝ ջատագովաց գրոց և անձանց Թէոդորոսի եպիսկոպոսի Մամսուեստացւոյ, և վարդապետի նորա Դիոդորի Տարսոնացւոյ (824). երկրորդ՝ ջատագովաց բանից Թէոդորետոսի եպիսկոպոսի աշակերտակցին Նեստորի, և Իբասայ եպիսկոպոսին Եփեսոսի ստոխայն Կիւրղի. այլ սոքա յետոյ զղջացեալ նզովեցին զՆեստոր. երրորդ՝ ջատագովաց Որոգինի (780) և ամենայն խառնակարաց կուսակից եղելոց Նեստորի և Եւտիքի։ Բայց յառաջ քան զայս ժողով 'ի 529 եղև գաւառական ժողով յՈրանգա քաղաք, ուր դատապարտեցան մոլորութիւնք Փաւստոսի եպիսկոպոսին, որ զանձն իւր հակառակ կարծեցուցեալ Պեղագեանց և Կիսապեղագեանց, նպաստէր նոցա։

### Կոստանդնուպօլսոյ Գ.

915. Ի հարիւր և եօթանասուն հայրապետաց գումարեցաւ ժողովս այս 'ի մեծի արահին Տրուղղա անուանեալ առ Ագաթոնիւ քահանայապետիւ Հռոմայ և Կոստանդիանոսիւ Դ. կայսե-

բաւ յամին 680, ընդդէմ Միակամեայց կամ Միակամադաւանից (1401). ուր նախագահ էին 'ի կողմանէ պապին երկու երիցունք ընդ միոյ սարկաւագի, և կայսրն: Ընդ դատապարտեցան աղանդաւորքն ընդ Սերգիոսի պատրիարգին (825), որ 'ի Քրիստոս զմի կամս և զմի ներգործութիւն կամից ասէին: Ուրանօր հաստատեցաւ դաւանել 'ի Քրիստոս զերկու բնութիւնս և զերկու կամս և ներգործութիւնս՝ աստուածային և մարդկային: Որպէս զնոյն հաստատեցին և վարդապետք մեր Յովհան Իմաստասէր և Շնորհալին:

## Նիկիոյ Բ.

916. Այս ժողով յերեք հարիւր և յիսուն հայրապետաց գումարեցաւ առ Ա. Ադրիանոսիւ քահանայապետիւ և Կոստանդեաւ կայսերաւ յամին 787 ընդդէմ Պատկերամարտից (828), որոց գլուխ եղեն կայսերքն Կոպրոնիմոս և Լեւոն Դ խաւրացի դառն հալածիչք հաւատացելոց: Այլ Լեւոն զկնի հինգ ամաց բարձեալ 'ի կենաց՝ եթող առանձեայ որդւոյ իւրում Կոստանդեայ զկայսերութիւնն. բայց բարեպաշտ մայր նորա Հերինէ խնդրեաց յԱդրիանոսէ գումարել զայս ժողով, յորում նախագահ էին երկու դեսպանք նորա երիցունք. և դատապարտեցին զՊատկերամարտս՝ կանոնադրելով հաւատացելոց անխափան յարգել ըզպատկերս և զնշխարս սրբոց ըստ սովորութեան սուրբ եկեղեցւոյ:

917. Զայնու ժամանակաւ մեծն Կարոլոս ունէր զկայսերութիւնն արեւմտեան. որոյ տեսեալ զանկարգութիւնս աղանդաւորաց ժամանակին՝ խնդրեաց 'ի նոյն քահանայապետէ առնել ժողով 'ի Փրանկֆորտիա. ուր գումարեցան

երեք հարիւր եկեղեցականք 'ի Գաղղիոյ, յԱնգ-ղիոյ, յԻտալիոյ և 'ի Գերմանիոյ, որք կանոնա-դրեցին զբարեկարգութիւնս՝ նախագահու-թեամբ դեսպանաց քահանայապետին (1417):

### Կոստանդնուպօլսոյ Դ.

918. Գումարեցաւ ժողովս այս 'ի հարիւր և երկու հայրապետաց առ Ադրիանոսիւ Բ. քա-հանայապետիւ և Վասիլ կայսերաւ յամին 869 ընդդէմ չարաժողովյն Փոտայ: Ուր նա ինքն Փոտ ընկեցեալ յաթոռոյ, դարձաւ Իգնատիոս օրինաւոր պատրիարգ որդի Միքայէլի կայսեր յաթոռ իւր, որ աքսորեալն էր յանիրաւի բանիւ-նորին: Անդանօր այրեցան անուեղի գրութիւնք և կանոնք ապօրինաւոր ժողովյն Փոտայ և սա-բագրեցաւ դատակնիք նորա արեամբ փրկչին, որպէս պատմէ Նիկետաս: Ընդ հաւանեցան գործք և իմաստունն Նիկողայոսի պապին(1428): Այս ժողով եղև վերջին յարևելեան ժողովս:

### Լատերանեան Ա.

919. Ի հաշակաւոր Լատերանեան տաճա-րի 'ի Հռոմ գումարեցաւ ժողովս այս յե-րեք հարիւր հայրապետաց. ուր գտան և բազմութիւնք արևմտեան վանականաց և երի-ցանց՝ ընդ ամենայն թուով եօթն հարիւր՝ առ Կալիստոսիւ Բ. քահանայապետիւ և Յովհան-նու կայսերաւ Պերփեռուժենիւ յամին 1122 ընդդէմ անկարգութեանց սաստկորդաց կախ-մամբ զթագաւորաց, և վասն ազատութեան սուրբ երկրին Պաղեստինոյ և Սպանիոյ 'ի ձե-ռաց այլազգեաց: Որոշեցաւ և վէճն որ 'ի մէջ հռովմէական աթոռոյն և արևմտեան կայսեր Ենրիկոսի Դ. (1482):

## Լատերանեան Բ.

920. Այս ժողով 'ի հազար եպիսկոպոսաց գումարեցաւ 'ի նոյն տեղի առ Իննովկենտիոսիւ Բ., և Կոնրադոսիւ Գ. արեւմտեան կայսերաւ յամին 1139 ընդդէմ հերձուածոյ դերապապին Անակղետոսի Բ., որ և ասի Պետրոս Լէոնեան. և ընդդէմ աղանդոյն Պետրոբրուսեանց և մոլորութեան Առնաւլդոսի բրեշացւոյ (1484)։

## Լատերանեան Գ.

921. Յերեքհարիւր արեւմտեան հայրապետաց առ Աղեքսանդրիւ Գ. քահանայապետաւ և Փեդերիկոսիւ կայսերաւ արեւմտից յամին 1179 եղև ընդդէմ Վալդոսեանց (842) և Աղբիգեանց (844), և ընդդէմ խռովչաց արեւմտեան եկեղեցւոյ։

## Լատերանեան Դ.

922. Յերեքհարիւր երկոտասան հայրապետաց յարեւելից և յարեւմտից առ Իննովկենտիոսիւ Գ. քահանայապետաւ և Փեդերիկոսիւ կայսերաւ գումարեցաւ յամին 1215 վասն ազատութեան սուրբ երկրին և բարեկարգութեան ընդհանուր եկեղեցւոյ։ Նաև և ընդդէմ մոլորութեանց Աղմարիկոսի Յովակիմայ աբբայի վարդապետողի զառասպելական յայտնութիւնս վասն ապագայ վիճակին եկեղեցւոյ ընդ այլ մոլորութեանցն ։ Յայս երեւելի ժողով կային վանահարք և մեծամեծ աստուածաբանք թուով ութ հարիւր. նոյնպէս և դեսպանք ամենայն տէրութեանց։ Նմին իրի երբ ասի պարզապէս Լատերանեան, այս ժողով իմացեալ լինի (1496)։

## Լուգդունի Ա.

923. Այս ժողով 'ի հարիւր և քառասուն հայրապետաց յարքեպիսկոպոսաց և յեպիսկոպոսաց գումարեցաւ 'ի Լուգդուն կամ 'ի Լիոն Գաղղիոյ առ Իննովկենտիոսիւ Դ. քահանայապետիւ և Փեդերիկոսիւ Բ. կայսերաւ յամի 1245 վասն բարեկարգութեան եկեղեցականաց, վասն սուրբ երկրին, վասն միաբանութեան Յունաց ընդ Լատինաց, և վասն խաղաղութեան աթոռոյն Հռովմայ. և հաստատեցաւ կարգ խաչակրաց վասն ազատութեան Պաղեստինոյ, և պատերազմն յանձն եղև սրբոյ Լուդովիկոսի արքային: Սահմանեցաւ դարձեալ՝ զի կարդինալք կրեսցեն կարմիր գըլխարկս 'ի նշան հաստատութեանն պաշտպանելոյ զհաւատս Քրիստոսի մինչև ցհեղումն արեան (1500):

## Լուգդունի Բ.

924. Յեօթն հարիւր հայրապետաց գումարեցաւ այս ժողով ըստ կանոնի հանդոյն նախընթացից առ Գրիգորիւ Ժ. քահանայապետիւ և Ռոդոլփոս Ա. կայսերաւ յամին 1274 վասն ազատութեան սուրբ երկրին, վասն միաբանութեան Յունաց, և վասն որոշ եղանակի ընտրութեան պապին: Ընդ դասու սուրբն Բոնավենտուրա զարդարեալ կարդինալական պատուով. իսկ սուրբն Թովմաս Ագուինացի 'ի գնալ անդ հիւանդացեալ 'ի ճանապարհի վախճանեցաւ: Ի ժողովն աստ Յոյնք միացան ընդ եկեղեցւոյն Հռովմայ՝ դաւանելով զնա մայր և վարդապետ ամենայն եկեղեցեաց, և հաստատելով երդմամբ մնալ առ նա հաւատարիմ (1504):

### Վիեննական.

925. Գումարեցաւ ժողովս այս 'ի հարիւր և չորեքտասան լաւին հայրապետաց 'ի Վիէննա Գաղղիոյ առ Կղեմաւ Ե քահանայապետաւ և Փիլիպպոսիւ արքայիւ Գաղղիոյ յամին 1311 ընդդէմ աղանդաւորաց Տաճարականաց, Ֆռաթիչելլեանց (847), Դուլկինեանց, Բեգուարդեանց և Բեկուինեանց։ Նաև և վասն ազատութեան Երուսաղէմի (1515)։

### Կոստանդեան։

926. Այս ժողով գումարեցաւ 'ի Կոստանդիա քաղաք Սուեւիոյ Գերմանացւոց առ Յովհաննու ԻԳ. քահանայապետաւ և Մարտինոսիւ Ե յամին 1415 մինչև 'ի 1418. ընդդէմ նորաղանդից Յովհաննու Վիկլեֆայ՝ որոյ ոսկերք այրեցան, և Յովհաննու Հուսի՝ որ կենդանւոյն խարուկեցաւ. Նա և Հերոնիմոսի բրակացւոյ (854) և ընդդէմ մատնաւոր անկարգութեանց։ Նաև առաւել 'ի պատճառս գերապապից. որում կամեցեալ էր դարման տանել ժողովն Պիզայի յամին 1409. այլ փոխանակ օգտի առաւել վնաս եղև (1525). որպէս եղև և զկնի այնր՝ ժողովն Բասիլեան յամին 1431։ Սակայն ընդհանուր ժողովս Կոստանդեան բազմապատիկ քննութեամբք վերջ տուեալ ամենայն հակառակութեանց՝ յետ երից ամաց պարապութեան աթոռոյն հաւանմամբ ընտրեաց 'ի ձեռն կարդինալաց զնոր քահանայապետ օրինաւոր յաջորդ սրբոյն Պետրոսի զՄարտինոս Ե (1528)։

### Փլորենտեան։

927. Այս տիեզերական ժողով գումարեցաւ 'ի Փլորենտիա քաղաք Իտալիոյ փոխա-

գրեալ 'ի Ֆերրարայէ, ուր փոխադրեալ էր Բասիլեան ժողովակն առ Եւգինէոսիւ Դ. որ հրաւիրեաց զեպիսկոպոսունս յամենայն ազգաց առ 'ի հաստատել զմիաբանութիւն ընդհանուր եկեղեցւոյ յամին 1439։ Յայնժամ Յոյնք ընդ պատրիարգին և ընդ կայսեր իւրեանց Յովհաննու Ը հանդերձ վարդապետօք հասին 'ի Վենետիկ յամին 1438. յորս երեւելի էր Բեսարիոն եպիսկոպոս Նիկիոյ լի հոգւոր նախանձու, որ և հաստատեաց՝ թէ զօրութեամբ բանին Քրիստոսի եւեթ գոյափոխի հացն 'ի մարմին տեառն։ Այլ 'ի ժողովի անդ յամենայն խնդիրս հաւատոյ միաբանեցան Յոյնք ընդ Լատինաց. որպէս և Հայք 'ի ձեռն Աբգարու դեսպանին առաքելոյ 'ի Կոստանդին կաթողիկոսէ, գէթ առ ժամանակ մի (1529)։

ՏՐԻԴԵՆՏԵԱՆ։

928. Ժողովս այս բազմաթիւ լաւին եպիսկոպոսաց և յոգնախումբ աստուածաբանից գումարեցաւ 'ի Տրիդենտոն քաղաք 'ի սահմանակցութեան Իտալիոյ և Գերմանիոյ առ Պիոսիւ Դ. քահանայապետաւ և Ֆերդինանդոսիւ Բ կայսերաւ նախապատրաստեալ յամին 1535, սկզբնաւորեալ 'ի 1545. և աւարտեալ 'ի 1563 ընդդէմ Նորաղանդից Լուտերի (857). Զուինգլիոսի, Կալվինոյ (861) և համախոհից նոցա, նա և վասն ազգի ազգի բարեկարգութեանց եկեղեցւոյ՝ քննելով զամենայն բանս հաւատոյ և կարգելով ըստ սահմանի առաջին ընդհանուր սուրբ ժողովոց։ Այնպէս զի մեծահանդէս ժողովս այս բաւական եղև եկեղեցւոյ մինչև ցարդ չկարօտել այլում նոր ընդհանուր ժողովոյ։ Սակայն անպակաս եղեն և լինին մասնաւոր ժողովք յաղագս և 'ի գաւառս սակս բարե-

*կարգութեանց (997) ․ որպէս անցի նա և 'ի վէպս վարուց քահանայապետաց Հռովմայ ։*

### ՅՕԴՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

### Ազգային և մասնաւոր ժողովք Հայոց ։

929 ․ Վաղարշապատու Ա․ *յամի տեառն* 325․ *գումարեալ 'ի սուրբ Լուսաւորչէն յաւուրս Տրդատայ վասն ընդունելութեան Նիկիոյ սուրբ ժողովոյն և հաստատութեան կանոնաց նորուն* (910) ։

930 ․ Աշտիշատայ Ա ․ 365 ․ *գումարեալ յաւուրս մեծին Ներսէսի և Արշակայ արքայի վասն բարեկարգութեան, և վասն արգելլոյ զխառնաբարս 'ի մերձաւոր խնամութենէ, և վասն կարգադրութեան կրօնաւորաց ։*

931 ․ Վաղարշապատու Բ ․ 366 ․ *յորում կարգեցաւ մեծն Ներսէս պատրիարգ Հայոց անկախ յարքեպիսկոպոսէն Կեսարիոյ․ և հաստատեցաւ՝ զի յայնմհետէ կաթողիկոսն ձեռնադրեսցի յիւրոց եպիսկոպոսաց ըստ իշխանութեան, զոր ետ սուրբն Սեղբեստրոս սրբոյ Լուսաւորչին 'ի Հռովմ* (1354) ։

932 ․ Վաղարշապատու Գ․ ․ 386 ․ *'ի մեծէն Ներսիսէ վասն բարեկարգութեան արքային և նախարարացն, հաստատելով զնոսա յաստուածպաշտութեան ։*

933 ․ Վաղարշապատու Դ․ ․ 404 ․ *'ի Սահակայ պարթևէ և 'ի Մեսրովպայ յաւուրս Վռամշապհոյ վասն գիւտի հայկական գրոց ։*

934 ․ Վաղարշապատու Ե ․ 426 ․ *'ի սրբոյն Սահակայ յաւուրս Արտաշրի վասն բարեկարգութեան եկեղեցւոյ, եպիսկոպոսաց և քահանայից ։*

935. Անտիոքայ Բ. 432. 'ի նմանէ յետ դարձի նորա յաքսորանաց վասն բարեկարգութեան հօտին և վասն ընդունելութեան ժողովոյն Եփեսոսի և դատապարտութեան Նեստորի (912) ։

936. Անտիոքայ Գ. 435. 'ի նմանէ վասն հերքելոյ զգիրս Մոպսուեստացւոյն (914), գրելով թուղթ վասն նոյին իրաց առ Պրոկղ պատրիարգ Յունաց ։

937. Շահապիվանայ Ա. 447. 'ի սրբոյն Յովսեփայ կաթողիկոսէ վասն ուղղութեան անխրատից. ուր և եդան քսան կանոնք սակս բարեկարգութեան ։

938. Վաղարշապատու Զ. 449. առ սուրբ կաթողիկոսին Յովսեփաւ յեօթնհատան եպիսկոպոսաց և ժառանգաւորաց, և յութուտան իշխանաց և յայլոց բազմաց. յորում ընթերցան և մերժեցին զթուղթ Յազկերտի և մոգպետին վասն դենի պարսկական աղանդոյ՝ ցրելով զբանս նոցա ։

939. Շահապիվանայ Բ. 450. 'ի նմանէ վասն հաստատուն պահելոյ զհաւատս և վանելոյ զՊարսիկս 'ի պաշտպանութիւն քրիստոնէութեան ։

940. Դունայ Ա. 452. յետ կոտորման սրբոյն Յովսեփայ կաթողիկոսի վասն բանի կաթողիկոսութեան Մելիտեայ, և փոխադրութեան աթոռոյն 'ի Դուին ։

941. Վաղարշապատու Է. 490. առ Բաբգենիւ կաթողիկոսաւ վասն հերքելոյ զԲարծումայ (820) և վասն քննութեան հրովարտակին Զենոնի կայսեր և ժողովոյն Քաղկեդոնի (913) ։

942. Դունայ Բ. 527. առ Ներսէսիւ Բ. կաթողիկոսաւ վասն կանոնադրութեանց 'ի բա-

ընկարգութիւն հօտին : Ուր եդան երեսուն և ութ կանոնք :

943. Դունայ Գ. 551. առ Մովսէսիւ կաթողիկոսաւ վասն նորոգութեան հայկական տոմարի. յորմէ կարգեցաւ թուական Հայոց. ուր էին արք գիտնականք :

944. Դունայ Դ. 596. առ Աբրահամու կաթողիկոսիւ ընդդէմ Կիւրիոնի և Քաղկեդոնականաց, գումարեալ ՚ի տխմար արանց, և հակառակորդաց :

945. Կոստանդնուպօլսոյ Ա. 597. հրամանաւ Մօրիկ կայսեր առ Նովին Աբրահամու ՚ի Հայոց և ՚ի Յունաց՝ վասն բանի ժողովոյն Քաղկեդոնի :

946. Կարնոյ 629. առ Եզրի կաթողիկոսաւ և Հերակլ կայսերաւ իբր ՚ի հարիւր յիսնըւն և հինգ եպիսկոպոսաց և վարդապետաց. յորում հաստատեցաւ միաբանութիւն ընդ Յոյնս. ընկալեալ եղև ժողովն Քաղկեդոնի և ինչ ինչ յազգային ծիսից նոցա :

947. Դունայ Ե. 645. առ Ներսէսիւ շինողաւ վասն բարեկարգութեան ժառանգաւորաց և աշխարհականաց, ևս և վասն քննութեան հաւատոյ :

948. Դունայ Զ. 648. առ նոյն կաթողիկոսաւ ՚ի պատճառս ժողովոյն Քաղկեդոնի՝ գրելով նամակ առ Յոյնս վասն միաբանութեան :

949. Մանազկերտի. 651. Ժողովակ յաւուրս Յովհաննու տեղապահի ընդդէմ Քաղկեդոնականաց. որ ընդ վեց եպիսկոպոսաց Հայոց և այլ ևս վեցից Ասորւոց նանրացոյց զգործ ժողովոյն Կարնոյ :

950. Պարտաւայ Ա. 709. Ժողով փոքր յԱղուանս առ Եղիայի կաթողիկոսաւ վասն ձևո-

նադրութեան Սիմոնի կաթողիկոսի նոցա 'ի տեղի 'Ներսէսի Բակուրայ, և սակս ինչ ինչ կանոնաց ։

951. Դուինայ Է. 719. առ Յովհաննու Իմաստասիրաւ վասն հերքելոյ զաղանդն Պաւղիկեանց, և վասն բարեկարգութեան. յորում եղան երեսուն և երկու կանոնք ։

952. Դուինայ Ը. կամ Վաղարշապատու 726. 'ի նոյն Իմաստասիրէ ընդդէմ աղանդոյ Յուլիանիտաց կամ Երեւութականաց (818) ։

953. Պարտաւայ Բ. 768. Ի մայրաքաղաքն Աղուանից 'ի Սիոնէ կաթողիկոսէ ընդ ոմանց եպիսկոպոսաց և իշխանաց՝ վասն բարեկարգութեան եկեղեցականաց. ուր և եղան քան և երկու կանոնք ։

954. Երնջակայ ժողով 841. առ իշխանութեամբ Բագարատայ 'ի բազում եպիսկոպոսաց. ուր ջնջեցան տարապարտ ամբաստանութիւնքն զՅովհաննէ կաթողիկոսէ Ովայեցւոյ ։

955. Շիրակաւանայ Ա. 854. առ Սմբատաւ խոստովանողիւ յեպիսկոպոսաց ոմանց և յայլոց անձանց. յորում ընտրեցաւ կաթողիկոս Զաքարիա Ա ։

956. Շիրակաւանայ Բ. 862. առ Զաքարիայիւ Ա. 'ի բազում եպիսկոպոսաց, միանձանց և իշխանաց. յորում բանք եղեն վասն խորհրդոյ սուրբ Երրորդութեան և մարդեղութեան. մերժեցան և հակառակ աղանդք հնգետասան նզովիւք ։

957. Շիրակաւանայ Գ. 892. առ Գէորգաւ Ա կաթողիկոսաւ, վասն օծանելոյ Թագաւոր զՍմբատ Ա ։

958. Անւոյ Ա. 961. առ Անանիայիւ կաթողիկոսաւ 'ի քառասուն եպիսկոպոսաց և 'ի

բազում նախարարաց վասն օծանելոյ զԱշոտ Գ. ՚ի թագաւոր ։

959. Ան—յ Բ. 965. Ժողով մեծ, յորում ընտրեցաւ Վահան ՚ի կաթողիկոս. որ ընկալեալ զժողովն Քաղկեդոնի միաբանեցաւ ընդ Յոյնս և ընդ Վիրս, գրեալ թուղթ վասն հաստատութեան ։

960. Ան—յ Գ. 970. յորում ընկեցաւ Վահան ՚ի կաթողիկոսութենէ վասն միաբանելոյ նորա ընդ Յոյնս. և ընտրեցաւ ընդ նորա Ստեփանոս վանահայր Սեւանայ ։

961. Ան—յ Դ. 972. յեպիսկոպոսաց և ՚ի վանականաց՝ ՚ի պատճառս Վահանայ կաթողիկոսի յետ մեկնելոյ նորա. յորում ընտրեցաւ կաթողիկոս Խաչիկ Ա ։

962. Ան—յ Ե. 987. ՚ի վարդապետաց ոմանց և յիշխանաց. ուր քննեալ խմացան զսրբութիւն և զողջամիտ վարդապետութիւն սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն ։

963. Ան—յ Զ. 992. ՚ի Գագկայ արքայէ վասն ընտրութեան ՚ի կաթողիկոսութիւն զՍարգիս Ա. զերեւելի առաջնորդ Սեւանայ ։

964. Հ—ր—յ ժողով երկիցս 1002. յաւուրս Սարգսի կաթողիկոսի և Գագկայ Շահնշահի ընդդէմ Թոնդրակեցւոց (833) ։

965. Ան—յ Է. 1036. առ Յովհաննու արքայիւ վասն կաթողիկոսութեան Պետրոսի Գետադարձի, և մերժելոյ զԴէոսկորոս վանահայր Սանահնի զանարժան աթոռակալ ։ Եւ էին գումարեալքն իբր չորս հազար անձինք ։

966. Ան—յ Ը. փոքր ժողով 1042. առ Գետադարձիւ վասն թագաւորեցուցանելոյ զԳագիկ վերջին արքայ ։

967. Հ—ր—յ Գ. 1051. առ Նովին կաթողիկոսաւ սատարութեամբ Գրիգորի Մա-

գլխաւորսն ընդդէմ Թոնդրակեցւոց:

968. ի Սէ—— ը——ն Ա. 1072. 'ի Գրիգորէ Վկայասէրէ, ուր ընկեցաւ Գէորգ Լոռեցի 'ի կաթողիկոսութենէ:

969. ի Հ——նէ 1073. յեպիսկոպոսաց և 'ի վանականաց առ Գրիգորիւ Վկայասիրիւ. յորում ընտրեցաւ կաթողիկոս Սարգիս քեռորդի Գետադարձին:

970. Շ——ւր——յ Ժողով 1113. 'ի Կարմիր վանս. յորում ընտրեցաւ կաթողիկոս Գրիգոր Պահլաւունի եղբայր Շնորհալւոյն:

971. ի Սէ—— ը——ն Բ. 1114. յերկու հազար հինգ հարիւր անձանց 'ի Գրիգորէ Պահլաւունւոյ. յորում նզովիւք մերժեցաւ Դաւիթ Ա. կաթողիկոս Աղթամարայ, և այնոքիկ որք կաշառօք ձեռնադրէին:

972. Հ——Կլ——յէ Ա. 1166. Ժողով յեպիսկոպոսաց և 'ի վանականաց 'ի նոյն Գրիգորէ. ուր փոխան իւր կարգեաց զՆերսէս Շնորհալի:

973. Հ——Կլ——յէ Բ. 1172. առ Շնորհալի Ներսէսիւ ընդ ումանց եպիսկոպոսաց և վարդապետաց վասն պատասխանի տալոյ խնդրոյն Յունաց:

974. Հ——Կլ——յէ Գ. 1178. 'ի Գրիգորէ Տղայ անուանելոյ ընդ շրջակայ եպիսկոպոսաց և վարդապետաց. յորում քննեցին զԹուղթ Յոյն Մետրապօլտայ և գտին համախոհ վարդապետութեան իւրեանց:

975. Հ——Կլ——յէ Դ. 1179. Ժողով մեծ 'ի Գրիգորէ Տղայէ ընդ երեսուն և երկուց եպիսկոպոսաց և այլոց բազմաց Հայոց և Ասորւոց ևս. յորում յետ բազում քննութեան Թղթոց Յունաց հաստատեցին և գրեցին զդաւանութիւն երկուց բնութեանց 'ի Քրիստոս, և երկուց կամաց և ներգործութեանց (915):

976 · Սսոյ Ա. 1193 · յեպիսկոպոսաց և 'ի վարդապետաց ոմանց · յորում ընտրեցաւ կաթողիկոս Գրիգոր Քարավէժ ։

977 · Տարսոնի Ա. 1198 · առ Գրիգորիւ Ապիրատաւ յեկեղեցականաց և յաշխարհականաց Հայոց և այլոց ազգաց · յորում հանդիսիւ օծին թագաւոր զԼեւոն Բ ։

978 · Սսոյ Բ. 1204 · 'ի մերձակայ եպիսկոպոսաց, վանահարց և իմաստնոց առ Դաւթիւ Գ. · յորում ըստ հարցմանց Զաքարիայ իշխանին եդան ութ կանոնք վասն օրինադրութեան 'ի տօնս և 'ի պահս ։ Ի չորրորդումն ասի տօնել զՎերափոխումն 'ի 15 օգոստոսի, և 'ի հինգերորդումն ասի՝ զՃրագալոյց զատկի և Ծննդեան ձկամբք և ձիթով միայն լուծանել ։

979 · Ի Լոռի 1205 · 'ի բազում եպիսկոպոսաց և վարդապետաց 'ի խնդրոյ Զաքարիայ իշխանին վասն հաստատութեան կանոնաց Սսոյ Բ ժողովոյն ։

980 · Անւոյ Թ. 1207 · ժողով 'ի խնդրոյ նոյն իշխանին 'ի նոյն անձանց՝ որք 'ի Լոռի ժողովեցան, վասն եկեղեցական իրաց ։

981 · Սսոյ Գ. 1243 · առ Կոստանդեաւ Ա կաթողիկոսիւ 'ի բազում եպիսկոպոսաց, 'ի վանահարց և յիշխանաց վասն բարեկարգութեան եկեղեցականաց, և վասն խորհրդոյ վերջին օծման · յորում եդան քսան և հինգ կանոնք վասն օրհնելոյ եպիսկոպոս երեսնամեայ · իսկ քահանայ՝ քսան և հինգ ամաց · նա և պահել առանց ձկան և ձիթոյ · և այլն ։

982 · Սսոյ Դ. 1251 · առ Կոստանդեաւ Ա յեպիսկոպոսաց և 'ի վարդապետաց Հայոց, Ցունաց և Ասորւոց · յորում քննեալ զխնդիրն ըղխման Հոգւոյն սրբոյ և յՈրդւոյ՝ ընկալան Հայք համաձայնութեամբ աշխարհեան վարդապետաց ·

983. Տ-ր--նի Բ. 1267. Ժողով մեծ՝ յորում կաթողիկոս ընտրեցաւ Յակոբ կլայեցի այր իմաստուն, որ նախ նստաւ 'ի Հռոմկլայ:

984. Տ-ր--նի Գ. 1270. առ Յակոբաւ կաթողիկոսիւ յեպիսկոպոսաց և յիշխանաց. յորում Թագաւոր օծին զԼեւոն Գ.:

985. Ա--յ Ե. 1292. առ Հեթում Թագաւորաւ 'ի պատճառս ծագազատկի. յորում յետ բազում քննութեանց սահմանեցաւ պահել զկանոն Նիկիոյ. ուր և ընտրեցաւ կաթողիկոս Գրիգոր անաւարզեցի:

986. Ա--յ Զ. 1307. ըստ հրամանի Լեւոնի Գ. արքային յերեսուն և վեց եպիսկոպոսաց, յեօթն և տասն վարդապետաց և յիշխանաց վասն իրաց հաւատոյ և ծիսից: Ուր և հաստատեցին զերկու բնութիւն, զերկու կամս և ներգործութիւն, զՋուր 'ի պատարագն, զծնունդ և զյայտնութիւն ըստ Լատինացւոց. եդին զբան «Քրիստոս» 'ի խաչեցարն, և այլն:

987. Տ-ր--նի Դ. 1308. առ Կոստանդեաւ Գ. կաթողիկոսաւ յեպիսկոպոսաց. յորում Թագաւոր օծին զՕշին հանդիսիւ:

988. Ա--ն-յ 1316. 'ի Կոստանդնոյ Գ. առ Օշնիւ արքայիւ վասն հաստատութեան Ա. ժողովոյն Սսոյ յութուտասն եպիսկոպոսաց, յեօթն վարդապետաց և 'ի տասն իշխանաց:

989. Ա--յ Է. 1342. 'ի Մխիթարայ կաթողիկոսէ և 'ի Կոստանդնոյ Գ. արքայէ ընդ երեսուն եպիսկոպոսաց, 'ի հինգ վարդապետաց և 'ի տասն վանահարց. յորում՝ մի առ մի ջրեցին զՀարիւր եօթն և տասն գլուխս մոլորութեանց ընծայելոց Հայոց, զորս յղեալ էր առ նոա Քահանայապետն (1517):

990. Ա--յ Ը. 1361. 'ի Մեսրովպայ կաթո-

ղիկոսէ առ Կոստանդեաւ արքայիւ վասն խառնելոյ կամ ոչ խառնելոյ ջուր 'ի բաժակն :

991 · Սսոյ Թ · 1437 · 'ի Կոստանդնոյ Զ. ընդ ամենից եպիսկոպոսաց վասն առաքելոյ արս 'ի ժողովն Փլորենտիոյ , զորմէ ազդ. ստոր Նմա քահանայապետին Հռոմայ (1529) :

992 · Էջմիածնի Ա · Ժողով 1441 · 'ի վարդապետաց և 'ի վանականաց աւելի քան զերեք հարիւրոց վասն նորոգելոյ զկաթողիկոսութիւնն յէջմիածին · ուր և ընտրեցաւ Կիրակոս Վիրապեցի :

993 · Էջմիածնի Բ · 1603 · յեպիսկոպոսաց , 'ի վարդապետաց և յիշխանաց · յորում ընտրեցաւ կաթողիկոս Մովսէս Գ. :

994 · Երուսաղէմի ժողով 1651 · 'ի Փիլիպպոսէ կաթողիկոսէ Էջմիածնի և 'ի Ներսէսէ կաթողիկոսէ Սսոյ վասն բարեկարգութեան եկեղեցականաց և վասն միաբանական սիրոյ երկուց աթոռոց · ուր հաստատեցան երեքտասան կանոնք , յորոց 'ի միումն հրամայի ծանուցումն առնել յեկեղեցւոջ վասն հարսնախօսութեան :

995 · Բազում և այլ մասնաւոր ժողովք գումարեցան 'ի Հայաստան 'ի զանազան ժամանակս վասն կարևոր գործոց : Նոյնպէս եղեն ոչ սակաւ մասնաւոր ժողովք յայլ տեղիս · մանաւանդ 'ի Կոստանդնուպօլիս 'ի յետին ժամանակս վասն մասնաւոր գործոց աթոռոց Էջմիածնի , Երուսաղէմի , Սսոյ · ևս և վասն ընտրութեան կաթողիկոսաց և պատրիարգաց · որպէս և եղև յաւուրս մեր վասն յափշտակելոյ Յունաց զվանս սրբոյն Յակոբայ յԵրուսաղէմ 'ի ձեռաց Հայոց : Բայց առաւել հաչակելին եղև հետևեալն :

996 · Կոստանդնուպօլսոյ Բ · 1820 · ազգային

ժողով վասն միաբանութեան ազգին ողջոյն, յորում խոստմունք մեծամեծք, այլ արդեամբք և ոչ մի ինչ վճարեցաւ, առ կաթողիկոսութեամբն Եփրեմի ։ Էին 'ի ժողովին կիրակոս կաթողիկոս Սսայ, Պօղոս պատրիարգ Կոստանդինուպօլսոյ, Պօղոս արքեպիսկոպոս գործակալ աթոռոցն Էջմիածնի և Երուսաղէմի, և այլ բազում եպիսկոպոսունք, վարդապետք, քահանայք, սարկաւագունք, իշխանապետք, իշխանք, գանձապետք, եկեղեցպանք, և գլխաւորք ամենայն արհեստաւորաց ։

## ՑՕԴՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

### Մասնաւոր ժողովք այլևայլ ազգաց ։

997 · Աւբրէնկատայ ժողով յամի տեառն 1172 · առ Աղեքսանդրիւ Գ · յորում Ենրիկոս Թագաւոր Անգղիոյ կրկին արձակեցաւ 'ի նզովից, որ վասն սպանման սրբոյն Թովմայի Կանտուարիոյ · ուր եդան երեքտասան կանոնք (1490) ։

998 · Ագաթէայ 'ի Գաղղիա Նարբոնայ յամին 506 · յերեսուն և հինգ եպիսկոպոսաց առ Անաստասաւ կայսերբ և առ Սիմմաքոսիւ քահանայապետաւ · ուր վասն բարեկարգութեան եդան քառասուն և ութ կանոնք (1373)։

999 · Ակուիլեայ 'ի 381 · առ Դամասոսիւ յերեսուն և երկու եպիսկոպոսաց · ընդ որս էր և սուրբն Ամբրոսիոս, 'ի դատապարտութիւն Պալլադիոսի և Սեկունդիանոսի արիանոս եպիսկոպոսաց (1359) ։

1000 · Ակուիլեայ 'ի 1409 · 'ի Գրիգորէ ԺԲ վասն բառնալոյ զհերձուած գերապատու-

Թեան, և սահմանեցաւ նա ինքն Գրիգոր լինել օրինաւոր (1525) ։

1001 · Ակուիլեայ 'ի 1409 · առ Գրիգորիւ ԺԲ․ յորում կարգին անձինք գնալ 'ի ժողովն Պիզայի․ ուր եգան տասն նախադասութիւնք՝ որք ցուցանեն զմիութիւն եկեղեցւոյ 'ի միութիւն Քրիստոսի, և զիշխանութիւն եկեղեցւոյ 'ի Քրիստոսէ գումարելոյ զընդհանրական ժողով առ 'ի պահել զմիութիւն իւր ։

1002 . Ակուիսգրանեայ 'ի 799 · 'ի մեծին Կարոլոսէ առ Լևոնիւ Գ․ յորում Փելիքս եպիսկոպոս Ուրգելայ՝ որ զորդեգրութիւն ասէր 'ի Քրիստոս, ետ զուղիղ դաւանութիւն ։ Անդ 'ի 809 եղև ժողով վասն ըղխման Հոգւոյն և յՈրդւոյ և վասն յաւելլոյ զայն 'ի Հանգանակին (1418) ։ Որպէս և 'ի 816 այլ ժողով գումարեցաւ առ Ստեփանոսիւ Դ վասն բարեկարգութեան․ ուր եգան հարիւր քառասուն և հինգ կանոնք սակս կղերիկոսաց, և քսան և ութ վասն հաւատաւորաց (1419)։

1003 · Ակուիսգրանեայ 'ի 836 առ Լուդովիկոսիւ, եւ և 'ի 862 վասն բարեկարգութեան եպիսկոպոսաց, կղերիկոսաց, և վասն Թագաւորին և որդւոց նորա ։

1004 · Ա[illegible] յԱփրիկէ 'ի 304 · վասն չհաղորդելոյ իւիք ընդ մատնիչս սուրբ գրոց՝ որք խարդախեն զսրբազան բանս ։

1005 · Ագրիպինեայ 'ի 346 · առ Յուլիոսիւ․ յորում դատապարտեցաւ Եւփրատոս եպիսկոպոս քաղաքին, որ զՔրիստոս լոկ մարդ դաւանէր (1356) ։

1006 · Աղեքսանդրիայ 'ի 230 · 'ի Դեմետրեայ պատրիարգէ ընդդէմ Որոգինեայ ։ Իսկ 'ի 235 եղև 'ի Հերակլեայ պատրիարգէ վասն գործուցանելոյ զԱմմոնիոս ուրացող եպիսկո_

պոս ։ Եւ 'ի 263 ժողով 'ի Դիոնիսեայ պատրիարգէ ընդդէմ Սաբէլի ։ Դարձեալ անդ ընդդէմ Նեպոտիանոսի եպիսկոպոսին Եգիպտոսի և ընդդէմ Կերինթոսի, որք ասէին զԹագաւորութիւնն Քրիստոսի լինել յերկրաւորն Երուսաղէմ հազար ամս, և Թէ պատարագք անբանից արժան են ։

1007. Աղէքսանդրիա 'ի 306. 'ի սրբոյն Պետրոսէ պատրիարգէ ընդդէմ Մելիտոսի եպիսկոպոսի Լիկոպօլսոյ 'ի Թեբայիդ ։ Անդ 'ի 315 յԱղէքսանդրէ պատրիարգէ 'ի հարիւր եպիսկոպոսաց առ Սեղբեստրոսիւ 'ի դատապարտութիւն Արիոսի ։ Անդանօր դարձեալ 'ի 319 և 321. ընդդէմ նորին Արիոսի, Սաբէլի, Մելիտեանց և Կողութեանց ։

1008. Աղէքսանդրիա 'ի 326 կամ 328. յամենայն եպիսկոպոսաց վճռակին 'ի կարգել զԱթանաս 'ի նոյն աթոռ. որ և 'ի 362 արար անդ ժողով առ Լիբերիոսիւ բազում եպիսկոպոսօք յԻտալիոյ, յԱրաբիոյ, յԵգիպտոսէ և 'ի Լիբիոյ. յորում սահմանեցաւ նախ՝ զի եպիսկոպոսունք սահեալք 'ի հերձուածս առ ագիտութեան կամ առ ահի՝ 'ի զղջանալն կացցեն յաստիճանս իւրեանց ։ Երկրորդ նզովեցան Մակեդոն, Եւնոմիոս, Կիսարիոսեանք, և աղանդ Ապողինարի ։ Երրորդ որոշեցաւ լռութիւն հակառակութեան Յունաց և Լատինաց 'ի վերայ բառից Անձն և Էնթակայութիւն ։ Չորրորդ հրատարակեցաւ ուղղ լինել դաւանութեանն, զոր Արիանոսք կեղծեալ էին յանուն Սարդիկեայ ժողովոյն ։ Դարձեալ նա ինքն Աթանաս Արարեալ ժողով գրեաց զլան հաւատոյ առ կայսրն Յովինիանոս ։

1009. Աղէքսանդրիա 'ի 372. յԱթանասէ. յորում դաւանութիւն Մարկեղոսի անկիւրա-

ցւոյ կարծեցելոյ համախոհ Սաբելի՝ ընթերցաւ և ընդունելի եղև ։ Գումարեալ 'ի 399 'ի դատա_պարտութիւն Որոգինեանց ։

1010 . Աղեքսանդրիոյ 'ի 430. 'ի Կիւրղէ առ Կեղեստինոսիւ Ա. յորում չորս պատգամաւորք կարգեցան առ Նեստոր՝ սահմանեալ նմա աւուրս տասն դառնալոյ յաղանդոյն։ Ուր և գրեցաւ թուղթ սինոդական, յորում էին նզովք երկոտասան ։

1011 . Աղեքսանդրիոյ 'ի 455 . 'ի Պրոտերիոսէ, որ կարգեցաւ փոխան Դիոսկորոսի 'ի դարձուցանել զորս սահեալ էին յաղանդ Եւտիքի։ Իսկ 'ի 482 եղև ժողով յԵգիպտոս . յորում ընտրեցաւ Յովհաննէս տաբեննիսացի յաթոռ Աղեքսանդրիոյ ։ Ուր և 'ի 578 եղև ժողով 'ի Դամիանոսէ եւտիքեան պատրիարգէ ընդդէմ Պետրոսի եւտիքեան պատրիարգի Անտիոքայ՝ որ կարծիւր ուրանալ զԵրրորդութիւնն ։

1012 . Աղեքսանդրիոյ 'ի 582 . յԵւղոգիոսէ պատրիարգէ ընդդէմ Սամարացւոց, որք յայլ և այլ աղանդս բաժանեալ էին ։ Իսկ 'ի 633 անդ արար ժողով Կիւրոս պատրիարգ, յորում լռելեայն զմիակամութիւնն 'ի Քրիստոս հաստատեաց, դաւանեալ միայն զաստուածային կամս և զներգործութիւն, և զվճիռն սինոդական յղեաց առ Սերգիոս պատրիարգ Կոստանդնուպօլսոյ ։

1013 . Անաւարզայ 'ի 431 . 'ի Մաքսիմինոսէ եպիսկոպոսէ քաղաքին . յորում հաստատեցին զընկեցումն սրբոյն Կիւրղի ։ Իսկ 'ի 435 յայլում ժողովի հաշտեցաւ նա ընդ Կիւրղի ։

1014 . Անգղիոյ 'ի 680 . առ Աղաթոնիւ . յորում եղև դաւանութիւն եկեղեցեաց Բրիտանացւոց և այլոց ընդդէմ Եւտիքեայ ։ Յիշի ևս անդ բղխումն Հոգւոյն և յՈրդւոյ ։ Անդ 'ի 969 ժո_

զով արարեալ ամենայն եպիսկոպոսաց երկրին ընդդէմ ամուսնացեալ կղերիկոսաց, սահմանեցաւ կամ անկին լինել և կամ 'ի բաց թողուլ զպաշտօն (1401)։ Դարձեալ 'ի 1188 վասն գրելոյ 'ի խաչակիրս և հաւաքելոյ զտասանորդս։

1015. ԱՆԿԻՒՐԻԱՅ 'ի 358. արարեալ յարևլեան կիսարիանոս եպիսկոպոսաց. եդին զարձեալ զհամագոյութիւն՝ մերժեալ զերկրորդ դաւանութիւն Սիրմեան ժողովոյն, որոյ ընդդէմ կարգեցին երկոտասան նզովս։

1016. ԱՆՍԱՅ 'ի 1100. առ Պասքաղեսի Բ. 'ի մեծամասն եպիսկոպոսաց՝ վասն գնալոյ 'ի սուրբ երկիրն. և զուխտադիրսն որք անփոյթ կային, սպառնացին 'ի միաբանութենէ, մինչև կատարեսցին։ Անդ դարձեալ 'ի 1299 վասն բարեկարգութեան (1480)։

1017. ԱՆԴԵԿԱՒԱՅ 'ի 453, առ Մարկիանոսիւ և Լևոնիւ Ա. յութ եպիսկոպոսաց վասն օրինադրութեան. ուր եդան երկոտասան կանոնք։ Դարձեալ անդ 'ի 1365 վասն բարեկարգութեան՝ հանդերձ երեսուն և չորս կանոնօք։

1018. ԱՆՏԻՈՔԱՅ 'ի 252. 'ի Դեմետրեայ պատրիարգէ ընդդէմ Նովատիանոսի։ Անդ 'ի 266 եղև այլ ժողով 'ի պատճառս Պօղոսի Սամոստացւոյն։ Դարձեալ ընդդէմ նորա 'ի 272։

1019. ԱՆՏԻՈՔԱՅ 'ի 341. առ Յուլիոսիւ յիննուն և վեց եպիսկոպոսաց. ընդ որս և Յակոբ Մծբնայ հայրապետ, ևս և սուրբն Աթանաս։ Սահմանեցան քսան և հինգ կանոնք, որք դասանին և 'ի կանոնագիրս Հայոց։ Դարձեալ 'ի 358 վասն դատապարտելոյ զձայնն նմանագոյութեան. իսկ 'ի 360 Մելիտոս եպիսկոպոս Սեբաստիոյ կարգեցաւ յաթոռն Անտիոքայ։ Որ և արար ժողով անդ 'ի 363. ուր լին

կանոնք հաստատեցան Նիկիական ատենմանք, որք և գտանին 'ի կանոնագիրս Հայոց:

1020. **Անտիոքայ** 'ի 379. առ Դամասոսիւ 'ի հարիւր քառասուն և վեց եպիսկոպոսաց: Անդ գտան Բարսեղ, Նիւսացին և Նազիանզացին, յետ և Ներսէս. ուր վճռեցաւ զի 'ի մեռանել Մելիտոսի յաջորդեսցէ Եւագրիոս: Անդ դարձեալ 'ի 383 ընդդէմ Մեսաղեան հերետիկոսաց, որք արհամարհէին զպահս և զպատուիրանս. զանդադար աղօթելն միայն բաւական համարեալ 'ի փրկութիւն, և տեսանելով մարմնաւոր աչօք զաւուրս Երրորդութիւնն: Իսկ սոքա խարազանեցան և երաշխաւորք՝ համարելով զանձինս առաքելոյ և Քրիստոս իսկ: Ընդոստամանք զգեստ սաւթուր ջաղխել առնէին:

1021. **Անտիոքայ** 'ի 389. յորում արգելաւ որդւոց Մարկեղոյ Անկիւրիոյ եպիսկոպոսի մի՛ լինել քննախնդիր վասն հօր իւրեանց սպանելոյ 'ի կաթողիկեայց: Ուր 'ի 427 դարձեալ ժողով առ Ջովհան 'ի դատապարտել զՊեղագիոս, որ արտաքսեցաւ յԵրուսաղէմէ: Իսկ 'ի 432 յայլում ժողովի մերժեցաւ Նեստոր, և զաւանեցին 'ի Քրիստոս զերկու անխառն բնութիւնս անբաժան, զոր և ընկալաւ Կիւրեղ:

1022. **Անտիոքայ** 'ի 435. 'ի Յովհաննէ պատրիարգէ. յորում անքննաբար դատեցին թէ գիրք Թէոդորեայ Մամեստացւոյ չունի ինչ մոլար. քանզի վարդապետք 'ի Հայոց եկեալք 'ի Կոստանդնուպօլիս գայթ եռուն առ Թէոդոս և առ Պրոկղ վասն նոյն գրոց. և նոքա Յովհաննու յանձն արարին զքննութիւնն: Իսկ 'ի 445 այլ ժողով եղև առ 'ի ձեռնադրել զայլ ոք եպիսկոպոս Պարկոյ փոխան Աթանասի:

Եւ 'ի 448 նզովեցան ամբաստանիչք Իբասայ եպիսկոպոսի Եդեսիոյ :

1023. Անտիոքայ 'ի 463. յորում Պետրոս Թափիչ ընկեցաւ յաթոռոյն, և 'ի 478 ընկեցաւ Յովհաննէս Ապամիոյ ձեռնադրեալն 'ի Թափչէն, և Ստեփանոս կարգեցաւ յաթոռ Անտիոքայ : Իսկ 'ի 482 Կոդոնատոս ընտրեցաւ փոխանակ Ստեփանոսի սպանելոյ յԵւտիքեանց : Ուր յայլում ժողովի Կաղենդիոն ձեռնադրեալ յԱկակիոսէ վասն աթոռոյն Անտիոքայ՝ետ ամենեցուն հաւանել իւրում ընտրութեան. գրեաց և Թուղթ սինհոդոսական առ Սիմպղիկիոս պապ (1369) :

1024. Անտիոքայ 'ի 565. յԱնաստասայ պատրիարգէ. յորում հաստատեաց զժողովն Քաղկեդոնի : Իսկ 'ի 781 եղև ժողով 'ի Թէոդորոսէ 'ի պաշտպանութիւն սրբոց պատկերաց : Եւ 'ի 1203 անդ Լատինք արարին ժողով. յորում Պետրոս կարդինալ սահմանեաց եկեղեցական արգելս ընդդէմ Հայոց 'ի պատճառս ժառանգութեան Անտիոքայ :

1025. Անտիոքայ ժողով 'ի 1212. և 1365, վասն բարեկարգութեան. յառաջնումն եղան յիսուն և մի կանոնք, և յերկրորդումն երեսուն :

1026. Առաքելոց ժողով 'ի 33, կամ 34 յԵրուսաղէմ 'ի հարիւր և քսան անձանց վասն ընտրութեան Մատաթեայ (597). նա և վասն կարգելոյ եօթն սարկաւագունս (606) : Իսկ 'ի 49 կամ 51 առ Կղօդեաւ վասն ազատութեան հեթանոսաց յարարողական օրինաց Մովսէսի (646), և 'ի 56 կամ 58 այլ ժողով. յորում թոյլ տուաւ Հրէից դարձելոց վարել օրինականօքն (670) :

1027. Ասիոյ կամ Եփեսոսի 'ի 197. առ

Վիկտորիւ յաւխայի եպիսկոպոսաց վասն անխախտ պահելոյ զզատիկն 'ի չորեքտասանն մարտի, որ մերժեցաւ 'ի Վիկտորէ (1335) : Դարձեալ 'ի 245 ընդդէմ Նովատոսի աղանդաւորի, որ ասէր զանձն իւր Մովսէս եղբայր Ահարոնի :

1028 . Ասչաֆէնպուրգեայ 'ի 1292 . առ Նիկողայոսիւ Դ . վասն բարեկարգութեան, ուր եդան քսան և վեց կանոնք : Անդ 'ի 1327 առ Յովհաննու Ի . յորում նզովեցան ոյք ասէին՝ թէ քահանայք 'ի մահուչափ մեղս չկարեն քահանայագործել և արձակել :

1029 . Ասորւոց ժողով 'ի 405 . 'ի քառասուն եպիսկոպոսաց . յորում ընկալան զկանոնս առաքելոց յարեւմտեան եպիսկոպոսաց, և են քսան և եօթն . 'ի սկիզբն գնի Իսահակ կաթողիկոս, նմին իբր համօրէն յամանց լինել Հայոց :

1030 . Ասորւոց 'ի 543 . առ Յուստինիանոսիւ յԵփրեմէ պատրիարգէ Անտիոքայ . յորում նզովեցան պաշտպանք Որոգինեայ :

1031 . Ատրեբատանի 'ի 1025 . ընդդէմ անաստուածից ոմանց մերժողաց զխորհուրդս և զեկեղեցի նման Թոնդրակեցւոց եղելոց 'ի Հայս . ուր նոյն անաստուածք սխալեալք 'ի ճշմարտութենէ՝ դարձան յողջմտութիւն :

1032 . Արաբիայ 'ի 249 . առ Փաւիանոսիւ ընդդէմ ապականացու ասողաց զհոգի մարդոյ (1341) :

1033 . Արաւսիոյ 'ի Գաղղիա Նարբոնայ 'ի 441 . առ մեծն Լեւոնիւ, ուր վասն բարեկարգութեան եդան երեսուն կանոնք : Անդ գումարեալ 'ի 529 այլ ժողով ընդդէմ Կիսապեղագեանց, և սահմանեցան քսան և հինգ գլուխք բանից (840) :

1034 . Արելատայ 'ի Գաղղիա 'ի 314 . առ

Սեղբեստրոսի յերկերիւր եպիսկոպոսաց. 'ի պատճառս Դոնատեանց. սահմանեցան և քսան և երկու կանոնք: Ընդ 'ի 452 առ Լևոնիւ յայլում ժողովի հաւաքեցան յիսուն և վեց կանոնք 'ի վերայ եկեղեցականաց: Իսկ 'ի 456 եղև ժողով 'ի խաղաղել զդատ փաստոսի արքայի ընդ եպիսկոպոսին:

1035. Արելատայ 'ի 463. առ Հիլարիոսիւ 'ի քսան եպիսկոպոսաց ընդդէմ Մամերտինոյ արքեպիսկոպոսին Վիէննայի: Ընդ դարձեալ 'ի 475 ընդդէմ նախասահմանականաց. և 'ի 524 վասն եկեղեցականաց. նոյնպէս 'ի 554 վասն բարեկարգութեան, որպէս և 'ի 813, ուր եդան քսան և վեց կանոնք. յառաջնումն յիշի բղխումն և յՈրդւոյ:

1036. Արելատայ 'ի 1260. առ Աղեքսանդրիւ Դ. յորում դատապարտեցան Յովակիմեան աղանդաւորք. և 'ի 1275 վասն եկեղեցական բարեկարգութեան (1501):

1037. Աւենիոնայ 'ի 1350. առ Կղեմայ Զ. սակս եկեղեցականաց. ուր եդան եօթանասուն և ութ կանոնք վասն բարեկարգութեան (1518):

1038. Արևելեան ժողով 'ի 160. յորում դատապարտեցան Կերդոնեանք, որք զերկու աստուածս ասէին բարի և չար, և զՔրիստոսի մարդեղութիւնն ուրանային (759): Ի Կոստանդինուպօլիս. յորում զՍիսինոս ձեռնադրեցին 'ի նոյն աթոռ, և դատապարտեցան Մեսաղեանք: Ընդ և 'ի 453 եղև ժողով. յորում թուղթք մեծին Լևոնի առաքեալք 'ի ժողովն Քաղկեդոնի միանգամ ընկալեալ եղեն յարևելեան եպիսկոպոսաց:

1039. Արիմինոյ 'ի 359. առ Լիբերիոսիւ 'ի չորեքհարիւր եպիսկոպոսաց. յորում ուղղ-

սեան դաւանութիւնն Սիրմիոյ մերժեալ՝ նիկիականն հաստատեցաւ ։

1040. Արվեռնիոյ 'ի 535. առ Ագապետաւ Ա. 'ի հնգետասան եպիսկոպոսաց՝ վասն հաստատելոյ զկարգս եկեղեցւոյ. ուր եդան վեշտասան կանոնք (1379)։

1041. Աւենիոնի 'ի 1209, առ Իննովկենտիոսիւ Գ. վասն բարեկարգութեան ։ Այլք գումեցան 'ի 1282 և 'ի 1326 վասն բարեկարգութեան. յերկրորդ կանոնն շնորհի ներողութիւն յուղարկաւորաց սուրբ խորհրդոյն. և 'ի չորրորդն ներողութիւն որոց խոնարհին 'ի լսելն զանունն Յիսուսի։ Իսկ 'ի 1327 անդ 'ի ժողովի նզովեցաւ Նիկողայոս Ե գերասպաս ։

1042. Աւգուստոդունոն 'ի 670. և 676. առ Աստուածատրով Բ. վասն բարեկարգութեան. ուր 'ի չորեքտասաներորդ կանոնն հրամայի աշխարհականաց հաղորդել 'ի ծննդեան փրկչին, 'ի զատկի և 'ի պենտեկոստէն. քահանայից՝ մի շուայտեալ մտանել 'ի պատարագ, և կանանց մի մտանել 'ի խորանն ։ Այլ 'ի 952 եղև այլ ժողով վասն բարեկարգութեան եկեղեցականաց ։

1043. Աստուրիոյ 'ի 446. առ Մեծն Լևոնիւ ընդդէմ գաղտնի Մանիքեցւոց 'ի յայս եկելոց, որք խորամանկութեամբ շրջէին որսալ զանմեղս ։

1044. Աւտիսիոդորոյ 'ի 578. առ Պեղագեաւ Բ. 'ի քառասուն և հինգ անձանց յաւէտ վասն բարեկարգութեան կրօնաւորաց և ուղղութեան անուղղայից։

1045. Աւրէլիոյ 'ի 511. առ Սիմմաքոսիւ, որպէս և առ Սեղբերիոսիւ 'ի 536 և 'ի 538 վասն բարեկարգութեան ։ Իսկ առ Վիգիլիոսիւ 'ի 541 Մարկոս եպիսկոպոս յանիրաւ աքսորանաց

դարձուցաւ յաթոռ իւր, և սահմանեցան երեսուն և եօթն կանոնք: Եւ 'ի 549 եդան քսան և չորս կանոնք վասն Երից գլխոց, որպէս և 'ի 645 յոյն ումն միակամադաւան աքսորեցաւ 'ի Գաղղիոյ:

1046. Ափրիկեայ, որ և Կարթագենեայ 'ի 217. յորում մկրտութիւն հերետիկոսաց ոչինչ դատեցաւ, և 'ի 257 եղև վասն հաստատութեան հաւատոյ և վարուց: Որպէս 'ի 258 եղև ժողով 'ի Կիպրիանոսէ 'ի պատճառս Բասիլիդեայ և Մարտիալոսի սպանիացի եպիսկոպոսաց, որք վասն դաւանի ուրացութեանն զրկեալք յաթոռոյ՝ հնարէին դարձեալ մտանել: Իսկ 'ի 399 այլ ժողով վասն ազատութեան եկեղեցւոյ: Նոյնպէս 'ի 401 եղև ժողով ձեռն տալ չքաւորութեան ուխտին Ափրիկոյ. ուր և հաստատեցան երեսուն և երկու կանոնք աւանդեալք յայլոց ժողովոց:

1047. Ափրիկեայ 'ի 401, և 403. վասն խաղաղելոյ զհերձուած Դոնատեանց, և սահմանեցաւ օրինակ միաբանելոյ զնոսա: Եւ 'ի ժողովն 'ի 404, հրեշտակք առաքեցան առ Ոնորիոս կայսր նուաճել զԴոնատեանս, որպէս եղև. և 'ի 405 վասն դարձի նոցին սահմանելով 'ի վերայ նոցա տուգանս և աքսորս՝ եթէ ոչ թողցեն զաղանդն: Անդանօր եղեն և այլ երկք ժողովք նոյնպէս ընդդէմ Դոնատեանց (788):

1048. Ափրիկեայ 'ի 418. 'ի Կարթագինէ յերկերիւր չորեքտասան եպիսկոպոսաց. յորում կրկին դատեցան Պեղագիոս և Կելեստիոս: Եւ 'ի 534 եղև վասն կանգնելոյ զեկեղեցական կարգս:

1049. Ասիայ 'ի 250. ընդդէմ Վաղեսեանց և կամ Ներքինեաց, որք ներքինացուցանէին զանձինս և զհիւրս: Անդ 'ի 359 եղև ժողով

ընդդէմ Այետիոսեանց ասողաց զՈրդի ամե-
նայնիւ նման Հօր (792) :

1050. ԲԱՅՈՔԱՅ ժողով 'ի 300. առ. Վոնի-փակիոսիւ Ը. ուր եղան վասն բարեկարգութեան կանոնք հարիւր երեքտասան. չորրորդ կանոնն յիշէ զընկղմումն 'ի մկրտութեան :

1051. ԲԱՐԵԱՅ 'ի 1097. առ. Ուրբանոսիւ Բ և յանդիման նորա. յորում սուրբն Անսելմոս յաղթահարեաց զՅոյնս 'ի վերայ բղխման Հոգւոյն և յՈրդւոյ (1479) :

1052. ԲԱՐՍԻՆՈՆԱՅ 'ի Սպանիա 'ի 541. վասն բարեկարգութեան. և 'ի 599 ընդդէմ սիմոնականութեան. որպէս եղև և 'ի 1387. յորում ընկալեալ եղև Կղեմէս Է. դերապապ :

1053. ԲԷԹԵԱԳԻՆԱՅ 'ի Միջագետս 'ի 793. 'ի Յակոբիկեանց ընդ Կիրակոսի պատրիարգի իւրեանց վասն այնր բանի 'ի բեկանել նշխարին, «Զհացն երկնային բեկանեմք յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ», զոր ոմանք յանուղիղ միտ առեալ՝ ջնջելի համարէին. այլ ժողովն ոչ հաճեցաւ :

1054. ԲԷԿՏԱՒԻԱՅ 'ի 1076. առ. Գրիգորիւ Է. ընդդէմ Բերենգարիոսի, որ փոփոխամտութեամբ իմն՝ է զի հաստատէր և է զի մերժէր զմոլորութիւն իւր (835) :

1055. ԲԷՆԵՎԵՆՏԱՅ 'ի 1378. վասն բարեկարգութեան. չորրորդ կանոնն արգելու նկարել զպատկեր սրբոյ, որ չիցէ հաստատեալ 'ի Հռովմայ :

1056. ԲԷՏԷՐԻԱՅ չորս ժողովք 'ի 1233. վասն բարեկարգութեան : Դարձեալ և 'ի 1351. յորում առաջին կանոնն հրամայէ յարգել զանուն Յիսուսի խոնարհութեամբ գլխոյ :

1057. ԲԷՏՈՒՐԻԿԱՅ կրկին ժողովք 'ի 1031. վասն բարեկարգութեան կղերայց և կրօնաւո-

բայց սահմանադրութեամբ բազում կանոնաց ։

1058 . ԲՈՒՐԺԷՈՅ 'ի 1379 . սակս հերձուածոյն 'ի վերայ պապին Ուրբանոսի Զ. և Կղեմայ Է. ուր յայտնութեամբ ծանուցաւ օրինաւոր լինել առաջնոյն (1522) ։

1059 . ԲՈՒԴԷՈՅ 'ի 1279 . առ Նիկողայոսիւ Գ. . վասն բարեկարգութեան եկեղեցականաց . և եղան վաթսուն և ինն կանոնք 'ի հաստատութիւն ուխտին , և յուղղութիւն վարուց ։

1060 . ԲՈՒՐԴԻԿԱԼԱՅ 'ի 1255 . վասն բարեկարգութեան . 'ի հինգերորդ կանոնին արգելու հաղորդ տալ մանկանց 'ի զատկի , այլ միայն զօրհնեալ հաց ։

1061 . ԲՐԷՏԱՆԻԱՅ 'ի 449 . ընդդէմ Պեղագեանց և անօրէն պսակի արքային Գուորդիգենայ ։ Գումարեալ 'ի 519 և 'ի 555 ընդդէմ կարգընկէց եպիսկոպոսին Մակղիաւոսի ։ Իսկ 'ի 1261 եղեն ժողովք կրկին վասն 'ի գլխի հարկանելոյ Թաթարաց ։

1062 . ԳԱՂՂԻԱՅ կամ ԼՈՒԳԴՈՒՆԻ 'ի 197 . 'ի սրբոյն Իրենոսէ վասն տօնի զատկին ։ Անդ գումարեալ , 'ի հերքումն Մոնտանոսի , և Մաքսիմիլեայ ։ Որպէս և 'ի 355 վերստին վասն հերքելոյ զՍատուռնինոս , զՈւրսակիոս և զՎաղէս արիանոսս ։

1063 . ԳԱՂՂԻԱՅ 'ի 358 . 'ի դատապարտութիւն Սիրմեան դաւանութեան արիոսականաց ։ Իսկ 'ի 429 եղև ժողով , յորմէ առաքեցան ոմանք 'ի Բրիտանիա վասն տարագրելոյ անտի զաղանդն Պեղագեայ ։

1064 . ԳԱՂՂԻԱՅ 'ի 451 . ուր մեծաւ գովութեամբ հաստատեցաւ տոմար սրբոյն Լևոնի . և 'ի 600 եղև ժողով վասն տօնի զատկին , որպէս և 'ի 646, 679 ընդդէմ Միակամնադաւանից ։ Իսկ 'ի 1310 'ի պատճառս Տաճարակա֊

նայ, յորոց յիսուն և չորք դատապարտեցան (1515)։

1065. Գանգրայ 'ի 324. ընդդէմ Եւստա- թեայ սեբաստացւոյ, որոյ քան հերձուածոց նորա եղան քսան նզովք. 'ի կանոնագիրս Հայոց գտնին քսան և երեք. և 'ի սկիզբն կայ Թուղթ գրեալ 'ի ժողովոյն առ Հայս։

1066. Գենտիլեայ 'ի 767. առ Պօղոսիւ. ուր եղև վէճն Յունաց և Լատինացւոյ 'ի վերայ բղխման Հոգ- ւոյն և 'ի վերայ պաշտաման սուրբ պատկերաց։

1067. Գերմանիայ երկին ժողովք 'ի 743, և 'ի 745. առ Զաքարիայիւ վասն բարեկարգու- թեան և վասն դատապարտելոյ զԱդալբերտոս կամ զԱդելբերտոս և զԿղեմէս ոմանդաւորս. առաջինն մերժեալ զեկեղեցին ընծայեր անձին սրբութիւն և ծածկագիտութիւն, և զհերսն և զեղնգունս իւր իբրև նշխարս բաշխեր. իսկ երկրորդն անարգեր զսուրբ կանոնս և զմեկնութիւն սրբոց հարց. և Քրիստոս եհան, ասէր, զամբարիշտս 'ի դժոխոց (826)։

1068. Գերմանիայ 'ի 747. առ Զաքարիայիւ. յորում ընկալեալ եղեն չորս ընդհանրական ժողովք և կանոնք նոցա, և հակառակ ա- ղանդքն նզովեցան։ Ուր 'ի 1048 եղև ժողով առ 'ի դարման տանել ընդդէմ սիմոնականու- թեան։

1069. Գերոնդեայ 'ի Սպանիա 'ի 517. առ Որմզդաւ վասն բարեկարգութեան. և 'ի 1068, 1078 նոյնպէս վասն բարեկարգութեան և ուղ- ղութեան մոլորելոց։

1070. Գ--ն-տ-ն--ի 'ի 485. ընդդէմ Պետ- րոսի Թափչի. ուր Գուփինոսիանոս եպիսկոպոս գրեաց Թուղթ սինոդոսական երկոտասան նզովիւք (815)։

1071. Գ--ն-տ-ն--եայ 'ի 1085. ընդդէմ

Ենրիկեանց, որք ասէին թէ զդատաստան պա-պին մարթ է նահանջել. և ընդդէմ Վիկե-ղեանց ասողաց՝ թէ աշխարհականք մերկեալք 'ի գոյից՝ ոչ ևս ներքոյ են եկեղեցական դա-տաստանի և ոչ նզովից սակս յանցանաց:

1072. Գոռդեոյ 'ի Միջագետս 'ի 585. յո-րում նզովեցան Ստեփանոս և Յովհաննէս ար-քեպիսկոպոսք, որք շփոթութեան ասէին 'ի Քրիս-տոս:

1073. Գրադոյ 'ի 579. վասն փոխադրելոյ զաթոռն Ագուիլեայի 'ի Գրատոս. ուր 'ի 1296 եղև ժողով վասն բարեկարգութեան. և 'ի 1321 նզովեցաւ անդ Պաղոմէոս եպիսկոպոս վասն ան-հաստատմութեանն և մնասուց հասուցելոյ յաթոռ իւր Տորկեղեայ:

1074. Գոսլարեոյ 'ի 1199. ուր եդան վասն բարեկարգութեան երկոտասան կանոնք. վեր-ջինն հրամայէ մի լինել քահանայ յառաջ քան զերեսուն ամն:

1075. Դոնատեանց զանազան անուղիղ ժո-ղովք 'ի 348. 'ի միում հրամայի թաղել զմե-ռեալս իւրեանց յանդաստանս և 'ի փողոցս, կանգնեալ առ նոքօք սեղանս և խորանս:

1076. Երֆուրտեայ ժողովք 'ի 1195, 1310, 1311. վասն բարեկարգութեան և վասն Տաճա-րականաց, որք զբարեպաշտութիւնս իւրեանց խանգարեալ մուծին (1482):

1077. Եփեսոսի 'ի 371. 'ի սրբոյն Աթա-նասէ 'ի մերժումն Օգսենտիոսի արիոսականի. և 'ի 578 եղև ժողով չար 'ի Յակոբայ միաբնակ եպիսկոպոսէ, յորում ընկէց նա զՊօղոս պատ-րիարգ Անտիոքայ:

1078. Ելիբերեան ժողով 'ի Սպանիա 'ի 305. ուր վասն բարեկարգութեան եդան ութսուն և մի կանոնք առ Մարկեղլինոսիւ (1350):

1079. Եմերիտայ 'ի 666, 1009, 'ի Լուսիտանիա և Եռամիոյ վասն բարեկարգութեան. որպէս և Խինովկենովիոսի 'ի 1131. ուր վեցերորդ կանոնն հրամայէ վիճակաւորաց գերծեալ ունել զմօրուս:

1080. Երուսաղէմ 'ի 350. վասն անմեղութեան Աթանասի և վասն առնի զատկին: Անդ դարձեալ 'ի 399 եղև այլ ժողով 'ի դատապարտութիւն Որոգինեանց. և 'ի 415 ընդդէմ Պեղագիոսի. իսկ 'ի 518 հաստատեցաւ ժողովն Քաղկեդոնի:

1081. Երուսաղէմ 'ի 536. 'ի դատապարտութիւն Անթիմոսի, Սեւերոսի, Պետրոսի և այլոց: Անդ 'ի 553 հաստատեցաւ հինգերորդ ընդհանրական ժողովն. իսկ 'ի 634 հաստատեցան երկու կամք և ներգործութիւնք 'ի Քրիստոս. որպէս և 'ի 732 հաստատեցաւ վեցերորդ ընդհանրական ժողովն և նզովեցաւ պատկերամարտութիւն:

1082. Երուսաղէմ 'ի 879. վասն անդրէն հաստատելոյ զՓոտիոս յաթոռ Կոստանդնուպօլսոյ յետ մահուան Իգնատիոսի: Իսկ 'ի 1136 եղև 'ի սուրբ Սիոն վասն բարեկարգութեան. ուր գտաւ Գրիգոր կաթողիկոս եղբայր Շնորհալւոյն, և բազում ինչ խօսեցաւ զդաւանութենէ Հայոց:

1083. Եփեսոս 'ի 400. յՈսկեբերանէ վասն ամբաստանութեան զԱնտոնինոսէ. ուր վեց եպիսկոպոսունք ձեռնադրեալք 'ի նմանէ ընկեցան: Իսկ 'ի 440 եղև ժողով 'ի Բարսղէ կեսարացւոյ, յորում քննեցաւ անմեղութիւն Բասիանոսի: Եւ 'ի 447 դարձեալ եղև ժողով 'ի Դէոսկորոսէ վասն մերժելոյ զՖլաւիանոս:

1084. Եփփիրայ 'ի 516. 'ի Յովհաննէ մետրապօլտէ առ 'ի հաստատել զկարգաւորութիւն ընդ-

հռովմէական եկեղեցւոյ ընդունելով զնորս ընդհանուր ժողովս ։

1085. Երեւանեայ 'ի 1287. որ կարգեաց վասն բարեկարգութեան յիսուն և հինգ կանոնս. յառաջին կանոնն ասէ դեռ ընկղմամբ լինել մկրտութեան, և 'ի չորրորդն նշանակէ՝ թէ յայնժամ յարենէն եւս հաղորդէր ժողովուրդ տեղւոյն ։

1086. Զաբողչեայ 'ի 1092. յորում բազում կանոնք սահմանեցան վասն կղերիկոսաց, և վասն հաստատութեան ուխտին և եկեղեցական կանոնաց ։

1087. Զեփեսոսեայ 'ի 432. յԱղեքսանդրէ եպիսկոպոսէ՝ դժկամակելով ընդ հաշտութիւն սրբոյն Կիւրղի ընդ Յովհաննու անտիոքացւոյն ։

1088. Էպաոնեայ 'ի Բուրգոնտիա 'ի 517. առ Որմզդաւ վասն բարեկարգութեան, և պայծառութեան սուրբ հաւատոյ և ուղղութեան վարուց ։

1089. Ընդհանրական անուամբ ժողովն յԱնգղիա 'ի 1074. առ Գրիգորիւ Է. յորում բացատրեցաւ թէ մեծունք և կուսանք ապաւանեալք առ ահի 'ի կուսանոցս՝ արկեալ զանձամբ զքօղ, ազատ են ամուսնանալ եթէ կամին ։

1090. Թէսաղոնիկեայ 'ի 389. դատապարտեաց զԲոնոս եպիսկոպոս Սարդիկեայ, որ երկուս որդիս ասէր 'ի Քրիստոս, ուրանալով զկուսութիւն Տիրամօրն յետ ծննդեան (806)։

1091. Թէսաղոնիկեայ 'ի 458. առ Լեւոնիւ Ա. յորում նզովեցաւ Եւտիքէս, Դէոսկորոս և Տիմոթէոս միանդամայն՝ հաստատելով զժողովն Քաղկեդոնի ։ Ընդ 'ի 518 եղև այլ ժողով յՈրմզդայ պապէն 'ի հաստատել զժողովն Քաղկեդոնի. բայց այլք անօրէնք գիշերայն հուր

արկեալ 'ի ժողովարան նոցա ցրուեցին զժողովեալսն ։

1092. Իկոնիոյ 'ի փռիւգիա 'ի 256. ընդդէմ կատափրիւգեանց. յորում մերժեցաւ և մկրտութիւն հերետիկոսաց. ըստ որոյ հերքեցաւ այս ժողով։ Ուր 'ի 379 գումարեալ եղև աստուածութիւն Հոգւոյն սրբոյ ։

1093. Իտալիոյ 'ի 254. վասն Նովատիանոսի. և 'ի 380 եղև ժողով վասն քննելոյ զանմեղութիւն Մաքսիմոսի մերժելոյ յաթոռոյն Կոստանդնուպօլսոյ։ Իսկ 'ի 405 եղև այլ ժողով յԻննովկենտիոսէ Ա. վասն դարձուցանելոյ յաթոռ իւր զսուրբն Ոսկեբերան (1362) ։

1094. Լամբեթիոյ 'ի 1204. վասն բարեկարգութեան. վերջին կանոնն թոյլ տայ երկիցս պատարագել 'ի ծննդեան, 'ի զատկի, և յորժամ մեռեալ ոք թաղելի է 'ի նոյն եկեղեցի, և կամ 'ի ստիպել հարկին։ Եւ 'ի 1261 եղև ժողով վասն բարեկարգութեան յաւէտ եկեղեցականաց ։

1095. Լամբեթիոյ 'ի 1281. վասն բարեկարգութեան. և 'ի 1368 դատապարտեցան երեսուն մոլար վարդապետութիւնք հերձուածողաց ։

1096. Լամբեսոյ յԱփրիկէ 'ի 242. 'ի դատապարտութիւն Պրիվատոսի հերետիկոսի ։ Իսկ 'ի 1197 եղև ժողով Լանկլինոյ, յորում արգելաւ քահանայից ունել կին ։

1097. Լատերանոյ 'ի 649. 'ի Մարտինոսէ Ա. 'ի դատապարտութիւն միակամնդաւանից ընդ առաջնորդաց իւրեանց (1396)։ Ուր 'ի 769 դատեցաւ Կոստանդին գերապապ. և պատկերամարտութիւնն նզովեցաւ ։

1098. Լատերանոյ 'ի 823. յերեսուն և չորս եպիսկոպոսաց, յորում Պասքաղիս պապ ար-

դարացաւ 'ի կարծեաց մարդապաշտութեան (1420)։ Իսկ 'ի 1102 նզովեցաւ Էնրիկոս կայսր ընդ աղանդաւորաց առաջաց թէ նզովք և կապանք եկեղեցւոյ ոչինչ են։ Տես և զընդհանուր ժողովս Լատերանու։

1099 · Լաւոդիկեայ 'ի Փռիւգիա 'ի 363․ ուր եդան վաթսուն բարեկարգութեան յխատուն և կին կանոնք։ Ընդ 'ի 481 արդարացաւ Սոփրոնիոս եպիսկոպոս ամբաստանեալ 'ի Թամփսեանց կերկնեստորական։

1100 · Լեգէոնի 'ի Սպանիա 'ի 1091 · յորում կարգեցաւ, զի յեկեղեցական գիրս վարեսցին Գաղղիացւոց գրովք և ոչ Գոթաց։

1101 · Լիմոժէայ 'ի Գաղղիա 'ի 1021 · վասն խնդրոյն թէ արժան իցէ զսուրբն Մարտիալիս որ յեօթանասնիցն էր անդ առաքեալ 'ի Պետրոսէ՝ կարգել ընդ առաքեալս, թէ լոկ ընդ խոստովանողս։

1102 · Լիմոժէայ ժողովք 'ի 1029, 1031 · միւն հաստատէ զսուրբն Մարտիալիս եպիսկոպոս առաքելական · և միւսն կոչէ զնա առաքեալ։ Իսկ 'ի 630 լինի ժողով վասն պատերազմի սուրբ երկրին։

1103 · Լէոնեայ սահմանք երեսուն և չորք 'ի 2287 · յերկրորդ կանոնն առի վասն վերանդին մի ընկղմել զգլուխ մանկան 'ի ջուր, այլ երիցս հեղուլ 'ի գլուխ նորա · և 'ի քսանևերորդ հինգերորդ կանոնն օրինադրի բաղում նշխարս քահանայագործել առ 'ի հաղորդել զժողովուրդն։

1104 · Լերինեայ ժողով 'ի 515 · վասն հաստատութեան նիկիական հաւատոյ · ուր և նըզհաւել զեպիսկոպոս իւրեանց վասն հաղորդելոյն առ աճի կայսեր ընդ Տիմոթեայ՝ յարեւան 'ի հայրապետն Հռովմայ։

1105. Լօմբարէոյ 'ի Գաղղիա 'ի 1165. յորում դատապարտեցան Ալբիգեանք, որ ասէին թէ մարմինն Քրիստոսի քահանայագործի 'ի բարեաց միայն, եւս եւ յաշխարհականաց (844) ։

1106. Լօնդօնոյ 'ի 605. յորում անարժան դատեցաւ հարսանիքն յերրորդ աստիճանի արենակցութեան. եւ որ լինի ընդ հաւատաւորի ։

1107. Լօնդօնոյ 'ի 1075. վասն բարեկարգութեան. ուր եւ կանոնեցաւ չառնել պսակ յեօթն աստիճանի։ Դարձեալ 'ի 1102 եդան քսան եւինն կանոնք վասն բարեկարգութեան. չորրորդ կանոնն արգելու սուրբ աստիճանաւորաց զամուսնութիւն։ Ուր 'ի 1108 եդեւ ժողով ընդդէմ անժուժկալութեան կղերիկոսաց. որպէս եւ 'ի 1127, 1129 եւ 'ի 1138, վասն բարեկարգութեան ։ Ի 1175 կանոնադրէ եկեղեցականաց խուզել զհերս, եւ արգելու զթաթախմամբ հաղորդելն ։ Ի 1200 արգելու կրկին պատարագել յաւուրն. եղեն եւ այլք վասն բարեկարգութեան ։

1108. Լօնդօնոյ 'ի 1291. յորում վճռեցաւ արտաքսել յԱնգղիոյ զամենայն Հրեայս. որք եւ ամենայն ընչիւք իւրեանց մեկնեցան անտի ։ Անդ 'ի 1311 դատեցան ոմանք 'ի Տաճարականաց ։ Իսկ 'ի 1328 հրամայի կատարել զտօն յղութեան Տիրամօրն ։ Դարձեալ անդ 'ի 1382, յորում դատապարտեցան Վիկլեֆեանք. որք 'ի 1382 ստիպեցան 'ի ժողովն մերժել զաղանդ իւրեանց (853) ։

1109. Լօնդօնոյ 'ի 1401. յորում երէցն Վիղէլմոս Սաւտրոս դատեցաւ 'ի վերայ տասն նախադասութեանց. որովք մերժէր զպաշտօն խաչի, եւ զգոյափոխութիւն. ուր 'ի 1413 դատա_

պարտեցան սոյնօրինակ աղանդաւորք:

1110. Լուգոյի զանազան ժողովք 'ի 569, 572, 1308. վասն բարեկարգութեան. 'ի 572 Մարտինոս եպիսկոպոս առաքեաց 'ի ժողով անդր զկանոնս արևելեան ժողովոց:

1111. Լուգդունի զանազան ժողովք 'ի 517. վասն բարեկարգութեան և ընդդէմ աղանդաւորաց. մանաւանդ ընդդէմ Մարկիոնի 'ի վախճան երկրորդի դարուն (760):

1112. Կալքութեայ 'ի 787. առ Ադրիանոսիւ վասն բարեկարգութեան:

1113. Կոմպինիակայ 'ի 1238. վասն բարեկարգութեան:

1114. Կանտուարէայ 'ի 1222. յորում պատուհասեցան երկուք ումանք որք ցուցանէին զնիշ վիրաց խաչելոյն 'ի կողս յոտս և 'ի ձեռս: Անդ 'ի 1311 ժողովեցան 'ի պատճառս Տաճարականաց, և 'ի 1413. յայլում ժողովի 'ի հուր դատեցան գրեանք Վիկլեփեանց (1108):

1115. Կապադովկիայ 'ի 376. առ Բարսղիւ. յորում զգիրս նորա 'ի վերայ Հոգւոյն սրբոյ ընկալեալ ստորագրեցին:

1116. Կաբարսուսեայ 'ի Կարթագինէ 'ի 393. ընդդէմ Պրիմիանոսի հերձուածոյ: Իսկ 'ի 650 և 813. եղև ժողով 'ի Կաբիլոն վասն բարեկարգութեան:

1117. Կապուայ 'ի 389. առ 'ի խաղաղել ըզ-հակառակութիւն Անտիոքայ վասն աթոռակալութեան Փլաբիանոսի, և Եւագրի: Եւս և 'ի Վիկտորէ Գ. (1478):

1118. Կաշիլեայ 'ի Հիբերնիա 'ի 1172 վասն բարեկարգութեան. առաջին կանոնն բացորոշէ մկրտել երիցս ընկղմամբ:

1119. Կարթագինեայ ժողովք 'ի 254, 255. 'ի Կիպրիանոսէ վասն սահելոց. և ընդդէմ աղան-

դաւորայն Փելիքսիմոսի և Նովատոսի ։ Ուր ՚ի 287 սահմանեցաւ չլինել կղերիկոսաց յանձանձիչ կամ կտակակատար ։

1120. Կարթագինեայ ՚ի 288. ՚ի Կիպրիանոսէ ՚ի պատճառս մկրտութեան հերետիկոսաց և ՚ի մերժումն մկրտութեան նոցա ։ Յայլում ժողովի վճռեցաւ անվաւեր լինել մկրտութեան հերետիկոսաց. այլ այսօրիկ ժողովք չեղեն ընդունելի ։

1121. Կարթագինեայ ՚ի 348. ՚ի դարման հերձմանն Դոնատեանց ։ Ութանոր եղեն և զանազան ժողովք վասն բարեկարգութեան և յաղագս եղանակի բողոքման յաթոռն Հռովմայ. վասն Պեղագեան և ՚Նեստորեան աղանդոյ ՚ի 426. և վասն հաստատելոյ կրկին կամս և ներգործութիւնս ՚ի Քրիստոս, և նզովեցան Սերգիոս, Կիւրոս և Պիւռոս ՚ի 646 ։ Տես ՚ի վերս քահանայապետաց ։

1122. Կարիսիակեայ ՚ի 849. յորում Գոտեսկալքոս դատապարտեալ կարգընկէց եղև և մատնեցաւ ՚ի գանս. և ընդդէմ աղանդոյ նորա եղան չորս գլուխք բանից ։

1123. Կեսարեայ ՚ի 358. յորում Եւստաթիոս սեբաստացի մերժեցաւ. որոյ տան կանոնք գոն ՚ի կանոնագիրս Հայոց ։ Ուր ՚ի 372 եղև այլ ժողով առ ՚ի վճարել զգժտութիւն ՚ի մէջ Բարսղի և մետրապօլտին Դիանեայ վասն իրաւանց վիճակին ։

1124. Կեսարաւգուստեայ ՚ի Սպանիա ՚ի 381. ընդդէմ Պրիսկիղեանց. որք զԳնոստիկեանցն և զՄանիքեցւոցն ախտանային ։ Ուր ՚ի 592 սահմանեցան երեք կանոնք վասն դարձելոցն յԱրիանոսաց. և ՚ի 691 վասն բարեկարգութեան ։

1125. Կտեսիփոնտեայ ՚ի 420. յաւարի եպիսկոպոսաց. յորում զկանոնս արևելեան ժողովոց

փոխ առեալ՝ նզովիւք պարտաւորեցին պահել զնոյնս ։

1126 . ԿԻԼԻԿԻՈՅ 'ի 423 . յորում Թէոդորոս Մամեստացի նզովիւք դատապարտեցաւ (811) ։

1127 . ԿԻՉԷՍԹՐԷԱՅ ժողովք 'ի 1289 , 1292 . վասն բարեկարգութեան . ուր եդան 'ի միումն քառասուն և մի և 'ի միւսումն եօթն կանոնք 'ի պայծառութիւն եկեղեցւոյ և եկեղեցականաց ։

1128 . ԿԻՐԹԷԱՅ 'ի Նումիդիա 'ի 303 . յորում յանդիմանեցան մատնութիւնք սուրբ գրոց 'ի պատճառս հալածանաց։ Իսկ 'ի 478 ժողովն Կիւրիոյ նզովեաց զՊետրոս Թափիչ .

1129 . ԿԼԵՐՄՈՆԹԷԱՅ 'ի Գաղղիա 'ի 1095 . յՈւրբանէ Բ . ուր եդան երեսուն և երկու կանոնք վասն բարեկարգութեան . յերկրորդ սահմանին շնորհի լիակատար ներողութիւն որոց առ կրօնաւորութեան գնան յազատութիւն սուրբ երկրին . 'ի քսանեւթներորդին սահմանի ուրոյն ճաշակել զմարմինն և զարիւնն տեառն ։ Գոն և քսան և երկու սահմանք 'ի վերայ խորհրդոց և մեղաց (1479) ։

1130 . ԿՈԼՈՆԻԱՅ ժողովք 'ի 1260 , 1280 . վասն բարեկարգութեան . յեօթներորդ կանոնին առ 'ի պատրաստի ունել զբաժակ գինեաւ և ջրով , զի հաղորդեալքն արբցեն ։

1131 . ԿՈՄՊՈՍԹԷԼԼԱՅ 'ի 1056 . առ Վիկտորիւ Բ , վասն բարեկարգութեան . ուր նզովին քահանայք և սարկաւագունք ամուսնացեալք (1473) ։

1132 . ԿՈՅԷԿԱՅ 'ի 1050 . յորում վասն բարեկարգութեան պատուիրի եկեղեցականաց գերծուլ զմօրուս , և փոյթ ունել առաքինութեան և գիտութեան ։

1133 . ԿՈՆՍԷՐԱՆՈՅ 'ի 128 . վասն բարեկար-

գութեան. յորում աւանդին հրահանգք, և օ_ րինադրի չյօրինել կղերիկոսաց զմօրուս :

1134. Կոստանդնուպօլսոյ 'ի 382. յորում գրեալ թուղթ առ Դամասոս պապ՝ յայտ ա_ բարին զպատճառ գժուարութեան գնալոյ 'ի ժողովն Հռոմայ : Իսկ 'ի նմին ամի 'ի Նեքտա_ րիոսէ եղև ժողով, յորում նզովեցան Արիա_ նոսք, Պօղինեանք, Ապողինարիոսք, Մարկե_ ղեանք և Փոտինեանք :

1135. Կոստանդնուպօլսոյ 'ի 394. վասն դա_ տի եպիսկոպոսացն Ագապիոսի և Գեբադիո_ սի. սահմանեցաւ եւս զի ընկեցումն եպիսկո_ պոսի ժողովով լիցի: Իսկ եղեն 'ի 403, և 'ի 404 չար ժողովք ընդդէմ Ոսկեբերանի :

1136. Կոստանդնուպօլսոյ 'ի 435, 432. 'ի Պրոկղէ առ 'ի քննել զգիրս Թէոդորոսի Մամսու_ ստացւոյ, յորմէ գրեաց թուղթ առ Հայս. և վասն խաղաղելոյ զխռովութիւնս եկեղեցեաց Աղեքսանդրիոյ և Անտիոքայ: Իսկ 'ի 429 ժո_ ղովեցան 'ի պատճառս նախապատուութեան աթոռոյն Աղեքսանդրիոյ և Անտիոքայ :

1137. Կոստանդնուպօլսոյ 'ի 442. 'ի Պրոկղէ վասն Աթանասի եպիսկոպոսի Պերռեայ: Իսկ 'ի 448 'ի Փլաբիանոսէ. յորում դատապարտե_ ցաւ Եւտիքէս: Նոյնպէս 'ի 449 եղև ժողով 'ի քննութիւն դատին Եւտիքեայ. յայլում ժո_ ղովի ընտրեցաւ Անատոլիոս փոխանակ Փլաբիա_ նոսի նահատակելոյ: Անդ 'ի 450 ժողով արարին հրեշտակք Լեւոնի. յորում նզովեալ զԵւտի_ քէս և զՆեստոր՝ ընկալան զտոմարն Լեւոնի :

1138. Կոստանդնուպօլսոյ ժողովք 'ի 458, 459. 478. ընդդէմ Եւտիքեայ, Դէոսկորոսի, Տիմոթեայ, Թափշի. Յովհաննու Ապամիոյ և Պօղոսի Եփեսացւոյ : Անդ դարձեալ այլ ժողով 'ի 483 ընդդէմ Թափշին :

1139. Կոստանդնուպօլսոյ 'ի 492. յորում հաստատեցան սահմանք Քաղկեդոնի սուրբ ժողովոյն: Իսկ 'ի 536 նզովեցան Սեւերոս, Յուլիանոս ալիկառնացի և այլ աստուածաչարչարք. և 'ի 543 դատապարտեցան 'ի Մենասայ պատրիարգէ Որոգինեանք 'ի ժողովի նորա:

1140. Կոստանդնուպօլսոյ 'ի 547. 'ի Վիգիլեայ պապէ. յորում սահմանեցաւ անարգ թողուլ զդատապարտութիւն Երից գլխոց մինչև 'ի լինել ընդհանուր ժողովոյ: Իսկ 'ի 553 դատապարտեցան նոյն երեք գլուխք ընդ Որոգինեանց: Ընդ սմա եղեն այլևայլ չարաժողովք յաղանդաւորաց, զորս մերժեաց առաքելական գահն: Տես 'ի վերս քահանայապետաց ութերորդ դարու:

1141. Կոստանդնուպօլսոյ 'ի 787. յորում ձեռնարկեն նզովել զպատկերամարտս. և 'ի 814 նզովեցաւ Անտոնիոս Մատրապօլիտ պատկերամարտ և գործակից չարեաց Լևոնի կայսեր: Ի սմին դարու եղեն բազում ժողովք 'ի Կոստանդնուպօլիս ընդդէմ պատկերամարտից, և կամ 'ի նպաստ նոցա: Տես 'ի վերս քահանայապետաց նոյն դարու:

1142. Կոստանդնուպօլսոյ կրկին ժողովք 'ի 859. մին 'ի կուսակցաց Իգնատիոսի՝ զնա ճանաչելով պատրիարգ, և միւսն 'ի փառս օժանդակութեանն Բարդասայ. յորում մերժեցին զԻգնատիոս: Տես անդ:

1143. Կոստանդնուպօլսոյ ժողովք 'ի 1110, 'ի դատապարտութիւն Նեղոսի կրօնաւորի՝ որ չփոթումն առնէր 'ի Քրիստոս, և Բարսղի բժշկի ուրացողի զհաւատս և զեկեղեցի: Իսկ յայլում ժողովի մերժեցաւ մատեանն Կոստանդեայ Խրիւսոմաղի, որ ուսուցեալ զաղանդ Բարսղի՝ անօգուտ առնէր զմկրտութիւն տղայոց

և այլն։ Յաղագս որոյ հաղորդեալքն նոցա Կղե_մէս և Ղեւոնդիոս եպիսկոպոսունք կարգընկեց եղեն. որպէս և 'ի 1143 Նիփոս միանձն պարսա_ւորեալ փակեցաւ 'ի մենաստանի և ապա բա_նադրեցաւ իբր գլուխ Բարսեղեանց կամ Բո_գոմեանց։ Իսկ 'ի 1147 կարգընկեց եղև Կոզ_մաս պատրիարգ վասն նպաստելոյ Նիփոսի։

